

ԽԱԼԵԴԴ ՀՈՍԵՅՆԻ

ԵՎ արչագանձեցին
լեռները



1915. ինֆո

Հ Ա Մ Ա Շ Խ Ա Ր Հ Ա Յ Ի Ն Բ Ե Ս Թ Ս Ե Լ Լ Ե Ր

Եվ արձագանքեցին
լեռները



ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ • 2016

*And
The Mountains
Echoed*

A Novel

KHALED
HOSSEINI

*Translated from English
by Anush Sedrakyan*

ԵՎ

Արձագանքեցին

Լեռները

Վեպ

Խ Ա Լ Ե Դ

Հ Ո Ս Ե Յ Ն Ի

թվայնացրել է 1915. ինժո կարգով

Թարգմանությունն անգլերենից՝
Անուշ Սեդրակյանի

ՀՏԴ 821.111(73)-31 Հոսեյնի
ԳՄԴ 84(7 ԱՄՆ)-44
Հ 831

Հոսեյնի, Խալեդ
Հ 831 ԵՎ ԱՐՁԱԳԱՆ-ՔԵՑԻՆ ԼԵՌՆԵՐԸ: Վեպ / Խալեդ Հոսեյնի: Թարգմա-
նությունն անգլերենից՝ Անուշ Սեդրակյանի. — Եր.: «Զանգակ» հրատ.,
2016. — 400 էջ:

Քարոլ տանող փոշեպատ ճանապարհին երկու երեխա՝ եղբայր ու քույր, վերջին ժամերն են անցկացնում միասին: Հետո, ասես ոչինչ չի էլ եղել: Ոչ ոք այլևս չի հիշատակի եղբոր հոգածությամբ ու սիրով երջանիկ Փարիին: Աբդուլլան չի մոռանա: Քույրը չի հիշի: Նրանց կյանքի հետագա տարիները շրջանակվում են նվիրումի, անգթության և վերադարձի պատմություններով, մինչ Աֆղանստանում կյանքը շարունակվում է աղետալի շրջադարձե-
րով լի:

ՀՏԴ 821.111(73)-31 Հոսեյնի
ԳՄԴ 84(7 ԱՄՆ)-44

ISBN 978-9939-68-447-5

© «Զանգակ-97» ՍՊԸ, 2016 (թարգմ. համար)
© Zangak-97 LLC, 2016 (Armenian edition)
© Copyright 2013 by Khaled Hosseini and Roya Hosseini,
as Trustees of the Khaled and Roya Hosseini Family
Charitable Remainder Unitrust No. 2 dated February 29, 2012
All rights reserved.
Epigraph copyright Colman Barks

Գիրքը նվիրվում է իմ աչքի լույս
Հարիսին և Ֆարահին
և հորս, որ հպարտ կլինեք ինձնով...

*Մեր մտքերից,
մեր ճիշտ և սխալ քայլերից անդին
կա մի երկիր,
ուր մենք կհանդիպենք:*

Ջալալ ադ Դին Ռումի, 13-րդ դար

Ա ն ա ջ ի ն

Ա Շ ՈՒ Ն , 1952

Լ ավ, բարի: Դուք հեքիաթ եք ուզում, ես ձեզ կպատմեմ: Բայց մի-
այն մի հեքիաթ: Փարի, ուշ է, իսկ վաղը ես ու դու երկար ճանա-
պարհ ենք գնալու: Դու՛ն էլ, Աբդուլլա: Երբ ես ու քույրդ գնանք, տան
հույսը քեզ վրա է: Մորդ համար էլ դու ես պատասխանատու: Լավ,
ուրեմն մի հեքիաթ պատմեմ: Լսե՛ք ու մի ընդհատեք:

Ժուկով-ժամանակով, երբ երկրագնդի վրա բնակվում էին դևե-
րը, *ջինեքն*¹ ու հսկաները, Բաբա Այուբ անունով մի հողագործ էր
ապրում: Իր ընտանիքի հետ նա բնակվում էր Մայդան Սաբզ գյու-
ղում: Մեծ ընտանիքը կերակրելու համար Բաբա Այուբը ստիպված
էր աշխատել օրնիբուն: Արևածագից մինչև մայրամուտ նա հերկում
էր իր դաշտը, փորում հողը և խնամում պիստակի թռչնած ծառերը:
Նրան ամեն վայրկյան կարելի էր տեսնել դաշտում կռացած՝ մեջ-
քը իր մանգաղի պես կոր: Նրա ձեռքերը միշտ ճաքճքված էին և
հաճախ արյունահոսում էին, քնում էր՝ գլուխը դեռ բարձին չդրած:

Ասեմ, որ կյանքը ծանր էր Մայդան Սաբզի բոլոր բնակիչների
համար: Կային ավելի երջանիկ գյուղացիներ, որոնք ապրում էին
հյուսիսում՝ մրգատու ծառերով և ծաղիկներով լեցուն հովիտնե-
րում, ուր օդը հաճելի էր, իսկ առունների մեջ հոսում էր սառնորակ,
վճիտ ջուրը: Մայդան Սաբզը, հակառակը, ամայի տեղ էր և նշույլ

¹ Ջին — գերբնական արարած իսլամական և նախաիսլամական արաբական առասպելաբանության մեջ:

անգամ չէր համապատասխանում իր անվանը, որ նշանակում էր «Կանաչ դաշտ»: Գյուղը տեղակայված էր հարթ, փոշոտ վայրում, որ շրջապատված էր չեչոտ սարերով: Սարերից փչող տաք քամին փոշին լցնում էր մարդկանց աչքերը: Ջուր գտնելը մեծ խնդիր էր, որովհետև գյուղի բոլոր ջրհորները ծանծաղ էին: Գետ էլ կար, բայց գյուղացիները ստիպված էին կես օր քայլել դրան հասնելու համար, և կլոր տարին այնտեղից ցեխաջուր էր գալիս: Բայց տասը տարի անընդմեջ երաշտից ծանծաղացել էր նաև գետը: Կարելի էր ասել, որ Մայրան Սաբգի բնակիչները կրկնակի ծանր աշխատանք էին թափում իրենց ապրուստի գոնե կեսը վաստակելու համար:

Բայց Բաբա Այուբն իրեն բախտավոր էր համարում, որովհետև ընտանիք ուներ, ում սիրում էր ամենից առավել: Նա սիրում էր կնոջը և երբեք ձայնը չէր բարձրացրել նրա վրա, իսկ ձեռք բարձրացնելու մասին խոսք լինել չէր կարող: Նա գնահատում էր կնոջ խորհուրդները, սիրում էր նրա ընկերակցությունը: Երեխաների հարցում նույնպես հաջողակ էր. մի ձեռքի մատների չափ երեխաներ ուներ՝ երեք որդի, երկու դուստր, և բոլորին սիրում էր ինքնամոռաց: Նրա աղջիկները աշխատասեր էին, բարի և առաքինի: Իսկ որդիներին սովորեցրել էր ազնվություն, քաջություն, ընկերասիրություն և անխոնջ աշխատասիրություն: Նրանք ենթարկվում էին հորը և օգնում էին նրան տան բոլոր աշխատանքներում:

Բաբա Այուբը շատ էր սիրում իր բոլոր զավակներին, բայց սրտի խորքում յուրատեսակ պաշտամունք ուներ կրտսեր որդու՝ Քախի հանդեպ. Քախն այդ ժամանակ երեք տարեկան էր, մուգ կապույտ աչքեր ուներ և հմայում էր բոլորին իր չարածճի քրքիջով: Նա այն ժիր մանուկներից էր, որոնք իրենց աշխուժությամբ հոգնեցնում ու սպառում են բոլորին: Երբ քայլել սովորեց, այնքան էր ուրախացել, որ քայլում էր և՛ արթուն, և՛ քնած ժամանակ: Քնած դուրս էր գալիս իրենց կավաշեն հյուղակից և քայլում էր լուսնկա գիշերվա մեջ: Իհարկե, դա անհասկացելից էր ծնողներին: Նրանք վախենում էին, որ կընկնի ջրերի մեջ, կկորչի կամ, որ ամենավատն էր, զոհ կդառնա գիշերային գիշատիչներին: Ծնողները շատ փորձեցին այդ ցավին դարման գտնել, բայց ոչինչ չօգնեց: Եվ ի վերջո Բաբա Այուբը գտավ ելքը, որը շատ պարզ էր: Նա այծիկներից մեկի վզից

հանեց փոքր զանգը և կախեց Քահսի վզին: Այն զնգում էր ամեն անգամ, երբ գիշերը Քահսը վեր էր կենում: Այսպիսով՝ քնած ժամանակ նա այլևս չէր քայլում, փոխարենը կապվեց զանգի հետ և էլ չէր բաժանվում դրանից: Եվ թեպետ զանգն այլևս չէր ծառայում իր նպատակին, այն միշտ տղայի վզին էր: Երբ Բաբա Այուբը ծանր աշխատանքից հետո վերադառնում էր տուն, Քահսը վազում էր հոր գիրկը, և զանգը ծնվում էր ամեն քայլափոխի: Տղան ուշադիր նայում էր, թե հայրն ինչպես է լվացվում, և ընթրիքի ժամին նստում էր հոր կողքին: Ուտելուց հետո հայրը կում-կում թեյ էր խմում՝ նայելով իր ընտանիքի անդամներին, և պատկերացնում էր այն օրը, երբ իր զավակները կամուսնանան, թոռներ կպարգևեն իրեն, և ինքը կդառնա մեծ գերդաստանի նահապետ:

Ավանդ, երեխաներ, Բաբա Այուբի երջանկությունը մոտեցել էր ավարտին:

Դա պատահեց, երբ Մայդան Սաբզ եկավ դևը: Երբ սարերից իջավ, հողը դրնգաց նրա ոտքերի տակ: Գյուղացիները գցեցին իրենց բահերը, քլունգներն ու կացիները և ցրվեցին գյուղով մեկ: Նրանք փակվեցին տներում և վախից փաթաթվեցին իրար: Երբ դադարեցին դևի խլացնող ոտնաձայները, նրա սովերից Մայդան Սաբզի վրա երկինքը մթնեց: Ասում էին, թե նրա գլխից սև կոտոշներ էին դուրս ցցված, և որ ուսերն ու հզոր պոչը ծածկված էին սև կոշտ մազով: Դևի աչքերն այրվում էին կրակով: Ոչ ոք հաստատ ոչինչ չգիտեր, դե, հասկացաք, գոնե կենդանի մնացած ոչ մի մարդ: Դևը միանգամից խժռում էր այն մարդկանց, ովքեր համարձակվում էին նույնիսկ մի հայացք գցել նրա աչքերին: Դա իմանալով՝ գյուղացիները հայացքները գետնից չէին բարձրացնում:

Մայդան Սաբզի բնակիչները գիտեին, թե ինչու է դևը եկել: Լսել էին, որ նա շատ գյուղեր էր գնացել, և զարմանում էին, որ իրենք այդքան երկար կարողացել են խուսափել նրա այցելությունից: Նրանք կարծում էին, որ պատճառն իրենց աղքատ և ունեզուրկ կյանքն էր, որ իրենց երեխաները թերմսված էին, նիհար և չէին հետաքրքրում դևին:

Մայդան Սաբզը շունչը պահած, դողահար սպասում էր: Ընտանիքներն աղոթում էին, որ չարիքը շրջանցի իրենց տունը, որովհետև

գիտեին, որ եթե դևը թմփթմփացնի իրենց կտուրին, ստիպված կլինեն մի երեխա տալ: Դևը երեխային կդնի պարկի մեջ, պարկը կզցի ուսին և հետ կգնա իր եկած ծանապարհով: Խեղճ երեխային այլևս ոչ ոք երբեք չի տեսնի: Իսկ եթե ընտանիքը մերժի, դևը կտանի բոլոր երեխաներին:

Իսկ դու եր դևը տանում այդ երեխաներին: Իր ամրոցը, որ գտնվում էր զառիթափ սարի անհասանելի գագաթին: Ամրոցը շատ հեռու էր Մայրան Սաբզից: Նրան հասնելու համար պետք էր հատել մի քանի հովիտ, բազում անապատներ և երկու լեռնաշղթա: Եվ միթե ողջամիտ մարդը կանցներ այդ ծանապարհը՝ միայն իր մահվան երեսին նայելու համար: Ասում էին, որ ամրոցը լի էր ստորգետնյա զնդաններով, պատերից կախված էին դիակներ, առաստաղից ծոճվում էին կեռիկներ, իսկ օջախում դրված էին շամփուրներ: Ասում էին, որ ամրոցում կային նաև կրակե հորեր: Ասում էին, որ եթե մեկը հանդգնում էր մտնել այդ ամրոցը, դևը մոռանում էր, որ խորշում է մեծահասակների մսից:

Դե, երևի արդեն հասկացաք, թե ում կտուրին թխկթխկացրեց դևը: Դա լսելով՝ Բաբա Այուրը մի խեղդված ծիչ արձակեց, իսկ կինն անմիջապես ուշագնաց եղավ: Երեխաները լաց էին լինում վախից և նաև վշտից, որովհետև գիտեին, որ իրենցից մեկին պետք է կորցնեին: Ընտանիքը արևածագին պիտի տար զոհի անունը:

Ինչպե՞ս կարելի է նկարագրել այն վիշտը, որն այդ գիշեր պատել էր Բաբա Այուրին և նրա կնոջը: Ոչ մի ծնող թող երբևէ չկանգնի նման ընտրության առաջ: Բաբա Այուրն ու նրա կինը վիճում էին երեխաներից թաքուն: Խոսում էին ու արտասվում, էլի խոսում էին ու էլի արտասվում: Ամբողջ գիշեր տան մեջ հետ ու առաջ էին քայլում, և երբ արևածագը մոտեցավ, նրանք դեռ որոշում չէին կայացրել, ինչն էլ երևի հենց դևի ուզածն էր, քանի որ նրանց անվճռականությունը իրեն թույլ կտար հինգ երեխա տանել: Հինգ երեխա՝ մեկի փոխարեն: Ի վերջո Բաբան հավաքեց հինգ նույն չափի ու ձևի քարեր, ամեն քարի վրա գրեցին երեխաներից մեկի անունը և հետո բոլոր քարերը լցրին մի պարկի մեջ: Երբ պարզեց պարկը կնոջը, վերջինս ընկրկեց, կարծես թունավոր օձ էր տեսել:

— Ես չեմ կարող դա անել, — ասաց նա ամուսնուն՝ գլուխը տա-

րուբերելով:— Ես չեմ կարող ընտրություն կատարել: Չեմ դիմանա: Նա՛ էլ չէր կարող, բայց պատուհանից տեսավ, որ արևն արդեն ծիկրակում էր արևելքի կողմի բլուրներից: Ժամանակը սպառվում էր: Բաբա Այուբը խեղճ–խեղճ նայեց իր երեխաներին: Մատը պետք է կտրել ձեռքը փրկելու համար: Նա աչքերը փակեց և հանեց պարկից...

Դուք երևի հասկանում եք, թե ինչ քար հանեց Բաբա Այուբը: Երբ տեսավ քարի վրա գրված անունը, դեմքը դարձրեց երեխաներին և ձիչ արձակեց: Կոտրված սրտով գրկեց փոքր որդուն, իսկ Քախը, որ կուրորեն հավատում էր հորը, ուրախ գրկեց նրա վիզը: Երբ հայրը որդուն դուրս հանեց տնից և փակեց դուռը, Քախը հասկացավ՝ ինչ է կատարվում: Բաբա Այուբը կանգնած էր փակ աչքերով, և արցունքները հոսում էին, երբ լսում էր, թե ինչպես է Քախը բռունցքներով խփում դռանը և գոռում, որ իրեն ներս թողնեն: Բաբա Այուբը կանգնած մրմնջում էր՝ ներիր ինձ, ներիր ինձ, իսկ երկիրը ցնցվում էր ոտնաձայներից: Որդին լալիս էր, և հողը ցնցվում էր, մինչև դևը հեռացավ Մայդան Սաբզից և վերջնականորեն անհետացավ, ու լռություն տիրեց: Միայն Բաբա Այուբն էր լաց լինում՝ հայցելով Քախի ներումը:

Աբդուլլա՛, քույրդ արդեն քնել է: Ուտքերը ծածկիր վերնակով, լավ: Ուզում ես՝ էլ չպատմեմ: Ո՛չ: Ուզում ես՝ շարունակեմ: Համոզված ես, տղանս, դե լավ:

Լավ, ինչ էի ասում: Քառասուն օր սուգ էր: Ամեն օր հարևանները ուտելիք էին պատրաստում ամբողջ ընտանիքի համար, արթուն հսկում էին նրանց, բերում էին՝ ինչ կարող էին՝ թեյ, կոնֆետ, հաց ու նուշ և իրենց կարեկցանքն ու ցավակցությունները: Բաբա Այուբը հազիվ էր կարողանում շնորհակալական խոսքեր արտասանել: Անկյունում նստած՝ նա արցունքի հեղեղ էր թափում, այնքան առատ, կարծես ուզում էր դրանով վերացնել գյուղի երաշտը: Նման տառապանք ու վիշտ անգամ ամենաոխսերիմ թշնամուդ չես ցանկանա:

Անցավ մի քանի տարի: Երաշտը շարունակվում էր, և գյուղն ընկղմվեց առավել դաժան թշվառության մեջ: Մի քանի մանուկ օրորոցում մահացան ծարավից: Զրիորները ցամաքեցին, գետը չո-

րացավ: Բայց չէր պակասում Բաբա Այուբի վշտի գետը, որ ամեն անցնող օրվա հետ ավելի ու ավելի էր առատանում: Բաբա Այուբն այլևս ընտանիքին պիտանի չէր. չէր աշխատում, չէր աղոթում, նույնիսկ չէր ուտում: Կինն ու երեխաներն աղաչում էին նրան, բայց անօգուտ: Մյուս որդիները ստիպված էին անել հոր աշխատանքը, որովհետև նա կոտրված, միայնակ նստում էր դաշտի պռնկին՝ հայացքը հառած սարերին: Նա էլ չէր խոսում համագյուղացիների հետ, քանի որ վստահ էր, որ նրանք բամբասում են իր հետևից, ասում են, որ նա վախկոտի մեկն է, քանի որ կամավոր իր որդուն դեհն է հանձնել, և որ նա անձնուրաց հայր չէ, անձնուրաց հայրը պետք է կռվեր դեհի հետ և մեռներ ընտանիքին պաշտպանելիս:

Մի օր Բաբա Այուբն այդ մասին ասաց կնոջը:

— Գյուղացիները այդպիսի բաներ չեն ասում: Ոչ ոք չի կարծում, թե դու վախկոտ ես:

— Ես նրանց ասածները լսում եմ:

— Դու լսում ես քո սեփական ձայնը,— ասաց կինը, բայց չխոստովանեց, որ համագյուղացիներն իսկապես փսփսում են նրա հետևից: Բայց ասում էին, որ Բաբա Այուբը խելագարվել է:

Մի օր էլ Բաբա Այուբը հաստատեց, որ նրանք ճիշտ են: Նա վեր կացավ արևածագին, առանց կնոջն ու երեխաներին արթնացնելու հացի պատառներ գցեց իր քաթանե պարկի մեջ, մանգաղը կապեց գոտուն և դուրս եկավ:

Նա քայլեց օրեր, օրեր շարունակ: Այնքան էր քայլում, մինչև արևը դառնում էր հեռվում մարմրող կարմրավուն լույս: Գիշերները նա քնում էր քարանձավում, երբ քամին սուլում էր: Երբեմն նա կանգնում էր գետերի մոտ և ծառերի կամ ժայռերի տակ: Ուտում էր, ինչ գտնում էր շրջակայքում՝ հատապտուղներ, սունկ, ձուկ, որ ձեռքով բռնում էր գետերից: Օրեր էին լինում, երբ նա ոչինչ չէր ուտում: Բայց քայլում էր, և երբ անցորդները հարցնում էին, թե ուր է գնում, և նա պատասխանում էր, ոմանք ծիծաղում, ոմանք էլ արագ հեռանում էին՝ վախենալով, թե նա խելագար է, թեպետ կային մարդիկ, որոնք Բաբայի համար աղոթում էին, որովհետև իրենք էլ էին իրենց երեխաներին տվել դեհն: Բաբա Այուբը գլուխը կախ շարունակում էր իր ճամփան: Երբ կոշիկները հալից ընկան, նա դրանք

ամրացրեց պարաններով, իսկ երբ պարաններն էլ քրքրվեցին, Բաբան շարունակեց քայլել բոբիկ: Այդպես անցավ անապատներով ու դաշտերով:

Ի վերջո հասավ մի բարձր սարի, որտեղ, ասում էին, դևի ամրոցն էր: Պատառոտված շորերով, վիրավոր ոտքերով, գզգզված մազերով, բայց անխախտ վճռականությամբ սկսեց սարը բարձրանալ: Սրածայր ժայռերը ծակում էին կրունկները, իսկ բազեները կտցահարում էին նրա այտերը, երբ բարձրանում էր նրանց բների մոտով: Փոթորիկները փորձում էին պոկել նրան սարերի վրայից: Բայց նա մազլցում էր մի քարից մյուսը, մինչև հայտնվեց ամրոցի դռան առաջ:

— Ո՛վ է համարձակվել,— որոտաց դևի ձայնը, երբ Բաբան քարեր շարտեց դևի ամրոցի դարպասին:

Բաբա Այուրը տվեց իր անունը և ավելացրեց.

— Ես եկել եմ Մայդան Սաբզ գյուղից:

— Ի՞նչ է, թշվառական, մահիդ ես ուզում: Ով համարձակվում է խանգարել ինձ իմ սեփական տանը, պիտի մեռնի: Ի՞նչ է ուզածդ:

— Ես եկել եմ քեզ սպանելու:

Դարպասից այն կողմ լռություն տիրեց: Հետո դուռը ճռնչալով բացվեց, և երևաց դևը՝ Բաբա Այուրին վախեցնելով իր մղձավանջային շուքով:

— Իսկապէ՛ս,— որոտաց նա բամբ ձայնով:

— Իհարկե՛ս,— ասաց Բաբա Այուրը,— մեզնից մեկը պիտի մեռնի:

Մի պահ թվաց, թե դևը կջնջի Բաբա Այուրին գետնի երեսից և ուղղակի ատամի տակ կառնի նրան: Բայց ինչ-որ բան ստիպեց, որ նա վարանի, գուցե ծեր մարդու ասածների խենթությունը, խռիվ մորուքը, արյունոտ դեմքը և փոշու մեջ կորած մարմինն ու ճաքած կրունկները: Կամ էլ այն, որ ծեր մարդու աչքերում դևը վախի նույնիսկ մի նշույլ չտեսավ:

— Ասացիր՝ որտեղի՞ց ես եկել:

— Մայդան Սաբզից,— ասաց Բաբա Այուրը:

— Քեզ նայելով՝ հասկանում եմ, որ լավ հեռու է քո Մայդան Սաբզը:

— Չեմ եկել այստեղ շաղակրատելու, եկել եմ, որ...

Դեր բարձրացրեց ճանկերով թաթը:
 — Դու եկել ես ինձ սպանելու: Բայց նախքան մեռնելս ուզում եմ վերջին խոսքս ասել:

— Բարի,— ասաց Բաբա Այուբը,— բայց կարճ:

— Շնորհակալ եմ,— քնծիծաղ տվեց դեր:— Կարող եմ իմանալ՝ որ ծանր մեղքիս համար ես ուզում ինձ սպանել:

— Դու տարել ես իմ կրտսեր որդուն,— պատասխանեց Բաբա Այուբը:— Նա աշխարհում ամենաթանկն էր ինձ համար:

Դեր փնչաց ու տրորեց կզակը:

— Ես շատ երեխաներ եմ վերցրել շատ հայրերից,— ասաց նա:

Բաբա Այուբը զայրացած դուրս քաշեց մանգաղը:

— Դե ինչ, ես նրանց փոխարեն էլ վրեժ կլուծեմ:

— Ասեմ քեզ, որ համարձակությունդ հիացնում է ինձ:

— Դու ոչինչ չգիտես համարձակության մասին,— ասաց Բաբա Այուբը:— Համարձակ լինելու համար պիտի կորցնելու բան չունենաս, ու ես կորցնելիք չունեմ:

— Դու կարող ես կյանքդ կորցնել,— ասաց դեր:

— Դու արդեն գողացել ես այն:

Դեր դարձյալ փնչացրեց և մտացրիվ նայեց Բաբա Այուբին: Եվ ասաց.

— Բարի, ես ընդունում եմ քո մարտահրավերը: Բայց պիտի գաս իմ հետևից:

— Արագացրո՛ւ,— ասաց Բաբա Այուբը:— Համբերությունս հատնում է:

Դեն ուղղվեց դեպի մի մեծ սրահ, Բաբա Այուբը ստիպված էր հետևել նրան: Նրանք անցան միջանցքների լաբիրինթոսով: Միջանցքների առաստաղները՝ հենված հսկայական աշտարակների վրա, հասնում էին ամպերին: Անցան բազում աստիճանավանդակներով և այնքան մեծ սենյակներով, որ դրանցից յուրաքանչյուրում կարող էր տեղավորվել Բաբա Այուբի գյուղը: Եվ վերջապես հասան մի մեծ սենյակ, որի հեռավոր պատից վարագույր էր կախված:

— Միտ արի,— ասաց դեր:

Բաբա Այուբը մոտեցավ և կանգնեց դեի կողքին:

Նա բացեց վարագույրը, որի հետևում մեծ ապակե պատուհան

էր: Պատուհանից այն կողմ երևում էր մեծ այգի՝ եզերված բարձր թխկիներով, բազմագույն ծաղիկներով, կապույտ սալիկապատ ջրավազաններով, մարմարե աստիճանավանդակներով և փարթթան մարգագետիններով: Բաբա Այուբը տեսավ զարդաքանդակված պարիսպներ, նռնենիների ստվերում քչքչացող շատրվաններ: Մի քանի կյանք էլ չէր բավականացնի այդ վայրի գեղեցկությունը նկարագրելու համար:

Բայց Բաբա Այուբին ապշեցրեց այգում երջանիկ վազվզող երեխաների ուրախությունը: Նրանք բռնոցի էին խաղում՝ ծառերի շուրջը պտտվելով, կամ պահմտոցի՝ թաքնվելով ցանկապատի հետևում: Բաբա Այուբը երկար նայեց և ի վերջո գտավ՝ ում փնտրում էր: Ահա նա՝ իր Քաիս որդին՝ ողջ և առողջ: Նա մեծացել էր, մազերն էլ երկարել էին: Հագին հրաշալի սպիտակ վերնաշապիկ էր և ամուր տաբատ: Նա երջանիկ քրքիջով վազում էր իր ընկերների հետևից:

— Քաիսը,— մրմնջաց Բաբա Այուբը, և նրա շունչը գոլորշի կապեց ապակու վրա: Եվ գոռաց որդու անունը:

— Նա չի կարող քեզ լսել,— ասաց դևը:— Ոչ էլ տեսնել:

Բաբա Այուբը ցատկոտում էր՝ ձեռքերը թափահարելով, խփում ապակուն, բայց դևը դարձյալ փակեց վարագույրը:

«Չեմ հասկանում,— մտածեց Բաբա Այուբը,— ես կարծում էի»:

— Սա քո պարզն է,— ասաց դևը:

— Բացատրիր, խնդրեմ,— բացականչեց Բաբա Այուբը:

— Ես քեզ փորձության ենթարկեցի:

— Ի՞նչ փորձություն:

— Ես փորձում էի քո սերը: Դա դաժան փորձություն էր, և ես հաղորդակից եմ քո տառապանքին: Դու անցար այդ փորձությունը, և դա քո պարզն է: Եվ նրա:

— Իսկ եթե ես ընտրություն չանեի: Եթե ես մերժեի ընտրությունը:

— Կկործանվեին քո բոլոր երեխաները,— ասաց դևը,— քանզի նրանք կանհիծվեին, ինչպես անհիծված է ամեն ոք, որ թույլ հայր ունի, վախկոտ հայր, որ պատրաստ է զոհաբերելու իր երեխաներին, բայց ոչ սեփական խիղճը: Ասում ես, թե քաջություն չունես, բայց ես

տեսնում եմ այն քո մեջ: Դու քո ուսերին վերցրիր այդ բեռը, քաջություն ունեցար, և ես հարգում եմ քեզ դրա համար:

Թուլացած Բաբա Այուրը գոտուց քաշեց հանեց մանգաղը, բայց այն սահեց ձեռքից և բարձր ծխագոցով ընկավ մարմարե հատակին: Ծնկները ծավվեցին, և նա ստիպված նստեց:

— Քո որդին քեզ չի հիշում,— շարունակեց դևը:— Սա է իր կյանքը այժմ, և դու տեսար, որ նա երջանիկ է: Այստեղ նա ունի լավ ուտելիք, հագուստ, ընկերություն և սեր: Նրան ուսուցանում են արվեստներ, լեզուներ, իմաստություն, գթասրտություն: Նա ոչնչի կարիք չունի: Երբ մեծանա, կարող է հեռանալ. նա ազատ է: Ես կարծում եմ, որ նա բարություն կպարգևի բոլորին և վշտի մեջ տոչորվողներին կընծայի երջանկություն:

— Ուզում եմ տեսնել նրան,— ասաց Բաբա Այուրը:— Ուզում եմ տուն տանել:

— Իսկապես ուզում ես:

Բաբա Այուրը նայեց դևին:

Կախարդական էակը գնաց իր առանձնասենյակ, որը վարագույրի մոտ էր, և դարակից հանեց ավազի ժամացույց:

— Գիտես՝ ինչ է ավազի ժամացույցը, Աբդուլլա: Գիտես: Շատ լավ:

Այսպիսով՝ դևը շրջեց այն և դրեց Բաբա Այուրի ոտքերի մոտ:

— Դու կարող ես նրան տուն տանել,— ասաց դևը:— Եթե դու այդպես որոշես, նա այլևս չի կարողանա վերադառնալ այստեղ: Հենց ավազը դատարկվի, հայտնի՜ր ինձ քո որոշման մասին:

Եվ արտասանելով այդ խոսքերը՝ դևը դուրս եկավ սենյակից՝ Բաբա Այուրին թողնելով հերթական ցավագին ընտրության առաջ:

«Տուն եմ տանելու տղայիս»,— անմիջապես մտածեց Բաբա Այուրը: Իր ամբողջ էությանմբ նա միայն դա էր փափագում, իր հազարավոր երազներում դրա մասին էր երազում՝ նորից գրկել փոքր Քախին, համբուրել որդու այտերը և զգալ նրա փոքր թաթիկների փափկությունը: Բայց մի բան էլ կար: Ասենք՝ նա տուն տանի Քախին: Ինչ է նրան սպասվում Մայդան Սաբզ գյուղում. գեղջուկի ծանր կյանքը, լավագույն դեպքում՝ ինչպես իրենը: Այն էլ, եթե նա չմեռնի երաշտից, ինչպես գյուղի շատ երեխաներ:

«Կներե՞ն արդյոք քեզ,— հարցրեց ինքն իրեն Բաբա Այուբը,— գիտակցելով, որ, եսասիրությունից դրդված, գրկել ես նրան շքեղությամբ և բազում հնարավորություններով լի կյանքից»: Մյուս կողմից, Քահիսին թողնելով այստեղ, ինչպե՞ն կարող էր հաշտվել այն մտքի հետ, որ, իմանալով՝ իր որդին կենդանի է և որտեղ է, միևնույնն է, հնարավորություն չի ունենա նրան տեսնելու: Կարելի՞ է արդյոք դրան դիմանալ: Բաբա Այուբը արտասովեց: Նա այնքան հուսահատ էր, որ վերցրեց ավազի ժամացույցը և շրխկացրեց պատին: Ժամացույցը փշրվեց, հազար կտոր եղավ, և ավազահատիկները շաղ եկան հատակով մեկ:

Դևը մտավ սենյակ և տեսավ, որ Բաբա Այուբը կորացած ուսերով կանգնած է փշրված ապակու վրա:

— Շատ դաժան արարած ես,— ասաց Բաբա Այուբը:

— Եթե դու ապրես իմ չափ,— պատասխանեց դևը,— կհասկանաս, որ դաժանությունն ու բարեգործությունն ուղղակի նույն գույնի տարբեր երանգներն են: Դե ինչ, կատարեցի՞ր ընտրությունդ:

Բաբա Այուբը սրբեց արցունքները, վերցրեց մանգաղն ու կապեց գոտուն: Նա դանդաղ, գլխիկոր շարժվեց դեպի դուռը:

— Դու լավ հայր ես,— ասաց դևը, երբ Բաբա Այուբն անցավ նրա կողքով:

— Թող որ դու այրվես դժոխքի կրակներում քո արածների համար,— հոգնատանջ ասաց Բաբա Այուբը:

Նա դուրս էր գալիս սենյակից, երբ դևը ձայն տվեց և հանձնեց Բաբա Այուբին մի սրվակ՝ մուգ հեղուկով:

— Խմի՛ր սա, երբ տուն հասնես: Ցտեսություն:

Բաբա Այուբը վերցրեց սրվակն ու անձայն հեռացավ:

Շատ օրեր անց Բաբա Այուբի կինը, դաշտի պռնկին նստած, նայում էր հեռուն, ճիշտ այնպես, ինչպես Բաբա Այուբն էր նայում՝ սպասելով Քահիսի վերադարձին: Ամեն անցնող օրվա հետ կնոջ հույսերը մարում էին: Գյուղի բնակիչներից շատերն արդեն խոսում էին Բաբա Այուբի մասին անցյալ ժամանակով: Մի անգամ նա դարձյալ գետնին նստած աղոթում էր, երբ հանկարծ տեսավ, որ սարերի կողմից մի վտիտ կերպարանք անջատվեց և մոտեցավ գյուղին: Սկզբում կինը կարծեց, թե մի մոլորված դերվիշ է, մի սքրած մարդ՝

ցնցոտիներով, դատարկ աչքերով և ներս ընկած քունքերով, բայց երբ մոտեցավ, ճանաչեց իր ամուսնուն, սիրտը հուզմունքից թարտաց, և հանգստացած մի ճիչ արձակեց:

Ապա Բաբա Այուբը լողացավ, ջուր խմեց, հաց կերավ և տանը պառկած էր, երբ գյուղացիները եկան, խմբվեցին նրա շուրջը և սկսեցին հարցեր տալ.

— Ո՞ւր գնացիր, Բաբա՛ Այուբ:

— Ի՞նչ տեսար:

— Ի՞նչ պատահեց քեզ:

Բաբա Այուբը չէր կարող պատասխանել նրանց հարցերին, քանի որ չէր հիշում, թե ինչ է պատահել իրեն: Նա իր ճամփորդությունից ոչինչ չէր հիշում: Չէր հիշում, որ բարձրացել է սարը, խոսել է դևի հետ, չէր հիշում նրա ամրոցը, չէր հիշում վարագույրով մեծ սենյակը:

Կարծես զարթնել էր ու տեսած երազը չէր հիշում: Չէր հիշում թաքնված այգին, երեխաներին և ծառերի ստվերում ընկերների հետ խաղացող իր որդի Քախսին: Երբ ինչ-որ մեկը տալիս էր Քախսի անունը, Բաբա Այուբը զարմացած աչքերն էր թարթում: Նա չէր հիշում նույնիսկ, որ այդ անունով որդի է ունեցել:

Դու հասկանո՞ւմ ես, Աբդուլլա՛, որ դա իրական գթասրտություն էր. այն հեղուկը ջնջում էր հիշողությունը: Դա դևի տված երկրորդ պարգևն էր Բաբային՝ երկրորդ փորձությունը հաջող անցնելու համար:

Այդ գարուն երկինքը վերջապես բացվեց Մայդան Սաբաի վրա: Անձրև տեղաց, և դա մեղմ անձրև չէր, այլ խսկական տեղատարափ: Ջրի շիթերը թափվում էին երկնքից, և գյուղի ծարավ բնակիչները երջանիկ հայացքները հառել էին երկնքին: Ողջ օրը անձրևի կաթիլները թմբկահարում էին Մայդան Սաբաի կտուրները և խլացնում էին աշխարհի մյուս բոլոր ձայները: Տերևների ծայրերից գլորվում էին խոշոր ծանր կաթիլները: Ջրհորները լցվել, և գետի ջրերը բարձրացել էին: Արևելքի սարերը ծածկվել էին կանաչով և դաշտային ծաղիկներով, և առաջին անգամ՝ երկար տարիներ անց, երեխաները խաղում էին խոտի վրա, և բոլորն ուրախ էին:

Անձրևներից հետո մարդիկ անցան գործի, քանի որ կավածեփ

ջրհորներից մի քանիսն ավերվել էին, կտուրները կաթում էին, իսկ դաշտերի մի մասը վերածվել էր ճահճի: Բայց երկարատև երաշտի թողած ավերածություններից հետո Մայրան Սաբզի բնակիչները չէին բողոքում, այլ նորոգում էին պատերը, կտուրները և չորացնում ջրանցքները: Այդ աշուն Բաբա Այուբը հավաքեց պիստակի ամենաառատ բերքը, և դրանից հետո շարունակաբար ամեն տարի նրա բերքն ավելանում էր: Բաբա Այուբը հպարտորեն նստած էր շուկայում՝ պիստակի կույտերի մոտ, և փայլում էր աշխարհի ամենաերջանիկ մարդու պես, որ վաճառում է իր բերքը մեծ քաղաքներում: Երաշտն այլևս չեկավ Մայրան Սաբզ:

Էլ ասելու բան չմնաց, Աբդուլլա: Դու կարող ես հարցնել՝ արդյոք մի երիտասարդ, ձի հեծած, երբևէ անցավ այդ գյուղով՝ արկածներ որոնելով, արդյոք նա գյուղում կանգնեց ջուր խմելու, որովհետև գյուղում շատ ջուր կար, արդյոք գյուղացիների հետ հաց կիսեց, միգուցե հենց Բաբա Այուբի հետ: Չեմ կարող ասել, տղաս: Միայն կարող եմ ասել, որ Բաբա Այուբը ապրեց մինչև խոր ծերություն, տեսավ, թե ինչպես ամուսնացան իր երեխաները, ինչպես թռուներ ծնվեցին, և ամեն նոր թռռ Բաբա Այուբին բերում էր նոր երջանկություն:

Եվ նաև կարող եմ ասել, որ լինում էին գիշերներ, երբ Բաբա Այուբը չէր քնում առանց պատճառի: Շատ ծեր էր, բայց ուռքի էր, թեպետ ձեռնափայտի օգնությամբ էր քայլում: Ահա այդպիսի անքուն մի գիշեր նա առանց կնոջն արթնացնելու վերցրեց ձեռնափայտն ու դուրս եկավ տնից: Նա քայլում էր մթության մեջ: Ձեռնափայտը զարկում էր հողին, և քամին շոյում էր նրա դեմքը: Դաշտի պռնկին մի տափակ քար կար, նա նստեց այդ քարին: Հաճախ էր նստում այնտեղ, նայում աստղերին և լուսնի կողքով սահող ամպերին: Մտածում էր իր երկար կյանքի մասին և շնորհակալություն հայտնում երկնքին՝ իրեն տված շռայլության և ուրախության համար: Ավելին ցանկանալը անշնորհակալ կլիներ: Նա երջանիկ ժպտաց՝ ականջ դնելով սարերից եկող քամուն և ծտերի ծվլլոցին:

Բայց երբեմն այդ բոլոր ձայների միջից մեկ ուրիշ ձայն էր հասնում նրա ականջին: Դա զանգակի հեռավոր և սուր զնգոց էր: Բաբա Այուբը չէր հասկանում, թե որտեղից է գալիս այդ ձայնը, երբ

բոլոր ոչխարներն ու այծերը քնած են: Երբեմն իրեն համոզում էր, որ ոչ մի ձայն չի լսել, իսկ երբեմն այնքան պարզ էր լսում, որ գոռում էր մթության մեջ. «Կամ ինչ-որ մեկն այստեղ, ո՛վ կա այստեղ: Դուրս եկ»: Բայց պատասխան չէր լսում: Բարա Այուրը չէր հասկանում դա: Նաև չէր հասկանում, թե ինչու ալիքի պես մի բան, մի բան, որ նման էր տխուր երազից մնացած հետքի, միշտ անցնում էր իր սրտով, երբ նա զանգի ծնագոց էր լսում, և ամեն անգամ իրեն զարմացնում էր ինչպես անսպասելի բարձրացած քամի: Բայց հետո անցնում էր, ինչպես ամեն բան աշխարհում: Անցնում էր:

Այսքանը, տղան: Վերջ, էլ բան չկա ասելու, պատմությունը վերջացավ: Հիմա շատ ուշ է, ես հոգնած եմ, ես ու քույրդ պիտի արթնանանք արևածագին: Միմը հանգցրո՛ւ, գլուխդ դիր բարձին և փակիր աչքերդ: Պինդ քնիր: Վաղն առավոտյան հրաժեշտ կտանք իրար:

Ինչպես լսում եմ, որ մեծ հարցեր են առաջանում, և որ դրանք լուրջ հարցեր են, որոնք պահանջում են լուրջ պատասխաններ: Երբեմն կարծիքս այն է, որ մեծ հարցերը, որոնք առաջանում են մեզ, դրանք են, որոնք պահանջում են լուրջ պատասխաններ: Երբեմն կարծիքս այն է, որ մեծ հարցերը, որոնք առաջանում են մեզ, դրանք են, որոնք պահանջում են լուրջ պատասխաններ: Երբեմն կարծիքս այն է, որ մեծ հարցերը, որոնք առաջանում են մեզ, դրանք են, որոնք պահանջում են լուրջ պատասխաններ:

Երբեմն կարծիքս այն է, որ մեծ հարցերը, որոնք առաջանում են մեզ, դրանք են, որոնք պահանջում են լուրջ պատասխաններ: Երբեմն կարծիքս այն է, որ մեծ հարցերը, որոնք առաջանում են մեզ, դրանք են, որոնք պահանջում են լուրջ պատասխաններ: Երբեմն կարծիքս այն է, որ մեծ հարցերը, որոնք առաջանում են մեզ, դրանք են, որոնք պահանջում են լուրջ պատասխաններ: Երբեմն կարծիքս այն է, որ մեծ հարցերը, որոնք առաջանում են մեզ, դրանք են, որոնք պահանջում են լուրջ պատասխաններ:

Երբեմն կարծիքս այն է, որ մեծ հարցերը, որոնք առաջանում են մեզ, դրանք են, որոնք պահանջում են լուրջ պատասխաններ: Երբեմն կարծիքս այն է, որ մեծ հարցերը, որոնք առաջանում են մեզ, դրանք են, որոնք պահանջում են լուրջ պատասխաններ: Երբեմն կարծիքս այն է, որ մեծ հարցերը, որոնք առաջանում են մեզ, դրանք են, որոնք պահանջում են լուրջ պատասխաններ: Երբեմն կարծիքս այն է, որ մեծ հարցերը, որոնք առաջանում են մեզ, դրանք են, որոնք պահանջում են լուրջ պատասխաններ:

Երբեմն կարծիքս այն է, որ մեծ հարցերը, որոնք առաջանում են մեզ, դրանք են, որոնք պահանջում են լուրջ պատասխաններ: Երբեմն կարծիքս այն է, որ մեծ հարցերը, որոնք առաջանում են մեզ, դրանք են, որոնք պահանջում են լուրջ պատասխաններ: Երբեմն կարծիքս այն է, որ մեծ հարցերը, որոնք առաջանում են մեզ, դրանք են, որոնք պահանջում են լուրջ պատասխաններ: Երբեմն կարծիքս այն է, որ մեծ հարցերը, որոնք առաջանում են մեզ, դրանք են, որոնք պահանջում են լուրջ պատասխաններ:

Երկրորդ

ԱՇՈՒՆ, 1952

Հայրը նախկինում երբևէ չէր խփել Աբդուլլային: Տղան հանկարծակի հարված ստացավ գլխին՝ ականջից քիչ վերև, ուժեղ, շեշտակի, բաց ափով: Աբդուլլայի աչքերը արցունքով լցվեցին, բայց նա արագորեն մաքրեց դրանք:

— Տոն գնա,— շարտեց հայրը սեղմած ատամների արանքից:

Վերևում լավեց Փարիի հեծկտոցը:

Հայրը դարձյալ խփեց նրան, ավելի ուժեղ, այս անգամ՝ ձախ այտին: Աբդուլլայի գլուխը հարվածից հետ մղվեց: Նրա դեմքն այրվում էր, և արցունքները հոսում էին աչքերից: Ձախ ականջի մեջ ինչ-որ զնգոց կար: Հայրը կանգ առավ, կռացավ այնքան մոտ, որ նրա կնճռապատ դեմքն ասես ստվեր գցեց անապատի սարերի և երկնքի վրա:

— Ասացի՛ տուն գնաս, տղա,— կրկնեց նա՝ ցավն աչքերի մեջ:

Աբդուլլան ծայն չհանեց: Նա դժվարությամբ թուքը կույ տվեց և, աչքերը կկոցելով, նայում էր հորը՝ փորձելով պաշտպանել աչքերն արևից:

Մի փոքր հեռվից՝ կարմիր սայլակի միջից, Փարին ծայն տվեց՝ Աբուլա: Քրոջ ծայնը դողում էր վշտից ու վախից:

Հոր ծակող հայացքը կանգնեցրեց նրան: Հայրը դանդաղ շարժվեց դեպի սայլակը: Փարին ձեռքերը պարզած ձգվեց դեպի եղբայրը: Աբդուլլան սպասեց, մինչև նրանք առաջ ընկան, աչքերը սրբեց և հետևեց նրանց:

Քիչ անց հայրը նրա վրա քար նետեց: Իրենց մոտ՝ Շադբաղում, երեխաներն այդպես չէին վարվի նույնիսկ Փարիի շան՝ Շուջայի հետ, իհարկե, եթե դիտավորյալ չցանկանային ցավ պատճառել: Հոր նետած քարը չհասավ Աբդուլլային և ընկավ նրանից մի քանի քայլ այն կողմ: Տղան սպասեց մի փոքր, և երբ հայրն ու Փարին ճանապարհ ընկան, դարձյալ հետևեց նրանց:

Կեսօրն անց էր, երբ հայրը դարձյալ կանգ առավ, թեքվեց Աբդուլլայի կողմը և ձեռքով կանչեց նրան:

— Ձեռք չես քաշում,— ասաց նա:

Մինչդեռ Փարին արագ բռնեց Աբդուլլայի ձեռքը: Նա նայում էր եղբորը. աչքերը թաց էին, իսկ ցանցառատամ ժպիտը կարծես հուշում էր, որ էլ ոչ մի վատ բան չի կարող պատահել իրեն, քանի դեռ Աբդուլլան իր կողքին է: Նա մատներն օղակեց քրոջ դաստակի շուրջը, ինչպես անում էր ամեն գիշեր, երբ երկուսով քնում էին նեղլիկ մահճակալում՝ գլուխ գլխի, ոտքերով միմյանց հպված:

— Դու պետք է մնայիր տանը,— ասաց հայրը,— մորդ և Իքբալի հետ, ինչպես ասել էի: Աբդուլլան մտածեց. «Նա քո կինն է: Մենք մեր մորը հողին ենք հանձնել»: Բայց կարողացավ խեղդել բառերը, նախքան կարտասաներ դրանք:

— Լավ, արի մեզ հետ,— ասաց հայրը,— բայց չփորձես լաց լինել: Լսեցիր:

— Այո՛:

— Զգուշացնում եմ, ես դա չեմ հանդուրժի:

Փարին ժպտաց Աբդուլլային. նա նայեց քրոջ գունատ աչքերին, կլոր վարդագույն այտերին և ի պատասխան՝ ժպտաց:

Եվ այդ պահից նրանք ձեռք ձեռքի քայլում էին սայլակի կողքով, որը ճոճվում էր անապատի անհարթ գետնի վրա: Քույր ու եղբայր երջանիկ, թաքուն հայացքներ էին փոխանակում, բայց գրեթե չէին խոսում, որ չփչացնեն հոր տրամադրությունը և իրենց անակնկալ երջանկությունը: Երկար քայլեցին նրանք երեքով: Տեսադաշտում ոչ ոք չկար, միայն պղնձագույն խոր ձորակներ ու ամեհի ավազածածկ ժայռեր: Անապատը ծավալվում էր նրանց առջև բաց ու լայնարձակ, կարծես ստեղծվել էր միայն ու միայն նրանց համար: Օդը շնչում էր տոթակեզ գոլորշով, իսկ երկինքը բարձր էր ու լազուր: Շոգից

ճաքճքված գետնի վրա փայլփլում էին ժայռաբեկորները: Աբդուլլան լսում էր միայն սեփական շնչառությունը և սայլակի անիվների ռիթմիկ չխկչխկոցը, մինչ հայրը քաշում էր սայլակը դեպի հյուսիս:

Որոշ ժամանակ անց նրանք կանգ առան՝ հովին հանգստանալու: Ծանր հոգոց հանելով՝ հայրը գետնին դրեց սայլակի բռնակները, ձգվեց՝ մեջքը հետ գցելով, և դեմքը դարձրեց արևին:

— Ինչքան կա մինչև Քարույ, — հարցրեց Աբդուլլան:

Հայրը մի հայացք գցեց նրանց վրա: Նրա անունը Սաբուր էր: Մաշկը թուփ էր, դեմքը՝ կոպիտ, ոսկրոտ և եռանկյունաձև, քիթը կեռ էր՝ անապատի գիշերանգղի կտուցի պես, իսկ աչքերը փոսրնկած էին: Ցողունի պես բարակիրան էր, բայց երկար ու ծանր աշխատանքը պրկել էր նրա մկանները պինդ ճոճապարանների պես:

— Եթե հաջողվի, վաղն առավոտյան, — ասաց նա՝ շրթունքներին մոտեցնելով կովի կաշվից տիկը:

Մի երկար ումպ արեց, նրա ադամախնձորը շարժվում էր վեր ու վար:

— Քեռի Նաբին մեքենա ունի: Ինչո՞ւ նա մեզ չտարավ, — հարցրեց Աբդուլլան:

Հայրն աչքերը ոլորեց որդու վրա:

— Ստիպված չէինք լինի այս ճանապարհը ոտքով անցնել, — շարունակեց Աբդուլլան:

Հայրը ձայն չհանեց: Հանեց մոխրաբծերով գլխարկը և թևքով սրբեց ճակատի քրտինքը: Փարին սայլակից մատը դուրս հանեց:

— Նայիր, Աբուլա՛, — ձայն տվեց նա, — ևս մեկը:

Աբդուլլան նայեց նրա մատի ուղղությամբ և տեսավ, որ ժայռի ստվերում՝ գետնի վրա, ընկած է մի փետուր՝ երկար, մոխրագույն՝ վառված ածխի կտորի պես: Աբդուլլան մոտեցավ, վերցրեց փետուրը և փչեց՝ մաքրելով փոշու հատիկները: «Բազե՛, միգուցե աղավախ կամ անապատի արտոնյտ», — շրջելով փետուրը՝ մտածեց նա: Այդ օրը մի քանի այդպիսի թռչուն տեսել էր: «Չէ՛, հաստատ բազե է»: Նա կրկին փչեց փետուրի վրա և տվեց այն Փարիին, որը երջանիկ ճանկեց այն եղբոր ձեռքից:

Տանը՝ Շադբաղում, Փարին բարձի տակ պահում էր մի հին թիթեյա թեյաման, որն Աբդուլլան էր տվել: Այն մի ժանգոտած փա-

կան ուներ, իսկ կափարիչին նկարած էր մի մորուքավոր հնդիկ՝ երկար, կարմիր խալաթով և գլխին փաթաթած չալմայով, երկու ձեռքով բռնած թեյի բաժակ, որը գուրդի էր արձակում: Տուփի մեջ նրա փայփայած իրերն էին. աքաղաղի մուգ կանաչ և կարմիր գինու գույնի փետուրներ, աղավառ պոչից մի երկար ու սպիտակ փետուր, շագանակագույն փայլատ ձնձղուկի փետուր՝ մուգ պուտերով, և սիրամարգի մի կանաչ փետուր էլ՝ փայլփլուն, վերնամասի աչքանման նախշով, որ Փարիի հպարտության առարկան էր:

Այդ փետուրը Աբդուլլան նվիրել էր քրոջը մի երկու ամիս առաջ: Նրան պատմել էին հարևան գյուղում բնակվող մի տղայի մասին, որ սիրամարգ ուներ: Մի անգամ, երբ հայրը աշխատանքի էր՝ Շաղբաղից հարավ գտնվող մի քաղաքում մարգեր էր փորում, Աբդուլլան ոտքով հասավ հարևան գյուղ, գտավ այդ տղային և նրանից սիրամարգի մի փետուր խնդրեց: Երկար-բարակ խոսակցությունից հետո նա իր կոշիկները փոխանակեց փետուրի հետ: Երբ վերադարձավ Շաղբաղ՝ սիրամարգի փետուրը վերնաշապկի տակ՝ գոտում խրած, նրա կրունկների վրա վերքեր էին բացվել, և քայլելիս արյան հետքեր էին մնում գետնի վրա: Ոտնաթաթերի մեջ փշոտ տատասկներ էին խրվել: Ամեն քայլի հետ ցավն արձագանքում էր Աբդուլլայի ոտքերում:

Տուն գալուն պես նա տեսավ խորթ մորը՝ Փարվանային, որ նաան² էր թխում թանդուրի³ առջև կռացած: Աբդուլլան կայծակնային արագությամբ թաքնվեց հսկա կաղնու հետևում և սպասեց, որ կինն ավարտի իր գործը: Ծառի բնի հետևում պահ մտած՝ նա նայում էր, թե ինչպես է Փարվանան աշխատում: Նա լայն ուսերով, երկար ձեռքերով, կոշտ ափերով և այտուցված, կլոր դեմքով կին էր: Թեպետ «Փարվանա» անունը նշանակում էր «թիթեռ», կինը թիթեռի նրբության նշույլ անգամ չունեց:

Աբդուլլան կուզենար սիրել նրան սեփական մոր պես: Իր հարազատ մայրը երեք տարի առաջ՝ Փարիին ծննդաբերելիս, մահացել էր արյունահոսությունից: Այն ժամանակ նա յոթ տարեկան էր:

² Նաան — (այլ կերպ՝ խամիրին) հաց, անալի հացի տեսակ, ասիական խոհանոցին բնորոշ:

³ Թանդուր — թոնիր:

Աբդուլլան արդեն մոռացել էր մոր դեմքը, միայն հիշում էր, թե ինչպես էր մայրն ամեն գիշեր՝ քնելուց առաջ, իր գլուխն առնում ավերի մեջ, սեղմում կրծքին, շոյում այտը և օրոր ասում իրեն:

Ես գտա փոքրիկ, տխուր փերիին

Ստվերի տակ թթի ծառի:

Ես գիտեմ մի փոքրիկ, տխուր փերիի,

Ում մի գիշեր տարավ քամին:

Նա կուզենար այդպես սիրել խորթ մորը: Եվ մտածում էր, որ Փարվանան էլ երևի թաքուն նույնն էր երազում, որ կարողանար սիրել խորթ որդուն այնպես, ինչպես սիրում էր իր մեկ տարեկան տղային՝ Իքբալին, որին միշտ համբուրում էր ու փայփայում, և որի փռշտալը կամ հազալը մահու չափ վախեցնում էր նրան: Այդպիսի իսկական սիրով Փարվանան սիրում էր նաև իր առաջնեկին՝ Օմարին: Մայրը պաշտում էր նրան, բայց նա մահացավ ցուրտ ձմռանը: Երկուշաբթական էր, և Փարվանան ու հայրը նոր էին ընտրել նրա անունը: Նա մեկն էր այն երեք մանուկներից, որոնց կյանքը տարել էր այդ տարվա դաժան ձմեռը Շադբաղում: Աբդուլլան հիշում էր, թե ինչպես էր Փարվանան գրկում Օմարի կույ եկած փոքր դին, հիշում էր վշտի նրա ջղաձգումները: Նաև հիշում էր այն օրը, երբ թաղեցին Օմարին բլրի տակ, սառած հողի փոքր թմբիկը՝ կապույտ երկնքի տակ. Միլա Շեքիրը աղոթքներ էր երգում, իսկ քամին ձյան և սառույցի փոքր բեկորները մարդկանց աչքերն էր լցնում:

Աբդուլլան կասկածում էր, որ Փարվանան կբարկանա, երբ իմանա, որ իր ունեցած միակ կոշիկը փոխանակել է փետուրի հետ: «Հայրդ երկար աշխատել էր արևի տակ այդ կոշիկների համար»: «Նա ինձ ցույց կտա, երբ իմանա,— մտածեց Աբդուլլան:— Կարող է նույնիսկ խփել»: Փարվանան մի քանի անգամ արդեն հարվածել էր նրան: Նրա ձեռքերն ուժեղ էին՝ հաշմանդամ քրոջը տարիներ շարունակ բարձրացնել-իջեցնելուց կոպտացած: Փարվանան հմտորեն էր բանեցնում ցախավելը և նույն ուժով ու հմտությամբ կարող էր նաև ապտակ հասցնել:

Բայց, ի պատիվ իրեն, Աբդուլլային խփելուց Փարվանան հաճույք չէր ստանում: Երբեմն նույնիսկ քնքշանք էր դրսևորում իր խորթ երեխաների հանդեպ: Մի անգամ նա Փարիի համար կանաչավուն արծաթափայլ կտորից մի զգեստ կարեց: Կտորը հայրն էր բերել Քարուլից: Մի անգամ էլ ապշեցուցիչ համբերությամբ Աբդուլլային սովորեցնում էր, թե ինչպես միաժամանակ կարելի է երկու ձու կտորել առանց դեղնուցը վաասելու: Նա երեխաներին ցույց էր տալիս, թե ինչպես են ձկում ու փաթաթում հասած հասկերի ցողունները ինքնաշեն տիկնիկներ պատրաստելու համար. այդպես ինքն ու քույրն էին անում երեխա ժամանակ: Նաև լաթերի կտորներից այդ տիկնիկների համար զգեստներ էր կարում:

Բայց Աբդուլլան գիտեր, որ բարեհաճության այդ պահերը լրացուցիչ ձիգ էին պահանջում նրանից և կարծես դուրս բերվեին խորն ու ծանծաղ ջրհորից, ի տարբերություն այն ամենի, ինչ անում էր հարազատ որդու՝ Իքբալի համար: Եթե մի օր տանը հրդեհ բռնկվեր, Աբդուլլան վստահաբար գիտեր, թե ում կգրկեր Փարվանան տնից դուրս գալիս: Մի պահ անգամ չէր վարանելու: Ի վերջո, ամեն բան պարզ էր. ինքն ու Փարին նրա հարազատ երեխաները չէին: Իսկ մարդիկ սիրում են սեփական երեխաներին: Եվ անհնար էր որևէ բան փոխել: Իրենց ուրիշ կին էր լույս աշխարհ բերել...

Նա սպասեց, մինչև Փարվանան հացը ներս տարավ: Հետո կինը նորից երևաց տան շեմին՝ մի ձեռքով գրկած երեխային, իսկ մյուս ձեռքին պահած լվացքի կույտը: Աբդուլլան նայում էր, թե ինչպես է Փարվանան շորորալով գնում դեպի առուն: Երբ նա վերջապես անհետացավ, Աբդուլլան սողոսկեց տուն. նրա ներբանները տնքում էին ցավից ամեն անգամ, երբ ոտքը դնում էր գետնին: Նա նստեց և ոտքերը մտցրեց իր հին պլաստմասե սանդալների մեջ, որ իր միակ ունեցած կոշիկն էր: Աբդուլլան գիտեր, որ խելամիտ չի վարվել, բայց երբ ծնկի իջավ Փարիի մահճակալի մոտ և, մեղմորեն արթնացնելով նրան, մեջքի հետևից հրաշագործի պես հանեց և ցույց տվեց փետուրը, հասկացավ, որ դա արժեր անել. արժեր, որովհետև քրոջ դեմքը լուսավորվեց սկզբում զարմանքով, հետո հիացունքով, և Փարին եղբոր այտերին դրոշմեց բազմաթիվ համբույրներ: Նա քրքջում էր, երբ կզակը խուտուտ էին տալիս փետուրի

փափուկ ծայրով, ու Աբդուլլան հանկարծակի զգաց, որ ոտքերն էլ չեն ցավում:

— Հայրը նորից թևքով սրբեց ճակատի քրտինքը: Հերթով տիկից ջուր խմեցին: Հայրն ասաց.

— Հոգնած ես, տղա:

Աբդուլլան ասաց՝ ո՛չ, թեպետ իրականում լրիվ ուժասպառ էր եղել: Ոտքերն էլ ցավում էին. հեշտ չէր անապատը հատել սանդալներով:

Հայրն ասաց.

— Ներս անցիր:

Սայլակում Աբդուլլան նստեց Փարիի հետևում՝ փայտյա զուգափայտիկի մոտ՝ իր քրոջ ողնաշարի հպումը զգալով փորի և կրծքի շրջանում: Հայրը քաշում էր սայլակը, Աբդուլլան նայում էր երկնքին, սարերին և հեռավոր թավշյա բլուրների կիպ շարքերին: Նա նայում էր սայլակը քաշող հոր մեջքին, խոնարիված գլխին և ոտքերին, որոնցից կարմիր ավազի քուլաներ էին բարձրանում: Քուշի քոչվոր ցեղի քարավանն անցավ նրանց կողքով զնգացող զանգակների, մնչացող ուղտերի մի փոշեծածկ երթի պես, և հասած հասկի գույնի վարսերով, աչքերը սուրմա քսած կինը ժպտաց Աբդուլլային:

Այդ մազերը հիշեցրին Աբդուլլային իր մորը, և նա նորից վերապրեց հին ցավը՝ հիշելով մոր բարությունը, ներքին բնածին խինդը, նրա շփոթմունքը մարդկային դաժանությունից: Նա հիշում էր մոր կչկչան ծիծաղը և այն երկչոտ հպումը, երբ նա մերթընդմերթ շոյում էր իր գլուխը: Նրա մայրը նրբագեղ էր կեցվածքով և բնույթով, մի թեթև բարակիրան կին էր, մազափունջը միշտ դուրս էր մնում գլխաշորի տակից: Աբդուլլան միշտ զարմանում էր, թե ինչպես այդ փոքր, փխրուն մարմինը կարող էր ամփոփել այդքան խինդ ու բարություն: Այդ խինդը ժայթքում էր մոր ամբողջ էությունից, ճառագում էր աչքերից: Հայրը ուրիշ էր: Հոր մեջ կոպտություն կար: Նրանց աչքերը նայում էին նույն աշխարհին, բայց հայրը տեսնում էր միայն անտարբերություն, անվերջանալի տքնանք... Հոր աշխարհն անողոք էր. ոչ մի բան ձրի չի լինում, նույնիսկ սերը: Իսկ եթե մարդն աղքատ է, նրա վճարման գինը տառապանքն է: Աբդուլլան նայում էր քրոջ մազերի անհավասար բացվածքին, նրա

Նեղլիկ դաստակին, որ կախված էր սայլակի կողքից, և համոզվում, որ իրենց մոր մահից հետո Նրա մի մասնիկն անցել է Փարիին. Նրա զվարթ Նվիրումը, դյուրահավատությունն ու անբեկանելի լավատեսությունը: Փարին աշխարհում միակ մարդն էր, որ չէր կարող և չէր ցանկանա իրեն ցավ պատճառել: Աբդուլլան երբեմն մտածում էր, որ քույրն է իր ունեցած միակ ընտանիքը:

Օրվա գույներն աստիճանաբար աղոտացան, սուզվեցին մոխրագույնի մեջ, և հեռահար լեռնագագաթները նմանվեցին շոգած հսկաների ուրվապատկերի: Օրվա ընթացքում նրանք անցել էին մի քանի գյուղերով՝ փոշոտ ու մոռացված՝ ձիշտ Շադբադի պես: Փոքր, քառանկյուն տնակները՝ պատրաստված ծեփած ցեխից, երբեմն տարածվում էին դեպի սարալանջ, երբեմն՝ ոչ, և ծխի ժապավենները ոլորվում էին նրանց կտուրների վրայով: Լվացքի ձգված պարաններ, կրակի շուրջը պպգած կանայք, մի քանի կեչու ծառ, մի քանի հավ, մի քանի կով ու այծ և միշտ՝ մի մզկիթ: Վերջին գյուղը, որ նրանք անցան, կպած էր կակաչի դաշտին, և մի ծեր մարդ, որ սերմահան էր անում կակաչի գլխիկները, ձեռքով արեց նրանց: Նա ինչ-որ բան գոռաց, բայց Աբդուլլան չկարողացավ լսել նրան: Հայրը, ի պատասխան, ձեռքով արեց: Փարին հարցրեց.

— Աբուլմ:

— Հը՛:

— Կարծում ես՝ Շուջան տխրում է:

— Կարծում եմ, որ լավ է զգում:

— Ոչ ոք նրան չի վստահ:

— Նա մեծ շուն է, Փարի՛, և կարող է ինքն իրեն պաշտպանել:

Շուջան իրոք մեծ շուն էր: Հայրն ասել էր, որ երևի ժամանակին կռվող շուն է եղել, որովհետև ինչ-որ մեկը կտրել էր նրա պոչն ու ականջները: Բայց, այ՛, կարող է նա ինքն իրեն պաշտպանել թե ոչ, այլ խնդիր էր: Երբ թափառական այդ շունը առաջին անգամ հայտնվեց Շադբադում, երեխաները նրա վրա քարեր էին շարտում, ծակծկում ծառի ծյուղերով կամ հեծանիվի ժանգոտ շյուղերով: Շուջան երբեք չէր հարձակվում: Ժամանակի հետ գյուղի երեխաները ձանձրացան շանը տանջելուց և նրան հանգիստ թողեցին, բայց Շուջան, միևնույնն է, զգուշավոր և կասկածամիտ էր, կարծես չէր

մոռանում իր հանդեպ ունեցած նախկին չարությունը:

Շաղբաղում նա խուսափում էր բոլորից, Փարիից բացի: Փարիին տեսնելիս իրեն կորցնում էր: Շան սերն աղջկա հանդեպ անամպ էր ու անսահման: Առավոտյան, երբ Փարին տնից դուրս էր գալիս, Շուջան վեր էր թռչում և ցնցվում էր ամբողջ մարմնով: Կտրած պոչը կատաղի շարժում էր դետուդեն ու ցատկոտում էր այնպես, կարծես պարում էր վառվող ածուխների վրա, և երջանիկ պտտվում էր աղջկա շուրջը: Ամբողջ օրը ստվերի պես հետևում էր Փարիին, հոտոտում նրա կրունկները և երեկոյան, երբ բաժանվում էին, լքված պառկում էր դրսում՝ սպասելով հաջորդ օրվան:

— Աբուլմ:

— Հր':

— Երբ մեծանամ, քեզ հետ եմ ապրելու:

Աբդուլլան նայում էր մայր մտնող նարնջագույն արևին, որ թեքվել էր դեպի հորիզոնը:

— Եթե ուզենաս, բայց չես ուզենա:

— Կուզենամ:

— Դու կուզենաս ունենալ քո սեփական տունը:

— Բայց կարող եմք, չէ՞, հարևաններ լինել:

— Հսարավոր է:

— Հեռու չե՞ս ապրելու:

— Իսկ եթե ինձնից հոգնես:

Քույրը արմունկով բորեց Աբդուլլայի կողը:

— Ես չեմ հոգնի:

Աբդուլլան քմծիծաղ տվեց.

— Դե՛, հրաշալի է:

— Դու կողքիս պետք է լինես

— Այո՛:

— Մինչև ծերանանք:

— Շատ ծեր...

— Մշտապես:

— Այո՛, մշտապես:

Փարին շրջվեց, որ նայի եղբորը:

— Խոստանում ես, Աբուլմ:

— Այո՛, միշտ և միշտ:

Հետո հայրը Փարիին դրեց մեջքին, իսկ Աբդուլլան հետևից հրում էր դատարկ սայլակը: Նրանք քայլում էին, և Աբդուլլան ընկավ մտազուրկ ցնորության մեջ: Միայն զգում էր ծնկների վերուվար շարժումները, գլխարկի տակից հոսող քրտինքի մանր կաթիլները: Փարիի փոքր ոտքերը հարվածում էին հոր կոնքերին: Եվ տեսնում էր միայն հոր և քրոջ գետնին երկարող ստվերները, որոնք հեռանում էին իրենից, երբ դանդաղեցնում էր ընթացքը:



Քեռի Նաբին էր գտել հոր աշխատանքը: Նա Փարվանայի մեծ եղբայրն էր՝ Աբդուլլայի խորթ քեռին: Նա Քաբուլում վարորդ էր և միաժամանակ խոհարար: Ամիսը մեկ անգամ գալիս էր Շադբադ՝ նրանց այցելության. նրա գալուստը հայտարարում էին մեքենայի ազդանշանների շարքը և գյուղի երեխաների ձիչերը, որոնք վազում էին փայլուն շրջանակներով և մուգ կտորով կապույտ մեքենայի հետևից: Նրանք հարվածում էին պատուհաններին և ցեխավահանակին, մինչ քեռին անջատում էր շարժիչն ու լայն ժպիտով դուրս գալիս մեքենայից: Նա բարետես էր, երկար այտամորուսներով և հետ սանրած գանգուր մազերով, հագին՝ չափազանց լայն ձիթագույն կոստյում, սպիտակ երկար վերնաշապիկ և փափուկ շագանակագույն կոշիկներ: Բոլորը դուրս էին վազում՝ նրան նայելու, որովհետև նա մեքենա էր վարում, թեպետ մեքենան պատկանում էր նրա տիրոջը, և նաև որովհետև նա կոստյում էր հագնում ու աշխատում էր Քաբուլի պես մեծ քաղաքում:

Իր վերջին այցելության ժամանակ քեռի Նաբին հոր հետ խոսեց աշխատանքի մասին: Հարուստ մարդիկ, ում մոտ նա աշխատում էր, իրենց տանը նոր կառույցներ էին ավելացնում՝ մի փոքր հյուրատուն ետնաբակում՝ լողասենյակով, հիմնական շինությունից անջատ: Քեռի Նաբին նրանց առաջարկել էր վարձել Սաբուրին աշխատանքի համար: Գիտեր, որ նա շինարարությունից բավականաչափ գլուխ էր հանում: Քեռին ասաց, որ աշխատանքը լավ է վարձատրվում և այսպես թե այնպես մի ամսում կավարտվի:

Հայրը, իրոք, շինարարությունից գլուխ էր հանում: Նա շատ

էր աշխատել նման տեղերում: Ինչքան Աբդուլլան հիշում էր, հայրն աշխատանք էր փնտրում և շատ դռներ էր թակել օրավարձով աշխատանքի համար: Մի անգամ Աբդուլլան լսեց, թե ինչպես հայրն ասաց իրենց գյուղի ավագ Մուլա Շեքիրին. «Եթե ես ծնված լինեի կենդանու տեսքով, մուլա Սահիբ, երդվում եմ, ջորի կլինեի»: Երբեմն հայրն Աբդուլլային իր հետ տանում էր աշխատանքի: Նրանք խնձոր էին հավաքում մի քաղաքում, ուր հասնելու համար մի ամբողջ օր քայլում էին ոտքով: Աբդուլլան հիշում էր, թե ինչպես էր հայրը բարձրանում աստիճանին, հիշում էր նրա կռացած ուտերը, արևի տակ սևացած կնճռոտ վիզը, արմունկների կոշտացած մաշկը և հաստ մատները, որ մեկիկ-մեկիկ քաղում էին խնձորները: Մեկ այլ քաղաքում նրանք աղյուս էին սարքում մի մզկիթի համար: Հայրը Աբդուլլային սովորեցնում էր ընտրել համապատասխան հող, որը վերցնում էին խորքից: Այն ավելի բաց գույն ուներ, քան սովորական հողը: Հայրն ու Աբդուլլան միասին ցեխ էին շաղախում, ավելացնում էին ծղոտ, և հայրը համբերատար սովորեցնում էր, թե ինչպես կարելի է չափավորել ջուրը, որ շաղախը ջրիկ չստացվի: Անցյալ տարի հայրը քար էր կրում, ցեխ էր անում և անգամ փորձում էր դաշտ հերկել: Նույնիսկ ճանապարհային անձնակազմին էր օգնում ասֆալտ փռելու:

Աբդուլլան գիտեր, որ հայրը մեղադրում է ինքն իրեն Օմարի մահվան համար: Եթե նա կարողանար ավելի շատ աշխատել կամ ավելի լավ աշխատանք գտնել, երեխայի համար կզներ տաք ձմեռային հագուստ, հաստ վերմակներ և միգուցե ավելի լավ ձմեռային վառարան՝ տունը տաքացնելու համար: Հայրն անվերջ դրա մասին էր մտածում: Թեև նա Օմարի թաղումից հետո այդ մասին մի բառ անգամ չէր ասել, բայց Աբդուլլան դա զգում էր:

Աբդուլլան հիշում էր, երբ Օմարի թաղումից մի քանի օր անց տեսավ հորը՝ հսկայական կաղնու տակ կանգնած: Այդ ծառը Շաղբաղի ամենաբարձր կետն էր, նաև համարվում էր գյուղի ամենածեր բնակիչը: Հայրը նույնիսկ վստահ էր, որ ծառն ականատես էր կայսր Բաբուրի արշավանքներին և Քաբուլի գրավմանը: Նա ասում էր, որ իր մանկության կեսն անցել էր այդ սաղարթախիտ ծառի ստվերում կամ էլ ամուր ճյուղերին մագլցելիս: Նրա հայրը՝ Աբդուլլայի

պապը, ամուր պարաններ էր կապել ծառի ճյուղից և ճոճանակ էր սարքել: Այդ ճոճանակը ապրեց ավելի երկար, քան պապը, և ծառայեց մարդկանց անթիվ տարիներ: Հայրն ասում էր, որ երեխա ժամանակ նրանք հերթով ճոճվում էին այդ ճոճանակի վրա՝ ինքը, Փարվանան և Փարվանայի քույրը՝ Մասունան:

Բայց այն օրերին հայրը լրիվ ուժասպառ էր եղել ծանր աշխատանքից, իսկ Փարին քաշում էր նրա թևքից և խնդրում, որ հայրը ճոճի նրան ճոճանակի վրա:

- Արի վաղը, հա՛, Փարի:
- Մի բուպե, բաբա՛, վեր կաց, խնդրում եմ:
- Հիմա չէ, ուրիշ անգամ:

Ի վերջո Փարին բաց էր թողնում հոր թևքը և մերժված հեռանում: Հոր նեղ դեմքը այդ պահին աղավաղվում էր ներքին ցավից: Նա շուռումուռ էր գալիս իր նեղլիկ մահճակալի վրա, վերմակը քաշում էր գլխին ու փակում էր հոգնած աչքերը:

Աբդուլլան չէր կարող պատկերացնել հորը ճոճվելիս: Չէր կարող պատկերացնել, որ հայրն իր պես փոքր տղա է եղել: Տղա: Անհոգ, փոքր և արագավագ, որ բռնոցի էր խաղում բաց դաշտում իր ընկերների հետ: Հոր ձեռքերը պատված էին սպիներով, իսկ դեմքը հատում էին հոգնածությունը մատնող խոր կնճիռները: Աբդուլլային թվում էր, որ հայրը հենց այդպես էլ ծնվել է՝ բա՛հր ձեռքին, եղունգների տակ ցեխ...



Նրանք ստիպված եղան այդ օրը գիշերել անապատում: Կերան հացը և վերջին մի քանի խաշած կարտոֆիլները, որ Փարվանան էր դրել իրենց համար: Հայրը խարույկ վառեց և կրակի վրա հարմարեց-

րեց թեյնիկը:

Աբդուլլան պառկեց կրակի մոտ, կուչ եկավ բրդյա վերմակի տակ՝ Փարիի հետևում՝ զգալով քրոջ սառած ներբանների հպումը:

Հայրը կռացավ կրակի վրա և կպրեց սիգարետը:

Աբդուլլան շրջվեց մեջքի վրա, Փարին նույնպես տեղը փոխեց՝ այտը հարմարեցնելով եղբոր անրակին: Նա շնչում էր անապատի փոշու պղնձե բույրը և նայում էր աստղախիտ երկնքին, որ կար-

ծես ծածկված լիներ առկայծող և ճառագող սառցե բյուրեղներով: Լուսնի մահիկը կարծես կրում էր իր ամբողջական ուրվագծի արձագանքը:

Աբդուլլան մտածում էր նախանցյալ ծնեռվա մասին. երբ ամեն ինչ թաղված էր խավարում, քամին սուրում էր դռների միջով, կարճ ու երկար ընդմիջվող սուլոցներով ձայն էր տալիս առաստաղի բուրբ ձեղքերից: Դրսում՝ ձյան տակ, կորել էին գյուղի ուրվապատկերները: Գիշերները երկար էին ու անասող, օրերը կարճ էին ու մռայլ, արևը հազվադեպ էր երևում և անմիջապես մատանու քարի չափ փոքրանալով՝ անհետանում էր: Նա հիշում էր, թե ինչպես էր աղեկեզ լաց լինում Օմարը, հետո լռություն տիրեց, իսկ հետո հայրը սկսեց ճիշտ այսօրվա լուսնի մահիկի նման գործիքով տաշել մի փոքր փայտե տուփ, որը հետո դրեցին խանձված պինդ հողի մեջ:

Դարձյալ մոտենում է աշնան վերջը: Ձմեռն արդեն դարան է մտել մոտակայքում, թեպետ հայրն ու Փարվանան դրա մասին չէին խոսում, ասես դրանով կարող էին արագացնել ձմռան գալուստը:

— Հայրիկ:

Խարույկի մյուս կողմից հայրն ինչ-որ բան քրթմնջաց:

— Թույլ կտանս՝ օգնեմ քեզ, նկատի ունեմ՝ հյուրատուն կառուցել:

Ծխի ժապավենը բարձրանում էր հոր ծխախոտից: Նա աչքերը հառել էր խավարին:

— Հայրիկ:

Հայրը ժայռաբեկորների վրա նստած տեղից շուռումուռ եկավ ու ձայն տվեց:

— Կարծում եմ, որ դու կարող ես օգնել շաղախ պատրաստելու:

— Բայց ես չգիտեմ, թե ինչպես են այն պատրաստում:

— Ես ցույց կտամ: Կսովորես:

— Իսկ ես,— հարցրեց Փարին:

— Դու,— դանդաղ արտաբերեց հայրը: Նա ծուխը ներս քաշեց և սկսեց փայտով խառնել կրակը: Փոքր կայծերը ցրիվ եկան մթության մեջ:— Դու մեզ ջուր ես բերելու, որ մենք չծարավենք: Որովհետև մարդը չի կարող աշխատել, երբ ծարավ է:

Փարին լուռ էր:

— Հայրիկը ճիշտ է,— ասաց Աբդուլլան:

Նա զգում էր, որ Փարին էլ էր ուզում կեղտոտել ձեռքերը, ոտքերով մտնել ցեխի մեջ և հիասթափված էր հոր տված հանձնարարությունից:

— Եթե դու մեզ ջուր չբերես, մենք չենք կառուցի հյուրատունը:

Հայրը փայտը մտցրեց թեյնիկի բռնակի տակ, հանեց այն կրակի վրայից ու մի կողմ դրեց, որ սառչի:

— Ասեմ քեզ,— ասաց նա:— Եթե տեսնեմ, որ ջրի գործը գլուխես բերում, քեզ համար ուրիշ աշխատանք կգտնեմ:

Փարին կզակը բարձրացրեց, նայեց Աբդուլլային և ժպտաց իր ցանցառատամ ժպիտով:

Աբդուլլան հիշեց. երբ Փարին փոքր էր, նա քնում էր իր կրծքի վրա, և երբ ինքը գիշերները երբեմն վեր էր կենում, թվում էր, որ նա լռեցյալն ժպտում է դեմքի ճիշտ նույն արտահայտությամբ:

Աբդուլլան էր մեծացնում քրոջը: Ճշմարտությունը դա էր: Թեև ինքն էլ դեռ մանկահասակ էր, ընդամենը տասը տարեկան: Երբ Փարին երեխա էր, միայն նա էր արթնանում քրոջ լացից ու տնքոցներից, և միայն նա էր քայլում ու օրորում նրան ձեռքերի վրա: Նա էր փոխում քրոջ կեղտոտ տակաշորերը և լողացնում նրան: Հայրը դրա հետ գործ չուներ, նախ՝ նա տղամարդ էր, և հետո՝ շատ հոգնած էր լինում աշխատանքից: Իսկ Փարվանան արդեն հղի էր Օմարով և չէր կարող հոգալ Փարիի կարիքները. ո՛չ համբերություն ուներ, ո՛չ հավես: Ամբողջ հոգան ընկած էր Աբդուլլայի ուսերին, բայց նա բնավ չէր բողբում: Ուրախությամբ էր ամեն ինչ անում և երջանիկ էր, որ հենց ինքը տեսավ քրոջ առաջին քայլերը և լսեց նրա առաջին բառը: Աբդուլլայի պատկերացմամբ՝ Աստված իրեն ստեղծել էր իրենց մոր մահից հետո Փարիին խնամելու համար:

— Բաբա՛,— ասաց Փարին,— մի բան պատմիր:

— Ուշ է,— ասաց հայրը:

— Խնդրում եմ:

Հայրը բնավորությամբ փակ մարդ էր: Միանգամից երկու նախադասությունից ավելի հազվադեպ էր արտասանում: Բայց երբ սկսում էր ինչ-որ բան ասել, Աբդուլլային անհասկանալի պատճառներով հայրը երբեմն բացվում էր, և պատմությունները

հորդում էին իրար հետևից: Աբդուլլան և Փարին կլանված լսում էին նրան, և մինչ Փարվանան կաթսաներն էր չխկչխկացնում խոհանոցում, հայրը վերապատմում էր իր տատիկի պատմած հեքիաթները սուլթաններով, ջիններով և իմաստուն դերվիշներով բնակեցված կախարդական աշխարհների մասին: Երբեմն էլ հայրն ինքն էր հնարում հեքիաթներ՝ բացահայտելով երևակայության և ստեղծագործելու մեծ շնորհը, որը միշտ զարմացնում էր Աբդուլլային: Երբևէ հայրն այդքան մոտիկ չէր թվում որդուն, այդքան կենսախինդ ու բաց, ժժմարտացի, քան այն պահին, երբ պատմում էր իր հեքիաթները, որոնք կարծես նրա անլույս, գոց աշխարհի լուսամուտները լինեին: Այս անգամ հոր դեմքի արտահայտությունից Աբդուլլան զգաց, որ այսօր հեքիաթներ չեն լինելու:

— Ուշ է,— ասաց հայրը: Նա ուներին զգած շալի ծայրով բռնեց թեյնիկի բռնակն ու իրեն մի բաժակ թեյ լցրեց: Փչեց գոլորշին, մի ունպ արեց, և խարույկի լույսի տակ նրա դեմքը նարնջագույն ներկվեց:

— Քնելու ժամանակն է: Վաղը օրը երկար է լինելու:

Աբդուլլան ծածկվեց վերմակով և սկսեց երգել Փարիի ականջի տակ:

*Ես գտա փոքրիկ, տխուր փերիիս
Սովերի տակ թթի ծառի:*

Փարին, արդեն քնաթաթախ, ձգելով երգեց շարունակությունը.

*Ես գիտեմ մի փոքրիկ, տխուր փերիի,
Ում մի գիշեր տարավ քամին:*

*բնակեցված
1915 թ. մայիսի 5*

Եվ վայրկյան անց արդեն քնած էր:

Աբդուլլան զարթնեց և տեսավ, որ հայրը չկա: Նա սարսափած վեր թռավ: Կրակը համարյա հանգել էր, մնացել էին մի քանի բոսորագույն ցուլքերով մոխրե քուլաներ: Աբդուլլան արագ նայեց աջ ու ձախ, բայց անթափանց, ամենակուլ խավարի մեջ աչքերն անկարող էին բան տարբերել: Նա գունատվեց: Սիրտը դուրս էր

թռչում: Սրեց ականջներն ու շունչը պահեց:

— Հայրիկ, — շշնջաց նա:

Լռություն էր:

Խուճապը կրծքում անկի պես աճեց: Աբդուլլան ընդոստ վեր թռավ՝ ձգված ու լարված, և ականջ դրեց: Ձայն չկար: Նրանք երկուսով էին՝ ինքն ու Փարիս՝ մթության մեջ: Հայրը թողել էր նրանց: Աբդուլլան զգաց անապատի և աշխարհի անծայրածիր դաժանությունը: Ինչքան հեշտ մարդը կարող է մոլորվել այստեղ: Օգնող չկա, ծանապարհ ցույց տվող չկա: Հետո նրան մի ավելի դաժան միտք այցելեց: Հայրը, երևի, այլևս կենդանի չէ: Մեկը երևի կտրել է նրա կոկորդը: Իհարկե, ավազակները: Նրանք սպանել են հորը, իսկ հիմա դարանակալում են իրեն և քրոջը, ժամանակ են շահում, զվարճանում, խաղում են իրենց ստոր խաղը:

— Հայրիկ, — ձայն տվեց նա, և ձայնն այս անգամ դողաց:

Պատասխան չեղավ:

— Հայրիկ:

Նա դարձյալ ձայն տվեց՝ զգալով, թե ինչպես է անհանգստությունը ճանկում սիրտը: Այնքան ձայն տվեց, որ հաշիվը կորցրեց, բայց մթությունը արձագանք չէր տալիս: Նա պատկերացնում էր դեմքեր, սարերում թաքնված, հողի տակից դուրս եկող մռույթներ, որ ծիծաղում էին իր և Փարիսի վրա ու չարախնդում: Խուճապը պատեց նրան և ներսը տակնուվրա արեց, նա սկսեց դողալ, շնչառությունն ընդհատվեց: Պատրաստ էր լաց լինելու:

Հետո քայլեր լավեցին: Մթության մեջ մի կերպարանք ուրվագծվեց:

— Կարծում էի, թե գնացել ես, — ասաց Աբդուլլան դողացող ձայնով:

Հայրը նստեց հանգած կրակի մոտ:

— Ո՛ր էիր գնացել:

— Գնա քնելու, տղա՛:

— Դու չես կարող թողնել մեզ, հայրիկ: Դու չես անի դա:

Հայրը նայեց նրան, բայց մթության մեջ հոր դեմքի արտահայտությունը անորսալի էր:

— Քրոջդ կարթնացնես:

— Մի լքիր մեզ:

— Դե հերիք եղավ:

Աբդուլլան կրկին պառկեց, պինդ գրկեց քրոջը, սիրտը բաբախում էր կոկորդում:



Աբդուլլան երբեք չէր եղել Քաբուլում: Քաբուլի մասին գիտեր քեռի Նաբիի պատմություններից: Նա երբեմն եղել էր հոր հետ փոքրիկ գյուղաքաղաքներում, բայց իսկական մեծ քաղաք երբեք չէր տեսել, և քեռի Նաբիի պատմածները չէին նախապատրաստել նրան այդ մեծ և աղմկոտ քաղաքի իրարանցմանը: Ամենուրեք լուսացույցներ էին, սրճարաններ և ռեստորաններ, լուսային գովազդներով ապակեպատ խանութներ: Մեքենաները սուրում էին մարդաշատ փողոցներով, ազդանշան էին տալիս և խաբս տալով շրջանցում ավտոբուսներին, հետիոտներին ու հեծանիվներին: Ձիերը քարշ էին տալիս սայլակները, և երկաթյա անիվները խփվում էին մայթերին: Մայթերը հեղեղված էին սիգարետ և ծամոն վաճառողներով, ամսագրերի կրպակներով, պայտեր խփող դարբիններով: Խաչմերուկներում անշնորհք համազգեստներով ոստիկանները սուլում էին և ձեռքով առաջնորդող շարժումներ անում, որոնց ոչ ոք չէր հետևում:

Աբդուլլան, Փարիին գրկած, նստել էր մայթի նստարանին՝ մսագործի խանութի մոտ: Նրանք նույն ափսեից ուտում էին տապակած լոբի սոուսով, որ հայրը գնել էր փողոցի կրպակից:

— Նայիր, Աբուլ, — ասաց Փարին՝ մատնացույց անելով դիմացի խանութը: Տուցափեղկի հետևում կանգնած էր մի երիտասարդ կին՝ հագին գեղեցիկ կանաչ ասեղնագործ զգեստ՝ փայլուն ապակյա ուլունքներով, նույն գույնի երկար շարֆ՝ արծաթյա զարդերով, և մուգ կարմիր տաբատ: Նա կանգնած էր անշարժ՝ անտարբեր նայելով անցորդներին՝ առանց աչքն իսկ թարթելու. նա այդպես էլ չչարժվեց, մինչև Աբդուլլան ու քույրը կերան իրենց ուտելիքը, և դրանից հետո էլ մնաց անշարժ: Աչքն ընկավ մի մեծ պաստառի, որ կախված էր շենքի կտուրից: Պաստառին պատկերված էր մի երիտասարդ հնդկուհի, որ կանգնած էր կակաչի դաշտում՝ անձրևի տակ՝ մի ամառային տնակի առաջ: Նա ամաչկոտ ժպտում էր, իսկ

թաց *սարին*⁴ ընդգծում էր նրա բարեմասնությունները: Աբդուլլան մտածում էր, թե արդյոք սա էր այն կինոն, որի մասին պատմում էր քեռի Նաբին, ուր մարդիկ գնում էին ֆիլմեր դիտելու, և փայփայում էր այն միտքը, որ հաջորդ ամիս քեռի Նաբին իրեն և քրոջը կտանի ֆիլմ դիտելու: Եվ այդ մտքից նա ժպտաց:

Կապույտ մզկիթի կտուրից հնչող աղոթքից հետո Աբդուլլան տեսավ, թե ինչպես քեռի Նաբին մեքենան արգելակեց փողոցում, շեշտակի բացեց դուռը ու դուրս եկավ իր տեղից ձիթագույն կոստյումով, և *չափասուն*⁵ հեծանվորդը հագիվ խոյս տվեց դռան հարվածից:

Քեռի Նաբին թեքվեց իր տեղից և գրկեց Սաբուրին: Երբ նկատեց Աբդուլլային և Փարիին, լայն ժպտաց: Հետո կռացավ, որ մոտիկից խոսի:

— Բալիկներ, հավանեցի՞ք Քաբուլը:

— Շատ աղմկոտ է,— ասաց Փարին:

Քեռի Նաբին ծիծաղեց.

— Այդպես էլ կա: Դե լավ, ներս մտեք: Մեքենայի պատուհանից կդիտեք քաղաքը: Սրբեք ձեր ոտքերը, դու էլ, Սաբուր, նստիր դիմացը:

Հետևի նստատեղը սառն էր, կոշտ և բաց երկնագույն՝ մեքենայի գույնին համապատասխան: Աբդուլլան նստեց վարորդի հետևում, Փարին մագլցեց նրա ծնկներին: Նա որսաց այն նախանձը, որով կողքի անցորդները նայում էին մեքենային: Փարին գլուխը թեքեց եղբոր կողմը, և նրանք ժպտացին մեկմեկու:

Նրանք նայում էին քաղաքի շարժին, մինչ մեքենան սլանում էր առաջ: Քեռի Նաբին ասաց, որ կքշի ավելի երկար ճանապարհով, որ նրանք կարողանան տեսնել քաղաքը: Նա ցույց տվեց Թափա Մարանջան կամուրջը և գմբեթարդ դամբարանը, որ վերևից նայում էր քաղաքին: Նաբին ասաց, որ Նադիր շահը՝ Ջահիր շահի հայրը, թաղված է այդտեղ: Քոհ-է-Շիրդավազա սարի վրա գտնվում էր Բալա Հիսար ամրոցը, որ բրիտանացիները օգտագործել էին Աֆղանստանի դեմ երկրորդ պատերազմի ժամանակ:

⁴ Սարի — հնդկական տարազի մաս, մարմնի շուրջը փաթաթվող զգեստ:

⁵ Չափան — տաք ձմեռային վերարկու, թիկնոց, որ կրում են հագուստի վրայից (կաֆտան):

— Ի՞նչ է սա, քեռի՛ Նաբի,— Աբդուլլան թփթփացրեց մեքենայի ապակուն՝ ցույց տալով մի մեծ քառանկյուն դեղին շինություն:

— Սիլուս⁶ է, իսկ սա՛ նոր հացի գործարանը:

Քեռի Նաբին այժմ մի ձեռքով բռնել էր դեկը: Նա հետ շրջվեց ու աչքով արեց.

— Մեր ռուս ընկերների նվերն է:

Հացի գործարան... Աբդուլլան հիացավ և պատկերացրեց Փարվանային Շադբաղում՝ խմորի շերտերը հողե թանդուրի պատերին ծեփելիս:

Ի վերջո, քեռի Նաբին թեքվեց մի լայն, մաքուր փողոց, որի երկայնքով հավասար հեռավորության վրա ձգվում էին նոճիները: Աբդուլլան կյանքում այդքան մեծ և գեղեցիկ տներ չէր տեսել: Դռները ներկված էին սպիտակ, դեղին և երկնագույն: Շատ տներ երկհարկանի էին՝ բարձր պարիսպներով շրջապատված և կրկնակի մետաղյա դարպասներով կողպված: Աբդուլլան նկատեց քեռի Նաբիի մեքենայի նման մեքենաներ՝ փողոցի երկայնքով կանգնած:

Քեռի Նաբին արգելակեց մի նրբանցքի մոտ, որը երիզված էր ցածր, խնամված թփերի շարքով: Նրբանցքից այն կողմ երևում էր անհավանական մեծ թվացող երկհարկանի սպիտակ շինություն:

— Քո տունն այնքան մեծ է,— խոր հառաչեց Փարին՝ աչքերը զարմանքից լայն բացած:

Քեռի Նաբին գլուխը հետ գցելով քրքջաց.

— Վատ չէր լինի: Չէ՛, սա իմ շեֆի տունն է: Հիմա դուք կտեսնեք նրան: Ձեզ լավ կպահեք:



Երբ նրանք ներս մտան, տունն ավելի տպավորիչ թվաց: Աբդուլլան հաշվարկեց, որ տունը կարող էր իր մեջ տեղավորել Շադբաղի տնակների առնվազն կեսը:

Նա կարծեց, որ մտել է դևի պալատը: Հեռվում տարածված այգին հրաշալի էր նախագծված՝ երփներանգ, լավ խնամված ծաղիկների շարքերով, ծնկաչափ թփերով և պտղատու ծառե-

⁶ Սիլուս — խոշոր, սովորաբար աշտարակաձև ամբար, հիմնականում գյուղատնտեսական պաշարների, փայտանյութի կամ ածխի համար:

րով. Աբդուլլան ճանաչեց բալի, ծիրանի, խնձորի և նռան ծառերը: Կտուրածածկ նախամուտքը ձգվում էր տնից այգի: Քեռի Նաբին ասաց, որ այն կոչվում է վերանդա և ծածկված է կանաչ վազերով պատված մետաղյա ցանցով: Պարոն և տիկին Վահդատիները նրանց սպասում էին իրենց սենյակում: Սենյակի ճանապարհին Աբդուլլան նկատեց լոգասենյակը՝ ճենապակյա զուգարանակոնքով, որի մասին քեռի Նաբին պատմել էր, նաև տեսավ փայլուն լվացարանն ու բրոնզագույն ծորակները: Աբդուլլան, որ ամեն շաբաթ ժամերով ջուր էր կրում Շադբադի համայնքի ջրհորից, հիացմունքով պատկերացրեց այն կյանքը, որտեղ ջուրը հոսում էր ձեռքի մի հպումով:

Այժմ նրանք երեքով՝ Աբդուլլան, Փարին և հայրը, նստած էին ոսկեգույն ծոպքերով լայն թախտին: Նրանց մեջքի հետևում փափուկ բարձերը զարդարված էին փոքր ութանկյուն հայելու նման: Թախտի դիմացի պատին ձգվում էր մի մեծ նկար, որի վրա պատկերված էր մի ծեր քարտաշ՝ կռացած իր աշխատանքային նստարանին, և ժայռաբեկորին հարվածում էր իր մուրժով: Ծալքավոր մուգ կարմիր վարագույրները զարդարում էին լայն պատուհանները, որոնք բացվում էին դեպի մինչև գոտկատեղը հասնող ճաղավանդակով պատշգամբը: Սենյակում ամեն բան փայլում էր, փոշու հատիկ անգամ չկար:

Երբեք Աբդուլլան այդպես սուր չէր զգացել, որ ինքը կեղտոտ է: Քեռի Նաբիի շեֆը՝ պարոն Վահդատին, նստած էր կաշեպատ աթոռին՝ ձեռքերը կրծքին խաչած: Նա նայում էր հյուրերին դեմքի այնպիսի արտահայտությամբ, որ չէր կարելի անբարեհաճ անվանել: Ավելի շուտ այն օտարված էր, անթափանցելի: Նա հայրիկից ավելի բարձրահասակ էր. Աբդուլլան դա տեսավ, երբ նա տեղից ելավ իրենց ողջունելու: Տղամարդու ուները նեղ էին, շրթունքները՝ բարակ, իսկ ճակատը լայն էր ու փայլուն: Հազին ուներ սպիտակ պիջակ՝ կիպ գոտկատեղով, և բաց օձիքով կանաչ վերնաշապիկ, որի թևքերը օվալաձև միանում էին լազուրիտե քարերով: Ամբողջ ընթացքում նա հազիվ մի տասը բառ արտասանեց:

Փարին նայում էր սեղանին դրված թխվածքաբլիթների ափսեին: Աբդուլլայի մտքով երբեք չէր անցել, որ թխվածքաբլիթի այդպի-

սի մեծ տեսականի կարող է լինել՝ մատնաչափ շոկոլադե թխվածքներ՝ սերուցքով, փոքր կլոր թխվածքներ՝ նարնջագույն լցոնով, տերևի տեսքով կանաչ թխվածքներ և այլն:

— Թխվածք ուզում ես,— հարցրեց տիկին Վահդատին. նա էր խոսում միայն ամբողջ ընթացքում:— Միտ եկեք, երկուսդ էլ, ես ձեզ թխվածք կհյուրասիրեմ:

Աբդուլլան նայեց հորը թույլտվության համար, Փարին հետևեց եղբոր օրինակին, և դա հիացրեց տիկին Վահդատին, նա բարձրացրեց հոնքերը, թափահարեց գլուխը և ժպտաց:

Հայրը թեթև գլխով արեց:

— Մի-մի հատ,— ցածրաձայն ասաց նա:

— Չէ, դա չեղավ,— ասաց տիկին Վահդատին:— Այս բլիթները գնելու համար Նաբին գնացել է Քաբուլի մյուս ծայրում գտնվող խմորեղենի խանութը:

Հայրը շառագունեց և թեքեց հայացքը: Նա նստել էր թախտի ծայրին՝ ձեռքերում ճմռթելով իր հնամաշ գլխարկը: Նա ծնկները հեռու էր պահում տիկին Վահդատիից և նայում էր նրա ամուսնուն:

Աբդուլլան վերցրեց երկու թխվածքաբլիթ և մեկը տվեց Փարին:

— Մի հատ էլ վերցրու: Նաբին հո իզուր չի չարչարվել,— ասաց տիկինը զվարթ հանդիմանանքով և ժպտաց քեռի Նաբին:

— Բնավ էլ չարչարանք չէր ինձ համար,— ասաց Նաբին և կարմրեց:

Քեռի Նաբին կանգնած էր դռան մոտ՝ բարձր հաստ ապակե փեղկերով փայտե պահարանի կողքին: Սրահում՝ դարակների վրա, Աբդուլլան տեսավ պարոն և տիկին Վահդատի լուսանկարները արծաթե շրջանակի մեջ: Այդ նկարում կար մի ուրիշ զույգ՝ հաստ շարֆերով և ծանր վերարկուներով: Նրանց հետևում հոսում էր փրփրած գետակը: Մեկ այլ նկարում տիկին Վահդատին, բաժակը բռնած, մերկ ձեռքով գրկել էր մի մարդու, որը, ի մեծ զարմանս Աբդուլլայի, պարոն Վահդատին չէր: Կար նաև հարսանեկան նկար, որտեղ փեսացուն բարձրահասակ էր ու սլացիկ՝ սև կոստյումով, իսկ հարսնացուն՝ երկարափեշ սպիտակ զգեստով. երկուսն էլ ժպտում էին:

Արդույլան գողունի նայում էր տիկնոջ բարակ իրանին, փոքր, գեղեցիկ բերանին, կամարածև հոնքերին, ոտքերի վարդագույն եղունգներին և համապատասխան գույնի շրթներկին: Նա մտաբերեց տիկնոջը, որին տեսել էր երկու տարի առաջ, երբ Փարին համարյա երկու տարեկան էր: Քեռի Նաբին բերել էր նրան Շադբաղ, քանի որ, ինչպես ասում էր, տիկինը ցանկացել էր այցելել նրա հարազատներին: Կինը հագել էր դեղձագույն անթև զգեստ: Արդույլան հիշեց հոր դեմքի ապշահար արտահայտությունը, կնոջ սպիտակ շրջանակով մուգ ակնոցը: Նա ամբողջ ընթացքում ժպտում էր, գյուղի մասին հարցեր էր տալիս, հարցուփոքր էր անում գյուղի երեխաների տարիքից և ուզում էր իմանալ նրանց անունները: Այնպես էր պահում իրեն, կարծես ծնվել էր հողե պատերով և ցածր առաստաղով այդ տանը, ապրել էր՝ մեջքը հենած մոխրաբծերով, ճանճերի հետքերով պատուհանի մոտ նստած, ուր գունաթափ պլաստմասե վարագույրը բաժանում էր մեծ սենյակը Արդույլայի և Փարիի սենյակից: Կնոջ այցելությունն ավելի շատ ցուցադրության էր նման. նա հատուկ հանեց իր բարձրակրունկ կոշիկներն ու, անտեսելով հոր կողմից առաջարկված աթոռը, նստեց գետնին: Կարծես իրենցից մեկն էր: Արդույլան ընդամենը ութ տարեկան էր, բայց հասկացավ ամեն ինչ:

Արդույլայի ամենավառ հիշողությունն այդ այցից Փարվանան էր, որ այն ժամանակ հղի էր հքքալով և աննկատ գունդուկծիկ նստել էր անկյունում՝ պահպանելով լարված լռություն: Նա նստած էր ուսերը կորացրած, ծալապատ, ոտքերը փքված փորի տակ սեղմած, կարծես ուզում էր մտնել պատի մեջ և անհետանալ: Դեմքը քողարկել էր կեղտոտ շղարշով, որի մի ճմռթած հանգույցը ձեռքով պահում էր կզակի տակ: Արդույլան կարծես տեսնում էր, թե ինչպես է ամոթը գոլորշու նման պատում Փարվանային, որքան շփոթված և խղճուկ է նա իրեն զգում, և հանկարծ կարեկցանք զգաց խորթ մոր հանդեպ:

Տիկին Վահդատին վերցրեց ափսեի կողքին դրված տուփը և մի սիգարետ կպցրեց:

— Մենք մի պտույտ տվեցինք, և ես մի փոքր ցույց տվեցի նրանց քաղաքը, — ասաց քեռի Նաբին:

— Հրաշալի է,— ասաց տիկին Վահդատին:— Դուք նախկինում եղե՞լ եք Քարույում, Սարնուր:

Հայրն ասաց.

— Մեկ թե երկու անգամ, բիրբի՛ Սահիր:

— Կարո՞ղ եմ իմանալ Ձեր տպավորությունների մասին:

Հայրը թոթվեց ուսերը.

— Շատ մարդաշատ է:

— Այո՛:

Պարոն Վահդատին պիջակի թևքից վերցրեց թելը և նայեց ներքև՝ գորգին:

— Այո՛, մարդաշատ է և երբեմն նաև հոգնեցուցիչ,— ասաց կինը:

Հայրը գլխով հասկանալու նշան արեց:

— Իրականում Քարույը կղզի է: Ոմանք ասում են՝ այն առաջադեմ է, և գուցե դա ճիշտ է, բայց ինձ թվում է՝ այն կտրված է երկրից:

Հայրը նայեց իր ձեռքի գլխարկին և թարթեց աչքերը.

— Ճիշտ հասկացեք ինձ,— ասաց կինը:— Ես այս քաղաքի ցանկացած առաջադիմական ծրագրի պատրաստ եմ աջակցելու: Աստված գիտի միայն՝ օգտակար կլինի արդյոք այդ ծրագիրը երկրի համար: Բայց իմ կարծիքով այս քաղաքը չափազանց ինքնագոհ կեցվածք ունի: Այս քաղաքի հավակնոտ տեսքը ասածիս հավաստի ապացույցն է,— նա հոգոց հանեց,— իսկապես հոգնեցուցիչ է դառնում: Ինքս միշտ սիրել եմ գյուղական վայրերը. գրավիչ են դրանք: Հեռավոր գավառները, ավանները, փոքր գյուղերը: Կարճ ասած՝ իրական Աֆղանստանը:

Հայրը գլխով անորոշ շարժում արեց:

— Կարող եմ համաձայն չլինել ցեղային ավանդույթների հետ, բայց ինձ թվում է՝ այդ մարդիկ ապրում են ավելի բնական կյանքով: Նրանք ավելի կայուն են, հաճելիորեն համեստ, նաև հյուրասեր, ինչու չէ, ճկուն և հպարտ: Ճիշտ բնորոշում եմ գտել, Սուլեյման, «հպարտ»:

— Լռի՛ր, Նիլա,— հանդարտ ասաց ամուսինը:

Լարված լռություն տիրեց: Աբդուլլան նայում էր այթոռի թիկնակին թմբկահարող պարոն Վահդատիի մատներին, նրա կնոջ ձգ-

ված ժպիտին, սիգարետի վրայի շրթների հետքին, նրա խաչած ոտքերին և աթոռին հենած արմունկներին:

— Երևի ճիշտ բառ չէր,— ասաց կինը՝ խախտելով լռությունը:— Ճիշտ բնորոշումը երևի «արժանապատվություն» բառն է:— Նա ժպտաց՝ ցույց տալով ուղիղ, սպիտակ ատամները: Աբդուլլան երբևէ նման ատամներ չէր տեսել:— Դա ավելի ճշգրիտ է: Գավառի մարդիկ արժանապատվություն ունեն, որ կարծես կրում են կրծքանշանի պես: Ես էլ եմ «իսկական» և նույնը տեսնում եմ Ձեր մեջ, Սաբրու:

— Շնորհակալ եմ, բիբի՛ Սահիր,— մոթմոթաց հայրիկը: Նա դեսուդեն էր շարժվում՝ հայացքը գլխարկից չկտրելով:

Տիկին Վահդատին գլխով արեց և, հայացքը դարձնելով Փարիին, ասաց.

— Ասեմ քեզ, դու շատ անուշիկն ես:

Փարին կպավ Աբդուլլային:

Դանդաղորեն, կարծես ասմունքելով՝ տիկին Վահդատին ասաց.

— «Այսօր ես տեսա հմայք, գեղեցկություն և անսահման վեհություն, որ փնտրում էի այդքան երկար»: Բանաստեղծ Ռումին է:— Նա ժպտաց:— Լսե՛լ եք նրա մասին: Կարծում եմ՝ այդ տողերը հենց քո մասին են, սիրելիս:

— Տիկին Վահդատին իսկական բանաստեղծուհի է,— ասաց քեռի Նաբին:

Պարոն Վահդատին մոտեցավ սեղանին, թխվածքաբլիթ վերցրեց, կիսեց և մի փոքր կտոր դրեց բերանը:

— Նաբին շատ բարի է իմ նկատմամբ,— ասաց տիկինը՝ մի ջերմ հայացք գցելով նրա վրա: Աբդուլլան նկատեց, որ քեռին շիկնեց:

Տիկին Վահդատին հանգրեց սիգարետը՝ մի քանի անգամ այն թխկացնելով մոխրամանի հատակին:

— Գուցե ես կարող եմ երեխաներին հետս տե՛ղ տանել:

Պարոն Վահդատին գրգռված հոգոց հանեց, մի շարժումով ձեռքերն իջեցրեց բազկաթոռի արմունկներին, կարծես պատրաստվում էր վեր կենալու, բայց մնաց տեղում:

— Ես կտանեմ նրանց շուկա,— այս անգամ տիկին Վահդատին

դիմեց հորը:— Եթե դուք համաձայնեք, Սաբոր, Նաբին մեզ կտանի: Սովեյմանը ցույց կտա Ձեր աշխատանքի տեղը:

Հայրը գլխով համաձայնության նշան արեց:

Պարոն Վահդատին փակեց աչքերը:

Բոլորը տեղից վեր կացան:

Հանկարծ Աբդուլլան ցանկացավ, որ հայրը շնորհակալություն հայտնի այս մարդկանց բլիթների և թեյի համար, բռնի իր և քրոջ ձեռքերը և լքի այս տունը՝ իր բոլոր վարագույրներով, նկարներով, ընդգծված շքեղությամբ և հարմարավետությամբ: Զրոկ կլցնեին ջրե պարկիկը, կգնեին հաց և մի քանի եփած ձու ու կբռնեին ետդարձի ճամփան անապատի միջով, ավազուտների և բլուրների կողքով, և հայրը կրկին կպատմեր իր պատմությունները: Հերթով կքաշեին սայլակը և երևի երկու թե երեք օրից, թեկուզ թոքերը փոշով լի և դողացող ոտքերով, կլինեին Շադբաղում: Շուջան, նկատելով իրենց, կգար ընդառաջ և պտույտներ կտար Փարիի շուրջը: Կարճ ասած՝ տանը կլինեին:

Հայրն ասաց.

— Գնացե՛ք, երեխաներ:

Աբդուլլան առաջ գնաց խոսքը բերանում, բայց քեռի Նաբիի պինդ ձեռքն իջավ նրա ուսին՝ շրջելով դեպի դուռը: Քեռին առաջնորդեց նրան նախամուտքով՝ կրկնելով.

— Սպասի՛ր, դուք դեռ կտեսնեք այստեղի շուկաները: Դուք ձեր կյանքում նման բան տեսած չեք լինի:



Տիկին Վահդատին իր տեղը գրավեց հետևի նստարանին, և օդը ծանրացավ նրա օժանելիքի սուր հոտից, և մի անորսալի, արբեցնող բույր էլ կար, որն անձանաչելի էր Աբդուլլայի համար: Ծանապարհին նա հարցերի տարափ տեղաց երեխաների գլխին՝ ո՞ւմ հետ են ընկերություն անում, դպրոց գնացել են արդյոք: Հարցեր էր տալիս նրանց գործերի, հարևանների, խաղերի մասին: Արևի շողերն ընկել էին նրա դեմքին: Աբդուլլան տեսնում էր նրա այտի աղվամազը և շպարի ընդհատված գիծը կզակից ներքև:

— Ես շուն ունեմ,— ասաց Փարին:

— Իրո՞ք: — Իսկապես, յուրահատուկ շուն է,— ասաց քեռին: — Անունը Շուջա է: Նա հասկանում է, երբ ես տխրում եմ: — Շներն այդպիսին են,— ասաց տիկին Վահդատին:— Նրանք ավելի լավ են հասկանում, քան ինձ հանդիպած որոշ մարդիկ:

Նրանք անցան դպրոցական աղջիկների եռյակի կողքով, որ քայլում էին մայթով: Նրանց հագին դպրոցական սև համազգեստներ էին և սպիտակ շարՖեր:

— Անկախ նրանից, թե ինչ եմ ասել, Քարուն այնքան էլ վատը չէ:— Տիկին Վահդատին մտացրիվ խաղում էր իր մանյակի հետ: Նա պատուհանից դուրս էր նայում, և դիմագծերը սրվել էին:— Ես ամենաշատը սիրում եմ այս քաղաքը գարնան վերջին, երբ ավարտվում են անձրևները, և օդն այնքան մաքուր է: Ամռան առաջին նշանն է դա: Եվ արևը հպվում է սարերին:— Նա թույլ ժպտաց:— Լավ կլիներ տանը երեխա ունենալ: Մի փոքր աղմուկ, փոփոխություն ու մի փոքր կյանք:

Արդույլան նայեց նրան ու մի տագնապալի բան որսաց նրա մեջ, նրա շպարի, օժանելիքի և կարեկցանքի քողի տակ ինչ-որ կոտրված բան կար: Նա հիշեց Փարվանային ճաշ եփելիս, նրա խոհանոցային պահարանում խառնիխուռն դրված կժերը, տարբեր չափի ափսեները և ծռված կաթսաները: Նա կարոտեց ներքնակը, որի վրա ինքն ու Փարին քնում էին երկուսով, ինչքան էլ այն կեղտոտ լիներ և ծակծկեր կոտրված, դուրս պրծած զսպանակներով: Ամեն ինչին կարոտում էր, երբեք այդքան չէր կարոտել իր տանը:

Տիկին Վահդատին ծանր հոգոցով հետ ընկավ նստարանին՝ իր պայուսակն այնպես գրկած, ինչպես հողի կինը կգրկեր իր փորը:

Քեռի Նաբին մեքենան արգելակեց մարդաշատ մուտքի մոտ: Փողոցի մյուս կողմում խոյացող մինարեթներով մզկիթի մոտ ծավալվում էր շուկան, որ բաղկացած էր բաց և փակ կամարածև անցումներից: Նրանք անցնում էին վաճառատներին կողքով, ուր փռած էին կաշվե վերարկուներ, գունավոր ակնեղեն և մատանիներ, տարբեր տիպի համեմունքներ: Քեռի Նաբին քայլում էր հետևից, նրանք երեքով՝ առջևից: Դրսում տիկին Վահդատին կրում էր մուգ ակնոց, որը նրա դեմքին տալիս էր կատվային արտահայտություն:

Մանրավաճառների ծայները լավում էին ամենուր: Երաժշտությունը հնչում էր ամեն սեղանից: Նրանք անցնում էին բաց դռներով գրախանութների, ռադիոների լամպերի և արծաթագույն կաթսաների խանութների մոտով: Աբդուլլան տեսավ ցեխոտ սապոգներով ու մուգ դարչնագույն շինելներով մի քանի զինվորի, որոնք, մեկը մյուսին փոխանցելով, մի սիգարետ էին ծխում ու անտարբեր հայացքով սրան-նրան էին նայում: Հետո կանգ առան կոշիկի կրպակի մոտ: Տիկին Վահդատին նայում էր տուփերի վրա ցուցադրված կոշիկներին, իսկ քեռի Նաբին, ձեռքերը մեջքի հետևում, մոտիկից զննում էր հին ոսկեդրամները:

— Սրանք լավն են,— հարցրեց տիկին Վահդատին Փարիին: Ձեռքին դեղին կոշիկների մի զույգ էր:

— Նրանք այնքան գեղեցիկ են,— շնջաց Փարին՝ նայելով կոշիկներին ու չհավատալով իր աչքերին:

— Արի փորձենք:

Տիկին Վահդատին օգնեց Փարիին՝ հագնելու կոշիկները՝ կոճկելով ճարմանդները: Հետո ակնոցի վրայից աչքերը հառեց Աբդուլլային:— Դու էլ քեզ մի զույգ ընտրիր: Հավատս չի գալիս, որ ամբողջ ճանապարհը քայլել ես այս սանդալներով:

Աբդուլլան գլուխը թափ տվեց և թեքեց հայացքը: Ճանապարհի վերջում զգգված մորուքով և հաշմված ոտքերով մի ծերուկ ողորմություն էր խնդրում:

— Նայիր, Աբուլա:

Փարին հերթով բարձրացրեց ոտքերը ու սկսեց ցատկոտել: Տիկին Վահդատին ծայն տվեց քեռի Նաբին և խնդրեց, որ Փարիին քայլեցնի ճանապարհով, որ տեսնեն՝ լավ են նստում արդյոք կոշիկները: Քեռի Նաբին բռնեց Փարիի ձեռքից, և նրանք քայլեցին նեղ ճանապարհով:

Տիկին Վահդատին նայեց Աբդուլլային:

— Դու կարծում ես՝ ես վատ մարդ եմ,— ասաց նա,— իմ ասածների պատճառով:

Աբդուլլան նայում էր, թե ինչպես քեռի Նաբին և Փարին հասան հաշմանդամ մուրացկանին: Ծեր մարդն ինչ-որ բան ասաց Փարիին: Փարին դեմքը դարձրեց քեռի Նաբին և բան ասաց, ու քեռի

Նարին մարդու դիմաց մի մետաղադրամ գցեց:

Աբդուլլան սկսեց անձայն լաց լինել:

— Օ՛հ, իմ բարի տղա,— ասաց տիկին Վահդատին ապշահար:— Իմ խեղճ բալիկ:

Նա պայուսակից թաշկինակ հանեց և մեկնեց Աբդուլլային: Աբդուլլան հետ հրեց թաշկինակը:

— Խնդրում եմ, մի՛ արեք դա,— ասաց նա բեկբեկուն ձայնով:

Կինը կռացավ: Ակնոցը բարձրացրել էր ճակատին: Նրա աչքերն էլ էին արցունքոտ, և երբ թաշկինակը հպեց աչքերին, կտորի վրա մնացին անհավասար սև հետքեր:

— Եթե ինձ ատես, քեզ չեմ մեղադրի: Քո իրավունքն է, բայց չեմ էլ սպասում, որ դու հիմա ի վիճակի ես դա հասկանալու: Ամեն բան արվում է ի բարին, Աբդուլլա: Սրա վերջը բարի է: Հետո ինքդ կտեսնես:

Աբդուլլան դեմքը դարձրեց դեպի երկինքը և հառաչեց, մինչև Փարին թռչկոտելով վերադարձավ: Աղջկա աչքերը երախտագիտությունից շողում էին, իսկ դեմքը երջանկությունից պայծառացել էր:



Այդ ձմեռ՝ մի առավոտ, հայրը կացին բերեց և կտրեց հսկայական կաղնու ծառը: Նրան օգնում էին Միլլա Շեքիբի որդի Բայթուլլան և ևս մի քանի մարդ: Ոչ ոք չէր միջամտում: Աբդուլլան, գյուղի տղաների հետ կանգնած, նայում էր նրանց: Նախ հայրը հանեց ճոճանակը, ապա ելավ ծառը և դանակով կտրեց պարանները: Հետո մյուս տղամարդկանց հետ կացնահարեց կաղնու հաստ բունը մինչև ուշ կեսօր, և ծառը ահռելի շառայունով տապալվեց գետնին: Հայրն Աբդուլլային ասաց, որ ձմեռվա վառելու փայտն է: Բայց կացինը ծեր ծառի վրա թափահարում էր կատաղի չարությամբ՝ ատամները սեղմած և մթնած դեմքով, կարծես կատարվածն անտանելի էր թվում նրան:

Եվ կապարե երկնքի տակ մարդիկ սկսեցին կտրտել տապալված կաղնին: Նրանց այտերն ու քթերը ցրտից կարմրել էին, իսկ կացնի սայրերը ծառին խփվելիս պայթուցիկ արձագանք էին տա-

լիս: Ծառի գագաթի մոտ Աբդուլլան էր աշխատում՝ կտրելով փոքր ծյուղերը մեծերից: Առաջին ծյունը եկել էր երկու օր առաջ: Առատ չէր, բայց խոստանում էր ծանր շարունակություն: Շուտով ձմեռն էր տիրելու Շադբաղին, պատելու էր քաղաքը սառցալույաներով, սպառնալու էր ծնահողմերով և շամփրող ցրտով, որից ձեռքի ափերի մաշկը միանգամից ճաքճքում էր: Այժմ ծյունը տեղ-տեղ էր երևում և ընդմիջվում էր հողաշերտի դժգույն կղզյակներով:

Աբդուլլան մի գիրկ ծյուղ ժողովեց և տարավ դեպի փայտի մեծացող կույտը: Հագին իր նոր ձտքավոր կոշիկներն էին, տաք վերարկուն և թաթմանները: Օգտագործած հագուստի խանութից էին, բայց միայն կտորված շղթան էր դա մատնում: Ի դեպ, հայրն արդեն նորոգել էր այն, և հագուստը կարծես նուր-նոր լիներ, աստառով՝ մգդակած, մուգ կապույտ, և ներսից նարնջագույն մորթիով երիզած: Վերարկուն չորս հարմար գրպան ուներ և մի գործած կնգուղ, որը գրկում էր Աբդուլլայի դեմքը, երբ նա քաշում էր քուղերը: Աբդուլլան հանեց կնգուղը և փնջացրեց՝ գուրջի արձակելով:

Արևն արդեն սահում էր դեպի հորիզոնի գիծը: Աբդուլլան դեռ կարող էր նշմարել հին հողմադացի ուրվագիծը, որ խոյանում էր գյուղակի ցեխածեփ պատերից վեր: Երբ սարերից քամու հեք էր անցնում, հողմադացը մի աղեկեզ ճիչ էր արձակում: Հիմնականում այնտեղ բնակվում էին կապույտ ձկնկուլները: Բայց ձմռանը նրանք գնում էին, և նրանց տեղը գալիս էին ագռավները: Ամեն առավոտ Աբդուլլան զարթնում էր նրանց ճիչերից ու խռպոտ կռկռոցից:

Հանկարծ գետնին՝ աջ կողմում, նրա աչքով մի բան ընկավ: Մոտեցավ և ծնկի իջավ:

Փետուր էր՝ փոքր, դեղին:

Հանեց թաթմանն ու բարձրացրեց փետուրը:

Այսօր ծաշկերույթի պիտի գնար հոր և խորթ եղբոր՝ Իքբալի հետ: Բայթուլլայի կինը տղա էր ունեցել: Մորթեբը երգելու էր տղամարդկանց համար, իսկ մեկը *թամբուրա*⁷ էր զարկելու: Թեյ էին խմելու, ուտելու էին թարմ, նոր թխած հաց և կարտոֆիլով *շորվա*⁸:

⁷ Թամբուրա — փայտյա կամ մետաղյա օղակ, որին ամրացված են զանգակներ:

⁸ Շորվա — կարտոֆիլով կամ մսով տաք ապուր:

Մոլլա Շեքիրը պիտի մատը թրջեր քաղցրաջրի մեջ և քսեր երեխայի շրթունքներին: Հետո պիտի հաներ փայլուն սև քարը, երկսայր ածե-
լին և բարձրացներ տղայի տակաշորը: Սովորական ծիսակարգ էր
դա: Կյանքը Շադբաղում շարունակվում էր...

Աբդուլլան փետուրը խաղացրեց ձեռքերի մեջ:

«Լաց չենք լինելու,— ասաց հայրը:— Ոչ մի լաց, լաց չի լինելու»:

Եվ ոչ ոք լաց չեղավ: Գյուղում ոչ մեկը չտվեց Փարիի անունը:
Աբդուլլային զարմացնում էր, որ քույրն անհետ չքացավ բոլորի
կյանքից:

Միայն Շուջան էր կիսում Աբդուլլայի վիշտը: Շունն ամեն օր
հայտնվում էր նրանց դռների առաջ: Փարվանան նրա վրա քարեր էր
շպրտում, հայրը սպառնում էր մահակով: Բայց շունը վերադառնում
էր: Գիշերները թախծահառաչ ոռնում էր, և ամեն առավոտ նրան
գտնում էին դռան մոտ. դունչը թաթերին դրած՝ նա թախծոտ աչքե-
րով նայում էր իրեն հալածողներին: Դա շաբաթներ տևեց, մինչև մի
օր Աբդուլլան տեսավ, թե ինչպես նա կաղին տալով, գլուխը կախ
անցնում է բլուրով, և այդ օրից շունը էլ Շադբաղում չերևաց:

Աբդուլլան դեղին փետուրը դրեց գրպանն ու քայլերն ուղղեց
դեպի հողմաղացը:

Երբեմն նա բռնեցնում էր, թե ինչպես է մթնում հոր դեմքը՝ ցու-
ցադրելով նրան պաշարած զգացումների վայրիվերումները: Հայրն
Աբդուլլայի աչքին փոքրացել էր, կորցրել էր մի կարևոր բան: Նա
կամ մտացրիվ քայլում էր տանը, կամ նստում էր նոր՝ չուգունե վա-
ռարանի կողքին՝ Իքբալին գրկած, և դատարկ աչքերով նայում էր
կրակին: Նրա ձայնն այժմ ծորում էր անձանաչելիորեն, կարծես
յուրաքանչյուր բառը կքում էր ծանրության տակ: Նա սուզվում էր
խոր լռության մեջ, դեմքն անթափանց էր դառնում: Քաբուլից վե-
րադառնալուց հետո էլ հեքիաթներ չէր պատմում: Երբեմն Աբդուլ-
լային թվում էր, որ հայրն իր պատմելու մուսան էլ է վաճառել Վահ-
դատիների ընտանիքին:

Կորսվել է:

Անհետացել:

Ոչինչ չի մնացել:

Էլ ասելու բան չի մնացել:

Միայն Փարվանան կարողացավ մի երկու բառ արտաբերել:

— *Դա քույրդ պիտի լիներ: Կներես, Աբդուլլա՛, հենց նա պիտի լիներ, ուրիշ ոչ մեկը:*

Երբեմն կտրում ես մատը, որ պահպանես ձեռքը:

Աբդուլլան ծնկեց հողմաղացի հետևում՝ փլվող քարե աշտարակի հիմքի մոտ: Թաթմանները հանեց և սկսեց փորփրել գետինը: Հիշում էր քրոջ հաստ հոնքերը, կլոր ճակատն ու ցանցառատամներով ժպիտը: Աբդուլլայի ուղեղում դեռ զրնգում էր քրոջ ծիծաղը, ինչպես անցած ժամանակներում: Նա մտաբերեց, թե ինչ աղմուկ բարձրացավ, երբ նրանք վերադարձան այդ օրը շուկայից: Փարին խուճապահար բղավում էր: Քեռի Նաբին փոփկոտ հեռացնում էր նրան: Աբդուլլան փորում էր, մինչև մատները կպան մետաղին, և շոշափելով գտավ ու հանեց թեյի թիթեյա տուփը: Հետո կափարիչի վրայից սրբեց սառած ցեխը:

Վերջին ժամանակներս շատ էր խորհում ծեր գյուղացի Բաբա Այուբի և դևի մասին հոր պատմած վերջին հեքիաթի շուրջ: Աբդուլլան այժմ կանգնած էր նույն տեղում, որտեղ քույրն էր մի ժամանակ կանգնած եղել, և աղջկա բացակայությունը ծանր շնչառության պես ելնում էր հողի տակից: Աբդուլլայի ոտքերը դողում էին, իսկ սիրտն ընկնում էր փորը, և նա երագում էր կախարդական հեղուկի մասին, որ դևը տվել էր Բաբա Այուբին՝ մոռանալու համար:

Բայց մոռանալ անհնար էր: Փարիի կերպարը սավառնում էր Աբդուլլայի երևակայության մեջ, ուր էլ նա գնար: Այդ կերպարը կարծես վերնաշապկին նստած կաչուն փոշի լիներ: Նրա ներկայությունը զգացվում էր տանն այնքան հաճախակի դարձած լռության մեջ. լռություն, որ ծավալվում էր արտասանված բառերի արանքում՝ մեկ դառնալով սառն ու սնամեջ, մեկ լցվելով չասված խոսքերով, որոնք նմանվում էին հասունացող, բայց այդպես էլ չտեղացող անծրևի: Երբեմն Աբդուլլան երագում հայտնվում էր մեն-մենակ, և միայն հեռվում մի լույս էր առկայծում, վառվում-հանգչում ազդանշանի պես:

Աբդուլլան բացեց թեյի տուփը: Փարիի հավաքած բոլոր փետուրները տուփի մեջ էին, աքլորների, բադերի, աղամխիների փետուրներ, նաև սիրամարգի փետուրը: Նա իր գտած դեղին փետու-

րը դրեց տուփի մեջ:

«Օրը կգա», — մտածեց Արդուլյան:

— Օրը կգա, — ասաց հույսը:

Արդուլյան էլ չէր հաշվում իր կյանքի օրերը՝ ճիշտ Շուջայի պես: Նա գիտեր, որ Շադբաղում ինքն այլևս ոչինչ չունի: Նա տուն էլ չուներ: Նա սպասում էր, որ ծմեռն անցնի, ու գարունը գա: Եվ գիտեր, որ մի օր արևածագից առաջ նա կհատի տան շենքը, կհեռանա Շադբաղից, ուր որ աչքը կտրի: Եվ եթե մի օր բաց դաշտում ճամփորդելիս հուսահատություն զգա, կանգ կառնի և աչքերը կփակի ու կսկսի մտածել բազեի փետուրի մասին, որ Փարին գտել էր անապատում՝ պատկերացնելով, թե ինչպես է փետուրը պոկվում ամպերից՝ երկրագնդից կես մղոն վերև, ոլորվելով հողմապտույտի մեջ, քամու ուժգին շնչով անապատի և սարերի միջով անցնում հսկայական տարածություն... և վայրէջք կատարում, բոլոր հանգամանքներին հակառակ, հենց այն տեղում, այն բլրի ստորոտին, որտեղ Փարին կարող էր գտնել այն: Եվ դա միաժամանակ կլինի թե՛ կատարված հրաշք, թե՛ հույս, որ հրաշքներ դեռ պատահում են: Եվ այդ պատկերներից հուսադրվելով՝ Արդուլյան կբացի աչքերն ու կշարունակի իր ճանապարհը:

Երրորդ

Գ Ա Ր ՈՒ Ն , 1949

Փարվանան զգաց այդ հոտը նախքան ծածկոցը քաշելն ու դատենելը: Այն քսվել էր Մասունայի հետևին, ազդրերին, կեղտոտել էր սավանները, ներքնակն ու նաև ծածկոցը: Մասունան ուսի վրայով մի հայացք գցեց քրոջ վրա ներման երկչոտ հայցումով և ամոթով: Այդքան տարիներ անց դարձյալ ամոթ էր զգում:

— Ներողություն,— շնջաց Մասունան:

Փարվանան ուզեց ոռնալ, բայց փոխարենը հարկադրված թույլ ժպտաց: Ահռելի ճիգով մշտապես անհրաժեշտ էր հիշել և երբեք չմոռանալ մի անվերապահ ձշմարտություն՝ այս խառնաշփոթը իր ձեռքի գործն է, և իր ուսերին ընկած բեռն արդարացի է ու տեղին: Ինքը դրան արժանի է: Փարվանան հառաչեց՝ նայելով կեղտոտված սավաններին, և սարսափեց՝ պատկերացնելով իրեն սպասվող աշխատանքը:

— Ես հիմա կլվանամ քեզ,— ասաց նա:

Մասունան սկսեց անձայն ողբալ՝ չփոխելով անգամ դեմքի արտահայտությունը: Միայն արցունքներն էին թափվում աչքերից:

Փարվանան վաղորդյան զովության մեջ սկսեց կրակ վառել: Երբ փայտը կպավ, նա Շաղբաղի ընդհանուր ջրհորից ջուր լցրեց դույլի մեջ և դրեց՝ տաքանալու: Ձեռքերի ափերը պարզեց կրակին: Իր տեղից տեսնում էր հողմաղացի թևերը, գյուղի մզկիթը, ուր Միլա Շեքիբը իրեն և քրոջը կարդալ էր սովորեցնում, երբ նրանք դեռ փոքր էին, տեսնում էր նաև Միլա Շեքիբի տունը բլրի ստո-

րոտին: Արևածագի հետ այդ տան կտուրի ուղղանկյունը կարմրագույն կփայլատակի փոշու մեջ, որովհետև մոլլայի կինը լուխկներ էր փռում արևին: Փարվանան նայում էր վերևից թարթող անտարբեր, դժգույն աստղերին և խաղաղվում էր:

Նա շրջեց Մասումային փորի վրա: Շորը թրջեց և սրբեց քրոջ հետույքը, մեջքը և ոտքերի ծալքերը:

— Ինչո՞ւ ես ջուր տաքացրել,— բարձի միջից ձայն տվեց քույրը:— Ինչո՞ւ ես նեղություն քաշել: Տարբերություն չկա, դու էլ պարտավոր չես դա անելու:

— Երևի պարտավոր չեմ, բայց, մեկ է, կանեմ,— ասաց Փարվանան՝ գարշահոտից ծամածռելով դեմքը:— Հիմա լռիր և թոյլ տուր՝ գործս ավարտեմ:

Եվ Փարվանայի օրն այդ պահից սկսեց հոսել սովորականի պես՝ կրկնելով իր ծնողների մահից հետո չորս տարի ձգվող օրերի շարքը: Նա կերակրեց հավերին: Փայտ կոտրեց և դույլերով ջուր կրեց ջրհորից: Խմոր սարքեց և հաց թխեց իրենց տան թանդուրում: Ավելեց հատակը: Կեսօրին մոտ նա գյուղի մյուս կանանց հետ՝ գետակի ափին պազած, լվաց սպիտակեղենը: Ուրբաթ էր, և դրա համար նա այցելության գնաց ծնողների գերեզմանին և կարճ աղոթեց նրանց խաղաղության համար: Այդ գործերի արանքում նա ժամանակ գտավ տեղաշարժելու Մասումային, շրջելու նրան կողքի՝ բարձր խցկելով նրա հետույքի տակ:

Օրվա մեջ երկու անգամ Սաբուրը նրա աչքով ընկավ:

Առաջին անգամ նրան տեսավ հողաշեն տան դիմաց նստած, օջախի կրակները խառնելիս, աչքերը կկոցած: Որդին՝ Աբդուլլան, կանգնած էր հոր կողքին: Երկրորդ անգամ տեսավ Սաբուրին այլ տղամարդկանց հետ զրուցելիս: Այդ տղամարդիկ արդեն ամուսնացած էին, բայց ժամանակին Սաբուրի մանկության ընկերներն էին, ում հետ նա կռվում էր, օգապարուկ էր թռցնում, վազում էր շների հետևից և պահմտոցի էր խաղում: Սաբուրն այդ ժամանակ կքած էր իր ողբերգության բեռի տակ. կինը մահացել էր, թողել էր երկու որբ երեխա, մեկը՝ տակավին ծծկեր: Նա խոսում էր հոգնած, հագիվ լսելի ձայնով և գյուղի միջով կարծես քարշ էր տալիս իր մաշված, մտամոլոր ստվերը:

Փարվանան հեռվից նայում էր նրան մի անդիմադրելի վշտով: Փորձում էր հայացքը փախցնել, երբ անցնում էր Սաբուրի կողքով: Իսկ եթե հայացքները պատահաբար հանդիպում էին, տղամարդը գլխով էր անում, և արյունը խփում էր Փարվանայի երեսին:

Գիշերը՝ քնելուց առաջ, Փարվանան արդեն հազիվ էր շարժում ձեռքերը: Գլուխը հոգնածությունից մշուշվում էր: Իր մահճակալին պառկած՝ պատրաստվում էր քնելու: Ու հանկարծ՝ մթության մեջ.

— Փարվանա՛:

— Այո՛:

— Հիշո՞ւմ ես, որ միասին հեծանիվ էինք քշում:

— Հը՛մմ...

— Ինչ արագ էինք քշում: Սլանում էինք ներքև, շներն էլ հետևում էին մեզ:

— Հիշում եմ:

— Երկուսս էլ գոռում էինք: Հետո բախվեցինք ժայռին:

Փարվանան զգաց, թե ինչպես է քույրը ժպտում մթության մեջ:

— Մայրիկն այնպես բարկացած էր: Նաբին էլ: Մենք կոտրել էինք նրա հեծանիվը:

Փարվանան փակեց աչքերը:

— Փարվանա՛:

— Այո՛:

— Կարո՞ղ ես այս գիշեր կողքս քնել:

Փարվանան վերմակը մի կողմ տարավ, գնաց Մասունայի մոտ և պառկեց կողքը՝ վերմակի տակ: Մասունան այտը հպեց քրոջ ուսին և մի ձեռքով գրկեց նրան:

Նա մրմնջաց.

— Դու արժանի ես ավելի լավ ճակատագրի:

— Չսկսես,— մրմնջաց Փարվանան ի պատասխան: Նա խաղում էր քրոջ մազերի հետ, շոյում հյուսքերը, ինչպես քույրն էր սիրում:

Մի քիչ էլ երկուսով շշուկով գրուցեցին փոքր, անկարևոր բաներից՝ զգալով դեմքերին միմյանց տաք շունչը: Սրանք Փարվանայի համեմատաբար երջանիկ պահերն էին: Այդ պահին նա հիշում էր, թե ինչպես իրենք, տակավին փոքր, կուչ էին գալիս վերմակի տակ,

քիթ քթի, գաղտնիքներ էին պատմում միմյանց և անձայն քրքջում:

Մասունան շուտ քնում է և քնի մեջ աղմուկով ճպճպացնում, իսկ Փարվանան նայում է պատուհանից դուրս՝ անթափանց սև երկնքին: Միտքը թռչում է այս ու այն կողմ, ի վերջո հայացքի առաջ կանգնում է մի մոռացված պատկեր հին ամսագրից, որի վրա պատկերված էին մռայլադեմ սիամական երկվորյակ եղբայրներ, որոնց մարմիններն իրանի շրջանում կպած էին միմյանց: Երկու իրարից անբաժան էակներ. մեկի ողնուղեղում գոյացող արյունը հոսում էր մյուսի երակներով, և այդ միությունն անխախտ էր ու հավերժական: Փարվանան շնչահեղձ եղավ. կարծես մի ձեռք սեղմում էր ներսը: Շունչ քաշեց, փորձեց նորից մտածել Սաբուրի մասին, և մտքով անցան գյուղում պտտվող բամբասանքները: Մարդիկ խոսում էին, որ Սաբուրը նոր կին է փնտրում: Փարվանան գլխից քշեց Սաբուրի պատկերը և վանեց հիմար մտքերը:



Փարվանան չսպասված ծնունդ էր:

Երբ Մասունան արդեն լույս աշխարհ էր եկել և ֆսֆսում էր տատմոր ձեռքերում, հանկարծ մայրը ճչաց, և երևաց երկրորդ երեխան: Մասունան շատ հանգիստ ծնվեց: «Հրեշտակի պես, ինքնուրույն լույս աշխարհ եկավ»,— հետո պատմում էր տատմերը: Մինչդեռ Փարվանային մայրը ծնողաբերում էր երկար՝ սուկալի ցավերով և մանկանը սպառնացող վտանգներով: Տատմերը հագիվ կարողացավ հանել նրան: Փարվանայի վզի շուրջը փաթաթված պորտալարը կարծես մոր որովայնում նրան հավերժ պահելու կործանարար գործիք լիներ: Ամենաձանր պահերին, երբ Փարվանան սկսում էր ատել ինքն իրեն՝ սուզվելով ինքնախարագանման ձահիճը, մտածում էր, որ հավանաբար պորտալարն ավելի լավ գիտեր ճշմարտությունը: Գուցե այն ավելի լավ գիտեր, թե երկվորյակներից ով է արժանի ապրելու:

Մասունան ժամանակին քնում էր, ժամանակին՝ ուտում: Լաց էր լինում միայն, երբ սոված էր, կամ տակը թաց էր: Արթուն ժամանակ խաղում էր, միշտ լավ տրամադրությամբ: Նա հեշտ էր ուրախանում, քրքիջներով և աղուներով լի բարուր էր: Սիրում էր ծծել իր ձեռքի խաղալիքը:

«Ինչ խելացի բալիկ է»,— ասում էին մարդիկ:

Իսկ Փարվանան բռնակալ էր և լիովին իշխում էր մորը: Նրա բղավոցներից զզված՝ հայրը վերցնում էր ավագ որդուն՝ Նաբիին, և գնում եղբոր տուն՝ գիշերելու: Գիշերները երկվորյակների մոր համար վերածվել էին անվերջանալի մղձավանջի ժամերի, որ երբեմն ընդմիջվում էին անկայուն հանգստի պահերով: Մայրը ամբողջ գիշեր ձեռքերի վրա օրորում էր Փարվանային՝ սենյակում հետ ու առաջ գնալով: Օրորում էր երեխային և երգում էր նրա համար: Նա կծկվում էր, երբ Փարվանան կաչում էր ուռած, վերքոտ կրծքերին ու քաշում ստիսքները, լնդերով ծամծամում, կարծես ուզում էր ոսկորների միջից էլ կաթ քամել: Բայց դրանից էլ օգուտ չկար, որովհետև նույնիսկ կուշտ փորով Փարվանան կուչուձիգ լինելով բղավում էր՝ մոր աղերսանքին անհաղորդ:

Իսկ փոքրիկ Մասունան սենյակի մյուս կողմից դիտում էր այդ ամենը՝ խոհուն ու անզոր արտահայտությամբ, կարծես մորը խղճալով:

— Ախր Նաբին այսպիսի երեխա չէր,— մի օր ասաց մայրը իրենց հորը:

— Երեխաները տարբեր են լինում:

— Այս մեկը ինձ ուղղակի սպանում է:

— Կանցիկ,— ասաց հայրը:— Ինչպես վատ եղանակը:

Եվ իրոք անցավ: Երևի աղիների ցավն էր կամ մեկ այլ թեթև հիվանդություն: Անցավ, բայց արդեն ուշ էր: Փարվանան թողել էր իր հետքը:

Ամառային մի օր, երբ երկվորյակները տասը ամսական էին, գյուղացիները մի հարսանիքից հետո հավաքվեցին Շադբաղում: Կանայք եռանդով կույտ-կույտ հավաքում էին սպիտակ փրփրանման բրնձի փլավը՝ շաֆրանի ոսկեգույն փաթիլներով գունազարդված: Հաց էին կտրտում, քերում էին բրինձը կաթսաների տակից, իրար էին փոխանցում մաձնով և դաղձով տապակած սմբուկից ուտեստները: Նաբին դրսում խաղում էր տղաների հետ: Երկվորյակների մայրը նստել էր գյուղի հսկայական կաղնու տակ փռած գորգին: Երբեմն-երբեմն նայում էր ստվերում քնած իր աղջիկներին:

Ճաշից հետո՝ թեյի ժամանակ, երեխաներն արթնացան, ինչ-որ

մեկը գրկեց Մասունային: Նրան ուրախ փոխանցում էին ձեռքից ձեռք, զարմիկները, քեռիներն ու մորաքույրները օդ էին թռցնում և օրորում էին նրան ծնկների վրա: Բազմաթիվ ձեռքեր խուտուտ էին տալիս նրա փափուկ փորիկը: Բազմաթիվ քթեր հպվում էին նրա քթիկին: Բոլորը սրտանց ծիծաղում էին, երբ երեխան քաշում էր Միլլա Շեքիբի մորուքը, հիացած էին երեխայի թեթև, մարդամոտ բնավորությամբ: Երեխային գրկում, հիանում էին նրա վարդագույն թուշիկներով, շափուղյա կապույտ աչքերով, հոնքերի նրբագեղ գծագրությամբ: Այդ դիմագծերը հուշում էին, որ մի քանի տարի հետո աղջիկը աննման գեղեցկուհի է լինելու:

Փարվանան մոր գրկում էր: Մինչ Մասունան ձեռքից ձեռք էր անցնում, նա խաղաղ տխրում էր, կարծես հիացած հանդիսատեսներից մեկը լիներ, որ շփոթված դեռ չի հասկանում՝ ինչի համար է այս ամբողջ աղմուկը: Երբեմն մայրը նայում էր նրան և թեթև սեղմում ոտիկը. կարծես ներողություն էր հայցում: Երբ ինչ-որ մեկն ասում էր, որ Մասունան երկու ատամ է հանել, մայրը մեղմորեն պատասխանում էր, որ Փարվանան արդեն երեք ատամ ունի, բայց ոչ ոք ուշադրություն չէր դարձնում դրան:

Երբ աղջիկները ինը տարեկան էին, ընտանիքը հավաքվեց Սաբուրի տանը՝ երեկոյան *Իֆթարի*⁹ Ռամադանից հետո պահքից դուրս գալու համար: Մեծերը նստած էին սեղանի երկայնքով դրված բարձերին և աղմկոտ զրուցում էին: Թեյ էին խմում, բարեմաղթանքներ էին ասում և բամբասում էին: Ծերունիները մատնահարում էին աղոթքի տերողորմյաները: Փարվանան նստած էր հանգիստ. կարծես երջանիկ էր, որ շնչում էր նույն օդը Սաբուրի սև, խոր աչքերի տեսադաշտում, և ամբողջ երեկոյի ընթացքում գողունի հայացքներ էր ձգում նրա կողմը: Տղան մեկ կծում էր շաքարի կտորը, մեկ ծակատն էր ափով տրորում կամ քահ-քահ ծիծաղում էր քեռու ասածների վրա: Երբ տեսնում էր, որ Սաբուրը նկատել է իր հայացքը, շփոթմունքից քարացած՝ աչքերն իջեցնում էր ներքև: Ծնկները դողում էին: Բերանն այնպես էր չորացել, որ հազիվ էր խոսում:

⁹ Իֆթար — ընթրիք, Ռամադան մահմեդական պահքի ավարտը խորհրդանշող ճաշ:

Փարվանան հիշեց նոթատետրը, որ թաքցրել էր գգրոցում՝ գգեստների կույտի տակ: Սաբուրը միշտ կախարդական էակների մասին պատմություններ էր հորինում և պատմում: Երեխաները, շուրջը հավաքված, շունչները պահած լսում էին ջիներով ու դևերով լի նրա հեքիաթները: Մի վեց ամիս առաջ նա պատահմամբ լսեց Սաբուրի և Նաբիի խոսակցությունը: Սաբուրն ասաց, որ ուզում է գրի առնել իր պատմությունները: Դրանից մի քանի օր անց Փարվանան և մայրը գնացին քաղաք՝ առևտուր անելու, և այնտեղ՝ օգտագործված գրքեր վաճառողի սեղանիկին, նա տեսավ գեղեցիկ մի նոթատետր՝ ճոճան թերթերով ու հաստ մուգ շագանակագույն կաշեկապ կազմով: Ձեռքերում պահեց՝ քաջ գիտակցելով, որ մայրը չի կարող գնել այն իր համար: Փարվանան որսաց պահը, երբ վաճառողի ուշադրությունն այլ տեղ էր, և նոթատետրը սահեցրեց շապկի տակ:

Բայց վեց ամսվա ընթացքում Փարվանան այդպես էլ քաջություն չունեցավ նոթատետրը Սաբուրին նվիրելու: Նա սարսափում էր այն մտքից, որ Սաբուրը կարող է ծաղրել իրեն կամ հասկանալ՝ ինչի համար է դա արվում, և հետ տալ նոթատետրը: Ամեն գիշեր նա պառկում էր իր անկողնում, նոթատետրը վերմակի տակ գողունի պահած, այնքան պինդ, որ եղունգները փոսեր էին գոյացնում կաշվե կազմի մեջ: Նա ինքն իրեն խոսք էր տալիս, ամեն գիշեր. «Վաղը, վաղը ես կմոտենամ ու կտամ սա նրան»:

Այդ երեկո՝ իֆթարից հետո, երեխաները վազեցին դրսում խաղալու: Փարվանան, Մասուման և Սաբուրը հերթով նստում էին ճոճանակին, որ Փարվանայի հայրը կախել էր հաստաբուն կաղնու պինդ ճյուղից: Փարվանան նստեց, բայց Սաբուրը մոռանում էր հրել ճոճանակը, որովհետև կլանված էր իր հերթական հորինվածքով: Այս անգամ նա հեքիաթ էր պատմում կաղնու ծառի մասին, որ ծառը կախարդական ուժ ունի:

— Եթե նվիրական ցանկություն ունես,— ասաց Սաբուրը,— պիտի ծնկես ծառի առաջ և շնջաս այն: Եվ եթե ծառն ուզենա կատարել այդ ցանկությունը, գլխիդ տասը տերև կընկնի:

Երբ ճոճանակի ընթացքը կրկին դանդաղեց, Փարվանան շրջվեց, որ Սաբուրին խնդրի հրել ճոճանակը, բայց բառերը կոկորդում

մնացին: Սաբուրն ու Մասունան ժպտում էին մեկմեկու, և Սաբուրի ձեռքին Փարվանան *իր նոթառեւորը* տեսավ:

— Ես այն տանը գտա,— հետո ասաց Մասունան:— Մի՞թե քունն էր: Խոստանում եմ, որ անպայման կհատուցեմ դրա համար: Դու չես բարկանում, չէ՞: Ուղղակի մտածեցի, որ Սաբուրին դա շատ է պետք: Իր պատմությունները գրի առնելու համար: Տեսա՞ր՝ ո՞նց էր նայում: Տեսա՞ր:

Փարվանան ասաց, որ չի բարկանում, բայց ներսը ցավից ջղաձգվում էր: Աչքերի առաջ հառնում էր ցավալի պատկերը. Սաբուրն ու քույրը ժպտում են միմյանց և հայացքներ փոխանակում: Փարվանան այդ պահին կարող էր անէանալ ու օդ բարձրանալ Սաբուրի հնարած փերիների պես, ու նրանք չէին էլ նկատի: Փարվանան սուր մի ցավ զգաց սրտում և ամբողջ գիշեր կամացուկ լաց եղավ:

Փարվանան և քույրն այդ ժամանակ տասնմեկ տարեկան էին: Փարվանան ժամանակից շուտ սկսել էր հասկանալ իրենց դուր եկած աղջիկների հանդեպ տղաների տարօրինակ վերաբերմունքի դրսևորումները: Դա հատկապես զգալի էր այն ժամանակ, երբ ինքն ու Մասունան դպրոցից տուն էին գալիս: Դպրոցը գտնվում էր գյուղական մզկիթի ետնասենյակում: Այդ փոքր սենյակում Ղուրանի ընթերցումից բացի Մոլլա Շեքիրը երեխաներին սովորեցնում էր նաև գրել-կարդալ և անգիր բանաստեղծություններ ասել: «Շադբաղի բնակիչների բախտը բերել է, որ այդքան գիտուն *մալիք* ունի»,— հաճախ ասում էր աղջկա հայրը: Դասից տուն գալիս աղջիկները միշտ հանդիպում էին ցածր պատին թառած տղաների խմբին: Աղջիկներին տեսնելիս տղաները երբեմն փորձում էին խոսել նրանց հետ, իսկ երբեմն էլ նրանց հետևից քարեր էին շարտում: Փարվանան ի պատասխան բղավում էր, կամ ինքն էր քարեր շարտում, իսկ Մասունան, քաշելով քրոջ արմունկներից, քրոջը հորդորում էր ավելի արագ քայլել և չբարկանալ: Բայց Մասունան չգիտեր իրական պատճառը: Փարվանան բարկանում էր ոչ թե նրանից, որ տղաները քարեր էին շարտում, այլ որ այդ քարերը թռչում էին միայն Մասունայի ուղղությամբ: Այդ ցուցադրական ծաղրը իրականում նրանց ցանկության արտահայտումն էր: Փարվանան նկատում էր, թե ինչպես էր տղաների հայացքը հպանցիկ անցնում իր վրայով և կպչում

Մասունային: Եվ այդ հայացքները՝ լի շփոթված հիացմունքով, չէին կարողանում կտրվել Մասունայի դեմքից: Փարվանան գիտեր, որ այդ կոպիտ կատակների և ցանկասեր ժպիտների տակ թաքնված էր Մասունայի հանդեպ վախը:

Եվ մի օր նրանցից մեկը մի մեծ քար գցեց, որ գլորվելով ընկավ քույրերի ոտքերի տակ: Մասունան բարձրացրեց այն, և տղաները սկսեցին քննելու տալ ու արմունկներով իրար խփել: Մի էլաստիկ ժապավեն պահում էր քարի շուրջը փաթաթած թղթի կտորը: Ապահով տարածության վրա հեռանալուց հետո Մասունան բացեց, և երկուսով կարդացին հետևյալ տողերը.

*Երդվում եմ, հենց դեմքդ տեսա,
Աշխարհը դարձավ ցնորական երագ,
Ուր այգին չի հասկանում՝ սա ծաղիկ է, թե տերև,
Ուր թռչունը չի տարբերում՝ սա իր բույնն է, թե թակարդ:*

Մոլլա Շեքիբի սովորեցրած Ռումիի բանաստեղծություններից մեկն էր:

— Քիչ-քիչ խելոքանում են,— քրքջալով ասաց Մասունան:

Բանաստեղծության տակ գրված էր. «Ուզում եմ ամուսնանալ քեզ հետ»: Իսկ դրա տակ էլ մի հետգրություն կար. «Մի զարմիկ էլ ունեմ, իսկը քրոջդ սազական: Միասին կարող են արածել հորեղբորս դաշտերում»:

Մասունան երկտողը պատռեց:

— Բանի տեղ մի՛ դիր նրանց, Փարվանա՛,— ասաց նա:— Տխմարներ են դրանք:

— Ապուշներ են,— քրոջ հետ համաձայնվեց Փարվանան:

Բայց աներևակայելի ճիգով մի ծուռ ժպիտ խաղացրեց դեմքին: Երկտողն իրապես վիրավորական էր, բայց առավել վիրավորական էր Մասունայի արձագանքը: Երկտողը որոշակի հասցեատեր չուներ, բայց Մասունան անվրեպ ենթադրեց, որ բանաստեղծությունը հասցեագրված էր իրեն, իսկ հետգրությունը՝ քրոջը: Առաջին անգամ Փարվանան տեսավ ինքն իրեն քրոջ աչքերով: Տեսավ, թե ինչպես է քույրն իրեն պատկերացնում: Քույրն էլ այստեղ համա-

կարծիք էր մյուսներին: Մասումայի ասածները ոչնչացրին Փարվանային: Ավերեցին նրան:

— Եվ այդ ամենը՝ մի կողմ,— ասաց Մասուման՝ ուները վեր քաշելով և քմծիծաղ տալով:— Ես արդեն ուրիշինն եմ:



Նաբին այցելության եկավ հայրական տուն, ինչպես ամեն ամիս: Նա ընտանիքի հաջողակ, երևի նույնիսկ գյուղի ամենահաջողակ մարդն էր, որովհետև աշխատում էր Քաբուլում, վարում էր տիրոջ փայլուն կապույտ մեքենան՝ փայլիլուն արծվի գլուխ պատկերող զարդարանքներով, բոլորը հավաքվում էին նրա ժամանումը դիտելու, ու երեխաները գռռալով վազում էին մեքենայի հետևից:

— Ինչ կա-չկա,— հարցրեց Նաբին:

Երեքով հյուղակույմ նստած թեյ ու նուշ էին վայելում: «Բայց Նաբին շատ գեղեցիկ է»,— մտածեց Փարվանան: Գծած այտուկներ, շագանակագույն աչքեր, այտամորումներ և հետ սանրած սև մազերի ալիքներ: Հագին ինչպես միշտ ձիթագույն կոստյում էր, որը մեկ-երկու չափսով մեծ էր վրան: Փարվանան գիտեր, որ Նաբին հպարտանում էր իր կոստյումով, թեքերը քաշում էր, ուղղում դարձածալը և ձգում տաբատի ծալքերը, թեպետ վառված սոխի հոտը դրանից միշտ անպակաս էր:

— Դե, մեզ այցելության եկավ թագուհի Հոնաիրան՝ թեյ ու թխվածք վայելելու,— ժպտալով ասաց Մասուման:— Թագուհին հիացած գովեց մեր նուրբ ճաշակը:— Մասուման սիրառատ ժպտաց եղբորը՝ ցուցադրելով դեղնավուն ատամները, և Նաբին, հայացքը թեյի բաժակին, ծիծաղեց: Քաբուլում աշխատանք գտնելուց առաջ Նաբին օգնում էր Փարվանային՝ խնամելու քրոջը: Ավելի ճիշտ՝ փորձում էր օգնել, բայց ի վիճակի չէր: Դա նրա ուժերից վեր էր: Քաբուլը Նաբիի համար փրկություն էր, և Փարվանան նախանձում էր, բայց չէր չարանում եղբոր դեմ՝ հասկանալով, որ եղբոր ամենամյա հատկացրած գումարը ասես նրա ապաշխարանքի արտահայտությունն էր:

Մասուման սանրեց մազերը և աչքերին սուրմա քսեց, ինչը միշտ անում էր Նաբիի այցերի ժամանակ: Փարվանան գի-

տեր, որ մասամբ դա եղբոր հանդեպ տածած սիրուց է, մասամբ էլ այն զգացողությունից, որն ուներ Մասունան: Նաբին Մասունայի գիտակցության մեջ կապվում էր Քաբուլի հետ, շքեղության և փայլի, մեքենաների և լույսերի, շքեղ ռեստորանների և արքայական պալատների քաղաքի հետ, և բնավ նշանակություն չուներ, որ այդ կապը թույլ էր և անորսալի: Փարվանան հիշում էր, որ Մասունան միշտ ասում էր քրոջը, որ ինքը գյուղի թակարդն ընկած քաղաքաբնակ աղջիկ է:

— Բեզմից խոսիր: Հարսնացու գտե՛լ ես,— խորամանկ ժպիտով հետաքրքրվեց Մասունան:

Նաբին ծիծաղով թափահարեց ձեռքերը, մերժողաբար. նույն ձևով նա ժամանակին խուսափում էր ծնողների տված նույնանման հարցերից:

— Երբ ես ինձ նորից տանելու Քաբուլ՝ ման տալու, եղբայրի՛կ,— հարցրեց Մասունան:

Նաբին մի անգամ՝ մի տարի առաջ, քույրերին տարել էր Քաբուլ, Շադբադից վերցրել, տարել էր Քաբուլ, մեքենայով ման էր տվել Քաբուլի փողոցներով, ցույց էր տվել բոլոր մզկիթները, առևտրի կենտրոնները, կինոթատրոններն ու ռեստորանները: Մասունային ցույց էր տվել Բադ-է-Բալայի գմբեթավոր պալատը, բարձր բլրի վրա փռված Բաբուրի այգիներում նա բարձրացրել էր Մասունային մեքենայի դիմացի նստատեղից ու ձեռքերի վրա տարել Մուղլա թագավորի դամբարանի մոտ: Նրանք երեքով աղոթել էին Շահ Ջեհանի մզկիթի մոտ, հետո Նաբիի փաթեթավորված ուտելիքը ճաշակել կապույտ սալիկներով պատված ջրավազանի մոտ: Դա պատահարից հետո Մասունայի կյանքում ամենաերջանիկ օրն էր, և Փարվանան երախտապարտ էր եղբորը այդ օրվա համար:

— Շուտով կգնանք, *ինշալլահ*¹⁰,— ասաց Նաբին՝ եղունգով կտկտացնելով բաժակին:

— Բարձր կդնես ծնկներիս տակ, Նաբի: Ա՛հ, այդպես ավելի հարմար է, շնորհակալությունն,— հոգոց հանեց Մասունան:

— Ես շատ հավանեցի Քաբուլը: Թե կարողանայի քայլել, վաղն

¹⁰ Ինշալլահ — տա՛ Աստված: *տեղափոխվեցի Երևանի Կոմիտասի անվան Մանկավարժների ինստիտուտի գրադարան*

առավոտյան ճամփա կրնկների այնտեղ:

— Գուցե մի օր,— ասաց Նաբին:

— Ինչ, մի օր քայլելու եմ:

— Ո՛չ,— կմկմաց Նաբին:

— Ես ուզում էի ասել...— այստեղ նա ժպտաց, իսկ Մասունան սկսեց քրքջալ:

Դրսում Նաբին Փարվանային հանձնեց փողի ծրարը: Նա հենվեց պատին և վառեց սիգարետը: Ինչպես ամեն միջօրեից հետո, Մասունան տանը քնած էր:

— Ես քիչ առաջ հանդիպեցի Սաբուրին,— ասաց նա՝ մատը բարձրացնելով:— Սարսափելի է: Նա ինձ երեխայի անունն ասաց, բայց մոռացա:

— Փարի,— հիշեցրեց Փարվանան:

Նաբին գլխով արեց:

— Ես բան չհարցրի, բայց նա ասաց, որ ուզում է նորից ամուսնանալ:

Փարվանան նայում էր հեռուն՝ ձևացնելով, որ եղբոր ասածն իրեն չի հետաքրքրում, բայց սիրտն ուժգին տրոփում էր ականջներում, իսկ մաշկի վրայով հոսում էին քրտինքի առվակները:

— Ինչ ասում եմ, ծիշտ է: Ես չեմ հարցրել: Սաբուրը բացեց խոսակցությունը: Ինձ մի կողմ քաշեց և ասաց:

Փարվանան կասկածում էր, որ Նաբին գիտեր Սաբուրի հանդեպ տածած իր գաղտնի սիրո մասին: Մասունան իր երկվորյակ քույրն էր, բայց Նաբին իրեն ավելի լավ էր հասկանում: Թեպետ այդ պահին չէր հասկանում՝ ինչու է Սաբուրը բացել այդ խոսակցությունը, ինչ օգուտ ունի դա: Սաբուրին կին է պետք, որի ոտուձեռը կապված չլինի, որը կկարողանա լիովին նվիրվել իր որդուն և նորածին աղջկան: Փարվանայի ժամանակն արդեն պատկանում էր ուրիշին: Ինչպես և իր ամբողջ կյանքը:

— Վստահ եմ, որ մեկին կգտնի,— ասաց Փարվանան:

Նաբին գլխով արեց:

— Մյուս ամիս էլի կգամ:

Նաբին սիգարետը տրորեց ոտքով և հեռացավ: Երբ Փարվանան տուն մտավ, զարմացավ՝ տեսնելով, որ Մասունան արթուն է:

— Կարծում էի՝ քնած ես,— ասաց նա:

Մասունան հայացքը գցեց պատուհանին՝ թարթելով հոգնած և դանդաղ:



Երբ աղջիկները տաներեքը բոլորեցին, սկսեցին գնալ մոտակա գյուղաքաղաքների մարդաշատ շուկաները մոր փոխարեն: Չսալարկված փողոցներից նոր ցանած ջրի հոտ էր գալիս: Նրանք անցնում էին կրպակների կողքով, որտեղ վաճառվում էին մետաքսե շալեր, նարգիլներ, պղնձե կաթսաներ և հին ժամացույցներ: Մորթված հավերը կախված էին սեղանին դրված գառան և տավարի մսի կտորների վրա:

Ամեն կրպակի մոտ Փարվանան նկատում էր, թե ինչպես տղամարդիկ սկսում էին ուշադիր զննել Մասունային՝ փորձելով անվրդով մնալ, բայց անկարող էին հայացքները կտրել աղջկանից: Երբ Մասունան նայում էր նրանց կողմը, նրանք ապուշավարի երջանկացած էին զգում: Երազում էին մի պահ նրա կողքին կանգնել: Տղամարդիկ ընդհատում էին իրենց խոսակցությունը, ծուխը քաշելով՝ քարանում էին տեղում: Մասունայի հայտնվելուց տղամարդկանց ծնկները դողում էին, բաժակներն ընկնում էին ձեռքներից:

Երբեմն դա շատ ծանր բեռ էր Մասունայի համար: Նա ամոթահար ասում էր Փարվանային, որ կուզենար ամբողջ օրը տանը մնալ և թաքնվել ազահ հայացքներից: Այդ օրերին Փարվանան մտածում էր, որ քույրն աղոտ գիտակցում էր, որ իր գեղեցկությունը նման է զենքի, լիցքավորված մի հրացանի, որի փողն ուղղված է ինչ-որ մեկի գլխին: Սակայն երբեմն էլ ուշադրության ավելցուկը հաճույք էր պատճառում Մասունային: Նա փայփայում էր իր իշխանությունը և տղամարդկանց մտքերը ցիրուցան անում մի ժպիտով, ստիպում, որ նրանց լեզուները փաթ ընկնեն:

Մասունայի անօրինակ գեղեցկությունն ուղղակի շլացնում էր, իսկ Փարվանան նրա կողքին խամրում էր իր տափակ կրծքով և հողագույն դեմքով: Նա խառնիխռիվ մազեր ուներ, դեմքը՝ դժգոհ, դաստակները՝ հաստ, իսկ ուները՝ քառակուսի: Նրան ծվատում էին հակասական զգացմունքներ՝ միաժամանակ և՛ նախանձ, և՛ Մասու-

մայի կողքին ուշադրություն գրավելու ցանկություն՝ ժիշտ այնպես, ինչպես հովտաշուշանների դաշտում ցցված մոլախոտն է ուշադրություն գրավում:

Փարվանան ամբողջ կյանքում խուսափում էր քրոջ հետ երկուսով հայելու դիմաց կանգնելուց: Նա հուսալքվում էր, երբ Մասունայի կողքին տեսնում էր իր դեմքը և հասկանում, թե ինչից է զրկվել: Բայց մարդկանց աչքերը յուրօրինակ հայելի էին, և պրծում չկար դրանից:



Փարվանան Մասունային դուրս տարավ, և երկուսով նստեցին նրա տեղադրած թախտին: Նա այնպես տեղավորեց բարձերը, որ Մասունան կարողանա մեջքը հարմար հենել պատին: Գիշերը մութ ու խաղաղ էր, միայն ծղրիղների ճռռոցն էր լսելի, մեկ էլ պատուհաններում մարմրող ձրագների վախվորած կայծն էր ու երեքշաբաթական լուսնի անփայլ սպիտակ լույսը:

Փարվանան նարգիլեի ջրամանը լցրեց ջրով, լուցկու գլխիկի չափով հաշիշի երկու գնդիկ և մի պտղունց թուփուն լցրեց ամանի մեջ, վառեց տակի ածուխն ու տվեց նարգիլեն քրոջը: Մասունան ծուխը ներս քաշեց, թեքվեց բարձերի վրա ու հարցրեց քրոջը՝ կարո՞ղ է ոտքերը դնել նրա ծնկներին: Փարվանան ձգվեց և դրեց քրոջ անկենդան ոտքերն իր ծնկներին:

Ծխելիս Մասունայի դեմքը մեղմանում էր, իջնում, փակվում էին ծանրացած կոպերը, գլուխը կողքի էր թեքվում, և ճայնը հնչում էր խորքից: Բերանի անկյուններում ծվարել էր ժպիտի ստվերը՝ քմահաճ, վերացած ու ինքնագոհ: Երբ Մասունան այդպիսին էր, քույրերն իրար հետ չէին խոսում: Փարվանան ունկնդրում էր քանու շնկշնկոցը և նարգիլեի մեջ ջրի բլթբլթոցը, նայում էր սարերին և իր շուրջը օղակված ծխի քուլաներին: Դա հաճելի լռություն էր, և քույրերը չէին ուզում լցնել այն անիմաստ բառերով:

Բայց Մասունան խոսեց.

— Կանե՞ն մի բան ինձ համար:

Փարվանան նայեց քրոջը:

— Ուզում եմ՝ ինձ Քարով տանես:

Մասունան դանդաղ արտաշնչեց, և ծուխը ալիքվելով օղակվում էր ամեն աչք թարթելիս:

— Լճի՞րջ ես խոսում:

— Ուզում եմ տեսնել Դարուվամանի պալատը: Անցյալ անգամ նման հնարավորություն չեղավ: Կարելի է նորից տեսնել Բաբուրի դամբարանը:

Փարվանան առաջ եկավ, որ տեսնի քրոջ դեմքի արտահայտությունը: Կարծում էր, որ քույրն ինչ-որ խաղ է խաղում, բայց մթության մեջ տեսավ միայն քրոջ խաղաղ ու անթարթ աչքերի փայլը:

— Երկու օրվա ճանապարհի է ոտքով: Նույնիսկ երեք: Պատկերացրու Նաբիի զարմացած դեմքը, երբ մենք հայտնվենք նրա դռան առաջ: Մենք նույնիսկ չգիտենք նրա հասցեն:

Մասունան թույլ շարժում արեց:

— Նա պատմել էր մեզ, թե որ շրջանում է ապրում: Ուղղակի մեկի դուռը կթակենք և կհարցնենք: Այդքան դժվար գործ չէ դա:

— Բայց, Մասունա՛, ո՞նց կարող ենք գնալ: Քո վիճակը...

Մասունան նարգիլեի փողրակը բերանից հանեց:

— Երբ դու դրսում աշխատում էիր, ինձ այցելեց Մոլլա Շեքիբը, և ես զրուցեցի նրա հետ: Ասացի, որ մի քանի օրով ուզում ենք Քաբուլ գնալ երկուսով: Նա կտա մեզ իր օրհնությունը և իր ջորին: Տեսնում ես, ամեն բան դասավորվում է:

— Խենթ ես դու,— ասաց Փարվանան:

— Այդպես եմ ուզում, դա իմ միակ ցանկությունն է:

Փարվանան մեջքը հենեց պատին և թափահարեց գլուխը: Հայացքը թափառում էր մշուշապատ խավարի մեջ:

— Հոգնել եմ: Ես մեռնում եմ, Փարվանա՛:

Փարվանան բարձր հոգոց հանեց և նայեց քրոջը: Մասունան փողրակը կրկին մոտեցրեց շուրթերին:

— Խնդրում եմ, մի՛ մերժիր ինձ:



Երբ քույրերն արդեն տասնյոթ տարեկան էին, մի օր՝ վաղ առավոտյան, նրանք նստել էին կաղնու հսկայական ծյուղին՝ ոտքերն օդում թափահարելով:

— Սաբուրը գալու է ինձ ուզելու,— ասաց Մասունան

բարձր շուկով:

— Ուզելու,— հարցրեց Փարվանան՝ այդ պահին չհասկանալով քրոջը:

— Դե իհարկե, ոչ ինքն անձամբ,— Մասունան ծիծաղեց՝ բերանն ափով փակելով:— Իհարկե ոչ: Հայրն է գալու ինձ ուզելու:

Ա՛յ, հիմա Փարվանան ամեն բան հասկացավ, և սիրտն ընկավ ծնկները:

— Իսկ որտեղի՞ց գիտես,— հարցրեց նա՝ հազիվ շարժելով թմբած շրթունքները:

Մասունան սկսեց պատմել, և բառերը հորդում էին նրա բերանից, բայց Փարվանան ոչինչ չէր լսում: Նա պատկերացնում էր քրոջ և Սաբուրի պսակադրությունը: Երեխաները, նոր շորերը հագած, տանում են հինայով լի զամբյուղներ՝ ծաղիկներով կողովները: Երեխաներին ուղեկցում են *շահնայի*¹¹ փչողներն ու *դոհու* խփողները: Սաբուրը Մասունայի ափը բացում է, մեջը հինա է դնում ու կապում սպիտակ ժապավենով: Աղոթքներ են հնչում, և օրհնում են այդ միությունը: Նվերներ են փոխանակվում: Հարսն ու փեսան նայում են իրար ոսկեգույն թելով ասեղնագործած կտորի տակից և իրար խմեցնում են մի-մի գդալ քաղցր շարբաթ ու *մալիդա*¹²:

Եվ Փարվանան հյուրերի հետ դիտում է արարողությունը: Նա պարտավոր է ժպտալ, ծափ տալ և երջանիկ լինել, նույնիսկ եթե սիրտը փշրված է:

Քամին անցավ ծառերի ճյուղերի արանքով, ճյուղերը շարժվեցին, և տերևները խշխշացին: Փարվանան ստիպված բռնել էր ճյուղից:

Մասունան էլ չէր խոսում, միայն ներքևի շրթունքը կծած ժպտում էր:

— Հարցրիր՝ որտեղից իմացա, որ գալու է ինձ ուզելու: Հիմա կասեմ, չէ՛, ավելի ճիշտ՝ ցույց կտամ:

Մեջքով շրջվեց Փարվանային և սկսեց գրպանում բան փնտրել:

¹¹ Շահնայի — ծիսական արարողությունների ժամանակ օգտագործվող երաժշտական գործիք:

¹² Մալիդա — ալյուրով, կարտոֆիլով, կաթով պատրաստվող ավանդական աֆղանական աղանդեր:

Իսկ հետո կատարվեց մի բան, որի մասին Մասունան այդպես էլ չիմացավ: Մինչ նա, մեջքով Փարվանային դարձած, գրպաններն էր քրքրում, քույրը բռնվեց ճյուղից, հրվեց վեր ու թափով իջավ ցած: Ճյուղը տարուբերվեց: Մասունան, հանկարծակիի եկած կորցրեց հավասարակշռությունը: Թևերը օդում տարածած՝ առաջ թեքվեց, իսկ Փարվանան կարծես կողքից նայում էր իր սեփական ձեռքերի շարժումներին: Իրականում երևի նրա ձեռքերը որոշակի հրման շարժում չարեցին, բայց մատների ծայրերը կպան Մասունայի մեջքին և աղջկան թեթևակի մղեցին առաջ: Բայց դա տևեց մի վայրկյան: Իսկ հետո Փարվանան փորձեց բռնել քրոջ շապիկը, ու կարծես մի պահ նրան հաջողվել էր փրկել քրոջը, բայց հագուստը պատռվեց, և փեշը սահեց Փարվանայի ձեռքից:

Մասունան ցած ընկավ ծառից: Այդ գահավիժումը կարծես ձգվեց մի հավերժություն: Նրա մարմինն ընկնում էր՝ փշրելով ճյուղերը, վախեցնելով թռչուններին, պոկելով տերևները, խփում, պոկում էր փոքր ճյուղերը: Մինչև ցածում աճող մի հաստ ճյուղ, հենց այն մեկը, որից կախված էր ճոճանակը, պարզորոշ ու լսելի ձոննչով զարնվեց Մասունայի մեջքի ներքևի մասին, և աղջիկը հետ ծավվեց՝ գրեթե երկու կես եղած:

Մի քանի վայրկյան անց նրա շուրջը մարդկանց ամբոխ հավաքվեց: Հայրն ու Նաբին լալիս էին և թափահարում Մասունայի մարմինը՝ փորձելով ուշքի բերել աղջկան: Ինչ-որ մեկը բռնեց աղջկա ձեռքը և բացեց բռունցքը: Երբ մատները մեկ առ մեկ հետ տարան, տեսան ձեռքի մեջ սեղմած տասը ճմռթված տերև...



Մասունան ասաց դողացող ձայնով.

— Դու պետք է դա հիմա անես: Եթե սպասես մինչև առավոտ, այլևս համարձակություն չես ունենա:

Նրանց շուրջը՝ կրակի աղոտ փայլի ներքո, որ Փարվանան վառել էր ցախավելի նման մոլախոտերից և ցողուններից, փռվել էր ավազուտների և բլուրների անծայրածիր դատարկությունը: Երկու օր է, ինչ նրանք գնում էին մացառապատ արահետներով դեպի Քաբուլ: Փարվանան քայլում էր ջորու կողքով, իսկ Մասունան, թամբին կապված, բռնել էր քրոջ ձեռքը: Նրանք քայլում

էին սարնիվեր արահետներով, որոնք պտտվում էին ժայռածածկ բլուրների միջով, և գետինը նրանց ոտքի տակ ծածկված էր կավաքարի ժանգագույն պուտերով՝ գծագրված սարդոստայն հիշեցնող ճեղքերով:

Փարվանան, կրակի մոտ կանգնած, նայում էր Մասունային, որ կրակի մյուս կողմում՝ վերմակի մեջ ամփոփված մի փաթեթ էր հիշեցնում:

— Հիմա գնում ենք Քաբուլ,— հարցրեց Փարվանան:

— Օ՛հ, ես կարծում էի, թե դու ավելի խելացի ես:

— Դու չես կարող ինձ խնդրել, որ անեմ դա,— ասաց Փարվանան:

— Ես հոգնել եմ, Փարվանա: Իմ ապրածը կյանք չէ: Եվ գոյությունս պատիժ է երկուսիս համար էլ:

— Արի հենդ դառնանք,— ասաց Փարվանան՝ զգալով, թե ինչպես է սեղմվում կոկորդը:— Չեմ կարող այդպես վարվել: Չեմ կարող թողնել քեզ:

— Դու չես թողնում,— լաց եղավ Մասունան:— Այդ ես եմ թողնում քեզ: Թողնում եմ, որ գնաս:

Փարվանան ամբողջ գիշեր հիշում էր ճոճանակը, Մասունային, և ինչպես ինքը հրեց քրոջը: Մտաբերում էր, թե ինչպես երկուսով ճոճվում էին, և Մասունան պարզում էր ոտքերն ու գլուխը հետ գցում ամեն անգամ, երբ ճոճանակը հասնում էր իր բարձրակետին, իսկ նրա երկար մազերը ծածանվում էին, ինչպես սավանները՝ լվացքի պարանին: Փարվանան հիշում էր, թե իրենք ինչպես էին հասկերից տիկնիկներ պատրաստում և հազցնում նրանց հին լաթերից կարված հարսանեկան զգեստներ:

— Մի բան ասա, քոյր իմ:

Փարվանան թարթեց արցունքոտ աչքերը և ձեռքի երեսով սրբեց քիթը:

— Նրա որդին՝ Աբդուլլան, և նրա փոքր բալիկը՝ Փարին: Կարո՞ղ ես սիրել նրանց սեփական երեխաների պես: Ասա, կարո՞ղ ես:

— Կարող եմ փորձել,— ասաց Փարվանան:

— Լավ է: Ամուսնացիր Սաբուրի հետ: Հո՞գ տար նրա երեխաների մասին: Լոյս աշխարհի բեր քո երեխաներին:

— Նա քեզ է սիրում: Ինձ չի սիրում:

— Ժամանակի հետ կսիրի:

— Ամեն ինչ ես եմ արել: Այդ ամենը իմ մեղքով է:

— Չգիտեմ, թե ինչ ես ուզում ասել, և չեմ էլ ուզում իմանալ: Այս պահին իմ ուզածը միայն սա է: Մարդիկ կհասկանան, Փարվանա: Միլլա Շեքիրը նրանց կբացատրի ամեն բան: Նա կպատմի բոլորին, որ տվել է իր օրհնությունը:

Փարվանան երեսը դարձրեց մթնող երկնքին:

— Երջանիկ եղիր, Փարվանա, խնդրում եմ: Արա՛ դա ինձ համար:

Փարվանան զգում էր, որ հիմա ուր որ է կպատմի Մասումային ամբողջ եղելությունը, թե որքան սխալ է վարվել ինքը, որքան վատ գիտեր նա իր երկվորյակ քրոջը, ում հետ կիսել է միևնույն արգանդը, և որ արդեն քանի տարի իր կյանքը դարձել է մի անխոս ներողություն: Բայց հանուն ինչի՞: Դարձյալ նա պիտի հոգին թեթևացներ Մասումայի հաշվին: Փարվանայի խոսքերը մնացին կոկորդում: Նա առանց այդ էլ բավականաչափ տառապանք էր պատճառել քրոջը:

— Ուզում եմ ծխել,— ասաց Մասուման:

Փարվանան փորձեց հակադրվել, բայց Մասուման պնդեց:

— Ժամանակն է,— ասաց նա:

Ասաց կոշտ, կարծես վերջնագիր ներկայացներ: Թամբից կախված պայուսակից Փարվանան հանեց նարգիլեն և դողացող ձեռքով սկսեց պատրաստել խառնուրդը:

— Շատ,— ասաց Մասուման:— Ավելի շատ դիր:

Ֆսֆսալով, թաց աչքերով Փարվանան մի պտղունց դրեց, հետո ավելացրեց ևս երկու պտղունց: Ածուխը վառեց և նարգիլեն դրեց քրոջ կողքին:

— Իսկ հիմա,— ասաց Մասուման, կրակի ոսկեգույն լեզվակները պարում էին նրա այտերի վրա և արտացոլվում աչքերի մեջ,— եթե դու իրոք իմ քույրն ես, եթե դու երբևէ սիրել ես ինձ, հեռացիր: Ոչ մի համբույր, ոչ մի հրաժեշտ: Մի՛ ստիպիր, որ խնդրեմ քեզ:

Փարվանան փորձեց ինչ-որ բան ասել, բայց Մասուման մի ցավագին խեղդված ձիչ արձակեց և գլուխը հետ գցեց:

Փարվանան դանդաղ բարձրացավ տեղից, մոտեցավ ջրուն,

ամրացրեց թամբը և բռնեց սանձը: Հասկանում էր, որ չգիտի ինչպես ապրել առանց Մասունայի: Վստահ չէր, թե կկարողանա: Ինչպես կձգվեն այն օրերը, երբ Մասունայի բացակայությունը կլինի ավելի անտանելի բեռ, քան նրա ներկայությունը: Եվ կարող է արդյոք քայլել այն անդունդի եզրով, որ ժամանակին լցված էր քրոջ ներկայությամբ:

«Գոտեպնդվիր», — կարծես լսեց նա քրոջ ձայնը:

Փարվանան քաշեց սանձը, թեքեց ջորու գլուխն ու սկսեց քայլել: Քայլում էր՝ կարծես ճեղքելով խավարը, և սառը քամին զարնվում էր նրա դեմքին: Գլուխը կախ քայլում էր և հետ շրջվեց միայն մեկ անգամ՝ որոշ ժամանակ անց: Արցունքի միջից տեսավ խարույկի հեռավոր, աղոտ, խավար դեղնավուն ուրվագիծը և պատկերացրեց քրոջը խարույկի մոտ միայնակ: Շուտով այդ կրակն էլ կմարի, և Մասունան կմնա: առաջին բնագոյային մղումն էր՝ հետ դառնալ, ծածկել քրոջը վերնակով, պառկել նրա կողքին:

Ինքն իրեն ստիպեց նորից հետ շրջվել ու սկսեց քայլել:

Եվ այստեղ նա լսեց ինչ-որ ձայն՝ հեռավոր, ճնշված մի թառանչ: Փարվանան գլուխը թեքեց և նորից ականջ դրեց: Սիրտը թաքտում էր կրծքում: Սարսափով մտածեց, որ քույրը մտափոխված իրեն է կանչում: Գուցե բորենին կամ անապատային աղվեսն են այդպես կաղկանձում խավարի մեջ: Դժվար էր կռահել: Մտածեց, որ կարող էր նաև քամու սուլոց լինել:

«Մի՛ թող ինձ, քոյր իմ, վերադարձիր»:

Իմանալու միակ տարբերակը հետ դառնալն էր, և շրջվեց, որ անի առաջին քայլը դեպի հետ, ուր թողել էր Մասունային, ու կանգ առավ: Մասունան իրավացի էր: Եթե հիմա հետ դառնար, հետո համարձակություն չէր ունենա քրոջը լքելու: Սիրտը չէր դիմանա, ու կմնար քրոջ կողքին: Ու կմնար նրա կողքին ընդմիշտ: Սա իր միակ հնարավորությունն էր:

Փարվանան փակեց աչքերը: Քամին շալի ծայրերը խփում էր երեսին:

Ոչ ոք չի իմանա: Չի կարող իմանալ: Դա կլինի իր անձնական գաղտնիքը, որին մեղսակից կլինեն միայն սարերը: Միակ խնդիրն այն էր, թե կկարողանա ինքը ապրել նման գաղտնիքի հետ: Եվ դրա

պատասխանը Փարվանան գիտեր: Նման գաղտնիքներ նա իր մեջ պահել է ամբողջ կյանքում:

Հեռվում լսվում էր ոռնոցը:

Բոլորը քեզ սիրում էին, Մասունս:

Իսկ ինձ ոչ ոք չէր սիրում:

Բայց ինչո՞ւ, քոյրս, ինչ էի ես արել:

Փարվանան լռեցյալն ու անշարժ երկար կանգնած մնաց խավարում:

Եվ վերջապես որոշում կայացրեց: Շրջվեց, գլուխը կախեց և շարժվեց դեպի հորիզոնը, որը նա չէր կարող տեսնել: Ու էլ հետ չնայեց: Գիտեր, որ եթե հետ նայի, կթուլանա: Կկորցնի վճռակա-նությունը, քանի որ աչքի առաջ կանցնի հեծանիվը, որ գլորվում է բլուրն ի վար՝ ավագուտի և քարերի վրա վերուվար անելով, նստատեղերը խփում են մետաղին, և փոշոտ ամպեր են բարձրանում ամեն ոլորանում: Նա նստած է հեծանվի շրջանակի վրա, Մասունան նստատեղին է և պտտում է դեկը բարձր արագության տակ՝ հեծանիվը կտրուկ կողքի թեքելով: Բայց Փարվանան չի վախենում: Նա գիտի, որ քույրը իրեն չի վստահի, չի գցի նստատեղից, և աշխարհը ամբողջովին անէանում է զվարթախիսող շրջապտույտում: Քամին սուլում է աղջիկների ականջներում, և Փարվանան ուսի վրայով նայում է քրոջը, քույրը հետ է նայում, և նրանք երկուսով քրքջում են: Իսկ թափառական շները կրնկակոխ հետևում են նրանց:

Փարվանան քայլում էր դեպի նոր կյանք: Նա քայլում ու քայլում էր, և խավարը պատել էր նրան մոր արգանդի պես: Երբ խավարը ցրվեց, և վաղորդյան աղջամուղջի մեջ փայլեց արևելքից ժայռին ընկնող դալուկ լույսի պատառիկը, Փարվանային թվաց, որ ծնվեց երկրորդ անգամ:

Չ որ որ որ

Ընուն Ալլահի՛ ամենակարող և բարեգութ: Ես գիտեմ, որ կենդանի չեմ լինի, երբ Դուք կարդաք այս նամակը, քանի որ խնդրել եմ, որ բացեք այն միայն իմ հեռանալուց հետո: Թույլ տվեք նշել, որ յոթ տարի ինձ անչափ հաճելի էր ճանաչել Ձեզ, պարոն Մարկոս: Այս տողերը գրելիս ես մտաբերում եմ ինչպես էինք լուրջի սերմեր դնում Ձեր այգում, Ձեր առավոտյան այցելություններն իմ փոքրիկ սենյակ և ֆարսի ու անգլերենի մեր անբռնազբոս դասընթացները: Երախտապարտ եմ Ձեր ընկերության, Ձեր խոհունության և Ձեր կատարած աշխատանքի համար: Հուսով եմ, որ երախտիքի իմ խոսքերը Դուք կփոխանցեք Ձեր բարեսիրտ գործընկերներին, մասնավոր իմ ընկեր Միսս Ամրա Ադեմովիչին, որ այնքան գթասիրտ է, և նրա քաջ ու հրաշալի դուստր Ռոշին:

Պետք է ասեմ, որ նամակս նախատեսված է ոչ միայն Ձեր, այլև մեկ այլ մարդու ընթերցման համար ևս, և ես հուսով եմ, որ Դուք իմ բացատրությունից հետո կփոխանցեք այն նրան: Եվ կներեք, եթե ես բաներ ասեմ, որ Դուք արդեն գիտեք: Ես դա հիշատակում եմ անհրաժեշտությունից ելնելով՝ նրա իսկ օգուտի համար: Ինչպես ինքներդ կտեսնեք, այս նամակը ինչ-որ առումով խոստովանություն է, պարոն Մարկոս, բայց նաև գրված է գործնական նպատակով: Եվ այդ գործնական հարցերի լուծման համար ստիպված եմ հայցել Ձեր օգնությունը:

Ես երկար եմ մտածել, թե որտեղից սկսեմ իմ պատմությունը: Դա դժվար գործ է մի մարդու համար, որն արդեն ութսունն անց

է: Իմ ճշգրիտ տարիքը գաղտնիք է մնում ինձ համար, իմ սերնդակից բազմաթիվ աֆղանների համար, բայց ես իմ հաշվարկների մեջ ճիշտ եմ, քանզի շատ վառ մտաբերում եմ ձեռնամարտը իմ ընկերու ապագա փեսա Սաբուրի հետ: Հենց այդ օրը ես իմացա, որ Նադիր շահը կրակոցի զոհ է դարձել, և Նրա երիտասարդ որդի Զահիրը ժառանգել է գահը: Դա 1935 թվականին էր: Երևի հենց այդ ժամանակից էլ սկսեմ պատմել: Կամ գուցե մեկ այլ տեղից: Պատմությունը նման է շարժվող գնացքի, կապ չունի՝ երբ ես նստում գնացք, միևնույնն է, վաղ թե ուշ հասնում ես վերջնակետին: Բայց միգուցե այս պատմությունը հենց վերջից էլ սկսեմ: Այո՛, կարծում եմ, խելամիտ կլինի՝ սկսեմ պատմությունս այն պահից, երբ հանդիպեցի Նիլա Վահդատիին:



Ես հանդիպեցի Նրան 1949-ին: Այդ տարի Նա ամուսնացել էր պարոն Վահդատիի հետ: Այդ ժամանակ, Շադբաղից Քաբուլ գալով 1946-ին, ես արդեն շուրջ երկու տարի աշխատում էի մեկ ուրիշի տանը, բայց

նույն շրջանում: Շադբաղից հեռանալու իմ պատճառները բնավ հպարտանալու առիթ չեն, պարոն՝ Մարկոս: Համարե՞ք սա իմ առաջին խոստովանությունը: Իմ գյուղական կյանքը ծնունդ էր ինձ, քանի որ ես ապրում էի քույրերիս հետ, որոնցից մեկը հաշմանդամ էր: Իհարկե, դա ինձ չի արդարացնում, պարոն՝ Մարկոս, բայց ես երիտասարդ էի, երազանքներով լեցուն, թեկուզ դրանք լինեին մշուշոտ և համեստ: Ես ուզում էի նվաճել աշխարհը, բայց զգում էի, որ երիտասարդությունս անցնում է կողքովս, և հեռանկարներս տապալվում են: Եվ ես հեռացա: Նաև քույրերիս օգնելու համար, ճիշտ է: Բայց դա իրականում փախուստ էր:

Ես ամբողջ օրը աշխատում էի պարոն Վահդատիի համար և ապրում էի նրանց տանը: Այդ տարիներին տունն այնպիսի խղճուկ վիճակում չէր, որին Դուք ականատես եղաք, երբ Քաբուլ եկաք 2002-ին, պարոն՝ Մարկոս: Դա սքանչելի, փառահեղ տուն էր: Այդ օրերին այն փայլում էր, կարծես զարդարված լիներ ադամանդներով: Մուտքի դարպասից մի լայն ասֆալտապատ ճանապարհ տանում էր դեպի բարձր կամարներով նախամուտք, որը զարդարված

էր կապե ծաղկամաններով, ընկուզենու փայտից փորագրված շրջանակով հայելիով, որը պատին ամրացված էր հենց այն տեղում, որտեղ Գոք կախել էիք սիրողական ֆոտոխցիկով արված Ձեր ընկերոջ լուսանկարը լողափին: Հյուրասենյակի մարմարյա հատակը ծածկված էր գորգով: Գորգն այլևս չկա, ինչպես չկան կաշվե բարձերը, ձեռքով փորագրված սուրճի սեղանը, լաջվարդյա քարից շախմատը և մեծ գրասեղանը՝ կարմիր փայտից: Շքեղ կահույքից քիչ բան է մնացել, և այդ մնացածի տեսքն էլ բարվոք չէ:

Առաջին անգամ, երբ ոտք դրեցի սալիկապատ խոհանոցը, զարմանքից բերանս բաց մնաց: Խոհանոցն այնքան մեծ էր, որ կարող էր տեղավորել ու կերակրել իմ բոլոր համագյուղացիներին: Այն ուներ վեցաչքանի ջեռոց, սառնարան, բովիչ և կաթսաների, թավաների, դանակների և խոհանոցային պարագաների մի ահռելի տեսականի, չորս մարմարապատ լողասենյակներ՝ հախճապակյա լվացարաններով: Իսկ այն քառակուսի անցքերը Ձեր բաղնիքի սեղանիկին հիշում եք, դրանք ժամանակին լցված էին լազուրիտով:

Այդ տունը նաև ետնամուտք ուներ: Մի օր, երբ նստեք Ձեր աշխատասենյակում՝ վերևի հարկում, պարոն Մարկոս, նայեք այգուն և փորձեք պատկերացնել այն: Ետնասենյակ էիր մտնում կիսալուսնաձև մուտքով, որը ծածկված էր մետաղական ճաղաշարն ի վեր մազլցող խաղողի վազերով: Մարգագետինն այն ժամանակ կանաչ էր և փարթամ, և ամենուրեք ծվարել էին ծաղկաթմբերը՝ հասմիկներով, փշավարդերով, խորդենիներով և կակաչներով՝ շրջապատված երկու շարք մրգատու ծառերով: Երբ պառկում էիր բալենու տակ, աչքերդ փակում և ունկնդրում տերևների մեջ շնկշնկացող քամուն, թվում էր՝ երկրագնդի վրա չի կարող լինել սրանից հրաշալի վայր:

Ես ապրում էի ետնաբակում գտնվող մի հյուղակում: Այն ուներ մի փոքր պատուհան, պատերը ներկված էին սպիտակ, այն լրիվ բավական էր ինձ նման համեստ պահանջներով ամուրի երիտասարդի համար: Հյուղակում կային նաև մահճակալ, սեղան, աթոռ և բավական տարածք աղոթքի գորգը օրը հինգ անգամ գետնին փռելու համար: Այն ժամանակ այդ հյուղակն ինձ հերիք էր, և, պատկերացրեք, այժմ էլ ոչինչ չի փոխվել:

Ես խոհարարություն էի անում պարոն Վահդատիի համար: Եփեղ-թափեղը սովորել էի մորիցս, հետո էլ՝ ծեր հասուլիկ ուզբեկ խոհարարից, որի օգնականն էի ես, երբ աշխատում էի քաբուլցի մի ընտանիքում շուրջ մեկ տարի: Ես նաև պարոն Վահդատիի վարորդն էի և բավականին լավ վարորդ: Նա 1940 թվականի «Շևրոլե» մակնիշի մեքենա ուներ՝ կապույտ, բրոնզագույն կտուրով, համապատասխանաբար կապույտ վիսիլե նստատեղերով և քրոմե անիվներով: Այդ մեքենային ամենուրեք գամվում էին մարդկանց հայացքները: Նա թողնում էր, որ ես վարեմ այդ մեքենան, քանզի ես դրսևորել էի ինձ իբրև ողջախոհ և հմուտ վարորդ: Նա նաև այն հազվագյուտ մարդկանցից էր, որ չեն սիրում մեքենա վարել:

Չկարծեք հանկարծ, պարոն Մարկոս, որ ես պարծենում եմ, թե լավ էի ծառայում: Ուշադիր հետևելով պարոն Վահդատիին՝ ես արդեն գիտեի նրա տարօրինակություններն ու քմահաճույքները, ինչ է սիրում ու չի սիրում: Օրինակ՝ ամեն առավոտ՝ նախաճաշից հետո, նա գնում էր զբոսանքի: Եվ քանի որ չէր սիրում մենակ զբոսնել, ես ընկերակցում էի նրան: Ես ենթարկվում էի նրա ցանկությանը, թեև իմաստ չէի տեսնում ներկայությանս մեջ: Նա գրեթե չէր խոսում զբոսանքի ընթացքում և միշտ խորասուզված էր մտքերի մեջ: Քայլում էր փոփոկոտ, ձեռքերը մեջքին դրած, անցորդներին գլխով էր անում, և նրա փայլուն կաշվե կոշիկների կրունկներն ամեն քայլի զարնվում էին մայթին: Նրա երկար սրունքները մեծ քայլեր էին գցում: Ես չէի կարողանում հարմարվել այդ քայլքին, հետ էի ընկնում և ստիպված էի վազել, որ հասնեմ նրան: Օրվա մնացած մասը նա հանգստանում էր իր աշխատասենյակում, կարդում էր կամ ինքն իր հետ շախմատ էր խաղում: Նաև սիրում էր նկարել: Ես չեմ կարող գնահատական տալ նրա արվեստին, համենայն դեպս այն ժամանակ չէի կարող, որովհետև նա երբեք ինձ մոտ չէր թողնում նկարելիս, բայց հաճախ բռնեցնում էի նրան աշխատասենյակում կամ պատշգամբում կենտրոնացած, ունքերը կիտած նկարչական տետրում հատուկ նկարչական ածուխի ձողիկով շեշտակի արագությամբ ուրվագծեր անելիս:

Մի քանի օրը մեկ ես նրան տանում էի քաղաք՝ զբոսանքի: Շաբաթը մեկ տեսակցում էր մորը: Երբեմն նա մասնակցում էր ըն-

տանեկան հավաքույթներին, ու թեպետ պարոն Վահղատին հիմնականում ջանում էր խուսափել նման հավաքներից, որոշ դեպքերում ստիպված էր գնալ, և ես ծննդյան տոների, թաղումների, հարսանիքների օրերին մեքենայով տանում էի նրան: Ամեն ամիս տանում էի նրան նկարչական պարագաների խանութ, որտեղ նա թարմացնում էր իր փափուկ մատիտների, գրաֆիտների, ռետինների, սրիչների և նկարչական տետրերի տեսականին: Երբեմն նա ուղղակի դուրս էր գալիս մեքենայով՝ շրջելու: Ես հարցնում էի նրան՝ «Ո՞ր եք գնում, Սահիբ», նա ուսերն էր թոթվում, և ես ասում էի՝ «Շատ բարի, Սահիբ», փոխում էի արագությունը և ճամփա ընկնում: Ժամերով պտտվում էինք քաղաքում անհասցե, աննպատակ, մի շրջանից անցնում մյուսը, Քարով գետի երկայնքով հասնում էինք Բալա Հիսար, նույնիսկ մինչև Դարուլամանի պալատը: Երբեմն քշում էի Քարուլից դուրս՝ մինչև Ղարղա լիճը, և մեքենան կանգնեցնում էի գետի ափին, անջատում շարժիչը, իսկ պարոն Վահղատին, հետևի նստարանին անձայն ու անխոս նստած, շատ գոհ կեցվածքով պատուհանից նայում էր ծառից ծառ թռչող թռչուններին, արևի լույսի հոսքերին, որոնք հավում էին լճի մակերևույթին և հազարավոր ցուրքերով ցիրուցան լինում ջրի վրա: Ես նայում էի նրան հետևի հայելու մեջ, և նա թվում էր աշխարհի ամենամիայնակ մարդը:

Ամիսը մեկ անգամ պարոն Վահղատին մեծահոգաբար ինձ տալիս էր իր մեքենան, և ես գնում էի իմ հայրենի գյուղը՝ Շաղբաղ՝ քրոջս՝ Փարվանային, և նրա ամուսին Սաբուրին այցելության: Երբ ես մեքենայով մտնում էի գյուղ, ինձ դիմավորում էին բազմաթիվ երեխաներ գոռու-գոչյուններով, նրանք վազում էին մեքենայի կողքով, հարվածում ցեխավահանակին և թփթփացնում ապակուն: Ես նրանց ստիպված էի քշել մեքենայից, որովհետև վախենում էի, որ կբերծեն մեքենայի ներկը կամ կծակեն ցեխավահանակը:

— Մի քնճ նայիր, Նաբի,— ասաց Սաբուրը,— դու աստղ ես:

Սաբուրի երեխաների մայրը մահացել էր (Փարվանան նրանց խորթ մայրն էր), և ես միշտ փորձում էի ուշադիր լինել նրանց հանդեպ, մանավանդ մեծ տղայի՝ Աբդուլլայի, որը ակնհայտորեն այդ հոգատարության կարիքն ուներ: Ես առաջարկում էի Աբդուլլային մեքենայով գնալ զբոսանքի, և նա միշտ բերում էր իր փոքր քրո-

ջը ու պինդ պահում էր նրան իր գրկում, մինչ մենք պտտվում էինք Շաղբաղի փողոցներով: Ես թողնում էի, որ նա միացնի-անջատի դիմապակու մաքրիչը և սեղմի ազդանշանը: Նաև ցույց էի տալիս ինչպես միացնել լույսերը՝ թույլ լույսից մինչև ամենավառը:

Երբ մեքենայի շուրջն առաջացած ամբողջ աղմուկը մարում էր, քրոջս և ամուսնու հետ նստում էինք թեյելու, ես պատմում էի նրանց Քաբուլում իմ կյանքի մասին: Ջանում էի քիչ խոսել պարոն Վահդատիի մասին: Իրականում ես շատ կապված էի նրան: Նա ինձ լավ էր վերաբերվում, և նրա բացակայության ժամանակ նրա մասին խոսելը նման էր դավաճանության: Եթե ես այդքան չափավոր մարդ չլինեի, միգուցե ասեի, որ Սուլեյման Վահդատին իմ պատկերացմամբ առեղծվածային կերպար էր, որը, թվում էր, բավարարված էր ամբողջ կյանքը իր ժառանգած հարստությունը վայելելով, մարդ, որ չուներ որևէ մասնագիտություն, ոչ մի որոշակի մղում և ակնհայտորեն ոչ մի ցանկություն իրենից հետո որևէ բան երկրի վրա թողնելու: Ես կպատմեի նրանց, որ նա վատնում էր իր կյանքը աննպատակ և անմիտ: Այդպես աննպատակ դուրս էինք գալիս մեքենայով զբոսանքի: Պարոն Վահդատիի կյանքն անցնում էր իր մեքենայի հետևի նստատեղին և սահում էր նրա սառնասիրտ հայացքի ներքո: Անտարբեր մի կյանք:

Այդ ամենը ես կարող էի ասել, բայց չասացի: Եվ լավ էր, որ չասացի, որովհետև ես չարաչար սխալվում էի:



Մի օր պարոն Վահդատին մտավ բակ՝ հագին զուլավոր նոր կոստյում, որ նախկինում երբեք չէր կրել, և ես տարա նրան մեր քաղաքի հարուստ թաղամասերից մեկը: Երբ տեղ հասանք, նա հրահանգեց մեքենան կայանել փողոցում՝ մի բարձր տան մոտ, և ես տեսա, թե ինչպես տվեց դռան զանգը, ու ծառան նրան ներս հրավիրեց: Դա մի հսկայական տուն էր, նույնիսկ ավելի մեծ, քան պարոն Վահդատիինը, և ավելի գեղեցիկ: Բարձր, սլացիկ նոճիները խոյանում էին ճամփեզրին, որը եզրագծված էր ինձ անծանոթ ծաղիկների խիտ թմբերով: Ետնաբակը պարոն Վահդատիի տան ետնաբակից կրկնակի մեծ էր, իսկ պատերն այնքան բարձր էին, որ եթե մի մարդ կանգներ

մյուսի ուսերին, միևնույնն է, չէր կարող տեսնել այդ պալատի ծայրը: Ես հասկացա, որ սա հարստության մի ուրիշ մակարդակ է:

Պայծառ ամառային օր էր, և արևը շողում էր երկնքում: Տարօղը ներս էր սահում մեքենայի բաց պատուհաններից: Թեպետ վարորդի հիմնական աշխատանքը մեքենա վարելն է, իրականում նրա ժամանակի մեծ մասն անցնում է սպասման մեջ: Նա սպասում է խանութների առաջ, և շարժիչը պարապ աշխատում է, սպասում է հարսանեկան սրահի առաջ՝ ունկնդիր լինելով հեռվից եկող երաժշտության հնչյուններին: Ժամանակը մի կերպ սպառելու համար մի քանի անգամ ինքս ինձ հետ թուղթ խաղացի: Հոգնելով թղթախաղից՝ դուրս եկա մեքենայից և սկսեցի քայլել այս ու այն կողմ, հետո էլի նստեցի մեքենայի մեջ և որոշեցի, որ մինչև պարոն Վահղատիի վերադարձը կարելի է մի քիչ ննջել:

Հենց այդ պահին դարպասը բացվեց, և երևաց սև վարսերով մի երիտասարդ կին: Նա արևային ակնոցով էր: Հագի նարնջագույն շորը ծնկներից մի քիչ ներքև էր: Սրունքներն ու ոտքերը մերկ էին: Ես չհասկացա, թե արդյոք նա նկատեց ինձ մեքենայի մեջ, համենայն դեպս ցույց չտվեց: Նա ոտքի կրունկը հենեց պատին, զգեստի փեշը վերև ելավ՝ ցուցադրելով ազդրը: Ես զգացի, որ այտերս ու վիզս այրվում են:

Իսկ հիմա, պարոն Մարկոս, ժամն է մեկ այլ խոստովանության, և սա արդեն տհաճ խոստովանությունն է, որ հնարավոր չէ քողարկել գեղեցկախոսությամբ: Այդ ժամանակ ես մոտենում էի երեսունին: Երիտասարդ տղամարդն իր այդ տարիքում մարմնական ցանկությունների բարձրակետում է: Ի տարբերություն իմ տարեկից համագյուղացիների, որոնք երբևէ չէին տեսել կնոջ մերկ ազդր և ամուսնացել էին մասամբ նաև նման արտոնության իրավունք վերջիվերջո ստանալու համար, ես որոշակի փորձ ունեի: Ես Քաբուլում պարբերաբար այցելում էի համապատասխան հաստատություններ, որտեղ երիտասարդ տղամարդկանց կարիքները բավարարում էին պատշաճ և հարմար կերպով: Ես դա հիշատակում եմ միայն նրա համար, որ հասկանաք, թե հետո քնած ոչ մի պոռնիկի չէր կարելի համեմատել այդ գեղեցիկ, նրբագեղ էակի հետ:

Հենվելով պատին՝ նա սիգարետ վառեց և ծխեց անշտապ, կա-

խարդող նրբագեղությամբ: Նա սիգարետը պահում էր երկու մատների արանքում և ասիլը պահում էր բերանի մոտ ամեն անգամ, երբ մոտեցնում էր սիգարետը շրթունքներին: Ես հափշտակված դիտում էի այդ տեսարանը: Երբ նրա ձեռքի նուրբ դաստակը թեքվում էր, ես մտաբերում էի մանուկ ժամանակ տեսած բանաստեղծությունների գրքի փայլփյուն նկարներից մեկը. երկար թարթիչներով, մետաքսե վարսերով մի կին՝ սիրեկանի հետ այգում պառկած, բարակ, դժգույն մատներով մեկնում է տղամարդուն գինով լի բաժակը: Մի պահ փողոցում ինչ-որ բան շեղեց կնոջ ուշադրությունը, և ես հնարավորություն ունեցա մատներով հարդարելու շոգից խոնավացող մազերս: Երբ նա շուռ եկավ, ես սառեցի: Նա մի քանի անգամ ծուխը ներս քաշեց, հանգցրեց սիգարետը պատին և ներս մտավ տուն:

Վերջապես կարողացա շունչ քաշել:

Երեկոյան պարոն Վահդատին կանչեց ինձ հյուրասենյակ և ասաց.

— Ես նորություն ունեմ քեզ ասելու, Նաբի՛, ես ամուսնանում եմ:

Երևի ես գերագնահատել էի միայնության հանդեպ նրա սերը:

Նշանադրության մասին լուրերը արագ տարածվեցին: Արագ տարածվեցին նաև բամբասանքները: Այդ բամբասանքները ես լսեցի պարոն Վահդատիի տանն աշխատող բանվորներից: Դրանցից ամենաշատախոսը այգեպան Զահիդն էր, որ գալիս էր շաբաթը երեք անգամ մարգագետինը խուզելու և ծառերն ու թփերը կտրտելու: Մի տիպ մարդ էր: Ամեն նախադասությունից հետո լեզուն դուրս գցելու գարշելի սովորություն ուներ և նույն այդ լեզվով բամբասանքներ էր շաղ տալիս, նույնքան անփույթ, ինչպես շաղ էր տալիս գոմաղբը մարգագետնում: Նույն համայնքում ինձ հետ աշխատում էին խոհարարներ, այգեպաններ և ցրիչներ: Շաբաթը մեկ կամ երկու անգամ՝ աշխատանքային օրվա ավարտից հետո, նրանք լցվում էին իմ տնակը՝ երեկոյան թեյի: Չեմ էլ հիշում, թե երբ սկիզբ առավ այս ավանդույթը, բայց սկսվելուն պես այլևս անզոր էի վերջ տալ դրան: Վախենում էի անքաղաքավարի և անհյուրընկալ մարդու համբավ ձեռք բերել, ավելին՝ վախենում էի՝ կարծես, թե իբրև իմ գործընկերներից ինձ բարձր եմ դասում:

Մի անգամ՝ թեյելիս, Զահիդը պատմեց, որ պարոն Վահդատիի

ընտանիքը հավանություն չի տալիս նրա ամուսնությանը հարսնացուի վատ վարքի պատճառով: Ավելացրեց, որ ամբողջ Քաբուլը գիտի, որ կինը «աբուռ, նամուս» չունի, և քսանը չբոլորած՝ «քշել էին» նրան պարոն Վահդատիի մեքենայի պես: Ամենավատն այն էր, որ աղջիկը չէր էլ փորձում հերքել նմանօրինակ խոսակցությունները, ավելին՝ այդ մասին բանաստեղծություններ էր գրում: Սենյակով հանդիմանանքի մի ալիք անցավ, երբ Ջահիդը պատմում էր այդ ամենը: Աշխատողներից մեկը բացականչեց, որ իրենց գյուղում այդպիսի կնոջ կոկորդը վաղուց կտրած կլինեին:

Այդ ժամանակ ես տեղից վեր կացա և հանդիմանեցի նրանց, որ բամբասում են մի խումբ կար անող ծեր կանանց պես և հիշեցրի, որ առանց պարոն Վահդատիի և նրա պես մարդկանց օգնության մեզ նման մարդիկ պիտի հետ դառնան գյուղ և սկսեն թրիք հավաքել:

— Ո՞ր եմ ձեր հավատարմությունն ու հարգանքը,— հարցրի ես:

Մի պահ լռություն տիրեց, և ես միամտաբար կարծեցի, որ խոսքս այդ ապուշների վրա ազդեց, բայց հետո մի քրքիջ պայթեց: Ջահիդն ասաց, որ ես հետույք լիզող եմ, և շուտով այս տան ապագա տիրուհին կվերցնի գրիչն ու կգրի՝ «Ձոն հետույքալեզ Նաբիին»: Ես վրդովված լքեցի սենյակը նրանց ծիծաղի որոտի ուղեկցությամբ:

Բայց շատ հեռու չգնացի: Այդ բամբասանքներն ինձ տակնուվրա արեցին և հուզեցին: Բայց իմ արդար բարկության ցույցը, իմ քաղաքավարության և պատշաճության քարոզը չխանգարեցին ինձ մնալ մոտակայքում ու ականջ դնել նրանց զրույցին, քանզի մի անպարկեշտ մանրամասն անգամ չէի ուզում բաց թողնել:

Նշանադրությունը մի քանի օր տևեց և պսակվեց մի համեստ հարսանեկան արարողությամբ: Արարողությանը մասնակցում էին երգիչներ և պարողներ, շուրջը ուրախություն էր տիրում: Մի մուլա, ամուսնության մի վկա և երկու ստորագրություն թղթին՝ այդքան բան: Եվ մեր առաջին տեսակցությունից երկու շաբաթ անց տիկին Վահդատին տեղափոխվեց մեր տուն:



Թո՛ւյլ տվեք մի փոքր դադար առնեմ, պարոն՝ Մարկոս, և ասեմ, որ այսուհետ տիկին Վահդատիին կոչելու եմ անունով՝ Նիլա: Կարիք չկա անգամ ասելու, որ այն ժամանակ ես նման ազատություն ինձ թոյլ չէի տա և

չէի ընդունի անգամ, եթե նման հնարավորություն տային: Ես միշտ դիմում էի նրան բիբի Սահիր՝ ողջ հնարավոր ակնածանքով: Բայց այս նամակի նպատակն այն է, որ մի կողմ դնեմ ձևականությունները, և կդիմեմ նրան հենց այնպես, ինչպես մտածում էի նրա մասին:

Այժմ ես գիտեմ, որ ի սկզբանե դա դժբախտ ամուսնություն էր: Ամուսինները երբևէ քնքշանքով իրար չէին նայում և ջերմ խոսքեր չէին փոխանակում: Նրանք պարզապես ապրում էին միևնույն տանը, և նրանց ծանապարհները հազվադեպ էին խաչվում:

Առավոտյան ես մատուցում էի պարոն Վահդատիին իր սովորական նախաճաշը՝ մի կտոր կարմրեցրած նաան, կես բաժակ ընկույզ, դարչինի հատիկով թեյ՝ առանց շաքարի, և մեկ խաշած ձու: Նա սիրում էր ձուն թոյլ եփած, այնպես, որ դեղնուցը ծորա, և ես բավականին անհանգիստ էի ծառայությանս սկզբնական շրջանում, քանի որ ոչ մի կերպ չէի կարողանում ձուն հասցնել ծորունության ճիշտ աստիճանի: Ես դարձյալ ուղեկցում էի պարոն Վահդատիին առավոտյան զբոսանքների ժամանակ, իսկ Նիլան տանը քնած էր մնում մինչ կեսօր և երբեմն՝ ավելի երկար: Երբ Նիլան արթնանում էր, ես արդեն մատուցում էի պարոն Վահդատիին երկրորդ նախաճաշը:

Առավոտյան, երբ իմ սովորական գործերն էի անում, սրտի տրոփյունով էի սպասում, թե երբ Նիլան կբացի իր սենյակից պատշգամբ տանող դուռը: Մտքումս անվերջ տարբերակներ էի մշակում, թե հատկապես այդ օրը նա ինչ տեսք էր ունենալու՝ մազերը վերև սանրած, ծոծրակին մազերի մի կլորմկ, թե՛ արձակած, ուսերի վրա առատ թափված: Արևային ակնոցով կլինի, կնախընտրի սանդալներ հագնել: Իսկ ո՞ր զգեստը կկրի՝ մետաքսյա երկնագոնյնը, թե՛ մեծ կոճակներով մաջենտան:

Երբ նա վերջապես դուրս էր գալիս, ես ձևացնում էի, որ բակում մաքրում եմ մեքենայի թափքը կամ ջրում եմ վարդի թուփը, բայց իրականում հետևում էի նրան: Նայում էի, թե ինչպես էր հանում

ակնոցը և տորրում աչքերը, ինչպես էր առաձգական հերակալը հանում ու գլուխը հետ գցում, և մուգ, շքեղ զանգուրներն ազատ ծածանվում էին: Նայում էի նաև այն ժամանակ, երբ նա, կզակը ծնկներին դրած, նայում էր բակի կողմը՝ երկարուձիգ քուլաներով սիգարետի ծուխը ներս քաշելով, կամ երբ ձոձում էր ոտքը ոտքին գցած: Մի շարժում, որ ի ցույց էր դնում ձանձրույթ, անհանգստություն կամ դժվարությամբ զսպված անհուն չարություն:

Երբեմն պարոն Վահդատին միանում էր նրան, բայց ոչ հաճախ: Նա իր սենյակում էր կամ սովորականի պես վերևում գիրք էր կարդում, իր գծանկարչությամբ էր զբաղված. ամուսնությունը նրա կենցաղում կարծես ոչինչ չէր փոխել: Նիլան օրերով գրում էր թե՛ հյուրասենյակում, թե՛ փակ պատշգամբում՝ մի ձեռքին մատիտ: Թղթի կտորները թափվում էին ծնկներից, և ծխում էր անվերջ: Երեկոյան, երբ ընթրիքն էի մատուցում, երկուսն էլ ուտում էին ընդգծված լռությամբ՝ նայելով իրենց բրնձով ափսեներին: Լռությունը խախտում էին միայն ցածրաձայն «շնորհակալություն»-ը և ճենապակուն հավող գդալի և պատառաքաղի չխկչխկոցը:

Շաբաթը մեկ-երկու անգամ ես Նիլային տանում էի գնումների: Նա գնում էր սիգարետ կամ գրիչների հավաքածու, նոր նոթատետր կամ շպար: Երբ նախօրոք իմանում էի, որ պիտի տանեմ Նիլային, մազերս խնամքով սանրում էի և ատամներս մաքրում: Լվացվում էի, լիմոնի շերտիկով մատներիցս վերացնում էի տխրի հոտը, մաքրում էի կոստյումս և փայլեցնում էի կոշիկներս: Ձիթագույն կոստյումս իրականում պարոն Վահդատիի հին կոստյումս էր, և հույսս այն էր, որ նա Նիլային այդ մասին չէր ասել, թեպետ կասկածում էի, որ ասած կլինի: Ասած կլինի ոչ թե չարությունից դրդված, այլ ուղղակի պարոն Վահդատիի նման մարդիկ երբևէ չեն կարող պատկերացնել, թե ինչպես մանր սովորական արարքները կարող են ինձ նման մարդուն ամաչեցնել: Երբեմն ես հագնում էի գառան կաշվից կարած գլխարկս, որը ժառանգել էի հորիցս: Ժամերով կանգնում էի հայելու առաջ և գլխարկն այս կամ այն կերպ հարմարեցնում գլխիս: Այսինքն՝ այնպես տարված էի Նիլայի վրա տպավորություն գործելու ջանքերով, որ եթե այդ պահին կրետ նստեր քթիս, չէի զգա, եթե միայն չխայթեր ինձ:

Ամեն անգամ, երբ ճանապարհին էինք, ես ամեն կերպ փորձում էի ձգձգել մեր ուղևորությունը, բայց, իհարկե, մեկ-երկու րոպեով, այնպես, որ Նիլան ոչինչ չկասկածեր: Ես վարում էի՝ ղեկն ամուր բռնած՝ աչքերս ճանապարհին հառած: Վերահսկում էի ինձ առավելագույնս, չէի նայում նրան հետևի հայելում, սպասում էի, որ նա դիմեր ինձ: Ես երջանիկ էի միայն նրա ներկայությամբ, նրա բույրերի բույրով՝ թանկ օճառ, բուրումնավետ ջուր, օճանելիք, ծամոն, սիգարետ: Այդքանը բավական էր, որ ես թևեր առնեի:

Մեքենայում մենք առաջին անգամ խոսեցինք իրար հետ: Դա իսկական գրույց էր, որ տարբերվում էր այն բազմաթիվ գործնական խոսակցություններից, երբ Նիլան ինձ խնդրում էր մի բան բերել կամ տանել: Ես տանում էի նրան դեղատուն, և նա հարցրեց ինձ.

— Ինչպիսին է քո գյուղը, Նաբի: Գյուղի անունն ինչ է:

— Շադբադ, բիբի՛ Սահիբ:

— Օ՛հ, իհարկե, Շադբադ: Դե պատմիր ինձ քո գյուղի մասին:

— Ասելու շատ բան չկա, բիբի՛ Սահիբ: Սովորական գյուղ է, ուրիշ գյուղերի պես:

— Չէ, հաստատ մի հետաքրքիր բան կլինի:

Ես անվրդով նստած էի, բայց մտքումս խելակորույս փորձում էի ինչ-որ բան մտաբերել: Մի գրավիչ արտասովոր բան, որը կարող էր հետաքրքրել և զվարճացնել Նիլային, բայց ապարդյուն: Ինձ նման մարդը՝ սովորական գյուղացին՝ փոքր մարդու փոքր կյանքով, միթե կարող էր պատմել մի բան, որ կարող էր գրավել Նիլայի պես կնոջ ուշադրությունը:

— Լավ խաղող ունենք,— դուրս թռավ բերանիցս, և այդ պահին ուզեցի ինքս ինձ ապտակել այդ խոսքերի համար: Ինչ խաղողի մասին եմ խոսում:

— Իսկապես,— անտարբեր ասաց Նիլան:

— Շատ քաղցր խաղող է:

Ես իմ ներսում հազար անգամ գնացի այն աշխարհ ու հետ եկա: Թևատակերս սկսեցին քրտնել:

— Խաղողի մի տեսակ կա,— ասացի ես, բերանս լրիվ չորացել էր,— ասում են, աճում է միայն Շադբադում: Շատ նուրբ է, շատ փխրուն: Երբ փորձում ես աճեցնել այն այլ տեղում՝ նույնիսկ մոտակա

գյուղում, թոշնում է և մահանում: Կործանվում է: Շաղբաղի գյուղացիներն ասում են, որ մեռնում է վշտից, բայց, իհարկե, դա սուտ է: Հողի և ջրի խնդիր է, բիբի՛ Սահիբ: Բայց դե, մարդիկ այդպես են խոսում: Վշտից:

— Շատ գեղեցիկ պատմություն է, Նաբի՛:

Ես հետևի հայելուն մի հպանցիկ հայացք գցեցի և տեսա, որ նա նայում է պատուհանից դուրս, բայց նաև հայտնաբերեցի, հուրախություն ինձ, որ նրա բերանի անկյունները բարձրացել են՝ մի կիսաժպիտ սովերելով դեմքին: Սրտապնդվեցի ու հարցրի.

— Կարո՞ղ եմ մի պատմություն էլ պատմել, բիբի՛ Սահիբ:

— Անշուշտ,— նա չխկացրեց կրակայրիչը, և ծխի քուլաները հետևի նստարանից լողացին իմ ուղղությամբ:

— Բարի՛, մենք մոլլա ունենք Շաղբաղում: Բոլոր գյուղերն էլ մուլա ունեն, մեր մոլլայի անունը Միլլա Շեքիբ է, և նա բազում պատմություններ գիտի: Նույնիսկ չեմ կարող ասել, թե քանիսը գիտի, այնքան շատ են: Բայց նա մի պատմություն էր մեզ պատմում այն մասին, որ եթե նայես մահմեդականի ձեռքի ափին, որտեղացի էլ նա լինի, կտեսնես մի ապշեցուցիչ բան, որ նրանց բոլորի ափերի գծերը նույնն են: Ինչ է նշանակում՝ նույնն են: Նշանակում է, որ ձախ ձեռքի գծերի թիվը արաբական թվերով կազմում է ութսունմեկ, իսկ աջ ձեռքինը՝ տասնույթ: Հանեք ութսունմեկից տասնույթ, ինչ թիվ կստանաք:

— Վաթսուներեք:

— Մեր մարգարեն մահացավ վաթսուներեք տարեկանում. խաղաղությունն նրան:

Հետևի նստարանից լսվեց նրա ցածրաձայն խնդմնոցը:

— Մի օր մի ճամփորդ էր անցնում գյուղով, և նա, ինչպես կարգն է, Միլլա Շեքիբի հետ նստեց ընթրիքի: Ճամփորդն այդ պատմությունը լսելուց հետո ասաց. «Բայց, Միլլա՛ Սահիբ, Ձեր նկատմամբ ողջ հարգանքով հանդերձ ասեմ, որ մի անգամ հանդիպել եմ մի հրեայի, որի ափերի գծերի թիվը նույնն էր: Դա ինչպե՞ս կբացատրեք»: Միլլան ասաց. «Այդ հրեան իր հոգու խորքում հավատավոր մահմեդական էր»:

Նիլայի հանկարծակի քրքիջն անվերջ ուղեկցում էր ինձ այդ

օրը: Կարծես թե Նիլան, թող ներվի ինձ իմ սրբապղծությունը, իջել էր ներքև դրախտավայրից՝ հավատավորների այգուց, ուր, ինչպես գրքում է գրված, գետերն են կարկաչում, և կլոր տարին աժում են մրգատու ծառեր ու շրջակայքին զով ստվեր պարգևում:

Պարոն Մարկոս, հասկացե՛ք, խնդիրը միայն Նիլայի գեղեցկության մեջ չէր: Դ՛ն չէր ինձ այդպես թովել, թեպես գեղեցկությունն էլ բավական էր: Ուղղակի իմ կյանքում ես երբևէ չէի հանդիպել Նիլայի նման երիտասարդ կնոջ: Ամեն բան՝ նրա պահվածքը, քայլվածքը, խոսվածքը, նորություն էր ինձ համար: Նիլան տապալում էր կնոջ պատշաճ վարքի մասին իմ ունեցած բոլոր պատկերացումները, և այդ վարքագիծը հակակրանք էր առաջացնում Զահիդի նման մարդկանց և, իհարկե, Սաբուրի ու մեր գյուղի բոլոր տղամարդկանց և կանանց մեջ, բայց իմ աչքում դա կրկնապատկում էր Նիլայի առեղծվածային թովչանքը:

Եվ այդպես, Նիլայի գրնգուն ծիծաղն ականջներումս, իմ գործն էի անում ամբողջ օրը, և ավելի ուշ, երբ բոլոր աշխատողները հավաքվեցին թեյի, ինքս ինձ ժպտում էի՝ համեմատելով նրանց ծիծաղը Նիլայի զանգակի պես նուրբ ծիծաղի հետ, և երջանիկ էի՝ իմանալով, որ իմ պատմած խելացի պատմությունները մի փոքր մխիթարանք էին նրա համար իր անհաջող ամուսնության մեջ: Նա արտասովոր կին էր, և այդ երեկո ես գնացի քնելու այն մտքով, որ ես էլ երևի մի փոքր արտասովոր եմ դարձել: Ահա այդպիսի ազդեցություն ուներ Նիլան ինձ վրա:



Շուտով մենք ամեն օր զրուցում էինք, ես և Նիլան, մանավանդ կեսօրին, երբ նա ծածկապատշգամբում նստած ումպ-ումպ սուրճ էր խմում: Ես թրև էի գալիս մոտակայքում՝ ձևացնելով՝ իբր գործ ունեմ, բահի կոթին հենված՝ իբր հող էի փորում կամ կանաչ թեյ էի բերում, և խոսում էի նրա հետ: Ես արտոնյալ էի զգում, քանի որ նա ինձ էր ընտրել: Ի վերջո, ես միակ սպասավորը չէի. արդեն հիշատակել եմ այդ անբարո, դողոշ Զահիդին, կար նաև կյորադեմ հազարացի կինը, որ շաբաթը երկու անգամ գալիս էր լվացք անելու: Բայց Նիլան ինձ հետ էր խոսում միայն, նույնիսկ ամուսինը չէր փարատում նրա մի-

այնություները: Մեր գրույցներում հիմնականում նա էր խոսում, և դա ինձ լրիվ բավական էր: Ես երջանիկ էի՝ լինելու այն անոթը, որը նա լցնում էր իր պատմություններով: Նա, օրինակ, պատմեց, որ մի օր հոր հետ գնացել էր Ջալալբադ՝ որսի, իսկ հետո շաբաթներ շարունակ մղձավանջներ էր ապրել, նրան հալածում էր սպանված եղնիկի ապակե աչքերի տեսիլքը: Նա նաև պատմեց, որ երեխա ժամանակ մոր հետ գնացել էր Ֆրանսիա, դեռևս երկրորդ համաշխարհային պատերազմից առաջ: Նրանք մեկնել էին գնացքով, հետո՝ նավով: Նիլան ասաց, որ գնացքի անիվների չխկչխկոցը կարծես արձագանքում էր կողերի մեջ: Եվ շատ հստակ հիշում էր նաև կեռիկներից կախված վարագույրը, առանձին խցիկներն ու շոքեքարշի շաչող սուլոցը: Նաև պատմեց, որ վեց շաբաթ հոր հետ եղել է Հնդկաստանում, և որ այդ ժամանակ շատ հիվանդ էր:

Երբ նա շրջվում էր սիգարետի մոխիրը մոխրամանի մեջ թափ տալու, ես գողունի նայում էի նրա ոտքերի եղունգների կարմիր ներկին, նրա մերկ սրունքների ոսկեգույն փայլին, ոտքի բարձր կորագծին և նաև լիքը, վայելչաձև կրծքին: Ես պատկերացնում էի, որ երկրի երեսին եղել են մարդիկ, որ կպել են այդ կրծքին և համբուրել այն, երբ սեր են արել Նիլայի հետ, և մտածում էի, թե ինչ կարող էին այդ մարդիկ իրենց կյանքում ցանկանալ դրանից հետո: Ուր կարող է գնալ մի մարդ, ով արդեն տիրացել է ամբողջ աշխարհին: Եվ միայն կամային ճիգով ես աչքերս թեքում էի ու նայում առավել ապահով մի տեղ:

Քիչ-քիչ ընտելանալով՝ այդ առավոտյան գրույցների ժամանակ նա սկսեց բողոքել պարոն Վահդատիից: Մի օր ասաց, որ ամուսինը օտարացած է և հաճախ նաև գոռոզամիտ:

— Նա շատ բարի է իմ հանդեպ, — ասացի ես:

Նիլան արհամարհական թափ տվեց ձեռքը:

— Լավ էլի, Նաբի, դրա կարիքը չկա:

Ես քաղաքավարությամբ ներքև նայեցի: Նիլայի ասածը, իհարկե, այնքան էլ սուտ չէր: Օրինակ՝ պարոն Վահդատին սովորություն ուներ ինձ ուղղելու մի այնպիսի ինքնագոհ տեսքով, որ կարող էր դիտվել, երբեմն իրավացիորեն, որպես գոռոզամտություն: Երբեմն ես սենյակ էի մտնում, մի ավստե անուշեղեն էի դնում նրա առջև,

փշրանքները թափ էի տալիս, և նա չէր էլ նկատում իմ գոյությունը, ինչպես չէր նկատում, ասենք, ճանճին, որ տզզում էր ապակու վրա: Թեպետ, ի վերջո, դա շատ երկրորդական հարց էր, եթե նկատի ունենանք, որ մեր հարևանների մեջ կային մարդիկ, ում մոտ ես աշխատել էի, որոնք իրենց ծառաներին ծեծում էին մահակներով ու գոտիներով:

— Նա չունի ո՛չ ուրախանալու, ո՛չ էլ հետաքրքրվելու ունակություն,— ասաց Նիլան՝ նյարդային խառնելով իր սուրճը:— Սուլեյմանը մի խարխուլ ծերունի է՝ երիտասարդ մարդու մարմնով:

Ես մի փոքր վախեցած էի նման անզգույշ անկեղծությունից:

— Ճիշտ է այն, որ պարոն Վահդատին լիովին հարմարվել է իր միայնությանը,— պատասխանեցի ես զգուշավոր դիվանագիտությամբ:

— Երևի նա պիտի ապրի իր մոր հետ: Ինչ ես կարծում, Նաբի: Իրար շատ սագում են, ասեմ քեզ:

Պարոն Վահդատիի մայրը ծանրամարմին և ծանրաբարո կին էր՝ միշտ շրջապատված սպասավորներով և իր երկու սիրելի շներով: Նա պաշտում էր իր շներին և գնահատում էր ծառաներից շատ, կարելի էր ասել, որ իր շներին սպասավորներից մի քանի աստիճան բարձր էր դասում: Այդ շները փոքր էին, անմազ և զզվելի, միշտ տազնապած, միշտ անհանգիստ, միշտ պատրաստ բարձր և սուր հաչելու: Ես զզվում էի այդ արարածներից, որոնք միշտ ցատկում էին ծնկներիս և հիմարաբար փորձում մազլցել ոտքերս ի վեր:

Ինձ համար պարզ էր, որ ամեն անգամ, երբ ես Նիլային և պարոն Վահդատիին տանում էի ծեր կնոջ տուն, մեքենայի հետնամասում օդը ծանրանում էր լարվածությունից, և Նիլայի կիտած հոնքերից ես հասկանում էի, որ նրանք վիճել են: Հիշում եմ, որ ծնողներս վիճում էին ու չէին հանգստանում այնքան, մինչև պարզ չդառնար, թե ով է վերջապես հաղթել: Այդկերպ նրանք ձերբազատվում էին տհաճ խոսակցությունից, կնքում էին այն որոշման պես՝ թույլ չտալով, որ դա սողոսկի հաջորդ օրվա մեջ: Այդ կռիվները երկար չէին տևում և ջրով լի դոսլի մեջ լուծվող մի կաթիլ թանաքի պես տարրալուծվում էին՝ մի փոքր մնալով ջրի մակերեսին:

Շատ ջանքեր չէին պահանջվում՝ հասկանալու համար, որ ծեր

տիկինը դեմ էր նրանց միությանը, և որ Նիլան գիտեր այդ մասին:

Երբ գրուցում էինք երկուսով՝ Նիլան և ես, մի հարց էր ծագում իմ գլխում՝ ինչու է այդ կինը ամուսնացել պարոն Վահդատիի հետ: Համարձակությունս չէր բավականացնում նման հարց տալու: Իմ բնույթին անհարիր էր քաղաքավարության օրենքների նման ոտնահարումը: Միայն կարող եմ վկայել, որ որոշ մարդկանց համար, հատկապես կանանց, ամուսնությունը, նույնիսկ այդ կարգի դժբախտ ամուսնությունը, սովորաբար փախուստ է ավելի մեծ դժբախտությունից:

Մի անգամ՝ 1950 թվականի աշնանը, Նիլան ինձ ասաց.

— Ուզում եմ՝ տանես ինձ Շադբաղ:

Նա ասաց, որ ուզում է հանդիպել իմ ընտանիքին, տեսնել, թե որտեղ եմ ես ծնվել: Նիլան նաև հավելեց, որ մեկ տարի շարունակ ես նրան ուտելիք եմ մատուցել և մեքենայով պտտեցրել եմ Քաբուլում, իսկ նա ոչինչ չգիտի իմ մասին: Նրա խնդրանքը ապշեցրեց ինձ, եթե չասեմ ավելին, քանզի նրա դիրքն ունեցող կինը սովորաբար ճիգ չի գործադրում ճանապարհ կտրելու և իր սպասավորի ընտանիքին հանդիպելու համար: Բայց որքան էլ ոգևորված էի, որ Նիլան այդպես հետաքրքրված է իմ անձով, նույնքան էլ նեղված էի, քանի որ քաջ պատկերացնում էի իմ այն շփոթմունքը և, ինչու ոչ, ամոթը, երբ նա կտեսներ այն աղքատությունը, որի մեջ ես ծնվել էի:

Մենք ճանապարհ ընկանք մի ամպամած առավոտ: Նիլան հագել էր բարձրակրունկ կոշիկներ և դեղձի գույնի անթև զգեստ, ու ես չհամարձակվեցի նրան խորհուրդ տալ՝ փոխելու հանդերձանքը: Ճանապարհին նա ինձ հարցեր էր տալիս իմ գյուղի, ծանոթների, քրոջս, Սաբուրի ու նրանց երեխաների մասին:

— Ի՞նչ են նրանց անունները:

— Դե,— ասացի,— տղայի անունը Աբդուլլա է: Նա համարյա ինը տարեկան է: Նրա հարազատ մայրը մահացավ անցյալ տարի, իմ քույրը՝ Փարվանան, նրա խորթ մայրն է: Աբդուլլայի քույրը՝ Փարին, մոտ երկու տարեկան է: Անցյալ տարի Փարվանան տղա ունեցավ՝ Օմար անունով, որը երկուշաբաթական մահացավ:

— Իսկ ի՞նչ էր պատահել:

— Չմեռ էր, բիբի՛ Սահիբ: Իջնելով գյուղի վրա՝ ամեն տարի նա

մեկ կամ երկու երեխայի կյանք է տանում: Եվ հույսդ միայն այն է, որ դժբախտությունն այս անգամ կշրջանցի քեզ:

— Աստված իմ,— մրմնջաց նա:

— Լավ, մի ավելի լավ բան ասեմ,— ասացի ես:— Քույրս դարձյալ հողի է:

Գյուղում մեզ, ինչպես միշտ, դիմավորեց բոկոտն երեխաների խումբը, որ վազում էին մեքենայի հետևից, բայց երբ Նիլան դուրս եկավ մեքենայից, սակվեցին՝ երևի վախենալով, որ կինը կարող էր քշել նրանց: Բայց Նիլան ցուցաբերեց մեծ համբերություն և բարություն: Ծնկի իջավ, ժպտաց և խոսեց երեխաներից յուրաքանչյուրի հետ, սեղմեց նրանց ձեռքերը, շոյեց նրանց կեղտոտ թուշիկները, խառնեց անլվա մազերը: Ես շփոթվեցի՝ տեսնելով, որ մարդկանց խումբ է հավաքվում Նիլայի շուրջը: Այնտեղ էր նաև Բայթուլլան՝ իմ մանկության ընկերը: Բայթուլլան և նրա եղբայրները, ագռավների շարքի պես պագած, կտուրին *նասվար*¹³ էին ծամում: Այնտեղ էր նաև նրանց հայրը, ինքը՝ Միլլա Շեքիրը, և երեք սպիտակամորուս մարդ, որ պատի ստվերում նստած անվերջ մատնահարում էին իրենց տերոգորմյաները: Եվ նրանք թափանցիկ աչքերը հառեցին Նիլայի բաց թևերին դժգոհ արտահայտությամբ:

Ես Նիլային ներկայացրի Սաբուրին, և մենք երկուսով գնացինք դեպի նրա և Փարվանայի կավածեփ տնակը: Պարապ դիտորդների ամբոխը ուղեկցում էր մեզ: Նիլան պնդեց, որ հանի կոշիկները, թեպետ Սաբուրն առարկում էր: Երբ ներս մտա, տեսա Փարվանային՝ անկյունում լուռ նստած, քարացած ու գունդուկծիկ եղած: Նա Նիլային ողջունեց հազիվ լսելի շշուկով:

Սաբուրն աչքերը ոլորեց Աբդուլլայի վրա:

— Թե՛յ բեր, տղա՛:

— Օ՛, ո՛չ, խնդրում եմ,— ասաց Նիլան՝ նստելով գետնին՝ Փարվանայի կողքին,— կարիք չկա:

Բայց Աբդուլլան արդեն անցել էր կողքի սենյակ, որը միաժամանակ ծառայում էր թե՛ իբրև խոհանոց, թե՛ իբրև ննջասենյակ իր և Փարիի համար: Մի խունացած պլաստմասե վարագույր բաժանում

¹³ Նասվար — նաև՝ նաս, աղացած թուփունի կաշուն խյում՝ ծամելու համար:

էր մեզ մեծ սենյակից, ուր հավաքված էին բոլորը: Ես նստեցի՝ ձեռքումս խաղացնելով մեքենայի բանալիները: Շատ կուզենայի քրոջս զգուշացրած լինել այդ այցելության մասին, որ գոնե նա կարողանար մի փոքր կարգի բերել տունը: Ճաքճքած պատերը մրոտված էին, Նիլայի տակի պատռված ներքնակը փոշոտ էր, իսկ սենյակի միակ պատուհանը ծածկված էր ճանձերի հետքերով:

— Գեղեցիկ գորգ է,— զվարթ ասաց Նիլան՝ մատը գորգի վրայով սահեցնելով:

Դա վառ կարմիր, փղի թաթերի նկարով գորգ էր և միակ արժեքավոր իրն էր տան մեջ, որն այդ նույն ձմեռն էլ վաճառեցին:

— Հորս գորգն է,— ասաց Սաբուրը:

— Թուրքական կարպետ է:

— Այո՛, շատ են հավանում գառան բուրդը, որից նրանք գորգ են գործում: Աներևակայելի վարպետություն է:

Սաբուրը գլխով արեց: Ողջ խոսակցության ընթացքում հազիվ մեկ անգամ նայեց Նիլային, նույնիսկ երբ նրան էր դիմում:

Պլաստմասե վարագույրը ծածանվեց. Աբդուլլան վերադարձավ՝ թեյի բաժակներով սկուտեղը ձեռքին, և դրեց այն Նիլայի առաջ: Մի բաժակ թեյ լցրեց և ծալապատ նստեց կնոջ դիմաց: Նիլան փորձեց խոսեցնել նրան, մի քանի պարզ հարց տվեց, բայց Աբդուլլան միայն թափահարում էր սափրված գլուխը, մեկ-երկու բառ էր ասում ի պատասխան և պլշած աչքերով նայում էր Նիլային: Մտքումս որոշեցի խոսել տղայի հետ և շտկել նրա վարքագիծը: Ես դա ընկերաբար կանեի, քանի որ սիրում էի այդ լրջախոհ և ունակ երեխային:

— Ե՛րբ եք պատրաստվում երեխա ունենալու,— Նիլան հարցրեց Փարվանային:

Քույրս գլուխը կախ պատասխանեց, որ երեխան ծնվելու է ձմռանը:

— Դուք օրհնված եք,— ասած Նիլան,— որ երեխա եք ուզում և որ ունեք նման քաղաքավարի խորթ տղա:

Նա ժպտաց Աբդուլլային, բայց տղայի դեմքի արտահայտությունը չփոխվեց:

Փարվանան մոթմոթաց հազիվ լսելի.

— Շնորհակալություն:

— Մի փոքր աղջիկ էլ ունեք, ձիշտ եմ հիշում,— հարցրեց Նիլան,— Փարի:

— Նա քնած է,— կոշտ ասաց Աբդուլլան:

— Ես լսել եմ, որ նա շատ լավիկն է:

— Գնա՛ քրոջդ բեր,— ասաց Սաբուրը:

Աբդուլլան մի փոքր հապաղեց՝ նայելով մեկ հորը, մեկ Նիլային, և դժկամորեն տեղից ելավ:

Եթե այս ուշ ժամին ես փորձեի արդարացնել ինձ, պարոն Մարկոս, կասեի, որ Աբդուլլան սիրում էր իր քրոջը սովորական սիրով: Բայց այդ սերը սովորական չէր: Միայն Բարձրյալը գիտի, թե ինչու էին նրանք ընտրել մեկմեկու: Դա առեղծված էր, բայց ես երբևէ երկու էակաների միջև նման զգացմունք չեմ տեսել: Իրականում Աբդուլլան ավելի շուտ քրոջ հայրն էր, քան եղբայրը: Երբ Փարին գիշերը լաց էր լինում, միայն Աբդուլլան էր քնած տեղից վեր թռչում և քրոջն օրորում ձեռքերի վրա: Նա էր փոխում քրոջ կեղտոտ տակաշորերը, բարուրում նրան և պառկեցնում քնելու: Տղայի համբերությունն անձայրածիր էր: Նա քրոջը գյուղում ման էր ածում և ցույց էր տալիս այնպես, կարծես դա աշխարհի ամենացանկալի պարզևն էր:

Փարին դեռ քնատ էր, երբ Աբդուլլան ներս բերեց նրան, և Նիլան թույլտվություն խնդրեց գրկել երեխային: Աբդուլլան քրոջը տվեց մի շամփրոդ, կասկածամիտ հայացքով, կարծես բնագրաբար ինչ-որ անհանգստություն էր ահազանգում նրա մտքում:

— Օ՛հ, հրա՛շք է,— բացականչեց Նիլան:

Նրա գրկելու ձևից երևում էր, որ փոքր երեխաների հետ գործ չի ունեցել: Փարին շփոթված նայեց Նիլային, հետո աչքերը հառեց Աբդուլլային և սկսեց լաց լինել: Աբդուլլան արագորեն քրոջը վերցրեց Նիլայի ձեռքից:

— Աչքերին նայեք,— ասաց Նիլան:— Ապա թուշիկները: Ինչ լավիկն է, չէ՞, Նաբի:

— Իհարկե, բիբի Սահիբ: Եվ հրա՛շք էլ անուն ունի՝ Փարի: Իրականում փերու նման է:

Երբ Նիլան Փարիին օրորում էր, Աբդուլլայի դեմքը մթնեց:

Տունդարձի ճանապարհին Նիլան թուլացած նստել էր հետևի նստարանին՝ գլուխը պատուհանի ապակուն հենած: Երկար ժամա-

Նակ չէր խոսում ու հանկարծակի սկսեց հեծկլտալ: Ես մեքենան արգելակեցի: Երկար ժամանակ Նիլան բան չէր ասում: Գլուխն ափերի մեջ հեկեկում էր, և ուսերը ցնցվում էին, հետո աղմուկով թաշկինակով քիթը սրբեց:

— Շնորհակալ եմ, Նաբի,— ասաց նա:

— Ինչի համար, բիբի Սահիր:

— Ինձ Շադբաղ տանելու համար: Մեծ պատիվ էր տեսնել ձեր ընտանիքը:

— Դա մեծ պատիվ էր իրենց համար: Եվ նաև իմ: Այդ Դուք եք շնորհ արել մեզ:

— Քո քրոջ բալիկները սքանչելի են:

Նիլան հանեց արևային ակնոցն ու սրբեց արցունքները:

Սկզբում ես հասկանում էի, որ ճիշտը լուռ մնալն է: Բայց նա իմ ներկայությամբ լաց էր եղել, և այդ մտերմիկ պահը ենթադրում էր քարի խոսքեր իմ կողմից: Ես մեղմորեն ասացի.

— Դուք Ձեր սեփական երեխան կունենաք, բիբի Սահիր: Ինչալլահ, սպասե՛ք:

— Ձեմ կարծում: Նույնիսկ Տերն անկարող է դա անել:

— Իհարկե կարող է, բիբի Սահիր: Դուք այնքան երիտասարդ եք: Նրա կամքով ամեն բան հնարավոր է:

— Ձես ուզում հասկանալ,— հոգնած ձայնով ասաց Նիլան: Երբևէ չէի տեսել նրան այդքան ուժասպառ ու դատարկված:— Նրանք ամեն բան հեռացրել են ինձնից Հուդկաստանում: Ներսու դատարկ է:

Ես դրան չկարողացա պատասխան տալ: Երագում էի Նիլայի կողքին նստել, գրկել նրան և համբույրներով մեղմել նրա վիշտը: Նույնիսկ առանց հասկանալու, թե ինչ եմ անում, մոտեցա նրան և ձեռքը վերցրի ափերիս մեջ: Ես կարծում էի՝ նա հետ կքաշվի, բայց նրա մատները երախտագիտությամբ բռնեցին ձեռքս: Եվ մենք նստեցինք մեքենայի մեջ: Իրար չէինք նայում: Նայում էի մեր շուրջը փռված դեղին դաշտերին, որ կարծես ձգվում էին հորիզոնից այն կողմ: Դաշտերն ակոսված էին փայտի և քարի կտորներով ու աղբով լցված չորացած ոռոգման առվակներով: Նիլայի ձեռքը դեռ ափսս մեջ՝ ես նայում էի բլուրներին և էլեկտրասյուներին: Հեռվում

երևում էր փոշու ամպով պատված մի բեռնատար մեքենա, և ես հասկացա, որ սիրով կնստեի այնտեղ մինչև մուֆն ընկնելը:

— Տուն տար ինձ,— ասաց նա վերջապես՝ բաց թողնելով ձեռքս:— Ես պետք է շուտ հասնեմ այսօր:

— Այո՛, բիբի՛ Սահիր:

Ես հազացի և փոխեցի մեքենայի արագությունը թեթևակի դողացող ձեռքով:



Նիլան դրանից հետո մտավ իր սենյակ ու օրերով դուրս չէր գալիս: Դա առաջին անգամը չէր: Երբեմն նա աթոռը դնում էր իր սենյակի պատուհանի մոտ և նստում էր այնտեղ՝ ոտքը թափահարելով ու ծխելով:

Դեմքի անթափանց արտահայտությամբ դուրս էր նայում: Չէր խոսում: Նույնիսկ գիշերազգեստը հագից չէր հանում: Չէր լողանում և ատամներն էլ չէր մաքրում: Այդ ժամանակ նույնիսկ ոչինչ չէր ուտում, և այս վիճակը պարոն Վահդատիի մեջ առաջացնում էր նրան ոչ բնորոշ մտահոգություն:

Չորրորդ օրը դարպասի դուռը թակեցին: Ես բացեցի և ընդունեցի այցելուին, որ մի բարձրահասակ ծեր մարդ էր՝ օսլայած կոստյումով և փայլուն կոշիկներով: Մի հրամայական և վանող բան կար նրա մեջ, կարծես ոչ թե պարզապես կանգնած էր, այլ վեր էր խոյացած, և նրա աչքերը նայում էին իմ միջով, և փայլուն գավազանը ձեռքին բռնել էր իբրև արքայական գայիսոն: Նա դեռ մի բառ չէր արտասանել, իսկ ես արդեն հասկացա, որ այդ մարդը սովոր է, որ իրեն ենթարկվեն:

— Ինչպես տեսնում եմ, աղջիկս վատ է զգում,— ասաց նա:

Ուրեմն դա Նիլայի հայրն էր: Նախկինում երբեք նրան չէի տեսել:

— Այո՛, Սահիր, ցավում եմ, դա այդպես է:

— Դե ուրեմն մի կողմ քաշվիր, երիտասարդ,— և նա ինձ հրելով առաջ գնաց:

Ես զբաղված էի այգում վառարանի համար փայտ կտրելով: Այգու այդ կետից պարզ երևում էր Նիլայի պատուհանը: Լուսամուտից այն կողմ ուրվագծվում էր Նիլայի հոր կերպարանքը, որ Նիլայի

մոտ կռացած՝ ձեռքը դրել էր նրա ուսին: Նիլայի դեմքի արտահայտությունը նման էր մի մարդու, որ հանկարծակի վախեցել է բարձր ձայնից, ասենք՝ կրակխառնիչի ծնագոցից կամ միջանցիկ քամուց փակված դռան շրխկոցից:

Բայց այդ երեկո նա ճաշեց:

Մի քանի օր անց Նիլան ինձ կանչեց տուն և ասաց, որ պատրաստվում է խնջույք կազմակերպելու: Երբ պարոն Վահդատին ամուրի էր, մենք երբևէ տանը հավաքույթներ չէինք կազմակերպում: Իսկ Նիլան ամիսը երկու-երեք անգամ խնջույքներ էր հրավիրում: Խնջույքի նախորդ օրը Նիլան ինձ մանրամասն հրահանգներ էր տալիս՝ ինչ խորտիկներ և ուտեստներ պիտի լինեն սեղանին: Ես գնում էի շուկա՝ անհրաժեշտ գնումները կատարելու: Ամենակարևոր տեղն իմ գնումներում զբաղեցնում էին ոգելից խմիչքները, նախկինում ես խմիչքներ երբեք չէի գնում, քանի որ պարոն Վահդատին չէր խմում: Իհարկե, դա կրոնական սահմանափակումների խնդիր չէր, ուղղակի պարոնին դուր չէին գալիս խմիչքի ազդեցության հետևանքները: Նիլան, փոխարենը, լավատեղյակ էր այն հաստատություններից, որոնց նա կատակով անվանում էր «դեղատներ», ուր կարելի էր թաքուն գնել մի շիշ դեղ, որի արժեքն ուղիղ իմ աշխատավարձի կրկնապատիկն էր: Խառը զգացմունքներ էի ապրում այդ հանձնարարությունը կատարելիս, զգում էի ինձ վատ գործի մեղսակից, բայց Նիլային գոհացնելը ինձ համար վեր էր ամեն ինչից:

Դուք պետք է տեղյակ լինեք, պարոն Մարկոս, որ մենք Շադբաղում նույնպես խնջույքներ էինք ունենում: Բայց երբ գյուղում հարսանիք կամ թլփատման արարողություն էինք նշում, խնջույքը տեղի էր ունենում երկու առանձին տներում՝ կանանց և տղամարդկանց համար: Նիլայի երեկույթների ժամանակ կանայք և տղամարդիկ շփվում էին միմյանց հետ: Կանանցից շատերը Նիլայի պես կրում էին մերկ թևերն ու սրունքները ցուցադրող զգեստներ: Նրանք խմում ու ծխում էին, կատակում էին՝ ձեռքներին անգույն, կարմիր և պղնձագույն խմիչքով լի բաժակներ, և կարող էին ձեռքով դիպել տղամարդկանց, որոնց կանայք նույնպես գտնվում էին այդ սե-

Նյակում: Ես *բոլանիով*¹⁴ և *լուլաքաքաքով*¹⁵ ափսեններն էի տանում ծխով լի սենյակի մի ծայրից մյուսը, մատուցում էի հյուրերին տարբեր խմիչքներ: Իսկ նվագարկիչի վրա պտտվում էր ձայնապնակը, և երաժշտությունն էլ աֆղանական չէր, այլ յուրօրինակ մի բան, որ Նիլան կոչում էր «ջազ»: Տասնյակ տարիներ հետո ես իմացա, պարոն Մարկոս, որ Դուք էլ ջազի սիրահար եք: Իմ ականջին դաշնամուրի անկանոն ծնագոցը և փողերի տարօրինակ կաղկանձը հնչում էին իբրև աններդաշնակ շիլաշփոթ: Բայց դա Նիլային դուր էր գալիս, և ես ականջ էի դնում, երբ նա հյուրերին ասում էր, որ նրանք անպայման պիտի լսեն այս կամ այն ձայնագրությունը: Ողջ երեկո նա ձեռքի բաժակը ցած չդրեց և ավելի շատ խմում էր, քան ուտում:

Պարոն Վահդատին իր հյուրերին զբաղեցնելու զուսպ ջանքեր էր գործադրում: Առերևույթ ձևացնում էր, թե շփվում է մարդկանց հետ, բայց իրականում կանգնում էր մի անկյունում՝ դեմքի բացակա արտահայտությամբ: Ձեռքում պտտում էր ըմպելիքի բաժակը և սեղմված շրթունքներով քաղաքավարի ժպտում էր: Իսկ երբ հյուրերը Նիլային խնդրում էին արտասանել իր բանաստեղծությունները, ներողություն էր խնդրում և հեռանում:

Իհարկե, դա երեկույթի իմ ամենասիրած մասն էր: Երբ նա սկսում էր ասմունքել, ես մի գործ էի գտնում, որ նրա մոտ լինեմ: Ու քարացած մնում էի տեղումս՝ ամբողջովին լսողություն դարձած: Նիլայի բանաստեղծությունները նման չէին իմ մանկության բանաստեղծություններին: Դուք քաջատեղյակ եք, որ մենք՝ աֆղաններս, սիրում ենք մեր պոեզիան: Նույնիսկ կրթություն չունեցողները ազատորեն ասմունքում են Հաֆիզ, Խայամ կամ Սաադի: Հիշում եք, ինձ անցյալ տարի ասացիք, Մարկոս, թե ինչքան եք սիրում աֆղաններին: Եվ երբ ես հարցրի՝ ինչու, Դուք պատասխանեցիք, որովհետև նույնիսկ գրաֆիտի անելով պատերին նրանք նկարում են Ռումիի բանաստեղծությունները:

Բայց Նիլայի բանաստեղծությունները մարտահրավեր էին նետում մեր ավանդական պոեզիային: Այնտեղ չկային սահմանված

¹⁴ Բոլանի — բանջարեղենով կամ կանաչիով լցունած հաց, ժիւզյալով հաց:

¹⁵ Լուլաքաքաք — քաքաքի տարատեսակ:

չափ և հանգավորում, չէին հիշատակվում ավանդական պատկերներ, ասենք՝ ծառեր, գարնանային ծաղիկներ և սոխակներ: Նիլան գրում էր սիրո մասին, և նրա գրվածքները նման չէին Հաֆիզի կամ Ռումիի սուֆիստական իդեալներին: դա մարմնական սիրո գովերգ էր: Նա գրում էր, թե ինչպես սիրահարները բարձին թեքված շշնջում են իրար գաղտնի խոսքեր: Նա գրում էր հաճույքի մասին. երբևէ նման պոեզիա լսած չկայի: Ես մեխված կանգնում էի տեղում՝ ունկնդրելով Նիլայի խոսքոտ ձայնը, որ սփռվում էր սրահով մեկ: Աչքերս փակ էին, որոհվետե ես պատկերացնում էի, որ նա կարդում է ինձ համար, որ այդ մենք ենք բանաստեղծության հերոսները: Հետո հյուրերից մեկը թեյ կամ ձվածեղ էր խնդրում, կախարդանքը չքանում էր, և Նիլան կանչում էր ինձ, ու ես վազում էի նրա հրամանը կատարելու:

Այդ երեկո այն բանաստեղծությունը, որ նա կարդաց, անակնկալ էր ինձ համար: Այն մի ցուրտ գյուղում ապրող ամուսնական զույգի մասին էր, որ ողբում էր ցրտից մահացած իրենց նորածնի մահը: Դատելով սենյակում լսվող խրախուսական բացականչություններից, հավանության նշաններից՝ հյուրերին դուր էր եկել բանաստեղծությունը: Երբ Նիլան ավարտեց բանաստեղծությունը, բուն ծափահարություններ լսվեցին: Բայց ես որոշ առումով ապշած ու հիասթափված էի, քանի որ քրոջս դժբախտության մասին պատմությունը ծառայել էր հյուրերին զվարճացնելու համար, և չէի կարող ինձնից թոթափել Նիլայի գործած դավաճանության զգացումը:

Երեկոյից մի երկու օր անց Նիլան ասաց, որ նոր պայուսակ է ուզում: Պարոն Վահդատին թերթ էր կարդում, իսկ ես մատուցում էի նրան ոսպով ապուր և նաան:

— Դու ինչ-որ բան ուզում ես, Սուլեյման:

— Ո՛չ, ազիզ, շնորհակալ եմ,— ասաց նա: Պարոն Վահդատին Նիլային միշտ դիմում էր «ազիզ» անունով, որ աֆղաներեն նշանակում է «սիրելիս», «ամենասիրածս», բայց, միևնույնն է, նույնիսկ այդ բառերն արտասանելիս երևում էր, թե ինչ հեռու են իրարից այդ մարդիկ: Սիրո խոսքերը պարոն Վահդատիի բերանում հնչում էին անհամ և դժգույն:

Խանութի ճանապարհին Նիլան ասաց, որ ուզում է իր հետ վերցնել ընկերուհուն, և ցույց տվեց նրա տունը: Ես կայանեցի մեքենան փողոցում ու տեսա, թե ինչպես նա մոտեցավ վարդագույն պատերով երկհարկանի տանը: Սկզբում շարժիչը միացրած էի թողել, բայց երբ հինգ րոպեից Նիլան չվերադարձավ, անջատեցի այն: Եվ ձիշտ արեցի, որովհետև միայն երկու ժամ հետո Նիլայի նրբիրան կերպարանքը շարժվեց դեպի նրբանցքում կանգնած մեքենան: Ես բացեցի հետևի դուռը, ու նա ներս սահեց: Նրա սովորական օձանելիքի բույրի հետ մեկտեղ օդում զգացվում էր մի երկրորդ բուրմունք: Դա մայրու ծառի և կոճապղպեղի խառնուրդ էր, որ ես ճանաչեցի, քանի որ զգացել էի այդ հոտը երկու օր առաջ՝ երեկոյթի ժամանակ:

— Ես իմ ուզած պայուսակը չգտա,— ասաց Նիլան՝ թարմացնելով շրթունքները:

Դիմապակու հայելում որսալով իմ ապշահար հայացքը՝ մի կողմ դրեց շրթներկը և հոնքերի տակից նայեց ինձ:

— Դու ինձ տարար երկու տարբեր խանութներ, բայց ես ինձ համար պայուսակ չգտա:

Մեր հայացքները հայելու մեջ բախվեցին իրար և մի պահ մնացին այդպես, ու ես հասկացա, որ ինձ գաղտնիք են վստահել: Նա փորձության էր ենթարկում իմ հավատարմությունը և սպասում էր իմ որոշմանը:

— Կարծում եմ՝ դուք գնացել եք երեք խանութ:

Նա ժպտաց: *Parfois je pense que tu es mon seul ami, Nabi.*

Ես միայն աչքերս ճաճպացրի:

— Նշանակում է՝ երբեմն ես կարծում եմ, թե դու իմ միակ ընկերն ես, Նաբի:

Նա ջերմորեն ժպտաց ինձ, բայց դա բնավ չբարձրացրեց իմ ընկած տրամադրությունը:

Օրվա մնացած մասն էլի գործերս էի անում, բայց շատ ավելի դանդաղ, քան երբևէ, և շատ ավելի անհավես: Մարդիկ եկան այդ օրը թեյի, մեկը երգեց մեզ համար, բայց նրա երգը չուրախացրեց ինձ: Ինձ թվում էր, որ խաբված ամուսինը ես եմ: Եվ նաև կարծում էի, որ Նիլայի ձգողական ուժն ինձ համար վերջապես թուլացել է:

Բայց առավոտյան ես արթնացա ու հասկացա, որ ոչինչ չի փոխվել. նա դարձյալ լցնում էր իմ կենսական տարածքը հատակից առաստաղ, սողոսկում էր պատերից ներս և հագեցնում այն օդը, որ ես շնչում էի իր բույրով: Անօգուտ էր պայքարել, պարոն Մարկոս:



Չեմ կարող ասել, թե հատկապես երբ այդ միտքը ծագեց իմ գլխում: Կարծես թխպոտ աշնանային առավոտ էր, ես Նիլային թեյ էի մատուցում և կռացած կտրում էի նրա համար թխվածքի մի կտոր, երբ հանկարծ լուսամուտագոգին դրված ռադիոյից հաղորդագրություն հնչեց, որ սպասվող 1952 թվականի ծմեռն ավելի ցուրտ ու դաժան է լինելու, քան նախորդը: Երևի դա ավելի շուտ էր, այն օրը, երբ ես նրան տարել էի բաց վարդագույն պատերով տունը: Կամ երևի նույնիսկ ավելի շուտ, երբ ես բռնել էի նրա ձեռքը մեքենայի հետևի նստարանին, իսկ նա լաց էր լինում:

Երբ էլ դա լիներ, այդ միտքն ինձ հետապնդում էր, և դրանից պրծում չկար:

Թույլ տվեք ասեմ, պարոն Մարկոս, որ խիղճս հիմնավորապես մաքուր է, և առաջարկս միայն բարի կամքի և լավագույն մտադրությունների արտահայտություն էր: Դա մի բան էր, որ սկզբում ցավ էր պատճառելու, բայց վերջում բարիք էր պարգևելու այդ պատմության բոլոր մասնակիցներին: Բայց հոգուս խորքում իմ մղումներն այնքան էլ ազնիվ չէին, ես ունեի իմ անձնական շահը: Ցանկությունս էր Նիլային նվիրել այն, ինչ ո՛չ ամուսինը, ո՛չ վարդագույն պատերով տան տերը երբևէ չէին կարող նվիրել:

Սկզբում խոսեցինք Սաբուրի հետ: Ի պաշտպանություն ինձ՝ ասեմ, որ եթե Սաբուրն ինձնից ընդուներ դրամական օգնություն, ես անպայման նրան փող կտայի: Ես գիտեի, որ նա փողի կարիք ունի, ինձ ասել էր, որ աշխատանք է փնտրում: Ես պարտք կվերցնեի աշխատավարձիս դիմաց պարոն Վահդատիից, որ Սաբուրը կարողանա ձմռանը հոգ տանել իր ընտանիքի մասին: Բայց Սաբուրը, ինչպես իմ շատ հայրենակիցներ, հպարտության զոհ էր: Դա մի նախաձի՞ն և անսասան հպարտություն էր, որ թույլ չէր տալիս նրան փող վերցնել ինձնից: Ամուսնանալով Փարվանայի հետ՝ նա

նույնիսկ թույլ չտվեց, որ փոքր-ինչ օգնեմ քրոջս, ինչպես նախկինում: Նա տղամարդ էր և պարտավոր էր հոգ տանել իր ընտանիքի մասին: Եվ մահացավ դեռ քառասունը չբոլորած, երբ աշխատում էր իր ընտանիքի ապրուստը վաստակելու համար, շաքարի ճակնդեղ հավաքելիս, Բաղլանի մոտակայքում: Ասում են՝ նա մահացել էր՝ թուփը ճաքճաքած, կոշտուկապատ ձեռքերում պահած:

Ես դեռ ծնող չէի և չէի կարող պատկերացնել այն մտատանջությունը, որ Սաբուրն ունեցել էր իր որոշումն ընդունելուց առաջ: Ականատես չէի նաև Վահդատիների ներընտանեկան զրույցներին: Երբ ես հայտնեցի իմ միտքը Նիլային, խնդրեցի նրան միայն մի բան. ուզում էի, որ պարոն Վահդատիի հետ զրույցներում Նիլան ներկայացնի այդ միտքն իբրև իր սեփական նախաձեռնությունը: Ես գիտեի, որ պարոն Վահդատին հակադրվելու էր այդ գաղափարին: Նրա մեջ դժվար էր հայրական բնազդի մի նշույլ անգամ որսալ: Երբեմն մտածում էի, որ հենց Նիլայի անպտղությունն էր նրա հետ պարոն Վահդատիի ամուսնության որոշման գլխավոր պատճառը: Բայց ես լարվածություն էի զգում ամուսինների միջև: Երբ գիշերը գնում էի քնելու, աչքիս առաջ հառնում էին Նիլայի երախտագիտությամբ լեցուն հայացքը և նրա արցունքները: Երբ ես խոսեցի հետը, նա բռնեց ձեռքերս, և հայացքի մեջ նույնիսկ առկայծում էր սիրո պես մի բան: Ես մտածում էի, որ նրան նվիրում եմ մի բան, որ շատ ավելի հաջողակ տղամարդիկ անկարող են տալ: Ես, ամբողջովին պատրաստակամ, ամբողջ էությամբ նվիրվել էի Նիլային ու կարծում էի, ավելի շուտ՝ հույս ունեի, իհարկե հիմարաբար, թե գուցե նա հասկանա, որ իր համար ես ավելին եմ, քան սոսկ մի հավատարիմ ծառա:

Վերջապես պարոն Վահդատին համակերպվեց այդ մտքին, և դա զարմանալի չէր, քանզի Նիլան աներևակայելի կամքի տեր կին էր: Ես տեղեկացրի Սաբուրին և ասացի, որ պատրաստ եմ իրեն և Փարիին մեքենայով տանելու Քաբուլ: Ես այդպես էլ մինչև վերջ չեմ հասկանա, թե ինչու նա որոշեց իր դստերը Շադբադից ոտքով բերել: Կամ ինչու Աբդուլլային թույլ տվեց գալ հետները: Միգուցե ուզում էր մի փոքր երկարացնել այն ժամանակը, որ պիտի մնար դստեր հետ: Կամ էլ յուրահատուկ ապաշխարանք էր փնտրում իր

տաժանակիր ծանապարհորդության մեջ: Իսկ միգուցե դա Սաբուրի հպարտությունն էր, որ թույլ չէր տալիս նստել այն մարդու մեքենան, որ պատրաստվում էր գնելու իր դատերը: Ինչ էլ որ լիներ, նրանք երեքով տեղ հասան փոշու մեջ կորած ու պայմանավորվածության համաձայն կանգնել էին մզկիթի մոտ: Պարոն Վահդատիի տան ծանապարհին ես ամեն ինչ անում էի, որ զվարճացնեմ երեխաներին, որոնք դեռ անտեղյակ էին իրենց ճակատագրին: Ամենասարսափելին այն էր, որ ժմարտությունը շուտով ջրի երես էր դուրս գալու:

Կարիք չկա մանրամասնությամբ վերապատմելու այն տեսարանը, որը տեղի ունեցավ ձիշտ այնպես, ինչպես և պատկերացնում էի: Նույնիսկ այսքան տարիներ անց, երբ հիշողությանս մեջ հառնում եմ այդ պատկերները, սիրտս ծմվում է: Եվ դա զարմանալի չէ: Ես ավերեցի այդ երկու անօգնական երեխաներին միացնող մաքրագույն և հստակ սերը և նրանց կտրեցի իրարից: Անհնար էր մոռացության տալ այդ զգացմունքային ցնցումը: Փարին, ուսերիցս կախված, խուճապահար եղած ոտքերն էր թափահարում և ճչում էր՝ Աբուլ, Աբուլ, իսկ ես նրան հետ էի քաշում: Աբդուլլան ճչում էր՝ Փարի, փորձում էր պոկվել հոր ձեռքից: Նիլան կանգնած էր աչքերը լայն բացած և երկու ձեռքերով բերանը փակած, կարծես ուզում էր լռեցնել իր սեփական ճիչը: Այդ հիշողությունները ճնշում եմ ինձ: Ինչքան ժամանակ է անցել, բայց դեռ զգում եմ այդ ծանրությունը:



Փարին այն ժամանակ չորս տարեկան էր ու թեպետ դեռ շատ փոքր էր, անհրաժեշտ էր վերաձևավորել նրա աշխարհայացքը: Այլևս նա ինձ չէր կարող կոչել կակա Նաբի (քեռի Նաբի), այլ ուղղակի պետք է ասեր՝ Նաբի: Նրա բոլոր սխալները նրբորեն ուղղվում էին, ես էլ էի դրան մասնակցում, մինչև նա մոռացավ, որ մենք ճանաչում ենք իրար: Ես նրա համար դարձա «խոհարար» Նաբի և «վարորդ» Նաբի, Նիլան դարձավ «մայրիկ», իսկ պարոն Վահդատին՝ «հայրիկ»: Նիլան սկսեց նրան սովորեցնել ֆրանսերեն, որը իր մոր լեզուն էր:

Պարոն Վահդատին սկզբում սառն ընդունեց Փարիին, բայց դա կարճ տևեց, քանզի, հենց ի զարմանս ինքն իրեն, Փարիի կարոտն

ու արտասովորից տառապանքը զինաթափեցին նրան: Շուտով Փարին միացավ մեր առավոտյան զբոսանքներին: Պարոն Վահդատին ման էր տալիս նրան իր մանկասայրակով կամ նստեցնում էր իր գիրկը՝ մեքենայի ղեկի մոտ, և համբերատար ժպտում էր, երբ Փարին ազդանշան էր տալիս: Նա ատաղձագործին պատվիրեց երեքհարկանի դարակներով մահճակալ Փարիի համար, թխկենու փայտից արկղիկ՝ նրա խաղալիքների համար, և մի փոքրիկ զգեստապահարան: Երբ իմացավ, որ Փարիի սիրած գույնը դեղինն է, նրա սենյակի ամբողջ կահույքը ներկել տվեց այդ գույնով: Եվ մի օր ես տեսա, թե ինչպես նա, Փարիի կողքին ծալապատ նստած, զգեստապահարանի դռներին վարպետորեն նկարում էր ընծուղտներ և երկարապոչ կապիկներ: Եվ այդ փաստը իրապես խոսում էր պարոն Վահդատի իրական էության մասին: Ասեմ Ձեզ, որ տարիներ շարունակ ես տեսնում էի, թե նա ինչպես է նկարում, բայց առաջին անգամ տեսա նրա արվեստը:

Փարիի հայտնվելուց հետո Վահդատիների ընտանիքը նմանվեց լիարժեք ընտանիքի: Փարիի հանդեպ սերը ստիպեց երկուսին ճաշել և ընթրել միասին: Նրանք Փարիին տանում էին մոտակա այգին, կողք կողքի նստած գոհունակությամբ դիտում էին, թե ինչպես է նա խաղում: Երբ ճաշից հետո նրանց թեյ էի մատուցում, տեսնում էի, թե ինչպես է նրանցից մեկը մանկական գիրք կարդում, իսկ Փարին, հենված նրանց ծնկներին, լսում էր և ամեն օր մոռացության մի բաժին էր ավելացնում Շադբաղում ապրած իր կյանքին:

Փարիի հայտնվելը ևս մի հետևանք ունեցավ՝ ինձ համար անսպասելի. ես մղվեցի հետին պլան: Դատեք ինձ ներողամտությամբ, պարոն Մարկոս, և հիշեք, որ ես երիտասարդ էի այն ժամանակ և հույսեր ունեի, որքան էլ անմիտ լինեին դրանք: Ի վերջո, իմ օգնությամբ էր Նիլան կարողացել մայր դառնալ: Ես հայտնաբերել էի նրա դժբախտության աղբյուրը և սպեղանի էի գտել: Կարծում էի ես արդյոք, որ դրանից հետո ես կդառնամ Նիլայի սիրեկանը: Կուզենայի ասել, որ այդքան հիմար չէի նման բաներ մտածելու համար, պարոն Մարկոս, բայց դա ճիշտ չէ: Ես կարծում եմ՝ ճշմարտությունն այն է, որ բոլորս էլ սպասում ենք, թե անհաղթահարելի արգելքների դեպքում էլ մեր կյանքում կարող է մի արտասովոր լավ բան պատահել:

Բայց ես չէի կարող կանխատեսել, որ կնդվեմ ետին պլան: Փարին զբաղեցնում էր Նիլայի ամբողջ ժամանակը: Դասեր, խաղեր, քուն, զբոսանք և էլի խաղեր: Իմ ու Նիլայի ամենօրյա զրույցները դադարեցին: Երբ Փարին ու Նիլան տնակ էին սարքում կամ գլուխկոտրուկ էին լուծում, Նիլան անգամ չէր էլ նկատում, որ ես սենյակում եմ, ոտնաթաթերիս կանգնած, ու իրեն սուրճ եմ բերել: Իսկ եթե պատահում էր, որ զրուցում էինք, Նիլան օտարացած էր թվում և շատ արագ ընդհատում էր խոսակցությունը: Եվ թեպետ ամոթալի բան եմ ասում, այդ պատճառով ես Փարիի հանդեպ հակակրանք էի տածում:

Ըստ համաձայնության՝ Փարիի ընտանիքը չպետք է տեսներ երեխային: Նրանց թույլ չէին տալիս հաղորդակցվել: Մի օր՝ Փարիի որդեգրումից հետո, ես գնացի Շադբաղ՝ նվերներ տանելով Աբդուլլայի և քրոջս որդի մանկահասակ Իքբալի համար:

Սաբուրը կտրուկ ասաց.

— Նվերները տվեցիր, իսկ հիմա քո տուն գնալու ժամանակն է: Ես ասացի, որ չեմ հասկանում այս սառը ընդունելության և կուպիտ վերաբերմունքի պատճառը:

— Լավ էլ հասկանում ես,— ասաց նա:— Էլ չգաս մեզ տեսնելու:

Ամեն բան ծիշտ էր: Եվ ես էլ հասկանում էի: Մեր միջև երեխայի հարցն էր... Այցելությունս էլ շփոթահար էր, լարված, նույնիսկ անբնական էր դառնում միասին նստած թեյ ըմպելն ու խոսելը եղանակի կամ խաղողի բերքի մասին: Մենք ձևացնում էինք՝ իբր ամեն բան սովորականի պես էր: Ի վերջո, ես էի այդ ընտանիքի բաժանման պատճառը, ու Սաբուրն այլևս չէր ուզում ինձ տեսնել: Ես հասկանում էի նրան: Ու այլևս չգնացի այնտեղ: Եվ էլ ոչ մեկին չտեսա:



1955-ի վաղ գարնանը մեր տանը բոլորի կյանքում կտրուկ շրջադարձ կատարվեց, պարոն Մարկոս: Հիշում եմ, անձրևում էր: Տեղատարափ անձրև չէր, երբ գորտերը դուրս են գալիս ու հաճույքից կռկռում են: Մանր մաղում էր ամբողջ առավոտ: Դա լավ հիշում եմ, որովհետև այգեպան Զահիդը, փոցխին հենված, իր մշտական ծուլությամբ բողբոքում էր վատ եղանակից ու անպատվում: Ես արդեն պատրաստվում

էի գնալու իմ սենյակ, որ էլ չլսեմ նրա փնթփնթոցը, երբ լսեցի Նիլայի ճիչը: Նա տանն էր և իմ անունն էր տալիս:

Ես բակով սլացա դեպի տուն: Ձայնը գալիս էր վերևից՝ պարոն Վահդատիի ննջարանից:

Նիլան կուչ էր եկել անկյունում՝ մեջքով պատին հենված, և ավով փակել էր բերանը: Ձեռքը բերանից չհեռացնելով՝ ասաց.

— Նրա հետ ինչ-որ բան է կատարվում:

Պարոն Վահդատին նստած էր անկողնում՝ հագին սպիտակ վերնաշապիկ, և տարօրինակ խեղդված ձայներ էր արձակում: Դեմքը գունատ էր և այլալված, մազերը՝ խառնիխուռն: Նա անընդհատ փորձում էր աջ ձեռքով ինչ-որ շարժումներ անել և ձախողվում էր: Ես հետո սարսափով նկատեցի, թե ինչպես է թուրք ծորում նրա բերանի անկյունով:

— Նաբի, մի բան արա:

Փարին, որ այդ ժամանակ վեց տարեկան էր, ներս էր մտել սենյակ և, մոտ գալով պարոն Վահդատիի մահճակալին, քաշում էր նրա շապիկը:

— Հայրիկ, հայրիկ...

Պարոն Վահդատին նայում էր նրան չռված աչքերով և բերանը բացուխուսի էր անում: Փարին ճչաց:

Ես արագ գրկեցի երեխային և տվեցի Նիլային: Պատվիրեցի երեխային տանել ուրիշ սենյակ, որ հորը չտեսնի այս վիճակում: Նիլան թարթեց, կարծես դուրս գալով տրանսից՝ նայեց ինձ, հետո՝ Փարիին և գրկեց երեխային: Ու անվերջ հարցնում էր՝ ինչ է կատարվում իր ամուսնու հետ, և անվերջ կրկնում, որ ես պետք է մի բան անեմ:

Ես պատուհանից կանչեցի Ջահիդին, վերջապես այդ անպիտան տխմարը մի անգամ մի բանի պետք եկավ և օգնեց, որ տիրոջ տաբատը հագցնենք: Մենք պարոն Վահդատիին բարձրացրինք անկողնուց, ձեռքերի վրա իջեցրինք և տեղավորեցինք մեքենայի հետևի նստատեղին: Նիլան էլ նստեց ամուսնու կողքին: Ես Ջահիդին ասացի, որ մնա տանը և հոգ տանի Փարիի մասին: Նա փորձեց հակաճառել, բայց ես ձեռքի ավով հարվածեցի նրա քունքին ամբողջ ուժով: Նաև ավելացրի, որ Ջահիդը էշի մեկն է և պիտի

անի այն, ինչ հրամայված է:

Սա ասելով՝ ես մեքենան դուրս քշեցի նրբանցքից և հապշտապ սլացա:

Այդ դեպքից երկու շաբաթ անց մենք պարոն Վահդատիին տուն բերեցինք: Դրանից հետո ծայր առավ քառսը: Պարոն Վահդատիի ազգականները հրոսակախմբի պես արշավեցին տան վրա: Ես ամբողջ օրը ճաշ էի եփում և թեյ էի եռացնում ու մատուցում կանքեռուն, կան զարմիկին, կան մեծահասակ հորաքրոջը: Շքամուտքի զանգն էին տալիս, և կրունկները կտկտում էին հյուրասենյակի մարմարե հատակին: Միջանցքում տարածվում էին շշուկները, և մարդկանց հոսքը լցվում էր տուն: Այդ մարդիկ նախկինում հազվադեպ էին այցելում մեզ, և ակնհայտ էր, որ նրանք գրանցում էին իրենց ներկայությունը ավելի շատ պարոն Վահդատիի ծեր մորը գոհացնելու համար: Նրանք չէին մտածում սենյակում փակված հիվանդ մարդու մասին, ում հետ հարաբերությունները լարված էին: Իհարկե մայրն էլ ժամանեց, փառք աստծու, առանց իր շնիկների: Նա ներխուժեց տուն՝ ամեն ձեռքին մի թաշկինակ, որոնցով սրբում էր կարմրած աչքերն ու ծորացող քիթը: Ծանրումեծ նստելով որդու մահճակալի մոտ՝ սկսեց լաց լինել: Նա ամբողջովին սև էր հագել, և դա զարհուրելի էր, կարծես տղան արդեն մեռած լիներ:

Ինչ-որ առումով այդպես էլ կար: Պարոն Վահդատիից մնացել էր ստվերը միայն: Դեմքի կեսը քարացած դիմակ էր հիշեցնում, ոտքերն էլ համարյա չէին ծառայում իրեն: Ձախ ձեռքը շարժվում էր, բայց աջը ոսկոր էր միայն և թուլացած մսի կտոր: Խոսքը բաղկացած էր խռպուտ խռխռոցներից և մռթմռթոցներից, որ ոչ ոք ի վիճակի չէր վերձանելու:

Բժիշկն ասաց մեզ, որ պարոն Վահդատիի զգացողությունները նույնն են, ինչ կաթվածից առաջ: Եվ որ նա ամեն բան հասկանում է, ուղղակի չի կարողանում իր զգացածն ու հասկացածը վերարտադրել:

Իհարկե դա այնքան էլ ճիշտ չէր: Հենց առաջին շաբաթվա ընթացքում նա պարզ արտահայտեց իր վերաբերմունքը այցելուների հանդեպ, իր մոր հանդեպ: Նույնիսկ այդ ծայրահեղ հիվանդ վիճակում նա մտում էր լիովին միայնակ մարդ և բնավ կարիքը չուներ

իր ազգականների խղճահարության, նրանց վշտալից հայացքների: Նրանք ցավագին թափահարում էին գլուխները՝ նայելով նրան: Երբ նրանք մտնում էին պարոն Վահդատիի սենյակ, նա իր գործող ձեռքով մի ջղային շարժում էր անում՝ նրանց դուրս հրավիրելով: Երբ խոսում էին հետը, դեմքը շուռ էր տալիս: Եթե նստում էին կողքին, մռնչում էր, սավանը հավաքում բռի մեջ և այնքան էր հարվածում ազդրին, մինչև ազգականները հեռանան: Փարիի հանդեպ վերաբերմունքն այդքան մերժողական չէր, ավելի նուրբ էր: Երբ Փարիի գալիս էր հոր անկողնու մոտ տիկնիկ խաղալու, նա սրտագին նայում էր ինձ աղերսող հայացքով, ջրակալած աչքերով և դողացող կզակով, մինչև ես Փարիին դուրս էի տանում: Պարոն Վահդատին չէր խոսում Փարիի հետ, քանի որ գիտեր, որ իր ձայնը կվախեցնի երեխային:

Այցելուների այդ ասպատակությունը Նիլայի համար կարծես փրկություն լիներ: Երբ ազգականները լցվում էին տուն, Նիլան փախչում էր Փարիի սենյակ՝ հարուցելով իր սկեսրոջ դժգոհությունը, որն ակնկալում էր, և իհարկե նրան չէր կարելի մեղադրել դրա համար, որ Նիլան կմնա իր որդու կողքին գոնե պատշաճության կանոնները պահելու համար: Իհարկե, Նիլային բնավ չէին հետաքրքրում նման ձևականությունները և բանբասանքները, որ հնչում էին նրա հասցեին: Իսկ մարդիկ իրոք խոսում էին. «Եվ սա կին է կոչվում»: Ես լսում էի, թե ինչպես է Նիլայի սկեսուրը բազմիցս կրկնում այդ արտահայտությունը: Նա առիթը չէր կորցնում բողոքելու, որ Նիլան անտարբեր է, որ նրա սրտի տեղը անսահման դատարկություն է: Որտե՞ղ է նա, երբ ամուսինն այդքան ունի իր կարիքը: Ինչպե՞ս կարող է կինը լքել իր սիրող և հավատարիմ ամուսնուն այդ վիճակում:

Իհարկե, ծեր տիկնոջ ասածների մեջ ճշմարտություն կար: Իրականում պարոն Վահդատիին ես էի խնամում, ես էի դեղ տալիս և ողջունում սենյակ մտած այցելուներին: Բժիշկն ինձ հետ էր խոսում, ոչ թե Նիլայի, և դրա համար էլ մարդիկ ինձնից էին հարցնում նրա առողջության մասին:

Այն, որ պարոն Վահդատին չէր ընդունում այցելուներին, ինչոր չափով թեթևացնում էր Նիլայի վիճակը, բայց նաև խնդրահա-

րույց անհանգստություն էր պատճառում: Մնալով Փարիի սենյակում՝ փակ դռան հետևում, նա մեկուսանում էր ոչ միայն սկեսրոջ հետ անցանկալի շփումից, այլև իր անօգնական ամուսնուց: Իսկ երբ տունը դատարկվում էր, նա ստիպված էր կատարել կնոջ իր պարտականությունները, որոնց նա բացարձակ պատրաստ չէր:

Նա չէր կարող կատարել այդ պարտականությունները և չէր կատարում:

Չեմ ուզում ասել, որ նա դաժան էր կամ չարամիտ: Ես երկար կյանք եմ ապրել, պարոն՝ Մարկոս, և, գիտեմ որ մերձավորի ներառ-խարհի մասին պիտի դատես համեստության և գթասրտության հավասար չափաբաժնով: Ասածս այն է, որ մի անգամ՝ պարոն Վահդատիի սենյակ մտնելիս, տեսա Նիլային նրա անկողնու վրա փռված աղիողորմ լացելիս: Նիլայի ձեռքին գդալն էր, որով նա ուսպով ապուր էր լցնում ամուսնու բերանը: Խյուսը ծորում էր պարոն Վահդատիի վզին կապած շորի վրա:

— Տվե՛ք սա ինձ, բիբի՛ Սահիբ,— մեղմորեն ասացի ես՝ նրա ձեռքից գդալը վերցնելով, սրբեցի պարոնի դեմքը և սկսեցի կերակրել նրան, բայց նա մռնչում էր, աչքերը կկոցում և շրջում էր դեմքը:

Դրանից քիչ անց ես երկու ճամպրուկ իջեցրի և հանձնեցի վարորդին, որ տեղավորի մեքենայի բեռնախցիկում: Հետո հետևի նստատեղին նստեցրի Փարիին, որ հագել էր իր սիրած դեղին վերարկուն:

— Նաբի՛, դու հայրիկին կբերե՞ս Փարիզ՝ մեզ տեսնելու, ինչպես մայրիկն ասաց:

Փարին ինձ պարզեց իր ցանցառատամ ժպիտը:

Ես հավաստիացրի նրան, որ հենց հայրն ավելի լավ զգա, անպատճառ այդպես էլ կանենք: Հետո համբուրեցի նրա թաթիկները:

— Բիբի՛ Փարի, մաղթում եմ Ձեզ երջանկություն և հաջողություն:

Ես տեսա Նիլային ցած իջնելիս: Նրա աչքերը ուռել էին, իսկ աչքերի ներկը լրդվել էր: Նա պարոն Վահդատիի սենյակում ամուսնուն հրաժեշտ էր տալիս:

Հարցրի պարոնի որպիսությունը:

— Ինձ թվում է՝ նա հանգստացել է,— պատասխանեց Նիլան:—

Կամ միգուցե դա ուղղակի իմ սրտագին ցանկությունն է:— Նա քաշեց պայուսակի շղթան և կաշվե փոկը զցեց ուսին:

— Ոչ մեկին չասես՝ ուր ենք գնում: Այդպես ավելի լավ կլինի:

Ես խոստացա, որ չեմ ասի: Նիլան ասաց, որ շուտով կգրի ինձ: Հետո երկար նայեց աչքերիս մեջ, և ես նրա աչքերում իրական սեր տեսա: Նիլան ձեռքի ափը քսեց դեմքիս:

— Ուրախ եմ, Նաբի, որ նրա մոտ ես:

Նա ավելի մոտեցավ և փաթաթվեց ինձ՝ այտը հպելով դեմքիս, քիթս խուտուտ տվեց նրա մազերի և օժանելիքի բույրը:

— Դա դու էիր, Նաբի, — շնչաց նա ականջիս: — Միշտ դու ես եղել, միթե չես իմացել:

Ես չհասկացա, և նա ինձնից արագ հեռացավ, ու ես չկարողացա հարցնել նրան: Գլուխը կախ, բարձրակրունկ կոշիկները ասֆալտին կտկտացնելով՝ նա շտապ անցավ նրբանցքով: Նստեց տաքսու հետևի նստարանին՝ Փարիի կողքին, նայեց իմ ուղղությամբ և ափը սեղմեց ապակուն, և այդ ապակուն սեղմված ափը վերջին բանն էր, որ ես տեսա, ու մեքենան շարժվեց փողոցով:

Նայեցի՝ ինչպես էր հեռանում՝ սպասելով, մինչև մեքենան թեքվեց փողոցի անկյունում, հետո փակեցի դարպասը, հենվելով դռանը՝ լաց եղա երեխայի պես:



Հակառակ պարոն Վահդատիի ցանկության՝ որոշ այցելուներ դեռ գալիս էին, բայց ի վերջո միայն մայրը սկսեց այցելել որդուն: Նա գալիս էր շաբաթը մեկ անգամ, մատները ճտտացնելով կանչում էր ինձ, և ես մոտեցնում էի աթոռը: Ու տարեց կինը սկսում էր մենախոսությունը, որի հիմնական բովանդակությունը իր որդուն լքած կնոջ բնույթն ու էությունն էր: Նիլան փչացածի մեկն էր: Սատանա, հարբեցող: Վախկոտի մեկն էր, որ փախել է, Աստված գիտի, թե ուր, երբ ամուսինն այդքան նրա կարիքն ունի: Պարոն Վահդատին դա լռությամբ էր տանում, մոր ուսի վրայով անտարբեր նայում էր պատուհանին: Այնուհետև ծայր էին առնում անվերջանալի նորությունների շարքը և ամենօրյա անցուդարձի մասին պատմությունները, որոնք ձանձ-

րալի էին ցավալի լինելու աստիճան: Ասենք, քույրերը վիճել էին այն պատճառով, որ նրանցից մեկը համարձակվել էր գնել ծիշտ և ծիշտ սրճի նույն սեղանիկը, ինչ մյուսը: Կամ որ մեկի անվաղողը նստել էր Փաղմանի ճանապարհին անցյալ ուրբաթ: Մեկն էլ նոր սանրվածք էր արել: Եվ այդպես շարունակ: Երբեմն պարոն Վահդատին ինչ-որ բան էր մոնչում, և ծեր տիկինը շրջվում էր իմ կողմը:

— Հեյ, դու, ինչ է նա ասում:

Նա միշտ այդպես էր ինձ դիմում, սուր տոնով և կոպիտ խոսքերով:

Իսկ ես օրուգիշեր պարոնի կողքին էի և աստիճանաբար սկսելի էի վերձանել նրա անհասկանալի խոսքը: Միտ էի գալիս և այլոց համար անըմբռնելի տնքոցների ու մռթմռթոցների մեջ կարողանում էի տարորոշել, որ պարոնին հարկավոր է ջուր կամ գիշերանոթ կամ կողքի շրջվել: Ես փաստացի թարգմանիչ էի դարձել:

— Ձեր որդին ասաց, որ ուզում է քնել:

Ծեր տիկինը հառաչում էր և ասում, որ դա լավ է, քանի որ ինքը պատրաստվում է գնալու: Նա կռանում էր, համբուրում որդու ձակատը և խոստանում շուտ վերադառնալ: Ես ճանապարհում էի նրան մինչև դարպասը, որի մոտ տիկնոջը սպասում էր իր անձնական վարորդը: Վերադառնում էի պարոն Վահդատիի սենյակ, նստում նրա մահճակալի կողքին, և մենք միասին վայելում էինք լռությունը: Երբեմն մեր հայացքները հանդիպում էին, և նա թափ էր տալիս գլուխն ու ծուռ ժպտում:

Ինձ համար նախատեսված աշխատանքի ծավալը նվազել էր: Ես միայն շաբաթը երկու անգամ մեքենան քշում էի նպարտելնի խանութ և ճաշ էի եփում միայն երկու մարդու համար: Իմաստ չկար պահելու այլ սպասավորներ և վճարելու նրանց այն աշխատանքի համար, որ ինքս էլ կարող էի անել: Ես դրա մասին ասացի պարոն Վահդատիին, ու նա ինձ ձեռքով նշան արեց, որ մոտենամ իրեն:

— Այդպես ուժասպառ կլինես, Նաբի:

— Ո՛չ, Սահիբ, ուրախությամբ կանեն ամեն բան:

Նա հարցրեց՝ արդյոք ես վստահ եմ, և ես հաստատեցի որոշումս: Նրա աչքերը խոնավացան, և մատները թույլ սեղմեցին դաստակս: Նա իմ ճանաչած ամենադիմացկուն մարդկանցից էր, բայց

կաթվածից հետո ամենասովորական իրադարձությունն էլ նյարդայնացնում և անհանգստացնում էր նրան: Նա լացկան էր դարձել:

— Այո, Սահիբ:

— Ինքդ քեզ աշխատավարձ նշանակիր: Վերցրո՛ւ՝ ինչքան ուզում ես:

Ես ասացի, որ դրա մասին չարժի նույնիսկ խոսել:

— Գիտես, թե փողը որտեղ եմ պահում:

— Սահիբ, հանգստացե՛ք:

— Ինձ չի հետաքրքրում՝ ինչքան դու կվերցնես:

Ես պատասխանեցի, որ ուզում եմ տաք շորվա եփել ճաշի համար:

— Այդ տաք շորվայից կուզե՞ք ուտել: Ես էլ կուզեի այդ շորվայից, եկեք դրա մասին մտածենք:

Ես վերջ տվեցի մյուս սպասավորների հետ մեր ամենօրյա հավաքույթներին: Ինձ այլևս չէր հետաքրքրում, թե ինչ են նրանք մտածում իմ մասին: Չէի ուզում, որ խմբվեն պարոն Վահդատիի տանը և զվարճանան պարոնի հաշվին: Մեծ հաճույքով աշխատանքից ազատեցի Զահիդին: Նաև հեռացրի հազարացի կնոջը, որ գալիս էր շորերը լվանալու: Այսուհետ ես էի ամեն բան լվանում և կախում խորդանոցում՝ չորանալու: Խնամում էի այգին, կտրտում էի թփուները, հնձում էի խոտը, տնկում էի նոր ծաղիկներ և բանջարեղեն: Տան մասին էլ էի հոգ տանում՝ ավլում էի գորգերը, փայլեցնում էի հատակը, թափ էի տալիս վարագույրների փոշին, լվանում էի պատուհանները, նորոգում էի ծորակները և փոխում էի ժանգոտ խողովակները:

Մի անգամ պարոն Վահդատին քնած էր իր սենյակում, իսկ ես զարդաքանդակների վրայից սարդոստայնն էի մաքրում: Ամառ էր՝ չոր, անտանելի դաժան շոգ: Բոլոր վերմակներն ու ծածկոցները վերցրել էի պարոնի վրայից և սրունքների վրա տաբատը վեր էի ոլորել: Բացել էի պատուհանները, և վերևի օդափոխիչը ճռռոցով պտտվում էր, թեև դա էլ չէր օգնում, շոգը գրոհում էր բոլոր կողմերից:

Սենյակում բավականին մեծ պահարան կար, որը ես վաղուց պատրաստվում էի կարգի բերելու և վերջապես այդ օրը գործի անցա: Դռները բացեցի և սկսեցի կոստյումները մեկ առ մեկ մաք-

րել, թեպետ հասկանում էի, որ հավանաբար պարոն Վահագատին դրանց կարիքը էլ երբեք չի ունենա: Այնտեղ փոշու մեջ կորած գրքերի կապոցներ էլ կային, և ես մեկիկ-մեկիկ մաքրեցի այդ գրքերը: Փայլեցրի բոլոր կոշիկները և շարեցի մի գծի վրա: Նաև գտա մի մեծ ստվարաթղթե տուփ, որը գրեթե չէր երևում ձմեռային վերարկուների հետևում: Քաշեցի և բացեցի այն: Այն լեցուն էր պարոն Վահագատիի նկարչական ալբոմներով, որոնք դրված էին իրար վրա և կարծես հին կյանքի տխուր վերապրումը լինեին:

Վերցրի վերևի ալբոմը և բացեցի այն պատահական մի էջի վրա: Ծնկներս դողացին: Թերթեցի ալբոմն էջ առ էջ: Հետո վերցրի մեկ ուրիշը, հետո՝ ուրիշը, հետո՝ հաջորդը, հետո՝ հաջորդը: Էջերը թռչում էին աչքերիս առաջ թեթև քամու ալիք տալով, և յուրաքանչյուր էջի վրա գրաֆիտով արված նույն պատկերն էր: Ահա ես՝ սրբում եմ մեքենայի դիմապակին, այնպես, ինչպես երևում է երկրորդ հարկի ննջասենյակի դիտակետից: Ահա պատշգամբի մոտ ես հենված եմ բահի կոթին: Նկարներում ես կապում էի կոշիկիս քուղեբլուրը, փայտ էի կոտրում, թփերն էի ջրում, թեյնիկից թեյ էի լցնում, աղոթում կամ ննջում էի: Նկարում պատկերված էր նաև Ղարղա լճի ափին կայանած մեքենան, ես էի ղեկին նստած, պատուհանն իջեցրած և ձախ ձեռքս կախ գցած, իսկ հետևի նստարանին մի աղոտ կերպարանք էր ուրվագծվում, և կարելի էր նույնիսկ տեսնել երկնքում պտտվող հավքերի երամը:

Դա դու էիր, Նաբի:

Միշտ դու էիր:

Չե՞ս ինձացել:

Ես նայեցի պարոն Վահագատիին, որ պինդ քնած էր, և խնամքով տեղավորեցի նկարչական ալբոմները ստվարաթղթե արկղում, կափարիչը դրեցի վրան և խցկեցի իր հին տեղը՝ վերարկուների տակ: Հետո դուրս եկա սենյակից՝ դուռը կամացուկ ծածկելով, որ նրան չարթնացնեմ: Անցա մութ սրահով և աստիճաններով ցած իջա: Հետո կողքից տեսա ինքս ինձ: Տեսա, թե ինչպես եմ մտնում ամառվա տապի մեջ, անցնում ճանապարհով, հրում առջևի դարպասը, մտնում փողոց, թեքվում անկյունով և հեռանում առանց հետ նայելու:

«Ինչպէս մնամ»,— մտածում էի ես: Իմ հայտնագործությունից ոչ զարմացած էի, ոչ էլ շոյված, պարոն Մարկոս: Ես պարզապէս շփոթված էի: Փորձում էի պատկերացնել՝ ինչպէս կարելի է մնալ այդ տանը այդ ամենն իմանալուց հետո: Տուփում գտածս ստվեր էր գցում ամեն ինչի վրա: Դա մի բան էր, որից չէր կարելի փախչել և խուսափել: Իսկ մյուս կողմից, ինչպէս կարող էի հեռանալ՝ թողնելով պարոնին նման անօգնական վիճակում: Սկզբում գոնե պետք է գտնեի մեկին, որ կհամաձայներ կատարել իմ պարտականությունները: Ես ներքուստ պարտավորված էի զգում ինձ, գոնե այնքանով, որ պարոն Վահղատին միշտ բարի էր իմ հանդեպ, իսկ ես փորձում էի նրա մեջքի հետևում սիրահետել իր կնոջը:

Ես գնացի ճաշասենյակ և աչքերս խուփ նստեցի ապակե սեղանիկի մոտ: Չեմ կարող ասել, պարոն Մարկոս, թե որքան ես անշարժ մնացի այդտեղ, բայց աստիճանների վերևում աղմուկ լսեցի և աչքերս բացեցի, տեսա, որ մութն ընկել էր, ու վեր կացա, որ ջուր եռացնեմ թեյի համար:



1950-ական թվականների վերջն էր, դեռ հեռուստատեսությունը մուտք չէր գործել Քաբուլ: Ես մոտեցա պարոն Վահղատին և ասացի, որ անակնկալ ունեմ իր համար: Մենք մեր օրերն անցկացնում էինք թուղթ և շախմատ խաղալով: Նա ինձ շախմատ խաղալ էր սովորեցրել, և ես բավականին հմտորեն էի խաղում: Նաև ահագին ժամանակ էինք ծախսում ընթերցանության դասերի վրա, պարոն Վահղատին իրոք համբերատար ուսուցիչ էր: Աչքերը փակ լսում էր, թե ինչպէս եմ կարդում: Երբ սխալվում էի, գլուխը թափ էր տալիս և ասում՝ նորից կարդա: Ասեմ Ձեզ, որ այդ ժամանակ նրա խոսքը բավականին լավացել էր:

— Նորից կարդա, նաբի:

Ես փոքրիշատե գրաճանաչ էի, երբ նա ինձ աշխատանքի վերցրեց 1947 թվականին, տառերը գիտեի շնորհիվ Մոլլա Շեքիրի, բայց միայն Սովեյմանի ջանքերի շնորհիվ ես կարողացա վարժ կարդալ և գրել: Իհարկե պարոն Վահղատին ամեն բան անում էր ինձ օգնելու համար, բայց կար այնտեղ նաև եսասիրական շահ, քանի որ

այդ դասերից հետո ես կարող էի գրքեր կարդալ պարոնի համար: Գրքեր, որ նա սիրում էր: Իհարկե նա ինքն էլ կարող էր կարդալ այդ գրքերը, բայց միայն կարճ դադարներով, որովհետև շուտ էր հոգնում:

Եթե ես զբաղված էի և չէի կարող մնալ նրա կողքին, նա ինչ-որ բանով զբաղեցնում էր իրեն: Ձայնագրություններ էր լսում, նայում էր պատուհանից ծառի ճյուղերին թառած թռչուններին, լսում էր բակում խաղացող երեխաներին և մրգավաճառներին, որոնք պարանով քարշ էին տալիս իրենց ավանակներին և կանչում՝ «Բալ, թարմ բալ»:

Երբ ես նրան ասացի անակնկալի մասին, նա հետաքրքրվեց, թե ինչ անակնկալ է դա: Ես ձեռքս տարա նրա վզի հետևը և հայտարարեցի, որ այսօր իր հիվանդությունից հետո առաջին անգամ իջնում ենք բակ: Այդ օրերին ինձ բնավ դժվար չէր տանել նրան ձեռքերի վրա: Ես երիտասարդ էի և ուժով լի: Հեշտությամբ բարձրացնում էի նրան և տանում հյուրասենյակ, զգուշորեն դնում բազմոցին:

— Դե,— ասաց նա:

Ես հյուրասենյակից բերեցի հաշմանդամի սայլակը: Դեռևս մեկ տարի առաջ փորձում էի համոզել նրան օգտվել այդ սայլակից, բայց նա կամակոր մերժում էր: Հիմա իմ նախաձեռնությամբ ես մի սայլակ էի գնել: Տեսնելով սայլակը՝ նա սկսեց զլուխը դես ու դեն տարուբերել:

— Հարևաններն են պատճառը,— հարցրի ես:— Բեզ հուզում է, թե ինչ կասեն մարդիկ:

Նա խնդրեց իրեն տանել վերև:

— Իսկ ինձ համար բոլորովին միևնույնն է, թե ինչ կասեն հարևանները: Եվ մենք այսօր գնալու ենք զբոսնելու: Հրաշալի օր է, մենք գնում ենք զբոսանքի, ես և Դուք, այդքան բան: Եթե մենք դուրս չգանք տնից, ես կխելագարվեմ, իսկ եթե խելագարվեմ, Ձեր վիճակն ինչ կլինի: Եվ, Սուլեյման, վերջացրեք Ձեր լացը: Ոսց որ պառավ կին լինեք:

Նա արդեն լաց էր լինում, միաժամանակ ծիծաղում ու ասում էր. «Ո՛չ, ո՛չ»: Դա կրկնում էր նույնիսկ այն ժամանակ, երբ ես արդեն դրել էի նրան սայլակի մեջ և քշում էի սայլակը դռան ուղղությամբ:

Հիշատակության արժանի է նաև այն, որ սկզբում ես իրոք փորձում էի ինձ փոխարինող գտնել: Ես Սուլեյմանին չասացի, որ նոր սպասավոր եմ փնտրում՝ մտածելով, որ ճիշտ կլինի նախապես մի հարմար մարդ գտնել և հետո միայն խոսել դրա մասին: Բազմաթիվ մարդիկ էին հետաքրքրվում այդ աշխատանքով, և ես նրանց հետ հանդիպում էի դրսում, որ Սուլեյմանի մեջ կասկածներ չառաջացնեմ: Բայց մարդ վարձելն ավելի բարդ գործ էր, քան ես պատկերացնում էի: Որոշ թեկնածուներ հունցած էին նույն խմորից, ինչ նախկին այգեպան Զահիդը: Ես հոտառությամբ էի զգում մարդկային այդ տեսակը, որովհետև շատ էի շփվել նման ստահակների հետ և, իհարկե, մերժում էի նրանց: Մյուս ցանկացողներն էլ խոհարարական հմտություններ չունեին, որովհետև, ինչպես ասել էի, Սուլեյմանը շատ նուրբ քիմք ուներ: Ոմանք էլ չէին կարողանում մեքենա վարել, և, ամենակարևորը, շատերը չէին կարող կարդալ, ինչը կարող էր լուրջ արգելք դառնալ, քանի որ Սուլեյմանն արդեն վարժվել էր մեր երեկոյան ընթերցանությանը: Ոմանք չափազանց անհամբեր էին, իսկ դա շատ լուրջ թերություն էր Սուլեյմանի դեպքում, որովհետև նա երբեմն հոգնեցնող էր, երբեմն էլ երեխայավարի կամակոր: Իսկ այլ թեկնածուների պարագայում ես բնազդաբար հասկանում էի, որ նրանց էությունը չի համապատասխանում այդ տաժանակիր աշխատանքին:

Երեք տարի էր անցել, իսկ ես դեռ իմ հին տեղում էի, և ինքս ինձ համոզում էի, թե կգնամ, երբ վստահ լինեմ, որ ամեն բան կարգին է: Սուլեյմանի բախտը հուսալի ձեռքերում էր: Երեք տարի անց դարձյալ ես էի սրբում նրա մարմինը խոնավ շորով, սափրում էի նրան, կտրում մազերն ու եղունգները: Ես կերակրում էի նրան և գիշերանոթն էի դնում ու մաքրում նրան, ինչպես երեխային, լվանում նրա տակաշորերը: Այդ օրերին մենք կես խոսքից հասկանում էինք իրար: Դա մտերմության և առօրյա շփման հետևանք էր, և իհարկե դրա մեջ կար նաև նախկինում անհնարին մի մտերմիկ շեշտ, որ նոր էր հայտնվել մեր հարաբերություններում:

Ես համոզեցի նրան հիվանդասայլակ նստել, և մենք վերականգնեցինք առավոտյան զրոսանքների ավանդույթը: Ես սայլակով հանում էի նրան տնից և քշում փողոցն ի վար: Ճանապարհին

բարևում էինք մեր հարևաններին: Դրանցից մեկի անունն էր պարոն Բաշիրի: Նա Քարուլի համալսարանի շրջանավարտ էր և աշխատում էր արտաքին գործերի նախարարությունում: Նրանք երկու եղբայրներով և կանանցով տեղափոխվել էին մի երկհարկանի տուն՝ մեր տնից երեք տուն ներքև: Երբեմն հանդիպում էինք նրան, երբ նա առավոտյան աշխատանքի գնալիս գործի էր գցում իր մեքենայի շարժիչը, և հանդիպելիս մի երկու քաղաքավարի խոսք էինք փոխանակում: Հաճախ ես Սուլեյմանին տանում էի Շար-է-Նաու զբոսայգին, և մենք այնտեղ նստում էինք ծփենիների սովերում ու հետևում օրվա անցուդարձին: Տաքսու վարորդները ձեռքով ուժեղ հարվածում էին, ազդանշան էին տալիս, հեծանիվների զնգոցը լսելի էր հեռվից, զռռում էին անցնող ավանակները, իսկ անցորդները կարծես ինքնասպան լինելու մտադրությամբ կտրուկ անցնում էին փողոցը հենց ավտոբուսների առջևից: Շուտով արդեն զբոսայգում ինձ և Սուլեյմանին բոլորը ճանաչում էին: Տունդարձի ճանապարհին կանգ էինք առնում և մի քանի բարեհամբույր խոսք էինք փոխանակում կրպակավաճառների և մսագործների հետ, իսկ երբեմն զրուցում էինք երթևեկությունն ուղղորդող ոստիկանի հետ: Հաճախորդի սպասող վարորդները, մեքենաների մեջ նստած, նույնպես ողջունում էին մեզ:

Երբեմն ես պարոնին նստեցնում էի մեր հին «Շևրոլեի» հետևի նստարանին, հաշմանդամի սայլակը տեղավորում էի բեռնախցիկում և մեքենան քշում էի Փաղման, ուր կային կանաչ մարգագետիններ և ծառերի ստվերում քջքացող առվակներ: Նախաճաշելուց հետո պարոն Վահդատին սկսում էր վարժեցնել ձեռքերը՝ ուրվանկարներ անելով: Դա մեծ ջանքեր էր պահանջում, քանզի կաթվածից վնասվել էր նրա աջ ձեռքը, բայց նույնիսկ ծախ ձեռքով նա հրաշալի էր պատկերում ծառերը, սարերը և ծաղկեփնջերը, շատ ավելի վարժ, քան ես կարող էի անել բացարձակ առողջ լինելով: Ի վերջո հոգնում էր, շշմում, և մատիտը դուրս էր սահում նրա թուլացած մատներից: Ես ծածկում էի պարոնի ոտքերը և մեկնվում էի խոտերի վրա, սայլակի կողքին՝ ունկնդրելով ծառերի խշշոցը, նայելով երկնքում սահող ամպերի ծվեններին:

Եվ միշտ այդ պահին մտքումս հայտնվում էր Նիլան, որ հիմա

աշխարհի մյուս ծայրում էր: Ես պատկերացնում էի նրա մազերի մետաքսյա փայլը, հիշում էի, թե ինչպես էր թափ տալիս ոտքը և սանդալի կրունկով աղմուկով ճգմում այրվող սիգարետները: Մտածում էի նրա մեջքի գոգավորության և կրծքի ուռուցիկության մասին: Երազում էի նրա կողքին լինել, ընկղմվել նրա բույրի մեջ, վերհիշել սրտի այն ծանոթ թրթռը, երբ նա ձեռքը հպում էր ձեռքիս: Նա խոստացել էր գրել ինձ, և թեպետ տարիներ էին անցել, և ամենայն հավանականությամբ նա մոռացել էր ինձ, չեմ կարող կեղծել և չասել, որ ամեն անգամ նամակներ ստանալիս սիրտս թրթռում էր սպասումից:

Մի օր Փաղմանում, խոտին նստած, ես նայում էի շախմատի տախտակի ֆիգուրներին: Դա արդեն շատ տարիներ անց էր՝ 1968-ին, երբ Սուլեյմանի մայրն արդեն մահացել էր, իսկ մեր հարևան Բաշիրի եղբայրները երեխաներ ունեին, երկուսն էլ՝ տղա: Մեկի անունը Իդրիս էր, մյուսինը՝ Թիմուր: Երկու հորեղբորդիներին իրենց մայրերը զբոսանքի էին տանում մանկական սայլակով, և այդ դանդաղ զբոսանքի ժամանակ ես երբեմն տեսնում էի նրանց: Այդ օրը ես ու Սուլեյմանն արդեն սկսել էինք շախմատ խաղալ: Ես փորձում էի պաշտպանել դիրքերս Սուլեյմանի հարձակողական գամբիտից, երբ նա հանկարծ հարցրեց.

— Քանի տարեկան ես:

— Դե գիտեմ, որ քառասունն անց եմ,— ասացի ես:— Միայն այդքանը գիտեմ:

— Կարծում եմ, որ պիտի ամուսնանաս, քանի լրիվ տեսքից չես ընկել,— ասաց նա:— Տես, արդեն ճերմակում ես:

Մենք ժպտացինք իրար, և ես ասացի, որ քույրս՝ Մասուման, նույնն էր ասում ինձ:

Պարոնն ինձ հարցրեց, թե հիշում եմ արդյոք այն օրը, երբ աշխատանքի ընդունվեցի՝ քսանմեկ տարի սրանից առաջ՝ 1947-ին:

Իհարկե, հիշում էի այդ օրը: Ես շատ անհաջող տեղում էի աշխատում՝ իբրև խոհարարի օգնական պարոն Վահդատիի տնից մի քանի շենք ներքև գտնվող վայրում: Երբ իմացա, որ պարոնը խոհարար է փնտրում, որովհետև իր խոհարարը ամուսնացել և մեկնել էր, անմիջապես գնացի նրա տուն և տվեցի դարպասի զանգը:

— Դու բացառիկ վատ խոհարար էիր: Հիմա հրաշքներ ես գործում, բայց քո պատրաստած առաջին կերակուրը, Տեր Աստված, սարսափելի էր: Իսկ երբ առաջին անգամ տեսա, թե ինչպես ես մեքենա վարում, մտածեցի, որ հիմա կաթված կստանամ:

Նա ծիծաղեց իր անսպասելի կատակի վրա:

Դա ինձ համար ապշեցուցիչ անակնկալ էր, շոկ, քանի որ այդ տարիների ընթացքում ես Սուվեյմանից երբևէ դժգոհություն չէի լսել: Նա չէր բողոքել ոչ իմ եփելուց, ոչ իմ վարելուց:

— Իսկ ինչո՞ւ ինձ աշխատանքի ընդունեցիք,— հարցրի նրան:

Նա դեմքը դարձրեց ինձ.

— Որովհետև, երբ դու մտար, ես ինքս ինձ ասացի, որ կյանքումս նման գեղեցկություն չեմ տեսել:

Ես հայացքս խոնարհեցի շախմատի տախտակին:

— Երբ մենք հանդիպեցինք, ես հասկացա, որ ես ու դու տարբեր ենք, որ իմ ցանկությունն անիրականանալի է: Բայց մենք զբոսնում էինք առավոտյան ոտքով և երեկոյան գնում էինք մեքենայով զբոսանքների, ու չեմ կարող ասել, որ դա լիովին գոհացնում էր ինձ, բայց ավելի լավ էր, քան քեզ հետ ընդհանրապես չլինելը: Ես կարողացա մոտ լինել քեզ և միաժամանակ հեռու:

Նա մի պահ դադար տվեց և ավելացրեց.

— Ես վստահ եմ, որ հասկանում ես՝ ինչ եմ ասում, Նաբի: Ես գիտեմ, որ ինձ լավ ես հասկանում:

Ես չէի կարող հայացքս բարձրացնել և նայել նրա աչքերին:

— Եվ գոնե մեկ անգամ ես պետք է ասեի, որ միշտ քեզ սիրել եմ, Նաբի, ու խնդրում եմ, մի բարկացիր:

Ես բացասական գլուխս թափահարեցի: Որոշ ժամանակ երկուսս էլ լուռ էինք: Պարոն Վահդատիի խոսքերը մնացել էին օդում և կարծես շնչում էին ցավ ու անիրականանալի երջանկություն:

— Ես քեզ դա ասում եմ,— շարունակեց պարոնը,— որ դու հասկանաս՝ ինչու եմ ուզում, որ հեռանաս: Գնա՛ ու քեզ կին գտիր, Նաբի: Այլոց նման ընտանիք կազմիր, Նաբի, դեռ ուշ չէ:

— Բարի,— վերջապես արտաբերեցի ես՝ փորձելով կատակով մեղմել լարվածությունը:— Մի օր անպայման կգնամ: Ու Դուք շատ կփոշմանեք: Բայց առավել կփոշմանի այն թշվառ տականքը, որ

ստիպված կլինի լվանալ Ձեր տակաշորերը:

— Ինչպես միշտ, կատակում ես, Նաբի:

Ես նայում էի գորշականաչավուն տերևն ի վեր մագլցող բզեզին:

— Իմ պատճառով մի մնա, Նաբի: Ասածս դա է: Մի մնա իմ պատճառով:

— Դուք Ձեր մասին բարձր կարծիք ունեք:

— Էլի կատակում ես,— հոգնած ձայնով ասաց նա:

Ես չպատասխանեցի: Թեպետ նա սխալվում էր: Այդ ժամանակ բնավ չէի կատակում, որովհետև ես մնում էի այդտեղ ոչ պարոնի համար, ինչպես սկզբում էր: Այո՛, սկզբում Սուլեյմանը ամբողջովին կախված էր ինձնից, նա իմ կարիքն ուներ, և դրա համար էլ մնում էի: Ես մի անգամ փախել էի մի մարդուց, որ իմ կարիքն ուներ, և այդ խղճի խայթը, որ մինչև հիմա հալածում է ինձ, հետո գերեզման կտանեմ: Երկրորդ անգամ ես այդպես վարվել չէի կարող: Բայց կամաց-կամաց, անսկատ, մնալուս դրդապատճառները փոխվեցին, և ես չեմ կարող ասել, թե երբ դա կատարվեց: Պարոն Մարկոս, իմ մնալու պատճառն արդեն Սուլեյմանը չէր, այլ ես ինքս: Սուլեյմանն ասաց, որ ես պետք է ամուսնանամ, բայց փաստն այն էր, որ ես կյանքում ունեի այն ամենը, ինչ մարդիկ փնտրում են ընտանիքում: Ես ունեի բարեկեցություն, ընկերակցություն և տուն, ուր ինձ սպասում էին, ընդունում և սիրում: Մարմնական ցանկությունները, որ ես ունեի իբրև տղամարդ, դարձել էին ոչ այնքան հաճախակի և ոչ այնքան անդիմադրելի, և իմ տարիքն առնելուց հետո էլ նրանց լուծումը գտնելը հեշտ էր, ինչպես և նախկինում: Ինչ վերաբերում է երեխաներին, ես նրանց միշտ էլ սիրում էի, բայց մեջս վառ արտահայտված հայրական բնագդ չկար:

— Եթե դու ջորու պես համառ ես և ամուսնանալ չես ուզում,— ասաց Սուլեյմանը,— ապա ես մի խնդրանք ունեմ քեզ: Բայց մի պայմանով, որ նախ պիտի խոստանաս, որ կկատարես:

Ես ասացի, որ այդպիսի բան նա խնդրել չի կարող:

— Բայց ես, միևնույնն է, խնդրելու եմ:

Ես նայեցի նրան:

— Կարող ես ասել՝ ոչ,— ասաց նա:

Բայց նա ինձ լավ գիտեր: Ապա ծուռ ժպտաց: Եվ ես խոստում տվեցի, ու նա ասաց իր խնդրանքը:



Ինչ ասեմ Ձեզ, պարոն՝ Մարկոս, դրան հաջորդած տարիների մասին: Դուք լավ գիտեք մեր ասպատակված երկրի պատմությունը: Ձեմ ուզում Ձեր հիշողության մեջ վերականգնել այդ մութ օրերը, և բացի դրանից՝ այս երկրի տառապանքը բավականաչափ փաստագրված է առավել պերճախոս և մանրամասն կերպով:

Այդ ամենը կարելի է ամփոփել մեկ բառով՝ պատերազմ, ավելի շուտ՝ պատերազմներ: Ոչ մեկ, ոչ երկու, այլ բազմաթիվ պատերազմներ՝ մեծ և փոքր, արդարացի և անարդարացի, ենթադրյալ հերոսների և չարագործների փոփոխվող հերթագայությամբ, ուր ամեն նորահայտ հերոս ստիպում էր մարդկանց կարոտով հիշել երբեմնի ավագակին: Փոխվում էին անուններն ու դեմքերը, և բուլոն էլ արժանի են իմ անարգանքին իրենց տխեղծ թշնամության, դիպուկահարների, ականապատված դաշտերի, ռմբակոծությունների, հրթիռների, կողոպուտի, բռնաբարությունների և սպանությունների համար: Բավական է արդեն: Նման հանձնառությունը շատ ծանր է և շատ տհաճ: Ես ապրել եմ այդ օրերը և մտադիր եմ հանձնել դրանք թղթին հնարավորինս համառոտ: Միակ լավ բանը, որ կարող եմ հիշել այդ ժամանակներից, փոքր Փարիի հանդեպ պատասխանատվության զգացումն էր: Նա մեծացել էր, և այժմ երիտասարդ կին էր արդեն: Իմ խիղճը մաքուր էր, քանի որ նա պաշտպանված էր և հեռու էր այդ չարիքից:

1980-ականները, ինչպես հիշում եք, պարոն Մարկոս, Քաբուլում այդքան էլ սարսափելի չէին, քանի որ հիմնական մարտերը տեղի էին ունենում գյուղական բնակավայրերում: Այնուամենայնիվ, դա արտագաղթի շրջանն էր, և մեր հարևանության մեջ շատ ընտանիքներ հավաքեցին ճամպուրակներն ու մեկնեցին Պակիստան կամ Իրան հետագայում Արևմուտքում վերաբնակվելու հույսով: Ես շատ պարզ հիշում եմ այն օրը, երբ պարոն Բաշիրին եկավ հրաժեշտ տալու: Ես սեղմեցի նրա ձեռքն ու մաղթեցի ամենայն բարիք: Նաև հրաժեշտի խոսքեր ասացի նրա որդի Իդրիսին, որն արդեն տասնչորս տարեկան էր՝ բարձրահասակ, ոսկրոտ, երկար մազերով և վերին շրթունքին բուսած աղվամազով: Ես ասացի Իդրի-

սին, որ շատ կկարոտեմ նրան և նրա զարմիկ Թիմուրին և կհիշեմ նրանց օդապարուկ թռցնելն ու գնդակ խաղալը: Դուք երևի կհիշեք այդ երկու հորեղբորորդիներին, պարոն Մարկոս: Մենք հանդիպեցինք Ձեր տանը կազմակերպված երեկոյթին 2003 թվականի գարնանը, երբ նրանք արդեն հասուն մարդիկ էին:

1990-ականներին պատերազմը տեղափոխվեց Քաբուլ, և քաղաքը դարձավ գիշատիչների ավար: Քաբուլը պաշարած մարդիկ այնպիսի տեսք ունեին, կարծես դուրս էին եկել մոր արգանդից «Կալաշնիկով» ավտոմատը ձեռքներին: Նրանք ինքնասիրահարված բարբարոս ավազակներ էին, որոնք մեծ մասամբ ինքնահռչակվում էին բարձր տիտղոսներով: Հրթիռակոծության ժամանակ Սուլեյմանը մնաց տանը և հրաժարվեց մեկնել: Նա համառորեն մերժում էր ընդունել տան պատերից դուրս կատարվող դեպքերը: Անջատեց հեռուստացույցը, մի կողմ շարտեց ռադիոն և այլևս թերթ չէր կարդում: Նաև խնդրեց ինձ, որ ոչինչ չպատմեմ դրսի իրավիճակի մասին: Նույնիսկ չգիտեր՝ ով ում հետ է կռվում, ով է հաղթանակում, և ով է տանուլ տալիս, կարծես մտածում էր, որ եթե անմտաբար անտեսի պատերազմը, ապա պատերազմն էլ հանգիստ կթողնի իրեն:

Բայց, իհարկե, այդպես չեղավ: Փողոցը, ուր մենք ապրում էինք, և որ այդքան մաքուր էր, պայծառ ու խաղաղ, դարձավ պատերազմական գոտի. փամփուշտները հարվածում էին տան պատերին, և հրթիռները սուրում էին մեր գլխավերևում: Զրահամեքենաներն անցնում էին փողոցի երկայնքով՝ ասֆալտի մեջ թողնելով պատռված ակոսներ: Գիշերը հատող կարմիր և սպիտակ արկերն էին թռչում ամեն ուղղությամբ, այդպես՝ մինչև լուսաբաց: Մի քանի օր կարճատև դադար ու հանգիստ էինք վայելում, բայց հետո դարձյալ հրաձգությունները խախտում էին լռությունը, արկերը պայթում էին ամենուրեք, և լսվում էին մարդկանց ճիչերն ու աղաղակները:

Ընեց այդ տարիներին, պարոն Մարկոս, տունը կրեց մեծ վնասներ, որի հետքերը դուք տեսաք 2002 թվականին: Իհարկե, ինչ-որ առումով դա նաև հնացած և անխնամ լինելու հետևանքով էր, քանզի ես արդեն տարեց մարդ էի այն ժամանակ և այդքան հնարավորություն չունեի առաջվա պես տան վրա աշխատելու: Ծառերն

արդեն չորացել էին, պտուղ չէին տալիս, մարգագետինը դեղնել էր, և ծաղիկները վերացել էին: Պատերազմը անողոք գտնվեց երբեմնի շատ գեղեցիկ այդ տան հանդեպ: Պատուհանները վնասվել էին զրահամեքենայի կրակոցներից: Հրթիռը ծակելով անցել էր այգու արևելյան ճակատի պատով և ավերել պատշգամբի կեսը: Այն պատշգամբի, որտեղ ես և Նիլան զրուցում էինք: Արկը վնասել էր կտուրը, իսկ փամփուռները փոս էին գցել պատերը:

Իսկ ամենավատը թալանն էր, պարոն Մարկոս: Ոստիկանությունը երբ ուզում, մտնում էր տուն և վերցնում էր, ինչ ուզում էր: Նրանք տարան կահույքը, թուրքմենական գորգերը, արձանիկները, արծաթե մոմակալները և բյուրեղապակյա ծաղկամանները: Նույնիսկ պոկել էին լոգարանի լազուրիտե սալիկները: Մի անգամ արթնացա նախասենյակ ներխուժած մարդկանց ձայներից և հայտնաբերեցի ուզբեկ զինվորների, որոնք աստիճանավանդակից պոկում էին գորգը իրենց կոր յաթաղաններով: Ես կողքից դիտում էի այդ տեսարանը: Բայց ինչ կարող էի անել: Ինչ էր նրանց համար մի ծեր մարդու գլխի մեջ մի փամփուռ մխրձելը:

Ես ու Սուլեյմանն էլ ծերանում էինք տան հետ միասին: Տեսողությունս վատացավ, և ծնկներս ցավում էին: Ներերք ինձ, պարոն Մարկոս, գռեհկության համար, բայց նույնիսկ սովորական միզելը դարձել էր դիմադրողականության փորձության պես մի բան: Ինչպես և կարելի էր կանխատեսել, ծերությունը առավել շոշափելի ազդեցություն թողեց Սուլեյմանի վրա: Նա նիհարեց, բարակեց և դարձավ վախենալու չափ փխրուն: Երկու անգամ գրեթե մահվան շեմին էր: Առաջին անգամ Ահմադ շահ Մասուդի խմբավորման և Գուլբուդդին Հեքմաթյարի խմբի միջև տեղի ունեցող դաժան մարտերի ժամանակ էր, երբ անտեր դիակները օրերով թափված էին փողոցներում: Սուլեյմանը այդ ժամանակ թըքաբորբ տարավ, ըստ բժշկի՝ սեփական թուքը կով տալուց էր: Թեպետ այդ ժամանակ շատ դժվար էր թե՛ բժիշկ գտնել, թե՛ դեղամիջոց, այնուամենայնիվ, ես կարողացա խնամել և փրկել նրան:

Հավանաբար տանը փակված մնալու և շատ մոտիկ լինելու պատճառով մենք սկսեցինք հաճախակի վիճել այդ օրերին: Վիճում էինք ամուսնական զույգերի պես՝ համառորեն, տաքացած և

հիմնականում չնչին բաների շուրջ:

— Դու արդեն լոթի եփել ես այս շաբաթ:

— Ո՛չ, չեմ եփել:

— Ո՛չ, եփել ես, երկուշաբթի եփել էիր:

Հետո սկսում էինք վիճել, թե շախմատի քանի խաղ էինք խաղացել: Հետո նա դժգոհում էր, թե ինչու եմ ես ջուրը թողնում լուսամուտագոգին, որտեղ այն տաքանում է արևից:

— Ինչո՞ւ գիշերանոթ չուզեցիր, Սուլեյման:

— Ես մի հարյուր անգամ քեզ ձայն եմ տվել:

— Հիմա քո կարծիքով ես խո՞ւլ եմ, թե՞ անբան:

— Կարող ես ընտրություն չկատարել: Դու համ խուլ ես, համ անբան:

— Մի մարդ, որ ամբողջ օրը պառկած է անկողնում, ինձ ծույլ կոչելու իրավունք չունի:

Եվ այդպես շարունակ:

Երբ փորձում էի կերակրել նրան, նա գլուխը այս ու այն կողմ էր պտտում: Ես դուրս էի գալիս սենյակից և դուռը շրխկացնում նրա դեմքին: Խոստովանում եմ, երբեմն ես մտադրված ստիպում էի, որ նա մտածի, թե ես լքում եմ իրեն: Նա լաց էր լինում: «Ո՞ր ես գնում»: Իսկ ես չէի պատասխանում և ձևացնում էի, թե ընդմիշտ հեռանում եմ: Բայց, իհարկե, ես ընդամենը քայլում էի մինչև փողոցի վերջը և ծխում էի. նոր սովորություն, որ կյանքիս հասուն տարիներին էի ձեռք բերել, թեպետ ծխում էի միայն բարկացած ժամանակ: Երբեմն ժամերով մնում էի փողոցում: Եթե նա իրապես ինձ հունից հանում էր, մնում էի դրսում մինչև մույթն ընկնելը: Բայց միշտ վերադառնում էի: Սենյակ էի մտնում առանց բառ ասելու և շրջում էի նրան՝ ուղղելով բարձր: Երկուսս էլ խուսափում էինք նայել իրար աչքերի, շրթունքներս պինդ սեղմած սպասում էինք, մինչև մյուսը հաշտության մի քայլ կանի:

Վերջապես կռիվները դադարեցին, երբ իշխանության եկավ Թալիբանը: Նրա զինվորները սրադեմ, սևամորուս երիտասարդներ էին՝ ընդգծված աչքերով, ձեռքերին մտրակներ: Նրանց դաժանություններն ու հանցանքները հայտնի են բոլորին: Իմաստ չեմ տեսնում դրանք թվարկելու, բայց ասեմ, որ ձակատագրի հեգնան-

քով նրանց իշխանության տարիները ինձ թեթևացում բերեցին: Նրանք իրենց ամբողջ աստելությունն ու կրոնախնությունը թափեցին երիտասարդների գլխին, մանավանդ խեղճ կանանց վրա: Իսկ ես արդեն ծեր էի, ինձնից միայն պահանջվում էր մորուք պահել, և դա ինձ ազատեց ամեն օր սափրվելու հոգնեցուցիչ գործից:

— Իրավ եմ ասում,— արտաբերեց Սուլեյմանը պառկած տեղից:— Լրիվ տեսքից ընկել ես: Ոնց որ դերվիշ լինես:

Փողոցներում Թալիբանի մարդիկ այնպես էին անցնում կողքովս, կարծես ես որոճացող անասուն լինեի: Ես էլ նպաստում էի դրան՝ մտադրված դեմքիս ապուշի արտահայտություն տալով, որ խուսափեմ անհարկի ուշադրությունից: Երբ մտածում էի, թե ինչ կարող էին անել Նիլայի հետ, սահմնվում էի: Երբեմն մտաբերում էի նրան, հիշում էի, թե ինչպես էր նա ծիծաղում երեկույթների ժամանակ՝ շամպայնի բաժակը ձեռքին: Հիշում էի նրա հոլանի թևերը, երկար, ուղիղ սրունքները, և ինձ թվում էր, որ ես եմ ստեղծել նրան իմ երևակայության մեջ: Կարծես նա երբեք գոյություն չէր ունեցել իրականում: Եվ ընդհանրապես, կարծես մենք էլ անիրական ցնորք էինք, ոչ միայն Նիլան, այլև ես և Փարին, երիտասարդ ու առողջ Սուլեյմանը և նույնիսկ այն ժամանակն ու տունը, ուր մենք ապրում էինք միասին:

Այդպես մի ամառային առավոտ՝ 2000 թվականին, ես մտա Սուլեյմանի սենյակ՝ սկուտեղին դրած նոր թխած հաց և թեյ: Ես անմիջապես գլխի ընկա, որ ինչ-որ բան է պատահել: Սուլեյմանի շնչառությունն ընդհատվում էր, դեմքը սովորականից ավելի էր սրվել: Նա փորձում էր խոսել, բերանից դուրս էին գալիս խոխոռոցներ, որոնք շշուկից էլ ցածր էին: Ես սկուտեղը մի կողմ դրեցի և վազեցի նրա մոտ:

— Ես հիմա բժիշկ կբերեմ, Սուլեյման: Սպասիր մի քիչ: Մենք քեզ կօգնենք, ինչպես միշտ:

Շրջվեցի, որ գնամ, բայց նա գլուխն ուժգին թափահարեց և շարժեց ձախ ձեռքի մատները:

Ես թեքվեցի և ականջս մոտեցրի նրա բերանին: Նա խոսելու մի քանի անհաջող փորձ արեց, բայց ես ոչինչ չհասկացա:

— Ցավում եմ, Սուլեյման, բայց պիտի գնամ և բժիշկ բերեմ,

դա երկար չի տևի:

Նա նորից գլուխը թափ տվեց, այս անգամ ավելի դանդաղ, կատարակտով ախտահարված աչքերից արցունքներ հոսեցին: Բերանը բացուխուփ արեց և գլխով ցույց տվեց պահարանը: Ես հարցրի՝ արդյոք այնտեղ իրեն պետքական բան կա: Նա աչքերը փակեց և գլխով արեց:

Ես բացեցի վերևի գզրոցը: Բան չտեսա այնտեղ. միայն դեղահաբեր էին, նրա ակնոցը, օժանելիքի մի հին շիշ, նոթատետրերը և ածուխե մատիտները, որ նա այլևս չէր օգտագործում: Արդեն ուզում էի հարցնել, թե ինչ եմ փնտրում, երբ գտա այն նոթատետրերի տակ: Դա մի ծրար էր, որի վրա խզբզած էր իմ անունը Սուլեյմանի ծուռումուռ ձեռագրով: Ներսում թղթի մի կտոր էր, վրան գրված էր ընդամենը մի պարբերություն: Ես կարդացի այն ու նայեցի Սուլեյմանին, նրա ներս ընկած քունքերին, թռչած այտերին, դատարկ աչքերին:

Նա կրկին շարժում արեց, և ես թեքվեցի նրա կողմը: Եվ այտերիս զգացի նրա սառը և կոշտ հեղցների շունչը: Լսեցի, թե ինչ աղմուկով է լեզուն շարժվում չոր բերանի մեջ, մինչև նա ուժերն էր հավաքում: Մի կերպ, բացառիկ կամային ճիգով նա շշնջաց իմ ականջին:

Մարմնովս սարսուռ անցավ: Կոկորդուսն մի գունդ էր առաջացել և հուզմունքս հաղթահարելով՝ արտաբերեցի.

— Ո՛չ, խնդրում եմ, Սուլեյման:

— Բայց դու խոսք ես տվել:

— Դեռ ժամանակը չէ: Ես պատրաստվում եմ խնամելու քեզ: Մենք կկարողանանք հաղթահարել ձգնաժամը, սովորականի պես:

— Դու խոստացել ես:

Զգիտեմ՝ որքան նստեցի նրա կողքին: Զգիտեմ՝ ինչքան էի փորձում համոզել նրան: Միայն հիշում եմ, որ տեղիցս վերջապես վեր կացա, անցա մահճակալի կողքով և պառկեցի նրա կողքին: Շուռ տվեցի այնպես, որ դեմքը տեսնեմ: Օդի պես թեթև էր: Ես համբուրեցի նրա չոր, ճաքճաք շրթունքները և հետո նրա դեմքի ու կրծքիս միջև մի բարձ դրեցի և բռնեցի նրա ծոծրակից, ու այդպես երկար գրկված մնացինք:

Միակ բանը, որ հետո մնաց հիշողությանս մեջ, նրա լայնացած բիրերն էին:

Ես մոտեցա պատուհանին ու նստեցի: Սուլեյմանի թեյի բաժակը դեռ սկուտեղի վրա էր՝ ոտքերիս մոտ: Հիշում եմ. պայծառ առավոտ էր: Շուտով խանութները կբացվեին, եթե արդեն չէին բացվել: Փոքր տղաները շտապում էին դպրոց: Արդեն փոշի էր բարձրանում: Շունը ալարկոտ տնգտնգում էր փողոցով, և նրան ուղեկցում էր մժեղների պարսը: Երկու տղա մոտոցիկլետով անցնում էին: Ուղևորը, որ նստած էր մոտոցիկլետի հետևի սայլակում, մի թևի տակ պահել էր համակարգչի մոնիտորը, իսկ մյուս թևի տակ՝ մի ձմերուկ:

Ես ճակատս կպցրի տաք ապակուն:



Պահարանի դարակում դրված թուղթը Սուլեյմանի կտակն էր, որի համաձայն՝ ես ժառանգում էի նրա ամբողջ ունեցվածքը՝ տունը, փողերը և նույնիսկ մեքենան, թեպետ այն արդեն փտել էր: Նրա մետաղյա կմախքը՝ փսկած անվադողերի վրա, դեռ գտնվում էր ետնաբակում: Մետաղյա ջարդոնի ժանգոտ մի կույտ:

Որոշ ժամանակ տառաջիորեն չգիտեի, թե ուր գնամ և ինչ անեմ: Հիսուն տարուց ավելի ես միայն զբաղված էի Սուլեյմանին խնամելով, ամենօրյա գոյությունս պայմանավորված էր նրա կարիքները հոգալով: Այժմ ազատ կարող էի անել, ինչ ուզում էի, բայց դա մտացածին ազատություն էր, քանզի իմ ամենանվիրական երազանքը խլել էին ինձնից: Ասում են, որ մարդ պետք է իր կյանքում նպատակ ունենա և իրագործի այն: Բայց պատահում է, որ միայն կյանքիդ վերջում ես հասկանում, որ դու իրագործել ես մի նպատակ, որ երբևէ մտքումդ չես ունեցել: Եվ այժմ ես աննպատակ տրվել էի կյանքի հոսանքին:

Ես հասկացա, որ էլ չեմ կարողանում քնել այդ տանը, նույնիսկ չեմ կարող մնալ պատերի ներսում: Սուլեյմանը չկար, և տունը չափազանց մեծ էր թվում: Ամեն անկյունում հիշողություններ էին թաքնված: Եվ ես տեղափոխվեցի ետնաբակի իմ հյուղակը: Վճարեցի մասնագետներին, որ էլեկտրականություն անցկացնեն հյուղակում՝ երեկոները կարդալու, իսկ ամռանը հովացուցիչ միացնելու:

համար: Իսկ տարածության կարիք ես չունեի: Ողջ ունեցվածքս մի մահճակալ էր, շորերս և Սուլեյմանի նկարների տուփը: Հասկանում եմ, պարոն Մարկոս, որ սա կարող է Ձեզ տարօրինակ թվալ: Այո, օրենքով տունն ու ունեցվածքը ինձ էին պատկանում, բայց իրականում ես ինձ սեփականատեր չէի զգում ու դժվար թե կարողանայի զգալ:

Ես կարդում էի Սուլեյմանի աշխատասենյակից վերցրած գրքերը: Կարդալուց հետո դրանք տեղն էի դնում: Տևել էի մի քանի լուրիկի թուփ և անանուխ: Փորձում էի զբոսնել թաղամասում, բայց մի քանի շենք անցնելուց հետո ծնկներս սկսում էին ցավել, և ստիպված տուն էի վերադառնում: Երբեմն աթոռը դնում էի այգում և պարապ նստում էի: Ես Սուլեյմանին նման չէի: Ձեի հարմարվում միայնությանը:

Մի օր, 2002 թվականին էր, Դուք տվեցիք դռան զանգը: Այդ ժամանակ Հյուսիսատլանտյան դաշինքն արդեն քշել էր Թալիբանի ջախեղներին, և Ա.Ֆղանստան էին մտել ամերիկացիները: Հազարավոր հումանիտար աշխատողներ ամբողջ աշխարհից գալիս էին Քաբուլ՝ կառուցելու դպրոցներ և հիվանդանոցներ, վերանորոգելու ճանապարհներն ու ջրանցքները, իրենց հետ բերում էին սնունդ ու հագուստ, ապահովում էին աշխատանքով ու կացարաններով:

Ձեզ ուղեկցում էր երիտասարդ մի տեղաբնակ, որ Ձեր թարգմանիչն էր՝ վառ մանուշակագույն կոստյումով և ակնոցով: Նա հարցրեց, թե ով է այս տան տերը: Դուք արագ հայացքներ փոխանակեցիք, երբ ես պատասխանեցի, որ տանտերը ես եմ: Նա քմծիծաղ տվեց ու թարգմանեց՝ «Նա է տանտերը»: Եվ ես երկուսիդ հրավիրեցի թեյի:

Մենք նստեցինք ռմբակոծությունից փրկված պատշգամբում և մի բաժակ կանաչ թեյի շուրջ սկսեցինք զրուցել ֆարսի լեզվով: Դուք գիտեք, պարոն Մարկոս, ես անգլերեն սովորեցի վերջին յոթ տարում, այն էլ Ձեր հետևողականության և բարության շնորհիվ: Թարգմանչի օգնությամբ ես իմացա, որ դուք հունական Թինոս կղզու բնակիչ եք, մասնագիտությամբ՝ վիրաբույժ, և եկել եք Քաբուլ՝ դիմաձնոտային վերքեր ստացած հիվանդ երեխաներին օգնելու: Դուք ասացիք, որ Ձեր գործընկերների հետ միասին ուզում եք տուն

Գրքեր
օգտագործել
թվականներ

վարձել, ընդունելությունների տուն, ինչպես այն կոչում են այժմ: Դուք հարցրիք, թե ինչքան փող են ես ուզում վարձակալության համար: Ես պատասխանեցի, որ ոչինչ չեմ ուզում:

Երբ վառ մանուշակագույն կոստյումով երիտասարդը թարգմանեց ասածս, Դուք զարմանքից թարթեցիք Ձեր աչքերը և կրկնեցիք Ձեր հարցը՝ երևի մտածելով, որ ես Ձեզ սխալ եմ հասկացել:

Թարգմանիչը տեղավորվեց աթոռի ծայրին և թեքվեց իմ կողմը: Նա խոսում էր մտերմիկ տոնով: Նախ հարցրեց՝ արդյոք չեմ ցնդել, արդյոք պատկերացում ունեմ, թե ինչքան է Ձեր խումբը պատրաստվում վճարելու, կամ ինչպիսին են վարձակալության գները Քաբուլում: Ասաց, որ նստած եմ ոսկու հանքի վրա:

Ես առաջարկեցի, որ մեծի հետ խոսելիս հանի ակնոցը: Հետո տեղեկացրի, որ իր գործը թարգմանությունն է, ոչ թե խորհրդատվությունը, հետո շրջվեցի Ձեր կողմը և ասացի, որ բազում պատճառների շարքում կա նաև ոչ անձնական դրդապատճառ՝ «Դուք թողել եք Ձեր երկիրը և եկել եք այս անտեր քաղաքը՝ իմ երկրին և հայրենակիցներին օգնելու: Ու ես Ձեզնից պիտի փրկվեցնեմ»:

Երիտասարդ թարգմանիչը, ում ես Ձեր կողքին էլ չտեսա, ձեռքերը վեր պարզեց և արհամարհական քնծիծաղ տվեց: Աշխարհը փոխվել է, պարոն Մարկոս: Միշտ չէ, որ այդպես է եղել:

Երբեմն գիշերը ես պառկում էի իմ տնակի մութ միայնության մեջ և նայում էի հիմնական տան վառվող լույսերին: Ես նայում էի Ձեզ և Ձեր ընկերներին, հատկապես քաջարի միսս Ամրա Ադեմովիչին, ում մեծ սիրտը իմ հիացմունքի անհատնում աղբյուրն է: Դուք ուտում էիք, ծխում, գինի էիք խմում: Լսվում էր երաժշտության ձայն, որը երբեմն-երբեմն ջազային էր և հիշեցնում էր ինձ Նիլայի մասին:

Նիլան այլևս չկա: Ես իմացա այդ մասին միսս Ամրայից: Ես պատմեցի նրան Վահդատիի մասին և ասացի, որ Նիլան բանաստեղծ էր, և միսս Ամրան համացանցում գտավ մի ֆրանսերեն հրատարակություն: Այն վերջին քառասուն տարիների լավագույն բանաստեղծությունների անթուղգիան էր: Եվ այդ բանաստեղծություններից մեկը Նիլայինն էր: Այնտեղ գրված էր նաև, որ Նիլան մահացել է 1974 թվականին: Մտածեցի այսքան տարիների իմ սին հույսերի մասին, որ ուզում էի նամակ ստանալ վաղուց մեռած մի

մարդուց: Չզարմացա նույնիսկ, երբ տեղեկացա, որ ինքնասպան էր եղել: Այժմ արդեն գիտեմ, որ կան մարդիկ, որոնք տիրապետում են դժբախտ լինելու արվեստին այնպես, ինչպես ոմանք՝ սիրելու արվեստին, և ջերմեռանդորեն և անդառնալիորեն փայփայում են սեփական դժբախտությունը:

Թույլ տվեք, պարոն Մարկոս, սրանով ավարտել:

Ժամանակս ավարտվում է: Ես օր օրի թուլանում եմ, և վերջս մոտ է: Ես շնորհակալ եմ Աստծուն ամեն ինչի համար: Նաև Ձեզ եմ շնորհակալ, պարոն Մարկոս, և ոչ միայն Ձեր ընկերակցության համար ու նրա համար, որ ամեն օր այցելում էիք ինձ, թեյ խմում և պատմում նորություններ Թինոսում ապրող Ձեր մայրիկից կամ Թալիա անունով մանկության ընկերուհուց: Ես շնորհակալ եմ իմ ժողովրդի հանդեպ տածած Ձեր կարեկցանքի և երեխաներին Ձեր մատուցած անգնահատելի ծառայության համար:

Շնորհակալ եմ նաև այս տան վրա արված վերանորոգման աշխատանքների համար: Ես կյանքիս մեծ մասն այստեղ եմ անցկացրել, այժմ սա իմ տունն է, և այս պատերի ներսում էլ շունչս կփչեմ: Այս տան փլուզումն ինձ սրտի ցավ ու վիշտ էր պատճառում: Բայց այժմ ես երջանիկ եմ՝ տեսնելով, որ տունը ներկվել է, այգին՝ նորոգվել, պատուհանները տեղադրվել են, իսկ այն պատշգամբը, ուր ես անհամար ժամեր եմ անցկացրել, վերակառուցվել է: Շնորհակալ եմ, որ ծառեր ու ծաղիկներ եք տնկել այգում: Եթե ես ինչ-որ կերպ օժանդակել եմ իմ ժողովրդին մատուցած Ձեր օգնությանը, ապա Ձեր ներդրումը այս տան վերանորոգման գործին լավագույն վարձատրությունն է ինձ համար:

Բայց նույնիսկ ժլատ թվալու մտավախությամբ թույլ կտամ ինձ Ձեզնից երկու բան խնդրել. մեկը՝ ինձ համար, մյուսը՝ ուրիշի: Նախ խնդրում եմ հուղարկավորել ինձ Աշուբան-Արեֆան գերեզմանոցում, որը Դուք լավ գիտեք: Քայլեք դեպի տեղանքի վերջը՝ գլխավոր մուտքից դեպի հյուսիս, և կգտնեք Սուլեյման Վահդատիի գերեզմանը: Մի տեղ գտեք մոտակայքում և դրեք ինձ այդտեղ: Ահա թե ինչ եմ խնդրում ինձ համար:

Երկրորդը՝ իմ մահից հետո գտեք իմ զարմուհի Փարիին: Եթե նա ողջ է, դա դժվար չի լինի, այդ համացանցը հիանալի գործիք

է: Եվ այս ծրարի մեջ նամակիս հետ մեկտեղ դրված կտակն է, որի համաձայն՝ այս տունը, ունեցվածքը և փողը ես կտակում եմ նրան: Խնդրում եմ, հանձնեք նրան թե՛ կտակը, թե՛ նամակը և ասեք նրան, ասեք նրան, որ չէի կարող կանխատեսել իմ արածի հետևանքները: Ասեք, որ մխիթարություն եմ տեսնում միայն հուսալով, որ այս աշխարհում որտեղ էլ ինքը լինի, կգտնի խաղաղություն, բարություն, սեր, երջանկություն, որքան որ հնարավոր է:

Շնորհակալ եմ, պարոն Մարկոս:

Աստված Ձեզ պահապան:

Միշտ Ձեր բարեկամ՝ Նաբի:

Հ ի ն գ ե ռ ո ղ

Գ Ա Ր ՈՒ Ն, 2003

Գ թության քույր Ամրա Ադեմովիչը զգուշացրել էր Իդրիսին և Թիմուրին: Մի կողմ էր քաշել և ասել. «Եթե դուք ինչ-որ կերպ արձագանքեք, նույնիսկ աննշան, նա կհուզվի, և ես ձեզ դուրս կշարտեմ»:

Նրանք կանգնած էին երկար և խավար սրահի ծայրում՝ Վազիր Ակբար Խան հիվանդանոցի տղամարդկանց բաժնում: Ամրան ասաց, որ աղջիկը մեկ ազգական ունի, համենայն դեպս միայն մեկն էր նրան այցելում՝ քեռին, և եթե աղջկան պառկեցնեին կանանց բաժնում, քեռին չէր կարող այցելության գալ, դրա համար էլ բուժանձնակազմը տեղավորել էր նրան տղամարդկանց թևում, բայց ոչ թե հիվանդասենյակում (քանի որ կինը չէր կարող տղամարդկանց հետ մի սենյակում գտնվել, եթե նրանք ազգակիցներ չէին), այլ այս սրահում, որը չեզոք գոտի էր:

— Իսկ ես կարծում էի, որ Թալիբանը հեռացել է քաղաքից,— ասաց Թիմուրը:

— Խենթություն է, չե՞ք կարծում,— ասաց Ամրան՝ շփոթված ծիծաղելով:

Վերադառնալով Քաբուլ՝ Իդրիսը բազմիցս ականատես էր եղել օտարերկրյա հյուրերի այդ թեթև քմծիծաղին, որոնք այդպես էին արձագանքում Աֆղանստանի մշակույթի տիպական մտածողության խոչընդոտներին, և մի փոքր վիրավորված էր այդ զվարթ կիսածաղրից, այդ ներողամիտ պահվածքից, թեպետ տեղաբնակ-

ները կամ ուշադիր չէին, կամ էլ դա իբրև վիրավորանք չէին գնահատում: Իդրիսը մտածեց, որ երևի ինքն էլ պիտի ուշադրություն չդարձնի:

— Բայց նրանք ձեզ ներս են թողել,— ասաց Թիմուրը:— Դուք ազատ ելումուտ եք անում:

Ամրան հոնքերը բարձրացրեց:

— Ես հաշվի մեջ չեմ. քանի որ աֆղան չեմ, ուրեմն իսկական կին էլ չեմ: Միթե դուք դա չգիտեիք:

Թիմուրը ծիծաղեց:

— Ամրա, դա լեհական անուն է:

— Բոսնիական:

— Պայմանավորվեցինք, ոչ մի ձայն: Սա հիվանդանոց է, ոչ թե գազանանոց: Խոստացե՛ք:

— Խոստանում եմ,— ասաց Թիմուրը:

Իդրիսը նայեց բուժքրոջը՝ վախենալով, որ այդ նյարդային և անմիտ ծաղրանքը վիրավորել է նրան, բայց ակնհայտ էր, որ Թիմուրը անպատիժ մարսել էր իր արածը: Իդրիսը միաժամանակ և՛ արհամարհում էր եղբորը, և՛ նախանձում էր նրան: Նա միշտ համարում էր Թիմուրին կոպտաբարո, երևակայությունից և տակտից զուրկ մարդ: Գիտեր, որ Թիմուրը դավաճանում է կնոջը և չի վճարում հարկերը: Միացյալ Նահանգներում Թիմուրն ուներ անշարժ գույքի վարկային գործակալություն, և Իդրիսը վստահ էր, որ նա մինչև կոկորդը խրված էր վարկային զեղծարարությունների մեջ: Թիմուրը շատ մարդամոտ էր, նրա թերությունները հակակշռվում էին լավ բնավորությամբ, վստահ բարեկամական վերաբերմունքով, մոլորեցնող անմեղությամբ, որ ձգում էր իրեն հանդիպած մարդկանց: Դրան նպաստում էր նաև բարետես արտաքինը՝ մկանուտ մարմին, կանաչ աչքեր և բաց ժպիտ: Իդրիսի կարծիքով Թիմուրը երեխայի արտոնություններով մեծահասակ էր:

— Լավ,— ասաց Ամրան:— Բարի:

Կինը քաշեց սավանը, որ մեխած էր առաստաղին իբրև վարագույր, և նրանց ներս թողեց: Երեխան՝ Ռոշին, որին Ամրան այդպես էր կոչում՝ կրճատելով «Ռոշաննա»-ն, մոտ ինը-տասը տարեկան էր: Նստած էր պողպատե շրջանակով մահձակային՝ մեջքը պա-

տին հենած, ծնկները ծնոտի տակ: Իդրիսը անմիջապես խոնարհեց հայացքը և կուլ տվեց հառաչը: Թիմուրը իհարկե չկարողացավ զսպել իրեն: Նա ծպպացրեց՝ օհ, օհ, օհ, մի քանի անգամ բարձր ցավագին շշուկով: Իդրիսը նայեց Թիմուրին և չզարմացավ՝ տեսնելով նրա աչքերում ցուցադրական փայլուն արցունքները:

Աղջիկը ջղածգվեց և խռպոտ ձայն արձակեց:

— Լավ, բավական է, հեռանում ենք,— կտրուկ ասաց Ամրան դրսում՝ աստիճանավանդակի վրա:

Ամրան իր կապույտ համազգեստի ծոցագրպանից հանեց կարմիր «Մարլբորոյի» տուփը: Թիմուրը, որի արցունքները չքացել էին նույնքան արագ, որքան հայտնվել էին, վերցրեց մի սիգարետ և վառեց իր և Ամրայի սիգարետները: Իդրիսը զգում էր, որ գլուխը դատարկվում է, բերանը՝ չորանում: Նա վախենում էր, որ հետ կտա և կխայտառակվի՝ հաստատելով Ամրայի կարծիքն իրենց մասին: Ըստ Ամրայի՝ նրանք ընդամենը հարուստ ու միամիտ գաղթականներ էին, որ ապշահար ծանոթանում էին հրոսակախմբի թողած ավերածություններին:

Իդրիսը սպասում էր, որ Ամրան կհանդիմաներ իրենց, գոնե Թիմուրին, բայց Ամրայի պահվածքն ավելի շուտ սեթևեթանք էր հիշեցնում, քան արհամարհանք: Զգացվում էր այն ազդեցությունը, որ Թիմուրը թողնում էր կանանց վրա:

— Դե,— ասաց նա կոկետությամբ:— Ինչ կասես դրա մասին, Թիմուր:

Նահանգներում Թիմուրը դարձավ Թիմ: Նա անունը փոխեց սեպտեմբերի 11-ից հետո, և անվանափոխությունից հետո կրկնապատկվեցին նրա եկամուտները: Նա Իդրիսին ասում էր, որ անվան մեջ մի քանի տառից ազատվելը ավելի է նպաստել իր կարիերայի վերելքին, քան քուլեջի դիպլոմը կարող էր անել, թեպետ նա քուլեջ չէր գնացել: Իդրիսն էր Բաշիրի ընտանիքի ուսյալ տաղանդը: Բայց Քաբուլ վերադառնալուն պես Թիմը ներկայանում էր միայն իբրև Թիմուր: Դա բավականին անմեղ երկդիմի խաղ էր, գուցե նաև անիմաստ: Բայց դա նյարդայնացնում էր Իդրիսին:

— Կներեք պատահածի համար,— ասաց Թիմուրը:

— Երևի պիտի պատժեմ ձեզ:

— Սիրով կընդունեն այն, փիսիկս
 Ամրան հայացքը դարձրեց Իդրիսին:

— Նա իրեն կովբոյի տեղ է դրել, բայց դու, Իդրիս, հանգիստ
 ես ու զգայուն: Դու ինտրովերտ ես, ինչպես ասում են, ներամփոփ:

— Նա բժիշկ է,— ասաց Թիմուրը:

— Օհ, այդ դեպքում այս հիվանդանոցը տեսնելը պիտի ձեզ
 համար ցնցում լինի:

— Ինչ է պատահել Ռոշիի հետ,— ասաց Իդրիսը:— Ո՞վ է նրա
 հետ այդպես վարվել:

Ամրայի դեմքը մթնեց: Երբ նա խոսեց, ծայնի մեջ մայրական
 վճռականություն կար:

— Ես պայքարում եմ նրա համար: Կռիվ եմ տալիս կառավա-
 րության, հիվանդանոցի քաշքշուկի, սրիկա նեյրովիրաբույժի հետ:
 Ամեն քայլափոխի պայքարում եմ նրա համար և կանգ չեմ առնի:
 Նա ոչ ոք չունի:

Իդրիսն ասաց.

— Բայց կարծում էի՝ նա քեռի ունի:

Ամրան թափ տվեց սիգարետի մոխիրը:

— Քեռին նույնպես սրիկա է: Դե, ինչո՞ւ եք եկել այստեղ,
 տղաներ:

Թիմուրն անցավ գործի: Նրա պատմածը ինչ-որ առումով ճշ-
 մարտություն էր: Նա ասաց, որ նրանք հորեղբորորդիներ են, որ
 խորհրդային զորքերի ներխուժումից հետո փախան և մի տարի
 մնացին Պակիստանում, իսկ հետո՝ ութսունականներին, վերջնա-
 կանապես հաստատվեցին Կալիֆոռնիայում: Վերջին քսան տա-
 րում սա նրանց առաջին այցելությունն էր Աֆղանստան: Բայց հետո
 հավելեց, որ նրանք եկել են՝ «կապ հաստատեն», «տեղեկատվու-
 թյուն ունենան» անցած տարիների և կատարված ավերածություն-
 ների մասին: Եվ ուզում են հետ գնալ Ամերիկա, որ տեղեկացնեն
 մարդկանց և փող հավաքեն, որ հատուցեն վնասները, «վճարեն
 հայրենիքին»:

— Մենք ուզում ենք վճարել մեր պարտքերը,— ասաց նա՝ այդ
 չարչրկված նախադասությունն արտաբերելով այնպիսի անկեղծու-
 թյամբ, որ Իդրիսն ամաչեց:

Իհարկե, Թիմուրը չբացահայտեց Քաբուլ գալու հիմնական դր-
դապատճառը: Նրանք ուզում էին պահանջել իրենց տոհմական ու-
նեցվածքը և հետ բերել այն տունը, ուր ապրել էին ծնողների հետ
շուրջ տասնչորս տարի: Անշարժ գույքի գները թռել էին, որովհետև
բազում օտարազգիներ էին Քաբուլ եկել աշխատելու և կացարան
էին փնտրում: Հենց նոր մի տնից էին գալիս, ուր բնակվում էին Հյու-
սիսային Դաշինքի զինվորների հոգնած խառնիխուռն խմբերը: Հե-
ռանալիս հանդիպեցին մի քանի տուն ներքև ապրող միջահասակ
տղամարդու՝ սլացիկ վիրաբույժ Մարկոս Վարվարիսին: Նա հրա-
վիրեց իրենց ճաշի և առաջարկեց այցելել Վազիր Ակբար Խանի
հոսպիտալը, որտեղ նրա հասարակական կազմակերպությունը
գրասենյակ ուներ: Իսկ երեկոյան հրավիրեց նրանց հավաքույ-
թի: Նրանք լսել էին այդ աղջկա մասին հիվանդանոց գալուն պես՝
ականջ դնելով երկու սանիտարների խոսակցությանը նախամուտ-
քի աստիճաններին: Դրանից հետո Թիմուրը արմունկով հրեց Իդ-
րիսին և ասաց.

— Պիտի ստուգենք դա, եղբայր:

Ամրային Թիմուրի ասածները ձանձրալի թվացին: Նա նետեց
սիգարետը և ուղղեց շիկահեր, ալիքաձև մազերի փունջը պահող
ռետինե վարսակալը:

— Դե, տղաներ, կհանդիպենք երեկոյան:



Թիմուրի հայրը՝ Իդրիսի հորեղբայրն էր ուղարկել
նրանց Քաբուլ: Պատերազմի քսան տարիների ըն-
թացքում Բաշիրիների տունը մի քանի անգամ ձեռքից
ձեռք էր անցել, և սեփականության իրավունքը վերա-
կանգնելու համար փող ու ժամանակ էր պետք: Երկրի դատական
ատյանները լեցուն էին սեփականության վիճադարույց դեպքերի
լումներով: Թիմուրի հայրը զգուշացրել էր տղաներին, որ նրանք
պետք է սովորեն «մանևրել» խայտառակ դանդաղ և ծանր աֆղա-
նական բյուրոկրատիայի պայմաններում: Ինչպես ձևակերպել էր
Թիմուրի հայրը՝ «Պետք է յուզել ճիշտ ձեռքեր»:

— Դա իմ գործն է արդեն,— ասաց Թիմուրը: Կարծես դա ասե-
լու կարիք կար...

Իդրիսի հայրը մահացել էր ինը տարի առաջ՝ քաղցկեղի դեմ երկարատև պայքարից հետո: Նա մահացել էր սեփական տանը՝ կնոջ, երկու աղջիկների և Իդրիսի կողքին: Նրա մահվան օրը ազգականների մի մեծ խումբ ներխուժեց տուն՝ քեռիներ, հորաքույրներ, զարմիկներ, ընկերներ, ծանոթներ: Նրանք նստում էին թախտերին, աթոռներին, իսկ ազատ տեղ չլինելու դեպքում՝ նաև աստիճաններին: Կանայք խմբվում էին ճաշասենյակում և խոհանոցում ու անվերջ թեյ էին պատրաստում: Իդրիսը միակ տղան էր, և նա էր ստորագրում բոլոր փաստաթղթերը՝ հոր մահը հաստատող բժշկական քննության թուղթը, թաղման բյուրոյի քաղաքավարի աշխատակցի բերած թղթերը, որ հատուկ եկել էր հոր մարմինը տեղափոխելու:

Թիմուրն այդ ժամանակ նրա կողքից չհեռացավ: Նա օգնում էր Իդրիսին՝ պատասխանելու հեռախոսազանգերին: Եվ ընդունում էր ցավակցելու եկած մարդկանց: Նա պատվիրեց բրինձ և գառան քաբաբ էյբ Քաբոբի պանդոկից: Դա աֆղանական ազգային ռեստորան էր, որ աշխատեցնում էր Թիմուրի ընկեր Աբդուլլան: Թիմուրը կատակով նրան անվանում էր քեռի էյբ: Թիմուրն էր կայանում տարեց ազգականների մեքենաները, երբ անձրև էր գալիս: Նա էլ աֆղանական ալիքով հորեղբոր մահվան մասին հայտարարությունը տվեց:

Այդ առավոտյան նա Իդրիսին տարավ Հեյվարդ թաղամասում գտնվող թաղման գրասենյակը: Անձրևում էր, և հյուսիսային 680-րդ գծի վրա երթևեկությունն արդեն թեթևացել էր:

— Հայրիկդ, եղբայրս, հրաշք մարդ էր: Նա ավանդական մարդ էր:— Թիմուրը հառաչեց՝ շրջանցելով Առաքելության գրասենյակը և ազատ ձեռքով անվերջ սրբելով հոսող արցունքները:

Իդրիսը մռայլ գլխով արեց: Ողջ կյանքում չէր կարող լաց լինել այլ մարդկանց ներկայությամբ, նույնիսկ թաղումների ժամանակ, երբ դա պետք էր անել: Նա դա համարում էր հաշմանդամության պես մի բան, ինչպես, ասենք, գույները չտարբերելը: Բայց նա բնազդաբար, անգիտակցորեն զայրանում էր Թիմուրի վրա, որը առաջին պլան էր մղվել իր եռանդուն վարքագծով և դերասանական լացուկոճով: Մինչդեռ մահացել էր Իդրիսի հայրը:

Նրանց ուղեկցեցին մի խաղաղ, մուգ կահույքով կահավորված սենյակ: Սև կոստյումով, մազերը մեջտեղից բացած մի մարդ դիմավորեց նրանց: Նրանից թանկ սուրճի հոտ էր գալիս: Մասնագիտական սառնասրտությամբ արտասանեց ցավակցության խոսքերը և ստորագրության համար հանձնեց հուղարկավորության կարգը և լիազորությունների ձևաթուղթը: Հարցրեց՝ մահվան վկայականի քանի կրկնօրինակ է անհրաժեշտ հանգուցյալի ընտանիքին: Երբ բոլոր թղթերը ստորագրված էին, նույն քաղաքավարի տեսքով նա Իդրիսի առաջ մի գրքույկ դրեց, որ վերնագրված էր՝ «Ընդհանուր գնացուցակ»:

Թաղման արարողությունների գրասենյակի տնօրենը հազարով մաքրեց կոկորդը:

— Իհարկե, այս գնացուցակը ենթակա է փոփոխման, եթե Ձեր հայրը անդամակցում էր Առաքելության աֆղանական մզկիթին: Մենք նրանց հետ գործընկերներ ենք: Նրանք կվճարեն ծառայությունների մեծ մասի համար, և Դուք կազատվեք ծախսերից:

— Պատկերացում չունեմ այդ մասին,— ասաց Իդրիսը՝ ուսումնասիրելով գնացուցակը:

Գիտեր, որ հայրը հավատացյալ էր, բայց հավատացյալ էր ավելի շուտ իր հոգու խորքում և հազվադեպ էր գնում ուրբաթօրյա աղոթքների:

— Սպասենք մի փոքր, մինչև Դուք զանգեք մզկիթ:

— Ո՛չ, եղբայրս,— ասաց Թիմուրը,— չէր անդամակցում:

— Վստահ եք:

— Այո՛, ես հիշում եմ մի խոսակցություն այդ առիթով:

— Հասկանում եմ,— ասաց տնօրենը:

Դրսում նրանք երկուսով մի սիգարետ ծխեցին: Անձրևն արդեն դադարել էր:

— Մեծ ճանապարհի ավազակներ են,— ասաց Իդրիսը:

Թիմուրը թքեց ցեխոտ անձրևաջրի մեջ:

— Պետք է ընդունենք, որ մահը լուրջ բիզնես է: Միշտ պահանջված բիզնես: Այդքան բան: Ավելի շահութաբեր է, քան մեքենաների առքուվաճառքից ստացված եկամուտը:

Այդ ժամանակ Թիմուրը փայատեր էր օգտագործված մեքենա-

ներ վաճառող մի ձեռնարկության, որ սնանկանում էր, երբ Թիմուրը ընկերոջ հետ գնեց և երկու տարում դարձրեց այն շահութաբեր ձեռնարկություն:

— Գործունյա մարդ է,— ասում էր Իդրիսի հայրը զարմիկի մասին:

Իդրիսն այդ ժամանակ ճորտի պես աշխատում էր ցածր աշխատավարձով *UC DWIS* ներքին վիրաբուժության կենտրոնում: Մեկ տարի է, ինչ ամուսնացած էր, և կինը շաբաթական երեսուն ժամ աշխատում էր իրավաբանական ընկերությունում, միաժամանակ սովորում էր *LSAT* իրավաբանական լիցենզավորման աստիճան ստանալու համար:

— Սա պարտքով եմ վերցնում,— ասաց Իդրիսը,— հասկանո՞ւմ ես, Թիմուր: Ես այն կվերադարձնեմ:

— Մի անհանգստացիր, եղբայրս, ոնց ասես:

Առաջին անգամ չէր, որ Թիմուրը օգնում էր Իդրիսին: Երբ Իդրիսն ամուսնացավ, Թիմուրը հարսանիքին նվիրեց նրան նոր «Ֆորդ Էքսփլորեր» մեքենա: Թիմուրը նաև իր ստորագրությունը դրեց վարկային փաստաթղթերի տակ, և Իդրիսն ու Նահիլը Դավիսում մի փոքր բնակարան գնեցին: Ընտանիքում նա բոլոր երեխաների սիրած հորեղբայրն էր, և եթե Իդրիսը նեղ պահին մեկին զանգելու լիներ, անպայման կզանգեր Թիմուրին:

Սակայն կար նաև ուրիշ բան:

Իդրիսը հայտնաբերեց ընտանիքում բոլորը գիտեն, որ Թիմուրը ստորագրել է Իդրիսի վարկային պարտավորության տակ: Թիմուրն էր պատմել: Իսկ հարսանեկան արարողության ժամանակ Թիմուրը ստիպեց երգչին լռել և հայտարարություն արեց՝ մեծ շուքով հանձնելով մեքենայի բանալիները սկուտեղի վրա՝ ներկաների ուշադիր հայացքների ներքո: Ֆոտոխցիկների չխկոց լսվեց: Իդրիսը նեղվում էր այդ ցուցամոլությունից, ակնհայտ ցուցադրականությունից և պարծենկոտությունից: Նրան դուր չէր գալիս Թիմուրի պահվածքը, թեպետ Թիմուրը իր բարեկամն էր: Այնուամենայնիվ, Իդրիսին թվում էր, որ Թիմուրը ինքն է գրում իր գովազդային պատմությունը, և եղբոր առատաձեռնությունն ընդամենը այդ պատմության խնամքով մշակված մասն է կազմում:

Մի գիշեր, երբ փոխում էին անկողնու սավանները, Իդրիսը և Նահիլը թեթև վիճեցին դրա շուրջ:

— Բայց բոլորն էլ ուզում են դուր գալ,— ասաց կինը,— միթե դու չես ուզում:

— Ես ուզում եմ,— պատասխանեց Իդրիսը,— բայց դրա դիմաց փող չեմ վճարում:

Նահիլն ասաց, որ ամուսինն անարդար է և անշնորհակալ՝ Թիմուրի բոլոր բարեգործություններից հետո:

— Ախր դու էությունը չես ըմբռնում: Ասածս այն է, որ պետք չէ բոլոր բարեգործությունները փակցնել ցուցատախտակին: Բարի գործերը պետք է արվեն լուռ արժանապատվությամբ: Հրապարակավ կտրոններ ստորագրելը բարություն չէ:

— Դե,— ասաց Նահիլը՝ քաշելով սավանը,— դա հին պատմություն է, սիրելիս:



— Օ՛հ, ես հիշում եմ այդ վայրը,— ասաց Թիմուրը:— Ինչ էր տիրոջ անունը:

— Ազգանունը Վահդատի էր, ինչքան հիշում եմ, բայց անունը չեմ հիշում:

Նա մտաբերեց, որ անհամար անգամներ խաղացել են այս տան դարպասների առաջ, բայց հիմա՝ տասնամյակներ հետո, առաջին անգամ այդ դարպասներից ներս էին մտնում:

— Անքննելի են Աստծո ճանապարհները,— մռթմռթաց Թիմուրը:

Դա մի սովորական երկհարկանի տուն էր, որ իր Սան Ժոզե թաղամասում կգրավեր միայն *HOA*՝ Տան սեփականատերերի ասոցիացիայի անդամների ուշադրությունը: Սակայն Քարուլի չափանիշներով դա մի շքեղ տուն էր՝ բարձր պատերով, մետաղյա դարպասներով և լայն ասֆալտապատ ճանապարհով: Եղբայրներին ներս թողեց զինված պահակը, և Իդրիսը նկատեց, որ Քարուլում տեսած շատ բաների պես այս տունն էլ կրում է անցած փառքի հիշողություններ, և ավերակների տակից հառնում է դրա իրական դեմքը: Իսկ ավերածությունը զգալի էր՝ փամփուշտներից առաջացած փոսեր, մոխրացած պատերին զիզգազաճև ճաքեր, գիպսի

տակից հանված աղյուսներ և ճանապարհի կողքի մացառուտները, նաև դեղին մարգագետիններն ու տերևազուրկ ծառերը: Ետնաբակին նայող պատշգամբի կեսը նույնպես ավերված էր: Բայց Քաբուլում տեսած շատ բաների նման այս տունը նույնպես դանդաղ, երերուն վերակենդանացման նշաններ էր ցույց տալիս: Ինչ-որ մեկը փորձել էր ներկել այն, վարդի թփեր էր տնկել այգում և վերակառուցել էր այգու ցանկապատի արևելյան հատվածը, թեպետ ոչ այնքան վարպետորեն: Տան պատին մի բարձր սանդուղք էր հենած, և հուշում էր, որ կտորի վերանորոգումն էլ ընթացքի մեջ է: Բանվորները աշխատում էին նաև քայքայված պատշգամբի վերականգնման վրա:

Նախասենյակում նրանք հանդիպեցին Մարկոսին: Բժիշկն ուներ նոսր, սպիտակող մազեր և բաց կապույտ աչքեր: Նա կրում էր մոխրագույն աֆղանական զգեստ և *ղաֆիե*¹⁶ սև-սպիտակ պուտերով շարֆ, որ նրբագեղ փաթաթել էր վզին: Մարկոսը առաջնորդեց եղբայրներին թանձր ծխով պատված հյուրասենյակ:

— Գինի ունեմ, թեյ և գարեջուր: Թե՛ ավելի թունդ խմիչք կուզեիք:

— Ցոյց տվեք այն, իսկ ես կլցնեմ բաժակները,— ասաց Թիմուրը:

— Շատ լավ է: Շիշը նվազարկիչի կողքին է: Սառուցն էլ անվնաս է, պատրաստված է շշալցված ջրից:

— Փառք Աստծու:

Թիմուրը նման հավաքույթների ժամանակ իր տարերքում էր, և Իդրիսը կամա-ակամա հիանում էր նրա պահվածքի թեթևությամբ, անկաշկանդ սրամտություններով և բնատուր հմայքով: Նա Թիմուրի հետ գնաց դեպի բարը, և Թիմուրը բոլորին բոսորագույն շից խմիչք լցրեց:

Սենյակում՝ բարձերի վրա, շուրջ քսան մարդ էր նստած: Հատակը ծածկված էր մուգ կարմիր գորգով: Տան հարդարանքը չափավոր էր, ճաշակով: Իդրիսն այն անվանում էր «գաղթական շքե-

¹⁶ Ղաֆիե — տղամարդու գլխի փաթաթան՝ բառակուսի բամբակյա կտորից: Սովորաբար կրում են արաբները, քրդերը և թուրքերը:

ղություն»։ Լսում էին Նինա Սիմոնի սկավառակը։ Բոլորը խմում էին, և համարյա բոլորը ծխում էին ու խոսում իրաքյան նոր պատերազմի մասին։ Հեռուստացույցը միացրած էր CNN միջազգային ալիքի վրա, բայց ձայնն իջեցրած էր։ Գիշերային Բաղդադը սարսափի և ավերածության ձիրաններում վառվում էր կանաչ լույսերի մեջ։

Օղու սառուցուկ բաժակները ձեռքներին՝ նրանց մոտեցան Մարկոսն ու լուրջ դեմքով երկու երիտասարդ գերմանացիներ, որոնք աշխատում էին համաշխարհային սննդի ծրագրի համար։ Հումանիտար բոլոր աշխատողները Իդրիսի կարծիքով մի փոքր սառն էին, աշխարհ տեսած։ Նրանց դժվար էր զարմացնել։

Նա ասաց Մարկոսին.

— Սա շատ լավ տուն է։

— Դուք կարող եք այդ մասին խոսել տանտիրոջ հետ, — ասաց Մարկոսը։ Գնաց հյուրասենյակի խորքը և վերադարձավ մի տարեց, նիհարակազմ մարդու հետ, որի խիտ, գանգուր, ալեխառն մազերը հետ էին սանրված։ Մորուքը խնամքով կտրված էր, իսկ անատամ այտերը փոս էին ընկել։ Հազին ուներ մաշված, պարկանման ձիթազույն կոստյում, որը հավանաբար նորաձև էր 1940-ական թվականներին։ Մարկոսը ակնհայտ համակրանքով ժպտում էր տարեց մարդուն։

— Նաբի ջան, — բացականչեց Թիմուրը, և Իդրիսը հիշեց ծեր մարդուն։

Նաբին ամաչկոտ ժպտաց։

— Կներեք, մենք նախկինում երբևէ հանդիպել ենք։

— Ես Թիմուր Բաշիրին եմ, — ասաց Թիմուրը ֆարսիով։ — Իմ ընտանիքն ապրում էր ձեզնից մի փողոց այն կողմ։

— Օ՛հ, տեր իմ, — բացականչեց Նաբին։ — Թիմուր ջան, իսկ դու երևի Իդրիսն ես։

Իդրիսը ժպտալով գլխով արեց։

Նաբին գրկեց երկուսին էլ։ Ժպտալով համբուրեց այտերը և, կարծես չհավատալով, ևս մեկ անգամ ուշադիր նայեց եղբայրներին։ Իդրիսը հիշեց, թե ինչպես էր Նաբին հիվանդասալյակով մասնատալիս իր տիրոջը։ Երբեմն նա հիվանդասալյակը կանգնեցնում էր մայթին, և երկուսով նայում էին, թե ինչպես է Թիմուրը ֆուտբոլ

խաղում հարևան երեխաների հետ:

— Պատվարժան Նաբին 1947 թվականից ապրում է այս տանը,— ասաց Մարկոսը՝ ձեռքը զցելով Նաբիի ուսին:

— Այսինքն՝ հիմա տան տերը Դոնք եք:

— Ես ծառայել եմ պարոն Վահդատիին 1947–2000 թվականներին: Նա այնքան բարի էր, որ կտակեց ինձ այս տունը:

— Նա նվիրել է այս տունը ձե՞զ,— չհավատալով հարցրեց Թիմուրը:

Նաբին հաստատական գլխով արեց:

— Դուք երևի աննման խոհարար էիք:

— Իսկ դուք, ես հիշում եմ, շատ չարաճճի երեխաներ էիք:

Թիմուրը քրքջաց:

— Երբեք կարգապահ ու ճշտապահ չեմ եղել, Նաբի՛ ջան: Դա եղբորս առաքելությունն է:

Մարկոսը, ձեռքում պտտելով գինու բաժակը, դիմեց Իդրիսին:

— Նիլա Վահդատին՝ նախկին տիրոջ կինը, բանաստեղծ էր և նույնիսկ ծանաչված բանաստեղծուհի, ինչպես պարզվեց: Երբևէ լսե՞լ եք նրա մասին:

Իդրիսը գլուխը թափահարեց:

— Միայն գիտեմ, որ Նիլան հեռացել էր Աֆղանստանից նախքան իմ ծնվելը:

— Նա ապրում էր Փարիզում իր դստեր հետ,— ասաց երիտասարդ գերմանացիներից մեկը՝ Թոմասը:— Իսկ 1974 թվականին՝ նա մահացավ: Ինքնասպան եղավ: Նա խնդիր ուներ խմիչքի հետ, համենայն դեպս այդպես եմ կարդացել: Մեկը տվեց ինձ Նիլայի բանաստեղծությունների գրքի գերմաներեն տարբերակը, և այն ինձ դուր եկավ: Լավն էր ու զարմանալի սեքսուալ երանգ կար այդ գրվածքներում:

Իդրիսը կրկին գլխով արեց: Մի փոքր անհարմար էր զգում, քանի որ օտարերկրացին կարծես քննում էր աֆղանական մշակույթի նրա իմացությունը: Մի քիչ հեռու Թիմուրն արդեն ոգևորված խոսում էր Նաբիի հետ վարձակալության գների մասին: Իհարկե, խոսում էին ֆարսիով:

— Նաբի՛ ջան, իսկ դու տեղյակ ես՝ ինչքան փող կարող ես աշ-

խատել այս տունը վարձով տալու դեպքում:

— Այո՛,— ժպտադեմ պատասխանեց Նաբին:— Ես տեղյակ եմ վարձակալության գնեքին:

— Դու կարող էիր բմբլել այս օտարերկրացուն:

— Ինչ ասեմ...

— Իսկ դու թողնում ես, որ ձրի մնան այստեղ:

— Թիմուր ջան: Նրանք եկել են մեր երկրին օգնություն ցուցաբերելու համար, և քո ասած «բմբլելը» ես այս պարագայում ձիշտ չեմ համարում:

Թիմուրը մի աղմկոտ թառանչով դատարկեց բաժակը:

— Կամ փող չես սիրում, Նաբի՛, կամ էլ դու ինձնից շատ ավելի լավ մարդ ես:

Ամրան սենյակ մտավ գունաթափ ջինսերի վրա մի փիրուզագույն աֆղանական վերնաշապիկ հագած: Նաբին մի տեսակ հետ քաշվեց, երբ Ամրան համբուրեց նրա այտը և թևը գցեց ուսին:

— Սիրում եմ այս մարդուն,— ասաց նա շրջապատող մարդկանց:— Բայց նաև սիրում եմ շփոթեցնել նրան:

Հետո Ամրան թարգմանեց նրան ֆարսիով: Նաբին գլուխը թափահարեց և քահ-քահ ծիծաղեց:

— Բայց դու նաև ինձ ես շփոթեցնում,— ասաց Թիմուրը:

Ամրան թփթփացրեց Թիմուրի կրծքին:

— Իսկ դու մեծ պատուհաս ես:

Ամրան, Մարկոսը և գերմանացիները համբուրվեցին աֆղանական ձևով՝ երեք անգամ: Մարկոսը գրկեց Ամրայի իրանը:

— Ահավասիկ Ամրա Ադեմովիչը: Ամենաշատ աշխատող կինը Քարուլում: Չփորձե՞ք բարկացնել այս կնոջը: Եվ չփորձե՞ք մրցակցել նրա հետ ալկոհոլ խմելու մեջ: Նա ձեզ կթողնի սեղանի տակ:

— Մենք հենց հիմա կստուգենք դա,— ասաց Թիմուրը՝ ձգվելով դեպի սեղանիկին դրված բաժակը:

Ծեր Նաբին նույնպես ներողություն խնդրեց և հեռացավ...

Հաջորդ ժամվա ընթացքում Իդրիսը շփվում էր մարդկանց հետ, համենայն դեպս փորձում էր: Շշերում պակասում էր խմիչքը, և համապատասխանաբար բարձրանում էր խոսակցությունների ձայնը: Իդրիսը տարբերում էր գերմաներեն, ֆրանսերեն և հավա-

Նաբար հունարեն գրույցները: Նա խմեց ևս մի բաժակ օղի, վրայից՝ գոլ գարեջուր: Մի խմբում փորձեց անեկդոտ պատմել մոլլա Օմարի մասին: Նա լսել էր այդ անեկդոտը Կալիֆոռնիայում, բայց այն լավ չհնչեց անգլերեն, և իմաստը չհասավ ունկնդիրներին: Այն ծիծաղելի չէր: Իդրիսը առաջ շարժվեց և լսեց խոսակցություն *Irish pub*-ի մասին, որ բացվել էր Քարբուլում: Բոլորը միահամուռ համաձայնվեցին, որ դա ժամանակավոր է:

Իդրիսը շրջում էր սենյակում՝ գարեջրի թիթեղյա ամանը ձեռքին: Նա միշտ կաշկանդված էր զգում նման հավաքույթների ժամանակ: Փորձեց զբաղեցնել իրեն՝ ուսումնասիրելով տան հարդարանքը: Պատերին փակցված էին Բամիյան Բուդղաների պատկերով պաստառները, տեսարան Բուզկաշի խաղից և հունական Թինոս կղզու նավահանգստի մի նկար: Իդրիսը երբևէ չէր լսել Թինոսի մասին: Նա հյուրասենյակում նկատեց սև ու սպիտակ լուսանկար՝ մի փոքր խամրած, որ կարծես նկարված լիներ ինքնաշեն ֆոտոխցիկով: Նկարում պատկերված էր մեջքով շրջված, երկարամազ մի աղջիկ, որը նստած էր ծովափին՝ քարաբեկորի վրա, և նայում էր օվկիանոսին: Նկարի ներքևի ձախ անկյունը ասես վառված լիներ:

Ճաշին մատուցվեց գառան բուդ՝ ծիթրոնով և սխտորի պճեղներով: Սեղանին կար այծի պանիր և պեստո սոուսով մածուկ: Նա նկատեց Թիմուրին, որ նստած էր երկու գեղեցիկ և երիտասարդ հոլանդուհիների կողքին: Սեղանի շուրջը հյուրերը ծիծաղելով խոսում էին, և կանանցից մեկը ձեռքը դրեց Թիմուրի ծնկին:

Իդրիսը վերցրեց գինու բաժակը, դուրս եկավ պատշգամբ և նստեց փայտե նստարանին: Արդեն մթնում էր: Առաստաղից կախված լամպերը աղոտ լուսավորում էին: Պատշգամբից տեսանելի էր այգու ծայրում գտնվող տնակը, իսկ աջ կողմում երևում էր մեքենան: Դա մեծ, երկար, շատ հին մեքենա էր, ուրվագիծը մատնում էր, որ ամերիկյան էր: Քառասնականների մոդել էր կամ գուցե վաղ հիսնականների. այդքան լավ չէր երևում, բացի այդ՝ նա երբեք էլ մեքենաներից առանձնապես գլուխ չէր հանել: Իդրիսը վստահ էր, որ Թիմուրը կիմանա, թե ինչ մակնիշի է այդ մեքենան: Հաստատ արագ կասեր մոդելը, թողարկման տարին, շարժիչի հզորությունը և բոլոր մյուս տվյալները: Մեքենան ակեր չուներ: Թաղի շներից մե-

կը սկսեց կատաղի հաչել, նրան հետևեցին այլ շներ, իսկ ներսում դրեցին Լեոնարդ Կոհենի սկավառակը. խաղաղ և զգացմունքային մի երգ սկսեց նվագել:

Ամրան նստեց Իդրիսի կողքին: Սառույցի կտորները կամացուկ զնգզնգում էին նրա բաժակի մեջ, ոտքերն էլ մերկ էին:

— Ձեր հորեղբորորդին իսկական կովբոյ է: Բոլորի ուրախութունն է:

— Ջարմանալի չէ:

— Շատ գեղեցիկ է: Ամուսնացած է:

— Երեք երեխա ունի:

— Օ՛, լավ չէ: Այդ դեպքում ինձ զուսպ կպահեն:

— Կարծում եմ՝ Թիմուրին դա հուսահատեցնի:

— Ես սկզբունքներ ունեմ,— ասաց Ամրան:— Իսկ Դուք Ձեր հորեղբորորդուն չե՞ք սիրում:

Իդրիսը իրավացիորեն բացատրեց, որ Թիմուրն իր ամենամտերին մարդն է:

— Բայց նա Ձեզ վատ վիճակի մեջ է դնում:

Ա՛յ, դա ճիշտ էր: Իդրիսի կարծիքով նա իրեն պահում էր իսկական վատ դաստիարակված կես աֆղան, կես ամերիկացու պես, կարծես ամբողջ կյանքն ապրել էր պատերազմից բզկտված այս քաղաքում: Մտերմիկ թփթփացնում էր տեղաբնակների ուսերին և դիմում նրանց՝ եղբայր, քույր, քեռի անվանելով: Ցուցադրաբար փող էր բաժանում նվիրատվությունների *բախշիշ*¹⁷ քսակից, կատակներ էր անում տարեց կանանց հետ՝ նրանց կոչելով «մայրիկ», համոզում, որ թույլ տան ձայնագրել իրենց տխուր պատմությունները, և այդ ամենը՝ դեմքի այնպիսի տառապագին արտահայտությամբ, կարծես ինքը ապրել էր հենց այս քաղաքում և կարծես հանգիստ չէր ապրել Սան ժոզեում ու չէր մարզվել մարզասրահում այն ժամանակ, երբ այս մարդկանց ռմբակոծում էին, սպանում և բռնաբարում: Դա երկդիմի և տհաճ մի խաղ էր: Եվ Իդրիսն ապշած էր, որ ոչ ոք չէր նկատում այդ ամենը:

— Ինչ որ նա Ձեզ պատմեց, սուտ է: Մենք եկել ենք այստեղ՝

¹⁷ Բախշիշ — նվեր, թեյավճար:

վերահաստատելու մեր տան սեփականության իրավունքը: Այդքան բան: Ուրիշ ոչինչ:

Ամրան քմծիծաղ տվեց:

— Իհարկե, ես դա գիտեմ: Դու կարծում ես՝ ինձ կարելի է հիմարացնել: Ես ստիպված էի շփվել ռազմական հրամանատարների և Թալիբանի հետ: Ես ամեն բան տեսել եմ, և ոչ ոք չի կարող ո՛չ զարմացնել ինձ, ո՛չ հիմարացնել:

— Կարծում եմ՝ դա ձիշտ է:

— Դու ազնիվ ես,— ասաց Ամրան,— գոնե ազնիվ ես:

— Ես կարծում եմ՝ այս մարդիկ այնքան ցավերի միջով են անցել, որ մենք պետք է հարգենք նրանց: Մենք ասելով՝ նկատի ունեմ ինձ, Թիմուրին և մեզ պես մարդկանց, այն երջանիկներին, որոնք այստեղ չէին, երբ քաղաքը անխնա ռմբակոծվում էր: Մենք այդ մարդկանց հետ չէինք այդ ժամանակ և իրավունք չունենք ձևացնելու: Այդ պատմությունները, որ այս մարդիկ ստիպված են պատմել, մենք արժանի չենք լսելու: Ես ինձ կորցրել եմ:

— Ձեզ կորցրել եք:

— Լավ չեմ բացատրում:

— Չէ, ես հասկանում եմ,— ասաց Ամրան:— Այդ մարդկանց պատմությունները պարզև են Ձեզ համար:

— Այո՛, մեծ նվեր են:

Նրանք էլի գինի խմեցին և մի քիչ էլ խոսեցին: Իդրիսի համար Քաբուլ գալուց հետո սա առաջին անկեղծ խոսակցությունն էր: Այն անկաշկանդ էր. չկար այն աննշմար ծաղրը և անորսալի կշտամբանքը, որ Իդրիսը զգում էր թե՛ տեղաբնակների, թե՛ պետական ծառայողների, թե՛ օտարերկրացիների հետ զրույցներում: Նա հարցրեց Ամրային նրա աշխատանքի մասին, և կինը պատմեց, որ ՄԱԿ-ի առաքելության հետ աշխատել էր Կոստվոյում, հետո՝ ցեղասպանությունների ժամանակ՝ Ռուանդայում, Կոլումբիայում և Բուրունդիում: Նա Կամբոջայում զբաղվում էր անչափահաս մարմնավաճառների խնդրով: Այժմ մի տարի է, ինչ Քաբուլում էր, աշխատում էր մի փոքր հասարակական կազմակերպության համար հիվանդանոցում, իսկ երկուշաբթի օրերին աշխատեցնում էր շարժական մի հոսպիտալ: Ամուսնացած է եղել երկու անգամ: Երկու

անգամն էլ ամուսնալուծվել է և երեխաներ չունի: Իդրիսը դժվարա-
նում էր գուշակել Ամրայի տարիքը, ամենայն հավանականությամբ՝
նա ավելի երիտասարդ էր, քան թվում էր առաջին հայացքից: Նրա
դեմքին հանգչում էր անհետացող գեղեցկության թրթիռը, նաև մի
վայրի սեքսուալություն կար նրա փոս ընկած աչքերի տակի կա-
պույտ շրջանակների մեջ: «Մի չորս տարուց այդ կայծն էլ կանհե-
տանա»,— մտածեց Իդրիսը:

Հետո Ամրան հարցրեց.

— Ուզում եք իմանալ՝ ինչ է պատահել Ռոշիի հետ:

— Դուք պատրաստվում եք պատմելնո՞ դա:

— Կարծում եք, թե ես հարբամ՞ եմ:

— Իսկ Դուք հարբամ՞ եք:

— Մի փոքր,— ասաց Ամրան:— Բայց Դուք ազնիվ երիտա-
սարդ եք:

Եվ նա կամացուկ, թեթև նազանքով թփթփացրեց Իդրիսի ու-
սին: Դրսից եկած աֆղանները ձեզ նմանների համար ասում են, որ
դուք, ինչպես ասեմ, խցկում եք քթներդ...

— Ուզում եք ասել՝ խոթում ենք քթներս ուրիշի գործերի մեջ:

— Ա՛յ դա է:

— Պոռնոգրաֆիայի պես մի բան:

— Բայց գուցե Դուք իրո՞ք լավ մարդ եք:

— Եթե Դուք վստահեք ինձ,— ասաց Իդրիսը,— ես դա կընդու-
նեմ իբրև պարզև:

Եվ Ամրան սկսեց պատմել:

Ռոշին ապրում էր ծնողների, երկու քույրերի և փոքր եղբոր հետ
մի գյուղում, որը երրորդն էր Քաբուլից Բաղրամ ընկած ծանապար-
հին: Անցյալ ամսին՝ մի ուրբաթ օր, նրա հոր ավագ եղբայրը եկել էր
ընտանիքին այցելության: Շուրջ մեկ տարի ձգվում էր ընտանեկան
վեճը երկու եղբայրների միջև, որոնք չէին կարող կիսել այն տունը,
ուր ապրում էր Ռոշիի ընտանիքը: Ավագ հորեղբայրը կարծում էր,
որ տունը օրենքով պատկանում է իրեն, և դա ճիշտ էր, բայց եղ-
բայրների հայրը այն կտակել էր իր շատ սիրած կրտսեր որդուն:

Բայց այս անգամ հորեղբայրը խաղաղված էր և ասաց, որ ու-
զում է վերջ տալ իրենց կռվին:

Հյուրասիրության համար Ռոշիի մայրը երկու հավ մորթեց, պատրաստեց չամիչով փլավ և գնեց թարմ նոններ շուկայից: Հորեղբայրը եկավ, և եղբայրները գրկախառնվեցին ու համբուրվեցին: Ռոշիի հայրը այնպես պինդ գրկեց եղբորը, որ վերջինիս ոտքերը կտրվեցին գետնից, Ռոշիի մայրը հուզմունքից արտասվեց: Ընտանիքը նստեց ճաշի: Մի քանի անգամ փորձեցին ուտեստները: Անցան մրգերին: Հետո խմեցին կանաչ թեյ և կերան շոկոլադե փոքր կոնֆետներ: Հետո հորեղբայրը մի պահ գնաց գուգարան:

Երբ վերադարձավ, ձեռքին կացին կար:

— Ծառ կտրելու կացին էր, — ասաց Ամրան:

Նա մոտեցավ Ռոշիի հորը: Ռոշին պատմում էր, որ հայրը այդպես էլ չիմացավ՝ ինչ կատարվեց, նա ոչինչ չտեսավ:

Հետևից հարվածը համարյա գլխատեց նրան: Հաջորդը մայրն էր: Ռոշին տեսավ, որ մայրը փորձում է դիմադրել, բայց մի քանի հարված ստանալով կրծքին և դեմքին՝ լռեց: Երեխաները ծչալով դեսուդեն էին նետվում, իսկ հորեղբայրը հետապնդում էր նրանց: Ռոշիի քույրերից մեկը վազեց դեպի ելքը, բայց հորեղբայրը բռնեց նրա մազերից և խփեց գետնին: Մյուս քույրը համարյա դուրս էր պրծել, բայց հորեղբայրը վազեց նրա հետևից, և Ռոշին լսեց, թե ինչպես է նա կոտորում ննջասենյակի դուռը, հետո գոռգոռոցներ լսվեցին, ապա լռություն տիրեց:

Ռոշին որոշեց փախչել փոքր եղբոր հետ: Նրանք վազեցին դեպի մուտքի դուռը, բայց այն փակ էր: Իհարկե, հորեղբայրն էր փակել այն:

Նրանք վազեցին ետնաբակ՝ խուճապի և հուսահատության ձիրաններում մոռանալով, որ ետնաբակը դուռ չունի, ելք չունի, և պատերը չափազանց բարձր են մագլցելու համար: Ռոշին տեսավ, թե ինչպես հինգ տարեկան եղբայրն ինքն իրեն նետեց թանդուրը, որտեղ մայրն ընդամենը մի ժամ առաջ էր հաց թխել: Ռոշին լսում էր այրվող ածուխների մեջ ընկած եղբոր ձիչերը, հետո սայթաքեց և ընկավ մեջքի վրա: Վերջինը, որ նա տեսավ, կապույտ երկինքն էր և վերևից իջնող կացինը: Հետո ամեն ինչ ավարտվեց:

Ամրան լռեց: Ներսում Լեոնարդ Կոհենի կենդանի համերգի ձայնագրությունն էր: Նա երգում էր «Ով է կրակի մոտ» երգը:

Եթե Իդրիսը կարողանար մի բառ արտասանել, ինչը նա իրականում ի վիճակի չէր անելու, միևնույնն է, չէր իմանալու՝ ինչ կարելի է ասել:

Նա իհարկե անկարող զայրույթով կարող էր ինչ-որ բան ասել, եթե դա լիներ Թալիբանի, Ալ Քաիդայի կամ մի կիսախելագար մոջահեդ հրամանատարի ձեռքի գործը: Բայց այս կոնկրետ դեպքը չէր կարելի բարդել Հեքմաթյարի, Մուլա Օմարի, Բեն Լադենի կամ Ջորջ Բուշի և տեռորիզմի դեմ նրա հռչակած պատերազմի վրա: Սպանության հետևում սովորական, գրեթե առօրյա մի պատմություն էր, և այդ առօրեականությունն այն դարձնում էր առավել սահմնկեցուցիչ և հուսահատեցնող: «Անիմաստ» բառը տրոփում էր Իդրիսի մտքում: Եվ նա կրկնում էր այն: Անիմաստ բռնություն: Անիմաստ սպանություն: Կարծես կարելի է կատարել իմաստալից սպանություն:

Նա մտածեց հուսպիտալում գտնվող փոքր աղջկա՝ Ռոշիի մասին, որ նստած էր անկողնում, ոտքերն իրար կպցրած, մեջքը պատին հենած, դեմքի մանկական արտահայտությամբ: Իդրիսը մտաբերեց երեխայի սանրված գլխի ճեղքը, որից երևում էր ուղեղի մի հատվածը, վիրակապը փաթաթած էր նրա գլխին *սիկիհի*¹⁸ գլխակապի պես: Վերջապես Իդրիսը հարց տվեց.

— Ինքն է պատմել ամբողջ պատմությունը:

Ամրան դժկամորեն գլխով արեց:

— Նա շատ պարզ հիշում է: Մանրամասնությամբ: Կարող է դրվագ առ դրվագ վերարտադրել: Երանի մոռանար դա, որովհետև ամեն գիշեր մղձավանջներ է տեսնում:

— Իսկ ինչ եղավ եղբոր հետ:

— Այրվածքները շատ-շատ էին:

— Իսկ հորեղբայրը:

Ամրան ուսերը թոթվեց:

— Ասում են՝ զգույշ եղիր: Իմ աշխատանքում ասում են՝ զգույշ եղիր, եղիր արհեստավարժ: Պետք չէ անձնապես կապվել մարդու

¹⁸ Սիկի — Փենջաբի շրջանում կրոնական սիկիհիզմ կրոնի հետևորդ. երբեմն նաև կրոնական ծիսակարգի պատասխանատու, կատարող:

հետ: Բայց ես ու Ռոշին...

Երաժշտությունը կտրվեց: Հոսանքն անջատվեց, և մի քանի րոպե ամեն ինչ կորավ խավարում, և միայն լուսինն էր լուսավորում շրջակայքը: Իդրիսը լսեց մարդկանց ձայները տան ներսում: Հալոգենի լապտերները վառվեցին պատուհաններում:

— Ես պայքարում եմ նրա համար,— ասաց Ամրան առանց հայացքը բարձրացնելու,— և ինձ ոչինչ չի կարող կանգնեցնել:



Հաջորդ օրը Թիմուրը գերմանացիների հետ գնաց Իսթալիֆ քաղաքը, որը հայտնի էր իր կավագործությամբ:

— Դու պետք է գաս մեզ հետ,— ասաց նա Իդրիսին:

— Ես մնալու եմ տանը՝ մի քիչ կարդամ:

— Եղբայրս, դու կարող ես գիրք կարդալ Սան ժողովում:

— Ես հանգստի կարիք ունեմ: Անցյալ օրը շատ եմ խմել:

Գերմանացիները մեքենայով մտան և վերցրին Թիմուրին, իսկ Իդրիսը մնաց անկողնում: Նայում էր պատին կախված 60-ականների խունացած գովազդային պաստառին, որին պատկերված էին չորս շիկահեր զբոսաշրջիկներ Բենդ-է-Ամիր լճի մոտ զբոսնելիս: Այդ նկարը հիշեցնում էր Իդրիսին իր մանկությունը պատերազմից առաջ: Իսկ հիմա նա ամեն առավոտ գնում է զբոսանքի: Փոքր ռեստորանում ճաշին քաբաբ է ուտում: Դժվար է հաճույք ստանալ ուտելիքից, երբ ռեստորանի ապակիներից քեզ նայում են ջահելների մռայլ դեմքեր, նայում են, թե ինչ ես ուտում: Շատ ծնշող էր: Իդրիսը մտածեց, որ Թիմուրն ավելի լավ է համակերպվում իրադրությանը: Նա դրանից խաղ է սարքում: Բանակում ծառայողի պես նա սուլոցով մոտ է կանչում մուրացկան երեխաներին և մի քանի թղթադրամ է հանում իր նվերների կապոցից (բախշիշ): Մեկ առ մեկ բաժանում է թղթադրամները և ամեն թղթադրամի հետ կրունկները շրխկացնում ու պատվի է առնում: Երեխաներն էլ սիրում են Թիմուրին և պատասխանում են նրա ողջույններին: Թիմուրին կոչում են քեռի և մագլցում նրա ծնկներին:

Ճաշից հետո Իդրիսը տաքսի նստեց և խնդրեց, որ իրեն տանեն հիվանդանոց:

— Բայց սկզբում կանգնե՞ք շուկայի մոտ, — ասաց նա:



Տուփը ձեռքին՝ Իդրիսն անցավ նախամուտքով, խզբ-զած պատերի մոտով, անցավ դռների փոխարեն պլաստմասե վարագույրներով բաժանված սենյակով:

Ճանապարհին հանդիպեց մի տարեց մարդու՝ աչքի վիրակապով, բոբիկ ոտքերով: Տեսավ ջերմախեղդ, մուֆ սենյակներում պառկած հիվանդներին: Ամենուրեք քրտնահոտ էր փչում: Տեղ հասավ և մի փոքր վարանելով՝ հետ քաշեց վարագույրը: Իդրիսի սիրտը թրթռաց, երբ տեսավ մահճակալի ծայրին նստած երեխային: Ամրան, մահճակալի առաջ ծնկի իջած, խոզանակով լվանում էր Ռոշիի փոքրիկ ատամները:

Մահճակալի մյուս կողմում նստած էր մի վտիտ, արևից սևացած մարդ՝ խճճված մորուքով և անխնամ սև մագերով: Իդրիսի մտնելուն պես այդ մարդը վեր թռավ տեղից, ձեռքը սեղմեց կրծքին և խոնարհվեց: Իդրիսը դարձյալ ցնցվեց այն մտքից, թե ինչ արագությամբ են տեղաբնակները տարբերում արևմուտքից եկած աֆղաններին, և ինչպես են ուժը և փողը արևմտաբնակներին անսահմանափակ արտոնություններ տալիս այս քաղաքում: Տղամարդն ասաց Իդրիսին, որ նա Ռոշիի քեռին է:

— Դու վերադարձար, — ասաց Ամրան՝ ընկղմելով ատամի խոզանակը ջրի բաժակի մեջ:

— Հուսով եմ, ամեն բան նորմալ է, — ասաց նա:

— Ինչո՞ւ ոչ, — պատասխանեց Ամրան:

Իդրիսը կոկորդը մաքրեց:

— Սալան, Ռոշի՛:

Աղջիկը նայեց Ամրային՝ հայացքով թույլտվություն հայցելով: Նրա ձայնը ավելի շուտ հիշեցնում էր բեկբեկուն, բարձր շշուկ:

— Սալան:

— Քեզ նվեր եմ բերել:

Իդրիսը իջեցրեց տուփն ու բացեց այն՝ հանելով մի փոքր հեռուստացույց և տեսանվագարկիչ, և Ռոշիին ցույց տվեց չորս ֆիլմերի սկավառակներ: Խանութում սկավառակների մեծամասնությունը հնդկական ֆիլմեր էին կամ էլ մարտաֆիլմեր՝ Ջեթ Լիի, Ժան Կլոդ

Վան Դամի և Սթիվեն Սիգալի մասնակցությամբ: Բայց նա կարողացավ գտնել *E. T.*-ն, «Բերեն», «Խաղալիքների հեքիաթը» և «Երկաթե հսկան»: Այդ բոլոր ֆիլմերը նա Ամերիկայում դիտել էր իր երեխաների հետ:

Ամրան ֆարսիով հարցրեց Ռոշին, թե որ ֆիլմն է ցանկանում դիտել, Ռոշին ընտրեց «Երկաթե հսկան»:

— Բեզ դուր կգա այդ ֆիլմը,— ասաց Իդրիսը:

Նա խուսափում էր ուղիղ նայել աղջկան: Հայացքը սահում էր նրա գլխի վերքի վրայով, ուր երևում էին ուղեղի հյուսվածքի մի հատվածը խաչաձևող երակներն ու մազանոթները:

Միջանցքում էլեկտրական վարդակ կար, և Ամրան փնտրում էր երկարացման լարը, բայց երբ Իդրիսը միացրեց լարը, և պատկերը երևաց էկրանին, Ռոշին ժպտաց: Իդրիսը մտածեց, որ իր 35 տարին բոլորել է, բայց նա շատ քիչ բան գիտի աշխարհի գազանության, դաժանության և անսահման անխղճության մասին:

Ամրան ներողություն խնդրեց և գնաց մյուս հիվանդներին տեսնելու, իսկ Իդրիսը նստեց Ռոշիի կողքին և սկսեց նրա հետ միասին դիտել ֆիլմը: Սենյակում զգացվում էր աղջկա քեռու լուռ, խորհրդավոր ներկայությունը: Ֆիլմի կեսից հոսանքն անջատվեց: Ռոշին սկսեց լաց լինել, և քեռին առաջ գալով կոպտորեն բռնեց աղջկա ձեռքը: Նա մի քանի արագ, կտրուկ բառ ասաց փաշտու բարբառով, որը Իդրիսի համար անհասկանալի էր: Ռոշին ընկրկեց և փորձեց ձեռքը քաշել: Իդրիսը նայում էր նրա փոքրիկ թաթիկին, որ գրեթե կորել էր քեռու ուժեղ, սպիտակած մատնոսկրերով ձեռքի մեջ:

Իդրիսը հազավ վերարկուն:

— Ես վաղը կգամ, Ռո՛շի, և մենք միասին մեկ ուրիշ ֆիլմ կդիտենք, եթե իհարկե կուզենաս: Ուզո՞ւմ ես:

Ռոշին գունդուկծիկ եղավ վերմակի տակ, իսկ Իդրիսը, մի հայացք ձգելով քեռու վրա, պատկերացրեց, թե ինչպես կպահեր իրեն Թիմուրն այս դեպքում, Թիմուրը, որ, ի տարբերություն Իդրիսի, կարող էր անկաշկանդ պահել իրեն օտար մարդկանց հետ: Նա հաստատ կասեր. «Մեզ տասը ընկերով մենակ թողեք, խնդրում եմ»:

Քեռին ուղեկցեց Իդրիսին: Իսկ աստիճանների վրա ապշեցրեց նրան՝ ասելով. «Ես եմ այստեղ իրական զոհը, Սահիբը»: Տեսնելով

Իդրիսի դեմքի արտահայտությունը՝ ուղղեց իրեն. «Իհարկե, զոհը նա էր՝ Ռոշին: Բայց ես էլ եմ զոհ: Դուք դա հասկանում եք, Դուք էլ եք ծնունդով աֆղան, բայց օտարերկրացիներն ինձ չեն հասկանում»:

— Ես պիտի գնամ,— ասաց Իդրիսը:

— Ես *մազդուր*¹⁹ եմ, օրավարձով աշխատող և հինգ երեխա ունեմ. մեկը՝ կույր: Երբեմն մտածում եմ, թող Ալլահը ինձ ների, որ գուցե ձիշտ կլինե՞ր՝ Ռոշին էլ մյուսների պես, դե, դուք հասկացաք: Դա ավելի ձիշտ կլինե՞ր, որովհետև ո՞վ կխնամի նրան և կամուսնանա նրա հետ սրանից հետո: Դա կլինի իմ «ձիտին պարտքը»:

Իդրիսը հասկացավ, որ իրեն անկյուն են քշել, ու հանեց դրամապանակը:

— Ինչ որ կտաք, Սահիբ, ինձ համար չեմ ուզում, Ռոշիի համար եմ ուզում:

Իդրիսը տղամարդուն մի երկու թղթադրամ պարզեց: Քեռին ապշահար թարթեց աչքերը, շնջաց՝ երկու, հետո բերանն արագ փակեց՝ կարծես վախենալով, որ Իդրիսը կասի, թե սխալվել է:

— Աղջկան մի զույգ կարգին կոշիկ կառնեք,— ասաց Իդրիսը և աստիճաններով իջավ ներքև:

— Ալլահը Ձեզ պահապան, Սահիբ,— ասաց քեռին:— Դուք լավ մարդ եք: Դուք լավ ու բարի մարդ եք:



Իդրիսը այցելության եկավ Ռոշիին և մյուս, և հաջորդ օրերին: Դա դարձավ սովորություն, և նա այսուհետ ամեն օր Ռոշիի կողքին էր: Նա անունով ճանաչում էր բոլոր սանիտարներին, բուժեղբայրներին, դռնապաններին և հիվանդանոցի բակի հոգևած ու թերմսված պահակներին: Փորձում էր իր այցելությունները հնարավորինս գաղտնի պահել: Օվկիանոսից այն կողմ գտնվող կնոջը զանգելիս նա ոչ մի բառ չէր խոսում Ռոշիի մասին: Թիմուրին էլ չէր ասում, թե ուր է գնում ամեն օր, ինչու եղբոր հետ չի գնում Փաղման, ինչու է խուսափում ներքին գործերի նախարարության պաշտոնյայի հետ հանդիպումից: Բայց Թիմուրն ի վերջո պարզեց, թե ինչ է կատարվում:

¹⁹ Մազդուր — սևագործ բանվոր:

— Ապրեն,— ասաց նա,— դու հրաշալի գործ ես կատարում,— բայց ավելացրեց,— գործի՞ր զգուշությամբ:

— Այսինքն՝ ակնարկում ես, որ չպետք է այցելեմ աղջկան:

— Մենք մի շաբաթից գնում ենք, եղբայրս: Չե՞ս վախենում, որ երեխան կկապվի քեզ հետ:

Իդրիսը գլխով արեց: Մտածեց, որ Թիմուրը մի փոքր նախանձում է իր և Ռոշիի մտերմությանը, երևի նույնիսկ բարկացած է՝ կարծելով, որ խլել է նրանից հերոսություն խաղալու հնարավորությունը: Հերոս Թիմուրը այրվող շենքի փլատակներից դուրս է գալիս՝ երեխային պինդ գրկած: Ամբոխը ծափողջույններով դիմավորում է հերոսին: Իդրիսը վճռականորեն տրամադրված էր թույլ չտալու, որ Թիմուրը Ռոշիի մասնակցությամբ խաղա այդպիսի մի ներկայացում:

Թեպետ ինչ-որ առումով Թիմուրը ճիշտ էր: Նրանք տուն էին մեկնելու մի շաբաթից, և Ռոշին արդեն սկսել էր նրան կոչել կակա Իդրիս, այսինքն՝ քեռի Իդրիս: Երբ Իդրիսն ուշանում էր, երեխան անհանգստության նշաններ էր ցույց տալիս: Երբեմն Ռոշին գրկում էր Իդրիսի մեջքը, և նրա դեմքը շնչում էր խաղաղությանը: Ամենաշատը սպասում էր Իդրիսի այցելություններին: Երբեմն, երբ միասին ֆիլմ էին դիտում, Ռոշին իր թաթիկներով պինդ բռնում էր Իդրիսի ձեռքը: Անգամ, երբ Ռոշին Իդրիսի կողքին չէր լինում, նա հիշում էր աղջկա բարակ ձեռքերի դեղնավուն աղվամազը, շագանակագույն աչքերի նեղ կտրվածքը, նրա նրբագեղ ոտքերը, կլորիկ թշիկները: Պատկերացնում էր, թե ինչպես Ռոշին, ծնոտը ձեռքերին հենած, կարդում է այն մանկական գրքերը, որ ինքը գնել էր Ֆրանսիական քոլեջի մոտ գտնվող գրախանութից: Մի քանի անգամ Իդրիսը թույլ էր տվել իր երևակայությանը ծավալվել և պատկերացրել էր, թե ինչպես է Ռոշիին բերում Միացյալ Նահանգներ, ինչպես է Ռոշին ընկերանում իր երկու տղաների՝ Ջաբիի և Լեմարի հետ: Անցյալ տարի ինքն ու կինը՝ Նահիլը, քննարկել էին երրորդ երեխա ունենալու հնարավորությունը:

— Հիմա ի՞նչ ես անելու,— Ամրան հարցրեց Իդրիսի մեկնելու նախորդ օրը:

Մի քանի օր առաջ Ռոշին Իդրիսին մի նկար էր տվել, ուր

պատկերված էին հիվանդասենյակում նստած երկու մարդ հեռու-տացույց դիտելիս: Իդրիսը մատնացույց արեց երկար մազերով աղջկան:

— Սա դո՞ւ ես, Ռոշի՛:

— Այո, իսկ այս մեկն էլ դու ես, կակա՛ Իդրիս:

— Դու ժամանակին երկար մազե՞ր ես ունեցել, Ռոշի՛:

— Այո՛, քույրս քնելուց առաջ սասնում էր մազերս: Նա գիտեր, թե ինչպես է պետք սանրել, որ չցավեցնի:

— Դու երևի շատ լավ քույր ես ունեցել:

— Երբ մազերս դարձյալ աճեն, կակա՛ Իդրիս, դո՞ւ էլ կարող ես սանրել:

— Այո՛, դա երևի շատ հեռաքրքիր կլինի:

— Մի՛ գնա այստեղից, կակա՛ Իդրիս: Մի՛ հեռացիր:

— Շատ անուշիկ աղջիկ է,— ասաց Իդրիսը Ամրային:

Եվ դա ծճմարտությունն էր: Ռոշին լավ դաստիարակված և հեզաբարո երեխա էր: Իդրիսը անորոշ մեղավորության զգացումով հիշեց իր որդիներին՝ Ջաբիին և Լեմարին: Որդիներն անվերջ դժգոհում էին իրենց «տարօրինակ» աֆղանական անուններից և քիչ-քիչ վերածվում էին փոքրիկ բռնակալների, քմահաճ փոքրիկ ամերիկացի երեխաների, թեպետ ինքն ու կինը երդվել էին երեխաներին այդպիսի դաստիարակություն չտալ:

— Ռոշին հաղթել է,— ասաց Ամրան:

— Այո՛:

Ամրան հենվեց պատին: Երկու սանիտար անցան նրանց մոտով: Նրանք հրում էին հիվանդասայլակը, որի վրա պառկած էր մի փոքրիկ տղա՝ գլխի արյունոտ վիրակապով և ազդրի բաց վերքով:

— Ծագումով աֆղաններ են գալիս Ամերիկայից և Եվրոպայից: Գալիս նկարում են Ռոշիին: Խոստումներ են տալիս: Այդ նկարները տանում ցույց են տալիս իրենց ընտանիքներին: Կարծես երեխան կենդանաբանական այգու գազանիկ լինի: Ես թույլ եմ տալիս դա, որովհետև հույս ունեմ, որ նրանք կարող են օգնել: Բայց նրանք գնում և մոռացության են մատնում ամեն բան: Էլ չեն հայտնվում: Դրա համար էլ հարցնում եմ՝ հիմա ինչ ենք անելու:

— Ռոշին վիրահատության կարիք ունի, ճի՞շտ է,— ասաց Իդ-

րիսը:— Ուզում եմ օգնել, որ երեխան վիրահատվի:

Ամրան տարակուսանքով նայեց նրան:

— Մենք նյարդաբանական բաժին ունենք մեզ մոտ: Ես կխոսեմ մեր ղեկավարի հետ: Կնախապատրաստենք ամեն ինչ, որ նրան տանենք Կալիֆոռնիա՝ վիրահատության: Կգտնենք ֆինանսավորում: Եթե գործը գլուխ չգա, ինքս կվճարեմ վիրահատության համար:

— Դրամապանակի՞ց:

Իդրիսը ծիծաղեց:

— Մենք ասում ենք՝ գրպանից, բայց նույն բանն է:

— Նախ պետք է ստանանք քեռու համաձայնությունը:

— Եթե, իհարկե, քեռին հայտնվի:

Ռոշիի քեռուց լուր չկար: Նա անհետացել էր Իդրիսից երկու հարյուր դուլարը ստանալուց անմիջապես հետո:

Ամրան ժպտաց: Իդրիսը երբևէ այսպես չէր պահել իրեն: Մի հիասքանչ, արբեցնող, հրճվալից բան կար՝ հողմապտույտի գիրկն ընկնելու պես: Նա ուժերի ներհոսք էր զգում, և դրանից շունչը կտրվում էր: Ի զարմանս իրեն՝ աչքերը լցվել էին արցունքով:

— Հվալա²⁰,— ասաց Ամրան:— Շնորհակալ եմ:

Նա բարձրացավ ոտնաթաթերի վրա և ձգվելով համբուրեց Իդրիսի այտը:



— Քնեցի մի հոլանդացի աղջկա հետ,— ասաց Թիմուրը:— Երեկույթից ես գալիս:

Իդրիսը նայում էր պատուհանից դուրս և հիանում էր ներքևում կանոնավոր շարված Հինդու Քուշ լեռնաշղթայի շագանակագույն փափուկ գագաթներով: Նա շրջվեց դեպի Թիմուրը, որ նստած էր ինքնաթիռի թևի մոտ:

— Այն սևահերի հետ: Կես V վիտամին կուլ տվեցի ու լավ հոգնեցրի նրան մինչև առավոտյան աղոթքը:

— Տեր Աստված: Դու մի օր կմեծանան, թե՛ ոչ,— ասաց Իդրիսը նյարդայնացած, որովհետև Թիմուրը դարձյալ նրան զայրացնում

²⁰ Հվալա — շնորհակալ եմ (բոսնիերեն):

էր իր անհավատարմութեամբ, իր անվայելուչ վարքով և անդաստիարակ ու վատ տղայի պահվածքով:

Թիմուրը քննադատեց:

— Հիշիր, եղբայրս, այն, ինչ եղել է Քարուլում... ենթակա չէ...

— Խնդրում եմ, մի՛ ավարտիր նախադասությունդ:

Թիմուրը ծիծաղեց:

Ինքնաթիռի պոչի մասում մարդիկ հավաքված զվարճանում էին: Մեկը փաշտու լեզվով երգ էր երգում, մյուսը թամբուրայի փոխարեն թափահարում էր մի ապակե ափսե:

— Չեմ հավատում, որ հանդիպել ենք ձերուկ նաբիին,— մռթմռթաց Թիմուրը:— Աստված իմ:

Իդրիսը ծոցագրպանները քրքրեց և գտավ քնաբեր մի դեղահար ու կոպ տվեց այն առանց ջրի:

— Ես եկող ամիս կվերադառնամ,— ասաց Թիմուրը՝ ձեռքերը խաչելով կրծքին և փակելով աչքերը:— Միգուցե մի քանի անգամ ստիպված կլինենք գնալ ու գալ, բայց հետո լավ կլինի:

— Դու հավատում ես այդ տղային՝ Ֆարուք անունով:

— Գրողը տանի, իհարկե ո՛չ: Դրա համար էլ հետ եմ գալու:

Ֆարուքը Թիմուրի վարձած իրավաբանն էր: Նա մասնագիտանում էր վտարանդի աֆղանների կորսված սեփականատիրական իրավունքների ճանաչման գործում: Թիմուրը շարունակեց խոսել Ֆարուքին անհրաժեշտ փաստաթղթերի մասին, դատական նիստերը նախագահող դատավորի մասին, որը Ֆարուքի կնոջ բարեկամն էր: Իդրիսը գլուխը հենեց պատուհանին և սկսեց սպասել քնաբերի ազդեցությանը:

— Իդրիս,— կամացուկ ասաց Թիմուրը:

— Այո՛:

— Ինչքան տխուր բաներ տեսանք Քարուլում, է՛հ:

Իդրիսը մտածեց՝ «Դու լեցուն ես անօրինակ տպավորություններով, եղբայրս», իսկ բարձրաձայն ասաց.

— Այո՛:

— Ամեն քառակուսի մղոնի վրա՝ հազարավոր ողբերգություններ...

Շուտով Իդրիսի գլուխը սկսեց պտտվել, տեսողությունը մշուշ-

վեց, և սկսեց ընկղմվել թմբիրի մեջ՝ վերհիշելով իր հրաժեշտը Ռոշիի հետ: Նա բռնել էր երեխայի մատիկները, խոստանում էր, որ շուտով էլի կտեսնվեն, իսկ Ռոշին մեղմիկ արտասովում էր՝ գլուխն իր փորին դրած:



Սան Ֆրանցիսկոյի օդանավակայանից տունդարձի ճանապարհին Իդրիսը ջերմությամբ հիշեց Քաբուլի երթևեկության մոլագար քառոր: Երբեմն տարօրինակ էր թվում, որ իր «Լեքսուսը» սլանում է կոկիկ, հարթ մայրուղով, որ ճանապարհային ցուցանակներն օգնում են վարորդին կողմնորոշվելու, և որ բոլորը քաղաքավարի ազդանշան են տալիս ու զիջում: Դեմքին ժպիտ եկավ, երբ հիշեց Քաբուլի երիտասարդ, անփորձ ու անզգույշ տաքսիստներին, ում ինքն ու Թիմուրը վստահում էին իրենց կյանքը:

Կողքին նստած Նահիլը հարցերի տարափ տեղաց:

— Քաբուլն անվտանգ քաղաք է: Իսկ ուտելիքը համեղ է: Հո չի հիվանդացել, իսկ նկարներ ու տեսագրություններ արել է, թե՞ ոչ:

Նա փորձում էր մանրամասն պատասխանել՝ նկարագրելով արկերի պայթյունից ավերված դպրոցները, բնակիչներին, որ ապրում էին առանց ծածկի մնացած շենքերում, մուրացկաններին և էլեկտրաէներգիայի հաճախակի անջատումները: Բայց նույն հաջողությամբ կարելի էր բառերով նկարագրել երաժշտությունը: Նա չէր կարող կյանքի կոչել Քաբուլի ուշագրավ, հիշարժան մանրամասները: Օրինակ՝ քանդված շենքերի մեջ խոյացող մարգասրահը՝ ցուցափեղկին փակցված Շվարցենեգերի նկարով: Այդ մանրամասները մոռացվում էին, և նկարագրությունները հնչում էին անհամ, դժգույն, սովորական պատմության նման:

Մեքենայի հետևի նստարանին նստած էին Իդրիսի որդիները, որոնք հորը գոհացնելու համար լսում էին նրա պատմությունները կամ ձևացնում էին, որ լսում են: Բայց Իդրիսը զգում էր, որ տղաները ծանծրանում են: Հետո ութամյա Զաբին խնդրեց, որ հայրը մի ֆիլմ դնի: Տասնամյա Լեմարը մի փոքր ավելի դիմացավ, բայց շուտով ձեռքի համակարգչային խաղերի տուփից՝ Նինթենդո ԴՄ-ից, լավեց մեքենաների մրցավազքի աղմուկը:

— Ինչ է պատահել ձեզ, տղաներ,— Նահիլը սաստեց որդիներին:— Ձեր հայրը վերադարձել է Քաբուլից: Ձեզ չի հետաքրքրում: Հարցեր չունե՞ք նրան:

— Ամեն ինչ նորմալ է,— ասաց Իդրիսը,— հանգիստ թող նրանց:

Բայց իրականում նա դժգոհ էր որդիների անտարբերությունից: Նրանք պարզապես անտեղյակ էին, որ միայն բախտի քմահաճ վիճակախաղով են շահել իրենց արտոնյալ կյանքի իրավունքը: Եվ Իդրիսը զգաց, թե ինչպես իր և իր ընտանիքի միջև մի անդունդ է բացվում, և նույնիսկ Նահիլը անդունդի հակառակ կողմում է, որովհետև կնոջ հարցերը հիմնականում ռեստորանների կամ տան կոյուղագծի բացակայության մասին էին: Իդրիսը մեղադրական մի հայացք ձգեց իր ընտանիքի անդամների վրա, ճիշտ նույն հայացքով նրան նայում էին տեղացիները Քաբուլում:

— Սովից մեռնում եմ,— ասաց Իդրիսը:

— Ինչ կուզենայիր ուտել,— հարցրեց կինը:— Սուլի, թե՛ խտալական խոհանոցից: Մի նոր սննդի կետ է բացվել Օքրիջի մոտ:

— Եկեք աֆղանական ուտելիք գտնենք,— պատասխանեց Իդրիսը:

Նրանք գնացին էյբ Քաբոբ պանդոկը Սանժոզեի արևելյան մասում՝ հնավաճառների Բերիաս Շուկայի մոտակայքում: Պանդոկի տերը՝ Աբդուլլան, վաթսուն տարեկան ալեհեր մարդ էր՝ ցից բեղերով և պինդ ձեռքերով: Նա և կինը Իդրիսի մոտ էին բուժվում: Ռեստորան մտնելուն պես Աբդուլլան գրանցասեղանի հետևից ձեռքով արեց: Էյբ Քաբոբ պանդոկն ընտանեկան բիզնես էր: Սրահում միայն ութ սեղանիկ կար՝ կաշուն վիսիլե սփռոցներով ծածկված, ճաշացանկերը պլաստիկ քարտերի տեսքով էին, պատերին փակցված էին Աֆղանստանի տեսարաններով պաստառներ, իսկ անկյունում դրված էր գազավորված ըմպելիքներով հին սառնարանը: Աբդուլլայի գործն էր ընդունել հյուրերին, պահել հաշիվները և մաքրություն պահպանել: Նրա կինը՝ Սուլթանան, խոհանոցում էր. նա էր այդ հրաշալի ուտելիքների հեղինակը: Այժմ էլ խոհանոցի դռնից Իդրիսը նկատեց նրան: Մազերը հավաքած նոր խոհարարական գլխարկի տակ՝ Սուլթանան կանգնած էր խոհանոցային

գուրդը կկոցած աչքերով: Սուլթանան և Աբդուլլան ամուսնացել էին 1970 թ. Պակիստանում: Կոմունիստական հեղաշրջումից հետո Նրանց ապաստան տրամադրեցին Միացյալ Նահանգներում, իսկ 1982 թվականին ծնվեց Նրանց դուստրը՝ Փարին:

Հիմա Փարին պատվերներ էր ընդունում: Նա բարեկիրթ մի աղջիկ էր, որ ժառանգել էր մոր մաշկի սպիտակությունը և աչքերի զգայական խոհականությունը: Նրա կազմվածքը տարօրինակ անհամաչափ էր, նրբագեղ, բարակ իրանը չէր համապատասխանում կրծքերի լայնությանն ու ազդրերի հաստությանը: Փարիի սրունքները նույնպես անհամաչափ մեծ էին: Աղջիկը կրում էր իր ամենօրյա լայն շոջազգեստներից մեկը:

Իդրիսը և Նահիլը պատվիրեցին գառան միս՝ շագանակագույն բրնձով և խմորագնդերով: Տղաները նախընտրեցին *շափլի քաբաբ*²¹, որովհետև այդ ուտեստը առավելագույնս հիշեցնում էր համբուրգերը: Երբ սպասում էին պատվերին, Ջաբին սկսեց պատմել, որ իրենց ֆուտբոլի թիմը խաղում է եզրափակիչում, իսկ ինքն էլ աջակողմյան խաղացող է: Խաղը տեղի կունենա կիրակի: Իսկ Լեմարն ասաց, որ ելույթ ունի շաբաթ օրը՝ կիթառ է նվագելու:

— Ինչ ես նվագելու,— դանդաղ ասաց Իդրիսը՝ զգալով ժամային գոտիների տարբերության ազդեցությունը:

— «Ներկիր այն սև գույնով» երգը:

— Շատ լավ է:

— Վստահ չեմ, որ լավ ես պարապել,— ասաց Նահիլը մեղմ հանդիմանանքով:

Լեմարը, որ ճմռթում էր թղթե անձեռոցիկը, զցեց այն:

— Մայրիկ, դու իսկապես չես տեսնում, թե ինչ եմ ես քաշում ամեն օր: Ես այնքան պարտականություններ ունեմ:

Ճաշի ընթացքում Աբդուլլան մոտեցավ ողջունելու իր հյուրերին՝ ձեռքերը մաքրելով մեջքին կապած գոգնոցով: Հարցրեց՝ արդյոք հավանել են ուտելիքը, ինչ կուզեն էլի:

Իդրիսն ասաց, որ ինքն ու Թիմուրը հենց նոր են վերադարձել Քաբուլից:

²¹ Չափլի քաբաբ — կոտլետանման քաբաբ:

— Իսկ ինչ գործի է մեր սիրելի Թիմուրը,— հարցրեց Աբդուլլան:

— Ինչպես միշտ, լավ գործի չէ:

Աբդուլլան ժպտաց: Իդրիսը գիտեր, թե որքան է Աբդուլլան սիրում Թիմուրին:

— Իսկ ինչպես են պանդոկի գործերը:

Աբդուլլան հառաչեց:

— Պարոն Բաշիրի, եթե ես ուզենամ մեկին անիծել, կմաղթեմ, որ նա դառնա ռեստորանի տեր:

Հետո նրանք դուրս եկան ռեստորանից և նստեցին մեքենան, ու Լեմարը հարցրեց.

— Հայրիկ, նրանք բոլորին ձրի են կերակրում:

— Իհարկե ոչ,— ասաց Իդրիսը:

— Իսկ ինչո՞ւ մեզնից փող չվերցրին:

— Մենք աֆղան ենք, բացի դրանից՝ ես նրա բժիշկն եմ:

Բայց Իդրիսի պատասխանը ճիշտ էր միայն մասամբ: Իդրիսը կարծում էր, որ իրական պատճառը Թիմուրն էր, ով տարիներ առաջ Աբդուլլային պարտք էր տվել ռեստորան բացելու համար:

Տանը Իդրիսը զարմանքով հայտնաբերեց, որ բոլոր գորգերը հանված են սենյակից, և բացվել են աստիճանների տախտակներն ու մեխերը: Հետո մտաբերեց, որ ծրագրել էին վերանորոգել տունը՝ գորգերի փոխարեն կեռասենու փայտից մանրատախտակ խփել: Մանրատախտակի գույնն առանձնահատուկ երանգ ուներ, որ կոչվում էր «պղնձե թեյնիկ»: Խոհանոցի դռները հարթեցված էին, իսկ միկրոալիքային վառարանի տեղում էլ բաց անցք էր մնացել: Նահիլն ասաց, որ երկուշաբթի միայն օրվա կեսն է աշխատում, և դրա համար կարող է առավոտյան հանդիպել մանրատախտակ խփողների և Ջեյսունի հետ:

— Ջեյսո՞ւն:— Հետո հիշեց Ջեյսուն Սփիրին, որը հարդարման դիզայնի մասնագետ էր:

— Նա գալու է չափագրումներ անելու և արդեն մեզ իբրև զեղչ տրամադրել է պրոյեկտոր և դինամիկ: Նա երեք բանվոր կուղարկի, որ չորեքշաբթի գործը սկսեն:

Իդրիսը գլխով արեց: Տեսային կինոթատրոնը իր գաղափարն ու ցանկությունն էր, բայց այժմ նա շփոթմունքի մեջ էր և դժգոհ էր

ամեն ինչից: Ջեյսոն Սփիրը, Նոր սենյակները, պղնձագույն մանրատախտակը, իր երեխաների 160 դուարանոց վերնաշապիկները, իր անկողիների մետաքսե ծածկոցները և Նաև այն եռանդը, որ ինքն ու Նահիլը ծախսում էին այդ բոլորը ձեռք բերելու համար, այդ բոլոր ձգտումները այժմ թվում էին ավելորդ և թեթևամիտ: Դա հիշեցնում էր միայն այն անդունդը, որն ընկած էր Իդրիսի ներկայիս կյանքի և Քարուլի իրականության միջև:

— Ի՞նչ է պատահել, սիրելիս:

— Ժամային գոտու փոփոխություն: Քարուլում եմ մի փոքր ննջել միայն:

Շաբաթ օրը Նա գնաց Լեմարի ելույթին, իսկ կիրակի՝ Ջաբիի ֆուտբոլային խաղը դիտելու: Երկրորդ խաղակեսին գնաց քնելու մեքենայի մեջ, գոնե կես ժամով: Թեթևացած տեսավ, որ Ջաբին իր բացակայությունը չնկատեց: Կիրակի երեկոյան մի քանի հարևաններ եկան ճաշի: Նրանք հպանցիկ նայեցին Քարուլում արված նկարները և մեկ ժամ քաղաքավարությամբ դիմացան Քարուլի մասին տեսաֆիլմի դիտմանը: Իդրիսը չէր ցանկանում ցուցադրել այդ ֆիլմը, բայց Նահիլը պնդեց: Ճաշից հետո հարևանները սկսեցին հարցուփորձ անել Նրան աֆղանական իրադարձությունների մասին: Իդրիսը փոքր ումպերով խմում էր մոհիտոն և կարճ պատասխաններ էր տալիս:

— Չեմ էլ պատկերացնում՝ ինչ է կատարվում այնտեղ,— ասաց Սինթիան: Նա փիլատեսի մարզիչ էր այն մարզասրահում, ուր մարզվում էր Նահիլը:

— Քարուլը...— Իդրիսը փնտրում էր ճիշտ ձևակերպումը:

— Քարուլում ամեն մղոնի վրա հազարավոր ողբերգություններ են ծավալվում:

— Այնտեղ հասնելով՝ հաստատ մշակութային ցնցում ստացաք, ձիջտ է:

— Այո՛, այդպես է:

Իդրիսը չուզեց ասել, որ իրական մշակութային ցնցում ստացել է տուն վերադառնալուց հետո:

Ի վերջո խոսակցության թեման փոխվեց, և բոլորը սկսեցին խոսել թաղամասում տեղի ունեցած գողությունների մասին:

Անկողնում պառկած՝ Իդրիսն ասաց կնոջը:

— Կարծում ես, մենք պիտի այս ամենը ունենամք:

— Այս ամենը,— հարցրեց Նահիլը:

Նա երևում էր հայելու մեջ՝ վրացարանի առջև կռացած, ու ատամներն էր մաքրում խոզանակով:

— Դե, այս տունը: Եղած—չեղածը:

— Դու ուզում ես ասել, որ մենք այս ամենի կարիքը չունենք:— Նահիլը թեքեց վրացարանի մեջ և ողողեց կոկորդը:— Թե՛ կարծում ես, որ մեր ունեցածն ավելին է, քան մեզ անհրաժեշտ է: Մենք շատ ենք աշխատել, Իդրիս: Հիշիր դա: Բժշկական քոլեջի ընդունելության քննությունները, իրավաբանական դպրոցի ընդունելության քննությունները, առանց քաղաքացիության ժամանակավոր բնակության տարիները: Մեզ ոչ ոք ոչինչ չի տվել հենց այնպես: Մենք ոչ մեկից ներողություն խնդրելու կարիք չունենք:

— Մեր տնային կինոթատրոնի փողով Աֆղանստանում կարելի է մի դպրոց կառուցել:

Նահիլը մտավ ննջասենյակ, նստեց անկողնուն, հանեց աչքերի լինզաները: Նրա կիսադեմը թովիչ էր: Իդրիսը սիրում էր նրա ճակատի թեթև կորությունը, փոքր քիթը, ցցուն այտոսկրերն ու նրբագեղ պարանոցը:

— Դե, և՛ այն կարող ես անել, և՛ այն,— ասաց նա՝ թարթելով արցունքակալած աչքերը:— Չեմ հասկանում, մի՞թե չես կարող:

Մի քանի տարի առաջ Իդրիսը պարզեց, որ Նահիլը օգնում է կոլումբացի մի տղայի՝ Միգել անունով: Կինն Իդրիսին այդ մասին ոչինչ չէր պատմել, և Իդրիսը տարիներ շարունակ անտեղյակ էր այդ փաստից, քանի որ կինն էր զբաղվում թե՛ նամակագրությամբ, թե՛ ֆինանսներով: Եվ Իդրիսը չէր էլ իմանալու, եթե մի օր չտեսներ, որ կինը կարդում է Միգելի նամակը, որը վանամայրը թարգմանել էր իսպաներենից: Նամակին կից մի բարձրահասակ, ամրակազմ տղայի նկար կար, որ կանգնած էր ծղոտե խրճիթի մոտ՝ ձեռքին ֆուտբոլի գնդակ: Հետևում միայն կիսաքաղց կովերն էին և կանաչ բլուրները: Տասնմեկ տարի շարունակ Նահիլի դրամավճարները վերածվում էին Միգելի լուսանկարների և վանամոր շնորհակալական նամակների:

Նահիլը հանեց մատանիները:

— Ինչ է պատահել: Դու մեղավոր ես զգում, որ կարողացել ես պահպանել գոյությունդ:

— Ուղղակի սկսել եմ իրերն այլ կերպ տեսնել:

— Հրաշալի է: Օգտագործիր այդ նոր մոտեցումներդ, բայց մի փորփորիր ինքդ քեզ:

Ժամային գոտիների տարբերության պատճառով Իդրիսն այդ գիշեր տառապեց անքնությամբ: Նա մի քիչ գիրք կարդաց, ներքևում դիտեց «Արևմտյան թև» հաղորդման կրկնությունը և ի վերջո միացրեց համակարգիչը հյուրերի սենյակում, որը Նահիլը դարձրել էր աշխատասենյակ: Ամրան նամակ էր ուղարկել, որտեղ հույս էր հայտնում, թե նա բարեհաջող տուն է հասել, և ընտանիքը ողջ-առողջ է: Ամրան գրում էր, որ Քաբուլում սաստիկ անձրևում է, փողոցները ամբողջովին ցեխ են, և ցեխը հասնում է մինչև մարդկանց կոճերը: Անձրևը որոշ տեղերում ջրհեղեղ է առաջացրել, և երկու հարյուր ընտանիք ուղղաթիռով տեղափոխվել են Քաբուլից հյուսիս ընկած Շոմալի բնակավայրը: Անվտանգության միջոցառումները խստացվել էին, որովհետև Քաբուլը աջակցում էր ամերիկյան իշխանություններին իրաքյան պատերազմում, և բոլորն էլ ակնկալում էին պատասխան հարվածներ Ալ Քաիդայից: Նամակի վերջին նախադասությունն էր. «Խոսել եք հիվանդանոցի տնօրենի հետ»:

Նամակի վերջում Ամրան Ռոշիի կողմից մի պարբերություն էր ավելացրել.

«Սալան, կակա՛ Իդրիս»

Ինչալլահ, որ Դուք բարեհաջող հասել եք Նահանգներ: Ամեն օր ես մտածում եմ Ձեր մասին: Ամեն օր նայում եմ Ձեր բերած ֆիլմերը ու բոլորն էլ հավանում եմ: Շատ տխուր եմ, որ Դուք այստեղ չեք, ու մենք միասին չենք նայում այդ ֆիլմերը: Ես լավ եմ, իսկ իմ Ամրա ջանը լավ խնամում է ինձ: Իմ անունից բարևեք Ձեր ընտանիքին: Ինչալլահ, որ մենք շուտով հանդիպենք Կալիֆոռնիայում: Հարգանքով՝ Ռոշաննա»:

Իդրիսը պատասխան նամակ գրեց Ամրային, նախ իր շնորհակալությունը հայտնեց, ապա՝ իր ափսոսանքը ջրհեղեղի կապակ-

ցությամբ: Ասաց, որ այս շաբաթ Ռոշիի հարցը կքննարկի հիվանդանոցի տնօրենի հետ: Հետո ավելացրեց.

«Բարև, Ռոշի՛ ջան

Շնորհակալ եմ գեղեցիկ նամակիդ համար: Ուրախ եմ, որ քեզնից լուր ունեցա: Շատ եմ մտածում քո մասին: Ընտանիքիս էլ պատմել եմ, և նրանք, մանավանդ Ջաքին և Լեւնարը՝ իմ տղաները, շատ են ուզում քեզ տեսնել: Սիրով՝ կակա Իդրիս»:

Նա անջատեց համակարգիչը և գնաց քնելու:



Երկուշաբթի օրը Իդրիսը աշխատասենյակում ինքնապատասխանիչի վրա գտավ բազմաթիվ հեռախոսային հաղորդագրություններ: Մարդիկ խնդրում էին վերանշանակել դեղերն ու սպասում էին Իդրիսի

հաստատմանը: Նրա էլեկտրոնային փոստը նույնպես լեցուն էր նամակներով: Նա համակարգչի վրա վերանայեց իր աշխատանքային գրաֆիկը և սրտնեղեց՝ տեսնելով, որ բոլոր ժամերը զբաղված են այցելություններով: Տհաճություն զգաց, երբ տեսավ, որ գրաֆիկի մեջ նշված էր նաև տիկին Ռամուսենի անունը, որը բացառիկ անդուր, կռվազան մի էակ էր՝ անորոշ փստանիշների մի փնջով, որոնք բուժման ենթակա չէին: Իդրիսը քրտնեց, երբ հիշեց այդ տիկնոջ թշնամական և պահանջկոտ պահվածքը: Իսկ նամակներից մեկը իր տնօրեն Ջոան Շեֆերից էր, որը տեղեկացնում էր, որ իր թոքաբորբի փստորոշումը սխալ էր, իրականում հիվանդը տառապում էր սրտի իշեմիկ հիվանդությամբ: Այս դեպքը եկող շաբաթ պետք է ցուցադրվեր կոլեգիալ հետազոտության ժամանակ: Դա ամենամայա վիդեոկոնֆերանս էր, որի ընթացքում բոլոր բաժանմունքների բժիշկները դիտում էին չիրապարակված անուններով բժիշկների թերացումները ուսուցողական նպատակներով: Իդրիսը լավ գիտեր, որ թեպետ անունները չէին նշվում, իրականում վիդեոկոնֆերանսի մասնակիցների առնվազն կեսը գիտեր մեղավորի անունը:

Իդրիսը գլխացավ զգաց:

Այդ օրը նա իր գրաֆիկից սարսափելիորեն հետ էր ընկնում, որովհետև ասթմայով տառապող մի հիվանդ էկավ առանց նախ-

Նական պայմանավորվածության: Նա կարիք ուներ շնչառությունը կարգավորող դեղերի: Նաև պետք էր ուսումնասիրել նրա ճգնաժամային իրավիճակները և թթվածնային հագեցվածության աստիճանը: Միջին տարիքի մի կատարածու, ում Իդրիսը վերջին անգամ տեսել էր երեք տարի առաջ, որ եկել էր ներքին միոկարդի զարգացող ճեղքվածքով: Իդրիսը մինչև կեսօր ոչինչ չկերավ, ապա խորհրդասենյակում, որտեղ բժիշկներն էին ճաշում, փորձեց արագ ուտել հնդկահավով չոր սենդվիչը, որ կարողանա հասցնել ընդունել մյուս հիվանդներին: Նույն հարցերը տալիս էին նաև իր գործընկերները: Քաբուլն արդյոք ապահով է: Ի՞նչ են աֆղանները մտածում իրենց երկրում Միացյալ Նահանգների ներկայության մասին: Իդրիսը պատասխանում էր լակոնիկ ու միապաղաղ, որովհետև մտքին տիկին Ռամուսսենի այցելությունն էր, ձայնային փոստում չպատասխանած նամակներ կային, նա դեռ պետք է ստորագրեր դեղատոմսերը, նրա աշխատանքային օրակարգում երեք համընկնում կար, մոտենում էր կոլեգիալ վիդեոկոնֆերանսի ժամը, իսկ շինարարները սղոցում, մեխում և փորում էին տանը: Աֆղանստանի մասին խոսելը (Իդրիսն ապշած էր, թե ինչ արագ և աննկատ դա կատարվեց) դարձել էր վերջերս դիտած մի զգայացունց ֆիլմի վերապատմում, որի գործած ազդեցությունն արդեն սկսել էր թուլանալ:

Այդ շաբաթը Իդրիսի պրոֆեսիոնալ գործունեության մեջ երևի ամենալարվածն էր, նա այդպես էլ ժամանակ չգտավ Ջոան Շեֆերի հետ խոսելու Ռոշիի մասին, թեև մտադիր էր: Նրան տիրել էր մի մռայլ տրամադրություն: Նա գրեթե չէր շփվում որդիների հետ և սրտնեղում էր իրարանցման և աղմուկի պատճառով: Քունն էլ դեռ չէր կարգավորվել: Ամրայից երկու նամակ էլ ստացավ և տեղեկացավ Քաբուլի նորություններից: Վերաբացվել էր Ռաբիա Բալխին՝ կանանց հիվանդանոցը: Կարգայի կառավարությունը կաբելային հեռուստատեսությանը թույլատրել էր հաղորդումներ հեռարձակել: Սպասվում էին քննադատական հարձակումներ իսլամական ֆունդամենտալիստների կողմից: Ամրան նաև գրել էր, որ իր մեկնելուց հետո Ռոշին ինքնամփոփ է դարձել, և հետաքրքրվում էր՝ արդյոք Իդրիսը խոսել է իր ղեկավարի հետ: Իդրիսը մատները կտրեց

ստեղնաշարից, հետո դարձյալ սկսեց տպել: Նա ամոթի սուր զգացում ունեցավ, քանզի Ամրայի նամակը զայրացրել էր իրեն: Եվ նա հազիվ զսպեց իր մղումը, որ մեծատառ ընդգծված տառերով չտպի պատասխանը. «Երբ ժամանակը գա, կասեմ»:



Հուսով եմ, ամեն բան բարեհաջող ավարտվեց Ձեզ համար:

Ջոան Շեֆերը նստած էր սեղանի մոտ՝ ձեռքերը ծնկներից դրած: Այդ կինը միշտ եռանդով լի էր: Դեմքը կլոր էր, մազերը՝ սպիտակ ու խիտ: Բթին դրած նեղ ակնոցի վրայից Ջոանը մի հայացք զցեց Իդրիսի վրա:

— Իհարկե, հասկանում եք, մենք չէինք ուզում վիրավորել Ձեզ:

— Իհարկե,— ասաց Իդրիսը,— հասկանում եմ:

— Վատ չզգաք: Նման դեպք յուրաքանչյուրիս հետ կարող է պատահել: Սրտի կաթվածը և թոքաբորբի ռենտգենի արդյունքները երբեմն կարելի է շփոթել:

— Շնորհակալ եմ, Ջոան:

Իդրիսը ոտքի ելավ, բայց դռան մոտ հապաղեց:

— Ջոան, մի բան կար, որ ուզում էի քննարկել Ձեզ հետ:

— Իհարկե, իհարկե, նստե՛ք:

Իդրիսը դարձյալ նստեց և սկսեց պատմել Ջոանին Ռոշիի մասին, պատմեց նրա վնասվածքի մասին, նաև ավելացրեց, որ Վազիր Ակբար Խանի հիվանդանոցը այդպիսի բուժման համար հնարավորություններ չունի: Ասաց, որ Ամրային և Ռոշիին խոստացել է: Բարձրաձայն արտաբերելով այդ խոսքերը՝ Իդրիսը զգաց իր խոստումների և պարտավորվածության ամբողջ ծանրությունը: Քաբուլում դա այդքան դժվար չէր թվում, երբ միջանցքում խոսք տվեց Ամրային, իսկ վերջինս համբուրեց նրա այտը: Իդրիսը անհանգստությամբ որսաց, որ ինքը զոջում է իր խոստումների համար:

— Աստված իմ, Իդրիս,— Ջոանը գլուխը թափ տվեց:— Ողջունում եմ արածդ, բայց ինչ սարսափելի է: Խեղճ երեխա: Պատկերացնելն անգամ անհնար է:

— Գիտեմ,— ասաց Իդրիսը:— Կարո՞ղ է հիվանդանոցը վճարել Ռոշիի վիրահատության ծախսը, ավելի շուտ՝ վիրահատություններ-

րի: Կարծում եմ՝ նրան մի քանի միջամտություն է անհրաժեշտ:

Ջոանը հառաչեց:

— Շատ կուզենայի, բայց խորագույնս կասկածում եմ, որ տնօրենների խորհուրդը հավանություն կտա դրան: Շատ խիստ կասկածում եմ: Մենք վերջին հինգ տարին վնասով ենք աշխատում: Կարծում եմ, կլինեն նաև շատ բարդ իրավական խնդիրներ:

Ջոանը դադար տվեց՝ գուցե սպասելով առարկությունների, բայց Իդրիսը միայն ասաց:

— Ես հասկանում եմ:

— Պետք է մի մարդասիրական կազմակերպություն գտնենք, որ զբաղվում է նման հարցերով: Ջանքեր կպահանջվեն, բայց դե...

— Ես կզբաղվեմ դրանով: Շնորհակալ եմ, Ջոան:

Նա վեր կացավ և զարմանքով հասկացավ, որ թեթևացած ու ազատագրված է զգում ստացած պատասխանից:



Տնային կինոթատրոնի տեղադրումը ևս մեկ ամիս տևեց, բայց դա իրական հրաշք էր: Լուսարձակից դուրս եկող պատկերը տարածվում էր առաստաղի վրա, այն հստակ էր, իսկ 102 մատնաչափ Էկրանին պատկերվող նկարները զարմանալիորեն կենդանի էին երևում: Յոթանասունմեկ ալիքների համասփյուռ ծայնը, գրաֆիկ էկվալայզերները և բասերի ձայնասփյուռները տեղադրված էին անկյուններում և ապահովում էին հրաշալի ձայնային էֆեկտներ: Նրանք դիտեցին «Կարիքյան ծովի ծովահենները» ֆիլմը, տղաները հիացած էին տեխնիկական հնարքներով: Նստած Իդրիսի կողքին՝ նրանք պոպկորն էին ուտում մի դուլից և աննկատ քնեցին ճակատամարտի տեսարանի ժամանակ:

— Ես կպառկեցնեմ նրանց:

Նա գրկեց մի տղային, հետո՝ մյուսին: Տղաները մեծանում էին, մարմինները ձգվում էին անասելի արագությամբ: Նա տեղավորեց երկուսին էլ, և սիրտը սողոսկեց մի տխուր մտահոգություն իր որդիների ապագայի համար: Մեկ-երկու տարուց նրա դերը իր երեխաների կյանքում աստիճանաբար կնվազի: Տղաներին կգրավեն այլ բաներ, նրանք կհիանան ուրիշ մարդկանցով և ինչ-որ տեղ կամա-

չեն ծնողներից: Իդրիսը կարոտով մտաբերեց այն պահը, երբ երեխաները փոքր էին, անօգնական և ամբողջովին կախված էին իրենից: Նա հիշեց, թե ինչպես էր Ջաբին սարսափում դիտահորերից և նրանց շուրջը լայն շրջանակներ էր գծում: Մի անգամ՝ հին ֆիլմերի դիտման ժամանակ, Լեմարը հարցրեց՝ արդյոք իր մանկության աշխարհն էլ ֆիլմի պես սև ու սպիտակ էր: Այդ հիշողությունից Իդրիսը ժպտաց և համբուրեց զավակներին:

Իդրիսը, նստած մթության մեջ, հսկում էր որդիների քունը: Նա սխալ կարծիք ուներ իր որդիների մասին և անարդար էր դատում նրանց: Եվ նաև չափազանց խիստ էր դատում ինքն իրեն: Նա հանցագործ չէ և ազնվաբար վաստակել է իր բարեկեցությունը: Իննսունականներին իր ծանոթ տղաների մեծ մասը զվարճանում էին ակումբներում և քարշ էին գալիս կանանց հետևից, մինչդեռ ինքը մինչև կոկորդը թաղված էր գրքերի մեջ և հերթապահում էր հիվանդանոցի միջանցքներում՝ մոռացության տալով թե՛ զվարճությունները, թե՛ հանգիստը, թե՛ քունը: Քսան տարեկանից նա իր երիտասարդությունը նվիրաբերել է բժշկությանը և վճարել է իր բոլոր պարտքերը: Եվ ինչո՞ւ նա պետք է վատ զգա: Սա իր ընտանիքն է, և սա իր կյանքն է:

Վերջին ամսվա ընթացքում Ռոշին կարծես վերափոխվել էր՝ նմանվելով մի գրական կերպարի: Նրանց կապվածությունը նվազել էր: Այն անակնկալ մտերմությունը, որ Իդրիսը զգում էր հիվանդանոցում, անփոխարինելի ու ջերմ կապից վերածվել էր ճանճրալի պարտականության: Ջգացմունքը կորցրել էր իր ուժը: Նա մտածում էր, որ առաջին պահի կատաղի վճռականությունը, որ տիրել էր իրեն հիվանդանոցում, իրականում մի ցնորք էր, խաբկանք, կարծես ընկած լիներ թմրամիջոցի ազդեցության տակ: Այժմ շոշափելի էր դարձել նաև հեռավորությունը Իդրիսի և Ռոշիի միջև: Այդ ամենը անորոշ, անհաղթահարելի արգելք էր դարձել, իսկ Ռոշիին տված իր խոստումը այժմ թվում էր մի ջղաձիգ սխալմունք, սեփական ուժերի, կամային հատկանիշների և բնավորության անիմաստ գերարժևորում: Այդ վերելքը արդեն մոռացվել էր, և ակնհայտ էր դարձել մի բան՝ Իդրիսը նման բարձր զգացմունքների ունակ չէ: Վերջին երկու շաբաթվա ընթացքում նա երեք նամակ ստացավ Ամրայից.

մեկը կարդաց ու չպատասխանեց, իսկ վերջին երկու նամակները ջնջեց առանց կարդալու:



Գրախանութի հերթը ձգվում էր ցուցադարանից մինչև վաճառասեղանը: Հերթի մեջ մոտ տասներեք-տասն-չորս հաճախորդ կար: Մի բարձրահասակ, լայնադեմ կին փոքր դեղին թերթիկներ էր բաժանում հերթում կանգնածներին, որ գրեն իրենց անունները և այն գրությունը, որ կուզենային տեսնել գրքի վրա: Մի վաճառող հերթի սկզբում գնորդներին օգնում էր բացելու տիտղոսաթերթը:

Իդրիսը նույնպես հերթի սկզբում էր՝ գիրքը ձեռքին: Նրանից առաջ մի կին էր կանգնած՝ հիսունին մոտ, շատ կարճ կտրած շեկ մազերով: Կինը շրջվեց և հարցրեց.

— Կարդացե՞լ եք գիրքը:

— Ո՛չ,— ասաց Իդրիսը:

— Պատրաստվում ենք ընթերցումների անելու մեր գրական ակումբում: Այսօր իմ հերթն է գիրք ընտրելու:

— Ա՛հ...

Կինը խոժոռվեց և ձեռքը դրեց կրծքին:

— Հուսով եմ, որ մարդիկ կկարդան այն: Այնքան հուզիչ և ոգեշնչող գիրք է: Հուսով եմ՝ ֆիլմ կնկարահանվի այդ գրքի հիման վրա:

Իդրիսը ժճմարտությունն ասաց: Նա չէր կարդացել այդ գիրքը և վստահ չէր, որ երբևէ կկարողանար կարդալ այն: Նրա քաջությունը չէր բավականացնի ծանաչելու իրեն այդ գրքում: Բայց դա կարդալու են ուրիշները: Եվ կարդալուց հետո բացահայտելու են, թե ով է ինքը՝ Իդրիսը: Բոլորը՝ իր կինը, որդիները, գործընկերները: Այդ մտքից Իդրիսը սրտխառնոց զգաց:

Նա կրկին բացեց գիրքը, թերթեց ծանոթագրությունները, կարդաց համահեղինակի կենսագրությունը, ով էլ իրականում գրի էր առել այդ պատմությունը: Նայեց գրքի նկարին, որի վրա նախկին վերքերի հետքն էլ չկար: Եթե սպի էր մնացել, այն խնամքով ծածկված էր խիտ, սև, գանգուր մազերով: Ռոշիի հագին ոսկե ուլունքներով մի բլուզ էր, վզին տերողորմյայի մանյակն էր, ականջներին՝

լազուրիտե՛ ականջօղեր: Նկարում նա, ծառին հենված, նայում էր ֆոտոխցիկին և ժպտում: Նա հիշեց Ռոշիի նրբիկ մատիկները, որ քաշում էին իր հագուստից՝ մի՛ գնա, մի՛ հեռացիր, կակա: Այդ երիտասարդ կնոջ մեջ նշույլ-իսկ չէր մնացել այն դողողօջուն փոքր էակից, ում վեց տարի առաջ նա առաջին անգամ տեսավ վարագույրի հետևում:

Իդրիսը նայեց շնորհակալական ուղերձին, որ տպված էր գրքի տիտղոսային էջին. *«Նվիրում եմ իմ կյանքի երկու պահապան հրեշտակներին՝ մորս՝ Ամրային, և իմ Կակա Թիմուրին: Ձեզ եմ պարտական այն ամենի համար, ինչ ունեմ հիմա»:*

Հերթը շարժվեց առաջ: Կարճ կտրած մազերով շիկահեր կինը ստորագրել տվեց իր գիրքը: Հետո մի կողմ գնաց, և Իդրիսը սրտի ուժգին բաբախյունով առաջ եկավ: Ռոշին հայացքը բարձրացրեց: Նա հագել էր վառ դեղին բլուզ, ուսերին աֆղանական շալ էր, ականջներին՝ արծաթյա ականջօղեր: Աչքերն ավելի մուգ էին, քան հիշում էր Իդրիսը, իսկ մարմինը ստացել էր կանացի կորուսյուններ: Նա անթարթ նայում էր Իդրիսի դեմքին՝ ցույց չտալով, որ ճանաչել է նրան, և թեև դեմքին քաղաքավարի ժպիտ կար, ընդհանուր արտահայտությունը կրում էր մի հեռավոր, խաղացկուն, խորամանկ ու հանդուգն ծանոթության դրոշմ: Այդ հայացքը տակնուվրա արեց Իդրիսին, և նա միանգամից մոռացավ բոլոր այն խոսքերը, որ պատրաստել էր, նույնիսկ գրի էր առել ու տանը փորձել արտասանել: Այդպես էլ չկարողացավ մի բառ ասել և մնաց կանգնած՝ կատարյալ հիմարի պես:

Խանութի վաճառողը հազաց:

— Տվե՛ք գրքի Ձեր օրինակը, պարո՛ն, ես կբացեմ տիտղոսաթերթը, որ Ռոշին ստորագրի:

Իդրիսը նկատեց, որ ամուր կառչել է գրքին: Իհարկե, նա չէր եկել այստեղ, որ ստանա հեղինակի ստորագրությունը: Կատարվածից հետո դա կլիներ անպատկառություն, ծիծաղելի լպիրշություն: Բայց Իդրիսը գիրքը տվեց վաճառողուհուն, որ բացի այն ծիշտ տեղում, և Ռոշին ստորագրեց: Նա դեռ հնարավորություն ուներ ինչ-որ բան ասելու և ոչ այն պատճառով, որ խոսքերը կարող էին մեղմել իրավիճակը, այլ որովհետև իրեն պարտավորված էր զգում: Բայց

երբ վաճառողը վերադարձրեց գիրքը, նա չկարողացավ ի մի բերել բառերը: Այդ պահին երագում էր Թիմուրի համարձակության գեթ մի նշույլը ունենալու մասին: Նա կրկին նայեց Ռոշիին, որն արդեն հայացքը ուղղել էր հերթում կանգնած մեկ այլ մարդու:

— Ես,— ուզեց մի բան ասել նա:

Վաճառողը միջամտեց.

— Հերթը պիտի առաջ գնա, պարոն:

Իդրիսը գլուխը կախ հեռացավ խանութից: Մեքենան կանգնեցրել էր գրախանութի հետևում: Դեպի մեքենա տանող ճանապարհը ամենաերկարն էր իր կյանքում: Նա բացեց մեքենայի դուռը և մի պահ դադար տվեց: Ձեռքերը դողում էին, բայց նորից սկսեց թերթել գիրքը: Ռոշին չէր ստորագրել. երկու նախադասություն էր գրել անգլերեն:

Իդրիսը փակեց գիրքը, հետո փակեց աչքերը: Կարծես պիտի թեթևություն զգար, բայց մի կեսը այլ բան էր ուզում: Երևի կուզենար, որ Ռոշին արհամարհական ծամաձոռեր դեմքը, ատելությամբ և զզվանքով մի քանի բառ շարտեր իր դեմքին: Կուզենար, որ պայթեր բարկությունից, և դա երևի ավելի լավ կլիներ: Բայց փոխարենը աղջիկը դիվանագիտական մի օտարացումով անտեսեց նրան: Մի երկտող էր գրել. «Մի՛ մտահոգվեք: Իմ գրքում Ձեր մասին հիշատակում չկա»: Ճիշտն ասած՝ սա բարեգործություն էր: Նա պետք է որ թեթևացած զգար, բայց ցավ էր զգում, և այդ ցավի հարվածը նման էր մարդու գլխին իջնող կացնի հարվածի: Ծփի ծառի տակ մի նստարան կար: Իդրիսը գիրքը թողեց այդ նստարանին, վերադարձավ մեքենայի մոտ և նստեց դեկին: Որոշ ժամանակ անց միայն կարողացավ հավաքել ինքնատիրապետումը, բանալին պտտեց և բջեց հեռացավ:

Վ Ե Գ Ե Ր Ո Ր Դ

Փ Ե Տ Ր Վ Ա Ր , 1974

Խմբագրական ուղերձ

Պարալաբս 84 (Ձմեռ, 1974) էջ 5

Հարգարժան ընթերցողներ

Հինգ տարի առաջ, երբ մենք սկսեցինք մեր եռամսյակային համարների հրատարակությունը, ուր ներկայացնում էինք հարցազրույցներ քիչ հայտնի բանաստեղծների հետ, չէինք էլ սպասում, թե ինչ հետաքրքրություն կառաջացնեն այդ հրատարակումներն ընթերցողների շրջանում: Դուք պահանջում էիք նորանոր հարցազրույցներ, ձեր խանդավառ նամակներն ուղղորդեցին մեզ, և մենք այդ հարցազրույցները դարձրինք պարբերական հրատարակումներ: Այժմ մեր գրական խորհրդի անդամները նույնպես ունեն իրենց անձնական նախասիրությունները: Այս ամբողջ գործընթացը հանգեցրեց նոր անունների հայտնաբերմանը կամ վերագտնելուն և նրանց աշխատանքի արժևորմանը, թեկուզ և ուշացումով:

Համենայն դեպս, տպագիր այս մի համարը նվիրված է տխուր մի իրադարձության: Այստեղ ներկայացված է աֆղան բանաստեղծուհի Նիլա Վահդատին: Մեր թղթակից Էտյեն Բուատուլիեն անցյալ ձմեռ նրա հետ հարցազրույց ունեցավ Փարիզի մոտակայքում:

Տիկին Վահդատին, ես վստահ եմ, որ կհամաձայնվեք ինձ

հետ, մի հարցազրույց տվեց, որը կարելի է համարել մինչ այժմ տպագրվածներից ամենաանկեղծն ու ամենաարտաբացը:

Մեծ վիշտ էր լսել նրա անժամանակ մահվան մասին, որը տեղի ունեցավ հարցազրույցից օրեր անց: Բանաստեղծների համայնքը միշտ կզգա նրա ներկայությունը: Նա միշտ կմնա իր դստեր հուշերում:

Նյարդայնացնող համընկնում էր: Վերելակի դուռը ծնագոցով բացվեց, ու հենց Նույն այդ պահին հեռախոսը սկսեց զնգալ: Փարին լավ լսում էր հեռախոսի ձայնը, որովհետև այն գալիս էր ժուլյենի սենյակից, որը նեղ ու կիսախավար միջանցքի ծայրում էր գտնվում և հետևաբար վերելակի մոտ էր: Ենթագիտակցորեն Փարին զգաց, թե ով է զանգում: Նայելով ժուլյենի դեմքին՝ զգաց, որ նա էլ դա գիտի:

Ժուլյեն արդեն ոտքը գցել էր վերելակի մեջ: Նա ասաց.

— Թո՛ղ զանգի:

Նրա հետևում կանգնած էր մի կարմրադեմ ու կռվարար տիկին վերևի հարկից և անհամբեր նայում էր Փարին: Ժուլյենն այդ տիկնոջն անվանում էր «այծիկ», որովհետև նա կզակի վրա այծի մորուքի պես մազափունջ ուներ:

Ժուլյենն ասաց.

— Արի՛ գնանք, Փարի: Մենք արդեն ուշացանք:

Նա ժամը յոթի համար տեղ էր պատվիրել 16-րդ թաղամասի Նոր ռեստորանում, որի խոհանոցը ճանաչված էր տապակած ձտի, կարդինալ տափակաձկան և կեռասի քացախով հորթի յարդից պատրաստված ուտեստներով: Նրանք պիտի հանդիպեին Քրիստիանին և Աուրելիային՝ ժուլյենի հին ուսանողական, այլ ոչ դասախոսական տարիների ընկերներին: 6-ն անց 30-ին պետք է արդեն ապերիտիվ խմեին, իսկ հիմա 6-ն անց 15 էր: Ժուլյենն ու Փարին դեռ պիտի գնային մետրո, հասնեին Մուլետտ և մի վեց թաղամաս ոտքով քայլեին դեպի ռեստորան:

Հեռախոսը զանգում էր:

Այժանման կինը հազաց:

Ժուլյենն ավելի վճռական տոնով ասաց.

- Փարի:
- Շարավոր է՝ մայրիկը լինի,— ասաց Փարին:
- Այո՛, ես վստահ եմ, որ նա է:
- Փարին ենթագիտակցորեն մտածեց, որ մայրն իր ողբերգության անվերջանալի փնտրտուքում հստակ ընտրել է պահը դատերը թակարդը զցելու համար, և նա հիմա պիտի ընտրություն կատարի՝ կան ժուլյենի հետ մտնի վերելակ, կան պատասխանի մոր զանգին:
- Գուցե կարևոր բան է:
- Ժուլյենը հոգոց հանեց:
- Վերելակի դուռը փակվեց նրա հետևից, և նա հենվեց միջանցքի պատին՝ ձեռքերը կիսավերարկուի գրպանները դրած. այդ պահին նա հիշեցնում էր Մելվիլի կերպարներից մեկին:
- Մի բոպե ընդամենը,— ասաց Փարին:
- Ժուլյենը թերահավատությամբ նայեց նրան:
- Ժուլյենի բնակարանը փոքր էր: Վեց փոփոկոտ քայլ, և Փարին հատեց միջանցքը, անցավ խոհանոցով և նայեց մահճակալի ծայրին՝ փորձելով ձգվել դեպի հեռախոսը: Այն դրված էր սեղանիկին, որը հագիվ տեղավորել էին սենյակում: Տեսարանը այնուամենայնիվ հիասքանչ էր: Անձրևում էր, բայց արևոտ օրերին կարելի էր տեսնել արևելյան կողմի պատուհանից բացվող 19-րդ և 20-րդ թաղամասերի համայնապատկերը:
- *Oui, allo?*— ասաց նա:
- Տղամարդու ձայնն ասաց.
- *Bonsoir*, սա մադամուազել Փարի Վահդատին է:
- Այո՛, ո՞վ է զանգում:
- Դուք մադամ Նիլա Վահդատիի դոստրն եք:
- Այո՛:
- Ես բժիշկ Դելունեյն եմ և զանգում եմ Ձեր մոր հարցով:
- Փարին փակեց աչքերը մեղքի ու սարսափի խառը զգացումով: Նա շատ էր պատասխանել նման զանգերի, դրանք նույնիսկ հաշվել հնարավոր չէր, սկսած դեռ դեռահաս տարիքից և նույնիսկ ավելի վաղ տարիքում: Հինգերորդ դասարանում, երբ նա քննություն էր հանձնում աշխարհագրությունից, ուսուցիչը ընդհատեց քննությունը, Փարինն տարավ միջանցք և խեղդված շուկով բացատ-

րեց նրան, թե ինչ է պատահել: Այդ զանգերը ծանոթ էին Փարիին, բայց նա չէր կարողանում վարժվել դրանց: Ամեն նոր զանգի հետ նա տենդագին մտածում էր. «Ա՛յ, հիմա ժամն է, հիմա ժամանակն է»: Դնում էր խոսափողը և պանում մոր մոտ: Ժուլյենը, տնտեսագիտական տերմինաբանություն օգտագործելով, ասում էր, որ եթե Փարին նվազեցնի իր հոգատարության առաջարկը, միգուցե դրա պահանջարկը նույնպես նվազի:

— Ձեր մոր հետ դեպք է պատահել,— ասաց բժիշկ Դելոնեյը:

Փարին, պատուհանի մոտ կանգնած, լսում էր բժշկի բացատրությունները՝ մատի վրա փաթաթելով հեռախոսալարը, իսկ բժիշկը խոսում էր մոր հիվանդանոց այցելության, նրա ճակատային վնասվածքի, վերքի կարերի, փայտացման դեմ ախտականիչ սրսկման, վերքի պերօքսիդային մշակման, հակաբիոտիկների և վիրակապման մասին: Փարիի միտքը հետ գնաց դեպի մանկություն, երբ ինքը տասը տարեկան էր: Մի օր դպրոցից տուն եկավ և խոհանոցի սեղանի վրա գտավ քսանհինգ ֆրանկ ու մի գրավոր երկտող. «*Գնացել եմ Էլզաս Մարկի հետ: Դու հիշում ես նրան: Կվերադառնամ երկու օրից: Լավ աղջիկ եղիր: Շատ ուշ չպառկես քնելու: Je t'aime. Մայրիկ*»: Փարին դողալով կանգնել էր խոհանոցում արցունքախառն աչքերով և ինքն իրեն համոզում էր, որ երկու օրը սարսափելի չէ և այդքան էլ երկար ժամանակ չէ:

Բժիշկը հարցեր էր տալիս:

— *Pardon?*

— Ասում եմ, Դուք կգա՞ք արդյոք նրան տուն տանելու, օրիորդ: Վնասվածքը լուրջ չէ, բայց, հասկանում եք, լավ կլինի նրան մենակ չթողնել: Կամ, եթե ուզում եք, տաքսի կանչենք:

— Ո՛չ, կարիք չկա: Ես մի կես ժամից տեղում կլինեմ:

Փարին, մահճակալին նստած, մտածում էր, որ ժուլյենը երևի կզայրանա և անհարմար վիճակում կհայտնվի Քրիստիանի և Աուրիելիայի առաջ, իսկ նրանց կարծիքն ակնհայտորեն կարևոր էր ժուլյենի համար: Նա չէր ուզում միջանցք դուրս գալ և տեսնել ժուլյենին, ինչպես և չէր ուզում գնալ Կորբվուա և տեսնել մորը: Մի բան էր ուզում՝ պառկել մահճակալին, ունկնդրել քամու սուլոցը և ապակու վրա անձրևի կաթիլների կտկտոցը, մինչև քունը կտաներ:

Փարին վառեց սիգարետը, իսկ ժուլյենը ներս մտավ սենյակ ու հարցրեց.

— Չես գալիս, որքան հասկացա:

Փարին չպատասխանեց:

Հատված «Աֆղանական երգող թռչունը» հարցազրույցից Նիլա Վահրատիի հետ, հարցազրուցավար՝ Էտյեն Բուատուլիե
Պարալաքս 84 (Ձմեռ, 1974) էջ 33

Է. Բ.— Որքան հասկացա, Դուք ծագումով կես աֆղան եք, կես ֆրանսիացի:

Ն. Վ.— Մայրս, այո՛, ֆրանսուհի էր: Փարիզից:

Է. Բ.— Բայց Ձեր մայրն ու հայրը հանդիպել են Քաբուլում: Դուք այնտեղ եք ծնվել:

Ն. Վ.— Այո՛, նրանք հանդիպել են 1927 թվականին թագավորական պալատում տրված տոնական ճաշկերույթի ժամանակ: Մայրս ճաշկերույթին ուղեկցում էր իր հորը՝ իմ պապիկին, ում ուղարկել էին Քաբուլ՝ թագավոր Ամանուլլային բարեփոխումների շուրջ խորհրդատվություն տրամադրելու համար: Ճանաչում եք թագավոր Ամանուլլային:

Սենք նստած ենք բնակելի շենքի երեսուներորդ հարկում՝ Նիլա Վահրատիի փոքր բնակարանի հյուրասենյակում: Դա Կուրբևուս քաղաքում է՝ Փարիզից հյուսիս-արևմուտք: Սենյակը փոքր է, կիսախավար և վատ կահավորված: Պաստառապատ մի բազմոց, սուրճի սեղանիկ և երկու գրապահարան: Տիկին Վահրատին նստած է մեջքով դեպի պատուհանը: Պատուհանը բաց է, որովհետև տիկին Վահրատին մեկը մյուսի հետևից սիգարետ է ծխում:

Նիլա Վահրատին ասում է, որ քառասունչորս տարեկան է: Նա ապշեցուցիչ գեղեցկություն ունի, միզուցե նրա գեղեցկության ծաղկունքն անցնում է, բայց գրավչությունը դեռ չի անցել: Նա ունի բարձր արքայական այտուսկրեր, հրաշալի մաշկ, բարակ իրան, խելացի խաղացկուն աչքեր և խորաթափանց հայացք, որ մարդուն գնահատում, հիացնում և գրավում է միաժամանակ: Ասելով,

որ այդ հայացքը շարունակում է գայթակղել: Տիկին Վահդատին շպարված չէ, մի փոքր շրթներկ միայն, որի մի բիծը դուրս է եկել բերանի ուրվագծից: Ճակատին լայն վարսակալ է, հագին՝ ջինս և խունացած ալ բլուզ, առանց կոշիկ և գուլպա: Թեպետ դեռ առավոտ է, տիկինն իրեն «Շարդոնե» գինի է լցնում: Գինին սառեցված չէ: Տիկինն ինձ գինի է առաջարկում, և ես մերժում եմ:

Ն. Վ.— Նա լավագույն թագավորն էր, որ նրանք երբևէ ունեցել են:

Է. Բ.— Ինձ հետաքրքրեց «նրանք» բառը: «Նրանք»: Դուք Ձեզ աֆղանուհի չե՞ք համարում:

Ն. Վ.— Ենթադրենք, որ ես որոշել եմ մոռացության տալ իմ ինքնության անհանգստացնող մասը:

Է. Բ.— Հետաքրքիր է, ինչո՞ւ այդպես:

Ն. Վ.— Եթե նա հաջողության հասներ, նկատի ունեմ թագավոր Անանուլլային, ես հիմա Ձեր հարցին այլ կերպ կպատասխանեի:

Խնդրեցի, որ բացատրի:

Ն. Վ.— Պատկերացրեք, մի օր թագավորն արթնացավ ու հրամայեց հիմնովին վերափոխել երկիրը, թեկուզ բռնի ուժով՝ դարձնելով այն առավել կիրթ ու ժամանակակից պետություն: «Ատոված իմ,— ասաց թագավորը,— այլևս ոչ ոք չադրա չի կրելու»: Պատկերացրեք, մայր՝ Բուատուլիե, Աֆղանստանում կնոջը կարող էին բանտարկել բուրքս²² չկրելու համար, մինչդեռ թագավորի կին Սորայան հանրությանը երևում էր բաց դեմքով: Օ՛հ լա լա: Մոլլաների թոքերից այնքան օդ դուրս եկավ, որ հագարավոր Հինդենբուրգեր օդ կբարձրացներ: «Եվ այլևս ոչ մի բազմակնություն»,— ասաց թագավորը: Եվ պատկերացնում եք, դա ատվեց մի երկրում, որտեղ թագավորներն անհամար հարձեր ունեին և երբեք չէին տեսնում նրանցից «պատասխարար» ծելած երեխաներին: Թագավորը մի հայտարարություն էլ արեց, որ այսուհետ ոչ ոք չի կարող կնոջը բռնի կնության տալ: Արգելվեցին գլխագինը հարսնացուների համար, անչափահասների ամուսնությունը: Եվ

²² Բուրքա — փարաջա, չադրա, կանանց դեմք ու մարմին ծածկող կտոր:

մի բան էլ արեց մեր արքան: Կրթությունը պարտադիր դարձրեց բոլորի համար:

Է. Բ.— Նա մարգարե էր ուրեմն:

Ն. Վ.— Կամ էլ հիմար: Ես կարծում եմ, որ դա փոսանգավոր անտրոշության սահմանագիծն է:

Է. Բ.— Իսկ ի՞նչ պատահեց թագավորին:

Ն. Վ.— Պատասխանս նույնքան անտրոշ է, որքան և կանխատեսելի, մայր՝ Բուստուլիե: Իհարկե ջիհադ²³՝ սրբազան պատերազմ: Մոլլաներն ու ցեղերի առաջնորդները ջիհադ հայտարարեցին թագավորի դեմ: Պատկերացրե՛ք դեպի երկինք պարզած հազարավոր բռունցքներ: Թագավորը փորձել էր շարժել հողը, բայց նա շրջապատված էր կրոնախն մարդկանց օվկիանոսով: Իսկ դուք գիտե՛ք՝ ինչ է կատարվում, երբ ցնցվում է օվկիանոսի հատակը, մայր՝ Բուստուլիե: Մորուքավորների ընդվզման փոթորիկը ճայթեց թագավորի գլխին և թափ տվեց նրան ու դուրս շարտեց սկզբում դեպի Հնդկաստան, հետո՝ Իտալիա, ապա՝ Շվեյցարիա: Այնտեղ նա մի կերպ ճողոպրեց այդ կեղտից և այդպես էլ մահացավ իբրև մի հուսալքված աքսորյալ:

Է. Բ.— Եվ ի՞նչ պետությունն ստեղծվեց: Կարծում եմ՝ Դուք չհարմարվեցիք այդ երկրի հետ:

Ն. Վ.— Միանգամայն ճիշտ եք:

Է. Բ.— Եվ դրա համար Դուք տեղափոխվեցիք Ֆրանսիա 1955 թ-ին:

Ն. Վ.— Ես տեղափոխվեցի Ֆրանսիա, որովհետև ուզում էի փրկել աղջկաս նրան սպառնող կյանքից:

Է. Բ.— Ի՞նչ նկատի ունեք:

Ն. Վ.— Ես չէի ուզում, որ նա դառնա (հակառակ իր կամքի և բնույթի) այն հոգնատանջ ու տխուր կանանցից մեկը, որ գլխիկոր ապրում ու ծառայում են՝ վախենալով ցույց տալուց, ասելուց կամ մի սխալ բան անելուց: Այդ կանանցով հիանում են ոմանք Արևմուտքում, ասենք՝ Ֆրանսիայում, նրանց երկրպագում են հե-

²³ Զիհադ — արաբերեն՝ պայքար, իսլամական ենթատեքստում՝ աստվածաբանական և իրավաբանական հայեցակարգ:

րոտուիիների պես, և այն մարդիկ են նրանց երկրպագում, ովքեր նույնիսկ մեկ օր չէին սպրի նման պայմաններում: Այդ կանանց ցանկությունները լռեցվում են, երազանքները՝ մերժվում: Բայց սարսափելին դա չէ, մայր՝ Բուատուլիե, երբ հանդիպում էք այդ կանանց, նրանք ժպտում են ու ձևացնում, որ որևէ վիշտ չունեն: Կարծես սպրում են նախանձելի մի կյանքով: Բայց եթե ուշադիր նայեք, կոտեսներ նրանց անօգնական հայացքները, հուսահատությունը, որ քողարկված է անբռնազբոս պահվածքի տակ: Դա շատ ողբերգական է, մայր՝ Բուատուլիե:

Է. Բ.— Ձեր աղջիկը հասկանում է Ձեզ:

Նիրան ևս մի սիգարետ վառեց:

Ն. Վ.— Երեխաները միշտ չէ, որ արդարացնում են մեր հույսերը, պարոն:

Հիվանդասենյակում փնթփնթան բուժքույրը Փարիին հորդորեց սպասել գրանցման բյուրոյի մոտ՝ անվավոր ցանցասայլակի կողքին, որ պռնկեպռունկ լցված էր գրակալներով և քարտեզներով: Փարին միշտ զարմանում էր այն մարդկանց վրա, որ կամավոր մասնագիտանում են մի գործում, որը նետում է իրենց նման աշխատանքային վայրեր: Նա չէր էլ փորձում հասկանալ դա, քանզի ատում էր հիվանդանոցները. ատում էր մարդկանց անկար վիճակը, հիվանդանոցային հոտը, ճռնչացող ծխնիները, միջանցքների գորշ նկարները և անվերջանալի դզդզոցը:

Բժիշկ Դելունեյը ավելի երիտասարդ էր, քան Փարին սպասում էր: Նա ուղիղ քիթ ուներ, բարակ շրթունքներ, խիտ գանգուր մազեր: Նա Փարիին դուրս տարավ սպասասրահից պատվող կրկնակի դռների միջով մինչև մուտքը:

— Երբ Ձեր մայրիկին բերեցին,— ասաց նա մտերմիկ տոնով,— նա լրիվ հարբած էր: Բայց Դուք կարծես զարմացած չեք:

— Ո՛չ, զարմացած չեմ:

— Բուժաշխատողներից նույնպես ոչ ոք չէր զարմացել: Ասում են՝ նա այստեղի մշտական այցելուն է: Ես նոր բժիշկ եմ և առիթ չեմ ունեցել Ձեր մորը հանդիպելու:

— Շնտ վատ էր վիճակը:

— Ձեր մայրը բավականին ջղագրգիռ էր և, ասեմ, բավականին քեմական կեցվածք ուներ:

Նրանք իրար նայեցին և ժպտացին:

— Ամեն ինչ նորմալ կլինի կարճ ժամանակ անց,— ասաց բժիշկ Դելունսը:— Բայց խորհուրդ եմ տալիս, ավելին՝ խիստ հորդորում եմ, որ Ձեր մայրը ավելի քիչ խմի: Այս անգամ հեշտ պրծավ, բայց, ով գիտի, ինչ կլինի հետո:

Փարին գլխով արեց:

— Որտեղ է նա:

Բժիշկը տարավ նրան ընդունարան, նրանք թեքվեցին անկյունից:

— Երրորդ մահճակալն է, դուրսգրման համար ես շուտով կմտնեմ:

— *Salut*, մայրիկ:

Մայրը կոտրված ժպտաց: Մազերը խառնված էին, ոտքերին էլ տարբեր գույլաներ էին: Ճակատին վիրակապ կար: Մի անգույն հեղուկ էր կաթկթում նրա ձախ թևին միացված ներերակային սնուցման անոթից: Անփույթ հագած հիվանդանոցային խալաթը նույնիսկ կոճկած չէր: Այն բացվել էր առջևում, և Փարին կարող էր տեսնել մոր փորի մուգ գիծը՝ կեսարյան հատման ուղղահայաց սպին: Մի քանի տարի առաջ Փարին հարցրեց մորը՝ ինչու սպին հորիզոնական չէ, ինչպես մյուսների մոտ, մայրն ասաց, որ բժիշկներն ասել էին, որ դա տեխնիկական պատճառ էր, որը նա արդեն մոռացել էր: «Կարևորն այն է,— ասաց նա,— որ քեզ լույս աշխարհ բերեցի»:

— Երեկոդ փչացրի,— մրմնջաց մայրը:

— Այդպես պատահում է: Եկել եմ, որ քեզ տուն տանեմ:

— Մի ամբողջ շաբաթ կուզենայի քնած մնալ:

Մոր աչքերն արդեն փակվում էին, բայց նա խոսում էր դանդաղ՝ կարճ դադարներով:

— Նստած հեռուստացույց էի դիտում և սով զգացի: Գնացի խոհանոց՝ հաց ու ջեմ վերցնելու, ու սայթաքեցի: Չգիտեմ, թե ինչպես, բայց ընկնելիս գլուխս կպավ ջեռոցի բռնակին: Կարծում եմ, որ մեկ-երկու բուպեով գիտակցությունս կորցրի: Նստի՞ր վերջա-

պես, Փարի: Մի ցցվիր իմ առաջ:

Փարին նստեց:

— Բժիշկն ասաց, որ դու հարբած էիր:

Մայրը կիսաբաց արեց մի աչքը: Նա հաճախ էր ընկնում բժիշկների ձեռքը, բայց աստուծ էր նրանց:

— Այդ տղան, որ ասաց դա, մի փոքր սրիկա է: Նա ինչ գիտի: Բերանից դեռ մայրական կաթի հոտ է գալիս:

— Ամեն անգամ, երբ սկսում եմ խոսել այդ մասին, դու կատակի ես տալիս:

— Հոգնած եմ, Փարի: Դու ինձ կարող ես նախատել մեկ ուրիշ անգամ: Դատափետման թիրախը ոչ մի տեղ չի փախչի:

Ու քնեց տհաճ խռոռոցով, ինչպես միշտ խնած ժամանակ:

Փարին նստած էր հիվանդանոցային աթոռին և սպասում էր բժշկին: Մոռովի պատկերացնում էր ժուլյենին մոմերով սեղանի մոտ՝ ճաշացուցակը ձեռքին, Բորդո գինու մեծ բաժակների շուրջը Քրիստիանի և Աուրելիայի հետ իրենց ճգնաժամի մասին զրուցելիս: Ժուլյենը առաջարկեց ուղեկցել Փարիին հիվանդանոց, բայց զուտ ձևական: Սովորական քաղաքավարություն: Նրա հիվանդանոց գալը սխալ կլիներ: Եթե գար, բժիշկ Դելունեյը կհասկանար, թե ինչ է իրական ներկայացումը: Բայց Փարին կուզենար, որ ժուլյենը ճաշի չգնար առանց իրեն: Եվ մի փոքր ապշած էր, որ ժուլյենը դա արեց: Ի վերջո կարող էր ամեն ինչ բացատրել Քրիստիանին և Աուրելիային: Վերջիվերջո, մեկ այլ երեկո կարող էին միասին գնալ ճաշելու, կարող էին փոխել պատվերը: Բայց ժուլյենը գնաց, ու դա սովորական թեթևամտություն չէր: Այդ քայլի մեջ մի չարական, մտադրված և վիրավորական բան կար: Փարին գիտեր, որ ժուլյենը կարող է նման կերպ վարվել, և իրեն հետաքրքրում էր՝ արդյոք դա ժուլյենին հաճույք է պատճառում:

Այսպիսի մի հիվանդասենյակում ժուլյենն ու մայրը հանդիպեցին: Դա տասը տարի առաջ էր՝ 1963 թվականին, երբ Փարին տակավին տասնչորս տարեկան էր: Ժուլյենը հիվանդանոց էր բերել իր ընկերոջը, որ գլխացավ ուներ: Մայրն էլ բերել էր Փարիին: Նա վստակ էր կոճը մարմնամարզության դասին: Փարին պառկած էր մահճակալին: Ժուլյենը աթոռը ներս քաշեց, նստեց և սկսեց խոսել մոր

հետ: Փարին չէր հիշում նրանց խոսակցությունը: Միայն մտաբերում էր, որ ժուլյենը հարցրեց՝ Փարի՛, այսինքն՝ Փարի՛գ, մայրիկը պատասխանեց՝ ո՛չ, հենց Փարի, ֆարսի լեզվով դա նշանակում է փերի:

Մի շաբաթ անց՝ մի անձրևային երեկո, նրանք հանդիպեցին Սեն ժերմեն գրոսայգու մոտակայքի բիստրոյում: Նախքան բիստրո գնալը մայրը տանը երկար մտմտաց զգեստի ընտրության շուրջ և ի վերջո իրանը կիպ գրկող երկնագույն զգեստ, երկար ձեռնոցներ և սրածայր կոշիկներ ընտրեց, վերելակում հարցրեց Փարիին. «Շատ տիկնիկային չէ՞, ինչ ես կարծում»:

Ճաշելուց առաջ երեքով ծխեցին, մայրն ու ժուլյենը գարեջուր էին խմում հսկայական սառցապատ գավաթներից: Առաջին բաժնից հետո ժուլյենը էլի գարեջուր պատվիրեց, հետո՝ էլի: Ժուլյենն իր սպիտակ վերնաշապկով, փողկապով և կոկիկ երեկոյան պիջակով շատ կիրթ, դաստիարակված մարդու տեսք ուներ: Նա բարեհամբույր ժպտում էր և անկաշկանդ ծիծաղում: Նրա քունքերը աննշան սպիտակած էին: Փարին դա սկզբում չէր նկատել, քանի որ հիվանդասենյակի լույսը թույլ էր: Ամենայն հավանականությամբ՝ մոր տարիքին էր: Նա քաջատեղյակ էր վերջին իրադարձություններից և սկզբում խոսեց դե Գոլլի վետոյի մասին, որ արգելափակում էր Անգլիայի մուտքը ընդհանուր շուկա: Ի զարմանս Փարիի՝ ժուլյենը կարողացավ այդ թեմայով հետաքրքրել իր զրուցակիցներին: Միայն մոր հարցերից հետո խոստովանեց, որ նա տնտեսագիտության դասախոս է Սորբոնում:

- Դուք դասախոս եք: Շատ տպավորիչ է:
- Օ՛հ, հազիվ թե: Մի օր եկեք դասախոսության և կհասկանաք, որ դա բնավ էլ տպավորիչ չէ:
- Միգուցե և գամ:
- Փարին նկատեց, որ մայրը մի թեթև գինովցած է:
- Մի օր կամացուկ ներս կմտնեմ և կտեսնեմ Ձեզ գործի մեջ:
- Գո՛րծ: Հիշեցնում եմ, ես դասավանդում եմ տնտեսագիտության տեսություն, Նիլա՛: Եվ երբ գաք, կտեսնեք, որ ուսանողներս ինձ համարում են ձանձրալի տիպ:
- Գիտե՞ք, կասկածում եմ:
- Փարին էլ չհավատաց ժուլյենի ասածներին: Վստահ էր, որ

Ժուլյենի ուսանողներից շատերը կուզենային քնել նրա հետ: Ճաշի ընթացքում նա հազիվ զսպում էր իրեն, որ շատ հաճախ չնայի ժուլյենին, որը կարծես հին ֆիլմերի հերոս լիներ, նրա դեմքն ասես սև ու սպիտակ ֆիլմերից լիներ, որտեղ շեշտակի ստվերներ են գցում վենետիկյան շերտավարագույրները, իսկ գլխավերևում ոլորվում է սիգարետի ծուխը: Կլորավուն մազափունջն ընկնում էր ժուլյենի ձակատին, բավականին նրբագեղ, երևի չափազանց նրբագեղ ձևով: Մազափունջն անվերջ ընկնում էր ժուլյենի ձակատին, և նա նույնիսկ չէր փորձում ուղղել այն:

Նա հարցրեց մայրիկին գրախանութի մասին: Մայրը Սենայի ասին՝ Պոնտ դ'Ակկոլի մյուս ծայրին, մի փոքր գրախանութ ուներ, ինքն էլ աշխատեցնում էր այն:

— Դուք ջազի վերաբերյալ գրքեր ունե՞ք:

— *Bah oui. Իհարկե,* — ասաց մայրը:

Անձրևն ուժեղացավ, և բիստրոն հետզհետե ավելի մարդաշատ դարձավ: Մատուցողները բերեցին պանրաբլիթներ և խոզապուխտով կարկանդակներ, իսկ մոր ու ժուլյենի միջև սկիզբ առավ մի անվերջանալի խոսակցություն Բադ Փաուելի, Սոնի Ստիթի, Դիզի Զիլեսփիի և ժուլյենի սիրած Չառլի Փարքերի մասին: Մայրն ասաց, որ ավելի հաճույքով լսում է արևմտյան ամփի կատարողներին, Չեթ Բեյքերին և Մայլզ Դևիսին, հարցրեց ժուլյենին՝ արդյոք նա լսել է «Մի տեսակ տխուր եմ» ավբոմը: Փարին զարմանքով հասկացավ, որ մայրը շատ է սիրում ջազ և այսքան քաջատեղյակ է ջազային ոճի երաժշտությանից: Առաջին անգամ չէր, որ Փարին զարմանքով նորովի հայտնագործում էր մորը, մանկական հիացմունքով և որոշակի տարակուսանքով, որ ինքը չի ճանաչում սեփական ծնողին: Մի բան միայն զարմանալի չէր, որ մորը հաջողվել էր առանց որևէ ճիգի գրավել ժուլյենին: Մայրն այստեղ իր տարերքում էր: Նա երբեք խնդիր չէր ունեցել տղամարդկանց ուշադրության կենտրոնում լինելու և նրանց գայթակղելու:

Փարին նայում էր, թե ինչպես է մայրը խաղացկուն շշնջում, քրքջում ժուլյենի կատակների վրա, կոկետ տարուբերում գլուխը՝ ծածանելով արձակած մազերը: Փարին հիացավ մոր երիտասարդությանը և գեղեցկությամբ: Չէ՞ որ մայրն իրենից ընդամենը քսան

տարով էր մեծ: Նա ուներ երկար, սև մազեր, բարձր կուրծք, արտահայտիչ աչքեր, և դեմքը փայլում էր արքայական դիմագծերի ազդեցիկ լույսով: Դարձյալ Փարին մտածեց, որ բոլորովին նման չէ մորը իր անգույն փոքր աչքերով, երկար քթով, ցանցառատամ ժպիտով և փոքր կրծքերով. կարծես մոր հակապատկերը լիներ: Փարիի գեղեցկությունը (եթե կարելի էր նրան համարել այդպիսին) ավելի համեստ, հողեղեն էր: Մոր կողքին գտնվելով՝ Փարին միշտ զգում էր, թե կարված է կոպիտ կտավից: Մայրը չէր թողնում, որ նա մոռանա այդ մասին, բայց դա անում էր քողարկված ձևով՝ իբր հաճոյախոսում էր, բայց այդ հաճոյախոսությունը տրոյական ձիու պես ծուղակ էր:

Ասենք՝ կարող էր ասել.

— Դու բախտավոր ես, Փարի: Տղամարդիկ քեզ միշտ լուրջ կընդունեն, և դա քեզնից շատ ջանք չի պահանջի: Նրանք քեզ ուշադիր կլսեն: Գեղեցկության ավելցուկը միշտ փչացնում է գործը:— Եվ ծիծաղում էր:— Օհ, լսիր ինձ: Չեմ ասում, որ դա իմ սեփական փորձն է: Իհարկե ոչ: Ուղղակի կողքից արված դիտարկում է:

— Դու ասում ես, որ ես գեղեցիկ չեմ:

— Ես ուզում եմ ասել, որ պետք չէ, որ գեղեցիկ լինես: Բայց դու շատ լավիկն ես, և դա բավական է: Վստահեցնում եմ, սիրելիս: Դա նույնիսկ ավելի լավ է:

Փարին նման չէր նաև իր հորը, որը լուրջ դեմքով, լայն ճակատով, նեղ կզակով և բարակ շրթունքներով, բարձրահասակ տղամարդ էր: Փարին հոր նկարներից մի քանիսը պահում էր իր սենյակում որպես հիշողություն Քաբուլում ապրած իր մանկության: Հայրը հիվանդացել էր 1955 թվականին, այդ նույն տարում ինքն ու մայրը տեղափոխվել էին Փարիզ: Իսկ կարճ ժամանակ անց հայրը մահացել էր: Երբեմն Փարին հայացքը հառում էր հին սև-սպիտակ լուսանկարներին, ուր ինքն ու հայրը պատկերված էին մի հին ամերիկյան մեքենայի կողքին: Հայրը, իրեն գրկած, հենվել էր մեքենայի ցեխավահանակին. երկուսն էլ ժպտում էին: Փարին նաև հիշում էր, թե ինչպես հայրը մի անգամ պահարանի վրա ընծուղտներ և երկարապոչ կապիկներ նկարեց և թողեց, որ ինքը ներկի դրանցից մեկին: Հայրը, իր ձեռքը բռնած, համբերատար

ուղղորդում էր նրա վրձնահարվածները:

Հոր դեմքը Փարիի մեջ արթնացնում էր մի հին հիշողություն, մի զգացողություն, որ անվերջ ուղեկցում էր նրան մասկությունից: Կարծես իր կյանքից պակասում էր մի կարևոր, անհրաժեշտ բան, որն իր գոյության անբաժանելի մասն էր: Երբեմն դա նմանվում էր ավերված տարանցիկ ճամփաներով հեռուներից ուղարկված մի ուղերձի, ռադիոյով արձակած կտրտվող թույլ ազդանշանի: Բայց լինում էին ժամանակներ, երբ Փարին այնքան սուր էր զգում այդ ամենի բացակայությունը, որ սիրտը ճմլվում էր: Օրինակ՝ երկու տարի առաջ Պրովանսում Փարին գյուղական տան առաջ մի հաստաբուն կաղնի տեսավ, և ներսում մի բան շարժվեց: Մի անգամ էլ նույն զգացողությունն ունեցավ, երբ Տյուիլրի այգիներում տեսավ, թե ինչպես է մայրն իր որդուն տանում կարմիր սայլակով: Փարին ոչինչ չէր հասկանում: Մի անգամ նա մի պատմություն կարդաց միջին տարիքի թուրք տղամարդու մասին, որ հանկարծակի սուր ընկճախտ է ունեցել, հենց այն ժամանակ, երբ իր երկվորյակ եղբայրը, որի գոյության մասին նա չգիտեր, մահացել է սրտի կաթվածից Ամազոնի կուսական անտառներում *կանոն*²⁴ թիավարելիս: Այդ պատմությունը խորապես համահունչ էր Փարիի զգացողություններին:

Մի անգամ նա այդ մասին խոսեց մոր հետ:

— Դա բնավ էլ առեղծված չէ, սիրելիս,— ասաց մայրը:— Դու կարոտում ես հորդ, որ հեռացել է կյանքից: Եվ շատ բնական է, որ դու զգում ես նրա կարիքը: Այդքան բան, արի՛ համբուրիր ինձ:

Մոր պատասխանը շատ խելամիտ էր, բայց բավարար չէր: Փարին հասկանում էր, որ հոր կենդանության դեպքում իր սեփական գոյությունն ավելի ամբողջական կլիներ: Բայց նաև պարզորոշ հիշում էր, որ նույն զգացողությունը ունեցել է Քաբուլում, երբ ապրում էր հոր և մոր հետ:

Ճաշից հետո մայրը, ներողություն խնդրելով, մի քանի րոպեով գնաց զուգարան, և Փարին մնաց ժուլյենի հետ մենակ: Նրանք

²⁴ Կանոն — հնդկական նավակ մեկ ամբողջական փայտի կտորից փորված հատիչի օգնությամբ:

քննարկեցին մի ֆիլմ, որ Փարին դիտել էր մի շաբաթ առաջ: Այդ ֆիլմում ժաննա Միրոն խաղամուկի դեր էր տանում: Խոսեցին նաև դպրոցից և երաժշտությունից: Խոսելիս ժուլյենը արմունկները դնում էր սեղանին և առաջ գալիս՝ մեծ հետաքրքրությամբ ըմբռնելով Փարիի հետ զրույցը. հայացքը չկտրելով աղջկանից՝ մեկ ժպտում էր, մեկ լրջանում: «Ընդամենը ներկայացում է, նա ձևացնում է», — մտածեց Փարին: Նա հատուկ մշակել է կանանց հետ վարվելու ձևերի համակարգ և այժմ՝ այս պահին, ընտրել է շփման այս ձևը: Նա խաղ է անում և զվարճանում Փարիի հաշվին: Բայց, միևնույնն է, ժուլյենի անքթիթ հայացքի ներքո սիրտը բարախում էր ավելի արագ, և փորի մկանները պրկվում էին: Փարին զգաց իր ձայնի մեջ շինծու ամենագիտության մի ծիծաղելի երանգ, որը երբեք չէր գործածում առօրյա խոսակցության մեջ: Կողքից ինքն իրեն նայելով՝ զգում էր դա, բայց չէր կարող կանգ առնել:

Ժուլյենը պատմեց նրան, որ շատ կարճ ժամանակ ամուսնացած է եղել:

— Իրո՞ք:

— Մի քանի տարի առաջ էր, երբ երեսուն տարեկան էի և ապրում էի Լիոնում:

Ժուլյենն ամուսնացել էր տարիքով ավելի մեծ կնոջ հետ: Ամուսնությունը երկար չտևեց, որովհետև կինը փորձում էր իշխել նրան: Ժուլյենն այդ պատմությունը չպատմեց, երբ երեքով էին նստած:

— Ֆիզիկական կապ էր, միայն սեքսուալ հարաբերություն: Այդ կինն ուզում էր ինձ սեփականաշնորհել:

Այդ ասելիս ժուլյենը նայում էր Փարիին և ժպտում գայթակղիչ ժպիտով՝ կարծես զուշակելով, թե Փարին ինչպես կարճագանքի: Փարին սիգարետ կպցրեց և դեմքին տվեց անտարբեր արտահայտություն, Բրիջիտ Բարդոյի նման: Ձևացրեց, թե իր համար սովորական բան է նման պատմություններ լսելը, բայց ներքուստ դող էր զգում, կարծես հենց նոր դավաճանել էր մորը: Դա մի փոքր հանցավոր, մի փոքր վնասաբեր, բայց նաև գրավիչ զգացողություն էր: Երբ մայրը ներս մտավ, սանրված, շրթներկը թարմացրած, Փարին մի պահ տհաճություն զգաց, որ մայրը վերադարձել է, բայց մի վայրկյան անց խորագույնս զղջաց իր այդ զգացման համար:

Փարին ժուլյենին կրկին տեսավ մեկ շաբաթ անց: Առավոտ էր, և քայլերն ուղղեց մոր սենյակը: Ձեռքին սրճաման կար: Ժուլյենին տեսավ մոր մահճակալին նստած, ժամացույցը լարելիս: Փարին չգիտեր, որ նա իրենց տանն է գիշերել, միայն կիսաբաց դռան արանքից նկատեց ծանոթ կերպարանքը: Նրան տեսնելով՝ ոտքերը գամվեցին գետնին, բերանում այնպիսի համ էր զգում, կարծես ցեխակտոր էր կուլ տվել: Թաքուն նայում էր նրա հարթ մեջքին, փորի մերկ փոքր հատվածին, ոտքերի արանքի մուգ ստվերին, որ ծածկված էր ճնշած սավաններով: Տղամարդը մի կողմ դրեց ժամացույցը և ձգվեց դեպի սեղանին դրված սիգարետը, կպցրեց այն, և հայացքը հանդարտ սահեցրեց Փարիի վրա, կարծես այդ ամբողջ ընթացքում գիտեր, որ նա այդտեղ է եղել, և թեթևակի ժպտաց: Հետո մայրը ինչ-որ բան ասաց լոգարանից, և Փարին արագ ձողոպրեց: Հրաշք էր, որ եռման սուրճը չթափեց վրան:

Մայրն ու ժուլյենը սիրեկաններ մնացին մոտ վեց ամիս: Հաճախ էին գնում կինո, թանգարաններ, փոքր պատկերասրահներ, ուր ուսումնասիրում էին ոչ հայտնի օտարերկրացի գեղանկարիչներին: Մի կիրակի նրանք մեքենայով գնացին Բորդոյի մոտակայքում գտնվող Արկաչոն լողափը ու վերադարձան արևահարված դեմքերով և մի պայուսակ լիքը կարմիր գինու շշերով: Ժուլյենը մորը հրավիրում էր ֆակուլտետի հավաքույթներին, իսկ մայրն էլ նրան միշտ կանչում էր իր գրախանութում անցկացվող հեղինակային ընթերցումներին: Երբեմն Փարին ուղեկցում էր նրանց ժուլյենի խնդրանքով, ինչը ակներևաբար հաճելի էր մորը, բայց հետզհետե տարբեր պատրվակներով նա սկսեց մնալ տանը: Անտանելի, անկարելի էր գնալը: Մեկ ասում էր, որ շատ հոգնած է, մեկ, որ լավ չի զգում: Կամ ասում էր, թե գնում է ընկերուհու՝ Կոլլետի հետ պարապելու: Կոլլետը երկրորդ դասարանից Փարիի հետ ընկերություն էր անում: Նա մի բարակ, փխրուն աղջիկ էր, երկար, փափուկ մազերով և ագռավի կտուց հիշեցնող կեռ թթով: Կոլլետին դուր էր գալիս մարդկանց անհարմար վիճակի մեջ զցելը, սկանդալային, վրդովեցուցիչ բաներ ասելը:

— Գրագ կգամ, ժուլյենը հիասթափված է, որ դու իրենց հետ դուրս չես գալիս,— ասաց Կոլլետը:

— Դե, եթե հիասթափված էլ է, ցույց չի տալիս:

— Նա չի կարող դա ցույց տալ: Ինչ կմտածի մայրդ:

— Ինչի՞ մասին,— հարցրեց Փարին, թեպետ պատասխանը պարզ էր, և նա միայն ուզում էր, որ մեկ ուրիշը խոսեր դրա մասին:

— Ինչի՞ մասին,— ասաց Կոլլետը խորամանկ ոգևորությամբ:— Ասածս այն է, որ նա հարաբերություններ է հաստատել մորդ հետ, որ մտերմանա քեզ հետ: Նա քեզ է ուզում:

— Բայց դա զգվելի է,— ասաց Փարին դողդոջուն ձայնով:

— Իսկ գուցե միաժամանակ երկու կին է ուզում: Սիրում է, երբ անկողնում մարդաշատ է: Այդ դեպքում իմ թեկնածության համար էլ բարեխոսիր:

— Դու զգվելի ես, Կոլլետ:

Երբեմն մայրն ու ժուլյենը դուրս էին գալիս, Փարին հանում էր իր հագուստները և նայում իր արտացոլմանը միջանցքի հայելիում: Եվ բազմաթիվ թերություններ էր գտնում: Նա չափազանց բարձրահասակ էր, չափազանց տձև և չափազանց սովորական: Մոր հմայիչ կազմվածքից ոչինչ չէր վերցրել: Երբեմն այդպես մերկացած մտնում էր մոր ննջարանը և պառկում անկողնու վրա, ուր մայրն ու ժուլյենը զբաղվել էին սեքսով: Փարին մորեմերկ պառկում էր մահճակալին՝ աչքերը փակ, բաբախող սրտով, ինքնամոռաց երանության մեջ՝ զգալով, որ մի խլրտոց է տարածվում իր կրծքով, որովայնով և իջնում ավելի ներքև:

Եվ իհարկե դա ավարտվեց: Նրանք բաժանվեցին՝ մայրը և ժուլյենը: Փարին խաղաղվեց, բայց չզարմացավ, որովհետև տղամարդիկ միշտ լքում էին իր մորը: Նրանք չէին հասնում այն նշաձողին, որ մայրը սահմանում էր նրանց համար: Սրտի թրթիռով և կրքով սկսված սիրավեպան ավարտվում էր կուպիտ մեղադրանքներով, ատելությամբ լի խոսքերով, կատաղությամբ, փղձկոցներով, խոհանոցային պարագաներ շարտելով և վերջում՝ ուշագնացությամբ: Վեհ ողբերգականություն: Մայրն անկարող էր սկսել կամ ավարտել հարաբերություններն առանց ցնցումների:

Հետո գալիս էր ծանոթ մի փուլ, երբ մայրը սկսում էր վայելել մենակությունը: Նա մնում էր անկողնում՝ գիշերազգեստի վրա հին վերարկուն հագած, և քարշ էր տալիս իր ցավոտ, անժպիտ մաշված

գոյությունը: Փարին գիտեր, որ այդ պահերին մորը պետք էր մենակ թողնել, քանի որ նա չէր ընդունում մխիթարության և զորակցության ոչ մի փորձ: Բայց ժուլյենի պարագայում այդ փուլն ավելի երկար տևեց:

— *Ah, merde!*²⁵, — ասաց մայրը:

Նա նստել էր մահճակալին, հիվանդանոցային խալաթը դեռ հագին էր: Բժիշկ Դելոնեյը հանձնեց Փարինն դուրսգրման թուղթը, իսկ բուժքույրը հանեց ու անջատեց ներերակային սնուցման սարքը:

— Ի՞նչ պատահեց:

— Հենց նոր հիշեցի: Հարցազրույցի եմ մի երկու օրից:

— Ի՞նչ հարցազրույց:

— Բանաստեղծական մի ամսագրի համար:

— Հիանալի է, մամ:

— Այո՛, բայց նրանք պատրաստվում են նկար էլ դնելու հարցազրույցի հետ:

Նա ցույց տվեց գլխի վերքը:

— Ես վստահ եմ, որ գեղեցիկ կերպով կքողարկես դրանք:

Մայրը հառաչեց և հայացքը թեքեց: Երբ քույրը նրա երակից հանում էր ասեղը, ծչաց և կնոջը անտեղի վիրավորեց:

*Հատված «Աֆդանական երգող թռչունը» հարցազրույցից
Նիլա Վահրատիի հետ, հարցազրուցավար՝ Էտյեն Բուստուլիե
Պարալաքս 84 (մեկտ 1974) էջ 36*

Հայացքս պտտեցրի սենյակով մեկ, և ուշադրությունս գրավեց մի շրջանակված նկար պահարաններից մեկի վրա: Նկարում մի փոքր աղջիկ պագած էր վայրի թփերի մեջ և խորասուզված ինչ-որ բան էր քաղում, հավանաբար հատապտուղներ: Հագին մինչև կոկորդը կոճկած դեղին վերարկու էր, որի վառ գույնը կարծես հակադրվում էր անպամած երկնքի գորշությանը: Հետևի պլանում գյուղական քարե մի տնակ էր՝ փակ փեղկերով ու ջարդրտ-

²⁵ Ա՛հ, զզվելի է (Ֆր.):

ված սալաքարերով: Ես հարցրի, թե ում նկարն է դա:

Ն. Վ — Աղջիկս է՝ Փարին: Արտասանվում է ինչպես Փարիզ, բայց վերջին տառը չի գրվում: Փարի նշանակում է փերի: Սա Նորմանդիա կատարած մեր ճանապարհորդությունից է, մենք երկուսով էինք գնացել: Հավանաբար 1957-ին. Փարին այն ժամանակ ութ տարեկան էր:

Է. Բ. — Նա հիմա Փարիզում է ապրում:

Ն. Վ. — Այո՛, նա մաթեմատիկա է ուսանում Սորբոնում:

Է. Բ. — Երևի հպարտ եք Ձեր դատրիկով:

Նիբան ժպտաց և թոթվեց ուները:

Է. Բ. — Ջարմացած եմ նրա մասնագիտության ընտրությունից: Չէ՞ որ դուք հակված եք արվեստին:

Ն. Վ. — Տեղյակ էլ չեմ՝ որտեղից ունի այդ տաղանդը: Պատկերացրե՛ք այդ անհասկանալի բանաձևերն ու տեսությունները, որոնք շատ հասկանալի են նրա համար: Ինչ վերաբերում է ինձ, ես դժվարությամբ եմ սովորական բազմապատկում անում:

Է. Բ. — Գուցե նա այդ ձևով ապստամբում է Ձեր դեմ: Ես վստահ եմ, դուք լավ գիտեք, թե ինչ է ապստամբությունը:

Ն. Վ. — Բայց նա շատ պարկեշտ է ապստամբում: Ես, օրինակ, խմում էի և փոխում էի սիրեկաններին: Ո՞վ է ապստամբում մաթեմատիկայի միջոցով:

Նիբան ծիծաղեց:

Ն. Վ. — Հետո նա կդառնար առասպելական ապստամբ, մի կերպար, որ ապստամբում է առանց պատճառի: Ես նրան տվել եմ բացարձակ ազատություն: Աղջիկս ոչինչ չի ուզում: Ոչ մի բանի կարիք չունի: Ապրում է մի տղամարդու հետ, որն իրենից մի քիչ մեծ է: Չափից դուրս հմայիչ, կարդացած մի մարդ: Իհարկե, կատաղի ինքնասիրահարված: Ինքն իր «ես»-ը ուռճացրել է անսահման:

Է. Բ. — Դուք այդ հարաբերություններն ակնհայտորեն չեք խրախուսում:

Ն. Վ. — Իմ վերաբերմունքն այս դեպքում կարևոր չէ, մայո՛ Բուստոուլիե: Սա Ֆրանսիան է, ոչ թե Աֆղանստանը: Երիտասարդները ծնողական խրախուսանքով ոչ ապրում են, ոչ էլ մեռնում:

թվայնացրել է 1915. in 30 նյութ

Է. Բ.— Ձեր աղջիկը Աֆղանստանի հետ կապ չի պահում:

Ն. Վ.— Մենք հեռացանք երկրից, երբ նա վեց տարեկան էր, և Փարին այդ երկրի մասին աղոտ հիշողություններ ունի միայն:

Է. Բ.— Բայց դուք ամեն բան, իհարկե, հիշում եք:

Ու ես խնդրեցի, որ Նիլան պատմի իր մանկության մասին:

Նիլան ներողություն խնդրեց և դուրս եկավ սենյակից: Վերադառնալուն պես մեկնեց ինձ մի հին սև-սպիտակ լուսանկար: Նկարից ինձ էր նայում խստադեմ, խոժոռված ակնոցավոր մի մարդ՝ փայլուն մազերով և անթերի սանրվածքով: Նա նստած էր սեղանի մոտ և գիրք էր կարդում: Հազին կրկնակի դարձակարեքով կոստյում էր, ժիլետ, բարձր օձիքով սպիտակ վերնաշաշակի և թիթեռնիկ փողկապ:

Ն. Վ.— Սա իմ հայրն է 1928 թվականին: Իմ ծննդյան տարին է:

Է. Բ.— Շատ պատվարժան մարդ է երևում:

Ն. Վ.— Նա Փաշտունի արխտոկրատներից էր Քարուլում: Անասիման կիրթ, անթերի պահվածքով, շփվող ու մարդամոտ: Եվ հրաշալի գրուցակից էր: Համենայն դեպս մարդկանց մեջ այդպիսին էր:

Է. Բ.— Իսկ տանը ինչպիսին էր:

Ն. Վ.— Կարո՞ղ եք փորձել գուշակել, պարո՞ն:

Ես վերցրի նկարը և գննեցի այն:

Է. Բ.— Կասե՛ի, որ նա սատը մարդ է, չափազանց լուրջ, անկոտրում ու անզիջում:

Ն. Վ.— Եկեք միասին խմենք: Ատում եմ միայնակ խմելը, ո՛չ, ավելի ձիշտ՝ զարշում եմ դրանից:

Նա ինձ լցրեց մի բաժակ «Շարդոնե»: Ես, քաղաքավարությունից դրդված, մի ումպ խմեցի:

Ն. Վ.— Հորս ձեռքերը միշտ սառն էին՝ անկախ եղանակից: Նա միշտ հրաշալի կարված, լավ արդուկված ծալքերով կոստյումով էր, էլի անկախ եղանակից: Եվ, իհարկե, գլխարկ: Եվ թևքի ճարմանդներ, երկնագույն ճարմանդներ: Տեքսը զեղեցիկ էր, բայց չափազանց հանդիսավոր: Ես իհարկե ուշ հասկացա, որ դա լավ մշակված, մի փոքր ծիծաղելի, ձևական եվրոպական պահվածք էր, որի անբաժանելի մասն էին կազմում գոլֆն ու պոլոն,

ինչպես նաև հմայիչ ֆրանսուհու հետ օրինակելի ամուսնությունը: Իհարկե, այդ ամենը արժանանում էր երիտասարդ և առաջադեմ թագավորի հավանությանը:

Նա նայում էր իր եղունգներին, և մի պահ լռություն տիրեց: Ես ձայնագրիչի ժապավենը փոխեցի:

Հայրս քնում էր մի սենյակում, ես ու մայրս՝ մեկ այլ սենյակում: Հայրս ճաշում էր արքայի, նախարարների և խորհրդականների հետ: Ժամանակի մյուս մասը զբաղվում էր ձիավարությամբ, որսորդությամբ կամ պոլո խաղալով: Նա սիրում էր որսի գնալ:

Է. Բ.— Այսինքն՝ Դուք Ձեր հորը հազվադեպ էիք տեսնում: Հիմնականում նա բացակայում էր Ձեր կյանքից:

Ն. Վ.— Ոչ միանշանակ: Նա այնպես էր ժամանակը դասավորում, որ երկու օրը մեկ ինձ հետ մի քանի բույե անցկացնի: Մտնում էր սենյակ, նստում էր անկողնուն, և ես անմիջապես մագլցում էի նրա ծնկներին: Նա ինձ թոցնում էր ծնկների վրա: Շատ չէինք խոսում, հետո նա հարցնում էր.

— Դե, Նիրս, ինչո՞վ ենք այսօր զբաղվելու: Ծոցագրպանից հանում էր թաշկինակն ու տալիս էր ինձ, որ նորից ծալեմ: Իհարկե, ես ուղղակի ոլորում էի այն և նորից խցկում նրա ծոցագրպանը: Ծաղրական զարմանքի արտահայտություն էր տալիս դեմքին, որն ինձ մեծապես զվարճացնում էր: Մենք խաղում էինք այդ խաղը, մինչև հայրս հոգներ, իսկ նա բավականին արագ էր ձանձրանում: Հետո շոյում էր մագլերս իր սառը ձեռքերով և ասում.

— Դե, իմ ֆավն, հայրիկը պիտի գնա, վազիր:

Նիրան նկարը հետ տարա՞յ, սիգարետի նոր տուփ վերցրեց ու մի սիգարետ վառեց:

Ն. Վ.— Նա ինձ այդպիսի մականուն էր տվել, և այն ինձ դուր էր գալիս: Ցատկոտում էի այգում, իսկ մեր այգին շատ մեծ էր, և երգում էի: Ես հայրիկի ֆավնն եմ, ես հայրիկի ֆավնն եմ: Հետո ես հասկացա, թե ինչ չարագուշակ մականուն էր դա:

Է. Բ.— Ներեցե՞ք, չհասկացա:

Նիրան ծպտաց:

— Հայրս եղնիկ էր որսում, մայր՝ Բուստուլիե:

Մայրիկի բնակարանն ընդամենը մի քանի շենք այն կողմ էր, և նրանք կարող էին ոտքով գնալ, սակայն անձրևը հորդացավ: Տաքսու հետևի նստարանին նստած՝ մայրը փաթաթվել էր Փարիի անձրևանոցի մեջ և անձայն նայում էր պատուհանից դուրս: Մի պահ նա Փարիին ավելի ծեր թվաց, քան կար. Նիլան քառասունհինգ տարեկան էր: Ծեր, փխրուն և նուրբ:

Փարին վաղուց չէր եղել մոր բնակարանում: Երբ նա բացեց փականը, ու երկուսով ներս մտան, անմիջապես տեսավ խոհանոցի սեղանը, ուր շարված էին գինու կեղտոտ բաժակները, չիփսերի փաթեթներ և կիսաեփ մակարոն, ափսեներ, որոնց վրա արդեն քարացել էին անձանաչելի ուտելիքի մնացորդները: Մի թղթե պարկ լցված էր գինու դատարկ շշերով և այնքան անփույթ էր դրված սեղանի ծայրին, որ ամեն վայրկյան սպառնում էր շուռ գալ: Փարին գետնին տեսավ թերթեր, դրանցից մեկը արյունոտ էր, և մի վարդագույն բրոյա կիսագուլպա էր ընկած: Փարիի համար սարսափելի էր տեսնել այն պայմանները, որոնցում ապրում էր մայրը: Նա զգում էր նաև իր մեղքը: Մորը ճանաչելով՝ կարելի էր հասկանալ, որ նա հենց դրա համար էլ սարքել էր այդ խառնաշփոթը: Եվ Փարին սարսուռ զգաց իր այդ մտքից: Դա ավելի շուտ նման էր Ժուլյենի մտածելակերպին: «Մայրդ ուզում է, որ դու քեզ մեղավոր զգաս»: Վերջին ժամանակներս Ժուլյենը մի քանի անգամ կրկնել էր այս խոսքերը. «Մայրդ ուզում է, որ դու քեզ մեղավոր զգաս»: Երբ Ժուլյենն առաջին անգամ արտասանեց այդ բառերը, Փարին թեթևություն և փոխըմբռնում զգաց: Նա շնորհակալ էր, որ Ժուլյենը բարձրաձայնեց այն մտքերը, որոնք ինքն իրեն թույլ չէր տալիս արտահայտել: Նա կարծում էր, որ համախոհ է ձեռք բերել, բայց շուտով սկսեց կասկածել, որովհետև Ժուլյենի խոսքերի մեջ որսացել էր ստորության երանգներ կամ, ավելի շուտ, բարության անհանգստացնող բացակայություն:

Ննջասենյակի հատակին թափված էին շորեր, ձայնապնակներ, գրքեր, թերթեր: Լուսամուտի գոգին կիսով չափ լցված բաժակի ջուրը ամբողջովին դեղնել էր բաժակի մեջ նետված սիգարետի մնացորդներից: Նա անկողնու վրայից հավաքեց գրքերն ու հին ամսագրերը և օգնեց, որ մայրը մտնի վերմակի տակ:

Մայրը նայեց Փարիին՝ մի ձեռքը վիրակապած ճակատին դրած. այդ դիրքը հիշեցնում էր հին համր ֆիլմերի դերասանուհիների՝ ուշագնացությունից առաջ:

— Դու լավ կլինես, մայրիկ:

— Վստահ չեմ:

Բայց դա ուշադրություն հայցելու ձև չէր: Մայրը դա ասաց հանգիստ ու ձանձրացած տոնով, որը միաժամանակ հոգնած էր, անկեղծ և վերջնական:

— Դու ինձ վախեցնում ես, մայրիկ:

— Գնո՞ւմ ես արդեն:

— Ուզում ես՝ մնամ:

— Այո՛:

— Դե, ուրեմն կմնամ:

— Լույսերն անջատիր ուրեմն:

— Մայրիկ:

— Այո՛:

— Դեղերդ ընդունո՞ւմ ես, թե՞ դադարեցրել ես: Ինձ թվում է՝ դադարեցրել ես, և դա ինձ մտահոգում է:

— Հանգիստ թող ինձ և լույսն անջատիր:

Փարին ենթարկվեց: Մահճակալին նստած՝ նայում էր, թե մայրն ինչպես է քնում: Հետո անցավ խոհանոց և սկսեց մաքրելու անշորհակալ գործը: Հազավ ձեռնոցներն ու սկսեց ամանեղենից՝ թթված կաթով բաժակներ, չորացած շիլայով ափսեներ, որ արդեն ծածկվել էին կանաչավուն սնկային բորբոսով: Փարին հիշեց, որ ժուլյեների հետ անցկացրած առաջին գիշերվանից հետո նույնպես ինքը ամաններ էր լվանում: Ժուլյենը ձվածեղ էր պատրաստել, իսկ ինքը խանդաղատանքով անում էր այդ առօրյա ձանձրալի գործը՝ զուգահեռ լսելով Ջեյն Բիրկինի երգը:

Փարին ու ժուլյենը միացել էին մի տարի առաջ՝ 1973 թվականին, երբ նրանց առաջին հանդիպումից տասը տարի էր անցել: Նրանք պատահաբար հանդիպեցին Կանադայի դեսպանատան առաջ՝ փողոցային երթի ժամանակ: Դա ուսանողական բողոքի երթ էր՝ ուղղված փոկերի որսի դեմ: Փարին չէր ուզում գնալ այնտեղ: Նա կուրսային ուներ մերոմորֆիկ ֆունկցիաների մասին և պետք է աշխատեր

դրա վրա, բայց Կոլլետը պնդեց, որ գնան: Նրանք այդ ժամանակ միասին էին ապրում, ինչը երկուսի համար էլ գնալով ավելի տհաճ էր դառնում: Մարիխուանա էր Կոլլետը ծխում այդ ժամանակ: Մազերին կապում էր լայն շարՖեր և կրում էր կարմրամանուշակագույն տունիկա, որի վրա ասեղնագործած էին թռչուններ և ծաղիկներ: Կոլլետը տուն էր բերում փնթի, երկարամազ տղաների, որոնք ուտում էին Փարիի ճաշը և կիթառ էին նվագում շատ վատ: Կոլլետը գրեթե միշտ փողոցներում էր, բողոքում էր, գոռգոռում և դատապարտում էր կենդանիների հանդեպ բռնությունը, ռասիզմը և ստրկությունը, Ֆրանսիայի միջուկային փորձարկումները Խաղաղ օվկիանոսի շրջանում: Երբ մենակ էին մնում, Փարին զգում էր, որ իրենց միջև մի նոր լարվածություն է առաջացել, զգում էր Կոլլետի վերամբարձությունը և իր լուռ հակադրությունը:

— Բոլորը ստում են,— ոգևորված ձչում էր Կոլլետը:— Ասում են, որ իրենց կիրառած մեթոդները մարդասիրական են: Դու գիտե՞ս՝ ինչ են օգտագործում նրանց գլխին խփելու համար: Տեսե՛լ ես այդ *հաքափիքները*²⁶: Այդ սրիկաները շատ հաճախ, նույնիսկ երբ խեղճ կենդանին դեռ չի սատկել, խրում են իրենց կեռիկները և դուրս են քաշում նրանց նավակի մեջ, իսկ հետո ողջ-ողջ մաշկում են նրանց, Փարի: Ողջ-ողջ:

Կոլլետի ձևակերպումներին և շեշտադրումներին ի պատասխան՝ Փարիի առաջին մղումը ներողություն խնդրելն էր, թեպետ ինքն էլ վստահ չէր՝ ինչի համար: Բայց նաև զգում էր, որ շունչը կտրվում էր Կոլլետի կողքին, որ չի դիմանում նրա հանդիմանանքներին ու անվերջ զայրույթին:

Երթին մի երեսուն մարդ կար միայն: Լուրեր էին պատվում, որ Բրիջիտ Բարդոն էլ է գալու այդ ցույցին, բայց պարզվեց, որ դա ուղղակի բամբասանք էր: Կոլլետը հիասթափված էր մարդկանց սակավությունից: Նա մի նյարդային վեճ սկսեց Էրիկ անունով մի նիհարակազմ, գունատ, ակնոցավոր երիտասարդի հետ: Փարին այնպես հասկացավ, որ Էրիկն էր պատասխանատու երթի կազմա-

²⁶ Հաքափիք — փոկերին սպանելու համար օգտագործվող բազմաֆունկցիոնալ կացին-գավազան: Մի կողմը ծանր մուրճ է, մյուսը՝ սուր ու երկար կեռ:

կերպման համար: Խեղճ էրիկ, Փարին խղճում էր նրան: Կոլլետը, շարունակելով փնթփնթալ, գլխավորեց երթը, իսկ Փարին աննկատ գնաց, թաքնվեց ցուցարարների հետևում, կանգնեց տափակ կրծքով մի աղջկա կողքին, որ լոզունգներ էր բղավում նյարդային ոգևորությամբ: Փարին հայացքը ցած էր գցել և փորձում էր ոչ մի կերպ աչքի չընկնել:

Փողոցի անկյունում մի տղամարդ թփթփացրեց նրա ուսին:

— Այնպիսի տեսք ունես, կարծես ուզում ես, որ մեկը գա և փրկի քեզ:

Հագին շոտլանդական բրդից մի պիջակ էր, սվիտեր, ջինս, բրոյա շարՖոլ էր: Մազերը երկարել էին: Նա մի փոքր ծերացել էր, բայց շատ գեղեցիկ էր: Ժուլյենի տարիքի կանայք այդ գեղեցիկ ծերացումը կարող էին համարել անդուր և վրդովեցուցիչ: Նա չէր գիրացել և լավ կազմվածք ուներ, աչքերի մոտ՝ մի քանի խոր կնճիռ, սպիտակած քունքեր, դեմքին՝ հոգնատանջ մի շեշտ:

— Այո՛,— ասաց նա:

Նրանք ողջագուրվեցին, ժուլյենը հրավիրեց սուրճ խմելու, և Փարին համաձայնվեց:

— Ընկերուհիդ խիստ բարկացած է: Մարդասպանության աստիճանի:

Փարին շրջվեց և տեսավ Կոլլետին և էրիկին: Կոլլետը դեռ գոռում էր և բռնքբահարում օդը ու միևնույն ժամանակ նայում էր նրանց, և այդ տեսարանն անհեթեթ էր: Փարին զսպեց իր ծիծաղը, այդ պահին ծիծաղելը կարող էր ճակատագրական լինել: Նա ներողություն հայցող մի շարժումով ուները վեր քաշեց և հետ-հետ գնաց:

Փարին ու ժուլյենը գնացին մի փոքր սրճարան և նստեցին պատուհանի կողքին դրված սեղանիկի մոտ: Ժուլյենը պատվիրեց սուրճ և կրեմով խմորեղեն՝ հազարաթերթիկ: Նա խոսում էր մատուցողի հետ անվերապահ հեղինակություն ներշնչող տոնով, որը Փարին լավ էր հիշում: Փարին զգաց ծանոթ խլրտոցը ստամոքսի շրջանում, ինչպես այն ժամանակ, երբ դեռ փոքր աղջնակ էր, և ժուլյենը գալիս էր մայրիկին տեղ տանելու: Նա հանկարծակի զգաց իր արտաքին տեսքի թերությունները՝ կրծած եղունգները, չչ-

պարված դեմքը, անխնամ գանգուրները, իհարկե պետք էր չորացնել դրանք լուգանքից հետո, բայց Կոլլետը դուրս սլացավ գազանանոցի կենդանու պես, և նա ստիպված էր շուտ դուրս գալ:

— Երբևէ չեմ մտածել, որ դու ինչ-որ բանի դեմ կարող ես բողոքել,— ասաց Ժուլյենը՝ սիգարետ կպցնելով Փարիի համար:— Ապստամբող տեսակ չես:

— Ես ապստամբ չեմ: Դա ավելի շուտ մեղքի զգացում է, քան համոզմունք: Մեղավորություն:

— Մեղավոր ես զգում փոկերի որսի համար:

— Ո՛չ, մեղավոր եմ զգում Կոլլետի առաջ:

— Ա՛հ, այո՛, գիտես, ինձ թվում է՝ ես մի փոքր սարսափած եմ ընկերուհուցդ:

— Բոլորս էլ սարսափած ենք:

Նրանք քրքջացին: Ժուլյենը ձգվեց սեղանի վրայով և կպավ Փարիի շարֆին:

— Կասեի, որ դու մեծացել ես, Փարի՛, բայց դրանք շատ ծեծված խոսքեր են, դրա համար էլ չեմ ասի: Բայց դու սքանչելի տեսք ունես:

Փարին մատնահարում էր իր վերարկուի դարձածալը: Կոլլետը բազմիցս ասել էր, որ դա ինքնախարազանող միմոսության պես մի բան է, որով Փարին փորձում է քողարկել իր նյարդայնությունը այն տղամարդկանց մոտ, ում նա սիրահարված է: Մանավանդ, երբ այդ տղամարդիկ հաճոյախոսում են: Փարին կրկին նախանձեց մայրիկի բնական ինքնավստահ պահվածքին:

— Հիմա դու կասես, որ ես անբողջովին համապատասխանում եմ իմ անվանը,— ասաց Փարին:

— Ա՛հ, ո՛չ: Շատ կոպիտ է: Կնոջը հաճոյախոսելը արվեստ է, գիտես:

— Չգիտեմ, բայց վստահ եմ, որ դու գիտես:

Մատուցողը բերեց թխվածքն ու սուրճը: Փարին հայացքը սևեռեց սեղանի վրա ափսեներ ու բաժակներ դասավորող մատուցողի ձեռքերին: Նրա ափերը քրտինքից խոնավացել էին: Նրա կյանքում ընդամենը չորս տղամարդ էր եղել, և դա շատ համեստ թիվ էր, եթե համեմատվեր մոր կամ նույնիսկ Կոլլետի հետ: Փարին ավելի

խոհեմ, ավելի ողջախոհ, հարմարվող և համաձայնվող էր, ավելի կայուն և մոր ու Կոլլետի պես չէր հոգնեցնում տղամարդկանց: Բայց դրանք այն հատկանիշները չէին, որով կանայք գրավում են տղամարդկանց: Փարին չէր սիրել նրանցից ոչ մեկին, թեպետ մի անգամ ստել և ասել էր, որ սիրում է, բայց իր ամեն տղամարդու հետևում կարծես հառնում էր ժուլյենի ստվերը, և Փարին միշտ մտածում էր ժուլյենի և նրա գեղեցիկ դեմքի մասին, որ կարծես լուսավորված լիներ ներսից:

Մինչ ուտում էին, ժուլյենը պատմում էր իր աշխատանքից: Ասաց, որ էլ չի դասախոսում, աշխատում է միջազգային արժութային հիմնադրամում: Ասաց նաև, որ իր աշխատանքը սիրում է ճանապարհորդելու հնարավորության համար:

— Հորդանան, Իրաք: Հետո մի երկու տարի դադար տվեցի, որ գիրք գրեմ ոչ ֆորմալ տնտեսության մասին:

— Գիրքը հրապարակվեց:

— Դե, ասում են...

Նա ժպտաց:

— Հիմա ես աշխատում եմ մասնավոր խորհրդատվական ընկերության համար այստեղ՝ Փարիզում:

— Ես էլ կուզենայի ճանապարհորդել,— ասաց Փարին:— Կոլլետը անվերջ ասում է, որ մենք երկուսով պետք է գնանք Աֆղանստան:

— Կասկածում եմ, որ ես լավ գիտեմ, թե ինչու է Կոլլետը ուզում գնալ հենց այնտեղ:

— Ես մտածել եմ դրա շուրջ՝ Աֆղանստան գնալու մասին: Ես հաշիշ չեմ ծխում, բայց երկիրը կուզենայի տեսնել, չէ՞ որ ես այնտեղ եմ ծնվել: Միգուցե գտնեի այն հին տունը, ուր ապրում էի ծնողներիս հետ:

— Չգիտեի, որ նման մղումներ ունես:

— Ուղղակի հետաքրքիր է, այնքան քիչ բան եմ հիշում:

— Հիշում եմ, մի անգամ ասել ես, որ դուք խոհարար ունեիք:

Փարին ներքուստ շոյված էր, որովհետև ժուլյենը հիշեց մի բան, որ ինքը պատմել էր տարիներ առաջ: Ուրեմն ժուլյենը այս ժամանակահատվածում մտածել էր իր՝ Փարիի մասին: Փարին նրա մտքում էր:

— Այո՛, խոհարարի անունը Նաբի էր: Նա նաև մեր վարորդն էր: Վարում էր հորս մեքենան. մի մեծ կապույտ ամերիկյան մեքենա էր, կտուրը՝ բրոնզագույն: Հիշում եմ նաև արծվի գլուխը թափքի վրա:

Ընտո ժուլյենը հարցրեց Փարիին նրա դասերի մասին, և Փարին պատմեց, որ այժմ կենտրոնացած է կոմպլեքս թվերի բազմությունների վրա: Ժուլյենը շատ ուշադիր լսում էր, մայրը երբեք այդպես չէր լսում: Նիլան ձանձրանում էր մաթեմատիկայից, նրան ապշեցնում էր Փարիի կիրքն այդ առարկայի հանդեպ: Մայրը նույնիսկ չէր կարող ձևացնել, որ դա իրեն հետաքրքիր էր: Նա անհոգ կատակներ էր անում՝ ծաղրելով սեփական տգիտությունը:

— Օ՛հ, լա, լա,— ծիծաղում էր նա:— Խեղճ իմ գլուխ: Գլուխս պտտվում է տոտեմի պես: Արի պայմանավորվենք, Փարի: Ես քեզ մի բաժակ թեյ եմ տալիս, իսկ դու վերադառնում ես այս մոլորակ, բարի:

Նա քմծիծաղ էր տալիս, բայց Փարին այդ բարեհոգի կատակների տակ քողարկված հեզմանք էր զգում, մի թաքուն կշտամբանք, կարծես զբաղվում էր էզոթերիկ մի գիտությամբ, որով զբաղվելը թեթևամտություն էր: Թեթևամտություն: Բանաստեղծուհին չէ, որ պիտի խոսեր թեթևամտության մասին, բայց Փարին դրա մասին երբեք չէր խոսում մոր հետ:

Ժուլյենը հարցրեց, թե ինչն է մաթեմատիկայի մեջ գրավում Փարիին: Փարին պատասխանեց, որ մաթեմատիկան սփոփում է:

Ես կընտրեի «անհասկանալի» բնորոշումը՝ իբրև ավելի ճշգրիտ մակդիր:

— Դա էլ կա:

Փարին ասաց, որ սփոփանք է գտնում մաթեմատիկայի անխախտ ճշմարտությունների մեջ, ուր չկան վիճարկելիություն և երկիմաստություն: Պատասխանները կարող են դժվարհասանելի լինել, բայց նրանք վաղ թե ուշ կգտնվեն: Պատասխանները սպասում են, որ կավիճը գրատախտակին բանաձևեր գրելով հասնի իրենց:

— Այսինքն՝ կյանքից շատ տարբեր,— ասաց ժուլյենը:— Կյանքը հարցեր է տալիս՝ առանց պատասխանելու դրանց: Կամ էլ այդ պատասխանները շատ մշուշոտ են:

— Մի՞թե ես այդքան կանխատեսելի եմ:— Փարին ծիծաղեց և

դեմքը թաքցրեց անձեռոցիկի մեջ:— Ապուշի պես դուրս եմ տալիս:

— Բնավ ոչ:— Ժուլյենը մի կողմ տարավ անձեռոցիկը:—
Բնավ ոչ:

— Քո ուսանողների պես: Երևի ես հիշեցնում եմ քո ուսանող-
ներին:

Ժուլյենը էլի հարցեր տվեց, և Փարին հասկացավ, որ նա ծանոթ է թվերի անալիտիկ տեսությանը և գոնե մակերեսորեն կարդացել է Կարլ Գոսի և Բեռնհարդ Ռիմանի գործերը: Նրանք զրուցեցին այն-
քան, մինչև մթնեց: Սուրճ խմեցին, հետո գարեջուր վերցրին, իսկ
հետո՝ գինի: Հետո, երբ խոսակցությունը այլևս հնարավոր չէր ձգձ-
գել, ժուլյենը չդիմացավ և հարցրեց քաղաքավարի տոնով.

— Նիլան ինչպե՞ս է:

Փարին թշերը ուռեցրեց և օդը դուրս հանեց: Ժուլյենը հասկա-
նալով գլխով արեց:

— Կարող է կորցնել իր գրախանութը,— ասաց Փարին:

— Ցավալի է լսել:

— Արդեն քանի տարի է՝ գործերը լավ չեն գնում: Կարող է
ստիպված փակել գրախանութը: Թեև ցույց չի տալիս, բայց դա կա-
րող է մեծ հարված լինել նրա համար:

— Գրո՞ւմ է:

— Վաղուց արդեն չի գրում:

Ժուլյենը փոխեց խոսակցության թեման, և Փարին թեթևացած
շունչ քաշեց: Չէր ուզում պատմել մոր, նրա հարբեցողության և այն
պայքարի մասին, որ մղում էր մոր հետ, որ նա ընդունի դեղերը:
Փարին մտաբերեց այն շփոթված հայացքները, որ ինքն ու ժուլյենը
փոխանակում էին, երբ մենակ էին սենյակում: Մայրը հագնվում էր
մյուս սենյակում, իսկ ժուլյենը նայում էր Փարիին, և վերջինս փոր-
ձում էր ասելիք գտնել: Մայրը հաստատ գիտեր այդ մասին, միգու-
ցե դրա համար էլ կտրեց կապը ժուլյենի հետ: Եթե դա այդպես
էր, ապա Փարին մտավախություն ուներ, որ մայրը վարվել է իբրև
խանդոտ սիրուհի, ոչ թե իբրև հոգատար մայր:

Մի քանի շաբաթ անց ժուլյենն առաջարկեց Փարիին տեղա-
փոխվել իր մոտ: Նա ապրում էր Սենայի ձախափնյա յոթերորդ շր-
ջանում գտնվող մի փոքր կացարանում: Փարին համաձայնեց: Կոլ-

լետի աճող թշնամանքը իր սեփական բնակարանում մթնոլորտն անտանելի էր դարձրել:

Փարին հիշեց իր և Ժուլյենի առաջին համատեղ կիրակին Նրա բնակարանում: Նրանք փաթաթված թիկն էին տվել բազմոցին: Փարին հաճելի կիսանինջի մեջ էր, Ժուլյենը, երկար ոտքերը փոքր սեղանիկին դրած, թեյ էր խմում և կարդում թերթի վերջին էջի հոդվածները: Պտտվում էր ժակ Բրելի սկավառակը: Երբեմն-երբեմն Փարին շարժում էր գլուխը, և Ժուլյենը կռանալով համբուրում էր Նրա կոպերը, ականջը, քիթը:

— Պետք է մայրիկին պատմենք ամեն բան:

Փարին զգաց, որ Ժուլյենը լարվեց: Նա ծալեց թերթը, հանեց ականցն ու դրեց բազմոցի թիկնակին:

— Մայրիկը պետք է իմանա մեր մասին:

— Երևի:

— Երևի:

— Դե ոչ, իհարկե: Դու ճիշտ ես, դու պետք է զանգես Նրան: Բայց զգույշ եղիր: Ոչ թույլտվություն խնդիր, ոչ էլ ներում հայցիր: Ոչ մեկն էլ չես ստանա, ուղղակի տեղյակ պահիր Նրան: Վստահ տոնով, որ նա հասկանա, որ հարցը քննարկման ենթակա չէ:

— Հեշտ է ասել:

— Միգուցե: Միշտ հիշիր, որ Նիլան վրեժխնդրության ծարավ ունի: Ցավում եմ դրա համար, բայց հենց այդ պատճառով էլ ընդհատվեցին մեր հարաբերությունները: Անտանելի վրեժխնդիր է: Դրա համար էլ գիտեմ, որ դա քեզ համար հեշտ չի լինի:

Փարին հառաչեց ու փակեց աչքերը: Այդ մտքից ստամոքսը ուժգին սեղմվեց:

Ժուլյենը ափով շոյեց Նրա մեջքը:

— Մի՛ եղիր այդքան մանրախնդիր:

Փարին զանգեց հաջորդ օրը, և մայրն արդեն ամեն բան գիտեր:

— Ո՛վ ասաց քեզ:

— Կոլլետը:

«Իհարկե»,— մտածեց Փարին:

— Ես պատրաստվում էի ասելու քեզ:

— Իհարկե, դա էլ անում ես հիմա: Նման բանը չի կարելի թաքցնել:

— Զայրացած ես:

— Իսկ դա քեզ համար նշանակություն ունի:

Փարին կանգնած էր պատուհանի մոտ և մատը մտացրիվ սահեցնում էր ժուլյենի հին, ճաքճված մոխրամանի կապույտ շրջանակի վրայով: Աչքերը փակ ասաց.

— Ո՛չ, մայրիկ, չունի:

— Կուզենայի հիմա քեզ ասել, որ ցավ չեմ ապրում, բայց...

— Ես դա նկատի չունեի:

— Դե դա դեռ մեծ հարց է:

— Ինչո՞ւ պիտի ուզենայի քեզ ցավ պատճառել, մայրիկ:

Մայրը ծիծաղեց դատարկ և տհաճ ծիծաղով:

— Երբեմն նայում եմ քեզ և ինձ չեմ տեսնում քո մեջ: Իհարկե, չեմ տեսնում, և դա իհարկե անսպասելի չէ: Ես չգիտեմ, թե դու ինչ տեսակի մարդ ես, չգիտեմ՝ ինչի ես ընդունակ, ինչ է հոսում երակներիդ մեջ: Դու օտար ես ինձ:

— Չեմ հասկանում՝ ինչ ես ասում,— ասաց Փարին:

Բայց մայրն արդեն կախել էր լսափողը:

*Հատված «Աֆղանական երգող թռչունը» հարցազրույցից
Նիլա Վահրատիի հետ, հարցազրուցախար՝ Էտյեն Բուատուլիե
Պարալաքս 84 (Չմեռ, 1974) էջ 38*

Է. Բ.— Ֆրանսերեն այստեղ սովորեցիր:

Ն. Վ.— Մայրս էր սովորեցնում ինձ Քաբուլում, երբ դեռ շատ փոքր էի: Հետո միայն ֆրանսերեն էր խոսում: Մենք ամեն օր պարապում էինք: Ծառ ծանր տարա, երբ նա հեռացավ Քաբուլից:

Է. Բ.— Ֆրանսիսի եկալ:

Ն. Վ.— Այո: Ծնողներս բաժանվեցին 1939-ին, երբ ես տասը տարեկան էի: Ես հորս միակ ժառանգն էի, և պարզից պարզ էր, որ պիտի մնայի հորս հետ: Ու ես մնացի, իսկ մայրս գնաց Փարիզ՝ իր քրոջ՝ Ազնեսի մոտ: Հայրս փորձում էր կորուստը փարատել: Նա վարձեց ինձ համար մասնավոր ուսուցիչներ, ես սովորում էի ձի

քշել և նկարել: Բայց ոչինչ չի կարող փոխարինել մորը:

Է. Բ.— Իսկ ի՞նչ եղավ Ձեր մոր հետ:

Ն. Վ.— Օ՛հ, նա մահացավ, երբ Ֆաշիստները մտան Փարիզ: Նրանք ձեռք չտվեցին մորս, բայց սպանեցին նրա քրոջը, իսկ մայրս մահացավ թոքաբորբից: Հայրս չէր պատմում ինձ ոչինչ, մինչև դաշնակիցները չազատագրեցին Փարիզը, բայց ես արդեն գիտեի: Պարզապես գիտեի:

Է. Բ.— Դա դժվար էր երևի:

Ն. Վ.— Դա սարսափելի էր: Ես սիրում էի մորս և ուզում էի սպրել նրա հետ Ֆրանսիայում պատերազմից հետո:

Է. Բ.— Ենթադրում եմ՝ դուք հաշտ չէիք Ձեր հոր հետ:

Ն. Վ.— Մեր միջև լարվածություն կար, և մենք վիճում էինք բավականին հաճախ, ինչը նորություն էր հորս համար: Նա սովոր չէր, որ կանայք իրեն հակաճառեն: Ամեն անգամ վիճաբանում էինք, թե ինչ եմ ես հագնում, ուր եմ գնում, ինչ եմ ասում, ինչպես եմ ասում և ում եմ ասում: Ես համարձակ էի ու արկածախնդիր, իսկ նա դառնում էր մենակյաց ու խտրապահանջ: Մենք թշնամիներ էինք:

Նիլան քմծիծաղ տվեց և ամրացրեց բանդանայի հանգույցը ծոծրակի մոտ:

Ն. Վ.— Ես սկսեցի սիրահարվել: Որպես կանոն, սերերս անհույս էին, և ի սարսափ հորս, ես սիրահարվում էի սխալ մարդկանց: Դե, կառավարչի որդուն էի սիրահարվում կամ ցածր դասի մի շինովնիկի, ով հորս համար գործավարություն էր անում: Հանդուգն ու կանակոր սիրավեպեր էին դրանք, որ ի սկզբանե դատապարտված էին: Ես կազմակերպում էի գաղտնի ժամադրություններ և աննկատ դուրս էի գալիս տնից: Հետո ինչ-որ մեկը նրան տեղեկացնում էր, որ ինձ տեսել են փողոցում: Ասում էին, որ ես քարշ եմ գալիս. հենց այդպես էլ միշտ ձևակերպում էին: «Քարշ է գալիս»: Կամ էլ ասում էին, որ ես ինձ ցուցադրում եմ: Հայրս մի հետախուզական խումբ էր ուղարկում, որ ինձ հետ բերի: Օրերով ինձ փակում էին տանը: Նա էլ նստում էր դռան մյուս կողմում և բղավում. «Ինչո՞ւ ես դու ինձ ստորացնում, ի՞նչ անես քեզ հետ»: Եվ երբեմն իր հարցերի պատասխանը տալիս էր գոռու կամ բռունց-

քի օգնությամբ: Հետևիցս ընկած՝ վազում էր սենյակով մեկ: Կարծում էի՝ կվախեցնի ինձ ու կատրկացնի: Այդ ժամանակ ես շատ էի գրում՝ երկար, սկանդալային բանաստեղծություններ՝ պատանեկան կրթով շաղախված: Իհարկե, բավական մեղողբամատիկ և շինծու: Վանդակում փակված թռչուններ, շղթայված սիրահարներ, նման բաներ: Իհարկե, չեմ հպարտանում այդ իմ ստեղծագործություններով:

Ես հասկացա, որ Նիլան կեղծ համեատության զոհ չի գնա: Ուրեմն, նա անկեղծորեն իր վաղ ստեղծագործություններին տվեց նման խիստ գնահատական: Եվ եթե Նիլան անկեղծ էր, ապա գնահատականը խտրագույնս անարդար էր, որովհետև նրա այդ ժամանակաշրջանի բանաստեղծությունները հիասքանչ են, նույնիսկ թարգմանաբար, մանավանդ, եթե հաշվի առնենք հեղինակի երիտասարդ տարիքը: Այդ բանաստեղծությունները հուզիչ են, պատկերներով, զգացմունքներով, երևակայությամբ և նրբությամբ լի: Նրանք մի թովիչ պատմություն են միայնության և անծայրածիր վշտի մասին: Դա Նիլայի հուսահատությունների, երիտասարդ սիրո վայրիվերումների, տառապանքների և թակարդների իրական ժամանակագրությունն էր՝ իր խոստումներով և լուսավոր տխրությամբ: Եվ այնտեղ միշտ կար տարանցիկ կլաուստրաֆոբիայի, փակվող հորիզոնի զգացողություն, ինչպես նաև միշտ պայքար կար հանգամանքների տիրակալության դեմ, և բռնապետն այս պարագայում հանկարծակի հայտնվող մի չարագուշակ տղամարդկային կերպարանք էր: Դա թափանցիկ մի ակնարկ էր Նիլայի հոր մասին, և ես այդ ամենը ասացի բանաստեղծուհուն:

Է. Բ.— Այս բանաստեղծություններում Դուք հեռացել եք ռիթմից, հանգից և չափականությունից, որոնք այնքան բնորոշ են արևելյան դասական բանաստեղծությանը: Ձեր պատկերները ազատորեն ծավալվում են բանաստեղծության ներսում: Դուք կարևորություն եք տալիս չնչին, առօրյա մանրուքներին, և ես հասկանում եմ, որ դա բանաստեղծական հեղաշրջում է: Կարելի է ասել, որ եթե դուք ծնված լինեիք մի ավելի հարուստ պետության մեջ, ասենք՝ Իրանում, կճանաչվեիք իբրև գրական ռահվիրա:

Նիլան ժպիտով արտաբերեց.

Ն. Վ.— Պատկերացնում եմ:

Է. Բ.— Ես ցնցված եմ Ձեր ասածից: Դուք ասացիք, որ գոհ չեք Ձեր վաղ ստեղծագործություններից: Իսկ Ձեր գրվածքներից ինչ-որ բան Ձեզ գոհացնում է:

Ն. Վ.— Դա կնձռոտ հարց է: Այդ հարցին դրական պատասխան կարող եմ տալ միայն մի դեպքում, եթե տարանջատեմ ստեղծագործությունն ու նրա ստեղծման պատմությունը:

Է. Բ.— Ուզում եք անջատել նպատակներն ու միջոցները:

Ն. Վ.— Ստեղծագործական գործընթացը իմ կարծիքով շատ նման է գողության: Փորփրեք ցանկացած երկի ստեղծման պատմությունը, մայր՝ Բուստուլիե, և Դուք շատ անպատվաբեր բաներ կգտնեք: Ստեղծագործել նշանակում է ներխուժել այլ մարդկանց կյանք՝ դարձնելով նրանց անկար ու անստեղյակ մասնակիցներ, գողանալ նրանց իդեերը, նրանց երազանքները, նրանց սխալներն ու տառապանքները: Դու յուրացնում ես այն, ինչ քեզ չի պատկանում, և դա անում ես գիտակցաբար:

Է. Բ.— Բայց դա Ձեզ լավ հաջողվում է:

Ն. Վ.— Ես դա արել եմ ոչ արվեստի հանդեպ բարձր ու վեհ սիրուց, այլ որովհետև այլ ընտրություն չունեի: Եթե ես չդիմեի այդ միջոցին, խելքս կթոցնեի: Դուք հարցնում եք՝ հպարտանում եմ ես, թե ոչ, իսկ ես դժվարանում եմ ցուցադրել մի բան, որին հասել եմ բարոյական տեսանկյունից խնդրահարույց ձևով: Եվ թողնում եմ, որ ուրիշները որոշեն՝ դա բանաստեղծություն է, թե ոչ:

Նիլան խմեց գինին և շիշը դատարկեց բաժակի մեջ:

Ն. Վ.— Ասեմ Ձեզ, որ Քարուլում ինձ նման բնութագիր չէին տալիս: Քարուլում որևէ մեկը չէր ասում, որ ես ռահվիրա եմ, հակառակը, ես վատ ճաշակի, անառակության և անբարոյականության ցուցանիշ էի բոլորի համար, և հայրս էլ բացառություն չէր: Նա ասում էր, որ գրվածքներս անառակի դեգերումներ են: Նա հենց այդ բառն էլ օգտագործում էր: Ասում էր, որ աղտոտել եմ ընտանիքի պատիվն անդառնալիորեն: Ասում էր, որ խորտակել եմ իր հույսերը: Հարցնում էր՝ ինչու չեմ ուզում արժանապատիվ կյանք վարել:

Է. Բ.— Իսկ Դուք ինչ էիք ասում ի պատասխան:

Ն. Վ.— Ես ասում էի, որ այդ արժանապատվությունն ինձ համար գրոշի արժեք չունի, և ես չեմ ուզում վզիս խեղդողակ փաթաթել:

Է. Բ.— Ես կարծում եմ՝ այդ խոսքերից Ձեր հայրն ավելի էր բարկանում:

Ն. Վ.— Բնական է:

Այդ պահին վարանեցի, բայց, միևնույնն է, ասացի:

Է. Բ.— Ես հասկանում եմ նրա զայրույթը:

Նիխան հոնքերը վեր բարձրացրեց:

Է. Բ.— Նա նահապետական մարդ էր, այնպես չէ՞: Եվ դուք ուղիղ մարտահրավեր էիք նետում այն ամենին, ինչ ծանոթ ու թանկ էր նրա համար: Եվ Ձեր կենսաձևն ու գրեթե ուրիշ մի պայքար էին կյանքում կնոջ նոր տեղի համար: Դուք պայքարում էիք, որ կանայք ձայնի իրավունք ունենան, որ գիտակցեն իրենց ինքնությունն ունենալու իրավունքը: Եվ, իհարկե, վիճարկում էիք այն մենաշնորհը, որ դարեր շարունակ տղամարդկանց ձեռքերում էր, ասում էիք այն, ինչ ասելն արգելված էր: Կարճ ասած՝ իրականացնում էիք փոքր հեղափոխություն մեկ անձի համար:

Ն. Վ.— Իսկ ես այսքան ժամանակ կարծում էի, որ պարզապես գրում եմ սեքսի մասին:

Է. Բ.— Չե՞ք կարծում, որ սեքսը այդ ամենի մաս էր կազմում ընդամենը, այդպես չէ՞:

Ես թերթեցի գրառումներս և նշեցի մի քանի բացահայտորեն էրոտիկ բանաստեղծություններ՝ «Տառասկներ», «Եվ միայն սպասում», «Բարձր»: Նաև խոստովանեցի, որ այդ գրվածքներն առանձնապես ինձ դուր չեն գալիս, որովհետև գուրկ են երանգներից և այլասացությունից: Կարծես հատուկ տեղեցված լինեն, որ մարդկանց մեջ առաջացնեն շոկի և զայրույթի զգացողություն: Բայց Աֆղանստանում սեռերի վերապահված դերակատարման տեսանկյունից այդ բանաստեղծությունները հնչում են իբրև մեղադրանք, և դա շատ վիճահարույց է ու հետաքրքրաշարժ:

Ն. Վ.— Հաշվի առեք, որ ես իսկապես բարկացած էի: Բարկացած էի, որովհետև ինձ փորձում էին պաշտպանել սեքսից, այսինքն՝ ինձ պաշտպանում էին իմ սեփական մարմնից, մի-

այն որովհետև ես կին էի: Իսկ դուք իհարկե գիտեք, որ կանայք հուզական, բարոյական և մտավոր առումով հասուն չեն: Նրանք, պարզվում էր, չունեն ինքնատիրապետում և շատ արագ են գայթակղվում, գերսեքսուալ արարածներ են, և նրանց պետք է զսպել, որ չմոռնեն անկողին ամեն պատահած Ահմեդի կամ Մահմուդի հետ:

Է. Բ.— Կներեք հարցիս համար, Դուք էլ էիք այդպես վարվում:

Ն. Վ.— Իմը բողոք էր, միմիայն բողոք այդ իրավիճակի դեմ:

Նիլան հրաշալի ծիծաղ ուներ՝ տխրությանը և խորամանկ խորթախանցությանը լի: Հարցրեց՝ արդյոք ուզում եմ ճաշել:

Ասաց, որ աղջիկը նոր է տարբեր ուտեստներ բերել, և առաջարկեց ինձ ծխեցրած բեկոնով հիանալի սենդվիչ: Սենդվիչը պատրաստել էր միայն ինձ համար: Իսկ իր համար Նիլան բացեց գինու նոր շիշ, վստեց ևս մի սիգարետ ու նստեց:

Ն. Վ.— Համաձայն եք, որ հարցազրույցի կայացման համար մենք պետք է լավ հարաբերությունների մեջ լինենք:

Է. Բ.— Դե, իհարկե:

Ն. Վ.— Այդ դեպքում երկու ծառայություն մատուցեք ինձ: Կներեք Ձեր սենդվիչն ու էլ մի նայեք իմ բաժակին:

Կասկած չկա, որ դրանով Նիլան կոտորեց իր հարբեցողության մասին հարցեր տալու իմ բոլոր մղումները:

Է. Բ.— Իսկ ինչ պատահեց հետո:

Ն. Վ.— Ես հիվանդացա 1948 թվականին, երբ տասնինը տարեկան էի. լուրջ հիվանդացա, և միայն այդքանը կասեմ: Հայրս ինձ Դեյի տարավ՝ բուժման, և մնաց այնտեղ ինձ հետ վեց շաբաթ, մինչ բժիշկները խնամում էին ինձ: Ինձ սասցին, որ ես մսեղան շեմին եմ: Միզուցե մեռնելը երիտասարդ բանաստեղծուհու համար կարող էր լինել իրական նվաճում: Երբ վերադարձանք, թուլացած էի և կոտրված ու էլ չէի գրում: Ինձ չէին հետաքրքրում ուտելիքը, զրույցները կամ զվարճությունները: Փախչում էի այցելություններից: Միայն մի բան էի ուզում՝ քաշել վարագույրները և քնել անբողջ օրը: Այդպես էլ անում էի: Ի վերջո վեր կացա անկողնուցս և սկսեցի զբաղվել ամենօրյա գործերով: Նկատի ունեմ այն կարևորագույն հարցերը, որ յուրաքանչյուր մարդ պիտի հոգա, եթե ուզում է լինել

գործունյա և դույզն-ինչ քաղաքակիրթ: Բայց ես նվաստացած էի զգում: Կարծես մի կենսական մաս թողել էի Հնդկաստանում:

Է. Բ.— Ձեր հայրը մտահոգված էր:

Ն. Վ.— Ճիշտ հակառակը: Նա կարծում էր, որ իմ հանդիպումը մահվան հետ դուրս է մղել իմ տեսությունն ու կամակորոթյունը: Նա այդպես էլ չհասկացավ, որ ես ինձ կորած էի զգում: Ես կարդացել եմ, մայր՝ Բուստուլիե, որ երբ մարդ մնում է ձյան սողանքի տակ, այդ ձնակույտի տակ պատկած՝ չի կարող տարբերակել վերևն ու ներքևը: Փորձում է փորելով գտնել իր ճանապարհը, բայց փորում է սխալ ուղղությամբ և խորտակում է ինքն իրեն: Ահա թե ինչպես էի ես զգում՝ մոլորված, շփոթմունքի մեջ կախակայված, ուղղությունս կորցրած և, իհարկե, անասելիորեն հուսալքված: Այդ վիճակում մարդը խիստ խոցելի է, և դա է պատճառը, որ ես տվեցի համաձայնությունս, երբ 1949 թվականին Սուլեյման Վահդատին խնդրեց իմ ձեռքը:

Է. Բ.— Դուք քսան տարեկան էիք:

Ն. Վ.— Ես՝ այո, նա՝ ոչ:

Նիլան ինձ ևս մի սենդվիչ առաջարկեց, ես մերժեցի, իսկ հետո՝ սուրճ, որը ես ընդունեցի: Նա թեյնիկը դրեց եռալու և հարցրեց՝ ամուսնացած եմ արդյոք: Պատասխանեցի, որ ամուսնացած չեմ և չեմ էլ պատրաստվում: Նիլան ուսի վրայից երկար նայեց ինձ և քմծիծաղ տվեց:

Ն. Վ.— Ա՛հ, ես այդպես էլ գիտեի:

Է. Բ.— Ջարմանայի է:

Ն. Վ.— Գուցե դա ուղեղի ցնցումն է:

Նիլան մտնոնացույց արեց գլխի բանդանան:

Ն. Վ.— Սա մոդայիկ գլխակապ չէ: Մի երկու օր առաջ ես սայթաքեցի ընկա և վնասեցի ճակատս: Բայց Ձեր մասին գիտեմ ամեն ինչ ի սկզբանե, որովհետև փորձս հուշում է, որ այն տղամարդիկ, որ Ձեզ պես հասկանում են կանանց, որպես կանոն, չեն ուզում գործ ունենալ նրանց հետ:

Նիլան ինձ սուրճ տվեց:

Ն. Վ.— Ես մի տեսություն ունեմ ամուսնության մասին, մայր՝ Բուստուլիե: Երկու շաբաթվա ընթացքում կարելի է հասկանալ՝

ամուսնությունը հաջող է, թե ոչ: Ապշեցուցիչ է, թե ինչպես մարդիկ տարիներ, նույնիսկ տասնամյակներ ապրում են շրթաների մեջ, երկարուձիգ փոխադարձ խաբեության և կեղծ հույսի ճիրաններում, մինչդեռ պատասխանն ի սկզբանե հայտնի է հենց այդ մեկ-երկու շաբաթվա մեջ: Ես, օրինակ, ավելի շուտ հասկացա: Իմ ամուսինը շատ պարկեշտ մարդ էր: Բայց նա չափազանց լուրջ էր, ինքնամիտի և անհետաքրքիր: Եվ այդ ամենից զատ՝ նա սիրահարված էր իր վարորդին:

Է. Բ.— Երևի դա մեծ ցնցում էր Ձեզ համար:

Ն. Վ.— Դե, դա թանձրացրեց գույները:

Նիլան թեթև տխրությամբ ժպտաց:

Ն. Վ.— Ես ցավում եմ նրա համար: Նա ծնվելու համար ընտրել էր ամենավատ վայրը և ամենավատ ժամանակը: Նա մահացավ կաթվածից, երբ մեր դուստրը վեց տարեկան էր: Այդ ժամանակ ես դեռ կարող էի մնալ Քարբուլում, որովհետև տուն ունեի, և ինձ էր պատկանում ամուսնու ամբողջ ունեցվածքը: Նաև այգեպան ունեի և վարորդ, որի մասին արդեն նշեցի: Ես կարող էի շատ հանգիստ կյանքով ապրել, բայց ճանկարուկները հավաքեցի, և Փարիի հետ տեղափոխվեցինք Փարիզ:

Է. Բ.— Ինչպես դուք նշեցիք, տեղափոխվել եք այստեղ Ձեր դստեր համար:

Ն. Վ.— Ինչ արել եմ, պարոն, արել եմ աղջկաւ համար: Նա չի գնահատում և չի գիտակցում իմ նվիրման չափը: Նա երբեմն ապշեցուցիչ անտարբեր է, իմ աղջիկը: Եթե նա միայն իմանար՝ ինչ կյանքով կարող էր ապրել, եթե ես չլինեի:

Է. Բ.— Ձեր աղջիկը Ձեր հիասթափությունն է:

Ն. Վ.— Մյո՛ր Բուստուլիե, քիչ-քիչ սկսում եմ մտածել, որ նա իմ պատիժն է:

1975 թվականին Փարիս ներս մտավ իր նոր բնակարան և մահճակալի վրա մի փոքր փաթեթ տեսավ: Մեկ տարի էր անցել մոր՝ հիվանդանոցից դուրս գրվելուց և ինը ամիս՝ իր և Ժուլյենի բաժանումից: Փարիս այժմ ապրում էր Զահիա անունով մի երիտասարդ բուժքույր ուսանողի հետ: Զահիան ավիրցի էր՝ գանգուր շագանա-

կագույն մագերով և կանաչ աչքերով: Բանիմաց աղջիկ էր, կենսա-խիղճ ու թեթև բնավորությամբ, և նրանք հանգիստ և հաշտ ապրում էին: Վերջերս Զահիան նշանվել էր իր ընկերոջ՝ Սամիրի հետ և ուսումնական կիսամյակի վերջում պիտի տեղափոխվեր նրա մոտ:

Փաթեթի հետ մի ծալված թուղթ կար, ուր գրված էր. «Սա քո անունով է եկել: Ես այս գիշեր մնում եմ Սամիրի մոտ: Ցտեսություն, մինչև վաղը: Համբուրում եմ, Զահիա»:

Փարին պատռեց փաթեթը, ներսում մի ամսագիր էր՝ վրան փակցված մի երկտող, ուր ծանոթ, կանացի նրբագեղ ձեռագրով գրված էր. «Սա ուղարկել են Նիլային, հետո՝ այն զույգին, որ հիմա ապրում է Կոլլետի բնակարանում, իսկ նրանք էլ փոխանցել են ինձ: Դու պետք է ասես նրանց քո նոր հասցեն: Կարդա՛ այն՝ ի դժբախտություն քեզ: Վախենում եմ՝ երկուսիս գործերն էլ լավ չեն, ժույլ են»:

Փարին գցեց ամսագիրը անկողնու վրա և պատրաստեց սպանախի սալաթ և *կուսկուս*²⁷: Հազավ գիշերազգեստը և մի ֆիլմ նայեց վարձով վերցրած սև-սպիտակ հեռուստացույցով: Մտաքրիվ դիտում էր օղանավով *Գուսա*²⁸ տեղափոխված հարավային վիետնամցի փախստականների ժամանման տեսարանը: Մտածեց Կոլլետի մասին, որ պայքարում էր Վիետնամում ամերիկացիների ներխուժման դեմ: Կոլլետը գեորգիաններով և մարգարտածաղիկներով մի պսակ բերեց մայրիկի շիրիմին, գրկեց ու համբուրեց Փարին ու հրաշալի ասմունքեց մայրիկի գերեզմանի մոտ:

Ժույլենը ներկա չգտնվեց սգո արարողություններին: Նա ուղղակի զանգեց և անվստահ ձայնով ասաց, որ չի սիրում սգո արարողություններ. ընկճվում է նման բաներ տեսնելուց:

— Իսկ ո՞վ չի ընկճվում,— հարցրեց Փարին:

— Ես կարծում եմ, որ ճիշտը ազնվորեն ասելն է:

— Վարվիր այնպես, ինչպես հարմար ես գտնում,— ասաց Փարին և մտածեց. «Քո չգալը քեզ չի արդարացնում: Եվ իմ ջերմեռանդ մասնակցությունն էլ ինձ չի արդարացնում: Օհ, ինչ անխոհեմ էինք

²⁷ Կուսկուս — Հյուսիսային Աֆրիկայում և Մերձավոր Արևելքում տարածված ուտեստ:

²⁸ Գուսամ — Միացյալ Նահանգների իրավասության տակ գտնվող տարածք Խաղաղ օվկիանոսի արևմտյան հատվածում:

մենք, ինչ անմիտ, Աստված իմ»:

Փարին կախեց լսափողը՝ խորապես համոզված, որ իր սիրավեպը ժույլենի հետ մոր համար վերջին կաթիլը եղավ: Նա անջատեց հեռախոսը՝ գիտակցելով, որ իր ամբողջ կյանքում, ամենաանպատեհ պահերին նա վերապրելու է մեղավորության այդ զգացումը, այդ սարսափելի խղճի խայթոք ցավեցնելու է նրան մինչև ոսկորները: Եվ իր մնացած կյանքի ընթացքում նա պայքարելու է այդ զգացողության դեմ, որն ուղեղի ետնաձալքում թմբկահարելու է իրեն ծորակից հոսող ջրի կաթիլների պես:

Փարին ճաշեց, հետո լոգանք ընդունեց և աչքի անցկացրեց գալիք քննության գրառումները: Էլի մի քիչ էլ հեռուստացույց նայեց, լվաց և սրբեց ափսեները, ավլեց խոհանոցի հատակը: Ամենն իզուր էր: Չէր կարողանում շեղվել մտքերից, ամսագիրը դեռ մահճակալին էր և լցվում էր ուղեղի մեջ ցածր հաճախականության գվվոցի պես:

Հետո հազավ վերարկուն, հենց գիշերազգեստի վրա և գնաց շրջելու: Բուվար դե լա Շապելի մոտակայքում՝ իր բնակարանից մի քանի շենք ներքև, օդը սառն էր, անձրևի կաթիլները կոկտացնում էին մայթին և ցուցափեղկերին, բայց նրա անհանգստությունն անտանելի էր դառնում բնակարանի չորս պատերի ներսում: Այժմ Փարիին անհրաժեշտ էին այդ ցուրտ, խոնավ օդը և բաց տարածությունը:

Երբ նա փոքր էր, մորը անվերջ հարցեր էր տալիս. «Մայրիկ, ես Քաբուլում ունե՞մ եղբայրներ և քույրեր, իսկ ունե՞մ արդյոք քեռիներ, հորաքույրներ կամ տատիկներ ու պապիկներ: Ինչո՞ւ նրանք երբևէ չեն գալիս մեր տուն: Իսկ կարելի՞ է նամակ գրել նրանց: Իսկ մենք չենք կարող գնալ նրանց այցելության»:

Շատ հարցեր ծավալվում էին հենց հոր շուրջը: «Հայրիկի սիրած գույնը ո՞րն է, մայրիկ: Ասա՛ ինձ, մայրիկ, հայրիկը լավ լողորդ էր: Իսկ նա շատ էր կատակներ անում»: Փարին հիշում էր, երբ հոր հետ բռնոցի էր խաղում: Հայրը նրան գլորում էր գորգի վրա և խուտուտ տալիս ոտքերն ու փորը: Հիշում էր լավանդա օձառի բուրմունքը, բարձր փայլուն ձակատը և երկար մատները: Նաև հիշում էր օվալաձև լազուրիտե թևաձարմանդները և արդուկած շավարի

ծալքը: Եվ փոշին բարձրանում էր գորգից հատիկ-հատիկ:

Փարին միշտ ցանկացել էր, որ մայրն ազուցի, կապի իրար իր հիշողության առանձին, անկապ պատառիկները՝ կերտելով մի միաձույլ պատմություն: Բայց մայրը նախընտրում էր քիչ խոսել, թաքցնում էր իր անձնական և նրանց համատեղ կյանքի մանրամասները: Հեռու էր պահում Փարիին իր անցյալից, և ի վերջո Փարին դադարեց հարցեր տալուց:

Իսկ հիմա, պարզվում է, մայրն այդ ամսագրի հարցազրուցավար էտյեն Բուստուլիեին ավելի շատ բան է պատմել իր կյանքից, քան իրեն՝ իր հարազատ աղջկան:

Բայց պատմել էր արդյոք:

Փարին հարցազրույցը երրորդ անգամ կարդաց իր բնակարանում: Նա չգիտեր՝ ինչ մտածի և ինչին հավատա, քանզի հարցազրույցը կեղծ էր հնչում, որոշ հատվածներ կարծես պարողիա լինեին՝ մռայլ մելոդրամա, ուր ապրում էին շղթայված գեղեցկուհիներ, դատապարտված սերեր և անվերջանալի բռնություն, ընդ որում՝ այդ ամենը ներկայացված էր շնչասպառ, բարձրագույն ոճով:

Փարին քայլում էր դեպի արևմուտք՝ Պիգալ հրապարակի ուղղությամբ, ձեռքերը անձրևանոցի գրպաններում՝ փութաջան շարժվում էր առաջ: Երկինքը արագ մթնում էր, և անձրևը խփում էր նրա դեմքին, վերածվում էր հեղեղի և հոսում էր ապակիների վրայով, մշուշում մեքենայի լույսերը: Փարին չէր կարող հիշել՝ հանդիպել է արդյոք երբևէ իր մորական պապին: Հիշում էր, որ տեսել է լուսանկարը, որ պապը սեղանի մոտ նստած թերթ էր կարդում, բայց խիստ կասկածում էր, որ նա նման է այն ոլորած բեղերով ավազակին, ում մայրը ներկայացնում էր իր պատմության մեջ: Փարին մտածեց, որ հասկանում է մոր պատմության իրական հիմքը: Այդ կապակցությամբ Փարին իր կարծիքն ուներ: Նրա պատկերացմամբ՝ Նիլայի հայրը արդարացիորեն անհանգստացած էր իր դժբախտ և ինքնակործանման մոլուցքով տառապող աղջկա կյանքով, մինչդեռ աղջիկը հետևողականորեն ավերում էր սեփական կյանքը: Այդ մարդը դստեր վարքագծի պատճառով կրում էր ստորացման, անպատվության զրկանքները, բայց, միևնույնն է, երբ Նիլան հիվանդացավ, հայրն իր կողքին էր, տարավ նրան Հոդկաստան՝ բուժման, և հետը

մնաց վեց շաբաթ: Եվ իսկապես, ինչ էր եղել մայրիկի հետ: Փարին սկսեց մտածել մոր փորի ուղղահայաց սպիի մասին, քանի որ Զահիան նրան պատմել էր, որ կեսարյան հատման սպիները հորիզոնական են:

Եվ պատմությունը իր ամունու՝ Փարիի հոր մասին: Միթե դա զրպարտություն էր: Իսկ գուցե հայրն իրոք սիրահարված էր իր վարորդին՝ Նաբիին: Եվ եթե դա էր ճշմարտությունը, ինչ իմաստ ունի բացահայտելու դա մարդկանց շփոթեցնելու, ստորացնելու և ցավ պատճառելու համար: Ո՞ւմ էր մայրն ուզում ցավ պատճառել:

Հետաքրքիր է, որ Փարին բնավ զարմացած չէր իրեն՝ մոր տված բացասական գնահատականից, հատկապես Ժուլյենից հետո: Զարմանալի չէր նաև, որ իր մայրական դերակատարումը նա ներկայացրել էր խեղաթյուրված և խտրական ձևով:

Ստե՛ր էին դրանք:

Սակայն մի խնդիր կար:

Մայրը տաղանդավոր գրող էր: Փարին կարդացել էր նրա ֆրանսերենով գրվածքների յուրաքանչյուր տողը և նաև բոլոր թարգմանությունները՝ ֆարսիից: Մոր ստեղծագործությունների ուժն ու գեղեցկությունը անժխտելի արժեքներ էին: Բայց եթե մոր կյանքի պատմությունը ամբողջովին կեղծիք էր, որտեղից էին հայտնվել այդ բոլոր պատկերները: Ո՞ւր էր այն ակունքը, որտեղից դուրս էին ծորում այդ ազնվաբարո, հիասքանչ և միաժամանակ կոշտ ու տխուր բառերը: Միթե մայրը հնուտ աճպարար էր միայն, որը ձեռքին պահում էր գրիչը կախարդական փայտիկի փոխարեն և հուզում էր իր հանդիսատեսին՝ մոգոնելով զգացումներ, որ ինքը երբեք չէր ապրել: Հնարավոր է արոյոք:

Փարին չգիտեր, իրապես չգիտեր, և դա էր երևի մոր իրական նպատակը. նա ուզում էր, որ հողը փախչի Փարիի ոտքերի տակից: Ապակայունացնել, ապակողմնորոշել, այնպես անել, որ Փարին օտարանա ինքն իր անձից, գցել նրան ծանր կասկածների մեջ այն ամենի վերաբերյալ, ինչ գիտեր կամ մտածում էր, որ գիտեր սեփական կյանքի մասին: Եվ նրա քայլերն այնքան մոլորված էին, կարծես դեգերում էր գիշերային անապատում, խավարի և անորոշության մեջ, և ճշմարտությունը խոյս էր տալիս նրանից երևացող, շարժ-

վող, վառվող ու հանգչող լույսի միայնակ և վեհերոտ շողի նման:

«Երևի սա մորս վրեժն է»,— մտածեց Փարին: Եվ ոչ միայն ժուլյենից, այլև իրենից՝ իր մշտնջենական հիասթափության համար: Փարին իր ներկայությամբ պետք է վերջ տար հարբեցողությանը, տղամարդկանց շարանին և երջանկության հուսահատ փնտրտուքի վրա վատնած տարիներին: Բոլոր ճանապարհների սկիզբն ու վերջը փակուղին էր: Հիասթափության յուրաքանչյուր հարված մորը դարձնում էր առավել փխրուն ու հուսահատ, իսկ երջանկության պատրանքը չքանում էր: Ո՛վ երբեմնի մայր իմ, ինչ պետք է ես լինեի՝ ձևավորվելով քո արգանդի մեջ, եթե ենթադրենք, որ իրապես քո արգանդում եմ սկիզբ առել: Պիտի լինեի՞ ես արդյոք հույսի շող քեզ համար: Մի փրկության նավակի տո՛մս, որ կհաներ քեզ խավարից, թե՛ վիրակապ՝ սիրտդ կեղեքող վերքի համար: Եթե դու այդ էիր ուզում, ես դրա համար բավական չէի: Ես քո ցավերին սպեղանի չդարձա, ես դարձա մի նոր փակուղի, հերթական մի բեռ, և դու վաղուց դա գիտեիր: Վաղուց էիր հասկացել: Բայց ինչ կարող էիր անել: Հո չէիր կարող գնալ գրավատուն և վաճառել երեխային:

Երևի այդ հարցազրույցը նրա վերջին հեգնանքն էր:

Փարին մտավ խանութի ծածկի տակ՝ անձրևից պաշտպանվելու համար: Նա մի քանի շենք հեռու էր այն հիվանդանոցից, ուր վերապատրաստվում էր Զահիան: Սիգարետ կպրեց: Մտածեց, որ պետք է զանգել Կոլլետին: Սգո արարողությունից հետո մի երկու անգամ էր խոսել ընդամենը: Հիշեց, որ երբ նրանք շատ փոքր էին, բերանները լիքը ծամոն էին լցնում և ծամում էին, մինչև ծնունները ցավեին, նստում էին մոր զարդասեղանի մոտ, սանրում էին մեկը մյուսի մազերը և ամրացնում վարսակալներով: Փարին փողոցի մյուս մայթին նկատեց մի ծեր կնոջ՝ պլաստիկ բռնետով, որ դանդաղ առաջ էր գնում՝ հետևից մի փոքր որսաշուն քարշ տալով: Եվ հերթական անգամ Փարիի հուշերի մշուշից պոկվեց մի ծվեն և ստացավ շան կերպարանք: Կերպարանքը ծեր կնոջ խաղալիք շան պես չէր, դա մեծ գամփռ էր՝ փրչոտ, կեղտոտ, կտրած պոչով և ականջներով: Փարին վստահ չէր կարող ասել՝ դա հիշողություն է, հիշողության ուրվական, թե ընդհանրապես ոչինչ: Մի անգամ մորը հարցրեց՝ արդյոք երբևէ շուն ունեցել են այնտեղ՝ Քաբուլում: Մայրն

ասաց. «Գիտես, ես չեմ սիրում շներին, որովհետև նրանք ինքնասիրություն չունեն: Նրանց քացով խփում են, իսկ նրանք շարունակում են սիրել խփողին: Վհատեցնող տեսարան է»:

Մայրը մի բան էլ ասաց. «Ես ինձ չեմ տեսնում քո մեջ: Ես չգիտեմ՝ ով ես դու»:

Փարին շարտեց սիգարետը և որոշեց զանգահարել Կոլլետին: Պայմանավորվեց, որ միասին թեյեն: Ուզում էր իմանալ՝ ինչ է անում Կոլլետը, ում հետ է հանդիպում: Ուզում էր՝ միասին նորից զբոսնեն և նայեն խանութների ցուցափեղկերին սովորականի պես:

Եվ ուզում էր իմանալ՝ արդյոք իր ընկերուհին դեռ ուզում է գնալ Աֆղանստան:



Եվ, իհարկե, Փարին հանդիպեց Կոլլետին: Հանդիպեցին մարոկկոյան ոճի մի հայտնի բարում, որտեղ մանուշակագույն վարագույրներ էին, ամենուրեք թափված էին նարնջագույն բարձեր, և մի զանգրահեր տղա ուղ էր նվագում փոքր հարթակի վրա: Կոլլետը մենակ չէր եկել: Իր հետ բերել էր մի երիտասարդ տղայի՝ էրիկ Լակոմբ անունով: Էրիկը տասնութերորդ թաղամասի քոլեջում բեմական արվեստ էր դասավանդում 7–8–րդ դասարանցիներին: Նա ասաց Փարիին, որ նախկինում հանդիպել են փոկորսության դեմ ուսանողական բողոքի երթի ժամանակ: Սկզբում Փարին չէր կարողանում մտաբերել, իսկ հետո հիշեց, որ հենց այդ տղային էր Կոլլետը նախատում հավաքին քիչ մարդ բերելու համար և նույնիսկ արմունկով խփեց նրա կրծքին: Նրանք նստեցին գետնին փափուկ, նարնջագույն բարձերի վրա և խմիչքներ պատվիրեցին: Սկզբում Փարիին թվում էր, թե Կոլլետն ու Էրիկը մտերիմ են, բայց երբ Կոլլետը սկսեց գովաբանել Էրիկին, Փարին հասկացավ, որ ընկերուհին Էրիկին բերել է իր՝ Փարիի համար: Այն բնական շփոթմունքը, որ նա ապրեց այդ պահին, հայելանման արտացոլանք էր գտնում Էրիկի աննկատ շփոթմունքի մեջ, և դրանից անհարմարության զգացումը մեղմանում էր: Փարիի համար զվարճալի էր նայել, թե ինչպես է Էրիկը շիկնում և շփոթված թափահարում գլուխը՝ կարծես ներողություն խնդրելով: Հացի և ձիթապտղի նախուտեստը ըմբռնանելով՝ Փարին գողունի

մի հայացք զգեց էրիկի դեմքին: Նա գեղեցիկ չէր, այդ բառի բուն իմաստով: Երկար, փափուկ մազեր ուներ՝ ծոծրակի վրա ռետինե օղակով կապած, փոքր ձեռքեր և գունատ մաշկ: Քիթը շատ փոքր էր, ճակատը՝ դուրս ցցված, կզակը՝ չափից դուրս փոքր, բայց նա ուներ պայծառ աչքեր, լուսավոր ժպիտ, որը երևում էր նրա դեմքին ամեն նախադասությունից հետո՝ հիշեցնելով մի ուրախ հարցական նշան: Ու թեպետ նրա դեմքը չէր հմայում Փարիին, ինչպես ժուլյենինը, բայց այն բարությանը էր շնչում. Փարին հետո կարողացավ զգալ, թե ինչ ուշադիր հոգատարության, խաղաղ դիմակայության և նուրբ համբերության պաշարներ ունի էրիկը:

Նրանք ամուսնացան 1977-ին՝ մի զով գարնանային օր՝ Ջիմմի Քարթերի նախագահ ընտրվելուց մի քանի ամիս անց: Հակառակ ծնողների ցանկության՝ էրիկը պնդեց, որ հարսանեկան արարողությունը լինի շատ համեստ՝ նրանք երկուսով և Կոլլետը՝ որպես վկա: Էրիկն ասաց, որ մեծ հարսանիքն անհարկի շքեղություն է, որ չեն կարող իրենց դա թույլ տալ: Էրիկի հայրը, որ հարուստ բանկիր էր, առաջարկեց վճարել հարսանեկան ծախսերն իբրև հարսանեկան նվեր: Չէ՞ որ էրիկը նրանց միակ զավակն էր: Բայց էրիկը մերժեց հորը: Եվ թեպետ նա ոչ մի խոսք չասաց այդ մասին, բայց Փարին վստահ էր, որ նա այդ քայլին գնաց իր համար՝ փրկելու իրեն պսակադրության արարողության անհարմար դրությունից. չէ՞ որ այդ արարողությանը Փարին մենակ էր լինելու, ընտանիքից ոչ մեկը չէր նստելու կողքին, չէր հանձնելու իր ձեռքը փեսային և երջանիկ արցունքներ չէր թափելու իր համար:

Երբ Փարին տեղեկացրեց Աֆղանստան գնալու մասին, էրիկը հասկացավ նրան այնպես, ինչպես ժուլյենը երբեք չէր հասկանա: Բայց նաև հասկացավ այն, ինչ Փարին ինքն իրեն չէր ուզում խոստովանել:

— Դու կարծում ես՝ քեզ որդեգրել են,— ասաց նա:

— Կգամ ինձ հետ:

Նրանք որոշեցին ճանապարհ ընկնել ամռանը, երբ էրիկի դասերն ավարտվեն, և Փարին էլ կարողանա կարճատև դադար վերցնել իր թեկնածուական աշխատանքից: Էրիկն ու Փարին գրանցվեցին ֆարսիի դասընթացների: Ուսուցչին էրիկը գտավ

աշակերտներից մեկի մոր միջոցով: Փարին հաճախ տեսնում էր ամուսնուն՝ բազմոցին թիկն տված, ականջակալներն ականջներին և նվազարկիչը կրծքին հարմարեցրած: Նա փակ աչքերով բարձր շեշտադրությամբ ֆարսիով արտասանում էր՝ «Շնորհակալություն», «Բարև», «Ինչպես եք»:

Գարնանը էրիկը պատրաստվում էր ավիատոմս և հյուրանոց պատվիրելու, բայց Փարին հասկացավ, որ հղի է:

— Մենք կարող ենք գնալ և պետք է գնանք,— ասաց էրիկը:

Բայց Փարին հակառակվեց այդ որոշմանը: Դա անպատասխանատու որոշում էր: Նրանք ապրում էին ձեռնահարկային միսենյականոց բնակարանում՝ անսարք ջեռուցումով, կաթող ծորակներով, առանց օդորակիչի և կոտրված կահույքով:

— Սա երեխայի համար հարմար չէ,— ասում էր Փարին:

Էրիկը, որ մի կարճ շրջան տարված էր եղել դաշնակահար դառնալու գաղափարով նախքան բեմական արվեստին անցնելը, կողմնակի աշխատանք վերցրեց՝ սկսեց դաշնամուրի դասեր տալ: Նրանք տեղափոխվեցին Լյուքսեմբուրգյան այգուց ոչ հեռու գտնվող երեքսենյականոց բնակարան, իհարկե, էրիկի հոր օգնությամբ: Այդ օգնությունն ընդունեցին պայմանով, որ կվերադարձնեն, իսկ հետո ծնվեց սպիտակամաշկ, հալված շաքարի գույնի աչքերով Իզաբելը:

Փարին երեք ամսով արձակուրդ վերցրեց: Նա մտում էր Իզաբելի հետ, սավառնում էր Իզաբելի կողքին, զգում էր, որ շուրջբոլորը լուսավորվում է, երբ Իզաբելը նայում է իրեն: Երբ երեկոյան էրիկը քոլեջից վերադառնում էր տուն, անմիջապես հանում էր վերարկուն և պայուսակը գցում էր հենց դռների մոտ, աղմուկով թրմվում էր բազմոցին, պարզում էր ձեռքերն ու շարժում մատները:

— Տո՛ւր ինձ երեխային, Փարի՛, տո՛ւր նրան ինձ:

Նա օրորում էր Իզաբելին, իսկ Փարին պատմում էր առօրյա անցուդարձի մասին՝ ինչքան կերավ Իզաբելը, քանի անգամ քնեց ու արթնացավ, ինչ նայեցին հեռուստացույցով, ինչ չարածճի խաղեր խաղացին, ինչ նոր հնչյուններ է սովորել Իզաբելը: Էրիկը երբեք չէր հոգնում այդ պատմություններից:

Նրանք հետաձգեցին իրենց ուղևորությունն Աֆղանստան:

Իրականում Փարին այլևս այդքան սուր կարիք չունեի արմատներ և պատասխաններ փնտրելու, և պատճառը էրիկն էր, նրա ամուր և հուսալի ընկերակցությունը և Իզաբելը. նրա շնորհիվ գետինը Փարիի ոտքերի տակ ամրացել էր: Մնացել էին միայն մի քանի մուկ կետեր և խուֆեր՝ անպատասխան հարցերը մորից հետո: Նրանք չէին անհետացել, բայց Փարին այլևս տենդագին չէր փնտրում պատասխաններ:

Բթացել էր նաև այն սուր զգացողությունը, որ Փարիի կյանքից պակասում է մի կարևոր բան կամ մի կարևոր մարդ: Այդ զգացողությունը երբեմն այցելում էր Փարիին անսպասելի մի ուժգնությամբ, բայց, իհարկե, ավելի հազվադեպ: Փարին երբեք այդքան գոհ և այդքան խաղաղված չէր եղել:

1981-ին, երբ Իզաբելը երեք տարեկան էր, իսկ Փարին հոլի էր Ալենուվ, պիտի գնար Մյունխեն՝ խորհրդակցության՝ ներկայացնելու մի գիտական աշխատություն թվերի տեսության արտաքին մոդուլյար ձևերի մասին տոպոլոգիայի և տեսական ֆիզիկայի բնագավառում: Փարին այդ աշխատության համահեղինակն էր: Աշխատանքը լավ ընդունվեց, և հետո Փարին մի քանի գիտնականների հետ գնաց բարձր գարեջուր խմելու, պրեցել և տաք նրբերշիկ ուտելու: Նա հյուրանոց եկավ կեսգիշերին մոտ և պառկեց քնելու՝ առանց փոխվելու կամ լվացվելու: 2-ն անց 30-ին զնգաց հեռախոսը: Էրիկն էր զանգում Փարիզից.

— Իզաբելը, — ասաց նա, — ջերմում է, լնդերն ուռել են, կարմրել և ամենաթեթև հպումից էլ առատ արյունահոսում են: Ատամները հազիվ են նշմարվում, Փարի: Չգիտեմ՝ դա ինչ է: Ինչ-որ տեղ կարդացել եմ, որ դա կարող է լինել...

Փարին ուզում էր, որ նա կանգ առնի: Ուզում էր խնդրել, որ ամուսինը լռի, քանի որ անկարելի էր լսել այդ, բայց չափազանց ուշ էր: Նա լսեց «մանկական լեյկեմիա» կամ գուցե «լիմֆոմա» բառերը: Բայց կարճ արդյոք որևէ տարբերություն: Փարին նստած էր մահճակալի ծայրին, քարացած, գլուխը տրոփում էր, մաշկը պատվել էր քրտինքով: Բարկացած էր էրիկի վրա, որն իրեն գիշերվա կեսին այդպիսի ահասարսուռ մի միտք ներարկեց, երբ ինքը յոթ հարյուր կիլոմետր հեռու էր և այդքան անօգնական: Կատաղած էր իր

սեփական տխմարության վրա: Չէ՞ որ ինքը ամբողջովին բացել էր իր զրահը այս կասկածելի և անհանգստությամբ լի կյանքի առաջ, իսկ դա իրական խելագարություն էր, բացարձակ հոգեխանգարմունք: Մի անմիտ, հիմար ու անհիմն հավատ, որ անկառավարելի աշխարհը չի կարող խլել քեզնից այն, ինչ դու չես կարող թույլ տալ կորցնել: Հավատ, որ աշխարհը քեզ չի կործանի:

— Ես այդքան քաջություն չունեմ, ես այդքան քաջություն չունեմ,— կրկնում էր նա շնչասպառ:

Այդ պահին մտածեց, որ չէր կարող լինել առավել անխոհեմ և անմիտ բան, քան ծնող դառնալու իր որոշումը:

Իսկ իր մյուս կեսը աղոթում էր.

— Աստված, օգնիր ինձ:— Նա նույնիսկ բարկացավ Իզաբելի վրա իրեն այդքան տառապանք պատճառելու համար:

Փարին այնքան ամուր սեղմեց լսափողը, որ դաստակը ցավեց.

— Էրիկ, Էրիկ, *Ecoute moi*. Ես քեզ կզանգեմ:

Նա դատարկեց պայուսակը մահճակալին և գտավ փոքր շաքանակագույն գրքույկը, ուր գրված էին հեռախոսահամարները: Նա զանգեց Լիոն, ուր Կոլլետը ապրում էր իր ամուսին Դիդիյեն հետ: Նա Լիոնում տուրիստական գործակալություն էր բացել, իսկ Դիդիյեն բժշկություն էր ուսումնասիրում: Դիդիյեն վերցրեց հեռախոսը.

— Փարի, դու գիտես, չէ՞, որ ես մասնագիտանում եմ հոգեբուժության մեջ:

— Գիտեմ, գիտեմ, ուղղակի մտածեցի, որ...

Նա մի քանի հարց տվեց՝ Իզաբելը քաշի կորուստ ունեցե՞լ է, գիշերային քրտինք, անսովոր կապտուկներ, հոգնածություն, պարբերական տենդ:

Ի վերջո Դիդիյեն ասաց, որ Էրիկը պիտի երեխային առավոտյան բժշկի տանի, բայց ավելացրեց, որ ընդհանուր բժշկական իր գիտելիքները վերհիշելով՝ նա կարող է ավստորոշել այն իբրև սուր լնդաբորբ:

Փարին այնքան ամուր սեղմեց լսափողը, որ դաստակը ցավեց.

— Խնդրում եմ,— ասաց նա,— Դիդիյե:

— Օ՛հ, կներես, դե, դա մրսածության և բորբոքման առաջին նշաններից է:

Իսկ հետո նա արտասանեց աշխարհի ամենահրաշալի բառերը, որ Փարին երբևէ լսել էր. «Կարծում եմ, երեխան շուտով կապաքինվի»:

Փարին Դիդիյեին երկու անգամ էր տեսել՝ Կոլլետի հետ նրա ամուսնությունից առաջ և հետո: Բայց հենց այդ պահին նա անկեղծորեն սիրում էր նրան և լաց լինելով լսափողի մեջ՝ այդպես էլ ասաց Դիդիյեին: Մի քանի անգամ ասաց, որ սիրում է նրան: Դիդիյեն ծիծաղեց և Փարիին բարի գիշեր մաղթեց: Փարին զանգեց Էրիկին, որը պիտի Իզաբելին տաներ բժիշկ Պերինի մոտ: Փարին, անկողնում պառկած, զնգոցն ականջներում, նայում էր փողոցի լույսերին, որ ներս էին հոսում գորշականաչ փայտե կրկնապատուհաններից: Հիշեց այն ժամանակը, երբ ութ տարեկան էր, և իրեն թոքաբորբով տարան հիվանդանոց: Մայրը չգնաց տուն, պնդեց, որ գիշերի իր կողքին: Վերջին տարիներին շատ էր մոր պակասը զգում՝ իր հարսանիքի, Իզաբելի ծննդյան ժամանակ: Հազարավոր այլ պահերի: Բայց երևի այդքան սուր չէր զգացել մոր կարիքը, քան մյունխենյան սարսափելի և առեղծվածային այդ գիշերը հյուրանոցի սենյակում:

Հաջորդ օրը վերադառնալով Փարիզ՝ նա Էրիկին ասաց, որ երկրորդ երեխայից հետո էլ երեխաներ չի ունենալու, որ չավելացնի հարվածների հավանականությունը:

1985-ին, երբ Իզաբելը յոթ տարեկան էր, Ալենը՝ չորս, իսկ փոքրիկ Թիերին՝ երկու, Փարիին առաջարկեցին դասավանդել Փարիզի հռչակավոր համալսարաններից մեկում: Փարին անմիջապես դարձավ բամբասանքների և ինտրիգների թիրախ, և դա զարմանալի չէր, քանի որ նա ամենաերիտասարդ գիտնականն էր ֆակուլտետում և այդ ֆակուլտետի երկու կանանցից մեկը: Փարին դիմանում էր այդ ամենին, մայրը, օրինակ, չէր կարող հանդուրժել: Չէր հաճոյախոսում և չէր քծնում: Չէր վիճում և բողոքներ չէր ներկայացնում: Միշտ սեփական կարծիքն ուներ: Ժամանակի հետ նույնիսկ Բեռլինի պատն է փլվում, ահա այդպես էլ վերացան Փարիի մասնագիտական գործունեության արգելքները, և Փարին նվաճեց գործընկերների սերն ու հարգանքը իր ողջախոհ կեցվածքով և զինաթափող մարդամոտությամբ: Նա ընկերներ ձեռք բերեց իր ֆակուլտետում, նաև այլ բաժիններում, մասնակցում էր համալսա-

րանական բոլոր իրադարձություններին, կոկտեյլներին և ճաշերին, էրիկը նրան ուղեկցում էր այդ հավաքույթների ժամանակ: Նրանք կատակով կրում էին բրոյա նույն փողկապը և պլիսե պիջակ՝ կաշվե արմունկներով: Էրիկը պտտվում էր մարդաշատ սենյակներով, ուտեստներ էր փորձում, գինի էր խմում դեմքի երջանիկ զարմանքի արտահայտությամբ, և Փարին երբեմն-երբեմն ստիպված էր միջամտել և հեռու տանել անուանում մաթեմատիկոսների խմբից, նախքան նա իր կարծիքը կհայտներ եռաչափ բազմաթվության կամ դիոֆանտյան հաշվարկի մասին:

Այդ երեկույթներին անխուսափելիորեն խոսք էր բացվում աֆղանական իրադարձությունների մասին: Մի օր գինովցած այցելու պրոֆեսոր Չատելարդը հարցրեց Փարիին, թե ինչ կպատահի նրա կարծիքով, եթե Խորհրդային Միությունը հեռանա Աֆղանստանից:

— Ձեր ժողովուրդը խաղաղություն կգտնի՞ այնժամ:

— Չգիտեմ,— ասաց Փարին,— ես միայն ծագումով եմ աֆղան:

— *Non mais, quande-même*²⁹, պետք է որոշակի պատկերացում ունենաք:

Նա ժպտաց՝ փորձելով հեռու մնալ այն անհեթեթությունից, որ միշտ առկա էր նման հարցադրումներում:

— Իմ պատկերացումն այն է, ինչ ես կարդում եմ Լե Մոնդ թերթում: Ճիշտ Ձեզ նման:

— Բայց Դուք այնտեղ եք մեծացել, ճիշտ է:

— Ես փոքր տարիքում եմ հեռացել երկրից: Դուք տեսել եք իմ ամուսնուն: Նրա թևքերի արմունկներին կաշվե կտորներ են:

Փարին ճշմարտությունն էր ասում: Նա հետևում էր նորություններին, թերթեր էր կարդում պատերազմի մասին, այն մասին, որ Արևմուտքը զինում է *մոջահեդներին*³⁰, բայց Աֆղանստանի պատկերը խամրած էր նրա սրտում: Նա բավականաչափ զբաղված էր իր տնով, որ այժմ չորսսենյականոց մի առանձնատուն էր Գյանկուրտում՝ Փարիզի կենտրոնից քսան կիլոմետր հեռու: Նրանք ապրում էին մի բլրակի վրա՝ արահետներով և լճակներով զբոսայգու

²⁹ Բայց, այնուամենայնիվ (Ֆր.):

³⁰ Մոջահեդ — Ալլահի և հավատի համար պայքարող մարտիկ:

մոտ: Էրիկը դասավանդելուց բացի նաև պիեսներ էր գրում: Նրա վերջին պիեսը, որ ծիծաղաշարժ քաղաքական մի ֆարս էր, պետք է բեմադրվեր Հոթել դե Վիլլի փոքր թատրոններից մեկում աշնանը: Էրիկն արդեն ուրիշ պատվերներ էլ ուներ ապագայի համար:

Իզաբելը դարձել էր շատ հանգիստ, պայծառ և խոհուն աղջիկ: Նա օրագիր էր պահում և շաբաթական մի վեպ էր կարդում: Լսում էր Շինեդ Օ'Կոննորի երգերը: Երկար, գեղեցիկ մատներ ուներ, գնում էր թավջութակի դասերի և մի քանի շաբաթից համերգին պետք է նվագեր Չայկովսկու «Տխուր երգը»: Սկզբում չէր ուզում գնալ թավջութակի դասերի, և Փարին, ի նշան համերաշխության, մի քանի դասերի գնաց դատեր հետ: Սակայն պարզվեց, որ դրա կարիքն ու իմաստը չկար: Կարիքը չկար, որովհետև Իզաբելը շուտով կամովին սկսեց նվագել այդ գործիքը, իսկ անիմաստ էր, որովհետև Փարիի ձեռքերը սկսեցին ցավել: Արդեն մի տարի էր, Փարին առավոտյան արթնանում էր քարացած ձեռքերով, և դաստակները կես ժամ, իսկ երբեմն էլ մեկ ժամ չէին բացվում: Էրիկը անվերջ պնդում էր, որ Փարին պիտի գնա բժշկի, հիմա էլ նույնն էր ասում. «Դու ընդամենը քառասուններեք տարեկան ես, Փարի: Դա նորմալ վիճակ չէ»: Եվ Փարին բժշկի հետ պայմանավորվեց այցելության համար:

Ալենը՝ նրանց միջնեկ որդին, օժտված էր խորամանկ ու չարաճճի հմայքով: Զբաղվում էր մարտարվեստներով: Նա ժամկետից շուտ էր ծնվել: Դրա համար տասնմեկ տարեկան տղայի համար նվազ էր, բայց հասակի բացակայությունը լրացնում էր գրավչությամբ և հնարամտությամբ: Նրա հակառակորդներին մոլորեցնում էին վտիտ մարմինն ու բարակ ոտքերը, նրանք թերագնահատում էին Ալենին և պարտվում: Փարին և Էրիկը անկողնում հաճախ քննարկում էին միջնեկ որդուն և հիանում նրա անկոտրում կամքով ու կատաղի կենսասիրությամբ: Փարին չէր մտահոգվում ոչ Ալենի, ոչ Իզաբելի համար:

Նրան անհանգստացնում էր Թիերին: Թիերին, որը երևի ինչ-որ նախաձին զգացողությամբ հասկանում էր, որ ինքը չստացված, չծրագրված, չսպասված երեխա է: Նրա իրական բնույթն արտահայտված էր վիրավոր լռության և ծուռ հայացքների մեջ: Նա միշտ

ծուլանում և դժգոհում էր, երբ Փարին ինչ-որ բան էր խնդրում, և հակառակվում էր մորը՝ ուղղակի հակառակվելու համար: Երբեմն նրա գլխավերևում ամպ էր հավաքվում, և այդ ամպը Փարին զգում էր ֆիզիկապես: Այդ ամպը փքվում, ուռչում էր, հետո ձեղք էր տալիս, և սկսում էր տեղատարափը: տղայի այտերը դողում էին, նա ոտքերը խփում էր գետնին, և այդ կատաղությունից Փարին վախենում էր: Իսկ էրիկը խեղճացած ժպտում էր: Բնագործն Փարին հասկանում էր, որ Թիերին իր կյանքի ցավն է, ինչպես ցավն իր հոդերում, հավերժական անհանգստության պես մի բան:

Երբեմն մտածում էր, թե ինչպիսի տատիկ կարող էր լինել մայրիկը: Մանավանդ Թիերիի համար: Անգիտակցորեն Փարին զգում էր, որ մայրն այստեղ կարող էր օգնել իրեն՝ տեսնելով Թիերիի մեջ իր արտացոլումը, իհարկե, ոչ կենսաբանորեն: Փարին դրանում համոզված էր: Երեխաները գիտեին իրենց տատիկի մասին: Իզաբելն առանձնահատուկ հետաքրքրված էր և կարդացել էր նրա բանաստեղծությունները:

— Կուզենայի ճանաչել նրան,— ասում էր Իզաբելը:— Նրա բանաստեղծությունները հոյակապ գրվածքներ են: Կարծում եմ, մենք լավ ընկերներ կլինեինք: Չե՞ն կարծում: Երկուսով նույն գրքերը կկարդայինք, ու ես նրա համար թավջութակ կնվագեի:

— Դա նրան դուր կգար,— ասաց Փարին:— Ա՛յ, դրանում գոնե վստահ եմ:

Փարին երեխաներին ոչինչ չէր պատմել տատիկի ինքնասպանության մասին: Մի օր վստահ էր, որ կիմանան այդ մասին, բայց հաստատ՝ ոչ իրենից: Փարին չէր կարող թույլ տալ, որ նրանք մտածեն, թե ծնողը կարող է լքել իր երեխային՝ անուղղակիորեն ասելով նրան, թե քո գոյությունն ինձ համար բավարար չէ ապրելու համար: Փարիի երջանկության համար ամուսինն ու երեխաները բավարար էին: Եվ միշտ այդպես էր լինելու:

1994 թվականի ամռանը Փարին ու էրիկը երեխաներին տարան Մայորկա: Կոլլետի տուրիստական գործակալությունը բարգավաճում էր: Կոլլետն էր կազմակերպել այդ ուղևորությունը: Կոլլետն ու Դիդիյեն միացան նրանց Մայորկայում, և միասին մնացին ծովափնյա վարձով տանը: Կոլլետն ու Դիդիյեն երեխաներ չունեին, բայց ոչ

թե կենսաբանական խնդիրների պատճառով, այլ սեփական ցանկությամբ: Փարիի համար արձակուրդի ժամանակի ընտրությունը շատ լավն էր, նրա ռեզնանսով լավ վերահսկվում էր բժիշկների կողմից. շաբաթական իր մեթոտթերեքսատ դեղամիջոցի չափաբաժինն էր ընդունում, և նրա օրգանիզմը լավ էր տանում այդ բուժումը: Բարեբախտաբար Փարին ստիպված չէր ընդունել ստերոիդներ և տառապել այդ դեղերից առաջացած անքնությունից:

— Էլ չխոսենք գիրանալու մասին: Այն էլ այն դեպքում, որ պիտի լողազգեստ հագնեն Իսպանիայում:— Եվ Փարին ծիծաղեց:— Տեսնում ես՝ ինչ ունայն մարդ եմ ես:

Նրանք օրերով շրջում էին այդ կղզում, մեքենան վարում էին հյուսիսարևմտյան ուղղությամբ, որ գտնվում էր Սեռոա դե Տրամունտանա սարերի մոտ կանգ էին առնում, որ զբոսնեն ձիթենու պուրակներում և սոճու անտառներում: Ուտում էին պորչելլա և մի հրաշալի ծովային ձկան մսից պատրաստված ուտեստ՝ լուբինա, սմբուկի և դոմիկի թամբեթ սոուսով: Թիերին հրաժարվում էր փորձել այդ ուտելիքները, և ռեստորաններում Փարին խնդրում էր, որ որդու համար մի ափսե սպագետտի պատրաստեն՝ սովորական տոմատի սոուսով, առանց մսի և առանց պանրի: Իզաբելի խնդրանքով, որ վերջերս իր համար հայտնաբերել էր օպերան, մի երեկո գնացին Պուչինիի «Տոսկա» օպերայի բեմադրությանը: Այդ փորձությունը հաղթահարելու համար Կոլլետն ու Փարին գաղտագողի իրար էին փոխանցում էժան օղիով արծաթե տափաշիչը: Երկրորդ գործողության կեսին հարբեցին և սկսեցին դպրոցական աղջիկների պես քրքջալ Սկարպիայի դերը խաղացող դերասանի անբնական շարժումնի վրա:

Մի օր Փարին, Կոլլետը, Իզաբելն ու Թիերին ուտելիք վերցրին ու գնացին լողափ: Ալանը, Դիդիյեն և Էրիկը գնացել էին զբոսանքի Սոլեր Բեյում: Ափ գնալու ճանապարհին նրանք կանգ առան խանութի մոտ, որ Իզաբելի համար գնեն նրան դուր եկած լողազգեստը: Խանութ մտնելուն պես Փարին տեսավ իր արտացոլանքը: Սովորաբար, մանավանդ վերջերս, հայելու առաջ կանգնելիս Փարին մեքենայաբար նախապատրաստվում էր ողջունելու իր ավելացած տարիքի արտացոլանքը, դա հարվածը մեղմում էր և նվազեցնում

տհաճությունը: Բայց այդ ցուցափեղկի մեջ Փարին իր արտացոլանքը տեսավ առանց ներքին պատրաստվածության՝ խոցելի իրականության առջև և ինքնախաբեությամբ չաղավաղված: Տեսավ միջին տարիքի մի կնոջ՝ գորշ, անփույթ բլուզով և ծովափնյա կիսաշրջագգեստով, որը չէր քողարկում ծնկների կախված մաշկը: Արևն ընկել էր սպիտակած մազերի վրա: Եվ շրթներկն ու աչքի մատիտը չէին օգնի, որովհետև անցորդների հայացքները Փարիի դեմքին հավելուց հետո անտարբեր թեքվում էին, ճիշտ այնպես, ինչպես կթեքվեին փողոցային նշանից կամ փոստարկղից: Դա շատ կարճ պահ էր, զարկերակի ակնթարթային հարվածի չափ կարճ, բայց բավական էր, որ Փարիի երևակայական ինքնապատկերը համակերպվեր ցուցափեղկից նայող կնոջ իրական պատկերին:

«Դա կործանարար է,— մտածեց Փարին,— ահա այսպիսին է ծերությունը,— մտածեց նա Իզաբելին խանութ ուղեկցելիս,— դրանք այն պատահական ու նենգ ակնթարթներն են, որ բռնեցնում են քեզ ամենամանավատեհ ժամանակ»:

Երբ վերադարձան տուն, տեսան, որ տղամարդիկ վաղուց տուն են եկել:

— Հայրիկը ծերանում է,— ասաց Ալենը:

Բարի սեղանի հետևում էրիկը սափորի մեջ ասնզրիա էր պատրաստում: Նա ոլորեց աչքերը և ուսերը թոթվեց:

— Կարծում էի՝ քեզ ձեռքերի վրա պիտի տանեն, հայրիկ:

— Ինձ մի տարի ժամանակ տուր, մենք կվերադառնանք հաջորդ տարի, և ես քեզ հետ մրցավազքի կելնեմ, *mon pote*³¹:

Նրանք էլ չվերադարձան Մայրկա: Փարիզ վերադառնալուց մի շաբաթ անց էրիկը սրտի կաթված ունեցավ: Դա պատահեց աշխատանքի ժամանակ, երբ նա խոսում էր լուսավորող բեմադրիչի հետ: Էրիկը կարողացավ ապաքինվել, բայց հաջորդ երեք տարում սրտի ևս երկու կաթված ունեցավ և մահացավ քառասունչորս տարեկանում՝ ճիշտ իր սոր տարիքին. Փարին այրիացավ:

³¹ Բալիկս (ֆր.):



Մի օր՝ 2010 թվականի գարնանը, Փարին հեռախոսազանգ ստացավ հեռու տեղից: Դա անակնկալ զանգ էր, Փարին ամբողջ առավոտ նախապատրաստվում էր դրան: Ամեն ինչ արեց, որ տանն այդ պահին մենակ լինի: Խնդրեց, որ Իզաբելը սովորականից մի փոքր վաղ տնից դուրս գա: Իզաբելն ու Նրա ամուսինը՝ Ալբերտը, ապրում էին Սեն Դենի թաղամասի հյուսիսում՝ Փարիի մեկսենյականոց բնակարանից մի քանի շենք այն կողմ: Օրումեջ երեխաներին դպրոց տանելիս նա գալիս էր այցելելու մորը՝ հետը բերելով հաց ու միրգ: Փարին դեռ չէր գամվել հաշմանդամի սայլակին, թեպետ ինքն իրեն նախապատրաստել էր այդ մտքին: Հիվանդության պատճառով ժամանակից շուտ թոշակի էր գնացել, բայց դեռ հանգիստ կարող էր ինքնուրույն գնալ շուկա կամ զբոսնել: Ամենաշատը նրան նեղություն էին պատճառում ձեռքերը՝ տգեղ, ծռռված, որոնք ծանր օրերին այնպիսի ձայն էին հանում, կարծես բյուրեղներ էին ճռճում հողերի մեջ: Փարին միշտ ձեռնոցներ էր կրում՝ իբր ձեռքերը տաք պահելու համար, բայց իրականում ամաչում էր և փորձում քողարկել տձև մատնահողերը և ծռռված մատները ու մանավանդ ձախ ձկոյթը, որ լրիվ թեքված էր հետ, և բժիշկը տվել էր դրա բժշկական ձևակերպումը՝ կարապի վզի ձևախախտ:

— Ինչ ունայն փառասերն եմ ես,— ասում էր նա Կոլլետին:

Այդ առավոտ Իզաբելը նրան բերեց մի քանի թուզ, օձառ, ատամի մածուկ և «Թափերվեյր» ֆիրմայի տուփով շագանակի ապուր: Ալբերտն ուզում էր այդ ուտեստը ներկայացնել այն ռեստորանում, որտեղ նա շեֆ-խոհարարի օգնական էր: Իզաբելը դատարկում էր պայուսակները և միաժամանակ մորը պատմում իր նոր աշխատանքի մասին: Նա երաժշտական սցենարներ էր գրում հեռուտաշոունների համար, գովազդային վահանակներ էր պատրաստում և հույս ուներ աշխատելու կինոյի ոլորտում: Ասաց, որ շուտով աշխատելու է մի գովազդի վրա, որը հենց այդ պահին նկարահանվում է Մադրիդում:

— Հիմա դի՛ էլ ես գնալու Մադրիդ,— հարցրեց Փարին:

— Ո՛հ: Բյուջեն շատ փոքր է, չեն կարող վճարել իմ ճանապարհաձախար:

— Ինչ ափսոս է: Դու կարող էիր մնալ Ալենի մոտ:

— Ո՛հ, մայրիկ, անհավանական է: Խեղճ տղան տեղ չունի անգամ ոտքերը երկարացնելու:

Ալենը ֆինանսական խորհրդատու էր: Ապրում էր մի շատ փոքր բնակարանում՝ կնոջ և երեխաների հետ, որոնց նկարներն ու տեսագրությունները միշտ էլեկտրոնային փոստով ուղարկում էր Փարիին:

Փարին հարցրեց՝ Իզաբելը լուր ունի Թիերիից, թե ոչ: Իզաբելը լուր չուներ. Թիերին Աֆրիկայում էր՝ Չադի արևելյան մասում, ուր նա աշխատում էր Դարֆուրի փախստականների ճամբարում: Փարին գիտեր, որ Թիերին երբեմն հաղորդակցվում էր Իզաբելի հետ, և քույրը միակ մարդն էր, որ Թիերիից տեղեկություն ուներ: Եվ միայն այդպես Փարին կարող էր իմանալ, թե ինչ է ընդհանուր առմամբ կատարվում իր որդու կյանքում: Օրինակ՝ այն, որ նա որոշ ժամանակ ապրել էր Վիետնամում, քսան տարեկանում կարճ ժամանակով ամուսնացել էր Վիետնամցի կնոջ հետ:

Իզաբելը ջուր եռացրեց և ներս բերեց երկու բաժակ թեյ:

— Ոչ այսօր, Իզաբել: Ես ստիպված եմ խնդրել, որ դու հիմա հեռանաս:

Իզաբելը վիրավորված հայացքով նայեց մորը, և Փարին զղջաց, որ ավելի նրբանկատ չձևակերպեց միտքը, որովհետև Իզաբելը շատ զգայուն մարդ էր:

— Ուզում եմ ասել, որ զանգի եմ սպասում և այդ պահին ուզում եմ մենակ լինել:

— Չմնգ: Ինչ զանգ:

— Հետո կասեմ:

Եվ Իզաբելը ձեռքերը խաչեց կրծքին ու ժպտաց:

— Սիրեկան ես գտել, մայրիկ:

— Սիրեկան: Դու կուրացել ես: Գոնե ինձ նայել ես վերջին ժամանակներս:

— Քեզ հետ ոչինչ էլ չի պատահել:

— Պիտի գնաս, ու հետո, խոստանում եմ, ես ամեն ինչ կպատմեմ քեզ:

— Բարի, բարի,— Իզաբելը պայուսակը զցեց ուսին, վերցրեց

վերարկուն ու բանալիները:— Բայց իմացի՞ր, ես անչափ հետաքրքրված եմ:

Զանգող մարդու անունը Մարկոս Վարվարիս էր: Նա Փարիին գտել էր ֆեյսբուքյան էջի միջոցով և թողել էր հետևյալ գրավոր հաղորդագրությունը. «Դուք բանաստեղծուհի Նիլա Վահդատիի դուստրն եք: Եթե այո, ես կուզենայի խոսել Ձեզ հետ Ձեզ համար շատ կարևոր մի հարցի մասին»: Փարին համացանցում փնտրել էր Մարկոսին և հայտնաբերել, որ նա հասարակական հիմունքներով աշխատում էր Քաբուլում իբրև պլաստիկ վիրաբույժ: Հեռախոսով նա խոսեց Փարիի հետ ֆարսիով և շարունակեց խոսել այդ լեզվով, մինչև Փարին ստիպված ընդհատեց նրան:

— Պարո՞ն Վարվարիս, կներեք, գուցե անցնենք անգլերենի՞:

— Ա՛հ, իհարկե, կներեք, ես ենթադրում էի... բայց իհարկե ամեն ինչ հասկանալի է, Դուք հեռացել եք երկրից, երբ շատ փոքր էիք: Ճի՞շտ է:

— Այո՛, ճիշտ է:

— Ես այստեղ ինքս սովորեցի ֆարսին, քիչ թե շատ հաղորդակցվում եմ: Թալիբանի հեռանալուց հետո՝ 2002-ից, ապրել եմ Քաբուլում և հիշում եմ, որ շատ պայծառ օրեր էին: Այո՛, բոլորը պատրաստվում էին ժողովրդավարություն հաստատելու և շենացնելու երկիրը ու էլի նման բաներ: Հիմա իրավիճակը փոխվել է: Մենք պատրաստվում ենք նախագահական ընտրություններին, բայց իրավիճակը, ցավոք, փոխվել է դեպի վատը:

Փարին համբերատար լսում էր Մարկոս Վարվարիսի լայնածավալ մեկնաբանությունները Աֆղանստանում նախագահական ընտրությունների մարտահրավերների մասին: Նա ասաց, որ Կարգայը կհաղթի, բայց Թալիբանը հյուսիսում հարձակումներ կգործի, նաև խոսեց լրատվամիջոցների հաղորդած իսլամիստական մահապատիժների մասին, մի երկու նկատառում ավելացրեց Քաբուլի գերմարդաշատության, տների գների բարձրացման մասին և հետո միայն վերադարձավ խոսակցության սկզբին:

— Մի քանի տարի ես ապրել եմ այդ տանը: Կարծում եմ՝ Դուք էլ եք ապրել այդ տանը:

— Կներե՞ք:

— Դա Ձեր ծնողների տունն էր: Դրա համար էլ կարծում եմ, որ նաև Ձերն էր:

— Կարելի՞ է իմանալ՝ ով է Ձեզ ասել այդ մասին:

— Տանտերը: Նրա անունը Նաբի է: Երևի ճիշտ կլինի ասել անցյալ ժամանակով: Նա այժմ չկա, մահացել է: Հիշում ես նրան:

Փարին մտաբերեց մի երիտասարդ, գեղեցիկ դեմք՝ այտամոքուններով և հետ սանրած մազերով:

— Այո: Անունը չեմ հիշում: Նա մեր տան խոհարարն էր, նաև վարորդը:

— Այո, դա այդպես է: Նա 1947-ից ապրել է այդ տանը: 63 տարի, անհավատալի է, չէ՞: Բայց, ինչպես ասացի, նա մահացավ անցյալ ամիս: Ես նրան շատ էի սիրում, բոլորս էլ նրան շատ էինք սիրում:

— Հասկանում եմ:

— Նաբին ինձ մի գրություն տվեց,— ասաց Մարկոս Վարվարիսը,— որը ես պետք է կարդայի միայն իր մահից հետո: Իմ աֆղան կոլեգան թարգմանեց այն ինձ համար անգլերեն: Դա միայն գրություն չէ, դա նամակ է, որտեղ անդրադարձ կա նաև Ձեր հարցին: Ես Ձեզ փնտրում էի, որովհետև նա խնդրում էր ինձ գտնել Ձեզ և հանձնել այդ նամակը: Փնտրտուքը մի փոքր ջանքեր պահանջեց, բայց համացանցի շնորհիվ մենք կարողացանք գտնել Ձեզ:— Մարկոսը ծիծաղեց: Հենց այդ պահին Փարին ուզեց հեռախոսը կախել: Ենթագիտակցաբար գիտեր, որ այն, ինչ այդ ծեր ու հեռու մարդը իր հեռավոր անցյալից եկել ու խզբզել էր այդ թղթի վրա աշխարհի մյուս ծայրում, ճշմարտություն է: Երկար ժամանակ Փարին գիտեր, որ մայրը ստել էր իր մանկության մասին, բայց եթե անգամ իր կյանքի նախահիմքը սկզբում կքել էր ստի բեռան տակ, միևնույնն է, այն, ինչ Փարին կառուցել էր այդ գետնի վրա, ճշմարիտ էր, ամուր և անհողողող՝ կաղնու ծառի պես: Էրիկը, իր երեխաները, թոռնիկները, աշխատանքը, Կոլլետը: Կարիք չկար ինչ-որ բան պարզելու: Այսբանից հետո ինչ իմաստ ունի խոսելու: Ավելի լավ է կախել հեռախոսը: Սիրտը թպրտում էր, ավերը քրտնել էին:

— Ինչ է նա ասում այդ գրության մեջ:

— Ասում է, որ Ձեր քեռին է:

— Իմ քեռին:

— Ավելի ճշգրիտ լինենք, Ձեր խորթ քեռին: Եվ ոչ միայն դա, այնտեղ շատ բաներ կան գրված:

— Պարոն Վարվարիս, այն Ձեզ մոտ է, այդ գրությունը, նամակը, թարգմանությունը Ձեզ մոտ է:

— Այո:

— Կարո՞ղ եք կարդալ այն ինձ համար:

— Իհարկե, կարող եմ, Դուք հիմա՞ եք ուզում, որ կարդամ:

— Եթե ժամանակ ունեք: Ես կարող եմ զանգել, որ փողը ես վճարեմ:

— Ո՛չ, կարիք չկա, բայց Դուք վստահ եք:

— *Oui*,— ասաց Փարիս,— ես վստահ եմ:

Եվ Վարվարիսը կարդաց այն: Կարդաց ամբողջ նամակը: Դա բավականին երկար տևեց: Երբ նա վերջացրեց կարդալը, Փարիս շնորհակալություն հայտնեց նրան և ասաց, որ կկապվի նրա հետ:

Հեռախոսը դնելուց հետո միացրեց սրճեփը, որ մի բաժակ սուրճ պատրաստի, և մոտեցավ պատուհանին: Աչքերի առջև բացվեց ծանոթ տեսարանը. ներքևում նեղլիկ սալարկված արահետն էր, շենքի կողքի դեղատունը, ֆալաֆելի կրպակը և բասկ ընտանիքի ճաշարանը:

Փարիի ձեռքերը դողում էին. մի ցնցող բան էր պատահել իր հետ, իրապես նշանակալից մի իրադարձություն: Աչքերի առաջ կանգնել էր մի պատկեր. գետինը ճեղքվում է, և սև նավթը պղպղակներով ելնում է վերև: Նրա հետ նույնն էր կատարվում. հիշողությունները ճեղքել էին մոռացության պատնեշը և խորքից բարձրանում էին մակերևույթ: Նա պատուհանից դուրս նայեց ճաշարանի ուղղությամբ, բայց աչքերի առաջ ոչ թե նիհար, սև գոգնոցով մատուցողն էր ծածկի տակ, այլ փոքր կարմիր սայլակը՝ ճոճվող անիվներով, որ գլորվում էր անվերջանալի ամպերի տակ, անցնում ակոսներով և չորացած հովիտներով, վերուվար անում պղնձագույն բլուրներով և հեռանում, կորչում տեսադաշտից: Փարիս տեսնում էր պտղատու ծառերը, թփուտները, զգում էր, թե ինչպես է զեփյուռն անցնում տերևների միջով, իսկ խաղողի վագերը սփռվում էին տափակ կտուրով տնակների վրա: Տեսնում էր լվացքի պարանները,

գետի մոտ պազած կանանց, լսում էր ճռռացող ճոճանակի պարանների ձայնը, և հիշողության մեջ հառնում էին գյուղի տղաների հալածանքներից կծկված մի մեծ շուն և արծվաքիթ մի մարդ, որ առու է փորում՝ շապիկը քրտինքից մեջքին կպած, և դեմքը շղարշած մի կին՝ կրակի մոտ:

Բայց այդ ամենի հետևում՝ իր տեսադաշտի եզրագծից այն կողմ, մի բան կար, որ ամենից շատ էր գրավում Փարիին՝ մի խաբուսիկ ստվեր: Մի կերպարանք, որ և՛ մեղմ էր, և՛ ուժեղ: Իր ձեռքը բռնող ձեռքի փափկությունը և ուժեղ, պինդ ծնկները: Փարին այտը մի ժամանակ կպցրել էր այդ ծնկներին: Նա փնտրում էր դեմքը, որը հեռանում էր նրանից, սահում էր ու կորչում ամեն անգամ, երբ փորձում էր վերհիշել: Նա զգաց, թե ինչպես է իր մեջ բացվում դատարկությունը: Եվ հասկացավ, որ իր ամբողջ կյանքում եղել է մի ինչ-որ մեծ բանի բացակայություն, մի բան, որի մասին միշտ գիտեր:

— Եղբայր իմ,— ասաց նա՝ չգիտակցելով, թե ինչ է ասում, և չգիտակցելով, որ լալիս է:

Մի երգ ֆարսիով հանկարծակի սկսեց պատվել նրա ուղեղում.

Ես գիտեմ մի փոքրիկ, տխուր փերիի,

Ում մի գիշեր տարավ քամին:

Մի բանաստեղծություն էլ կար, որ ավելի վաղուց գիտեր, բայց դա էլ չէր հիշում:

Փարին ստիպված էր նստել: Վստահ չէր, որ կարող է մնալ ոտքի վրա: Սպասում էր, մինչև սուրճը եփվի, մտածում էր, որ հենց եփվի, կխմի մի բաժակ և երևի նաև կծխի, իսկ հետո կգնա հյուրասենյակ՝ զանգելու Կոլլետին, որ ընկերուհին կազմակերպի իր ուղևորությունը Քաբուլ:

Մի պահ նստած մնաց՝ աչքերը փակ, սրճեփը սկսել էր բլթբլթալ, իսկ փակ կոպերի տակ փափուկ բլրակներ էին, բարձր ու կապույտ երկինքը՝ ջրաղացի հետևում մայր մտնող արևով, և միշտ միգամած լեռնաշղթաները, որ անվերջանալի ձգվում էին դեպի հորիզոնը:

Յոթերորդ

ԱՄԱՌ, 2009

— **Ք**ո հայրը մեծ մարդ է:
Ադելը վերև նայեց: Ուսուցչուհի Մալալահին էր կռացել և շնչում նրա ականջին: Մի թմբլիկ, միջահասակ կին էր՝ ուսերին մանուշակագույն, ուլունքազարդ շալ: Նա կկոցած աչքերով ժպտաց Ադելին:

- Դու բախտավոր տղա ես:
- Ես գիտեմ, — ի պատասխան՝ շնջաց Ադելը:
- Բարի, — պատասխանեց նա:

Նրանք կանգնած էին աղջիկների համար նոր դպրոցի մուտքի աստիճաններին: Դա մի ուղղանկյուն կանաչ շենք էր՝ հարթ կտուրով և լայն պատուհաններով: Ադելի հայրը՝ Բաբա ջանը, մի կարճ աղոթք ասաց, որին հետևեց նրա ոգևորված ծառը: Նրանց առջև՝ բարկ, կիզիչ արևի տակ, երեխաների, նրանց ծնողների և ավելի տարեց մարդկանց ամբոխն էր՝ մոտավորապես մի հարյուր տեղաբնակ Շաղբաղ-է-Նաու (Նոր Շաղբաղ) քաղաքից:

— Աֆղանստանը մեր մայրն է, — ասաց Ադելի հայրը՝ իր հաստ ցուցամատը վերև ուղղելով: Արևի շողը կայծկլտաց ագաթե մատանու շրջանակի վրա: — Բայց մեր մայր Աֆղանստանը իր երկարատև տառապանքից նոր է ապաքինվում: Եվ կազդուրման համար որքան իր որդիների, նույն չափով, եթե ոչ առավել, նա իր դուստրերի օգնության կարիքն ունի:

Բարձրացավ ծափերի և խրախուսանքի ձիչերի ալիքը: Ադել-

լը զննում էր մարդկանց դեմքերը, որոնք զմայլված նայում էին իր հորը: Բաբա ջանն ուներ թավ սև ունքեր և երկար մորուք, կանգնած էր բոլորից վերև՝ բարձրահասակ, ուժեղ և հաստատուն: Թիկունքն այնքան լայն էր, որ կարծես փակել էր դպրոցի մուտքը նրա հետևում:

Հայրը շարունակեց, իսկ Ադելը արագ հայացք փոխանակեց Քաբիրի հետ, որը հոր երկու թիկնապահներից մեկն էր: Թիկնապահներն անվրդով կանգնած էին Բաբա ջանի կողքին՝ ձեռքներին մի-մի Կալաշնիկովի ավտոմատ: Քաբիրի ակնոցի մգացրած ապակիներում արտացոլվում էր ամբողջ ամբոխը: Քաբիրը կարծահասակ էր, նիհար, համարյա վտիտ, հագնում էր վառվռուն գույների կոստյումներ՝ մանուշակագույն, փիրուզագույն, նարնջագույն, բայց Բաբա ջանն ասում էր, որ նա իսկական բազե է, և նրան թերագնահատելը մեծ և վտանգավոր սխալ է:

— Ձեզ եմ դիմում, Աֆղանստանի երիտասարդ դուստրեր,— եզրափակեց հայրը՝ առաջ պարզելով իր ամուր ձեռքերը սրտաբաց ողջույնի ժեստով: Դուք այժմ մի մեծ ու վեհ պարտք ունեք: Դուք պետք է սովորեք, օգտակար լինեք հայրենիքին, պետք է առաջադիմեք ձեր ուսման մեջ, որ ձեզնով հպարտանան ոչ միայն ձեր հայրերն ու մայրերը, այլև ձեր ընդհանուր մայրը՝ Աֆղանստանը: Երկրի ապագան ձեր ձեռքերում է, ոչ թե իմ: Մի կարծեք, որ այս դպրոցը իմ նվերն է ձեզ: Դա ընդամենը մի շենք է, որի պատերի ներսում կա իրական նվեր, և այդ նվերը դուք եք: Դուք եք նվերը, մեր երիտասարդ քույրեր, դուք նվեր եք ոչ միայն իմ, Շադբադ-է-Նաուի համայնքի համար, այլ, որ ամենակարևորն է, նվեր եք հենց Աֆղանստանի համար: Աստված ձեզ պահապան:

Ծափահարություններ պայթեցին, մարդիկ գոռում էին՝ «Աստված օրհնի Ձեզ, հրամանատար Սահիբ»:

Բաբա ջանը բարձրացրեց բռունցքը՝ լայն ժպտալով, իսկ Ադելի աչքերը հպարտությունից լցվեցին:

Ուսուցչուհի Մալալին հանձնեց մկրատը Բաբա ջանին: Կարմիր ժապավեն էր կապված դպրոցի մուտքի առաջ: Մարդիկ մի քայլաչափ առաջ եկան, որ ավելի լավ տեսնեն, Քաբիրը մի քանիսին հետ մղեց, մի քանիսին էլ հրեց: Մարդիկ բարձրացրին բջջային

հեռախոսները, որ նկարեն ժապավեն կտրելու տեսարանը: Բաբա ջանը վերցրեց մկրատը, կանգ առավ մի պահ, շրջվեց դեպի Ադելն ու ասաց.

— Արի, որդիս: Քեզ եմ հանձնում այս պատվաբեր գործը,— և տվեց մկրատը Ադելին:

Ադելի շունչը կտրվեց:

— Ինձ:

— Դե, սկսիր,— ասաց հայրը և աչքով արեց որդուն:

Ադելը ժապավենը կտրեց, և բոլորը սկսեցին ծափահարել: Ադելը լսում էր լուսանկարչական սարքերի չխկչխկոցը, լսում էր ձայներ՝ «Ալլահ-ու-ակբար»:

Բաբա ջանը դռան շեմին կանգնած ողջունում էր ուսանողուհիներին, որոնք մտնում էին դասարան: Դրանք ութից տասնհինգ տարեկան աղջիկներ էին՝ սպիտակ գլխաշորերով և սև ու մոխրագույն գծավոր համազգեստներով, որոնք Բաբա ջանի նվերն էին: Ադելը նայում էր, թե ինչպես են ուսանողուհիները մեկ առ մեկ ամոթխած ներկայանում Բաբա ջանին, որը ջերմորեն ժպտում էր, շոյում նրանց գլուխները և մեկ-երկու խրախուսական բառ ասում:

— Հաջողություն Ձեզ, բիբի Մարիամ, լավ աշխատեք, բիբի Հոմարիա, այնպես արեք, որ հպարտանանք Ձեզնով, բիբի Իլիամ:

Որոշ ժամանակ անց սև Լենդ Քրուիզերի մոտ՝ հոր կողքին, Ադելը շոգից խեղդվելով կանգնած նայում էր, թե ինչպես է հայրը ձեռքով բարևում տեղացիներին: Մյուս ձեռքում պտտեցնելով տերողորմյան՝ համբերատար լսում էր առաջ կռացած՝ հոնքերը խոժոռած, գլուխը տարուբերելով:

Բաբա ջանը ուշադրություն էր ցուցաբերում բոլորի հանդեպ, որոնք մոտենում էին՝ հերթով շնորհակալություն հայտնելու, օրհնելու, իրենց հարգանքը արտահայտելու, ոմանք էլ, հնարավորությունից օգտվելով, ինչ-որ բան էին խնդրում. մի մայր, ում հիվանդ երեխային անհրաժեշտ էր տանել Քաբուլ՝ վիրաբույժի մոտ, մեկ ուրիշը վարկ էր ուզում կոշիկի արհեստանոց բացելու համար, մի ավտոնորոգող նոր գործիքներ էր ուզում...

— Հրամանատար Սահիբ, Ձեր սրտի մեծության չափով է՛լ ուրիշ մեկը չունեմ, որ դիմեմ:

Ընտանիքից բացի՝ բոլորը դիմում էին հորը «հրամանատար Սահիր», թեև ռուսները արդեն վաղուց հեռացել էին, և հայրը տասը տարուց ավելի ձեռքը հրացան չէր վերցրել: Տանը ամենուրեք կախված էին Բաբա ջանի ջիհադի նկարները շրջանակի մեջ: Ադելը հերթով հիշեց բոլոր նկարները: Հայրը նկարվել էր հին, ցեխոտ ջիպին հենված, տանկի գրահաաշտարակի մոտ պազած, իր ջուկատի հետ հպարտորեն կանգնած, ուղղաթիռի մոտ՝ կրծքին կախած ավտոմատով: Մի նկար էլ կար՝ պիջակը հագին և փամփշտակալը կրծքին աղոթելիս՝ ճակատը անապատի ավազին: Այդ նկարներում սարերից ու ավազից բացի ուրիշ ոչինչ չկար: Այն օրերին հայրը շատ ավելի նիհար էր:

Բաբա ջանին երկու անգամ ռուսները վիրավորել էին մարտերի ժամանակ: Նա ցույց էր տվել Ադելին վերքերի սպիները, մեկը՝ ձախ կողոսկրի տակ: Հայրն ասում էր, որ դրանցից մեկի հետևանքով զրկվել էր փայծաղից: Մյուս սպին՝ մոտ մի բթամատի հաստության, պորտից մի մատնաչափ այն կողմ էր: Հայրն ասում էր, որ ինքը, այնուամենայնիվ, բախտավոր աստղի տակ է ծնվել: Նրա ընկերներից շատերը կորցրել էին ոտքերը, ձեռքերը, աչքերը, ոմանց դեմքն էր այրվել: «Նրանք ամեն ինչ արել են հանուն հայրենիքի և հանուն Ալլահի»,— ասաց հայրը: Դա է հենց ջիհադը: Զոհաբերություն: Դու զոհում ես քո վերջույթները, տեսողությունը, անգամ կյանքը և անում ես դա ուրախությամբ: Զիհադը քեզ նաև տալիս է բազում իրավունքներ և շնորհներ: Աստված հոգ է տանում, որ ամենամեծ զոհաբերություն կատարողները հետո արդարացիորեն պարգևատրվեն:

— Եվ ներկա կյանքում, և՛ հանդերձյալում,— ասում էր Բաբա ջանը՝ հաստ մատն ուղղելով ներքև, իսկ հետո՝ վերև:

Նայելով այդ նկարներին՝ Ադելը երազում էր արկածախնդիր այդ օրերին հոր հետ մասնակից լինել ջիհադի գործին, պատկերացնում էր, թե ինչպես են ինքն ու հայրը խփում ռուսական ուղղաթիռներ, պայթեցնում տանկեր, խուսափում գնդացրային կրակից, ապրում սարերում և քնում քարանձավներում: Հայր և որդի՝ պատերազմի հերոսներ:

Կար նաև մի մեծ շրջանակված նկար, որից հայրը լայն ժպտում

էր Արգում՝ Քաբուլի նախագահական պալատում, նախագահ Կարգաիի կողքին կանգնած: Դա վերջին նկարներից էր՝ արված մի փոքր արարողության ժամանակ, երբ Բաբա ջանին պարզև էին հանձնել Շադբաղ-է-Նաու բնակավայրում կատարած մարդասիրական գործունեության համար: Բաբա ջանն իրոք արժանի էր այդ պարգևին: Աղջիկների դպրոցը նրա հերթական բարեգործությունն էր: Աղելը գիտեր, որ նախկինում կանայք ծննդաբերելիս մահանում էին: Բայց ներկայումս մահացության այդ ցուցանիշը կտրուկ նվազել էր, որովհետև հայրը մի մեծ հիվանդանոց էր բացել, ուր աշխատում էին երկու բժիշկ և երեք մանկաբարձուհի: Նրանց աշխատավարձը հայրը վճարում էր իր գրպանից: Քաղաքի բնակիչները ձրի բուժօգնություն էին ստանում, այդ հիվանդանոցում բոլոր երեխաները պատվաստվում էին: Բաբա ջանը հատուկ խմբեր էր ուղարկել ջրի կետեր գտնելու և ջրհորներ փորելու համար: Նա Շադբաղ-է-Նաու էր բերել նաև շուրջօրյա էլեկտրամատակարարում: Տասնյակ ձեռնարկություններ էին բացվել նրա տրամադրած վարկերի շնորհիվ: Քաբիրը մի անգամ ասաց Աղելին, որ այդ վարկերը մարդիկ չէին վերադարձնում:

— Աղելը հասկանում էր, թե ինչ էր ասել ուսուցչուհին: Նա իրապես երջանիկ էր, որ այդ մարդու որդին է:

Հրաժեշտի ձեռքսեղմումները դադարեցին, և Աղելը նկատեց մի վտիտ մարդու, որ մոտենում էր հորը: Նա կարճ սպիտակ մորուքով էր, կրում էր կլոր շրջանակավոր ակնոց, իսկ ատամները փոքր էին՝ այրված լուցկու գլխիկների չափ: Նրան հետևում էր մի տղա՝ մոտավորապես Աղելի տարիքի: Այդ տղայի ոտնաթաթերը դուրս էին ցցվել մաշված մարզական կոշիկներից: Մազերը գզգզված էին և կպել էին գլխին սոսնձված անշարժ գնդի պես: Տղայի շալվարը կեղտից կոշտացել էր ու նաև կարճ էր, իսկ շապիկը, հակառակը, կախվել էր ծնկներից ներքև:

— Ասացի արդեն, որ հիմա հարմար չէ:— Քաբիրը կտրեց նրա դիմացը:— Ուզում էի մի կարճ բան ասել հրամանատարին:

Բաբա ջանը բռնեց Աղելի ձեռքը և մեղմ նստեցրեց նրան Լենդ-Քրուզերի հետևի նստատեղին:

— Գնանք, որդիս: Մայրդ սպասում է քեզ:

Նա նստեց Ադելի կողքին և փակեց դուռը:

Մզացրած ապակին բարձրացավ, և Ադելը չկարողացավ լսել, թե ինչ ասաց Քաբիրը ծեր մարդուն: Հետո Քաբիրը բարձրացավ մեքենա, նստեց վարորդական նստարանին և նախքան շարժիչը միացնելը «Կալաշնիկովը» դրեց կողքը:

— Ինչ է պատահել, — հարցրեց Ադելը:

— Ոչ մի էական բան, — ասաց Քաբիրը:

Նրանք դուրս ելան ծանապարհ: Ամբոխի մեջ կանգնած մի քանի տղաներ սկսեցին վազել մեքենայի հետևից, մինչև մեքենան արագություն հավաքեց: Մարդաշատ ծանապարհային գիծը հատում էր Շադբաղ-է-Նաուն, և Քաբիրը, հաճախ ազդանշան տալով, մի կերպ խուսանալով էր խիտ երթևեկության մեջ: Նրան գիջում էին բոլոր մեքենաները: Որոշ մարդիկ ձեռքով էին անում: Ադելը նայում էր բազմամարդ մայթերին, և նրա հայացքը ժամանակ առ ժամանակ բախվում էր ծանոթ պատկերների՝ մսագործների խանութների կեռիկներից կախված մսեղիքի, փայտե անիվները պտտող դարբինների, որ ձեռքով աշխատեցնում էին փուքսերը, մրգավաճառների, որ քշում էին ծանձերին իրենց խաղողի և բալի կույտերից, վարսավիրի, որ փողոցում աթոռին նստած սրում էր իր ածելին: Անցնում էին թեյարանների, խորովածանոցների, ավտովերանորոգման կայանի, մզկիթի կողքով, մինչև Քաբիրը շրջեց մեքենան դեպի հանրային հրապարակ, որի կենտրոնում մի կապույտ շատրվան կար, իսկ կողքին՝ ինը ոտնաչափ սև քարից պատրաստված մոջահեդի արձան՝ հայացքը դեպի հարավ, գլխին գեղեցիկ ծալքերով չալմա, ուսից կախված ՌՊԳ գնդացիորդ: Բաբա ջանը Քաբուլից հատուկ ճարտարապետ էր կանչել այդ արձանը նախագծելու համար:

Հրապարակից հյուսիս բնակելի տարածք էր, որ հիմնականում կազմված էր նեղ, չսալահատակված փողոցներից, հարթ կտուրներով սպիտակ կամ կապույտ ներկված տներից: Կտուրներից մի քանիսի վրա երևում էին արբանյակային սկավառակները, իսկ որոշ տների պատուհաններին կախված էր Աֆղանստանի դրոշը: Բաբա ջանը ասել էր Ադելին, որ Շադբաղի տների և ձեռնարկությունների մեծ մասը կառուցվել է վերջին տասնհինգ տարվա ընթացքում: Այն-

տեղ ապրող մարդկանցից շատերը Բաբա ջանին համարում էին Շաղբաղ-է-Նաու քաղաքի հիմնադիրը: Ադելը գիտեր, որ ավագանին առաջարկել է քաղաքն անվանել Նրա անունով, բայց վերջինս մերժել էր այդ առաջարկը:

Այդտեղից մայրուղին ձգվում էր ևս երկու մղոն դեպի հյուսիս և միանում Շաղբաղ-է-Քոհնային՝ հին Շաղբաղին: Ադելը երբեք այդ գյուղը չէր տեսել, ինչպիսին այն եղել է տասնամյակներ առաջ: Երբ Բաբա ջանը տեղափոխեց որդուն և կնոջը Քաբուլից, Շաղբաղ գյուղն արդեն լրիվ վերացել էր: Ոչ մի տուն չէր մնացել: Միակ պահպանված հնությունը արդեն քանդվող ջրաղացն էր: Շաղբաղ-է-Քոհնայից Քաբիրը շրջվեց դեպի չսալահատակված կեսմղոնանոց արահետը, որ միացնում էր մայրուղին տասնչորս ոտնաչափ բարձրության հսկայական տանը, ուր Ադելն ապրում էր ծնողների հետ: Դա միակ կառույցն էր Շաղբաղ-է-Քոհնայում՝ ջրաղացը չհաշված: Արդեն Նշմարվում էին տան պատերը, մինչ մեքենան գլորվում էր ճանապարհով: Փշալարի կլորակները ձգվում էին պատերի գլխով:

Համազգեստով մի պահակ, որ միշտ կանգնած հսկում էր առանձնատան մուտքը, պատվի առավ ու բացեց դարպասը: Մեքենան անցավ դարպասով և առաջ գնաց խճապատ ճանապարհով:

Տունը եռահարկ էր, պատերը ներկված էին վառ վարդագույն և կանաչ փիրուզագույն: Վեր խոյացած սյուները, ուղիղ քիվերը և հայելապատ երկնաքերերի ապակիները, որ փայլվում էին արևի տակ, հատուկ տեսք էին տալիս շինությանը: Տունն ուներ ցածրիկ ծաղաշար, ծածկապատշգամբ՝ պատերին փայլվուն խճանկարով, և լայն պատշգամբներ՝ երկաթե կռած ծաղաշարերով: Ներսում ինը ննջարան և յոթ լոգարան ունեին: Երբեմն, երբ Ադելն ու Բաբա ջանը պահմտոցի էին խաղում, Ադելը երկար թափառում էր տան մեջ՝ հորը գտնելու համար: Լողասենյակում ամբողջ մակերևույթը կան գրանիտից էր, կան մարմարից: Վերջերս, հուրախություն Ադելի, հայրը խոսում էր նկուղային հարկում լողավազան կառուցելու մասին:

Քաբիրն արգելակեց մեքենան շրջանաձև ճանապարհի վրա՝ տան մուտքի դարպասների առաջ, և մարեց շարժիչը:

— Մի րոպե կսպասե՛ս,— ասաց Բաբա ջանը:

Քաբիրը գլխով արեց և դուրս եկավ մեքենայից: Աղելը տեսավ, թե ինչպես նա մարմարե աստիճաններով գնաց դեպի դարպասը, ինչպես սեղմեց դռան զանգը: Դուռը բացեց մյուս թիկնապահը՝ Ազմարայր, որ կարճահասակ, ամրակազմ, կոպտադեմ երիտասարդ էր: Թիկնապահները մի երկու խոսք փոխանակեցին և մնացին աստիճանի վրա՝ սիգարետները կպցնելով:

— Դու իրո՞ք պիտի գնաս,— ասաց Աղելը:

Հայրը առավոտյան մեկնում էր հարավ՝ Հելմանդում գտնվող իր բամբակի դաշտերը վերահսկելու և իր կառուցած բամբակի գործարանի աշխատողների հետ հանդիպելու: Երկու շաբաթ բացակայելու էր, և այդ ժամանակահատվածը Աղելին թվում էր անվերջանալի:

Բաբա ջանը նայեց Աղելին: Նա Աղելի կողքին հսկա էր թվում՝ գրավելով նստարանի կեսից ավելին:

— Շատ կուզենայի չգնալ, որդիս:

Աղելը գլխով արեց:

— Այսօր ես անչափ հպարտ էի: Ես հպարտանում էի քեզնով:

Բաբա ջանն իր ծանր ձեռքը դրեց Աղելի ծնկին:

— Շնորհակալ եմ, Աղել, ինձ համար դա կարևոր է: Բայց ես քեզ տանում եմ այսպիսի տեղեր, որ դու հասկանաս, որ մեզ նման բարեկեցիկ և հաջողակ մարդկանց համար շատ կարևոր է ապրել սեփական պարտքի գիտակցումով:

— Ես ուղղակի ուզում եմ, որ դու այդքան շատ չբացակայես:

— Ես էլ, որդիս: Ես էլ եմ ուզում: Բայց հո ես այսօր չեմ մեկնում: Այսօր ես այստեղ եմ, մինչև առավոտ:

Աղելը գլխով արեց և հայացքը իջեցրեց:

— Լսիր,— ասաց հայրը մեղմ ձայնով:— Այս քաղաքի մարդիկ իմ կարիքն ունեն, Աղել: Նրանք պետք է տուն ունենան, աշխատանք գտնեն և իրենց կենցաղը դասավորեն: Քաբուլն ունի այլ խնդիրներ և չի կարող օգնել այդ մարդկանց: Եվ եթե ես չօգնեմ նրանց, ոչ ոք չի օգնի, ու այդ մարդիկ կտանջվեն:

— Ես դա գիտեմ,— մրմնջաց Աղելը:

Բաբա ջանը թեթևակի սեղմեց որդու ծունկը:

— Ես հասկանում եմ, որ դու կարոտում ես Քաբուլն ու քո ըն-

կերներին: Ե՛վ քեզ, Ա՛ մորդ համար սա ծանր կեցություն է: Ես գիտեմ, որ ամբողջ օրը տանը չեմ, ճանապարհորդում եմ, գնում եմ հանդիպումների, և մարդիկ խլում են իմ ժամանակը: Բայց, նայիր ինձ, տղաս:

Ադելը հայացքը բարձրացրեց և նայեց հոր աչքերին, որոնք ջերմորեն շողում էին թավ հոնքերի տակից:

— Այս աշխարհում ինձ համար ոչ մեկը ավելի կարևոր չէ, քան դու, Ադել: Դու իմ որդին ես: Ես ուրախությամբ կտայի այս ամենը քեզ համար, հանուն քեզ ես կյանքս էլ կտայի:

Ադելը գլխով արեց: Նրա աչքերը թեթև արցունքոտվեցին: Երբեմն, երբ հայրն այդպես էր խոսում, Ադելը զգում էր, թե ինչպես է լցվում իր սիրտը, ուռչում այնքան, որ անհնար էր դառնում շնչելը:

- Ինձ հասկացա՞ր:
- Այո՛, Բաբա՛ ջան:
- Հավատո՞ւմ ես ինձ:
- Իհարկե:
- Դե, հիմա համբուրիր հորդ:

Նա գրկեց հոր վիզը, իսկ հայրը ամուր, երկար սեղմեց տղային իր կրծքին: Ադելը հիշեց, որ երբ փոքր էր, գիշերվա կեսին վատ երազ տեսնելիս թփթփացնում էր հոր ուսին, իսկ հայրը, վերմակը հետ գցելով, պառկեցնում էր նրան կողքին, գրկում էր և համբուրում գլուխը, մինչև Ադելը դադարում էր դողացնել ու նորից քնում էր:

- Գուցե քեզ մի բան բերեմ Հելմանդից,— ասաց Բաբա ջանը:
- Պետք չէ,— ասաց Ադելը խեղդված ձայնով:

Նա առանց այն էլ չափից դուրս շատ խաղալիքներ ուներ, չգիտեր ինչ անել դրանք, բացի դրանից՝ ոչ մի խաղալիք չէր կարող մոռացնել տալ հոր բացակայությունը:



Նույն օրը՝ մի քանի ժամ անց, Ադելը, աստիճանավանդակին կանգնած, գաղտագողի հետևում էր ներքևում ծավալվող տեսարանին: Դռան զանգը տվեցին, և Քաբիրը պատասխանեց: Հենվեց դռան շրջանակին՝ ձեռքերը խաչած փակելով մուտքը և այն մարդուն, որի հետ խոսում էր: Դա դպրոցի բացմանը հորը մոտեցած նույն ծեր

մարդն էր՝ կրկնակի ապակիներով ակնոցով ու լուցկու այրված գլխիկներ հիշեցնող ատամներով: Ծակ կոշիկներով փոքր տղան էլ այդտեղ էր՝ նրա կողքին կանգնած:

Ծեր մարդն ասաց.

— Ո՞ր է գնացել:

Քաբիրը պատասխանեց.

— Գործերով հարավ է գնացել:

— Ես լսել եմ, որ վաղն է մեկնում:

Քաբիրը ուսերը վեր քաշեց:

— Իսկ ինչքան է բացակայելու:

— Երկու-երեք ամիս, ո՛վ գիտի:

— Ես այդպես չեմ լսել:

— Ծերո՛ւկ, դու արդեն իմ համբերությունն ես փորձում,— ասաց

Քաբիրը՝ ձեռքերն իջեցնելով:

— Ես կսպասեմ նրան:

— Ո՛չ, այստեղ նրան չես սպասելու:

— Ճանապարհի վրա կսպասեմ:

Քաբիրը ոտքից ոտք տեղափոխվեց:

— Ոնց հարմար կգտնես: Բայց հրամանատարը պարապ մարդ չէ, ոչ ոք չգիտի, թե երբ է հետ գալու:

Ծեր մարդը գլխով արեց և հետ գնաց: Տղան հետևում էր նրան:

Քաբիրը դուռը փակեց: Աղելը հյուրասենյակի վարագույրը քաշեց և տեսավ նրանց, որ շարժվում էին տունը մայրուղուն կապող խճապատ ճանապարհով:

— Դու սուտ ասացիր,— ասաց Աղելը Քաբիրին:

— Ինձ վճարում են նաև նրա համար, որ ես հորդ պաշտպանեմ թափառաշրջիկներից:

— Ի՞նչ էր ուզում: Գո՞րծ էր ուզում:

— Դրա նման մի բան:

Քաբիրը մոտեցավ թախտին և հանեց կոշիկները: Նայեց Աղե-լին և աչքով արեց տղային: Աղելը Քաբիրին ավելի շատ էր սիրում, քան Ազմարային, որը տհաճ երիտասարդ էր և հազվադեպ էր բառ փոխանակում նրա հետ: Քաբիրը թուղթ էր խաղում Աղելի հետ և կանչում էր միասին DVD-ով ֆիլմեր դիտելու: Քաբիրը ֆիլմեր շատ

Էր սիրում: Նա սև շուկայից ֆիլմերի մի հավաքածու էր գնել և շաբաթը տասը-տասներկու ֆիլմ էր նայում՝ անկախ նրանից, թե ինչ արտադրության ֆիլմեր էին՝ իրանական, ֆրանսիական, ամերիկյան և, իհարկե, հնդկական, նրա համար միևնույնն էր: Երբեմն, երբ Ադելը խոստանում էր, որ հորը ոչինչ չի ասի, Քաբիրը դատարկում էր «Կալաշնիկովի» փամփուշտները, և Ադելը բռնում էր դատարկ ավտոմատը իսկական մոջահեդի պես: Հիմա «Կալաշնիկովը» հենված էր պատին՝ մուտքի դռան մոտ:

Քաբիրը պառկեց թախտին, ոտքերը բարձրացրեց և սկսեց թերթ կարդալ:

— Նրանք շատ անվնաս տեսք ունեին,— ասաց Ադելը՝ բաց թողնելով վարագույրը: Թերթի տակից երևում էր թիկնապահի ճակատը:

— Երևի պիտի կանչեի նրանց ներս՝ թեյելու,— մոթմոթաց Քաբիրը,— թխվածք պիտի առաջարկեի:

— Մի՛ ծաղրիր:

— Դրանք բոլորն էլ անվնաս տեսք ունեն:

— Բաբա ջանը կօգնի՞ այդ մարդկանց:

— Հավանաբար,— հառաչեց Քաբիրը:— Հայրդ սրանց համար մի անսպառ աղբյուր է:

Քաբիրը թերթը իջեցրեց և քնծիծաղ տվեց:

— Դե լավ, Ադել: Ինչ է պատահել: Հիշում ես, անցյալ ամիս մի ֆիլմ տեսանք:

Ադելը ուսերը թոթվեց և սկսեց բարձրանալ աստիճաններով:

— Լորենս, Արաբստանի Լորենսը: Էնթոնի Քվինն էլ՝ գլխավոր դերում,— թախտի վրայից ձայն տվեց Քաբիրը:

Երբ Ադելը արդեն բարձրացել էր երկրորդ հարկ, թիկնապահն ավելացրեց.

— Սրանք բոլորն էլ ավազակներ են: Մի՛ խաբվիր դրանց տեսքին: Նրանք կթալանեին քո հորը, եթե կարողանային:



Մի առավոտ՝ հոր Հելմանդ մեկնելուց մի երկու օր հետո, Ադելը բարձրացավ ծնողների սենյակը: Փակ դռնից գալիս էին բարձր երաժշտության և թրմփոցի

ձայներ: Ադելի մայրը շորտով և մարզական շապիկով հեռուստաէկրանի առաջ կրկնօրինակում էր երեք քրտնաթաթախ շիկահերների շարժումները՝ ցատկեր, կքանիստեր, հրումներ և թեքումներ: Նա նկատեց Ադելին իր զարդասեղանի մեծ հայելու մեջ:

— Կմիանամս ինձ,— ասաց նա բարձր ձայնով և ուժեղ հևոցով:

— Ուղղակի այստեղ կնստեմ:

Ադելը նստեց գորգածածկ գետնին և սկսեց նայել, թե ինչպես է մայրը՝ Արիան, գորտի պես ցատկոտում սենյակում հետ ու առաջ:

Ադելի մայրը նրբիկ ձեռքեր և ոտքեր ուներ, փոքր ցցված քիթ և Քաբրիի սիրած հնդկական ֆիլմերի դերասանուհիների նման սիրուն դեմք: Նա նրբագեղ էր, ճարպիկ, երիտասարդ, որովհետև Բաբա ջանի հետ ամուսնացել էր ընդամենը տասնչորս տարեկանում: Բաբա ջանը ևս մեկ կին ուներ՝ տարիքով մեծ: Ադելը երեք եղբայր ուներ, բայց Բաբա ջանը իր այդ ընտանիքը տեղավորել էր Ջալալաբադում, և Ադելը նրանց տեսնում էր միայն ամիսը մեկ անգամ: Բաբա ջանի կանայք չէին սիրում միմյանց, բայց եղբայրները հաշտ էին իրար հետ: Ջալալաբադում նրանք տանում էին Ադելին այգի, բազար, կինո և բուզկաշի մրցումներին: Նրանք խաղում էին իր հետ «Չարի հանգրվանը», ինչպես նաև «Պարտքի կանչը» և զոմբիներ էին սպանում, իսկ հարևան թաղերի հետ ֆուտբոլային խաղերի ժամանակ միշտ Ադելին վերցնում էին իրենց թիմը: Ադելը շատ կուզենար, որ եղբայրները ապրեին իր կողքին:

Ադելը նայում էր մորը, որ մեջքին պառկած՝ ձգված ոտքերը բարձրացնում-իջեցնում էր՝ կապույտ պլաստմասե գնդակը կոճերի մեջ պահած:

Իրականում ծանձրույթ էր տիրում Շադբադում, և դա սպանիչ էր Ադելի համար: Այդտեղ ապրած երկու տարիների ընթացքում նա ոչ մեկի հետ չէր ընկերացել: Հեծանիվ չէր կարող քջել մենակ, որովհետև շրջանում մոլեգնում էին երեխաների առևանգումները, թեպետ երբեմն նա թաքուն դուրս էր պրծնում առանձնատան շրջակայքից: Նա դասընկեր էլ չուներ, որովհետև Բաբա ջանը թույլ չէր տալիս, որ հաճախի տեղական դպրոց՝ «անվտանգության նկատառումներով»: Ամեն օր ուսուցիչն էր տուն գալիս: Հիմնականում Ադելն իր ժամանակն անցկացնում էր կարդալով, միայնակ գնդակ

խաղալով կամ Քաբիրի հետ ֆիլմեր դիտելով, և դրանք հաճախ նույն ֆիլմերն էին: Նա աննպատակ թափառում էր բարձր առաստաղներով հսկայական տան միջանցքներում, անցնում էր դատարկ սենյակներով կամ ննջարանի պատուհանից աննպատակ դուրս էր նայում: Նա ապրում էր շքեղ, բայց դժգույն աշխարհում և երբեմն ձանձրոյթից պատրաստ էր փայտ ծամելու:

Գիտեր, որ մայրն էլ իր պես սարսափելի միայնակ է: Նա փորձում էր օրերը լցնել ամենօրյա գործերով՝ առավոտյան մարմնամարզություն, հետո՝ ցնցուղ, հետո՝ նախաճաշ, հետո՝ ընթերցանություն, այգեգործություն և հնդկական սերիալները: Երբ Բաբա ջանը տանը չէր, ինչը հաճախ էր պատահում, մայրը տանը ման էր գալիս գորշ բլուզներով, մարզական կոշիկներով, դեմքն առանց շպարի և մազերը գլխի վրա անփույթ ոլորած: Նա նույնիսկ չէր բացում զարդատուփը, ուր պահում էր բոլոր մատանիներն ու վզնոցները, որ հայրը բերել էր Դուբայից: Ժամերով խոսում էր Քաբուլում ապրող իր հարազատների հետ: Մայրն աշխուժանում էր միայն, երբ այցելության էին գալիս ծնողներն ու քույրը: Հազնում էր ծաղկավոր զգեստ, բարձրակրունկ կոշիկներ և շպարվում էր: Այդ ժամանակ մոր աչքերը փայլում էին, և ամբողջ տնով մեկ գրնգում էր նրա ծիծաղը: Եվ Ադելը հասկանում էր, թե ինչպիսին է մայրը եղել նախկինում:

Երբ Բաբա ջանը բացակայում էր, Ադելն ու մայրը փորձում էին միմյանց զվարճացնել: Խաչբառ էին լուծում և խաղում էին համակարգչային խաղեր՝ գոլֆ ու թենիս: Բայց Ադելի սիրած զբաղմունքը ատամնաքրիչ փայտիկներից տնակներ սարքելն էր: Մայրը տան եռաչափ նախագիծն էր գծում թղթի վրա՝ նախամուտքով և կտուրով: Ներսում աստիճաններ կային և բաժանարար պատեր: Նրանք սկզբում սարքում էին տան հիմքը, հետո՝ ներքին պատերն ու աստիճանները, ժամերով սոսնձում էին փայտիկները, հատվածհատված, թողնում, որ չորանան: Ադելի մայրն ասում էր, որ ամուսնությունից առաջ երազում էր ճարտարապետ դառնալ: Մի օր՝ այդպիսի փայտիկներից երկնաքեր կառուցելիս, մայրը պատմեց իր և Բաբա ջանի ամուսնության պատմությունը:

— Նա պետք է ամուսնանար իմ մեծ քրոջ հետ,— ասաց մայրը:

— Մորաքույր Նարգիզի հետ:

— Այո՛, դա Քաբուլում պատահեց: Հայրդ քրոջս տեսավ փողոցում և հասկացավ, որ պիտի ամուսնանա: Հաջորդ օրը հայտնվեց մեր տանը: Ինքն ու իր հինգ զինվորները:

Բոլորը զինվորական կոշիկներով էին և ուղղակի ներխուժեցին տուն:

Մայրը թափահարեց գլուխն ու ծիծաղեց, կարծես զվարճալի մի բան էր պատմում, բայց դա իրականում ուրախ ծիծաղ չէր:

— Ադե՛լ, դու պիտի տեսնեիր քո պապիկի ու տատիկի դեմքերը: Բոլորը նստեցին հյուրասենյակում՝ հայրդ, նրա մարդիկ և ծնողները: Նարգիզը խոհանոցում թեյ էր պատրաստում, մինչ նրանք խոսում էին: Մի խնդիր կար. Նարգիզն արդեն նշանված էր: Ծնողներս խոսք էին տվել իրենց Ամստերդամում ապրող հորեղբոր տղային, որն այնտեղ ինժեներություն էր սովորում: Նրանք ասացին, որ չեն կարող դրժել իրենց խոստումը:

Եվ այդ պահին ես ներս մտա՝ թեյով և քաղցրավենիքով սկուտեղը ձեռքիս, և դրեցի այն սեղանին: Հայրդ տեսավ ինձ, և երբ ես շուռ եկա, որ դուրս գամ, ասաց հորս.

— Երևի Դուք ձիշտ եք, պարոն: Մխալ կլինի երջանկությունը խափանելը: Բայց եթե Դուք ասեք, որ Ձեր այս մի աղջիկն էլ է նշանված, ես կմտածեմ, որ Դուք իմ դեմ ինչ-որ բան ունեք:

Ասաց ու ծիծաղեց: Եվ այդպես մենք ամուսնացանք:

Մայրը վերցրեց սոսնձի ամանը:

— Դու սիրում էիր նրան:

Մայրը ուսերը թոթվեց:

Անկեղծ ասած՝ ես ավելի վախենում էի նրանից:

— Բայց հիմա սիրում ես նրան:

— Իհարկե, սիրում եմ,— ասաց մայրը:— Էս ինչ հարց ես տալիս:

— Չե՞ն ավստում, որ ամուսնացել ես նրա հետ:

Մայրը սոսնձի ամանը վայր դրեց և մի քանի վայրկյան հապաղեց նախքան պատասխանելը:

— Նայիր մեր կյանքին, Ադե՛լ,— դանդաղ արտաբերեց նա: Ծուրջը նայեց,— ինչ ունենք ավստալու:— Հետո ժպտաց և մեղմորեն քաշեց որդու ականջի բլթակը:— Այլպես ես չի ունենա քեզ:

Ադելի մայրն անջատեց հեռուստացույցը և հևալով ու սրբիչով վզի քրտինքը մաքրելով՝ նստեց գետնին:

— Այս առավոտ չե՞ս ուզենա ինքնուրույն մի բանով զբաղվել, — ասաց նա՝ մեջքը ձգելով: — Ես պատրաստվում եմ ցնցուղ ընդունելու և նախաճաշելու: Հետո ուզում եմ զանգել տատիկին ու պապիկին. երկու օր է՝ նրանցից լուր չունեմ:

Ադելը հոգոց հանեց և ոտքի ելավ:

Ներքևի հարկում գտնվող իր սենյակում նա գտավ ֆուտբոլի գնդակը և հագավ Զիդանի նկարով համազգեստը, որ հայրն էր նվիրել ծննդյան տամներկուերորդ տարեդարձին: Ներքև իջնելիս տեսավ, որ Քաբիրը քնած է՝ թերթը վերմակի պես կրծքին փռած: Ադելը սառնարանից վերցրեց խնձորի հյութով թիթեղյա տուփը և դուրս եկավ:

Նա քայլեց խճապատ արահետով դեպի գլխավոր մուտքը: Պահակատեղը, որտեղ զինված թիկնապահ կար, այդ պահին դատարկ էր: Ադելը գիտեր պահակների հերթափոխների ժամանակացույցը: Նա զգուշորեն բացեց դարպասը և դուրս եկավ՝ դուռը հետևից փակելով: Ադելին թվաց, որ դարպասից այն կողմ շնչելն ավելի հեշտ է դարձել: Երբեմն այդ շքեղ առանձնատունը իրապես բանտի էր նման:

Ադելը գնաց դեպի շենքի ետնամասը, որը մայրուղուց հեռու էր: Ետնամասում Բաբա ջանը պտղատու այգի ուներ, որով շատ էր հպարտանում: Հեկտարներով ձգվում էին խնձորենիների, տանձենիների, բալենիների, ծիրանենիների ու թզենիների զուգահեռ շարքերը: Հայր ու որդի երկար զբոսնում էին այգում, և Բաբա ջանը նստեցնում էր տղային ուսերին, որ կարողանա քաղել հասած խնձորները: Առանձնատան և այգու միջև ընկած հողակտորի վրա մի ցախատուն կար այգեպանների գործիքների համար, և մի տափակ կոճղ, որ երևի մնացել էր ինչ-որ հսկա ծառից: Մի անգամ Ադելն ու Բաբա ջանը հաշվեցին այդ կոճղի օղակները և հայտնաբերեցին, որ կոճղն այնքան ծեր է, որ երևի ակնատես է եղել Զինգիզ խանի արշավանքներին: Հայրը, վշտալից թափահարելով գլուխը, ավելացրեց, որ միայն հիմար մարդը կարող էր կտրել այդպիսի ծառը:

Շոգ օր էր: Արևը շողշողում էր, երկնքում ամպի ծվեն չկար, այն նման էր մանուկ հասակում Ադելի նկարած կապույտ երկինքներին: Ադելը խնձորի հյութը դրեց կոճղի վրա և սկսեց խաղալ գնդակով: Նա ոտքով կարող էր վաթսունութ անգամ գնդակը խաղացնել առանց գետնին կպցնելու, և դա նրա անձնական ռեկորդն էր, որ սահմանել էր գարնանը: Հիմա ամառվա կեսն էր, իսկ Ադելը դեռ փորձում էր լավացնել իր արդյունքները: Քսանութերորդ հարվածի վրա հասկացավ, որ ինչ-որ մեկը նայում է իրեն: Դա այն տղան էր, որ ուղեկցում էր բացման արարողությանը Բաբա ջանին մոտեցած ծեր մարդուն: Այժմ տղան պազել էր ցախատան ստվերում:

— Ինչ ես անում այստեղ,— Ադելը փորձեց խոսել կոշտ ու կտրուկ, ինչպես Քաբիրը կխոսեր անձանոթների հետ:

— Մի քիչ նստեմ ստվերում,— ասաց տղան:— Մի մատնիք ինձ:

— Բայց դու իրավունք չունես այստեղ լինելու:

— Դու էլ չունես:

— Ինչ:

Տղան խնդմնդաց:

— Ուշադրություն մի դարձրու:

Ձեռքերը առաջ պարզեց և ոտքի ելավ: Ադելը ուշադիր նայեց նրա գրպաններին: Ուզում էր տեսնել՝ միրգ գողացել էր, թե ոչ: Տղան մոտեցավ գնդակին, ոտքից ոտք մի քանի փոխանցում արեց և կրունկով ուղղեց այն Ադելի կողմը: Ադելը բռնեց գնդակը և դրեց այն թևի տակ:

— Դե, քո «վեցնոցը» մեզ ուղարկեց՝ սպասելու մեծ ճանապարհի վրա, ինձ ու հորս: Այնտեղ ստվեր չկա, և ամպի պատառիկ էլ չկա այս անիծյալ երկնքում:

Ադելը նետվեց Քաբիրին պաշտպանելու:

— Նա «վեցնոց» չէ:

— Նա համենայն դեպս այնպես արեց, որ իր «Կալաշնիկովը» լավ տեսնենք,— նկատեց տղան ծույլ ու լայն ժպիտով: Հետո թքեց իր ոտքերի տակ:

— Փաստորեն դու գլխով մարդ ծեծող ֆուտբոլիստի երկրպագուն ես:

Ադելը սկզբում չհասկացավ, թե ում մասին է խոսքը: Հետո ասաց.

— Դու իրավունք չունես մի սխալի համար դատելու նրան: Նա ամենալավն էր, նա կիսապաշտպանության կախարհն էր:

— Ավելի լավ խաղացողներ գիտեմ:

— Իսկապէս: Օրինակ:

— Օրինակ՝ Մարադոնան:

— Մարադոնան,— ասավ Ադելը զայրացած:

Նա արդեն այդպիսի մի վիճաբանություն ունեցել էր իր եղբայրների հետ Ջալալբադում:

— Մարադոնան խաբեբա է: Հիշում ես «աստվածային ձեռքը»:

— Բոլորն էլ ստախոս են ու խաբեբա:

Տղան հորանջեց և պատրաստվեց գնալու: Նա Ադելի հասակին էր, և երևի նաև, մտածեց Ադելը, նույն տարիքի են: Բայց տղան քայլում էր մեծահասակի պես, առանց շտապողականության և այնպիսի տեսքով, կարծես կյանքում ամեն բան տեսել էր, և ոչինչ չէր կարող նրան զվարճացնել:

— Իմ անունն Ադել է:

— Ղոլամ:

Տղաները միմյանց ձեռք սեղմեցին: Ղոլամի ական ուժեղ էր, չոր և կոշտուկապատ:

— Դու քանի տարեկան ես:

— Ղոլամը ուները վեր քաշեց:

— Կարծում եմ՝ տասներեք: Կարող եմ նաև տասնչորս լինել:

— Ինչ է, ծննդյանդ օրը չգիտեմ:

— Ղոլամը քմծիծաղ տվեց:

— Գրազ կգամ, Ադել, դու գիտես քո ծննդյան օրը: Գրազ կգամ, որ օրերն ես հաշվում մինչև տարեդարձդ:

— Ո՛չ,— ասաց Ադելը պաշտպանվելով:— Այսինքն՝ գիտեմ, բայց օրերը չեմ հաշվում:

— Պիտի գնամ: Հայրս մենակ սպասում է:

— Ես մտածեցի՝ պապիկդ է:

— Սխալ մտածեցիր:

— Կուզենայիր խաղալ պենալտի:

— Պենալտի: *Պենալտի մի քանի փոփոխություններ կան:*

— Այո՛, յուրաքանչյուրս՝ հինգ գնդակ: *Պենալտի քանակը փոփոխվել է:*

Ղուլամը նորից թեց գետնին, մի հայացք գցեց ճանապարհի վրա և նայեց Ադելին: Ադելը նկատեց, որ Ղուլամի կզակը չափից դուրս փոքր էր նրա դեմքի համար, վերևի ժանիքատամները դուրս էին ցցված, իսկ նրանցից մեկը ծուռ էր և սևացած: Ղուլամի վերևի հոնքը կիսում էր մի կարծ, բարակ սպի: Բացի դրանից՝ տղայից վատ հոտ էր գալիս: Բայց այս երկու տարում, Ջալալաբադի իր այցելություններից բացի, Ադելը հնարավորություն չէր ունեցել խոսելու կամ խաղալու իր տարեկիցների հետ: Ադելն ինքն իրեն պատրաստում էր Ղուլամի մերժումին, բայց Ղուլամը ուսերը թոթվեց և ասաց.

— Դե, իսկ ինչո՞ւ ոչ, բայց առաջինը ես եմ խփելու:

Դարպասի փոխարեն տղաները ութ ոտնաչափ հեռավորությամբ երկու քար դրեցին: Ղուլամը խփեց իր հինգ հարվածները, մեկը մտավ դարպաս, երկուսն անցան եզրագծից դուրս, երկու գնդակն էլ Ադելը հեշտությամբ բռնեց: Ղուլամը վատ հարձակվող էր և ավելի վատ դարպասապահ, որովհետև Ադելը չորս գնդակ խփեց՝ ամեն անգամ թեքվելով մի ուղղությամբ և գնդակը խփելով հակառակ կողմից: Ադելի մի հարվածն էլ դարպասից դուրս էր:

— Զգվանք, — ասաց Ղուլամը: *Ղուլամը անսովոր զգրեց:*

Նա կռացել էր և ափերը դրել ծնկների վրա: *Ղուլամը փոփոխվեց:*

— Ռեանշ: *Ղուլամը փոփոխվեց:*

Ադելը չէր ուզում ցույց տալ իր հրճվանքը. թերևս դա բարդ գործ էր: Կարծես թևեր էին աճել: *Ղուլամը փոփոխվեց:*

Ղուլամը համաձայնեց, և արդյունքն ավելի ողբալի էր: Ղուլամը դարձյալ ընդամենը մեկ գնդակ խփեց, իսկ Ադելի հինգ հարվածներն էլ հասան նպատակակետին: *Ղուլամը փոփոխվեց:*

— Հերիք է, ես պարտված եմ, — ասաց Ղուլամը՝ ձեռքերը վեր պարզելով: Ոտքերը քարշ տալով՝ մոտեցավ ծառի կոճղին և, հոգնած հևոց արձակելով, նստեց: *Ղուլամը փոփոխվեց:*

Ադելը, գնդակը գրկած, նստեց նրա կողքին: *Ղուլամը փոփոխվեց:*

— Սրանք էլ չեն օգնում, — ասաց Ղուլամը՝ գրպանից հանելով սիգարետի տուփը: Տուփի մեջ մի հատիկ սիգարետ կար: Ղուլամը վառեց այն, գոհունակությամբ ծուխը ներս քաշեց, հետո հանեց բե-

րանից և առաջարկեց Ադելին: Ադելը դիմացավ սիգարետը վերցնելու և ծխելու գայթակղությանը: Մի կողմից ուզում էր տպավորություն թողնել Ղուլամի վրա, մյուս կողմից վախենում էր, որ Քաբիրը կամ մայրը կզգան ծխի հոտը:

— Դա ճիշտ որոշում է,— ասաց Ղուլամը՝ գլուխը հետ գցելով: Ծայր առավ մի պարապ զրույց ֆուտբոլի մասին, և Ադելը հաճելիորեն զարմացավ Ղուլամի՝ ֆուտբոլի լավ իմացության վրա: Նրանք միմյանց պատմում էին լավագույն խաղերի և սիրված գոլերի մասին, հետո անցան խաղացողների լավագույն հնգյակին, և հիմնականում երկուսն էլ նշեցին նույն խաղացողներին: Տարբերությունն այն էր, որ Ղուլամը Բրազիլիայի Ռոնալդոյին էր ընտրել, իսկ Ադելը՝ Պորտուգալիայի Ռոնալդուին: Խոսեցին 2006-ի եզրափակիչ խաղի մասին, արթնացրին Ադելի համար ցավագին հիշողություններ Ջիդանի գլխով հարվածի մասին: Ղուլամն ասաց, որ ինքը դիտել է ամբողջ խաղը ճամբարից ոչ հեռու՝ հեռուստացույցների խառնուրդի ցուցափեղկից:

— Ճամբարից:

— Ես այդ ճամբարում եմ մեծացել: Պակիստանում:

Նա պատմեց, որ նոր է եկել Աֆղանստան: Ծնվել է Զալոզայի փախստականների ճամբարում՝ Պակիստանում: Ասաց, որ ճամբարը քաղաքի է նման՝ վրանների, ցեխածեփի հյուղակների և պլաստիկ ու այլոմիներ թափոններից սարքած տների մի լաբիրինթոս, որի նեղլիկ անցումները լցված էին աղբով: Դա մի քաղաք էր ավելի մեծ քաղաքի որովայնում: Ինքն ու եղբայրները մեծացել էին այդ ճամբարում: Այնտեղ են նրանք դպրոց գնացել: Նա ապրում էր փոքր ցեխածեփ տանը եղբայրների, մոր, հոր հետ, որի անունը Իքբալ էր, և հայրական տատի հետ, որի անունը Փարվանա էր: Այդ կեղտոտ սենյակում նրա եղբայրները սովորեցին խոսել և քայլել: Այնտեղ նրանք ուրիշ փախստականների երեխաների հետ խաղում էին փայտիկներով և ժանգոտ հեծանվի անիվներով, մինչև արևը մայր կմտներ, ու տատիկն իրենց տուն կկանչեր:

— Ես շատ էի սիրում այնտեղ մնալ: Ես ընկերներ ունեի, բոլորին գիտեի, ու մենք շատ հաշտ էինք: Մի հորեղբայր ունեմ Ամերիկայում՝ Աբդուլլա անունով, որին ես երբեք չեմ հանդիպել, բայց

դե, մի քանի ամիսը մեկ նա մեզ փող էր ուղարկում, և դա մեզ մեծ օգնություն էր:

— Ինչո՞ւ հեռացար ձամբարից:

— Ստիպված էի: Պակիստանցիները փակեցին ձամբարն ու ասացին, որ աֆղաններն այսուհետև պատկանում են Աֆղանստանին: Հետո հորեղբայրս դադարեց փող ուղարկելուց: Հայրս ասաց, որ պետք է վերադառնալ ու փորձել հայրենիքում ամեն ինչ սկսել նորից, քանի որ, միևնույնն է, Թալիբանը փախել է Պակիստան: Հայրս նաև ասաց, որ մենք Պակիստանում հյուր ենք և չարաշահել ենք այստեղ մնալու մեր իրավունքը: Ես իրոք հուսահատված էի:— Նա ձեռքը թափ տվեց:— Սա ինձ համար օտար երկիր է: Իսկ ձամբարում երեխաներ կային, որոնք եղել էին Աֆղանստանում, և ոչ մեկը մի լավ բան չէր ասում այս երկրի մասին:

Ադելն ուզում էր ասել, որ հասկանում է Ղոլամին: Ուզում էր պատմել, թե որքան էր կարոտում իր ընկերներին, Քաբուլը և խորթ եղբայրներին Ջալալբադում: Բայց նաև զգում էր, որ Ղոլամը կծիծաղեր իր վրա: Նա ասաց.

— Այո՛, այստեղ բավական ձանձրալի է:

Ղոլամը, միևնույնն է, ծիծաղեց.

— Կարծում եմ՝ ընկերներս դա նկատի չունենին:

Ադելը գլխի ընկավ, որ իրեն ծաղրում են:

Ղոլամը ծուխը ներս քաշեց և սկսեց օղակներ դուրս փչել: Երկուսով նայում էին, թե ինչպես են օղակները սփռվում և տարրալուծվում օդի մեջ:

— Հայրս ինձ ու եղբայրներիս ասում էր. «Մի փոքր սպասեք, մինչև կընչենք Շադբադի օդը, կխմենք այնտեղի ջուրը»: Հայրս ծնվել և մեծացել էր Շադբադում: Նա ասում էր. «Աշխարհում ոչ մի տեղ չկա այդպիսի քաղցր ու սառը ջուր»: Նա միշտ խոսում էր մեզ հետ Շադբադի մասին: Իմ կարծիքով այն տարիներին Շադբադն ընդամենը մի գյուղակ էր: Նա պատմում էր, որ խաղողի մի տեսակ կա, որը աճում է միայն Շադբադում և ոչ մի այլ տեղ աշխարհում: Կարծես կորուսյալ դրախտ նկարագրեր:

Ադելը հարցրեց, թե որտեղ է Ղոլամի տունը:

Ղոլամը շարտեց սիգարետի մնացորդը և աչքերը կկոցած

Նայեց երկնքին:

— Ջրադացի կողքի բաց դաշտը գիտնե՛ս:

— Այո՛:

Ադելը սպասում էր շարունակությանը, բայց Ղուլամը լուռ էր:

— Դուք դաշտում եք ապրում:

— Ինչ եկել ենք այստեղ,— մոթմոթաց Ղուլամը,— վրան ենք խփել:

— Իսկ քո ընտանիքը:

— Չկան: Կամ մահացել են, կամ գնացել: Հայրս մի քեռի ունի Քաբուլում կամ արդեն չունի: Չգիտենք՝ ողջ է, թե ոչ: Նա տատիկիս եղբայրն էր և ծառայում էր մի հարուստ ընտանիքում: Բայց տատիկս ու Նաբին մոտ հիսուն տարի իրար չեն տեսել և տառացիորեն օտարացել են միմյանց: Ես կարծում եմ՝ հայրս կարող էր գնալ տեսնել նրան, բայց նա ուզում է հաստատվել այս հողի վրա: Սա է նրա տունը:

Մի քանի րոպե տղաները, կոճղին լուռ նստած, ունկնդիր էին տաք քամու շնչին և այգու տերևների խշշոցին: Ադելը մտածում էր դաշտի մեջ՝ վրանում գիշերող Ղուլամի և նրա ընտանիքի մասին, պատկերացնում էր, թե ինչպես են կարիճներն ու օձերը վխտում նրանց շուրջը:

Ադելն այդպես էլ չհասկացավ, թե ինչու պատմեց Քաբուլից տեղափոխվելու պատճառների մասին: Այսինքն՝ չէր կարողանում գտնել հիմնավոր պատճառներ, երևի ուզում էր ցրել Ղուլամի տպավորությունը, թե ինքը՝ Ադելը, այստեղ՝ այս մեծ տանը, անհոգ կյանք է վարում: Կամ էլ բակային մրցակցության ձև էր: Իսկ գուցե կարեկցանք առաջացնելու համար: Միգուցե Ադելն այդպես վարվեց, որ կրճատի իր և Ղուլամի միջև անդունդը, բայց աղոտ հասկանում էր, որ կա ավելի իրատեսական պատճառ, քան իր միայնությունն ու ընկեր ունենալու ցանկությունը: Ադելը նույնիսկ չգիտեր, թե ինչու է ուզում դուր գալ Ղուլամին:

— Կարճ ասած՝ մենք տեղափոխվեցինք Շադբադ, որովհետև ինչ-որ մեկը Քաբուլում մեզ վրա մահափորձ կատարեց: Մի մոտոցիկլետ կանգնեց մի գիշեր մեր տան առաջ, և մոտոցիկլավարը կրակահերթ արձակեց մեր տան վրա: Այդ մարդուն չբռնեցին, բայց

բարեբախտաբար մեզնից ոչ մեկը չվիրավորվեց:

Ադելը չգիտեր, թե ինչ արձագանք էր ակնկալում այդ պատմությունից, բայց ի զարմանս իրեն՝ Ղուլամը չարձագանքեց: Հայացքը երկնքին հառած՝ նա ասաց.

— Այո, ես դա գիտեմ:

— Դու գիտե՞ս:

— Երբ քո հայրը փոշտում է, բոլորն իմանում են այդ մասին:

Նա ճմռթեց սիգարետի տուփը և խցկեց ջինսի գրպանը:

— Հայրդ իրոք շատ թշնամիներ ունի:

Ադելը դա գիտեր: Բաբա ջանը նրան պատմել էր, որ 80-ականներին իր հետ միասին ԽՍՀՄ-ի ներխուժման դեմ պայքարող մարդկանցից ոմանք դարձել են կոռումպացված և ուժեղ: Կորցրել են ճիշտ ուղին: Բաբա ջանը հրաժարվել է մասնակցել նրանց հանցավոր գործարքներին, և նրանք անվերջ փորձում են վնասել իրեն, կեղտոտել իր մաքուր անունը՝ տարածելով ստահող և վիրավորական բամբասանքներ: Եվ Բաբա ջանը փորձում էր ամեն կերպ պաշտպանել Ադելին այդ ամենից, չէր թողնում, որ տանը թերթեր կարդան: Ադելին արգելված էր լուրեր դիտել հեռուստացույցով կամ կարդալ համացանցով: Ղուլամը թեքվեց դեպի Ադելը և ասաց.

— Լսել եմ, որ հայրդ նաև ֆերմեր է:

Ադելը թոթվեց ուսերը:

— Աչքովդ կարող ես տեսնել մի քանի հեկտար պտղատու այգիները և բամբակի դաշտը Հելմանդում, երևի գործարանի համար է:

Ղուլամը նայեց Ադելի աչքերին, և լայն ժպիտը տարածվեց նրա դեմքով մեկ՝ ցուցադրելով փտած ժանիքները:

— Բամբակ: Ադել, դու գլուխգործոց ես: Իսկապես չգիտեմ, թե ինչ ասեմ:

Ադելը չհասկացավ՝ ինչի մասին է խոսքը: Նա ոտքի ելավ ու գնդակը խփեց գետնին:

— Դե կարող ես ասել՝ ունանո՞ւ:

— Ռեւանո՞ւ:

— Դե, գնացի՞նք:

— Բայց, Ադել, այս անգամ արի գրազ գանք, որ դու մի գնդակ էլ չես խփի իմ դարպասը:

Ադելի հերթն էր ծիծաղելու:

— Ինչի՞ վրա ենք գրագ գալիս:

— Հեշտ բան է: Զիդանի պատկերով քո վերնաշապկի:

— Իսկ եթե ես հաղթեմ, չէ, իսկ *եռք* ես հաղթեմ...

— Եթե ես քո տեղը լինեի,— պատասխանեց Ղուամը,— չէի անհանգստանա անհավանական բաների համար:

Դա հրաշալի պայքար էր: Ղուամը, աջ ու ձախ նետվելով, կարողացավ հետ մղել Ադելի բոլոր հարվածները: Ադելը հիմարացած վիճակում էր, քանի որ իրեն խաբել էին՝ ձեռքից վերցնելով իր ամենանվիրական բանը: Նա շապիկը տվեց Ղուամին, անհանգստություն զգաց, և աչքերին արցունքներ երևացին: Կամային ճիգով նա զսպեց արցունքները:

Ի վերջո Ղուամն այնքան նրբանկատ գտնվեց, որ Ադելի ներկայությամբ չհագավ վերնաշապիկը: Հեռանալիս նա ուսի վրայով շարտեց:

— Հայրդ երեք ամսով չի մեկնել, ծիջտ է:

— Վաղը դեռ ունանշ կվերցնեմ,— ասաց Ադելը:

— Դեռ կմտածեմ դրա մասին:

Ղուամը ճանապարհ ընկավ դեպի մայրուղին: Ճանապարհի կեսին կանգ առավ, գրպանից հանեց ճմռթած սիգարետի տուփը և պատի վրայով շարտեց Ադելի տան բակը:



Առավոտյան՝ պարապմունքից հետո, մի շաբաթ շարունակ Ադելը վերցնում էր գնդակն ու դուրս էր գալիս տնից: Կարողանում էր հարմարեցնել այն պահը, երբ պահակախումբը փոխվում էր: Մի երկու անգամ դա նրան հաջողվեց, բայց երրորդ անգամ պահակը բռնեց նրան, Ադելը կաշառեց նրան *iPod*-ով ու ժամացույցով: Այդ պահից սկսած՝ պահակը թաքուն դուրս էր թողնում նրան՝ պայմանով, որ այգու սահմաններից դուրս չգա: Քաբիրն ու մայրը չէին էլ նկատում Ադելի մեկ-երկու ժամվա բացակայությունը, և դա այս մեծ տանն ապրելու առավելություններից մեկն էր:

Ադելը խաղում էր տան ետնամասում՝ հին ծառի մոտ՝ ամեն օր հույսով սպասելով Ղուամի երևալուն: Աչքն անվերջ խճապատ

արահետին էր, անգամ երբ խաղում էր գնդակով կամ կոճղին նստած հետևում էր ռեակտիվ ինքնաթիռի թռիչքին և մտազբաղ ու աննպատակ շարտում էր գլաքարերը: Որոշ ժամանակ անց գնդակը վերցնում և դանդաղ քայլում էր տուն:

Մի օր Ղուլամը հայտնվեց՝ թղթե մի տոպրակ ձեռքին:

— Որտեղ էիր,— հարցրեց Ադելը:

— Աշխատում էի,— ասաց Ղուլամը:

Ինքն ու հայրը գնացել էին օրավարձով աշխատանքի՝ աղյուս սարքելու: Ղուլամը ջուր էր կրում և իր քաշից ծանր ցեմենտով ու ավազով լի պարկեր էր քարշ տալիս: Ադելին պատմեց նաև, թե ինչպես էր շաղախը խառնում անվասայլակի մեջ, ջուր լցնում և խառնում թիակով, հետո էլի խառնում, հետո ավելացնում ջուր և ավազ, մինչև խառնուրդը դառնում էր միատարր մածուցիկ և չէր փշրվում: Հետո սայլակը հրում էր պատշարների մոտ և դարձյալ հետ գնում նոր չափաբաժին շաղախելու համար: Ղուլամը բացեց ափերն ու ցույց տվեց Ադելին ձեռքերի վերքերը:

— Օհո՛ր,— ասաց Ադելը՝ իմանալով, որ դա մի փոքր հիմարավուն է հնչում, բայց ուրիշ արձագանք չէր կարող տալ: Ադելը մի անգամ Քարուլի իրենց տան բակում այգեպանի հետ միասին խնձորի տնկիներ էր դրել հողի մեջ, և դա միակ դեպքն էր, երբ նա ինչ-որ բան էր արել:

— Քեզ անակնկալ ունեմ,— ասաց Ղուլամը՝ տոպրակից հանելով Զիդանի պատկերով վերնաշապիկը:

— Չեմ հասկանում,— ասաց Ադելը զարմացած, վախվորած ոգևորությամբ:

— Անցյալ օրը այս մարգահագուստով մի տղա տեսա,— ասաց նա ձեռքի մի շարժում անելով, որ Ադելը իրեն գցի գնդակը: Ադելը գնդակը նետեց տղային, և Ղուլամը, ոտքով գնդակը խաղացնելով, շարունակեց:— Պատկերացնո՞ւմ ես: Դե, ես մոտեցա այդ տղային ու ասացի. «Ոնց որ դու հագել ես իմ ընկերոջ շապիկը»: Դե, կարճ ասած, մեր հարցերը լուծեցինք մոտակա նրբանցքում, և վերջում ինքն էր աղաչում, որ վերնաշապիկը վերցնեմ: Ղուլամը օդում բռնեց գնդակը, թքեց և ժպտալով նայեց Ադելին:

— Լավ, խոստովանեմ, որ ես վաճառել էի նրան այդ շա-

պիկը մի քանի օր առաջ:

— Սխալ ես արել: Եթե վաճառել ես, ուրեմն իրենն է:

— Հիմա չե՞ս ուզում շապիկդ: Այն ամենից հետո, ինչ ես արել եմ այն քեզ վերադարձնելու համար: Ամեն ինչ չգիտես: Նա էլ ինձ մի քանի անգամ քոթակեց:

— Բայց դե...

— Հետո, Ադել, ես քեզ խաբեցի, դրա համար վատ էի զգում: Ես հետ եմ բերել քո հագուստը: Իսկ սա գնել եմ ինձ համար:

Ղուլամը մատնացույց արեց իր սպիտակ ու կապույտ գծերով նոր մարզական կոշիկները:

— Այդ տղայի հետ ամեն ինչ կարգի՞ն է,— հարցրեց Ադելը:

— Կապրի, չի մեռնի: Հիմա շարունակելի՞ւ ենք քննարկումը, թե՞ սկսելու ենք խաղը:

— Հայրդ քեզ հե՞տ է:

— Այսօր հետս չէ: Դատարանում է, Քաբուլում:

— Դե, սկսենք:

Ադելն ու Ղուլամը գնդակը որոշ ժամանակ տշում էին այս ու այն կողմ, վազում գնդակի հետևից, հետո որոշեցին զբոսնել: Ադելը, մոռանալով պահակին տված իր խոստումը, Ղուլամի հետ անցավ պտղատու այգուց այն կողմ, որտեղ նրանք խմեցին սառը ֆանտա, որ Ադելը թաքուն բերել էր խոհանոցից:

Տղաները սկսեցին հանդիպել գրեթե ամեն օր: Ֆուտբոլ կամ բռնոցի էին խաղում այգում տնկված ծառերի զուգահեռ շարքերի մեջ: Խոսում էին սպորտից և ֆիլմերից, իսկ երբ խոսելու բան չէին ունենում, պարզապես նայում էին հեռվում փռված Շադբաղ-է-Նաու քաղաքի թավշյա բլուրներին և մշուշապատ լեռնաշղթաներին, և դա էլ հրաշալի էր:

Ամեն առավոտ Ադելն արթնանում էր այն մտքով, որ շուտով կտեսնի փոշոտ արահետն ի վեր բարձրացող Ղուլամին, կլսի նրա բարձր ու վստահ ձայնը: Ադելը շատ ցրված էր դարձել առավոտյան պարապմունքների ժամանակ, նրա միտքը ուրիշ տեղ էր: Նա մտածում էր, թե ինքն ու Ղուլամը ինչ խաղեր են խաղալու և ինչ պատմություններ են պատմելու իրար: Նաև վախենում էր Ղուլամին կորցնելուց: Վախենում էր, որ նրա հայրը՝ Իքբալը, հանկարծ քաղաքում

մշտական աշխատանք կամ ապրելու տեղ կգտնի, և նրանք ստիպված կլինեն տեղափոխվել: Ադելը փորձում էր դրան նախապատրաստվել և արժանապատվորեն տանել հնարավոր բաժանումը:

Մի օր նրանք երկուսով նստած էին ծառի կոճղին, և Ղուամը հարցրեց Ադելին.

— Դու երբևէ աղջկա հետ եղել ես, Ադել:

— Դու նկատի ունես...

— Այո՛, հենց դա էլ նկատի ունեմ:

Ադելի ականջները սկսեցին վառվել: Սկզբում ուզում էր խաբել, բայց հետո հասկացավ, որ Ղուամն ամեն ինչ տեսնում է:

Նա մոթմոթալով արտաբերեց.

— Իսկ դու եղել ես:

Ղուամը սիգարետ կպրեց ու մեկն էլ առաջարկեց Ադելին: Ադելը ուսի վրայով մի հայացք գցեց՝ ստուգելու համար՝ արդյոք պահակն անկյունից չի նայում, կամ Քաբիրը տնից դուրս չի եկել, և վերցրեց սիգարետը: Ծուխը ներս քաշեց և անմիջապես սկսեց հազալ՝ երկար ու տանջալից, իսկ Ղուամը քմծիծաղ տալով թփթփացնում էր նրա մեջքին:

— Եղել ես, թե՛ ոչ, — խոխոաց Ադելը՝ աչքերն արցունքոտ:

— Ճամբարիս ընկերներից մեկը, — ասաց Ղուամը դավադրական շշուկով, — ինձնից մեծ է, նա՛ տարավ ինձ Փեշավարի պոռնկատուն:

Ղուամը սկսեց իր պատմությունը: Փոքր, կեղտոտ սենյակ, նարնջագույն վարագույրներ, ճաքած պատեր և մի լամպ՝ առաստաղից կախ, և հատակին վազող առնետ: Դրսում *ոհկշաները*³² ծայն էին տալիս միմյանց, թշուր էին վառարանները, լսվում էր մեքենաների հռնդյունը, ներքնակի վրա պռակած էր մի երիտասարդ աղջիկ, կողքին դրված էր *բիրյանի*³³ ճաշատեսակի կիսադատարկ ափսեն: Աղջիկը ծամում էր ու նայում իրեն դեմքի բացակա արտահայտությամբ: Այդ աղոտ լույսի տակ անգամ երևում էր, որ աղջիկը

³² Ռիկշա — Ասիայի որոշ երկրներում թեթև երկանիվ սայլակին լծված մարդ, որ տեղափոխում է բեռներ և մարդկանց:

³³ Բիրյանի — շագանակագույն բրնձով պատրաստված կերակրատեսակ մսով, ձկով կամ բանջարեղենով:

սիրունիկ դեմք ուներ և հազիվ թե Ղուլամից տարիքով մեծ լիներ: Նա բրնձի փշուրները հավաքեց նաանի կտորով, ափսե՛ն մի կողմ հրեց, պառկեց ու վարտիքը հանելուց առաջ մատները սրբեց վրան:

Ադելը լսում էր կլանված ու հափշտակված: Այդպիսի ընկեր դեռ չէր ունեցել: Ղուլամը կյանքի մասին ավելին գիտեր, քան նույնիսկ Ադելի եղբայրները, որ իրենից մի քանի տարով մեծ էին: Իսկ Քարուլի իր ընկերները: Բոլորը գործարարների կամ նախարարների որդիներ էին և ապրում էին նույն կյանքով, ինչ Ադելը: Ղուլամը Ադելի համար բացեց մի ուրիշ կյանք, որ, ճիշտ է, լեցուն էր անկանխատեսելի դժվարություններով ու զրկանքներով, բայց նաև ազատությամբ ու արկածներով. մի բան, որ Ադելի կյանքում չկար: Եվ այդ ուրիշ կյանքը պարզա՛ծ ձեռքի հեռավորության վրա էր: Երբ Ադելը լսում էր Ղուլամի պատմությունները, իր սեփական կյանքը նրան թվում էր մահու չափ ձանձրալի:

— Դե ի՞նչ, դու արեցիր դա: Դու նրան մտցրիր:

— Ո՛չ, մի բաժակ թեյ խմեցինք և խոսեցինք Ռուսիի մասին: Ի՞նչ ենք արել քո կարծիքով:

Ադելը կարմրեց:

— Եվ ի՞նչ զգացիր:

Բայց Ղուլամը թեման փոխեց: Դա նրանց խոսակցության սովորական ընթացքն էր: Սկզբում Ղուլամը ընտրում էր խոսակցության թեման, համ ու հոտով պատմում էր, հետաքրքրում էր Ադելին, և ինքն էլ արագ կորցնում էր հետաքրքրությունը՝ օդում թողնելով թե՛ պատմությունը, թե՛ Ադելի սպասումները: Նույնը կատարվեց նաև հիմա: Ղուլամն ասաց.

— Տատս ասում էր, որ իր ամուսինը՝ Սաբիրը՝ իմ պապը, նախքան ծառը կտրելը այս ծառի մասին մի պատմություն էր պատմել: Պատմության իմաստը սա է՝ եթե ուզում ես ցանկությունդ կատարվի, պիտի ծնկի իջնես ծառի առաջ և շշնջաս այն: Եվ եթե ծառը համաձայնվի կատարել քո ցանկությունը, գլխիդ ուղիղ տասը տերև կընկնի:

— Երբեք չեմ լսել նման բան:

— Դե, դու երևի խնդրելու բան էլ չունես, չէ՞:

Եվ հանկարծ Ադելին հասավ Ղուլամի խոսքերի իմաստը:

— Ասացիր՝ քո պապիկն է կտրել մեր ծառը:

— Ձեր ծառը: Դա ձեր ծառը չէ:

Աղելը թարթեց աչքերը:

— Ինչ ես ուզում դրանով ասել:

Ղուամը սևեռուն մի հայացք զգեց Աղելի դեմքին: Առաջին անգամ Ղուամի դեմքին չկար իրեն բնորոշ աշխուժությունը, չկար նաև թեթև տխրության և ամեն ինչ իմացող մարդու քմծիծաղի դրոշմը: Ղուամի դեմքի արտահայտությունը փոխված էր՝ անճանաչելիորեն ծերացած ու վշտալից:

— Սա իմ ընտանիքի ծառն է և իմ ընտանիքի հողն է, որ դարեր շարունակ պատկանել է մեզ: Քո հայրը առանձնատունը կառուցել է մեր հողի վրա, երբ մենք Պակիստանում էինք պատերազմի ժամանակ:— Նա ձեռքով ցույց տվեց այգիները:— Այս ծառերի տեղում մարդկանց տներն էին, բայց քո հայրը բուլդոզերով դրանք հավասարեցրեց գետնին: Դրանց թվում՝ նաև իմ հայրական տունը:

Աղելը կրկին թարթեց:

— Նա հայտարարեց, որ դա իր հողն է, և կառուցած այս ամենը՝ սա, սա ու սա,— Ղուամը քմծիծաղ տվեց՝ մատը տնկելով առանձնատան կողմը,— այդ ամենը նա կառուցեց մեր տների տեղում:

Աղելը թեթև սրտխառնոց զգաց, սիրտը կրծքավանդակից դուրս էր թռչում:

— Ես կարծում էի՝ մենք ընկերներ ենք, Ղուամ: Ինչո՞ւ ես պատմում այդ ահավոր ստերը:

— Հիշում ես, երբ խաբեցի քեզ ու շապիկդ վերցրի,— ասաց Ղուամը շառագունած այտերով:— Դու հուսահատությունից լաց եղար, մի ժխտիր, որովհետև ես նկատեցի դա: Իսկ խոսքը մի շապիկի մասին էր: Մի շապիկի: Հիմա պատկերացրու, թե ինչ էր զգում իմ ընտանիքը: Նրանք եկան Պակիստանից, իջան ավտոբուսից և տեսան այս կառույցը իրենց հողի վրա: Իսկ հետո կարմիր պիջակով քո վեցնոցը սկսեց քշել մեզ մեր սեփական հողից:

— Իմ հայրը գող չէ,— հակադարձեց Աղելը:— Ում ուզում ես, հարցրու Շադբադ-է-Նաու քաղաքում, թե հայրս ինչեր է արել քաղաքի համար:

Նա հիշեց, թե ինչպես էր Բաբա ջանը ընդունում մարդկանց

քաղաքի մզկիթում՝ կռթնած, թեյի բաժակը կողքին դրած և տերողորմյան մատնահարելով: Մարդկանց հանդիսավոր շարքը ձգվում էր հոր մոտից մինչև մուտքը՝ կեղտոտ ձեռքերով տղամարդիկ, ծեր, անատամ կանայք, երիտասարդ այրիներ իրենց երեխաների հետ: Այդ մարդիկ բոլորն էլ կարիքի մեջ էին, բոլորն էլ սպասում էին ինչոր ակնկալիքով՝ աշխատանքի, փոքր վարկի, կտուր կամ ոռոգման խողովակ վերանորոգելու կամ պանրի մերան գնելու համար: Ադելի հայրն անծայրածիր համբերությամբ լսում էր բոլորին, կարծես այդ մարդիկ իր հարազատները լինեին:

— Իսկապէս: Այդ դեպքում ինչո՞ւ են այս տան սեփականության փաստաթղթերն իմ հոր ձեռքին: Ու նա էլ այդ թղթերը հանձնել է դատավորին:

— Ես վստահ եմ, որ եթե հայրդ խոսեր Բաբայի հետ...

— Քո Բաբան չի ուզում խոսել հորս հետ: Չի ուզում ընդունել իր հանցանքը և մեզ քշում է թափառական շների պես:

— Դուք շներ չեք,— ասաց Ադելը՝ ջանալով խոսել հանգիստ ձայնով:— Դուք գիշակերներ եք, ինչպես Քաբիրն ասաց: Ես շուտ պիտի դա հասկանայի:

Ղուամը կանգնեց, երկու քայլ առաջ գնաց և ասաց.

— Ուզում եմ, որ իմանաս, ես քո դեմ ոչինչ չունեմ: Բայց երբ հաջորդ անգամ հայրդ գնա Հելմանդ, խնդրիր նրան, որ քեզ տանի այնտեղ: Ասեմ՝ իմանաս. նա բամբակի գործ չի անում:



Նույն օրը՝ ուշ երեկոյան, Ադելը պառկած էր տաք, փրփուրով լի լոգարանում: Ներքևից լսվում էր հեռուտացուցի ձայնը. Քաբիրը հին ֆիլմ էր նայում ծովահենների մասին: Զայրույթը, որն ամբողջովին համակել էր Ադելին, սկսեց հետզհետե նահանջել, և նա մտածեց, որ չափից դուրս խիստ էր Ղուամի հանդեպ: Բաբա ջանը նրան ասել էր, որ անկախ բարեգործությունների քանակից՝ աղքատները սիրում են վատ բաներ խոսել: Բամբասում են, որովհետև հիասթափված են սեփական կյանքից: Եվ դրան լուծում տալ հնարավոր չէ, դա բնական է: «Մենք իրավունք չունենք մեղադրելու նրանց այդ հիասթափության համար»,— կրկնում էր հայրը:

Ադելն այդքան միամիտ չէր, որ հավատար, թե աշխարհը արդարության հանգրվան է: Հակառակը փաստելու համար բավական էր միայն նայել պատուհանից դուրս: Բայց Ղուամի պես մարդկանց համար անհնար է ընդունել այդ ակնհայտ ճշմարտությունը: Այդպիսի մարդիկ միշտ ուզում են մեկի վրա բարդել մեղքը, մի թիրախ են փնտրում, ում կարելի է մատնացույց անել որպես զրկանքների պատճառ, ում կարելի է մեղադրել, դատապարտել, նզովել: Եվ երևի Բաբա ջանը ճիշտ էր՝ ասելով, որ այդ մարդկանց հանդեպ պետք է ներողամիտ լինել, չդատապարտել նրանց, նույնիսկ բարությանը պատասխանել չարությանը: Ադելը նայում էր ջրի մակերևույթի վրա պայթող օձառի պղպջակներին և մտածում, որ հայրը դպրոցներ ու հիվանդանոցներ է կառուցում քաղաքում՝ իմանալով, որ մարդիկ չար բամբասանքներ են տարածում իր մասին:

Նա սրբվում էր, երբ մայրը ծիկրակեց դռնից:

— Դու գալիս ես:

— Սոված չեմ:

— Օ՛հ:

Մայրը ներս մտավ և կախիչից վերցրեց սրբիչը:

— Արի մազերդ չորացնեն:

— Ինքս էլ կարող եմ չորացնել:

Մայրը, Ադելի հետևում կանգնած, նայում էր որդուն հայելու մեջ:

— Քեզ հետ ամեն բան կարգին է, Ադել:

Ադելը ուսերը թոթվեց: Մայրը ձեռքը դրեց որդու ուսին՝ սպասելով, որ որդին այտը կոնի իր ձեռքին, բայց Ադելն անշարժ էր:

— Մայրիկ, դու տեսնո՞ւ ես Բաբա ջանի գործարանը:

Ադելը նկատեց, որ մայրը մի պահ վարանեց:

— Իհարկե, դու էլ ես տեսել:

— Լուսանկարները նկատի չունեն: Երբևէ եղել ես այնտեղ, տեսնո՞ւ ես քո աչքերով:

— Ինչպե՞ս կարող էի տեսնել: Այդ Հելմանդը վտանգավոր տեղ է: Հայրդ ինձ երբեք վտանգի չէր ենթարկի:

Ներքևում՝ ֆիլմի մեջ, պայթում էին թնդանոթները: Լսվում էին ծովահենների մարտական ձիչերը:

Երեք օր հետո Ղուամը կրկին հայտնվեց: Նա արագ մոտեցավ

Ադելին և կանգ առավ:

— Ուրախ եմ, որ եկել ես,— ասաց Ադելը:— Քեզ համար նվեր ունեմ:

Կոճղի վրայից վերցրեց վերարկուն, որ իրենց բաժանումից հետո ամեն օր բերում էր իր հետ: Շոկոլադագույն կաշվե վերարկու էր, ոչխարի փափուկ կաշվով եզրավորված, գլխանոցով, որ շղթայով կարելի էր հանել և դնել: Ադելը վերարկուն պարզեց Ղուամին:

— Մի քանի անգամ եմ հագել: Վրաս մեծ է, ճիշտ քո հագով է: Ղուամը նույնիսկ չչարժվեց:

— Մենք երեկ նստեցինք ավտոբուս և գնացինք Քարու,— ասաց նա ոչինչ չարտահայտող ձայնով:— Գիտե՞ս, թե ինչ ասաց դատավորը: Ասաց, որ վատ նորություններ ունի մեզ հաղորդելու: Ասաց, որ դժբախտ դեպք է պատահել: Մի փոքր հրդեհ, որը ոչնչացրել է իմ հոր սեփականության փաստաթուղթը:

Ադելը դանդաղ իջեցրեց ձեռքը, որի մեջ էր վերարկուն:

— Եվ երբ նա բացատրում էր, որ առանց փաստաթղթերի մեր հայցն անհիմն է, գիտե՞ս՝ ինչ կար նրա ձեռքին կապած: Մի նոփ-նոր ոսկյա ժամացույց, որ նախկինում չկար:

Ադելը թարթեց:

Ղուամը հայացքը դարձրեց վերարկուին: Դա մի շամփրող մեղադրական հայացք էր, որ կարծես անոթանք էր տալիս: Եվ դա ազդեցություն ունեցավ: Ադելը կուչ եկավ, իսկ ձեռքի վերարկուն ակնթարթորեն հաշտության առաջարկից վերածվեց կաշառքի:

Ղուամը շրջվեց և հեռացավ մտազբաղ ու փութկոտ:



Բաբա ջանը վերադարձավ և նույն օրը երեկոյան մի մեծ խնջույք սարքեց: Ադելը նստել էր հոր կողքին՝ գետնին փռված մեծ սփռոցի շուրջը: Բաբա ջանը սիրում էր նստել գետնին, ուտել ձեռքով, մանավանդ,

երբ հանդիպում էր ջիհադի տարիների իր ընկերներին:

— Հիշում եմ քարանձավում ապրած օրերս,— կատակեց նա:

Կանայք ճաշասենյակում ուտում էին սեղանի մոտ նստած, գդալներով ու պատառաքաղներով: Ադելի մայրը նստած էր սեղանի գլխին: Ադելին լսելի էր կանանց շաղակրատանքը, որ արձագանքում

էր մարմարյա պատերի մեջ: Կանանցից մեկը՝ հաստ ազդրերով ու կարմիր ներկած մազերով, նշանված էր Բաբա ջանի ընկերներից մեկի հետ: Երեկոյան նա Ադելի մորը թվային ֆոտոապարատի վրա ցույց էր տալիս իր նկարները Դուբայի հարսանեկան պարագաների խանութում:

Ճաշից հետո՝ թեյի ժամանակ, Բաբա ջանը պատմեց, թե ինչպես էր իր ջոկատը դարանակալել դեպի հյուսիս խորհրդային գործախմբի երթը կանգնեցնելու համար: Բոլորն ուշադիր լսում էին:

— Երբ նրանք մտան գնդակոծության գոտի,— պատմում էր հայրը՝ մտացրիվ խառնելով Ադելի մազերը,— մենք կրակ բացեցինք: Խփեցինք շարասյան առաջին մեքենան, պայթեցրինք մի քանի ջիպ: Կարծում էինք, որ նրանք կփորձեն նահանջել կամ ճեղքել պաշարման գոտին, բայց անառակի որդիները կանգ առան, զենքերը հանեցին և կրակ բացեցին մեզ վրա: Պատկերացնում եք:

Շշուկ տարածվեց սենյակով մեկ: Մարդիկ գլուխներն էին օրորում: Ադելը գիտեր, որ սենյակի տղամարդկանց կեսից ավելին նախկին մոջահեդներ են:

— Մենք թվով երեք անգամ շատ էինք, բայց նրանք խոշոր թնդանոթներ ունեին, և շուտով իրենք սկսեցին գրոհել մեզ վրա, գրոհեցին պտղատու այգիների մեր դիրքերը: Շուտով բոլորս ցրվեցինք այգիներով: Մենք փախչում էինք: Ես ու այդ տղան, անունը Մուհամեդ էր թե ինչ, միասին էինք վազում: Միասին վազում էինք խաղողի այգու միջով, կային այգիներ՝ առանց փշալարերի և ցանկապատների, և փամփուշտները թռչում էին մեր գլխավերևում, մենք փախչում էինք, որ փրկենք մեր կյանքերը, երբ հանկարծ երկուսս էլ գլորվեցինք ու ընկանք: Ես արագ ոտքի ելա, բայց Մուհամեդի հետքն էլ չկար: Ես շրջվեցի ու գոռացի. «Իշու՛ ծնունդ, վեր կաց շուտ»:

Բաբա ջանը դադար տվեց՝ լարված իր պատմությանը թատերական շեշտ տալով: Եվ բռունցքը սեղմեց շրթունքներին, որ զսպի ծիծաղը:

— Ու նա վեր թռավ, շարունակեց վազել: Գիտե՞ք, այդ անառակի ծնունդը երկու բուռ խաղող էր պոկել: Մի ճուֆ խաղող՝ ամեն ափի մեջ:

Սենյակում մի քրքիջ պայթեց: Ադելն էլ էր ծիծաղում: Հայրը

շոյեց որդու մեջքը ու պինդ գրկեց նրան: Ինչ-որ մեկը սկսեց իր պատմությունը, և Բաբա ջանը ձգվեց, որ վերցնի ափսեի կողքին դրված սիգարետը, բայց չհասցրեց վառել այն, քանի որ ամբողջ տնով մեկ լավեց կոտրված ապակիների ձայնը:

Ճաշասենյակում կանայք ճչացին: Ինչ-որ մետաղյա բան, ամենայն հավանականությամբ՝ պատառաքաղ կամ դանակ, զնգոցով ընկավ մարմարյա հատակին: Տղամարդիկ վեր թռան: Ազմարայը և Քաբիրը դուրս թռան իրենց սենյակից՝ ավտոմատները ձեռքներին:

— Մուտքից եկավ ձայնը, — ասաց Քաբիրը:

Այդ ասելուն պես դարձյալ ապակու ձայն լսվեց:

— Այստեղ սպասեք, հրամանատար Սահիբ: Մենք կնայենք, — ասաց Ազմարայը:

— Գրողը տանի, իհարկե նայելու եմ, — ասաց Բաբա ջանը՝ առաջ անցնելով: — Ես չեմ պատրաստվում թաքնվելու սեփական կտուրի տակ:

Նա գնաց հյուրասենյակ: Քաբիրը, Ազմարայը և բոլոր տղամարդիկ հետևեցին նրան: Ճանապարհին Քաբիրը վերցրեց մետաղյա ձողը, որով ձմռանը բուխարիում խառնում էին կրակը: Ադելը տեսավ մորը, որ վազում էր նրանց մոտ: Կնոջ դեմքը գունատ էր և շփոթված: Հյուրասենյակ հասնելուն պես մի քարաբեկոր թռավ պատուհանից ներս, և ապակու կտորները շաղ եկան հատակով մեկ: Ապագա հարսնացուն՝ կարմրամազ տիկինը, բարձր ձիչ արձակեց: Դրսում ինչ-որ մեկը գոռում էր.

— Բայց, գրողը տանի, սրանք ո՞նց անցան պահակի կողքով:

— Ո՛չ, հրամանատար Սահիբ, — մռնչաց Քաբիրը, բայց հայրն արդեն բացել էր մուտքի դուռը:

Մթնում էր, ամառ էր, և երկինքը դեռ մարմրում էր բաց դեղին ցուլքերով: Հեռվում Ադելը նկատեց լույսի բույլեր: Շադբաղ-է-Նաուի բնակիչները ճաշում էին իրենց ընտանիքներով: Հորիզոնը եզրագծող բլուրները սևացել էին, և շուտով գիշերը ծածկոցի պես նստելու էր ամենուրեք: Բայց դեռ այնքան մուգ չէր, և Ադելը կարողացավ տեսնել ծեր մարդուն, որ կանգնած էր մուտքի առաջ՝ ամեն ձեռքին մի քար:

— Վերև տարեք սրան, — ուսի վրայից նետեց հայրը Ադելի

մորը:— Հենց հիմա:

Մայրը գրկեց Ադելի ուսերը և տարավ նրան աստիճաններով, հետո՝ մուտքով դեպի ընտանեկան ննջարանը: Դուռը փակեց, կողպեց այն, քաշեց վարագույրները և միացրեց հեռուստացույցը: Հետո Ադելին տարավ անկողին, և նրանք երկուսով նստեցին՝ նայելով, թե ինչպես էկրանի վրա երկու արար՝ երկար վերնաշապիկներով և գործած գլխարկներով, աշխատում են հրեշավոր մեծ բեռնատարի վրա:

— Ինչ է նա անելու այդ ծեր մարդու հետ,— Ադելը ամբողջ մարմնով դողում էր,— մամա՛, ինչ են անելու այդ մարդուն:

Նա տեսավ, թե ինչպես մի ամպ սահեց մոր դեմքով, և հասկացավ, միանգամից իմացավ, որ ինչ էլ մայրը պատասխանի հիմա, միևնույնն է, նրա ասածին չի կարելի հավատալ:

— Նա խոսելու է այդ մարդու հետ,— ասաց մայրը դողացող ձայնով:— Խելք ու խրատ է տալու: Քո հայրը միշտ այդպես է անում: Մարդկանց բացատրում է ամեն ինչ:

Ադելը գլուխը թափ տվեց: Նա արդեն հեկեկում էր: Մայրն անվերջ նույնն էր կրկնում. ամեն ինչ լավ կլինի, ամեն ինչ հրաշալի կլինի, ոչ մեկին վսաս չեն տա: Բայց ինչքան մայրը կրկնում էր դա, այնքան տղան ավելի աղեկտուր էր լաց լինում և ի վերջո, լացից ու ժասպառ, քնեց մոր գրկում:



«Նախկին հրամանատարը փրկվեց մահափորձից»,— Ադելը կարդաց այդ պատմությունը հոր աշխատասենյակում՝ նրա համակարգչի վրա: Հարձակունը ներկայացված էր իբրև «չարանենգ», իսկ մահափորձի հեղինակը՝ նախկին փախստական, «կասկածվում էր Թալիբանի հետ կապեր ունենալու մեջ»: Հոդվածի կեսին մի մեջբերում կար Ադելի հոր խոսքից, որտեղ հայրն ասում էր, թե անհանգստացել էր իր ընտանիքի ապահովության համար՝ «և մանավանդ իմ փոքրիկ անմեղ որդու կյանքի համար»: Հոդվածը անդրադարձ չէր կատարում մահափորձ անողի անձին և նրա հետագա ճակատագրին:

Ադելն անջատեց համակարգիչը. նա իրավունք չունեի օգտագործելու այն, թեև արդեն խախտել էր կարգը՝ մտնելով հոր աշխա-

տասննյակ: Մեկ ամիս առաջ Ադելը չէր համարձակվի դա անել: Նա ոտքերը քարշ տվեց իր սենյակ և պառկեց մահճակալին ու սկսեց պատին խփել թենիսի հին գնդակը:

— Թըմփ, թըմփ, թըմփ:

Մայրը գլուխը ներս մտցրեց, խնդրեց, հետո հրամայեց, որ դահարի, բայց Ադելը չլսեց նրան: Մայրը դռան մոտ մյուս տվեց և անձայն հեռացավ:

Թըմփ, թըմփ, թըմփ:

Առերևույթ ոչինչ չէր փոխվել: Նա արթնանում էր նույն ժամին, լվացվում և նախաճաշում էր ծնողների հետ ու դասերը պատրաստում ուսուցչի հետ: Հետո ճաշում էր և օրն անցկացնում էր Քաբիրի հետ ֆիլմեր դիտելով կամ զբաղվում էր համակարգչային խաղերով:

Բայց իրականում ամեն ինչ փոխվել էր: Ղուլամը մի դուռ էր կիսաբաց թողել Ադելի համար, իսկ հայրը նրան դուրս էր հանել այդ դռնից: Ադելի ուղեղում նիրհող շարժիչը սկսեց պտտվել: Նա զգում էր, որ մի գիշերվա մեջ ձեռք է բերել նոր, ենթագիտակցական իմացություն այն իրողությունների, որ շրջապատում էին իրեն ծննդից ի վեր: Օրինակ՝ նա տեսավ, որ մոր ներսում մի գաղտնիք կա, որ կարծես կաթում է նրա դեմքից: Նա հասկանում էր, որ մայրն ուզում է իրեն հեռու պահել իրողություններից, որ խնամքով փակել, կողպել և պահպանում էր իր ներսում, ճիշտ այնպես, ինչպես տան պատերն էին պահպանում իրենց կամավոր բանտարկությունը: Ադելը նաև սկսել էր նկատել, որ մարդիկ ամեն կերպ փորձում են հաճոյանալ իր հորը սարսափից ու վախից, դա էր նրանց հարգալից վերաբերմունքի և երեսպաշտության իրական պատճառը: Ադելը մտածեց, որ Ղուլամը կիպարտանար իր այդ նոր գիտակցությամբ, որովհետև առաջին անգամ կյանքում հասկանում էր, թե ինչ վերին ուժեր են ղեկավարել իր գոյությունը:

Ադելը նաև հաղորդակցվում էր այն հակամարտող ճշմարտություններին, որ ծվատում են մարդու ներսը: Ոչ միայն հոր, մոր կամ Քաբիրի, նաև իր ներքին պայքարն էր դա:

Եվ այդ վերջին հայտնագործությունը Ադելի համար ամենագարնանալին էր: Նա արդեն գիտեր, թե ինչ է արել հայրը ջիհադի

անվան ներքո, այն, ինչ նա անվանում էր «գոհողության պարգևը», ու դրանից հողը փախչում էր Ադելի ոտքերի տակից: Այն չարաբաստիկ երեկոյից հետո, երբ քարերը ջարդվող ապակու զնգոցով ընկան հյուրասենյակի հատակին, Ադելի փորը ցավում էր ամեն անգամ, երբ հայրը մտնում էր սենյակ: Երբ նա լսում էր, թե ինչպես է հայրը գոռում հեռախոսի մեջ, կամ նույնիսկ երբ նա պարզապես երգ էր մրմնջում լողասենյակում, Ադելի ողնաշարը լարվում էր, իսկ կոկորդը՝ ցավելու աստիճան չորանում: Երբ հայրը քնից առաջ համբուրում էր նրան, ուզում էր հետ մղվել: Նա մղձավանջներ էր ունենում: Երազում կանգնում էր այգիների մեջ, նայում էր, թե ինչպես աղմուկով ծառերի միջով մի բան է անցնում, տեսնում էր վերևից իջնող մետաղյա ձողի պսպղուն ցուլքն արևի տակ, լսում էր, թե ինչպես է մետաղը աղմուկով հարվածում մարմնին և ոսկորներին: Այդ մղձավանջներից նա արթնանում էր այն զգացումով, որ սիրտը կպայթի: Եվ ինչ-որ անպատեհ պահի հեկեկալու ցանկություն էր ունենում:

Բայց միևնույնն է:

Բայց միևնույնն է:

Ինչ-որ բան էլ էր կատարվում նրա ներսում: Նորի գիտակցումը չմարեց Ադելի մոտ, բայց նրան ուղեկցող մի գաղափար էլ, ամեն ինչին հակառակ, ծվարել էր նրա մտքում: Ադելը սկսում էր հաղորդակից դառնալ իր ինքնության առավել տհաճ կողմին: Եվ հենց այդ երկրորդ եսը աստիճանաբար և գրեթե աննկատ գալիս էր հաշտվելու այն կնճռոտ իրողության հետ, որ այժմ ծակծկում էր նրան թաց, բրդյա սվիտերի պես: Ադելը հասկանում էր, որ վերջում ինքն էլ մոր պես հարմարվելու է այս ամենին: Սկզբում Ադելը բարկանում էր մոր վրա, այժմ դարձել էր առավել ներողամիտ: Երևի մայրն էլ ամեն ինչի հետ հաշտվում էր, որովհետև վախենում էր հորից կամ էլ խղճի հետ գործարքի էր գնում, որ վայելի իրեն շրջապատող շքեղությունը: Ադելը կասկածում էր, որ իր և մոր հաշտվողականության պատճառները նույնն են. իրենք ուրիշ ելք չունեն: Եվ իրոք, ինչ ընտրություն ուներ նա: Ադելը չէր կարող փախչել իր կյանքից, ինչպես Ղուլամը չէր կարող փախչել իր թշվառ գոյությունից: Մարդիկ սովորում են ապրել ամենաանհավանական բաների հետ: Ինչպես

Ադելը: Դա իր կյանքն էր: Իր հայրն էր, իր մայրն էր: Եվ սա ինքն էր, նույնիսկ եթե չէր ճանաչում իրեն այդպիսին:

Ադելը գիտեր, որ չի կարող հորը սիրել այնպես, ինչպես այն երանելի ժամանակ, երբ երջանիկ ծվարած քնում էր նրա գրկում: Դա այլևս անհնար էր: Բայց նա դարձյալ սիրելու էր հորը մի ուրիշ սիրով՝ առավել դժվար, խառնաշփոթ, բարդ զգացումներով լի: Ադելը զգում էր, թե ինչպես է նա մի մեծ ցատկ արել մանկությունից հասունություն: Եվ հասունությունից ետդարձի ճանապարհ չկար, որովհետև հասուն լինելը, ինչպես ասում էր հայրը, պատերազմի հերոս լինելու պես բան է: «Մի անգամ հերոս դառնալով հերոս էլ կմեռնես»:

Գիշերն անկողնում պառկած՝ Ադելը մտածում էր, որ մի օր, մի-գուցե վաղը, մյուս օրը կամ մյուս շաբաթ դուրս կգա տնից և կբայլի դեպի ջրաղացի կողքի դաշտը, ուր հանգրվանել էր Ղուլամի ընտանիքը: Նա վստահ էր, որ դաշտը դատարկ է լինելու: Հետո կկանգնի ճանապարհի կողքին՝ պատկերացնելով Ղուլամի մորը, եղբայրներին և նրանց տատիկին, որ պարանով կապկպված պարկերն ուտերին՝ շարքով գնում են ճանապարհով և տեղ են փնտրում հանգրվանելու: Հիմա Ղուլամը կլինի ընտանիքի սյունը: Նա ստիպված կլինի շատ աշխատել: Նրա երիտասարդությունը կանցնի առուններ մաքրելով, ջրանցքներ փորելով, աղյուս սարքելով և դաշտերում բերք հավաքելով: Եվ կամաց-կամաց Ղուլամը կդառնա կռացած ու կոշտացած մաշկով տղամարդկանցից մեկը, ում Ադելը հաճախ հանդիպել էր գութանով վար անելիս: Մի պահ կկանգնի դաշտում՝ ուսումնասիրելով Նոր Շաղբաղի շուրջը վեր բարձրացող սարերն ու բլուրները:

Հետո գրպանից կհանի այգիներում զբոսանքի ժամանակ գտած ակնոցի ձախ մասը՝ ապակին սարդոստայնի պես ճաքճքած, քունքամասի հատվածին՝ չորացած արյուն: Կշարտի այդ ակնոցը մոտակա առուն: Ադելը կարծում էր, որ դրանից հետո ինքը կշրջվի և տուն կգնա թեթևության զգացումով:

բժշկական ցենտր
№ 1915-ինՏՕ
Հայ ԳԻ

Ութերորդ

ԱՇՈՒՆ, 2010

Այս երեկո տուն վերադարձա հիվանդանոցից և տան հեռախոսի հինքնապատասխանիչին հաղորդագրություն գտա Թալիայից: Հանեցի կոշիկներս և նստեցի սեղանի մոտ: Թալիան տեղեկացնում էր ինձ, որ հիվանդացել է, երևի մայրիկից է վարակվել, հետո հարցնում է, թե ինչպես են իմ գործերը Քաբուլում: Հետո ծայնային ուղերձի վերջում Թալիան եզրափակեց. «Օդին անհանգիստ դեսուդեն է քայլում, որովհետև դու նրան չես զանգում: Իհարկե, քեզ նա այդ մասին չի ասի, ուրեմն ես կասեմ: Մարկոս, զանգիր մորդ, այ հիմարի գլուխ»:

Ես ժպտացի:

Թալիա:

Իմ սեղանին ես պահում եմ նրա նկարը: Ես այն նկարել էի տարիներ առաջ Թիևոսի լողափում: Նկարում նա նստած է ժայռի վրա՝ մեջքով դեպի ինձ: Ես նկարը դրել եմ շրջանակի մեջ, թերևս, եթե նայեք, նկարի ձախ անկյունում կնկատեք մի մուգ շագանակագույն այրված հետք. մի ցնորված իտալուտի տարիներ առաջ փորձեց այրել այդ նկարը:

Ես միացրի համակարգիչս և սկսեցի հավաքել նախորդ օրվա բժշկական քննության արդյունքները: Սենյակս վերնահարկում է, տան երեք ննջասենյակներից մեկը, ուր ես ապրում եմ 2002 թ. Քաբուլ գալուց հետո: Սեղանս դրված է պատուհանի մոտ և նայում է

այգուն, ուր ես կարող եմ տեսնել *մուշմուլլայի*³⁴ ծառերը, որ ես ու այս տան նախկին տեր Նաբին տնկել էինք տարիներ առաջ: Պատուհանիցս երևում է նաև Նաբիի նախկին կացարանը հետևի պատի մոտ՝ ներկած ու վերանորոգած: Նաբիի մահից հետո ես կացարանը տվեցի հովանդացի մի երիտասարդի, որ օգնում է տեղական ավագ դպրոցի աշակերտներին համակարգչային ծրագրերում: Աջ կողմի վրա Սուլեյման Վահդատիի 1940 թվականի «Շևրոլեն» է, որ տասնյակ տարիներ անշարժ կանգնած է նույն տեղում, ժանգապատ, ինչպես քարն է մամռակալում, անսպասելի վաղ տեղացած ձյան ծածկոյթի տակ մի թեթև սպիտակած: Նաբիի մահից հետո ուզում էի տանել մեքենան Քաբուլի մեքենաների գերեզմանոց, բայց սիրտ չարեցի, քանի որ իմ կարծիքով այդ մեքենան տան անցյալի, տան պատմության անբաժանելի մասն էր:

Ավարտեցի աշխատանքս և նայեցի ժամացույցին: Երեկոյան ինն անց կես էր: Հունաստանում յոթն է:

«Մի՞րդ զանգիր, այ հիմարի գլուխ»:

Եթե ուզում եմ մորս զանգել, էլ չպիտի հապաղեմ: Հիշում եմ՝ նամակներից մեկում Թալիան գրել էր, որ մաման հիմա ավելի շուտ է պառկում քնելու: Շունչ առա, փորձեցի խաղաղվել, վերցրի լսափողն ու հավաքեցի համարը:



Ես Թալիային հանդիպեցի 1967 թվականին, երբ տասներկու տարեկան էի: Թալիան և նրա մայրը՝ Մադելինը, եկան Թինոս՝ ինձ ու մորս այցելության: Մայրս՝

Օդին, ասում էր, որ իր և Մադելինի վերջին հանդիպումից տասնհինգ տարի է անցել: Մադելինը հեռացել էր Թինոսից տասնյոթ տարեկանում, գնացել էր Աթենք և այնտեղ դարձել բավականին հանրաճանաչ դերասանուհի:

— Երբ իմացա, որ դերասանուհի է դարձել, չզարմացա,— ասում էր մաման:— Որովհետև արտակարգ գեղեցիկ էր: Բոլորը միշտ սիրահարվում էին Մադելինին: Երբ հանդիպեք, ինքդ կհամոզվես:

³⁴ Մուշմուլլա — մշտապես կանաչ, վարդագգիներին պատկանող բույս՝ նարնջագույն պտուղներով:

Հարցրի մորս, թե ինչու երբեք չի հիշատակել իր ընկերուհու մասին:

— Իսկապէն: Վստահ ես:

— Այո՛, վստահ եմ:

— Իսկ ես կարող եմ երգվել, որ ասել եմ նրա մասին:

Հետո նա ավելացրեց.

— Մաղելինը դուստր ունի՝ Թալիան: Դու պետք է շատ նրբանկատ լինես այդ աղջկա հետ, որովհետև նրա հետ դժբախտ դեպք է պատահել: Շունը կծել է նրան, և նա այժմ սպի ունի:

Մայրս էլ բան չասաց այդ մասին, և ես գիտեի, որ ավելի լավ է հարցեր չտալ: Բայց այդ բացահայտումն ինձ ավելի հետաքրքրեց, քան Մաղելինի թատերական անցյալը: Հետաքրքրությունս խթանում էր կասկածը, որ սպին տեսանելի և բախտորոշ է այդ աղջկա համար, այլապես հիշատակման չէր արժանանա: Հիվանդագին անհամբերությամբ ես ուզում էի սպին տեսնել սեփական աչքերով:

— Մաղելինը և ես փոքր էինք, երբ հանդիպեցինք պատարագի ժամանակ, — ասաց մայրս, — անմիջապես դարձանք անբաժանելի ընկերներ:

Ձեռք ձեռքի քայլում էին դասամիջոցին, այդպես ձեռք ձեռքի կանգնում եկեղեցում կամ զբոսնում գարու արտերում: Աղջիկները մեկմեկու խոսք տվեցին միշտ իրար կողքի մնալ, նույնիսկ երբ ամուսնանան: Նրանք պիտի ապրեին կողք կողքի, և եթե ամուսիններից մեկը ուզենար տեղափոխվել, կինը պիտի ապահարգան պահանջեր: Հիշում եմ, մայրս ինքն իրեն ժպտում էր, երբ ինքնահեգնանքով պատմում էր այդ պատմությունը՝ կարծես հետ մղելով իրենից այդ պատանեկան ոգևորությունը, հիմարությունն ու հապճեպ շնչակտուր խոստումների հիշողությունը: Բայց ես մորս դեմքին կարող էի կարդալ նաև մի թաքնված ցավի աղերս, հիասթափության մի ստվեր, որ նա, հպարտությունից դրդված, չէր խոստովանում:

Մաղելինն այժմ ամուսնացած էր մի հարուստ և իրենից տարիքով շատ մեծ մարդու՝ Անդրեաս Գիանակոսի հետ, որը Մաղելինի երկրորդ և, ինչպես պարզվեց, վերջին ֆիլմի պրոդյուսերն էր: Այժմ Անդրեասը զբաղվում էր շինարարական գործով և մեծ ընկերություն ուներ Աթենքում: Վերջերս ամուսինների միջև կապը խզվել

էր, մայրս ինձ այդ մասին ոչինչ չէր ասել, ես ուղղակի շնչակտուր գողունի հաջողեցրել էի կարդալ Մադելինի նամակի մի մասը:

«Ինչ հոգնեցուցիչ է լինել Անդրեասի կողքին և տեսնել նրա քաղաքական «աջ» ընկերներին, լսել զինվորական երաժշտություն: Ես ամբողջ օրը լուռ լսում եմ, երբ նրանք գովերգում են այն ավազակներին, որոնք մեր ժողովրդավարությունը ծաղրի են վերածել: Եթե անհամաձայնության նշան ցույց տամ, վատահ եմ, նրանք ինձ կպիտակավորեն իբրև ապերախտ կոմունիստի, և նույնիսկ Անդրեասի ազդեցությունը ինձ չի փրկի բանտից: Այսինքն՝ կասկածում եմ, որ Անդրեասը կգործադրի իր ազդեցությունը: Երբեմն ես մտածում եմ, որ այդ ամենը նա անում է հատուկ, որ հրահրի ինձ: Եվ ինչքան եմ կարոտում քեզ, սիրելի՛ Օդի: Ինչքան եմ կարոտում մեր ընկերությունը»:

Մեր հյուրերի ժամանելու օրը մայրս առավոտյան շուտ արթնացավ, որ մաքրություն անի: Մենք ապրում էինք բլուրների մեջ կառուցված մի տանը: Թինոսի մյուս տների պես այն պատրաստված էր սպիտակեցված քարից, իսկ կտուրները հարթ էին՝ ութանկյուն կարմիր կղմինդրներով ծածկված: Վերնահարկի փոքր ննջասենյակը, ուր ես ու մայրս քնում էինք միասին, դուռ չուներ, որովհետև նեղ աստիճանները բացվում էին սենյակի մեջ: Բայց փոխարենը այն առաստաղի վրա պատուհան ուներ և դիմացը՝ նեղ հարթակ՝ գոտկատեղին հասնող երկաթակուռ բազրիքներով, որին կանգնած՝ կարելի էր տեսնել այլ տնակների կտուրները, ձիթենիները, այծերին, ոլորուն ծառուղիներն ու կամարները և, անշուշտ, Էգեյան ծովը, որ կապուտակ և խաղաղ էր ամառային առավոտներին և սպիտակ ու փրփրակալած կեսօրին, երբ հյուսիսից փչում էին *մեթեոլի*³⁵ քամիները:

Տունը մաքրելուց հետո մայրս հագավ իր տոնական հագուստը, որը նա կրում էր ամեն օգոստոսի 15-ին՝ Սուրբ Աստվածամոր օրվա տոնակատարությանը, որ տեղի էր ունենում Պանագիա Եվանգելիստրիա եկեղեցում: Այդ օրը Միջերկրականի չորս կողմերից Թինոս էին գալիս բազմաթիվ ուխտավորներ՝ հայտնի սրբապատ-

³⁵ Մեթեոլի — Էգեյան ծովից փչող հյուսիսային քամի:

կերի մոտ աղոթելու համար: Մայրս լուսանկար ունի այդ զգեստով՝ գորշ դարչնագույնի, ժանգագույնի և ոսկեգույնի խառնուրդով, կլոր վզով, վանալուց փոքրացած սպիտակ սվիտերով, զուգագուլպաներով և սև անձոռնի կոշիկներով: Ամեն կերպ մայրս ի ցույց էր դնում իր այրիության դժբախտությունը՝ խիստ դեմքով, կիտած հոնքերով, կնձռոտ քթով: Նա կանգնած էր ձգված, հանդիսավոր, կարծես ինքը ուխտավոր լիներ: Ես էլ եմ այդ նկարում լարված ու ձգված, մորս ազդրին նստած: Հագիս սպիտակ վերնաշապիկ է, կարճ սպիտակ շավարիկ և ոլորած կիսագուլպաներ: Իմ տեսքից երևում է, որ ինձ հրամայել են նստել ուղիղ, ժպտալ, դեմքս վազած, մազերս խոնավ խոզանակով սանրած՝ իմ կամքին հակառակ ու մեծ դժվարությամբ: Ակնհայտ է, որ մենք դժգոհ ենք իրարից: Դա երևում է մեր ձգվածությունից և նրանից, որ մենք գրեթե իրար չենք կաչում:

Գուցե ձեզ համար դա տեսանելի չլինի, բաց երբ նայում եմ այդ նկարին (վերջին անգամ երկու տարի առաջ էր), անմիջապես զգում եմ վախվորածությունը, ճիզն ու անհամբերությունը: Պարզորոշ երևում է, որ այս մարդիկ կապված են իրար միայն գենետիկ պարտավորություններով և դատապարտված են շփոթեցնելու և հուսահատեցնելու միմյանց, և յուրաքանչյուրն իր պատվի գործն է համարում հակառակվել դիմացինին:

Վերնահարկի ննջասենյակի պատուհանից տեսա, թե ինչպես մայրս գնաց լաստերի նավահանգիստ, որը գտնվում էր Թինոսում: Շարֆը կապված էր կզակի տակ: Մայրս վճռականորեն հատում էր արևոտ կապտավուն առավոտը: Նա թեթև, մանրոսկոր կին էր, երեխայի քայլվածքով, բայց մարդիկ գերադասում էին արագ անցնել նրա կողքով: Հիշում եմ, նա ամեն օր տանում էր ինձ դպրոց: Այժմ նա թռչակի է, բայց այն տարիներին աշխատում էր դպրոցում որպես ուսուցչուհի և քայլելիս երբեք ձեռքս չէր բռնում: Նա կրկնում էր, որ պարտավոր է ինձ վերաբերվել այլ աշակերտների պես: Մինչև կզակը կոճկած օձիքով նա առաջ էր շարժվում, իսկ ես փորձում էի համընթաց քայլել՝ ձեռքիս նախաճաշի տուփը: Դասասենյակում ես միշտ նստում էի հետևի նստարանին: Հիշում եմ մորս՝ գրատախտակի առջև կանգնած: Նա կարող էր մի արհա-

մարհական հայացքով պատին գամել չարածճի աշակերտին: Եվ այդ հայացքը դիպուկ էր՝ պարսատիկից արծակած քարի պես: Նպատակակետն էլ ընտրված էր վիրաբուժական ճշգրտությամբ: Նա կարող էր կոտրել սիրտդ միայն մի մթամած հայացքով կամ հանկարծակի լռության ապտակով:

Մայրս օրինապահության նվիրյալ էր, նույնիսկ կամ, ավելի ծիշտ, հատկապես ինքնաժխտման գնով: Նա կարծում էր, որ ամենալավ ընտրությունը ծիշտն ասելն է, պարզ, առանց ամպագոռգոռ խոսքերի, և որքան տհաճ լինի այդ ճշմարտությունը, այնքան շուտ այն պետք է բարձրաձայնել: Նա բարեկիրթ լինելու ժամանակ չունեի: Մայրս մեծ կամքի տեր, անզիջում կին էր, և նրա հետ անհնար էր վիճել, թեպետ ես երբեք չեմ հասկացել և հիմա էլ չեմ հասկանում՝ արդյոք մորս բնավորությունը բնատուր էր, թե նրա այդ վարքագիծը պայմանավորված էր հանգամանքներով՝ ամուսնությունից մեկ տարի հետո երիտասարդ ամուսնու մահով և որդուն միայնակ դաստիարակելու ծանրությամբ:

Մորս գնալուց հետո ես մի պահ աչքս կպցրի և վեր թռա կանացի բարձր, զրնգուն ձայնից: Նստեցի տեղումս և տեսա այդ կնոջը՝ շրթներկով, օժանելիքով և վայելույզ կազմվածքով, կարծես ավիաուղիների գովազդից լինեի, որ այժմ ժպտում էր դեղահաբ հիշեցնող գլխարկի քողի տակից: Նա կանգնած էր սենյակի մեջտեղում վառ կանաչ, կարճ շրջազգեստով, ոտքերի մոտ՝ կաշվե ճամպուրակ, շիկակարմիր մազերով և երկար ոտքերով ու պայծառ դեմքով ժպտում էր, և նրա ձայնի վստահ ու ուրախ ելևէջները սփռվում էին սենյակով:

— Ուրեմն այդ դու ես Օդիի փոքր Մարկոսը: Նա ինձ չի պատմել, որ դու այդքան անուշիկն ես: Օ՛հ, քո մեջ մորդ եմ տեսնում, աչքերը, այո՛, դուք նույն աչքերն ունեք, քեզ երևի արդեն ասել են: Ինչքան էի ուզում տեսնել քեզ: Ես և քո մայրը, ճի՛, գիտեմ, Օդին քեզ պատմել է, և դու պատկերացրու՝ ինչքան հուզված եմ ես, տեսնել քեզ, երկուսիդ, հանդիպել քեզ, Մարկո՛ս, Մարկոս Վարվարիս: Ես Մադելին Գիանակոսն եմ և ուզում եմ ասել, որ շատ ուրախ եմ:

Նա հանեց իր կաթնագույն, մինչև արմունկը հասնող էլեգանտ ձեռնոցը: Նման ձեռնոցներ ես տեսել էի միայն ամսագրերում. այդ-

պիսի ձեռնոցներով կանայք, էլեգանտ թիկնոցն ուսերին, ներկայացման ավարտից հետո ծխում էին օպերայի լայն աստիճանների առաջ կամ դուրս էին գալիս փայլուն սև մեքենաներից տղամարդու օգնությամբ, և նրանց դեմքը լուսավորում էին ֆոտոխցիկների լուսարձակները: Նա ստիպված էր մի քանի անգամ ձգել ձեռնոցի մատները, որ հանի այն: Հետո կռացավ և ձեռքը մեկնեց ինձ:

— Շատ ուրախ եմ:

Նրա ձեռքը փափուկ էր և սառը, թեպետ տիկինը մինչ այդ ձեռնոցով էր:

— Թալիա՛, սիրելիս, բարևիր Մարկոս Վարվարիսին:

Նա կանգնած էր մուտքի մոտ՝ մորս կողքին. մի ոսկրոտ, գունատ աղջիկ՝ փափուկ գանգուրներով: Դա իմ առաջին տպավորությունն էր, որին ոչինչ չեմ կարող ավելացնել. ինչ հագուստով էր այդ աղջիկը, ինչ կոշիկներով, կրում էր արդյոք մանյակ, մատանի կամ ականջօղեր՝ չեմ կարող ասել, որովհետև, ասենք, երբ դու գնացել ես ռեստորան, ուր հաճախորդներից մեկը հանկարծ մերկացել է, թռել սեղանին և սկսել է աճաբարություն անել դեսերտի գդալներով, ականա նայելու ես նրան, նայելու ես միմիայն այդ մարդուն: Այդ աղջկա դեմքի կեսը ծածկված էր դիմակով, և ողջ ուշադրությունս գրավում էր հենց այդ դիմակը՝ բացառելով այլ բան նկատելու հնարավորությունը:

— Թալիա՛, բարևիր, սիրելիս, անքաղաքավարի մի՛ եղիր:

Ես նշմարեցի գլխի մի թեթև շարժում:

— Բարև,— պատասխանեցի՝ լեզուս հղկաթղթի պես զգալով բերանումս: Կարծես օդը տատանվեց: Մի հոսանք անցավ: Ու ես հասկացա, որ հաղորդակցվում եմ մի բանի հետ, որ կես զարմանք է, կես սարսափ: Այդ զգացումը պայթյունի պես դրնգաց իմ մեջ, հետո հետ քաշվեց ու կծկվեց: Ես պլշած նայում էի և անկարող էի հայացքս կտրել դիմակի կապույտ կտորից, երկու կապիչներից, որ ամրացնում էր դիմակը, և բերանի մոտ կտրված հորիզոնական ձեղքից: Ես գիտեի, որ ի վիճակի չեմ լինի նայելու այն ամենին, ինչ թաքնված է դիմակի տակ, միևնույն ժամանակ ես տեսչում էի տեսնել դա: Կյանքն այլևս չէր կարող ընթանալ նորմալ հունով կամ ռիթմով ու կարգով, քանի ես աչքովս չէի տեսել այդ ահասարսուռ

սահմակեցուցիչ բանը, որից փորձում էին պաշտպանել ինձ և ուրիշներին:

Կար մեկ այլ տարբերակ, որ դիմակը պաշտպանում է հենց Թալիալին պարապ հայացքներից, բայց այդ միտքն այդ պահին գլխովս չանցավ, համենայն դեպս մեր առաջին հանդիպման տենդագին ոլորապտույտում:

Մադելինը և Թալիան բարձրացան վերև՝ ճամպրուկները դասավորելու, մայրս խոհանոցում ընթրիքի համար ձկան կտորներ էր կտրտում: Նա խնդրեց, որ ես Մադելինի համար հունական սուրճ պատրաստեմ և տանեմ վերև: Ես պատրաստեցի սուրճն ու սկուտեղի վրա քաղցրավենիքի մի փոքր ափսեով վերև տարա:

Տասնամյակներ են անցել, բայց ամեն անգամ, երբ հիշում եմ, թե ինչ կատարվեց հետո, ամոթի զգացումը ողողում է ինձ տաք ու կպչուն հեղուկի պես: Տասնամյակներ հետո այդ տեսարանը սառած պատկերի պես կանգնած է աչքերիս առաջ: Մադելինը ծխում էր ննջարանի պատուհանի մոտ կանգնած և դեղին ապակիներով ակնոցն աչքերին՝ նայում էր ծովին՝ մի ձեռքը կողքին դրած, ոտքերը խաչած: Դեղահաբ հիշեցնող նրա գլխարկը դրված էր զարդասեղանին: Զարդասեղանի վերևում հայելի կար, և Թալիան արտացոլվում էր հայելու մեջ: Նա նստած էր մեջքով դեպի մուտքը: Հետո աղջիկը կռացավ, երևի ինչ-որ բան էր անում, միգուցե կոշիկի քուղերն էր արձակում, և ես տեսա, որ նրա դեմքին էլ դիմակ չկար:

Մեջքովս սարսուռ անցավ, ես փորձում էի զսպել ձեռքերիս դողը, բայց ապարդյուն: Ճենապակե բաժակը զրնգաց սկուտեղի վրա, Մադելինը գլուխը շուռ տվեց իմ կողմը, իսկ Թալիան նայեց վերև, և ես տեսա նրա դեմքը հայելու մեջ:

Սկուտեղը սահեց և ընկավ ձեռքիցս: Ճենապակին ճաք տվեց: Տաք հեղուկը թափվեց, և սկուտեղը զնգոցով ընկավ աստիճանների վրա: Հետո ամեն բան խառնվեց: Ես հետ էի տալիս կտորած ճենապակու բեկորների վրա: Մադելինը կրկնում էր՝ Աստված իմ, Աստված իմ, իսկ մայրս գոռալով վազում էր վերև:

— Ինչ է պատահել: Ինչ ես արել, Մարկոս:

Մայրս զգուշացրել էր ինձ, որ շունը կծել է Թալիալին, և նա սպի ունի: Շունը չէր կծել Թալիալին, նա կրծելով *կերել էր* Թալիալի

դեմքը: Եվ հայելում տեսածիս համար «սպին» ճիշտ բնորոշում չէր:

Հիշում եմ, թե ինչպես մայրս բռնեց ուսերիցս և դուրս հրեց ինձ՝ անվերջ կրկնելով:

— Ինչ է եղել: Ինչ է պատահել քեզ:

Հետո հիշում եմ, որ մայրս նայեց իմ գլխի վրայով, և հայացքը սառեց: Չարտասանած բառերը մնացին մորս բերանում, և դեմքը սպիտակեց: Մայրս բաց թողեց ուսերս: Ես ականատես եղա մի արտասովոր իրադարձության: Ավելի հավանական էր թագավոր Կոնստանտինի հայտնվելը մի խեղկատակի հանդերձանքով, քան այն, ինչ ես տեսա. մի հատիկ արցունք գլորվեց մորս աջ աչքի անկյունից:



— Եվ ինչպիսի՞ կին էր նա,— հարցրեց մայրս:

— Ո՞վ:

— Ո՞վ, այդ ֆրանսուհին: Քո նախկին տանտիրոջ զարմուհին՝ պրոֆեսորը:

Ես լսափողը տեղափոխեցի մյուս ականջիս: Ինձ զարմացրեց, որ նա հիշում է դա: Ողջ կյանքս զգացողություն եմ ունեցել, որ մորս ուղղված իմ բոլոր խոսքերը գոյորշանում են օդում և տեղ չեն հասնում, և կարծես մեր միջև հաղորդակցության բացակայություն լիներ: Երբեմն, երբ զանգում էի նրան Քաբուլից, այնպիսի տպավորություն էր ստեղծվում, որ նա կամացուկ իջեցրել է լսափողը, և ձայնս, մայրցամաքների միջով անցնելով, ընկնում է դատարկության մեջ, թեպետ զգացվում էր մորս ներկայությունը, և ես լսում էի նրա շունչը: Երբեմն էլ, երբ պատմում էի հիվանդանոցում եղած դեպքերի մասին, ասենք՝ արյունաշաղախ որդուն հիվանդանոց բերած հոր մասին (տղայի այտերի մեջ խրվել էին արկի բեկորները, ականջն էլ լրիվ կտրվել էր. սխալ պահին սխալ տեղում խաղալու հերթական գոհը), հանկարծ խոսելու պահին, առանց որևէ զգուշացման, մի բարձր դմփոց էր լսվում և մորս հանկարծակի հեռացած ու խուլ ձայնը, որ բարձրանում էր և իջնում, և ոտնաձայներ, որ ինչ-որ բան էին քարշ տալիս հատակով. ես լսում էի, սպասում, մինչև նա նորից վերցնում էր լսափողը և շնչակտուր բացատրում.

— Ես նրան ասացի, որ կարող եմ ոտքի վրա մնալ: Պարզ ասա-

ցի նրան. «Թալիս, ես ուզում եմ կանգնել պատուհանի մոտ և միաժամանակ նայել ջրին ու խոսել Մարկոսի հետ»: Իսկ նա ինձ ասում է. «Դու ուժասպառ կլինես, Օդի, պիտի նստած մնաս»: Հետո լսեցի, թե ինչպես է Թալիսն քարշ տալիս կաշվե մեծ բազկաթոռը, այն, որ գնել էր ինձ համար ծնունդը, քարշ է տալիս այն պատուհանի մոտ: Տեր իմ, ինչ ուժեղ է նա: Իհարկե, Մարկոս, դու այդ բազկաթոռը չես տեսել:

Նա կեղծ հոգնատանջությամբ մի հոգոց էր հանում և խնդրում, որ ես շարունակեմ պատմությունս: Բայց այդ պահին ես կորցնում էի հավասարակշռությունս: Արդյունքում ստացվում էր, որ մայրս անուղղակի կշտամբեց ինձ՝ հասկացնելով, որ ես իմ չբարձրաձայնած մեղքերի համար արժանի հատուցում եմ ստանալու: Ի դեպ, այդ մեղքերի մասին նա ինձ երբեք ուղղակիորեն ոչինչ չէր ասում: Եվ այդ հանգամանքներում, եթե ես անգամ շարունակեի պատմել ընդհատված պատմությունս, իմ աչքում դրա կարևորությունը արդեն նվազում էր: Այն չէր կարող համեմատվել մորս և Թալիսայի բազկաթոռային ողբերգության հետ:

— Անունն ինչ էր այդ կնոջ,— հարցրեց մայրս,— Փարի էր կամ դրա նման մի բան, չէ՞:

Ես պատմել էի մորս Նաբիի մասին, որ իմ մտերիմ ընկերն էր, բայց մայրս միայն ընդհանուր տեղեկություն ուներ այդ մարդու մասին: Գիտեր, որ Նաբին կտակել էր իր տունը իր զարմուհի Փարիին, որն ապրում էր Ֆրանսիայում: Բայց ես մորս ոչինչ չէի պատմել Նիլա Վահդատիի մասին, ամուսնու կաթվածից հետո Փարիզ նրա փախուստի մասին: Չէի ասել նաև, որ տարիներ շարունակ Նաբին միայնակ խնամել է Սուլեյմանին: Այդ պատմությունը: Բազում հատվող զուգահեռները: Երբ կարծես մեկը բարձրաձայն կարդում է սեփական դատավճիռը:

— Այո, Փարի,— ասացի ես:— Լավ կին էր և գիտնականին ոչ բնորոշ ջերմությամբ ընդունեց ինձ:

— Իսկ ինչ գիտնական է, քիմիկոս:

— Մաթեմատիկոս,— ասացի ես՝ իջեցնելով համակարգչի կափարիչը:

Թեթև ծյուն էր մաղում, փոքր փաթիլները մթության մեջ օդում

պտտվում, հանգչում էին պատուհանին ապակուն:

Ես մորս պատմեցի Փարի Վահդատիի այցելության մասին: Դա անցյալ ամռանն էր: Իրապես շատ անուշիկ կին էր: Նուրբ, նիհարիկ, սպիտակ մազերով, երկար վզով, որի աջ ու ձախ կողմից երևում էին կապույտ երակները, ջերմ ու ցանցառատամ ժպիտով: Նա ավելի փխրուն էր երևում և տարիքից ավելի մեծ: Ռևմատիկ ծանր հիվանդություն ուներ: Դեռ կարողանում էր շարժել հանգուցապատ ձեռքերը, բայց մի օր դա էլ չէր կարողանալու: Փարին գիտեր, որ այդ մի օրը գալու է: Ես մտածեցի մորս և նրան սպասվող օրերի մասին:

Փարի Վահդատին հետս մի շաբաթ մնաց Քարուլի տանը: Փարիզից ժամանելուց հետո ես Փարիին տարա քաղաքով շրջելու: Վերջին անգամ նա այդ տունը տեսել էր 1955-ին, ինքն էլ ապշած էր, թե ինչպիսի պայծառությամբ է հիշում այդ տեղը, հիմնական կառույցը՝ հյուրասենյակը և ճաշասենյակը բաժանող երկու աստիճանները:

— Այստեղ, — ասաց Փարին, — ես նստում էի միջօրեի արևի ճառագայթների տակ և կարդում գրքերս:

Փարին նաև զարմացած էր, թե որքան փոքր էր երևում տունը իր հիշողությունների համեմատությամբ: Ես տարա Փարիին վերև, և նա անմիջապես ճանաչեց իր ննջարանը, թեպետ այնտեղ այժմ բնակվում էր իմ գերմանացի գործընկերը, որ աշխատում էր Մնդի համաշխարհային ծրագրի համար: Կնոջ շունչը կտրվեց, երբ նա անկյունում նկատեց փոքր պահարանը, որն իր մանկությունից մնացած հուշերից մեկն էր: Նա պտտվեց և մատն անցկացրեց պլոկված դեղին ներկերի և հետզհետե խամրող ընծուղուների ու կապիկների պատկերների վրայով: Նա նայեց ինձ, աչքերը մշուշվել էին արցունքից, և ամոթխած ու ներողություն հայցող ձայնով թույլտվություն խնդրեց այդ պահարանը Փարիզ տանել և առաջարկեց հատուցել դրա համար: Դա միակ բանն էր, որ նա ուզում էր այդ տնից: Ես ասացի, որ սիրով կկատարեմ նրա խնդրանքը:

Փարի Վահդատին պահարանից բացի Փարիզ տարավ լրկ Սուլեյման Վահդատիի նկարչական ալբոմը, Նաբիի նամակը և Նիլայի բանաստեղծություններից մի քանիսը, որ Նաբին պահպանել

էր: Իր այցելության ամբողջ ընթացքում Փարին ինձ ընդամենը մի բան խնդրեց: Ուզում էր, որ տանեն իրեն Շաղբաղ, ուր նա ծնվել էր: Այնտեղ նա հույս ուներ գտնելու իր խորթ եղբայր Իքբալին:

— Կարծում եմ, Փարին կվաճառի տունը,— ասաց մայրս:— Չէ որ այն հիմա իր սեփականությունն է:

— Փարին ասաց, որ կարող եմ մնալ որքան ուզեմ,— պատասխանեցի ես:— Եվ բոլորովին անվճար:

Առանց տեսնելու էլ պատկերացրի, որ մորս շրթունքները թերահավատորեն ձգվեցին: Մայրս իրական կղզու բնակիչ է և ցամաքում ապրող բոլոր մարդկանց մղումները կասկածի տակ է դնում և բարի կամքի բոլոր բացահայտ դրսևորումներին չի հավատում:

Դա այն պատճառներից մեկն էր, որ նույնիսկ երեխա ժամանակ ես նվազագույն հնարավորության դեպքում պատրաստ էի հեռանալու այդ կղզուց, որովհետև նման խոսակցություններ լսելիս հուսահատվում էի:

— Աղավաատունդ ինչպե՞ս է,— ասացի թեման փոխելու համար:

— Թող այդպես մնա: Հոգնել եմ դրանից:

Մորս ախտորոշում տվեցին վեց ամիս առաջ Աթենքում: Ես պնդեցի, որ գնան ու խորհրդակցեն Նյարդաբանի հետ, երբ Թալիան պատմեց ինձ, որ մայրս անընդհատ ջղաձգվում և ամեն ինչ ձեռքից գցում էր: Թալիան տարավ նրան Նյարդաբանի մոտ, և այդ այցից հետո մայրս ընկավ գործունեության ջղաձիգ շրջապտույտի մեջ: Ես դրա մասին իմանում էի Թալիայի էլեկտրոնային նամակներից: Նա վերանորոգում էր տունը, ամրացնում ծորակները, համոզում Թալիային, որ վերևում նոր պահարան կառուցեն: Նույնիսկ փորձում էր փոխել տանիքի ճաքած կղմինդրները, բայց բարեբախտաբար այս դեպքում Թալիան արգելեց նրան: Հիմա էլ աղավաատունը: Պատկերացնում եմ մորս, որ, թևերը քշտած, մուրճը ձեռքին, քրտինքի հետքերը մեջքին, մեխում և հարմարեցնում է տախտակները: Եվ այդպես պայքարում է իր մարող նեյրոնների դեմ՝ քամելով նրանց մինչև վերջին պահը, քանի դեռ ժամանակը թույլ է տալիս:

— Տուն էրբ ես գալու,— հարցրեց մայրս:

— Շուտով,— պատասխանեցի ես: Այդ հարցին երկու տարի առաջ ես պատասխանել էի նույն ձևով: Վերջին անգամ ես գնացել

Էի Թինոս երկու տարի առաջ:

Կարճ դադարից հետո մայրս ասաց.

— Շատ երկար մի սպասեցրու: Ուզում եմ տեսնել քեզ, նախքան ինձ կոնեն երկաթե տուփի մեջ,— ու ծիծաղեց: Այդ կատակներն ու ինքնաձաղորանքը ճակատագրի հարվածներին մորս արձագանքն էին, որ բացառում էին ինքնախղճահարության որևէ դրսևորում: Այն հակասական և միևնույն ժամանակ հաշվարկված ազդեցություն ուներ դժբախտությունից խուսափելու և միաժամանակ այն ահագնացնելու համար:

— Արի՛ Ծննդյան տոներին,— ասաց նա:— Ամեն դեպքում արի՛ մինչև հունվարի չորսը: Թալիան ասում է՝ այդ օրը Հունաստանում արևի խավարում է լինելու: Համացանցում է կարդացել: Արի՛, որ մի-ասին նայենք:

— Կփորձեմ, մամմ,— ասացի ես:



Կարծես առավոտյան վեր ես կենում ու տեսնում, որ տունդ սողոսկել է մի վայրի կենդանի: Տան մեջ ապահով անկյուն չէր մնացել: Նա ծիկրակում էր ամեն անկյունից, գաղտագողի մոտենում, սողոսկում ամենուր

և միշտ թաշկինակով սրբում էր այտը՝ փորձելով սրբել բերանից թափվող թուփը: Մեր տան փոքր չափերի պատճառով նրանից փախչելն անհնարին էր: Հատկապես սարսափելի էր ճաշի ժամը, երբ Թալիան, դիմակը բարձրացնելով, փորձում էր գդալով ուտելիք լցնել բերանը: Այդ տեսարանից և դրան ուղեկցող ձայներից ստամոքսս տակնուվրա էր լինում: Նա ուտում էր աղմուկով, և կիսաձամված ուտելիքի կտորները չլմփալով ընկնում էին նրա ափսեի մեջ՝ սեղանի վրա, երբեմն էլ՝ հատակին: Եվ սվսվացնում էր, և գլգլացնում ձողիկով արգանակ ուտելիս, դիմակը միշտ կեղտոտվում էր, և հեղուկը կաթում էր կզակով ու վզի վրայով: Ես մի անգամ խնդրեցի, որ սեղան չնստեմ, բայց մայրս ինձ ասասեց կոշտ հայացքով: Եվ փախցնում էի հայացքս, բթացնում լսողությունս, թեպետ դա հեշտ չէր: Անգամ երբ մտնում էի խոհանոց, դարձյալ տեսնում էի նրան այնտեղ. կամացուկ նստած էր անկյունում, և Մադելինը մաշկի բորբոքման դեմ քսուք էր քսում նրա այտին: Մտ-

քումս մի օրացոյց էի պահել, որի վրա ջնջում էի օրերը: Մայրս ասել էր, որ Մադելինն ու Թալիան չորս շաբաթ մնալու են մեզ հետ:

Շատ կուզենայի, որ Մադելինը մենակ գար: Ինձ նա շատ էր դուր գալիս: Չորսով նստում էինք քառանկյուն բակում՝ մուտքի դռան առջև, նա սուրճ էր խմում, մեկը մյուսի հետևից սիգարետ էր վառում: Նրա դեմքի հրեշտակային գեղեցկության վրա ընկնում էր մեր ձիթենու ստվերը, ոսկեգույն ծղոտե գլխարկը ծիծաղելի կերևար յուրաքանչյուրի վրա, ասենք՝ մայրիկի, բայց ոչ երբեք Մադելինի: Մադելինն այն մարդկանցից էր, ում նրբառճությունը տրվում էր առանց ճիգի, որպես նախածին պարգև: Մադելինի ներկայությամբ խոսակցությունը երբեք չէր մարում: Մի առավոտ նա պատմեց Անկարա կատարած իր ճանապարհորդության մասին, որտեղ նա թափառում էր Էնգուրի Սու գետի ափերով և խմում ռակիի հետ խառնած կանաչ թեյ: Մի անգամ էլ Մադելինն ու պարոն Գիանակոսը ճանապարհորդության էին գնացել Քենիա և փշոտ ակացիաների մեջ, ուղտերի մեջքին նստած, անցել էին ջունգլիներով և տեղացիների հետ ճաշակել հնդկացորենի շիլա և կոկոսի բրինձ:

Մադելինի պատմություններն իմ մեջ արթնացրին իմ հին անհանգստությունը, խիզախորեն ու առանց վարանելու մեծ աշխարհի մեջ ընկղմվելու իմ մշտական ցանկությունը: Դրանց համեմատ՝ իմ կյանքը Թինոսում ինձ թվում էր սարսափելի ձանձրալի: Ես արդեն պատկերացնում էի կյանքիս անիմաստ ընթացքը մանկության իմ տարիների պես, որ Թինոսում անցնում էին միայնության մեջ, շեղված և ձևական գոյության զգացողությամբ, կարծես իմ իրական ետը բնակվում էր մի այլ տեղ և սպասում էր իմ այս երկրորդ՝ աղոտ ու անորոշ կեսի հետ վերամիավորվելուն: Ես ինձ օտարի պես էի զգում: Վտարանդի՝ սեփական տանը:

Մադելինը պատմեց, որ Անկարայում գնացել է Քուղուլու զբոսայգի՝ հիանալու ջրի վրա սահող կարապներով: Ասաց, որ ջուրը հոյակապ էր:

- Շատ ոգևորվեցի, — նկատեց Մադելինը ծիծաղելով:
- Ո՛հ, ի՞նչ ես ասում, — ասաց մայրս:
- Հին սովորություն: Շատ եմ խոսում: Միշտ այդպես է եղել: Հիշո՞ւմ ես, Օդի՛, թե ինչքան էի խանգարում դասի ժամանակ շաղակ-

րատելով: Իսկ դու միշտ անթերի ես եղել, Օդի՛, պատասխանատու և աշխատասեր:

— Քո պատմությունները շատ հետաքրքիր են: Կյանքդ հետաքրքիր է եղել:

Մադելինը աչքերը ոլորեց.

— Դե դու լավ գիտես չինական այդ անեծքը:

Մայրս դիմեց Թալիային.

— Իսկ քեզ դուր եկավ Աֆրիկան:

Թալիան թաշկինակը հպեց այտին և ոչինչ չասաց: Ես ուրախ էի դրա համար, որովհետև նա շատ տարօրինակ էր խոսում: Չլմփոց, սվսվոց և բլթբլթոց էր լսվում միաժամանակ, երբ նա խոսում էր:

— Օ՛հ, Թալիան չի սիրում ճանապարհորդել,— ասաց Մադելինը՝ ճմռթելով իր սիգարետը: Նա արտասանեց այդ խոսքերն իբրև անհերքելի ճշմարտություն: Նույնիսկ չնայեց Թալիային հավաստիացում կամ ժխտում ստանալու ակնկալիքով:— Թալիան ճանապարհորդելու ցանկություն չունի:

— Ես էլ չունեմ,— ասաց մայրս Թալիային:— Սիրում եմ տանը մնալ: Ոչ մի հիմնավոր պատճառ չեմ տեսնում Թինոսից հեռանալու:

— Իսկ ես մնալու պատճառ չեմ տեսնում: Երևի միակ պատճառը դու ես, Օդի՛, — և Մադելինը մատները հպեց մորս դաստակին:— Երբ հեռացա, գիտե՛ս՝ որն էր իմ ամենամեծ վախը, ամենատանջալից մտահոգությունս: Ես մտածում էի, թե ինչպես եմ ապրելու առանց քեզ, Օդի՛, և այդ մտքից ներսս քարանում էր:

— Բայց դա քեզ վատ չհաջողվեց,— դանդաղ արտաբերեց մայրս՝ հայացքը հեռացնելով Թալիայից:

— Դու չես հասկանա,— ասաց Մադելինը, և ես հասկացա, որ նրա խոսքն ինձ է ուղղված, քանի որ նա նայում էր իմ ուղղությամբ:

— Ես չէի կարող ապրել առանց մայրիկիդ օգնության: Նա փրկեց ինձ:

— Ա՛յ, *հիմա* իսկապես ոգևորվեցիր,— ասաց մայրս:

Թալիան գլուխը հետ գցած, կկոցած աչքերով նայում էր երկնքով անցնող օդանավին, որն իր ուղին գծանշում էր երկար սպիտակ գլորշու հետքով:

— Օդին ինձ փրկեց սեփական հորիցս,— ասաց Մադելինը, և

այս անգամ ես չհասկացա, թե ում է դիմում:— Հայրս ի ծնե ստոր մի արարած էր՝ դուրս պրծած աչքերով և վզակոթի վրա սև խալերով: Եվ, իհարկե, բռունցքներ ուներ: Առյուսի պես ծանր բռունցքներ: Երբ նա գալիս էր տուն, կարող էր ոչինչ չասել, բավական էր՝ լավեին նրա ծանր կոշիկների ձայնը միջանցքում, բանալիների զնգոցը: Երբ նա կատաղում էր, փնչացնում էր, աչքերը պինդ փակում, կարծես մոտորում էր, հետո դեմքը տրորելով ասում էր՝ դե լավ, աղջիկ ջան, դե լավ, և այդ ժամանակ ես գիտեի, որ փոթորիկը մոտենում է, և ոչինչ չի կարող կանգնեցնել այն: Ոչինչ չի կարող օգնել: Բավական էր, որ տեսնեի, թե ինչպես է նա տրորում դեմքը կամ փնչացնում բեղերի մեջ, և աշխարհը մթնում էր աչքերիս առաջ:

Ես հանդիպել եմ հորս նման տղամարդկանց: Կուզենայի ասել, որ չեմ հանդիպել, բայց... Եվ հասկացել եմ, որ եթե մի քիչ խորանաս, կտեսնես, որ բոլորն էլ իրար նման են՝ ուզես թե չուզես: Ոմանք միգուցե ավելի հղկված են, ավելի քաղաքավարի: Մի փոքր հմայք ունեն, երբեմն շատ հմայիչ են, և դա կարող է քեզ հիմարացնել: Բայց իրականում բոլորն էլ դժբախտ են կատաղության մեջ տապակվող փոքր տղաների պես: Նրանք իրենց խաբված են զգում, որովհետև չեն ստացել իրենց հասանելիքը: Նրանց ոչ ոք չի սիրել այնպես, ինչպես իրենք կուզեին: Եվ նրանք այդ սերն ակնկալում են քեզ-նից, ուզում են, որ դու գրկես, շոյես, հուսադրես: Բայց չի կարելի նրանց տալ այդ սերը, որովհետև նրանք դա չեն կարող ընդունել: Չեն կարող ընդունել այն, ինչ բոլորից շատ են ուզում ստանալ: Ի վերջո նրանք սկսում են ատել քեզ: Եվ դա երբեք չի ավարտվում, քանի որ նույնիսկ կարգին ատելության նրանք ընդունակ չեն: Դա ավարտվում է ներողություններով, թշվառությամբ, խոստումներով, մերժումներով և մշտական սարսափով: Իմ առաջին ամուսինն այդպիսին էր:

Ես ապշած էի: Իմ ներկայությամբ ոչ ոք երբեք նման բաներ չէր ասել, մանավանդ մայրս: Ոչ մեկն իմ ճանաչած կանանցից այդպիսի ինքնախոստովանություն չէր արել: Ես շփոթված էի, բայց նաև հիացած էի Մադեյիսի անկեղծությամբ:

Երբ նա հիշատակեց առաջին ամուսնուն, ամպ իջավ դեմքին իբրև մի մթին տանջալից հիշողություն, ցավագին մի բռնկում, որ

հակասում էր նրան բնորոշ կենսուրախությանը, կատակասիրությանը և նույնիսկ դեղին ծաղկավոր զգեստի պայծառությանը: Այդ ժամանակ ես մտածեցի, որ նա լավ դերասանուհի է, քանզի կարողանում է իր ցավն ու հուսահատությունը թաքցնել կեղծ ուրախության քողի տակ: «Դա իր դիմակն է», — մտածեցի ես և շատ հիացա սեփական համեմատության ճարպկությամբ:

Ի դեպ, երբ հասուն տարիքում վերհիշեցի այդ խոսակցությունը, ամեն բան այդքան պարզ ու հասկանալի չէր թվում: Ինչ—որ արհեստական բան կար առաջին ամուսնու մասին Մադելինի խոսելու ձևի մեջ, նրա խոնարհած հայացքը, սեղմված կոկորդը և շուրթերի դողը նույնն էին, ինչ նրա ժայթքող կենսասիրությունը, կատակասիրությունն ու թանձր հմայքը: Նույնիսկ նրա արհամարհական վերաբերմունքը մեղմորեն հակակշռվում էր աչքով անելով և ծիծաղով: Միգուցե Մադելինի պահելաձևը բոլոր դեպքերում թատերական էր. սահմանագիծը իրականի և բեմականի միջև շատ աղոտ էր, այդտեղից ես եզրակացրի, որ նա իրապես հետաքրքիր դերասանուհի էր:

— Հիշո՞ւմ ես՝ քանի անգամ եմ վազելով եկել քո տուն, Օդի՛, — հիմա նա դարձյալ ժպտում էր և ուրախություն էր ճառագում: — Խեղճ քո ծնողներ: Բայց այդ տունն իմ ապաստանն էր, իմ ապավենը: Մի փոքր կղզյակ՝ մեծ կղզու վրա:

Մայրս ասաց.

— Դու միշտ մեր տանը տեղ ունեիր:

— Բո մայրը վերջ տվեց այդ ծեծուջարդին, Մարկոս: Նա քեզ պատմե՞լ է այդ մասին:

— Ո՛չ:

— Դա ինձ չի զարմացնում: Շատ բնորոշ է Օդելիա Վարվարիսին:

Մայրս գոգնոցի ծայրը ոլրում էր ու կրկին բացում դեմքի երազկոտ արտահայտությամբ:

— Մի գիշեր ես եկա այստեղ, բերանիցս արյուն էր հոսում, քունքիցս մի մազափունջ էր պոկված, իսկ ականջս դեռ գրնգում էր ուժեղ հարվածից: Ինչ վիճակում էի, ինչ ահավոր վիճակում:

Մադելինն այնպես էր պատմում այս պատմությունը, կարծես նկարագրում էր մի ճոխ սեղան կամ լավ գրական երկ:

— Մայրդ ինձ ոչ մի հարց չտվեց, որովհետև ամեն բան գիտեր, իհարկե գիտեր: Նա ուղղակի երկար ժամանակ նայում էր ինձ: Իսկ ես կանգնած էի ու դողում էի ամբողջ մարմնով: Իսկ հետո նա ասաց, ես հիշում եմ մորդ խոսքերը, Օդի, դու ասացիր. «Վերջ, արդեն բավական է, մենք պետք է խոսենք քո հոր հետ, Մադդի»: Ես սկսեցի աղաչել. վախենում էի, որ հայրս կսպանի երկուսիս էլ: Բայց դու հո գիտես քո մորը, գիտես՝ ինչպիսին նա կարող է լինել:

Ես ասացի, որ գիտեմ, և մայրս կողքանց մի հայացք նետեց ինձ վրա:

— Օդին չէր ուզում ինձ լսել: Նա այնպիսի տեսք ուներ, Մարկոս, դու գիտես, թե ինչ տեսք նա կարող է ունենալ:

— Նա դուրս եկավ, բայց դուրս գալուց առաջ վերցրեց իր հոր հրացանը: Մենք քայլում էինք մեր տան ուղղությամբ, և ես ջանում էի համոզել Օդիին՝ ասելով, որ հայրս ինձ շատ վնաս չի տվել: Բայց մայրդ ինձ չէր լսում: Մենք մոտեցանք մուտքին, դռների մեջ կանգնած էր հայրս: Այդ ժամանակ Օդին բարձրացրեց հրացանը, փողն ուղղեց հորս կզակին ու ասաց. «Եթե դու նորից այդպես վարվես, ես հետ կգամ և կկրակեմ ուղիղ դեմքիդ»:

Հայրս թարթեց աչքերը, լեզուն կապ ընկավ: Ի զորու չէր մի բառ անգամ արտասանելու: Իսկ գիտե՞ս որն է ամենահետաքրքիր պահը: Ես ներքև նայեցի և տեսա մի թաց շրջանակ, դե, ինձ թվում է՝ դու հասկանում ես, մի շրջանակ՝ հորս մերկ ոտքերի տակ, որը դանդաղ ընդարձակվում էր:

Մադելինը մազերը հետ սանրեց և ծիծաղկոտ ժպիտով ասաց.

— Ա՛հ, սիրելիս, սա ճշմարիտ պատմությունն է:

Մադելինը կարող էր նաև չասել դա: Գիտեի, որ ճիշտ է: Ես լավ գիտեի մորս ուղղամիտ և կատաղի նվիրվածությունը, նրա անխախտ վճռականությունը: Նա ուզում էր լինել անարդարության դատավոր, մոլորված հոտի հովիվ: Եվ նաև հասկացա, որ դա ճշմարիտ պատմություն էր, որովհետև մայրս մի խեղդված ձայն արձակեց, փակ բերանով, երբ Մադելինը եզրափակում էր իր պատմությունը: Մի րոպե շատ դուր չեկավ: Նա արգահատելի էր համարում այդ տեսարանը, բայց պատճառը միայն դա չէր: Իր կարծիքով բոլոր մարդիկ, որքան քստմնելի լինեն կենդանի ժամանակ, մահից

հետո արժանի են հարգանքի: Մանավանդ ընտանիքի անդամները:

— Մայրս շարժվեց իր տեղում և հարցրեց.

— Իսկ եթե ճանապարհորդել չես սիրում, Թալիա՛, ապա ինչ ես դու սիրում:

Բոլորս մեր հայացքները դարձրինք Թալիային: Մենք նստած էինք ետնաբակում, և արևի ցուլքերը կղզյակներով ցրվում էին մեր շուրջը: Մադելինը երկար էր խոսել, և ես մտածեցի, որ նա, սովորության համաձայն, այնքան է կլանել մեր ուշադրությունը, ներքաշել մեզ իր հմայքի հորձանուտը, որ մենք մոռացել էինք Թալիայի մասին: Չեմ բացառում, որ մայր ու աղջիկ այդպիսի ոճ էին որդեգրել անհրաժեշտությունից դրդված: Աղջիկը պարզապես չէր երևում մոր ուշադրություն գրավող, եսակենտրոն պահվածքի պատճառով, բայց այս դեպքում Մադելինի եսակենտրոնությունը բարության և մայրական գթասրտության նշան էր:

Թալիան ինչ—որ բան մոթմոթաց:

— Մի քիչ ավելի բարձր, սիրելիս,— ասաց Մադելինը:

Թալիան հազալով մաքրեց կոկորդը և երգելով արտաբերեց.

— Գիտությունը:

Ես տեսա առաջին անգամ նրա աչքերի գույնը, աչքերը կանաչ էին, չխուզած հանդի կանաչի պես: Մազերը մուգ էին, իսկ մաշկը իր մոր մաշկի պես անթերի էր: Ես մտածեցի, որ երևի ժամանակին Թալիան գեղեցկուհի է եղել Մադելինի պես:

— Պատմիր արևային ժամացույցի մասին, սիրելիս,— խնդրեց Մադելինը:

Թալիան ուսերը թոթվեց:

— Արևի ժամացույց է սարքել: Մեր ետնաբակում, անցյալ ամռանը: Ոչ ոք նրան չի օգնել: Անդրեասը չի օգնել, դե ես էլ հաստատ չէի կարող օգնել,— խնդմնդաց նա:

— Հասարակածային ժամացույց էր, թե՛ զուգահեռական,— հարցրեց մայրիկը:

Թալիայի աչքերի մեջ ծփաց զարմանքը: Նա մի պահ քարացավ: Այդպես մարդ, քայլելով օտար քաղաքի մարդաշատ փողոցներով, ականջի պոչով որսում է իր մայրենի լեզվով ասված բառեր:

— Հորիզոնական էր,— պատասխանեց Թալիան իր տարօրի-

Նակ խոնավ ձայնով:

— Ի՞նչ ես օգտագործել սովերարձակի փոխարեն:

Թալիան աչքերը հառեց մորս վրա.

— Բացիկ էի կտրատել:

Ես տեսա, որ մայրս ու Թալիան հասկացան իրար:

— Երբ փոքր էր, խաղալիքները մասերի էր բաժանում,— ասաց Մադելինը:— Շատ էր սիրում մեխանիկական խաղալիքներ՝ բարդ ներքին կառուցվածքով: Թալիան դրանցով չէր խաղում, այդպես չէ՛, սիրելիս, ո՛չ, նա կոտրում էր այդ թանկարժեք խաղալիքները, մասնատում էր դրանք, հենց ձեռքն էինք տալիս: Ես այնքան էի բարկանում, բայց Անդրեասը, չեմ ուզում ուրանալ, ասաց, որ երեխան պիտի զբաղվի, որ դա պրպտող մտքի նշան է:

— Եթե ուզենաս, Թալիան, մենք կարող ենք մի արևային ժամացույց այստեղ սարքել,— ասաց մայրս:

— Բայց ես արդեն գիտեմ՝ ո՞նց են դա անում:

— Քեզ լավ պահիր, սիրելիս,— ասաց Մադելինը՝ ձգելով ոտքը, ասես պարային վարժություն էր անում:— Մորաքույր Օդին ուզում է քեզ օգնել:

— Դե, ուրեմն, մի ուրիշ բան: Մի ուրիշ բան կարող ենք սարքել:

— Օ՛հ, օ՛հ,— ասաց Մադելինը ծուխը արագ ներս քաշելով,— ո՞նց էի մոռացել քեզ պատմել, Օդի: Քեզ բան ունեմ ասելու: Գուշակիր:

Մայրս ուները թոթվեց:

— Ես դարձյալ պիտի խաղամ կինոյում: Ինձ գլխավոր դեր են առաջարկել լայնամետրաժ ֆիլմում: Պատկերացնո՞ւմ ես:

— Շնորհավորում եմ,— անտարբեր ասաց մայրս:

— Սցենարն ինձ մոտ է: Ուզում եմ, որ կարդաս այն, բայց վախենում եմ, որ դուրդ չգա: Ասեմ քեզ, որ դա ինձ շատ կվշտացնի: Չեմ դիմանա, եթե չհավանես: Նկարահանումներն աշնանն են սկսվում:



Հաջորդ օրը՝ նախաճաշից հետո, մայրս ինձ մի կողմ քաշեց.

— Լավ, ի՞նչ է կատարվում, ի՞նչ է պատահել քեզ:

Ասացի, որ չեմ հասկանում՝ ինչի մասին է խոսքը:

— Լավ էլ հասկանում ես: Հիմար բաներ ես անում, քեզ ոչ սազական:

Նա սովորություն ուներ. աչքերը նեղացնում էր և գլուխն աննկատ օրորում: Մինչև օրս էլ ազդվում եմ այդ շարժումից:

— Չեմ կարող, մայրիկ, ինձ մի ստիպիր:

— Իսկ ինչո՞ւ չես կարող:

Եվ բերանիցս անսպասելիորեն դուրս թռավ.

— Որովհետև նա հրեշ է:

Մորս շրթունքները սեղմվեցին: Նա ինձ նայեց, բայց ոչ զայրույթով, այլ ընկժվածությամբ, կարծես ես քամել էի նրանից բոլոր հյութերը: Այդ հայացքի մեջ դատավճիռ կար: Հրաժարական: Այդպես քանդակագործը մի կողմ է դնում թակն ու հատիչը՝ հասկանալով, որ անմշակ քարը երբեք չի ստանա իր ուզած ձևը:

— Թալիայի հետ սարսափելի բան է պատահել: Փորձիր մեկ անգամ էլ նրան այդպես կոչել: Փորձիր և տես, թե ինչ կլինի:

Մի քիչ ուշ ես ու Թալիան արդեն զբոսնում էինք խճապատ արահետով, որի երկու կողմից բարձրանում էին քարե պատերը: Ես մի քանի քայլ առաջ էի անցնում, որ անցորդները և մանավանդ, Աստված մի արասցե, դպրոցական ընկերներս հանկարծ չմտածեն, թե մենք միասին ենք, թեպետ, իհարկե, բոլորն էլ այդպես կմտածեին: Եվ ես հույս ունեի, որ իմ պահած հեռավորությունը կհասկացնի Թալիային, որ այդ զբոսանքն ինձ համար անցանկալի է ու տհաճ: Հուրախություն ինձ՝ Թալիան չէր էլ փորձում իմ կողքով քայլել: Մենք հանդիպում էինք շուկայից տուն վերադարձող արևահար հոգնած գյուղացիների: Ավանակները բարձած էին չվաճառված մթերքով լի ծղոտե զամբյուղներով: Սմբակները տկտկում էին սալահատակի վրա: Ես ճանաչում էի այդ մարդկանցից շատերին, բայց զլուխս իջեցնում էի և հայացքս փախցնում:

Թալիային լողափ տարա: Դիտմամբ ընտրեցի քարքարոտ մի տեղ, ուր ինքս հաճախ գնում էի՝ իմանալով, որ այն մարդաշատ չէ, ինչպես, ասենք, Ագիոս Ռոմանոսը: Տաբատս վերև քշտած՝ ցատկոտում էի մի ժայռակույտից մյուսը, փնտրում էի այնպիսի քար, որին ալիքները խփվում էին ու տարածվում: Կոշիկներս հանեցի և ոտքերս իջեցրի մի ծանծաղ ավազանի մեջ, որ գոյացել էր քարերի շղթայի մեջ: Խեցգետինը փախավ, երբ ոտքերս իջեցրի ջրի մեջ: Թալիան նստեց ավելի բարձր՝ իմ աջ կողմում:

Երկար ժամանակ լուռ նստած էինք, լսում էինք միայն օվկիանոսի շունչը: Մի սառը քամի սուլում էր ականջներիս մեջ՝ դեմքս ցողելով աղահամ կաթիլներով: Մի ձկնիկ, լողակները լայն տարածած, ճախրում էր կապտականաչ ալիքներից վեր: Երկու կին, շրջազգեստները վեր քշտած, կանգնած էին մինչև ծնկները ջրի մեջ: Մի ձկնկույ, թևերը լայն բացած, ճախրում էր կապտականաչ ջրերի վրայով: Արևմուտքում երևում էր կղզու շարունակությունը, և տների ու ջրաղացների սպիտակ գույնը խառնվում էր գարու արտերի կանաչի և աղբյուրաշատ արտերի դարչնագույնի հետ: Հայրս մահացել էր այդ սարերում: Նա աշխատում էր կանաչ մարմարի հանքում և մի օր սայթաքեց ժայռաբեկորի վրա և ընկավ հարյուր ոտնաչափ բարձրությունից: Մայրս այդ ժամանակ վեց ամսական հղի էր ինձնով: Նա պատմում էր, որ հայրս մոռացել էր ամրացնել իր անվտանգության գոտին:

— Դու պետք է դադարես դա անելուց,— ասաց Թալիան:

Ես գլաքարեր էի շարտում արծնապատ թիթեղյա դույլի մեջ: Թալիան ինձ հանկարծակիի բերեց, և ես վրիպեցի:

— Այսինքն՝ ինչ ես ուզում դրանով ասել:

— Ուզում եմ ասել՝ բավական է կեղծես: Ես էլ ճիշտ քեզ պես չեմ ուզում, որ դու անես այն, ինչ անում ես:

Քամին ծածանում էր Թալիայի մազերը: Նա ձեռքով դիմակը պահել էր: Մտածեցի, որ Թալիան ամեն օր ապրում է այն վախով, որ քամին կարող է պոկել դիմակը դեմքից և ստիպված կլինի վազել դիմակի հետևից՝ ի ցույց դնելով իր արատը: Ես չպատասխանեցի: Փորձեցի էլի քար շարտել և դարձյալ վրիպեցի:

— Դու ավանակի մեկն ես,— ասաց Թալիան:

Նա վեր կացավ, իսկ ես ձևացրի, թե մնում եմ: Հետո ուսիս վրայով հետ նայեցի ու տեսա, որ նա քայլում է լողափով դեպի հիմնական ճանապարհը: Կոշիկներս հագա ու հետևեցի նրան:

Երբ վերադարձանք, մայրս խոհանոցում բամփա էր աղում, իսկ Մադելինը եղունգներն էր ներկում, ծխում էր ու ծուխը թափ էր տալիս թեյի ամանի մեջ: Ես սարսափով նկատեցի, որ դա մորս պապենական ժառանգությունից մնացած ձենապակյա սպասքի ափսեներից էր: Այդ ձենապակյա սպասքը մեր տան միակ արժեքավոր

բանն էր, և մայրս հազվադեպ էր հանում այն պահարանի ամենաբարձր դարակից:

Մադելինը փչում էր եղունգների վրա, մերթընդմերթ ծուխը ներս էր քաշում և ընթացքում խոսում Պատտակոսի, Պապադոպոլոսի և Մակարեզոսի մասին: Այդ երեք գնդապետները Աթենքում երկու տարի առաջ իրականացրել էին զինվորական հեղաշրջում, որը հայտնի էր իբրև «Գեններալների հեղաշրջում»: Ասում էր, որ ճանաչում է մի դրամատուրգի՝ «անչափ սքանչելի» մի մարդու, որին ձերբակալել են կոմունիստներին համակրելու համար:

— Բայց դա անհեթեթ մեղադրանք է: Լրիվ անհեթեթ: Գիտե՞ս՝ դրանք ինչ են անում մարդկանց, որ ստիպեն նրանց խոսել:

Մադելինը խոսում էր շշուկով, կարծես զինվորական ոստիկանությունը թաքնված լիներ մեր տանը:

— Ջրի փողրակ են դնում մարդու հետանցքի մեջ և ջուրը շիթով բաց են թողնում ներս: Դա ճիշտ է, Օդի՛, երդվում եմ: Լաթերը թաթախում են ամենազզվելի բաների մեջ, դե, մարդկային կեղտի, ու խցկում դրանք մարդկանց բերանները:

— Ահավոր է,— ասաց մայրս զուսպ տոնով:

Ինձ թվում էր՝ մայրս արդեն հոգնել էր Մադելինից: Նրա ուռճացված քաղաքական համոզմունքները, ամուսնու հետ հաճախած երեկոյանների շարանը, բանաստեղծները, գիտնականներն ու երաժիշտները, ում հետ չրխկացրել էր շամպայնի բաժակները, և անիմաստ ու անպտուղ ճանապարհորդությունները... Մադելինը այդ ամենի հետ չէր զլանում նաև իր կարծիքն արտահայտել ատոմային սպառնալիքի, գերբնակեցման և միջավայրի աղտոտման վերաբերյալ: Մայրս այդ պատմություններին ներողամտաբար էր վերաբերվում, զգուշավոր ժպիտով, բայց ես վստահ էի, որ Մադելինի արածները մորս դուր չեն գալիս: Երևի նա կարծում էր, որ Մադելինը ցուցամոլություն է անում, և ամաչում էր ընկերուհու փոխարեն:

Դա տանջալից երկվություն էր, որ ստվերում էր մորս բարությունը, նրա անձնազոհությունն ու վճռականությունը, պարտավորվածության զգացումը, պահանջներն ու պատասխանատվությունը, որ նա փաթաթում էր մարդկանց վզին: Մայրս իր բարությունն ու

Նվիրվածությունն օգտագործում էր իբրև պարտադրանք ուրիշների նվիրվածությունն ու հավատարմությունը ստանալու համար: Եվ ես հասկանում եմ, թե ինչու տարիներ առաջ Մադելինը փախավ այդ ամենից. պարանը, որ քեզ հանում է հորձանուտից, հետագայում վերածվում է քեզ խեղդամահ անող հանգուցակապի: Մարդիկ, ներառյալ ես, ի վերջո միշտ հիասթափեցնում էին մորս: Նրանք լավ չէին կատարում իրենց պարտավորությունները և չէին արդարացնում մորս ակնկալիքները: Մայրիկիս մխիթարական պարզևր ձեռքը պարզելու և ռազմավարական բարենպաստ դիրքի բարձունքից դատավճիռ արձակելու մռայլ բավարարվածության մեջ էր, քանի որ նա միշտ խաբված էր լինում:

Դա ինձ տխրեցնում էր, քանզի բացահայտում էր մորս անձարակությունը, նրա անհանգստությունը, մենակության վախը, լքված ու անտեսված լինելու մտատանջությունը: Եվ ինչպիսի մարդ եմ ես, որ իմանալով մորս իրական զգացողությունների մասին՝ մտադրված և անտարբեր մերժում էի նրան՝ նախընտրելով, որ օվկիանոսներն ու ցամաքները բաժանեն մեզ երեսուն տարի շարունակ:

— Այդ *խունտան*³⁶ հումորի զգացում էլ չունի, — ասաց Մադելինը: — Կարելի է այդպես կոտորել մարդկանց: Այն էլ Հունաստանում, որ ժողովրդավարության օրրանն է: Ահա և դուք եկաք: Ինչպե՞ս ժամանակ անցկացրիք: Ի՞նչ էիք անում:

— Խաղում էինք ափին, — պատասխանեց Թալիան:

— Լսվ էր: Լավ զվարճացա՞մք:

— Շատ լավ ժամանակ անցկացրինք:

Մորս աչքերը թերահավատորեն նայեցին մեկ ինձ, մեկ Թալիային: Մադելինը, հակառակը, շողում էր և կամացուկ ծափահարում:

— Հրաշալի է: Հիմա էլ չեմ մտահոգվում, թե ինչպես եք յուրազնում: Ես ու Օդին կարող ենք մի քիչ տնօրինել մեր անձնական ժամանակը: Չէ՞, Օդի: Դեռ այնքան բան պիտի հասցնենք:

Մայրս հաղթական ժպտաց ու ձգվեց, որ վերցնի կաղամբի գլուխը:

³⁶ Խունտա — բռնի ճանապարհով իշխանության եկած խումբ:



Այդ օրվանից ես ու Թալիան սկսեցինք զբաղվել ամեն մեկս մեր գործով: Ենթադրվում էր, որ մենք պետք է ուսումնասիրեինք կղզին, խաղայինք ծովափին և զվարճանայինք մյուս երեխաների պես: Մայրս բուտերբրոդներ էր փաթաթում մեզ համար, և նախաճաշից հետո մենք դուրս էինք գալիս տնից:

Հենց հեռանում էինք մայրերի տեսադաշտից, անմիջապես բաժանվում էինք: Գնում էինք լողափ, ես լողում էի կամ, վերնաշապիկս հանած, պառկում էի ժայռի վրա: Թալիան գնում էր ջրում խեցիներ ու ժայռաբեկորներ հավաքելու, որն այնքան էլ հարմար չէր, որովհետև ալիքները շատ բարձր էին: Մենք անցնում էինք խաղողի այգիների և գարու արտերի միջով ոլորվող արահետներով՝ հետևելով մեր իսկ ստվերներին՝ մտքերի մեջ խորասուզված: Հիմնականում թափառում էինք, որովհետև այդ տարիներին Թինոսի զբոսաշրջությունը զարգացած չէր: Դա ագրարային կղզի էր, և մարդիկ ապրուստ վաստակում էին կով ու ոչխար պահելով, ցորեն և ձիթապտուղ աճեցնելով: Վերջում ձանձրանում էինք և ուտում մեր ճաշը ծառի կամ ջրաղացի ստվերում և ուտելիս նայում էինք կիրճերին, փշոտ թփերին, սարերին և ծովին:

Մի օր քայլելով հասա քաղաք: Մենք ապրում էին կղզու հարավարևմտյան մասում, իսկ Թինոս քաղաքը մի քանի մղոն հեռու էր: Այնտեղ հազար ու մի մանրուքի խանութ կար, որի տերը ծանրադեմ պարոն Ռուսոն էր: Այդ խանութում կարելի էր տեսնել ամեն ինչ՝ 1940 թվականի գրամեքենա, կաշվե աշխատանքային կոշիկներ, հողմացույց, բույսերի համար պատվանդան, հսկայական մոմեր, խաչեր և, իհարկե, Պանագիա Եվանգելիստրիայի սրբապատկերի կրկնօրինակները: Այնտեղ անգամ կապիկի պղնձե արձան կար: Պարոն Ռուսոսը նաև զբաղվում էր սիրողական լուսանկարչությամբ և հատուկ մութ վարագուրված սենյակ ուներ խանութի ետնամասում: Երբ օգոստոսին ուխտավորները գալիս էին կղզի՝ տեսնելու սրբապատկերը, պարոն Ռուսոսը նրանց վաճառում էր լուսանկարչական ժապավեն և նաև երևակում էր նկարները հատուկ վճարով:

Մի ամիս առաջ ես ցուցափեղկում լուսանկարչական ապարատ էի տեսել՝ մաշված ժանգագույն պատյանով: Մի քանի օրը

մեկ գնում էի այդ խանութը, նայում ապարատին և ինձ պատկերացնում էի Հնդկաստանում կաշվե պայուսակը ուսիս գցած, բրնձի դաշտեր և թեյի պլանտացիաներ նկարելիս, որ տեսել էի «Նեյշնլ Զիոգրաֆիկ» ամսագրում: Ես կնկարեի Իսկաների ծանապարհը: Ուղտի մեջքին նստած կամ փոշախեղդ մի բեռնատարի թափքում ես կպայքարեի շոգի դեմ, հետո հասնելով սֆինքսին և բուրգերին՝ կնկարեի դրանք էլ, և նկարներս կիրապարակվեին փայլուն էջերով ամսագրերում: Այդ երազանքներն ինձ բերեցին պարոն Ռուսոսի խանութի ցուցափեղկերի մոտ, և թեպետ այդ օրը կիրակի էր՝ խանութի հանգստյան օրը, ես, գլուխս ցուցափեղկին կպցրած, նայում էի ապարատին ու երազում:

— Ինչ մակնիշի է:

Ես մի պահ ընկրկեցի և տեսա Թալիայի արտացոլանքը ցուցափեղկում: Նա ծախս այտը մաքրում էր թաշկինակով:

— Դե՞մ է քո հավանած լուսանկարչական ապարատը:

Ես ուսերս վեր քաշեցի:

— Ոնց որ «C3 Արգոս» մակնիշի լինի:

— Ինչի՞ց իմացար:

— Դա երեսունհինգ միլիմետրանոց ամենալայն սպառման ապարատն է աշխարհում,— ասաց Թալիան թեթև կշտամբանքով:— Բայց դե այնքան էլ լավը չէ: Տգեղ է ու աղյուսի է նման: Ուրեմն, ուզում ես լուսանկարիչ դառնալ: Դե, երբ մեծանաս: Մայրդ ասաց, որ ուզում ես լուսանկարիչ դառնալ:

Ես շրջվեցի.

— Մաման քեզ այդպես է ասել:

— Հետո՞ ինչ:

Ուսերս թոթվեցի: Ինձ դուր չեկավ, որ մայրիկն այդ խնդիրը քննարկել է Թալիայի հետ: Չգիտեի, թե ինչպես էր ձևակերպել դա: Նա կարող էր իր զինանոցից հանել ծաղրանքի ամենամեծ զենքը, եթե քննարկման առարկան նրան թվում էր թեթևամիտ կամ տարորինակ: Նա կարող էր նսեմացնել քո ակնկալիքները: «Մարկոսը ուզում է շրջել աշխարհով մեկ և տեսախցիկով պատկերել այն»:

Թալիան, մայթին նստած, փորձում էր կիսաշրջագգեստը քաշել ծնկներին: Շոգ էր: Արևն այնպես էր կծում, կարծես իսկական

ատամներ ուներ: Դրսում ոչ ոք չկար, միայն մի ծեր ամուսնական զույգ, որ տնգտնգալով անցնում էր փողոցով: Ամուսինը, որի անունը Դեմիդ էր, մի հաստ գորշ գլխարկ և բրոյա շագանակագույն կոստյում էր հագել, որն այդ ժամանակի համար շատ տաք էր: Դեմիդի աչքերը կլոր էին, դեմքին սառել էր մի անհասկանալի արտահայտություն: Դա ծեր մարդկանց բնորոշ արտահայտություն էր. կարծես նրանք ապշած տարակուսում էին իրենց տարիքի զարհուրելի հետևանքներից: Տարիներ անց ես հասկացա, որ դա կարող էր լինել Պարկինսոնի հիվանդության նշան: Նրանք ինձ ձեռքով արեցին, ես էլ նրանց ձեռքով արեցի ի պատասխան: Ամուսնական զույգը նկատեց նաև Թալիային: Նրանք նայեցին աղջկան ու ակնթարթային դադարից հետո շարժվեցին առաջ:

— Դու լուսանկարչական ապարատ ունես,— հարցրեց Թալիան:

— Ո՛չ:

— Երբևէ լուսանկարել ես:

— Ո՛չ:

— Եվ ուզում ես լուսանկարիչ դառնալ:

— Քեզ դա տարօրինակ է թվում:

— Մի քիչ:

— Դե հիմա, եթե ես ուզենայի ոստիկան լինել, քեզ դա նոյնպես տարօրինակ կթվար: Ասենք, որովհետև ես ոչ մեկին ձեռնաշղթա չեմ հագրել:

Թալիայի աչքերի փափուկ ճառագայթումից ես հասկացա, որ եթե նա կարողանար, հիմա կժպտար:

— Խելացի տիպ ես,— ասաց նա,— քեզ մի փոքր խորհուրդ. մի խոսիր ապարատի մասին մորս ներկայությամբ, թե չէ նա կզնի քեզ համար: Նա սիրում է ուրախացնել մարդկանց: Բայց ես կասկածում եմ, որ Օդելիային դա դուր կգա, կարծում եմ՝ հասկանում ես:

Այս կարճ ժամանակահատվածում Թալիան չափից շատ բան էր ըմբռնել: Դա և՛ տպավորիչ էր, և՛ անհանգստացնող: Միգուցե պատճառը դիմակն էր: Ծպտված արտաքինը նպաստում էր դիտողունակ լինելուն, նայելուն և խորհելուն:

— Եվ մայրդ կստիպի, որ հետ տաս այդ ապարատը:

— Ես հոգոց հանեցի: Թալիան իրավացի էր: Մայրս նման ճոխ

Նվերներ չէր խրախուսւի, մանավանդ նյութական մեծ ծախսեր պահանջող:

Թալիան ոտքի ելավ և թափ տվեց զգեստի փոշին:

— Մի բան հարցնեմ քեզ: Դու տանը որևէ տուփ ունե՞ս:



Մադելինը մորս հետ խոհանոցում գինի էր խմում, իսկ ես ու Թալիան վերևում տուփի վրա փորձարկում էինք սև մարկերները: Տուփը Մադելինինն էր, տուփի մեջ նոր, թղթի մեջ փաթաթված, փափուկ կաշվից կարված կանաչ բարձրակրունկ կոշիկներ էին:

— Մայրդ իսկապէս պատրաստվում էր սրանք կրելու,— հարցրի ես: Ներքևում Մադելինը պատմում էր, որ բեմական արվեստի դասի ժամանակ դասախոսը խնդրեց՝ մի էտյուդ ներկայացնի՝ նմանակելով ժայռաբեկորի վրա ձգված անշարժ մի մողեսի: Եվ Մադելինը ինքն էլ լիաթոք ծիծաղեց իր կատակի վրա:

Մենք երկրորդ անգամ ներկեցինք տուփը, և Թալիան այնտեղ՝ մի շերտ ներկ էլ ավելացնենք, որ բաց տեղ չմնա, քանզի սև շերտը պիտի ունենար անթերի միատարրություն:

— Լուսանկարչական ապարատի աշխատանքի պարզ սկզբունքն է,— ասաց նա,— մի անցք, որ լույսը ներս մտնի, և մի շերտ, որ այդ լույսը կլանի: Ասեղը կտամ:

Ես տվեցի Թալիային մորս կարի ասեղը: Ինքնաշեն լուսանկարչական ապարատի գաղափարն ինձ իրատեսական չէր թվում, միթե կարելի է նման բան պատրաստել կոշիկի տուփի և ասեղի օգնությամբ: Բայց Թալիան այնպիսի հավատով ու ինքնաբերական վստահությամբ էր ձեռնարկել այդ գործը, որ, իմ ողջ թերահավատությամբ հանդերձ, հույս ունեի, որ դա հնարավոր կլինի: Թալիայի դեպքում ես հասկանում էի, որ նա բաներ գիտի, որ ես չգիտեմ:

— Ես որոշ հաշվարկներ եմ կատարել,— ասաց Թալիան՝ զգուշորեն ծակելով տուփը:— Առանց լինգայի հնարավոր չէ տեղադրել անցքը փոքր հատվածի վրա, որովհետև տուփը չափից դուրս երկար է: Բայց, այ, լայնությունն իսկը այն է, ինչ պետք էր: Հիմա այդ տեսախցիկի պատուհանիկը պիտի լինի զրո վեցերորդական միլիմետր ճշգրիտ չափով: Իսկ հիմա մեզ շարժական դռնակ է հարկավոր:

Ներքևում Մադելինը խոսում էր ցածր և լարված ձայնով: Չգիտեի, թե ինչ էր խոսում, բայց ակնհայտ էր, որ խոսում էր ավելի դանդաղ, բառերն ընդգծելով: Պատկերացրի Մադելինին՝ արմունկները ծնկներին, առաջ եկած, աչքերն անթարթ, մորս աչքերին հառած: Տարիներ հետո մոտիկից ճանաչեցի այդ խոսելառճը: Երբ մարդիկ այդպես են խոսում, նրանք բացահայտում, ի ցույց են դնում և խոստովանում են, որ ողբերգություն է կատարվել, և ունկնդիր են փնտրում: Դա պատահում է, երբ ռազմական խմբերը, դռները թակելով զգուշացնում են զոհերի մասին, իրավաբանները, որոնք ներկայացնում են հայցի առանձնահատկություններն իրենց հաճախորդներին, ոստիկանները, որ մեքենան կանգնեցնում են առավոտյան 3-ին, անհավատարիմ ամուսինները, որ խաբում են իրենց կանանց: Քանի անգամ եմ ինքս այդ տոնով խոսել Քարուլի հիվանդանոցներում: Ընտանիքներ եմ կանչել իմ սենյակ, խնդրել եմ, որ նստեն՝ աթոռը մոտ քաշելով, փորձել եմ ի մի բերել ուժերս՝ սարսափելով սպասվելիք խոսակցության հետևանքներից:

— Նա խոսում է Անդրեասի մասին,— հանդարտ ասաց Թալիան:— Կարող եմ գրագ գալ՝ նրանք ուժեղ վիճել են: Ժապավենն ու մկրատը փոխանցիր, խնդրում եմ:

— Ինչպիսի մարդ է Անդրեասը: Դե՛, որ հարուստ է, գիտեմ:

— Ո՞վ, Անդրեասը: Նորմալ մարդ է: Շատ է ճանապարհորդում: Երբ տանն է, միշտ հյուրեր է ունենում, և բոլորն էլ կարևոր մարդիկ են՝ նախարարներ, գեներալներ և այլն: Նրանք բուխարու մոտ խմում են և խոսում հիմնականում բիզնեսի և քաղաքականության մասին: Ես նրանց խոսակցությունը լսում եմ իմ սենյակից: Ես պետք է վերևում լինեմ, երբ Անդրեասի մոտ հյուրեր են լինում: Ինձ չի կարելի ներքև իջնել: Բայց նա ինձ նվերներ է առնում: Ուսուցիչ է վարձել, որ գա տուն: Հետո շատ լավ է վարվում:

Թալիան եռանկյունի ստվարաթղթի կտորը, որը դարձյալ սև գույնի էր, կպցրեց դիտանցքի վրա:

Ներքևում լռություն էր տիրում: Ես մտքումս պատկերացնում էի՝ ինչ է այնտեղ կատարվում. Մադելինը անձայն լալիս է՝ քարացած ձեռքում պտտեցնելով թաշկինակը:

Մայրս այդ լացին հաղորդակից չէր կարող լինել և նայում էր

Մադելինին սառը, ձգված ժպիտով, այնպիսի տեսքով, կարծես թթու բան կար լեզվի տակ դրած: Մայրս չէր սիրում, երբ մարդիկ իր ներկայությամբ լաց էին լինում, և չէր ուզում նկատել նրանց ուռած աչքերն ու աղաչական դեմքերը: Մորս համար այդ ամենը թուլության նշան էր, ուշադրություն գրավելու փորձ, և նա դա չէր կարող հանդուրժել: Չէր կարող ստիպել իրեն և մխիթարել մարդկանց: Հետո մեծանալով ես հասկացա, որ դա նրա ուժեղ բնավորության ապացույցը չէր: Նրա կարծիքով վիշտը պիտի լիներ անձնական ու անխառն: Մի անգամ՝ փոքր տարիքում, հարցրի նրան՝ արդյոք նա լաց է եղել հորս մահվան ժամանակ:

— *Դե, հուղարկավորության ժամանակ, թաղմանը:*

— *Ո՛չ, լաց չեմ եղել:*

— *Ի՞նչ է, դու չէիր տխրել:*

— *Ո՛չ, որովհետև դա ոչ մեկի գործը չէ:*

— *Իսկ եթե ես մահանամ, լաց կլինե՞ս:*

— *Հույս ունենանք, որ ես դա երբեք չեմ իմանա, — ասաց նա:*

Թալիան վերցրեց լուսանկարչական թղթի տուփն ու ասաց.

— Լույսը միացրո՛ւ:

Մենք գնացինք և մտանք մայրիկի պահարանն ու դուռը պինդ փակեցինք և սրբիչներով մթնեցրինք դռան ձեղքերից երևացող լույսը: Անթափանց խավարի մեջ Թալիան ասաց, որ ես միացնեմ լուսարձակը, որ ծածկված էր կարմիր մոմլաթի շերտերով: Աղոտ շողարձակման մեջ երևում էին Թալիայի նրբիկ մատները. նա կտրում էր լուսանկարչական թուղթը՝ ամրացնելով այն կոշիկի տուփի ներսում՝ դիտանցքի դիմաց: Մենք այդ լուսանկարչական թուղթը գնել էինք նախօրոք օրը պարոն Ռուսոսի խանութից: Երբ մտանք խանութ, պարոն Ռուսոսը ակնոցի վերևից նայեց Թալիային և ասաց.

— Արդյո՞ք սա կողոպուտ է:

Թալիան ցուցամատը ծալեց և բթամատով ատրճանակի ձգանը ձգելու մի շարժում արեց:

Թալիան փակեց տուփի կափարիչը և փակող ստվարաթուղթն իջեցրեց դիտանցքի վրա: Մթության մեջ նա ասաց.

— Վաղը դու անելու ես քո առաջին լուսանկարը:

Ես այդպես էլ չիմացա՝ կատակում է նա, թե լուրջ է ասում:



Մենք ընտրեցինք մի լողափ, հարթ ժայռի վրա տեղադրեցինք կոշիկի տուփը և պինդ ամրացրինք այն պարանով: Թալիան ասում էր, որ փականն իջեցնելիս շարժում չպիտի լինի: Մոտեցավ ինձ և նայեց տուփի մեջ, կարծես օրյեկտիվի մեջ:

— Լավ տեղանք է,— ասաց նա:

— Գրեթե կատարյալ, իսկ հիմա պետք է որոշենք՝ ում նկարենք:

Թալիան նայեց ինձ՝ հասկանալով, թե ես ինչ նկատի ունեմ, և ասաց.

— Ո՛չ, ես չեմ նկարվելու:

Մենք ահագին վիճեցինք, և ի վերջո Թալիան համաձայնեց նկարվել՝ պայմանով, որ դեմքը չի երևալու: Նա կոշիկները հանեց, անցավ մի քանի ժայռաբեկորի վրայով՝ ձեռքերը լարախաղացի պես կողմ պարզած: Հետո նստեց Սիրոսին և Կիթնոսին նայող ժայռերից մեկի վրա, արձակեց մազերն այնպես, որ դիմակի կապը չերևա, և ուսի վրայով ինձ նայեց:

— Հիշիր,— գոռաց Թալիան,— հաշվիր մինչև քսանը,— և կրկին շրջվեց մեջքով:

Ես կռացա և սկսեցի նայել տուփի դիտանցքից երևացող Թալիայի մեջքին, նրա շուրջը փռված ժայռաբեկորներին, որոնց մեջ խճճվել էին օձանման ջրիմուռները, փոքր փչովի նավակին, որ նշմարվում էր հեռվում, և ալիքին, որ խփվում էր կարծր ափին ու հետքաշվում: Ես բարձրացրի դիտանցքի դռնակը ու սկսեցի հաշվել.

Մեկ, երկու, երեք, չորս, հինգ...

Մենք պառկած էինք անկողնում: Հեռուստակրանին մրցակցում էին ակորդեոնահարները, բայց Ջիաննան ձայնն իջեցրել էր: Ամառային լույսը շեշտակի թափանցում էր շերտավարագույրների միջով՝ ընկնելով ճաշի համար պատվիրված «Մարգարիտա» պիցցայի մնացորդների վրա գծավոր վանդակի տեսքով: Պիցցան բերել էր մի բարձրահասակ, նիհար մարդ՝ անթերի հետ սանրած մազերով, սպիտակ կոստյումով և սև փողկապով: Նա անվավոր սեղանիկով ուտելիքը ներս հրեց: Սեղանիկին՝ նեղ ծաղկամանի մեջ, մի վարդ էր դրված: Կլոր կափարիչը մեծ հմտությամբ բարձրացրեց՝ ի ցույց դնելով պիցցան՝ ձեռքով մի ալիքանման շարժում անելով,

ինչպես աճաբարը՝ գլխարկից ճագար հանելուց հետո:

Մեր շուրջը՝ ճմռթված սավանների վրա, ցրված էին լուսանկարներ: Ես Ջիաննային ցույց էի տալիս տարվա վերջին ուղևորությունների լուսանկարները՝ Բելֆաստ, Մոնտեվիդեո, Տանժեռ, Մարսել, Լիմա, Թեհրան: Ցույց տվեցի նաև Կոպենհագենում արվածները, որտեղ ես կարճ ժամանակով միացել էի պատառոտված վերնաշապիկներ և կապրիներ հագած դանիացի բիթնիկներին, որոնք ինքնակառավարվող համայնք էին ստեղծել նախկին ռազմաբազայի տարածքում:

— *Իսկ դու որտե՞ղ ես: Դու նկարներում չկան,*— հարցրեց Ջիաննան:

— *Ես ինձ ավելի լավ եմ զգում օբյեկտիվի հակառակ կողմում:*

Եվ դա զուտ ճշմարտություն էր: Ես հարյուրավոր լուսանկարներ եմ արել, բայց ինքս երբեք չեմ նկարվել: Ու միշտ պատվիրում եմ թղթե երկու տուփ, երբ երևակում եմ նկարները: Եվ նկարների կրկնօրինակները ուղարկում եմ Թալիային:

Ջիաննան հարցրեց, թե ով է վճարում իմ ուղևորությունների համար, ես ասացի, որ ժառանգություն եմ ստացել: Դա կիսով չափ ճիշտ էր, որովհետև ժառանգությունն իմը չէր, Թալիան էր ստացել: Անդրեասը նրան հիշատակել էր իր կտակում, իսկ Մադելինին՝ ոչ: Թալիան փողի կեսը ինձ տվեց, որ ես կարողանամ համալսարանական կրթություն ստանալ:

Ութ, ինը, տասը...

Ջիաննան, արմունկների վրա հենվելով, կռացավ, թեքվեց, որ վերցնի սիգարետի տուփը, և նրա փոքր կուրծքը հպվեց իմ մաշկին: Ես Ջիաննային հանդիպել էի նախորդ օրը Պիացցա դի Սպայա հրապարակում: Ես նստած էի հրապարակից մինչև թմբի վրա խոյացած եկեղեցին ձգվող քարե աստիճանների վրա: Ջիաննան մոտեցավ ինձ և իտալերեն ինչ-որ բան ասաց: Նա շատ նման էր սիրունիկ, պարապ այն իտալուհիներին, որոնք անգործ թափառում են Հռոմի հրապարակներում և եկեղեցիների բակերում, ծխում են, բարձրաձայն խոսում և ծիծաղում: Ես գլուխս թափ տվեցի և հարցրի.

— *Կներե՞ք:*

Նա ժպտաց, մի բացականչություն արձակեց և ուժեղ իտալա-

կան առոգանությամբ հարցրեց ինձ անզլերեն.

— *Կրակվառիչ ունե՞ք, իսկ ծխախո՞տ:*

Ես գլուխս թափ տվեցի և կոտրտված անզլերենով պատասխանեցի, որ չեմ ծխում: Ջիաննան քնծիծաղ տվեց: Աչքերը պայծառ կայծկլտում էին, իսկ կեսօրի արևը նրա նուրբ դեմքի շուրջը լուսե օղակ էր գծել:

Ես հևցով արտաշնչեցի և արթնացա, որովհետև Ջիաննան խուտուտ էր տալիս կողքս:

— *La tua ragazza? Ընկերուհի՞ն է:*— հարցրեց նա:

Նա նկարների կոյտից գտել էր Թալիայի լուսանկարը ծովափին. հենց այն մեկը, որ արել էի տարիներ առաջ մեր ինքնաշեն ապարատով:

— *Ո՛չ,*— պատասխանեցի ես:

— *Քո՞յրդ է:*

— *Ո՛չ:*

— *La tua cugina? Քո քարեկամուհի՞ն է:*

Ես գլուխս տարուբերեցի:

Ջիաննան որոշ ժամանակ ուսումնասիրում էր լուսանկարը՝ ծովից ընդհատ ներս քաշելով:

— *Ո՛չ,*— ասաց նա սուր ծայնով, նույնիսկ զայրացած:— *Questa è la tua ragazza!* Այո՛, կարծում եմ՝ դու ստախոս ես:

Ես աչքերիս չհավատացի, երբ նա վերցրեց կրակվառիչն ու կրակի տվեց նկարը:

Տասնչորս, տանհինգ, տասնվեց, տասնյոթ...

Դեպի կանգառ քայլելիս հասկացա, որ նկարը չկա... Հետո չէ, և ասացի բոլորին, որ պիտի հետ գնամ: Տարբերակ չկար, պիտի հետ գնանք: Ալֆոնսոն՝ սեղմված շրթունքներով մի տեղացի *հուսան*³⁷ մեր խմբի կամավոր ուղեկցողը, հարցական նայեց Գարիին: Գարին ամերիկացի էր: Նա մեր միջի ալֆա տղամարդն էր՝ կեղտոտ շիկահեր մազերով և դեմքի կորյակային ցանով: Այդպիսի դեմքերը հուշում են վատ կյանքի մասին: Գարին վատ տրամադրության մեջ

³⁷ Հուսան — ծիբրուծությամբ զբաղվող չիլիական ֆերմեր, ամերիկյան կովբոյի համարժեքը:

էր, և այն խտացնում էր քաղցը, ակոհոլի բացակայությունը և աջ ոտքի տհաճ ցանը, որ նա ձեռք էր բերել նախորդ օրը, երբ թուփը քերծել էր նրա ոտքը: Երկու տղաներին ես հանդիպել էի Սանտյագոյի մարդաշատ բարերից մեկում, որտեղ *պիսկոլա*³⁸ խմիչքի տասներկուերորդ բաժակից հետո Ալֆոնսոն առաջարկեց ոտքով գնալ դեպի Սալտո դել Ափոքինդո ջրվեժ, ուր հայրը նրան տանում էր երեխա ժամանակ: Մենք գնացինք այնտեղ և ջրվեժի մոտ ճամբար խփեցինք: Գիշերը մարիհուանա էինք ծխում, ջուրը խշշում էր մեր ականջներում, մեր գլխավերևում տարածվել էր աստղաշատ երկինքը, իսկ հիմա ուղևորվում էինք Սան Կարլոս դե Ափոքինդո՝ հետադարձ ավտոբուս նստելու համար:

Գարին հետ քաշեց կովբոյի գլխարկի սպիտակ շրջանակը և թաշկինակով սրբեց ճակատը:

— Հետդարձի ճանապարհը երեք ժամ է, Մարկոս,— ասաց նա:

— *¿Tres horas, hágale comprende? Երեք ժամ: Դու դա հասկանում ես,*— արծազանքեց Ալֆոնսոն:

— *Գիտեմ:*

— *Եվ այնուամենայնիվ գնում ես:*

— *Այո՛:*

— *¿Para una foto? Մի նկարի համար,*— հարցրեց Ալֆոնսոն:

Ես հաստատական գլխով արեցի: Լուռ էի, որովհետև գիտեի, որ նրանք ինձ չեն հասկանա: Ես ինքս էլ ինձ չէի հասկանում:

— *Դու կկորչես,*— ասաց Գարին:

— *Երևի:*

— *Դե՛, քարի ճանապարհ,*— ասաց Գարին՝ մեկնելով ձեռքը:

— *Es un griego laco. Դու խելագար հույն ես,*— ավելացրեց Ալֆոնսոն:

Ես ծիծաղեցի: Առաջին անգամ չէր, որ ինձ խելագար հույն էին կոչում: Գարին ուղղեց իր պայուսակի ամրակապը, և նրանք շարժվեցին սարերն ի վեր գալարվող արահետով: Սարերի մեջ անհետանալուց առաջ Գարին առանց հետ շրջվելու ինձ ձեռքով արեց: Ես բռնեցի ետդարձի ճամփան, որը չորս ժամ տևեց, քանի որ մո-

³⁸ Պիսկոլա — ուժեղ ակոհոլային կոկտեյլի տարատեսակ:

լորվեցի, ինչպես և կանխատեսում էր Գարին: Ճամբարին հասնելով՝ զգացի, որ ուժասպառ եմ: Սկսեցի փնտրել՝ թափ տալով թփերը, նայելով քարերի մեջ, սարսափելով այն մտքից, որ իզուր եմ փնտրում: Արդեն սկսել էի հաշտվել այն մտքի հետ, որ նկարն անհույս կորել է, երբ նկատեցի մի սպիտակ կետ սարի հարթ լանջի թփերի մեջ: Նկարը գտա թփերի փշոտ ճյուղերի արանքում, վերցրի այն, թափ տվեցի փոշին. աչքերս թաց էին, և ես թեթևացած շունչ քաշեցի:

Քսաներեք, քսանչորս, քսանհինգ...

Կարակասում ես քնում էի կամրջի տակ: Իսկ Բրյուսելում մնում էի ուսանողական հանրակացարանում, երբեմն ինձ երևակայելով՝ սենյակ էի վարձում մի լավ հյուրանոցում և երկար լոգանքներ էի ընդունում, սափրվում էի, բաղնիքի խալաթը հագիս նախաճաշում էի և գունավոր հեռուստացույց դիտում: Գլխիս մեջ խառնվել էին քաղաքները, ճանապարհները, երկրները և ինձ հանդիպած մարդկանց դեմքերը: Ինքս ինձ ասում էի, որ ես փնտրտուքի մեջ եմ: Բայց դա նման էր աննպատակ դեգերումների, և ես ավելի շուտ սպասում էի, որ ինձ հետ մի բան կկատարվի, որ կյանքումս շրջադարձ կլինի, ամեն բան միանգամից կփոխվի:

Երեսունչորս, երեսունհինգ, երեսունվեց...

Հնդկաստանում իմ ճանապարհորդության չորրորդ օրը քարշ էի տալիս դողացող ոտքերս: Կողքովս անցնում էին հոտից հետ մնացած անասունները: Ողջ օրը հետ էի տալիս, մաշկս դեղնել էր, և կարծես մի անտեսանելի ձեռք պոկում էր այն: Երբ էլ չէի կարողանում քայլել, պառկում էի ճանապարհի եզրին: Մի ծեր մարդ, ճամփեզրին նստած, մեծ պողպատե կաթսայի մեջ ինչ-որ բան էր խառնում, կողքին մի վանդակ էր դրված, վանդակի մեջ էլ ծվարել էր կապտակարմիր թութակը: Մի թուփ մաշկով առևտրական դատարկ շշերով սայլակը հրելով անցավ իմ կողքով... Դա վերջին բանն էր, որ ես տեսա:

Քառասունմեկ, քառասուներկու...

Արթնացա մի մեծ սենյակում, օդը շոգից ծանրացել էր: Հոտած սեխի հոտ էր գալիս: Ես պառկած էի երկտեղանոց երկաթյա առանց զսպանակների մահճակալին, որի հարթ փայտյա հիմքին փռված

Էր թղթի բարակության մի ներքնակ: Սենյակը լցված էր իմ մահճակալի նման մահճակալներով: Մահճակալների կողքից կախված էին հյուծված ձեռքեր, երկաթյա վանդակներից ցցված էին լուցկու տուփի բարակության ոտքեր, անատամ բերանները բաց էին, առաստաղից կախված էին չաշխատող հովացուցիչներ: Պատերին բորբոս էր տարածված: Կողքիս պատուհանից տաք օդը ներս էր գալիս, իսկ արևի շողերը ցավեցնում էին ակնակապիճներս: Մի մահմեդական բուժեղբայր՝ ամրակազմ ու ջղային, Գուլ անունով, ասաց, որ կարող եմ մեռնել հեպատիտից:

Հիսունհինգ, հիսունվեց, հիսունյոթ...

Խնդրեցի, որ ուսապարկս ինձ տան:

— Ինչ ուսապարկ,— անտարբեր հարցրեց Գուլը: Ամեն ինչ գողացել էին՝ հագուստ, փող, գրքեր ու լուսանկարչական ապարատս: Իր կիսատ-պռատ անզլերենով Գուլն ասաց՝ ցույց տալով կողքի լուսամուտագոգը, — ահա ինչ է այդ գողը թողել:

Դա Թալիայի նկարն էր: Ես վերցրի այն: Թալիայի մազերը ծածանվում էին ծովային զեփյուռից, բոբիկ ոտքերը դրված էին ժայռաբեկորների, իսկ դիմացը սփռվել էր ալեխոռով էգեյան ծովը: Կոկորդս սեղմվեց: Ես չէի ուզում մեռնել այստեղ՝ օտարներով շրջապատված, Թալիայից այդքան հեռու, և նկարը դրեցի լուսամուտի ապակու և շրջանակի արանքում:

Վաթսունվեց, վաթսունյոթ, վաթսունութ...

Կողքիս մահճակալին ծեր, թոշնած, կնճռապատ ու հյուծված դեմքով մի տղա էր պառկած, որի փորի տակ բոուլինգի գնդակի չափ մի ուռուցք կար: Երբ բուժեղբայրը դիպչում էր այդ ուռուցքին, տղան փակում էր աչքերը և բացում բերանը ջղաձիգ ոռնոցով: Առավոտյան ուրիշ մի բուժեղբայր փորձում էր տղային դեղ խմեցնել, բայց նա գլուխը թափահարում էր՝ սղոցվող փայտի ձայն հիշեցնող ձայներ արձակելով: Ապա բուժաշխատողը ստիպողաբար բացեց տղայի բերանը՝ դեղահաբերը խցկելով: Երբ նա գնաց, տղան դանդաղ գլուխը դարձրեց իմ կողմը, և մենք նայեցինք իրար աչքերի մեջ, ու մի արցունք գլորվեց տղայի այտով:

Յոթանասունհինգ, յոթանասունվեց, յոթանասունյոթ...

Այդ սենյակում տառապանքն ու հուսահատությունը ալիքի պես

անցնում էին մահճակալներով, խփվում բորբոսած պատերին և հետ գլորվում: Կարելի էր խեղդվել: Ես շատ էի քնում: Երբ քնած չէի, քորվում էի, խմում էի նրանց տված դեղերը, որոնք նորից քնեցնում էին ինձ: Մեկ-մեկ պատուհանից նայում էի փողոցի աշխույժ անցուդարձին, շուկայի վրաններին ու ետնաբակի թեյարաններին ընկած արևի ճառագայթներին: Մայթերին երեխաները քարկտիկ էին խաղում, հոսում էր գարշահոտ կեղտաջուրը, ծեր կանայք նստած էին մուտքի մոտ, *դհոթիներով*³⁹ վաճառականները, պազած իրենց լաթերի վրա, կոկոս էին քերում և նարգիզի դրասանգներ ծախում: Մի սուրճ ականջ ծակող ճիչ լսվեց մեր սենյակում: Ես դարձյալ ննջեցի:

Ութսուներեք, ութսունչորս, ութսունհինգ...

Իմացա, որ տղայի անունը Մանասար էր, որ թարգմանվում է իբրև «ուղղորդող լույս»: Մայրը մարմնավաճառ էր, իսկ հայրը՝ գող: Ապրում էր քեռու և մորաքրոջ հետ, որոնք նրան ծեծում էին: Ոչ ոք չգիտեր, թե ինչ հիվանդություն ունի: Նրան ոչ ոք չէր այցելում, և նրա մահից հետո երկու ամիս անց էլ ոչ ոք չէր գալու և հարցնելու նրա մասին: Ոչ ոք չէր վշտանալու և չէր հիշելու նրան: Մեռնելու էր այնպես, ինչպես ծնվել էր՝ թշվառության մեջ... Տղան քնած էր, իսկ ես նայում էի նրա փոս ընկած քունքերին, անհամաչափ մեծ գլխին և ներքևի շրթունքի մուգ կետին: Գուլի ասելով՝ տղայի մոր կավատը սիգարետը հանգցնում էր նրա ներքևի շրթունքին: Ես փորձում էի հետը խոսել անզլերեն, նաև *ուրդու*⁴⁰ բարբառով, բայց նա միայն աչքերն էր հոգնած թարթում: Երբեմն մատների օգնությամբ կենդանիների ստվերներ էի գցում պատին, որ տղան մի փոքր ժպտա:

Ութսունյոթ, ութսունութ, ութսունինը...

Մի անգամ Մանասարը ցույց տվեց պատուհանը: Ես նայեցի նրա մատի ուղղությամբ, բայց տեսա միայն կապույտ երկնքի պատառները, փողրակից ժայթքող ջրի շիթի տակ խաղացող երեխաներին և ավտոբուսի արտանետած ծխի քուլաները: Հետո հասկացա, որ տղան ցույց է տալիս Թալիայի նկարը: Վերցրի նկարը և տվեցի տղային: Նա նկարը, այրված անկյունից բռնած, մոտեցրեց դեմ-

³⁹ Դհոթի — տղամարդու ավանդական հագուստ՝ տարածված Հարավային և Հարավարևելյան Ասիայում:

⁴⁰ Ուրդու — Հնդկաստանի պաշտոնական լեզուներից մեկը:

քին և երկար նայեց: Միգուցե օվկիանոսի նկարն էր ձգել տղային: Չեմ կարծում, որ նա երբևէ զգացել էր ծովի ջրի աղի համը կամ գլխապտույտ էր ապրել ոտքերին զարկվող ու հետ քաշվող ալիքներից: Իսկ գուցե նա մի ներքին զգացողությամբ հասկացել էր, որ Թալիան իր պես գիտի, թե ինչ է իրական ցավը: Մանաարը նկարը հանձնեց ինձ, ես գլուխս տարուբերեցի:

— Պահիր մոտդ,— ասացի:

Տղայի դեմքով թերահավատության մի ստվեր անցավ: Ես ժպտացի: Չեմ կարող վստահ ասել, բայց կարծես նա էլ ժպտաց ի պատասխան:

Իննսուներկու, իննսուներեք, իննսունչորս...

Ես հաղթեցի հեպատիտը: Տարօրինակ կերպով հասկանալի չէր՝ արդյոք Գուլը գոհ է, որ ես առողջացել եմ, թե դժգոհ, որ իր կանխատեսումները չեն իրականացել: Բայց նա անասելի զարմացավ, երբ ասացի, որ ուզում եմ այս հիվանդանոցում աշխատել իբրև կամավոր: Նա ծնոտը տնկեց և խոժոռվեց, և ես ստիպված էի նույն խնդրով դիմել ավագ բուժեղբայրներից մեկին:

Իննսունյոթ, իննսունութ, իննսունիներ...

Լոգասենյակից մեզի ու ծծումբի հոտ էր գալիս: Ամեն օր Մանաարի մերկ մարմինը ձեռքերիս վրա տանում էի այդտեղ շատ զգույշ, որ հանկարծ թափ չտամ, որովհետև տեսել էի մի անգամ, թե ինչպես կամավորներից մեկը տղային բրնձի պարկի պես ուսին զցած այս ու այն կողմ էր տանում: Ես տղային զգուշորեն իջեցնում էի նստարանին, սպասում, որ շունչը տեղը բերի: Տեսքը սարսափելի էր: Նա նման էր սմբած ծեր մարդու: Մանաարը անձայն նստում էր, համբերատար սպասում՝ ձեռքի ափերը ծնկներին դրած, գլուխը ներքև խոնարհած: Ես օժառոտ սպունգը սահեցնում էի նրա կողավանդակով, ողնաշարի վրայով, շնաձկան լողակների պես դուրս ցցված ուսուկրերով: Ես նրան պառկեցնում էի մահճակալին, դեղահաբեր տալիս: Երբ մերսում էի նրա ձեռքերն ու սրունքները, նա մի փոքր խաղաղվում էր, և ես միշտ մի փոքր ժամանակ էի հատկացնում դրան: Տղան քնում էր Թալիայի նկարը բարձի տակ դրած:

Հարյուր մեկ, հարյուր երկու...

Աննպատակ թափառում էի քաղաքում՝ հիվանդանոցից, հի-

վանդների և մեռնողների շնչառությունից հեռու մնալու համար: Փոշոտ մայրամուտները իջնում էին նկարներով և գրառումներով աղտոտված պատերի ուղղությամբ ձգվող փողոցների վրա: Անցնում էի իրար կպած թիթեղածածկ կրպակների մոտով: Ճանապարհս կտրում էին աղջիկներ՝ բրնձով լի կողովները գլխներին, և սև մոխրապատ շորերով կանայք: Նեղ արահետների ծառածածկ զբոսուղիներով անցնելիս մտորում էի Մանասարի մասին, որ լուռ սպասում էր մահվանը իր կորսված բախտակիցների հետ և նաև մտածում էր ժայռին նստած ու ծովին նայող Թալիայի մասին: Ներսունս ինչ-որ մի բան էր ալիքվում և ձգվում պարանի պես: Ես հանձնվում էի այդ նոր զգացողությանը, որն ամբողջովին համակել էր ինձ: Ուզում էի հրաժարվել փորձություններիցս, դուրս գալ սեփական եսի սահմաններից, մի կողմ նետել ամեն ինչ, ինչպես օձն է դուրս գալիս իր հին կաշվից:

Չեմ կարող ասել, որ ամեն ինչ փոխվեց Մանասարի պատճառով: Դա այդպես չէր: Եվ միայն մեկ տարի անց ես հայտնվեցի Աթենքի գրադարաններից մեկում՝ բժշկական քոլեջի դիմում-հայտերն ուսումնասիրելու համար: Մանասարին խնամելու և հայտը լրացնելու արանքում ևս երկու շաբաթ անցավ, որ ես անցկացրի Դամասկոսում, և միակ հիշողությունս վառ ներկած աչքերով երկու կանանց դեմքերն էին, որոնցից յուրաքանչյուրի բերանում մեկական ոսկի ատամ կար: Երեք ամիս ես մնացի Կահիրեում՝ նկուղային կիսափուկ կացարանում, որի տերը մի ծեր հաշիշամուլ էր: Թալիայի փողերն էի ծախսում՝ բեռնատարներ քշելով Իսլանդիայում և Մյունխենում փանկ խմբի հետ շրջագայելով: Իսկ 1977 թվականին արմունկս ջարդեցի Բիլբաոյում միջուկային զենքի դեմ բողոքի ժամանակ:

Բայց խաղաղ պահերին, ավտոբուսի հետևի նստարանին կամ բեռնատարի թափքում նստած, ես էլի մտածում էի Մանասարի մասին: Վերհիշում էի նրա տառապանքն ու նրան օգնելու իմ անկարողությունը, և իմ բոլոր գործողությունները թվում էին այնքան անկարևոր, որքան այն փոքր խոստումները, որ մարդ իրեն տալիս է քնելուց առաջ և մոռանում արթնանալուն պես:

Հարյուր տասնինը, հարյուր քսան...

Ես իջեցրի ապարատի դռնակը:



Ամառվա վերջում ես իմացա, որ Մադելինը մեկնում է Աթենք՝ թողնելով Թալիային մեզ հետ կարճ ժամանակով:

— Ընդամենը մի քանի շաբաթով, — ասաց նա:

Մենք չորսով ճաշում էինք և ուտում սպիտակ լոբով ապուր, որ մայրս ու Մադելինը միասին էին պատրաստել: Ես նայեցի Թալիային, որ տեսնեմ, թե արդյոք ես միակն եմ, ում համար Մադելինի ասածն անսպասելի էր: Պարզվեց, որ միակ անտեղյակը ես էի: Թալիան գդալ առ գդալ կլանում էր ուտելիքը, շատ հանգիստ, գդալի ամեն շարժման հետ դիմակը բարձրացնելով: Նրա խոսքն ու ուտելու ձևն այլևս ինձ արտասովոր չէին թվում, ինչպես վատ նստեցված ատամնային պրոտեզով ծեր մարդու ուտելու ձևը, որը տարիներ հետո տեսա մայրիկիս մոտ:

Մադելինը ասաց, որ Թալիայի հետևից մարդ կուղարկի ֆիլմի նկարահանումից հետո՝ Ծննդյան տոներից առաջ:

— Քեզ կտանեն Աթենք, — ասաց Մադելինը իրեն հատուկ ոգևորված ուրախությամբ: — Եվ միասին կգնանք պրեմիերայի: Հրաշք կլինի, չէ՞, Մարկոն: Չորսով միասին զուգված-գարդարված վալս ենք պարելու:

Ես ասացի, որ դա հրաշալի կլինի, թեպետ խիստ դժվար էր պատկերացնել մորս երեկոյան զգեստով վալս պարելիս:

Մադելինն ասում էր, թե ինչ հրաշալի կլինի ամեն բան, երկու շաբաթից դպրոցի դասերը կսկսվեն, և Թալիան կարող է վերսկսել իր պարապմունքները, իհարկե, մորս օգնությամբ: Ասաց, որ մեզ կուղարկի բացիկներ, նամակներ և ֆիլմի նկարները: Նա շատ էր խոսում, բայց ես գրեթե չէի լսում նրան: Ես այդ պահին մեծ թեթևություն էի զգում, գրեթե գլխապտույտ ուրախություն: Օրեր շարունակ ստամոքսս կծկվում էր սարսափից, որ ամառը մոտենում է իր ավարտին, և ամեն անցնող օրվա հետ փորձում էի հարմարվել մոտալուտ հրաժեշտին: Ես ամեն առավոտ արթնանում էի նախաճաշին Թալիային տեսնելու և նրա տարօրինակ ձայնը լսելու ցանկությամբ: Մենք չէինք էլ նախաճաշում, նախընտրում էինք ծառերը մագլցել, վազել գարու արտում, կտորատում էինք հասկերը և արձակում

ռազմական ճիչեր՝ վախեցնելով մեր ոտքերի տակից ճողոպրող մողեսներին: Մենք քարանձավներում փնտրում էինք երևակայական գանձեր և կղզու վրա որոնում էինք տեղեր, որտեղ մեր ձայներն արձագանքում էին ամբողջ ուժով: Նկարում էինք ջրաղացներ և աղավաատներ մեր ինքնաշեն լուսանկարչական ապարատով և տանում էինք պարոն Ռուսոսին, որը երևակում էր նկարները: Նա նույնիսկ տարավ մեզ իր լողասենյակը և ցույց տվեց երևակիչները, լուծույթներն ու սարքերը:

Մադեիլնի այդ հայտարարության օրը մայրս և նա մի շիշ գինի խմեցին խոհանոցում, և իհարկե հիմնական բաժինը խմեց Մադեիլնը: Ես ու Թալիան վերևում *թավլի*⁴¹ էինք խաղում, Թալիան հաղթում էր, և քարերի կեսն արդեն տարել էր իր մոտ:

— Նա սիրեկան ունի,— ասաց Թալիան՝ զառերը նետելով: Ես վեր թռա:

— Ո՞վ:

— Ո՞վ, իսկ ինչ ես դու կարծում, ո՞վ:

Ես արդեն սովորել էի վերլուծել Թալիայի հայացքի բովանդակությունը, և հիմա նա ինձ նայում էր այնպես, կարծես ափին կանգնած հարցրել էի՝ որտեղ է ջուրը: Փորձեցի շտկել իրադրությունը:

— Գիտեմ,— ասացի ես, և այտերս այրվում էին:— Ուզում եմ ասել, թե ո՞վ է:

Ես տամներկու տարեկան էի, և իմ բառապաշարում չկար «սիրեկան» բառը:

— Գլխի չե՞ն ընկնում, ռեժիսորն է:

— Հենց այդ էլ ուզում էի ասել:

— Էլիաս է անունը: Երևույթ է: Մազերը գլխին լողզում է քսանականների ոճով: Եվ փոքր, բարակ բեղիկներ ունի, ինձ թվում է՝ այդ բեղերը նրան ամբարտավան ու սանձարձակ տեսք են տալիս: Ծիծաղելի է: Իհարկե, Էլիասին թվում է, որ ինքը մեծ արվեստագետ է: Մայրիկին էլ է այդպես թվում: Երբ Էլիասի հետ է, այնպես համեստ ու ենթարկվող է, կարծես խոնարհվում է նրա առաջ և հիանում է, որովհետև նա հանձար է: Չեմ հասկանում, մի՞թե չի տեսնում իրականությունը:

⁴¹ Թավլի — նարդու տարատեսակ:

— Իսկ մորաքույր Մադելինը պատրաստվում է ամուսնանալու նրա հետ:

Թալիան ուները թոթվեց.

— Նա ընտրում է ամենավատ տղամարդկանց: Ամենավատ,— նա զառերը թափ տվեց ձեռքի մեջ և մի քիչ մտածեց,— իհարկե, բացառությամբ Անդրեասի: Նա շատ լավն է: Բավականին լավն է: Բայց մայրս լքում է նրան, որովհետև սիրում է սրիկաներին:

— Դու հո՞րդ նկատի ունես:

Թալիան խոժոռվեց.

— Իմ հայրը մի օտարերկրացի էր, ում նա հանդիպել էր Ամստերդամի ճանապարհին՝ կայարանում, տեղատարափ անձրևի ժամանակ: Միասին մի քանի ժամ են անցկացրել, ոչ մի պատկերացում չունեն, թե ով է հայրս: Մայրս էլ գաղափար չունի, թե ով է նա:

— Հիշում եմ՝ ինչ-որ բան էր պատմում իր առաջին ամուսնու մասին: Ասում էր, որ հարբեցող է: Դե, ես էլ մտածեցի:

— Դե, դա հաստատ Դորիանի մասին էր պատմում: Դա էլ մի երևույթ էր:

Թալիան թավլիի մի քար էլ իր մոտ տարավ:

— Դորիանը ծեծում էր մորս: Մի վայրկյանում հաճելի և քաղաքավարի մարդուց վերածվում էր վայրագ կենդանու: Այդպես հանկարծ եղանակն է փոխվում: Օրվա մեծ մասը խմած էր, տանը պարապ պառկած: Հարբած ժամանակ ամեն ինչ մոռանում էր: Ասենք՝ ջուրը կարող էր բաց թողնել և տանը ջրհեղեղ սարքել: Մի անգամ մոռացավ հանգցնել գազօջախը և այրեց ամեն բան:

Թալիան այժմ փայտիկներից աշտարակ էր կառուցում: Եվ մի պահ լուռ փորձում էր հավասարեցնել փայտիկները:

— Դորիանը սիրում էր միայն իր Ապոլոնին: Հարևան բոլոր երեխաները սարսափում էին Ապոլոնից: Շատերը չէին տեսել այդ շանը, միայն հաչոցն էին լսել, և դա բավական էր: Դորիանը նրան վերնահարկում էր պահում շղթայով և կերակրում գառան մսով:

Թալիան էլ ոչինչ չասաց, բայց ես ինքս լավ պատկերացրի ամեն բան: Դորիանը դուրս է գալիս, մոռանում է շան մասին հոգ տանել, և շունը ազատ, առանց շղթայի վազվզում է տնակում: Ամեն բան պարզ էր, կարծես էկրանի վրա:

- Քանի տարեկան էիր,— ցածր ծայնով հարցրի ես:
- Հինգ:
- Ես տվեցի այն հարցը, որ տանջում էր ինձ ամբողջ ամառ.
- Միթե հնարավոր չէ ինչ-որ բան անել:
- Թալիան հայացքը փոխեց.
- Մի հարցրու ինձ,— ասաց նա խոր հոգոցով:— Դա ինձ հոգ-
նեցնում է:
- Կներես,— ասացի ես:
- Մի օր կպատմեն քեզ:

Եվ ավելի ուշ Թալիան ամեն ինչ պատմեց ինձ: Մնագործ վի-
րաբույժներ և հետվիրահատական վերքի բորբոքում, որ արյան
վարակում տվեց, փչացրեց նրա երիկամները, հուժկու հարված
հասցրեց յարդին և բերեց երկրորդ վիրահատության, որի ժամա-
նակ հեռացվեցին ձախ այտը և ծնոտի մի մասը: Բարդացումների
պատճառով երեք ամիս էլ մնաց հիվանդանոցում: Մահվան շեմին
էր, համարյա մահացել էր և դրանից հետո էլ չէր թողնում, որ վիրա-
բույժներն իրեն մոտենան:

— Թալիա,— ասացի ես,— շատ ցավում եմ մեր առաջին հան-
դիպման ժամանակ կատարվածի համար:

Թալիան աչքերը հառեց վրաս, և նրանց մեջ նորից փայլեց չա-
րածի կայծը:

- Բայց ես գիտեի ամեն բան, նույնիսկ նախքան այդ դեպքը,
երբ դու սկուտեղը գցեցիր գետնին:
- Ինչ գիտեիր:
- Գիտեի, որ ապուշի մեկն ես:



Մադելինը մեկնեց դպրոցի դասերը սկսվելուց երկու
օր առաջ: Դեղնասպիտակավուն նեղ զգեստ էր հա-
գել, որ կիպ գրկել էր նուրբ իրանը, աչքերին դրել էր
եղջերաշրջանակով ակնոց: Մազերը կապել էր հաստ
սպիտակ մետաքսե ժապավենով: Այնպես էր հագնվել, կարծես վա-
խենում էր, թե կարող է բաժանվել մասերի, կարծես ուզում էր այդ
ձևով ինքն իրեն ի մի բերել: Թինոսի լաստանավերի նավահանգս-
տում նա գրկեց բոլորիս, երկար ու ամուր գրկել էր դասերը և շր-

թունքները հպել Թալիայի գլխին երկար ու անընդմեջ համբույրներով: Այդպես էլ չհանեց ակնոցը:

— Ինձ գրկիր,— շշուկով խնդրեց նա դստերը:

Թալիան դժկամորեն ենթարկվեց:

Նավը հռնդյունով առաջ մղվեց՝ հետևից թողնելով բլթբլթացող պղպաջակների մի գիծ: Ես կարծում էի, որ Մադելինը կկանգնի տախտակամածին, մեզ ձեռքով կանի և օդային համբույրներ կուղարկի: Բայց նա արագ գնաց դեպի ծածկը և նստեց: Նույնիսկ չնայեց մեր կողմը:

Երբ մենք տուն հասանք, մայրս հրամայեց, որ նստենք, կանգնեց մեր դիմաց ու ասաց.

— Թալիա, ուզում եմ, որ իմանաս, այլևս ստիպված չես այս տանը կրել քո դիմակը: Ո՛չ ես, ո՛չ Մարկոսը դրա հետ խնդիր չունենք: Կրիր, երբ քեզ հարմար կլինի: Եվ այդ հարցը մենք էլ չենք քննարկի:

Եվ հանկարծահաս մի պայծառությամբ ես հասկացա այն, ինչ մայրս հասկացել էր ինձնից առաջ: Այդ դիմակը Թալիան կրում էր Մադելինի համար, որ փրկի մորը շփոթմունքից և ամոթից:

Որոշ ժամանակ Թալիան անշարժ, լուռ նստած մնաց: Հետո դանդաղ բարձրացրեց ձեռքերը և արձակեց կապիչներն ու իջեցրեց դիմակը: Ես ուղիղ նայեցի նրա դեմքին և բնագոյային մղում ունեցա: Ուզեցի ընկրկել, ինչպես անում ես անսպասելի բարձր երաժշտություն լսելիս: Բայց չարեցի, հայացքս պահեցի նրա դեմքին և նույնիսկ չթարթեցի:

Մայրս ասաց, որ ինձ էլ տնային ուսուցման կտեղափոխի մինչև Մադելինի վերադարձը, որ Թալիան տանը մենակ չմնա: Նա մեզ դասավանդում էր երեկոյան ճաշից հետո և առավոտյան հանձնարարություններ էր տալիս, որ անենք, մինչև վերադառնա աշխատանքից: Տեսականորեն այդ պլանը իրագործելի էր թվում:

Բայց մայրիկի բացակայությամբ դաս սովորելը գործնականորեն անհնար էր դառնում: Թալիայի արատի մասին լուրերը սփռվել էին կղզով մեկ, մարդիկ, հետաքրքրասիրությունից դրդված, անընդհատ թակում էին մեր դուռը: Կարծես կղզում միանգամից վերջացել էին այցուրը, շաքարը, անգամ աղը: Միակ վայրը, որ կա-

րելի էր գտնել այդ ամենը, մեր տունն էր: Մարդիկ նույնիսկ չէին էլ փորձում թաքցնել իրենց իրական մտադրությունը, դռան մոտ նրանց հայացքը սլանում էր տան խորքը, նրանք ծռում էին վզները, կանգնում ոտնաթաթերին: Շատերն անգամ մեր անմիջական հարևանները չէին: Միջոցներ էին անցնում իբր մի բաժակ շաքարի համար: Ես նրանց ներս չէի թողնում և առանձնահատուկ հաճույք էի ստանում՝ դուռը շրխկացնելով նրանց երեսին: Բայց նաև մռայլ էի, հուսահատված, որովհետև հասկանում էի, որ եթե մնամ կղզում, կնմանվեմ այդ մարդկանց, կդառնամ նրանցից մեկը:

Երեխաներն ավելի վատն էին և ավելի աներես: Մի օր նրանցից մեկին բռնեցի, երբ նա դրսից ծիկրակում էր և փորձում մագցել պատի վրա: Մենք պարապում էինք, և Թալիան կտկտացնում էր մատիտով ուսիս, մատը կզակին էր դնում, և ես, շուռ գալով, տեսնում էի լուսամուտի մյուս կողմում մի քանի դեմքեր: Վատ էի զգում, ստիպված գնում էի վերև ու քաշում վարագույրները: Մի օր բացեցի դուռը և տեսա մի տղայի՝ Պետրոս անունով, որը մեր դպրոցից էր: Պետրոսն ու նրա երեք ընկերները ինձ մի բուռ մանրադրամ առաջարկեցին Թալիային նայելու համար: Ես կոպիտ մերժեցի՝ ասելով, որ այստեղ կրկես չէ:

Վերջում ես ստիպված ամեն բան պատմեցի մորս: Նրա դեմքը բոսորագույն դարձավ, և նա սեղմեց ատամները:

Հաջորդ օրը նա սեղանին դրեց երկու գիրք և երկու սենդվիչ: Թալիան ինձնից շուտ հասկացավ ամեն ինչ և կուչ եկավ տերևի պես: Սկսեց բողոքել, երբ դուրս գալու ժամանակն էր:

— Ո՛չ, մորաքնյր Օդի, ո՛չ:

— Ձեռքդ տո՛ր:

— Ո՛չ, խնդրում եմ:

— Ասում եմ՝ ձեռքդ տո՛ր:

— Չեմ ուզում դուրս գալ:

— Մենք ուշանում ենք:

— Ինձ մի՛ ստիպիր, մորաքնյր Օդի:

Մայրս բռնեց Թալիայի ձեռքը և նրան վեր քաշեց, առաջ եկավ և ինձ լավ ծանոթ հայացքով նայեց աղջկան: Այժմ աշխարհում ոչինչ չէր կարող կանգնեցնել մորս:

— Թալիա՛,— ասաց նա քնքուշ և վճռական,— ես քեզնից չեմ ամաչում:

Ու մենք երկուսով դուրս եկանք. մայրս, շրթունքները պինդ սեղմած, առաջ էր մղվում այնպիսի պիրկ ճիգով, կարծես պայքարում էր դիմահար քամու դեմ: Նա արագ-արագ, մանր քայլերով գնում էր դեպի իր նպատակակետը: Ես մտածեցի, որ նույն վճռական կերպով մայրս հրացանը ձեռքին գնում էր Մադելինի հոր մոտ:

Մարդիկ սարսափած բացականչում էին և բերանները ծածկում, երբ մենք արագ անցնում էինք նրանց կողքով: Կանգ էին առնում, որ նայեն: Ոմանք մեզ մատով էին ցույց տալիս: Մայրս փորձում էր չնայել նրանց: Աչքերիս առաջ գունատ դեմքերի և բաց բերանների մի խառնապատկեր էր:

Դպրոցի բակում երեխաները միջանցք բացեցին, որ մենք անցնենք: Մի աղջիկ ծղրտաց: Մայրս ճեղքում էր ամբոխը բուռվինգի գնդակի պես, բայց բաց չէր թողնում Թալիայի ձեռքը: Արագ հասավ բակի անկյունում գտնվող նստարանին, բարձրացավ նստարանի վրա, բարձրացրեց ձեռքը, և բակում լռություն տիրեց:

— Սա Թալիա Գիանակոսն է,— բացականչեց մայրս:— Եվ այսօրվանից,— նա մի պահ լռեց,— ով լաց է լինում, թող բերանը փակի, քանի ես չեմ փակել: Ուրեմն, այսօրվանից Թալիան այս դպրոցի աշակերտն է, և ես խնդրում եմ նրան վերաբերվել պատշաճությամբ և քաղաքավարությամբ: Եթե իմանամ, որ ծաղրում եք աղջկան, ես կգտնեմ միջոցը, որ փոշմանեք ձեր արածի համար: Գիտեք, որ կաննեմ: Ես այլևս ձեզ ասելիք չունեմ:

Նա իջավ նստարանից, Թալիայի ձեռքը բռնեց և գնաց դասարան:

Այդ օրվանից Թալիան էլ երբեք դիմակ չհագավ ո՛չ տանը, ո՛չ դրսում:



Այդ տարի՝ Ծննդյան տոներից առաջ, մենք նամակ ստացանք Մադելինից: Ֆիլմի նկարահանումը ձգձգվում էր. նախ օպերատորը ընկել էր լուսամուտից (ես չգիտեի, թե ինչ է օպերատորը, Թալիան բացատրեց ինձ) և երեք տեղից կտրել թևը: Եվ ապա նկարահանման համար հարմար եղանակ չէր լինում:

«Եվ հիմա բոլորս սպասողական վիճակում ենք,— գրում էր Մադելինը:— Որոշ առումով դա այնքան էլ վատ չէ, քանի որ մենք հնարավորություն ունենք աշխատելու սցենարի որոշ անկատար տեղերի վրա, բայց մյուս կողմից շատ վատ է, որովհետև մենք չենք կարող հանդիպել մեր նախատեսած ժամանակահատվածում: Ես կոտորված եմ, սիրելիներս: Բոլորիդ շատ եմ կարոտում, հատկապես քեզ, իմ սիրելի Թալիա: Օրերն եմ հաշվում, մինչև գարուն, երբ նկարահանումը կավարտվի, և մենք միասին կլինենք: Երեքդ էլ իմ սրտում եք ամեն վայրկյան:

— Նա հետ չի գա,— անվրդով ասաց Թալիան՝ նամակը տալով մորս:

— Իհարկե գալու է,— ասացի ես և ապշահար շրջվեցի, որ մայրս հաստատի ասածս կամ խրախուսական մի բան ասի: Բայց մայրս ծալեց նամակը, դրեց այն սեղանին և հանգիստ գնաց սուրճի համար ջուր եռացնելու: Ես մտածեցի, որ մայրս պետք է մխիթարեր Թալիային, անգամ եթե նա վստահ էր, որ Մադելինը չի վերադառնա: Բայց ես դեռ չգիտեի, որ նրանք հասկանում են միմյանց շատ ավելի լավ, քան ես էի հասկանում նրանցից յուրաքանչյուրին: Մայրս չափազանց շատ էր հարգում Թալիային և չէր ուզում նրան ապակողմնորոշել: Նա կեղծ հավաստացիումներով չէր կարող վիրավորել աղջկան:

Գարունը եկավ իր կանաչ փառավոր ծաղկունքով և անցավ: Մենք Մադելինից մի բացիկ և հապճեպ գրված մի նամակ ստացանք, ուր նա մեզ տեղեկացնում էր, որ ֆիլմի նկարահանումը վտանգված է, այս անգամ պրոդյուսերների մեղքով, որոնք սպառնում են դադարեցնել նկարահանումները ուշացումների պատճառով: Ի տարբերություն նախորդ նամակի՝ Մադելինն այստեղ չէր խոսում իր վերադարձի մասին: Այդ ամառ՝ երևի 1968 թվականին, ես ու Թալիան Դորի անունով մի աղջկա հետ գնացինք լողափ: Թալիան արդեն մի տարի ապրել էր Թինոսում, և նրա տեսքն այլևս շշուկներ և ակնապիշ հայացքներ չէր առաջացնում: Իհարկե, նրան ուղեկցում էր հետաքրքրասիրության ալիքը, բայց դա աստիճանաբար մարում էր: Նա արդեն ընկերներ ուներ, ասենք՝ Դորին, ով չէր խրտնում նրա արտաքին տեսքից, ում հետ նա ճաշում էր, զբոս-

նում, խաղում և պարապում: Նա անհավանականության աստիճանի սովորական էր դարձել, և ես հիանում էի կղզու բնակիչներով, որոնք Թալիային համարում էին իրենցից մեկը:

Կեսօրին մենք նախատեսել էինք լողալ, բայց ջուրը դեռ շատ սառն էր, և նախընտրեցինք պառկել քարերի վրա ու սկսեցինք ննջել: Երբ տուն վերադարձանք, խոհանոցում տեսանք մորս: Նա գազար էր մաքրում, իսկ սեղանին դրված էր փակ ծրար:

— Խորթ հայրդ է ուղարկել,— ասաց նա Թալիային:

Թալիան վերցրեց նամակը ու բարձրացավ վերև: Երկար ժամանակ անց իջավ, նամակը գցեց սեղանին և վերցրեց գազարն ու դանակը.

— Ուզում է, որ տուն գնամ:

— Հասկանում եմ,— ասաց մայրս, և ես նրա ծայնի մեջ հազիվ նկատելի դող որսացի:

— Դե, տուն՝ ոչ ուղիղ իմաստով: Ասում է, որ կապվել է Անգլիայի մասնավոր դպրոցներից մեկի հետ: Կարող եմ աշնանը ընդունվել: Ասաց, որ կվճարի դրա համար:

— Իսկ մորաքույր Մադելինը:

— Հեռացել է Էլիասի հետ: Նրանք փախել են:

— Իսկ ֆիլմն ինչ եղավ:

Թալիան ու մայրս հայացքներ փոխանակեցին և միաժամանակ նայեցին ինձ. ես հասկացա այն, ինչ նրանք վաղուց գիտեին:



2002 թվականին՝ երեսուն տարի անց, երբ ես պատրաստվում էի Աթենքից Քաբուլ գնալու, աչքովս ընկավ Մադելինի մահախոսականը մի թերթում: Ազգանունը փոխել ու դարձել էր Քուրիս, բայց ես ճանաչեցի ծեր կնոջ պայծառաժպիտ հայացքը՝ այն, ինչ մնացել էր նրա վաղեմի գեղեցկությունից: Նկարի տակ փոքր մի գրություն կար, որտեղ ասվում էր, որ նա երիտասարդ ժամանակ դերասանուհի էր եղել, իսկ հետո՝ 1980-ականների սկզբում, հիմնադրել էր սեփական թատերական ընկերությունը: Այդ ընկերությունը մի քանի թատերական մրցանակ էր ստացել՝ մասնավորապես Յուջին Օ՛Նիլի «Երկար ճանապարհորդություն դեպի խավար» բեմադրության, ինչպես

Նաև Չեխովի «Ճայի» և Դիմիտրիու Մպոգրիսի «Նշանադրություն» պիեսների բեմադրության համար: Մահախոսականում նաև ասվում էր, որ նա լավ ճանաչված էր Աթենքի թատերական շրջանակներում իր բարեգործական ակցիաներով: Նրանով հիանում էին, նա սրամիտ էր, նրբագեղ ոճի գիտակ, շքեղ երեկոյթներ էր կազմակերպում և աջակցում սկսնակ, բայց տաղանդավոր դրամատուրգներին: «Մադելինը երկար պայքարում էր էմֆիզեմա հիվանդության դեմ», — ասվում էր մահախոսականի մեջ, որտեղ ոչինչ Նշված չէր նրա ներկայիս ամուսնու կամ ժառանգների մասին: Հետո, ի զարմանս ինձ, ես իմացա, որ քսան տարի շարունակ ապրել է Աթենքում՝ իմ բնակարանից մի վեց շենք այն կողմ:

Ես թերթը մի կողմ դրեցի: Զարմանալի էր, բայց մահացած կնոջ հանդեպ տհաճ անհանգստացնող զգացում ունեի: Կարծես ամբողջ էությունս հակառակվեր դեպքերի նման զարգացմանը: Ինձ միշտ թվում էր, որ Մադելինն առանց մեզ ապրել էր աղմկոտ և թափառական կյանքով, տարիներով տարել էր բախտի հարվածները, ունեցել էր անկումներ, վերելքներ և ափսոսանք, անփառունակ ու հուսահատ սիրավեպերի մի շղթա: Ես միշտ պատկերացնում էի, որ Մադելինը բռնել էր ինքնառջնչացման ուղին, տրվել հարբեցողությանը և ունեցել, ինչպես ասում են, «կյանքի ողբերգական ավարտ»: Ես նույնիսկ չէի բացառում, որ Մադելինը, կանխազգալով այդ վախճանը, Թալիային հատուկ բերել էր Թինոս, որ փրկի և ազատի նրան այն աղետներից, որոնք դարանակալում էին իր աղջկան: Բայց հիմա ես Մադելինին տեսնում էի մորս աչքերով, և նա երևում էր իբրև մի քարտեզագիր, որ հանգիստ նստած՝ գծում է ապագայի քարտեզը, թոթափում իր խնդրահարույց դասեր ծանր բեռն իր ուսերից: Եվ նա փայլուն հաջողության հասավ, համենայն դեպս, եթե հավատանք մահախոսականին: Մադելինի կյանքը փառքի, ճանաչման ու հարգանքի մի անվերջանալի արձանագրություն էր:

Ես ի զորու չէի ընդունելու այդ իրողությունը, այդ հաջողությունը և ճանաչվածությունը: Դա անհեթեթություն էր: Իսկ ո՞ր էին պատիժը և արժանի հատուցումը:

Ես թերթը ծալեցի, բայց սիրտս սկսեց կրծել կասկածը: Ներքուստ զգում էի, որ շատ խիստ եմ դատում Մադելինին, քանի որ

մենք իրականում շատ նման էինք: Մենք երկուսս էլ երազում էինք փախչել այս իրականությունից՝ վերագտնելով նոր ինքնություն: Երկուսս էլ դուրս էինք գալիս մեր հին ինքնության զնդանից՝ ձեռքբերելով պատերը և կտրելով մեզ ցած ձգող խարիսխները: Փորձում էի վանել այդ միտքը, ինքս ինձ համոզել, որ դա նույնը չէ, բայց զգում էի, որ նույնիսկ զայրույթս ավելի շատ նախանձի է նման. ես նախանձում էի Մադելինին, որովհետև այդ կինն ինձնից ավելի հաջողակ գտնվեց:

Ես մի կողմ նետեցի թերթը: Եթե Թալիան պետք է իմանա այս մասին, ապա ոչ ինձնից:



Մայրս գազարի կլեպները դանակով հավաքեց սեղանից և լցրեց ափսեի մեջ: Նա չէր սիրում, երբ մարդիկ դեն էին գցում ուտելիքը: Այդ կլեպներից նա ջեմ էր եփելու:

— Թալիան, դու կարևոր որոշում պիտի կայացնես, — ասաց մայրս: Ի զարմանս ինձ՝ Թալիան շուռ եկավ իմ կողմն ու ասաց.

— Իսկ ինչ կանեիր դու, Մարկոս:

— Ես շատ լավ գիտեմ, թե ինչ կաներ նա, — արագ ասաց մայրս:

— Ես անպայման կզնայի, — ասացի ես՝ նայելով մորս և հաճույք ստանալով ապստամբ խռովարարի իմ կերպարից: Եվ ես անկեղծ էի: Ես չէի պատկերացնում, որ այս հարցում Թալիան պիտի տատանվի:

— Ես, օրինակ, անմիջապես կկառչեի այդ հնարավորությունից: Պատկերացնում եք, մասնավոր կրթություն, այն էլ Լոնդոնում:

— Պիտի մտածես այդ մասին, — ասաց մայրս:

— Արդեն մտածել եմ, — վարանելով պատասխանեց Թալիան:

Հետզհետե խորացող ներքին անվստահությամբ նա նայեց մորս աչքերին.

— Բայց չեմ ուզում բեռ դառնալ:

Մայրս դանակը ցած դրեց, և ես լսեցի նրա շնչառությունը: Կարծես շունչը պահել էր: Համենայն դեպս նրա հաստատական դեմքի վրա թեթևության ոչ մի նշույլ չերևաց:

— Իհարկե, կարող ես մնալ, Թալիան, իհարկե կարող ես:

Թալիան ձգվեց սեղանով և ձեռքը հպեց մորս դաստակին:

— Շնորհակալ եմ, մորաքրոյր Օդի:

— Մի անգամ կասեմ ու վերջ,— ասացի ես:— Ես կարծում եմ, որ դա սխալ է: Դուք երկուսդ էլ մեծ սխալ եք գործում:

Երկուսով շրջվեցին և նայեցին ինձ:

— Մի՞թե ուզում ես, որ գնամ, Մարկոն,— հարցրեց Թալիան:

— Այո՛, ուզում եմ,— ասացի ես:— Ես քեզ շատ կկարոտեմ, և դու գիտես դա: Բայց դու չես կարող բաց թողնել որակյալ մասնավոր կրթություն ստանալու հնարավորությունը: Դրանից հետո դու կարող ես գնալ համալսարան և դառնալ հետազոտող, գիտնական, պրոֆեսոր, հայտնագործող: Մի՞թե դու դա չես ուզում: Դու ամենախելացին ես իմ ճանաչած մարդկանցից: Դու կարող ես դառնալ, ինչ ուզում ես:

Ես լռեցի:

— Ո՛չ, Մարկոն,— կոշտ պատասխանեց Թալիան:— Ո՛չ, չեմ կարող:

Եվ դա ասաց այնպիսի անվերապահ վճռականությամբ, որ բացառում էր հակադարձելու ամեն փորձ:

Տարիներ անց ես սովորում էի պլաստիկ վիրաբուժություն և հասկացա խոհանոցում տեղի ունեցած խոսակցության իմաստը: Ես հասկացա, որ մարդիկ չեն տեսնում քո ներքին էությունը, նրանք անտարբեր են քո հոյսերի, երազների և վշտի հանդեպ, որոնք թաքնված են ոսկորների և մաշկի շերտի տակ: Դա պարզ էր, անհեթեթ ու դաժան, և իմ հիվանդները դա լավ գիտեին: Նրանք հասկանում էին, որ իրենց գոյության բազմաթիվ դրսևորումները սերտորեն կապված են իրենց ոսկորների համաչափության, աչքերի միջև եղած տարածության, կզակի երկարության, քթի ձևի կամ, ասենք, իդեալական ճակատաքթային կորագծի հետ:

Գեղեցկությունը հսկայական և անգին մի գանձ է, որ մարդկանց մեջ բաշխվում է անմտորեն կամ կամայականորեն:

Այսպիսով՝ ես ընտրեցի իմ մասնագիտությունը, որ հարթեմ Թալիայի պես մարդկանց կյանքի դժվարությունները: Վիրաբուժական դանակի ամեն հպումով ես վերացնում էի այդ կամայական անարդարությունը՝ հակառակվելով դրանով ամբողջ աշխարհին,

որն ինձ համար անարդար էր, քանի որ այնտեղ շան հարձակումը կարող էր փոքր աղջկան զրկել ապագայից՝ դարձնելով նրան հալածված, վտարանդի և ծաղրի առարկա:

Համենայն դեպս ես այդպես էի կարծում: Միգուցե պլաստիկ վիրաբուժությունն իբրև մասնագիտություն ընտրելու նաև այլ պատճառներ կային, ասենք՝ վարկանիշը, սոցիալական դիրքը: Ասել, որ ես դա ընտրել էի միայն Թալիայի պատճառով, շատ պարզունակ կլինեիր, թեպետ այդ բացատրության մեջ սքանչելի ներդաշնակ ու կշռադատված մի բան կհնչեր, բայց ես Քաբուլում սովորել էի, որ մարդու վարքը խառնափնթոր, անկանխատեսելի և սովորական տրամաբանությանը անհարիր գործոնների մի հանրագումար է: Բայց դա ինձ մխիթարում է, քանզի ամբողջացնում և հստակեցնում է իմ կյանքի պատմությունը, որը երևակվում է մութ սենյակում՝ լուսանկարի լուսաերիզի մեջ: Մի պատմություն, որ վերահաստատում է այն բարին ու լավը, որ միշտ ուզում էի տեսնել իմ մեջ: Այդ պատմությունն ինձ օգնում է:

Իմ բժշկական պրակտիկայի կեսը ես անցկացրի Աթենքում. կնժիռներ էի վերացնում, բարձրացնում էի հոնքերի գիծը, ուղղում կզակածալերը և վերաձևում տձև քթեր: Իսկ մյուս կեսն անցավ, ինչպես ես *իրականում* ուզում էի: Ես թռչում էի Կենտրոնական Ամերիկա, Սահարա, Աֆրիկա, Հարավային Ասիա և Հեռավոր Արևելք և այնտեղ աշխատում էի երեխաների հետ. կարում էի պատռված շրթունքներ, վերականգնում էի քիմքեր, հեռացնում դեմքի ուռուցքներ և վերացնում պատռված վերքեր: Աթենքի աշխատանքն այդքան շնորհակալ չէր, բայց դա ինձ հնարավորություն էր տալիս փող վաստակելու և զբաղվելու ինձ համար հաճելի կամավորական աշխատանքով:

Հետո՝ 2002 թվականին, մի ծանոթ կնոջից ես զանգ ստացա: Կնոջ անունը Ամրա Ադեմովիչ էր, նա բուժքույր էր Բոսնիայում: Մենք հանդիպել էինք Լոնդոնում մի քանի տարի առաջ՝ կոնֆերանսի ժամանակ, և երկու օրվա տևողությամբ թեթև սիրավեպ էինք ունեցել: Այս սիրավեպին երկուսս էլ կարևորություն չտվեցինք, բայց մնացինք լավ ընկերներ և տարբեր առիթներով հանդիպում էինք: Ամրան ասաց, որ աշխատում է Քաբուլի հասարակական

կազմակերպության հետ, և նրանք պատռված շրթունքների, արկերից և բեկորներից առաջացած դիմային վերքերի մասնագիտացմամբ երեխաների հետ աշխատելու համար պլաստիկ վիրաբույժ են փնտրում: Ես անմիջապես համաձայնվեցի: Մտադիր էի մնալ երեք ամիս, մեկնեցի 2002 թվականի գարնան վերջին ու էլ տուն չվերադարձա:



Թալիան դիմավորեց ինձ նավահանգստում: Կանաչ բրդե շարֆով էր և դժգույն վարդագույն վերարկուով՝ բրոյա սվիտերի ու ջինսի վրայից հագած: Մազերը երկար էին, ուսերին փռված: Մեջտեղից բացած մազերը լրիվ սպիտակ էին, և դա ինձ ավելի էր վշտացնում, քան նրա դիմային արատը: Դա զարմանալի չէր, քանի որ Թալիայի մազերը սկսել էին ձերմակել դեռ երեսունից հետո, և քառասուն տարեկանում ամբողջովին սպիտակ էին: Ես գիտեի, որ ես էլ եմ փոխվել: Փորս մեծացել էր ու մի քիչ կախվել, իսկ մազերիս եզրագիծը հետզհետե նահանջում էր: Մարդու ֆիզիկական կաղապարի քայքայումը աստիճանական է, նույնքան աննկատ, որքան ավերիչ: Թալիայի ձերմակ մազերը բացահայտ ապացույցն էին նրա, որ Թալիան հաստատուն քայլերով շարժվում է դեպի ծերություն, և ես էլ՝ նրա հետ:

— Կմրսես,— ասաց Թալիան՝ շարֆը վզին փաթաթելով: Հունվար էր, և ամպերով ծածկված երկինքը գորշ երանգ էր ստացել: Սառը քամին չորացած ու ճնռված տերևները փորձում էր աղմուկով պոկել ձյուղից:

— Թե իրական ցուրտ ես ուզում, արի՛ Բաբուլ,— ասացի ես՝ վերցնելով ճամպրուկը:

— Ըստրություն կատարիր, բժիշկ, ավտոբուսով ենք գնալու, թե ոտքով, որոշիր:

— Արի քայլենք,— ասացի ես:

Եվ մենք քայլեցինք դեպի հյուսիս: Անցնում էինք Թինոս քաղաքի միջով, ուր ներքին նավահանգստում զմռսված մնացել էին առագաստանավերն ու զբոսանավերը: Թերթի կրպակներում վաճառվում էին բացիկներ և անթև վերնաշապիկներ: Մարդիկ ունայ-ունայ

սուրճ էին խմում կլոր սեղանիկների շուրջը բացօթյա սրճարաններում՝ թերթ էին կարդում ու շախմատ էին խաղում: Մատուցողները նախաճաշի սպասքն էին դասավորում սեղաններին: Մի երկու ժամից տապակած ձկան հոտ էր գալու բոլոր խոհանոցներից:

Թալիան սկսեց ոգևորված պատմել, որ սպիտակ բունգալոների մի համալիր պիտի կառուցվի Թինոսի հարավում: Տներից լավ տեսարան է բացվելու Մուկենասի և Էգեյան ծովի վրա: Ենթադրվում է, որ այդ տները նախատեսված են զբոսաշրջիկների և հարուստ այցելուների համար, որոնցով 1990-ից հեղեղված էր կղզին: Թալիան ասաց, որ յուրաքանչյուր տան համար նախատեսված են լողավազան և մարզական կենտրոն:

Տարիներ շարունակ Թալիան ինձ էլեկտրոնային նամակներ էր ուղարկում՝ տեղեկացնելով Թինոսում կատարված փոփոխությունների մասին: Ափի վրա բարձրացած հյուրանոցներ՝ արբանյակային ալեհավաքներով և արագ համացանցով, բարեր և գիշերային ակումբներ, փոքր ռեստորաններ և խանութներ, որոնք սպասարկում էին զբոսաշրջիկներին: Կղզիով մեկ վխտացող մեքենաներ, տաքսիներ, ավտոբուսներ: Լողափին պառկած օտարազգի կանայք: Ֆերմերների ավանակներին փոխարինել էին փոքր բեռնատարները: Իհարկե, այն ֆերմերների, որոնք մնացել էին կղզում: Նրանցից շատերը հեռացել էին, և միայն մի քանիսն էին հետ եկել թոշակից հետո այստեղ ապրելու:

— Օդին այնքան էլ գոհ չէ,— ասաց Թալիան՝ անդրադառնալով վերջին փոփոխություններին:— Նա ինձ գրել էր այդ մասին, տարեց կղզիաբնակները կասկածանքով էին վերաբերվում նորաբնակներին և նրանց բերած փոփոխություններին:

— Բայց դու կարծես դեմ չես,— ասացի ես:

— Չի կարելի կանգնեցնել այն, ինչն անխուսափելի է,— ասաց Թալիան ու ավելացրեց.— Օդին է ինձ ասում. «Ավելի շուտ դու կարող ես ասել դա, Թալիա՛: Դու այստեղ չես ծնվել»:

Նա բարձր լիաթոք ծիծաղեց.

— Ես կարծում էի, որ Թինոսում քառասունչորս տարի ապրելուց հետո ես նվաճել եմ այդ իրավունքը:

Թալիան նույնպես փոխվել էր: Նույնիսկ վերարկուով ակնհայտ

էր, որ նա գիրացել էր ազդրերի շրջանում, հաստիկկացել. ոչ թե փափուկ կլորացել, այլ իրապես գիրացել: Խոսելաձևի մեջ թաքնված ծաղր կար, այդպես նա խոսում էր այն բաների մասին, որոնք համարում էր անհմաստ ու անտեղի: Աչքերի փայլը, նույն այդ լիաթոք ծիծաղը, կարմիր այտերը նրան ֆերմերի կնոջ տեսք էին տալիս: Իրական հողի ու ջրի կին էր դարձել, ում առողջ մտերմիկությունը զուգակցվում էր հեղինակավոր և կոշտ վճռականության հետ, որին անհնար էր ընդդիմանալ:

— Գործերը ղնց են,— հարցրի ես:— Դեռ աշխատում ես:

— Դե, որտեղ պատահի,— ասաց Թալիան:— Ինքդ գիտես, թե ինչ ժամանակներ են:

Մենք երկուսս էլ գլուխներս թափահարեցինք: Քարույում լսում էի տնտեսական սահմանափակման միջոցառումների մասին: CNN-ով տեսել էի խոշովության կադրեր, դիմակավորված երիտասարդները քարեր էին շարտում ոստիկանների վրա խորհրդարանի շենքի առաջ, իսկ ոստիկաններն իրենց հերթին գործարկում էին արցունքաբեր գազ՝ ճոճելով մահակները:

Թալիայի գործը բառի լայն իմաստով բիզնես չէր: Թվայնացման դարաշրջանից առաջ նա կանչով այցելում էր մարդկանց տներ և տեղադրում էլեկտրական տրանզիստորներ նրանց հեռուստացույցների մեջ և փոխում հին մոդելի ռադիոընդունիչների ազդանշանային ուժեղացուցիչները: Նաև նորոգում էր սառնարանների թերմոստատները և զոդում ծակ խողովակները: Մարդիկ նրան վճարում էին այնքան, ինչքան կարողանում էին: Եթե չէին կարողանում վճարել, Թալիան, միևնույնն է, անում էր ամեն ինչ:

— Ես փողի կարիք չունեմ,— ասում էր նա:

— Ինձ դուր է գալիս հենց գործը: Ես սիրում եմ ուսումնասիրել, թե ինչպես են աշխատում տարբեր սարքերը:

Այդ օրերին նա միայնակ ասես անկախ գործող տեղեկատվական տեխնոլոգիաների մի ամբողջ բաժանմունք լիներ, և բոլոր գիտելիքները ստացել էր ինքնակրթությամբ: Նա անտիվիրուս էր տեղադրում համակարգչային ծրագրերում, փոխում էր IP հասցեները, օգնության էր հասնում, երբ համակարգիչը կախում էր, դանդաղ էր աշխատում կամ ծրագրերի նորացման խնդիր ուներ:

ես ինքս էլ զանգում էի նրան Քարուլից, որ նա օգնի ինձ աշխատեցնել իմ IBM-ը:

Տուն հասանք և կանգնեցինք բակում՝ ձիթենու ծառի մոտ: Ես տեսա մորս աշխատանքային տենդի արդյունքները՝ ներկած պատերը, կիսակառույց աղավաատունը, մուրճը և մեխերի տուփը:

— Ինչպե՞ս է նա,— հարցրի ես:

— Փշոտ է, ինչպես միշտ, դրա համար էլ տեղադրել եմ, այ, սա:— Եվ Թալիան մատնացույց արեց կտուրի արբանյակային ալեհավաքը:

— Մենք դիտում ենք օտարերկրյա սերիալներ: Արաբական սերիալները ամենալավն են կամ ամենավատը, որովհետև այս դեպքում դա նույնն է: Մենք փորձում ենք գուշակել դեպքերի զարգացումը, և մայրդ ճանկերն ինձնից հեռու է պահում:

Նա մտավ տուն:

— Բարի գալուստ, Մարկոս, հիմա ուտելու բան կպատրաստեմ:



Տարօրինակ զգացողություն էր նորից լինել այս տանը: Մի քանի անձանոթ առարկաներ ընկան աչքովս՝ մոխրագույն կաշվե բազկաթոռ և հեռուստացույցի կողքի սեղանիկը: Բայց հիմնականում ամեն բան նույնն էր մնացել: Խոհանոցային հին սեղանիկը ծածկված էր նոր մոմլաթով, որի վրա պատկերված էին բադրիջաններ և տանձեր, ուղիղ թիկնակներով բամբուկե աթոռը, հին նավթալամպը՝ հյուսած պատյանով, լաքապատ ծխնետույզը՝ ծխից սևացած, և իմ ու մորս նկարը, որտեղ ես սպիտակ վերնաշապիկով եմ, իսկ մայրս՝ տոնական զգեստով, որը դարձյալ կախված էր հյուրասենյակում՝ բարձր դարակի վրա, նույն տեղում էր նաև ճենապակյա սպասքը:

Բայց, մեկ է, ճամպրուկս ցած դնելով, ես տան մեջ մի անդնդածին դատարկություն զգացի: Տասնամյակները, որ Թալիան ու մայրս ապրել են այստեղ, ինձ համար մութ, անհայտ ու ամեհի տարածություն են: Ես բացակա էի: Ես ներկա չէի այն պահին, երբ մայրս ու Թալիան ճաշում էին այս սեղանի մոտ, և տեղակ չէի, երբ նրանք ծիծաղում, վիճում, ճանձրանում էին միասին, երբ հիվանդանում և կազդուրվում էին: Ես մասնակից չէի ծեսերի շարաններին, որոնք և

կազմում են կյանք կոչվածը: Մանկության բնակավայր կատարած իմ այցելությունը շվարեցրեց ինձ, կարծես կարդում էի վաղուց սկսած և մի կողմ դրած վեպի վերջին էջերը:

— Ձվածեղ կուտե՞ս,— հարցրեց Թալիան՝ հագնելով գոգնոցն ու թավայի մեջ յուղ լցնելով:

Նա ճարպիկ շարժվում էր խոհանոցում՝ տիրուհու պես:

— Իհարկե, իսկ մաման որտե՞ղ է:

— Քնած է, դժվար գիշեր է անցկացրել:

— Արագ նայեմ, գամ:

Թալիան ջեռոցից հանեց ծխափայտիկը:

— Եթե արթնացնես մայրիկին, ինձ պիտի պատասխան տաս, պարոն բժիշկ:

Ես մատներիս ծայրերին բարձրացա ննջարան: Սենյակում մութ էր, և միայն մի շերտ լույս էր թափանցում քաշած վարագույրներից ու շեղակի ընկնում մորս մահճակալին: Սենյակում ծանրացել էր հիվանդության հոտը, որը կարծես ոչ թե հոտ, այլ ֆիզիկական ներկայություն լիներ: Ամեն բժիշկ ծանոթ է այդ հոտին, որը սենյակ է թափանցում գոլորշու պես: Ես կանգնեցի սենյակի նախամուտքում, մինչև աչքերս սովորեցին մթին: Միայն մահճակալի մյուս կողմի դարակի վրա՝ իմ նախկին քնելու տեղի մոտ, դրված էր թվային լուսավորված շրջանակը, որի վրա պատկերված էին բրնձի դաշտերի քառակուսիները, փայտյա տնակները, ուր գորշավուն կղմինդրածածկ կտուրները թեքվում էին դեպի մարդաշատ շուկան, կեռիկներից կախված էին մաշկազերծված այծերի լեշերը, իսկ հետին պլանում կեղտոտ հոսանքի վրա կռացած մարդը մատով լվանում էր ատամները:

Ես աթոռը քաշեցի և նստեցի մայրիկիս մահճակալի մոտ: Նայում էի նրան (աչքերս արդեն սովորել էին մթին), և ներսս փուլ էր գալիս: Սարսափած էի՝ տեսնելով, թե մայրս ինչքան է նիհարել: Ահավոր շատ: Ծաղկավոր գիշերազգեստը կախվում էր նրա նեղ ուսերից և գնդվում տափակած կրծքի շուրջը: Քնած էր բաց բերանով, գլուխը թեքած, կարծես վատ երազ էր տեսնում: Տեսած էր տեսնել, թե ինչպես էր նրա ատամնային պրոթեզը դուրս պրծել բերանից, և ինչպես են թրթռում ակնակապիճները: Ես նստեցի որոշ ժամանակ՝

շարունակաբար ինքս ինձ հարց տալով՝ իսկ ինչ էիր սպասում, որ լիներ... Սենյակում լսվում էր ժամացույցի տկտկոցը, ներքևից գալիս էր թավային քսվող գոպալի զնգոցը: Սենյակում մորս շրջապատող իրերն էին՝ պատին միացված հեռուստացույցը, անկյունում դրված համակարգիչը և գիշերային սեղանիկին ծվարած անավարտ սուդոկու խաչբառը, որի վրա դրված էին ակնոցը, հեռակառավարման վահանակը, ստերոիդ կրեմի սրվակը և ատամնային պրոթեզի սոսինձը, դեղահաբերի սրվակը, հատակին՝ մոխրագույն փափլիկ հողաթափերը: Այսպիսի հողաթափեր մայրս երբեք չէր հագել: Հողաթափերի կողքին դրված էր տակդիրների կիսաբաց տուփը: Այդ փոխնորդ տակաշորերն ու հողաթափերն այնքան չէին կապվում մորս բնույթի հետ, որ ամբողջ էությունս հակառակվում էր դրան: Կարծես այդ իրերը մեկ ուրիշին պատկանեին: Մի անվասա ու պարապ օտար մարդու, ում վրա բարկանալ չէր կարելի:

Անկյունում դրված փոփոխվող լուսանկարների էկրանը դարձյալ փոխվեց՝ գրավելով ուշադրությունս, և ես հանկարծ հասկացա, որ դրանք իմ արած լուսանկարներն էին: Ես դրանք արել էի, Աստված գիտի, թե երբ, այն ժամանակ, երբ թափառում էի երկրագնդով: Ես միշտ նկարների երկու պատճեն էի հանում, մեկը ուղարկում էի Թալիային: Նա պահպանել էր այդ նկարները: Այդքան տարիներ անց: Սերը մեղրաջրի պես ողողեց ինձ: Իմ իրական քույր, իմ ճշմարիտ Մանաարն էր նա եղել այս տարիների ընթացքում:

Թալիան ներքևից ինձ ձայն տվեց:

Ես տեղիցս վեր կացա: Սենյակից դուրս գալիս մի բան ընկավ աչքովս: Ինչ-որ մի շրջանակված բան էր կախված ժամացույցի տակ: Մթության մեջ սկզբում չկարողացա հասկանալ, թե ինչ է դա: Բացեցի բջջային հեռախոսս և դրա լույսի տակ նայեցի: Դա Քարուլում արած իմ աշխատանքի էլեկտրոնային պատմության տարբերակն էր: Հիշում եմ այդ հարցազրույցը: Լրագրողը կրեական ծագումով մի հաճելի ամերիկացի էր, որը թեթև կակազում էր: Մենք երկուսով մի ափսե քարուլի կերանք. աֆղանական փլավի մի տեսակ է՝ չամչով և գառան մսով: Այդ պատմությանը կցված էր մի խմբակային լուսանկար: Նկարի վրա ես եմ, մի խումբ երեխաներ, իսկ հետևի պլանում կանգնած է Նաբին՝ կաշկանդված,

ձեռքերը հետևում ագուցած: Նաբիի հայացքը միաժամանակ արտահայտում է վախ, անոթխածություն և արժանապատվություն, որ շատ բնորոշ կեցվածք է աֆղանների համար: Ամրան էլ էր նկարի վրա, իր որդեգրած դստեր՝ Ռոշիի հետ: Բոլոր երեխաները նկարում ժպտում էին:

— Մարկոս:

Ես փակեցի բջջային հեռախոսս և իջա ներքև:

Թալիան սեղանին դրեց մի բաժակ կաթ և պոմփոռով տաք ձվածեղ:

— Մի՛ անհանգստացիր: Կաթի մեջ արդեն շաքար եմ լցրել:

— Լավ հիշում ես:

Թալիան նստեց՝ առանց գոգնոցը հանելու: Արմունկները սեղանին դրած՝ նայում էր, թե ինչպես եմ ես ուտում՝ մերթընդմերթ թաշկինակով սրբելով ձախ այտը:

Ամբողջ ժամանակ ես փորձում էի համոզել Թալիային, որ նա թույլ տա իր դեմքի վրա վիրահատական միջամտություն կատարել: Կրկնում էի, որ 1960-ական թվականներից վիրահատական տեխնոլոգիաները զարգացել են: Ես վստահ էի, որ կարող էի լրջորեն բարելավել նրա արտաքինը, եթե ոչ լրիվ վերացնել նրա արատը: Ի զարմանս՝ ինձ Թալիան մերժեց ինձ:

— Ես այսպիսին եմ,— ասաց նա: Դա մի անդամ և ոչինչ չասող պատասխան էր: Իմ կարծիքով: Ինչ էր այդ ամենը նշանակում: Ես չէի հասկանում: Ինձ համակել էին անմխիթար մտքեր բանտարկցում փակված կալանավորների մասին, որոնք ցմահ բանտարկված են և վախենում են դուրս գալ բանտախցից, վախենում են, որ ինչոր մեկը կխոսի իրենց հետ, սարսափում են փոփոխությունից և նոր կյանքի հեռանկարից, այն կյանքի, ուր չկան սուր փշալարեր և աշտարակների վրա կանգնած զինված պահակներ:

Իմ առաջարկը Թալիային ցայսօր ուժի մեջ էր, թեպետ ես գիտեի, որ նա այն չէր ընդունելու: Սակայն հիմա ես նրան հասկանում էի: Նա ճիշտ էր: Նա հենց այնպիսին էր, ինչպիսին կար: Չեմ էլ կարող պատկերացնել, թե ինչ էր Թալիայի համար ամեն օր հայելու մեջ իր դեմքը տեսնելը և այդ սարսափազդու ավերածության հետ կամային ճիգով համակերպվելը: Դա գերմարդկային լարվածու-

թյուն է, անասելի ջանք ու համբերություն, երբ մարդու համակերպումը աստիճանաբար ձևավորվում է տարիների ընթացքում, ինչպես ծովաժայռի հիմքը՝ ալեբախությունների հարվածների ներքո: Շունը մի քանի րոպեում այլանդակեց Թալիայի դեմքը, և մի կյանք պահանջվեց, որ Թալիան համակերպվի իր ինքնության հետ: Եվ այժմ նա չէր ուզում վիրաբուժական դանակի օգնությամբ զրկվել իր նոր ձեռք բերած ինքնությունից, որովհետև հին սպիացած վերքին կավելանար մի նոր վերք:

— Ես այսորժակով սկսեցի ուտել ձվածեղը, գիտեի, որ Թալիան կուրախանա, թեպետ այդքան էլ քաղցած չէի:

— Համով է, Թալիա՛:

— Դե, շատ ոգևորված ես կարծես:

— Ինչ նկատի ունես:

Թալիան ձգվեց և բացեց խոհանոցի պահարանի դարակներից մեկը և հանեց արևային ակնոց՝ եռանկյունաձև ապակիներով: Եվ ես հիշեցի, որ արևի խավարում է սպասվում:

— Սկզբում,— ասաց Թալիան,— ես կարծում էի, որ ուղղակի դիտանցքից կնայենք, բայց երբ Օդին տեղեկացրեց, որ դու գալիս ես, ես ինքս ինձ ասացի, որ ամեն ինչ պետք է անել հավուր պատշաճի:

Մենք մի քիչ էլ խոսեցինք արևի խավարման մասին, որ պիտի տեղի ունենար հաջորդ օրը: Թալիան ասաց, որ այն կլինի առավոտյան կամ կեսօրին: Սկսեց նայել եղանակի կանխատեսումները և, ուրախացած, որ խավարման օրը ամպամածություն չի լինելու, հարցրեց՝ էլի ձվածեղ ուզում եմ, ես ասացի՝ այո՛: Հետո Թալիան ասաց, որ պարոն Ռուսոսի խանութի տեղում ինտերնետ-սրճարան են սարքել:

— Ես տեսա նկարները վերևում,— ասացի ես:— Հոգվածն էլ:— Թալիան ափով սրբեց հացի փշրանքները և առանց նայելու, ուսի վրայով շարտեց լվացարանի մեջ:

— Ա՛հ, նկարների դեպքում բավականին հեշտ էր դրանք սկանավորել և ներբեռնել: Ա՛յ, դժվար էր դասակարգել դրանք ըստ երկրների: Ես ստիպված էի մտածել և ենթադրություններ անել, որովհետև դու միշտ ուղարկում էիր նկարներ առանց գրառումներ-

րի: Իսկ նա անպայման ուզում էր տեսնել նկարները ըստ երկրների դասավորված: Հենց այդպես էր ուզում և պնդում էր:

— Ո՛վ էր պնդում:

Թալիան հոգոց հանեց:

— Ո՛վ,— ասաց նա,— Օդին, էլ ո՛վ: Դա նրա գաղափարն էր իհարկե, նաև հողվածը, նա էր հողվածը գտել համացանցում:

— Մաման փնտրում էր տեղեկություն իմ մասին համացանցում,— հարցրի ես:

— Այո՛: Ես նրան չափտի սովորեցնեի: Իսկ հիմա ոչինչ չի կարող նրան կանգնեցնել:

Թալիան քրքջաց:

— Ամեն Աստծո օր որոնում է քո մասին տեղեկություն համացանցում: Դու քո անձնական հետախույզն ունես, Մարկոս Վարվարիս:



Մայրս իջավ ներքև կեսօրին: Հազին բաղնիքի խալաթ էր և այն բրդոտ հողաթափերը, որ ես արդեն սկսել էի ատել: Երևում էր, որ մազերը կարգի է բերել: Թեթևություն զգացի, երբ տեսա, որ նա նուրբ շարժվում է, հանգիստ իջնում աստիճաններով: Քնատ ժպիտով պարզեց ձեռքերը և ողջագուրվեց ինձ հետ:

Մենք նստեցինք սեղանի մոտ՝ սուրճ խմելու:

— Թալիան որտե՞ղ է,— ասաց մայրս՝ փչելով սուրճը:

— Դուրս է եկել վաղվա համար որոշ պարագաներ գնելու:— Ցույց տվեցի իր բազկաթոռի մոտ գտնվող պատին հենած փայտը,— սա քոնն է, մայրիկ:— Երբ ներս էի մտել, չէի նկատել այդ գավազանը:

— Օ՛հ, ես հազվադեպ եմ այն օգտագործում: Վատ օրերին կամ երկար զբոսանքների ժամանակ: Այն էլ ապահովության համար:

Մի րոպե անտարբեր տոնից ես հասկացա, որ նա ավելի հաճախ է օգտագործում այդ գավազանը, քան փորձում է ներկայացնել:

— Ես քեզ համար եմ անհանգստանում, Մարկոս: Այդ սարսափելի երկրից վատ նորություններ են գալիս: Իսկ Թալիան թույլ չի տալիս՝ լսեմ այդ նորությունները: Ասում է, որ ես կնյարդայնանամ:

— Պատահարներ լինում են,— ասացի ես,— բայց այդ մարդիկ

հոգ չեն տանում իրենց անվտանգության մասին: Իսկ ես միշտ շատ զգույշ եմ, մայրիկ:

Ես, իհարկե, նպատակահարմար չգտա պատմելու նրան հյուրատան շուրջը հնչող կրակահերթերի մասին, նաև չասացի, որ օտարերկրացի հումանիտար առաքելությունների վրա հարձակումները շատացել են: Կամ որ «զգույշ» ասելով՝ ես նկատի ունեմ, որ հետո ման եմ տալիս ինը միլիմետրանոց փողով ատրճանակը, երբ գնում եմ քաղաք:

Մայրս մի ումպ սուրճ խմեց և ավելի կծկվեց: Ինձ չնախատեց, և դա լավ նշան չէր: Ես վստահ չէի՝ արդյո՞ք նա ծեր մարդկանց նման մեկուսացել և ամփոփվել է ինքն իր մեջ, թե՞ դա հատուկ մարտավարություն էր. ինձ անկյուն չէր քշում, որ ես չստեմ կամ չասեմ բաներ, որ կարող են վշտացնել իրեն:

— Շատ էինք սպասում, որ կգաս Ծննդյան տոներին:

— Չէի կարող աշխատանքս թողնել, մամա:

Նա գլխով արեց.

— Կարևորն այն է, որ դու հիմա այստեղ ես:

Ես սուրճս խմեցի և հիշեցի, որ երբ դեռ փոքր էի, ես ու մայրս լուռ ու գրեթե հանդիսավոր նախաճաշում էինք այս սեղանի մոտ ու հետո դպրոց գնում: Մենք շատ քիչ էինք խոսում միմյանց հետ:

— Գիտե՞ս, մամա, ես էլ քեզ համար եմ անհանգստանում:

— Կարիք չկա: Ես կարող եմ ինքս իմ մասին հոգ տանել:

Դեմքին փայլեց հանդուգն հպարտության կայծը, որ նման էր մառախուղը ձեղքող թույլ շողի:

— Բայց ինչքան դա կարող է տևել:

— Ինչքան որ կարող եմ:

— Իսկ ի՞նչ կլինի, եթե ի վիճակի չլինես:

Ես չէի ուզում հակադրվել մորս, հարցնում էի, որովհետև ինքս էլ չէի պատկերացնում ելքը: Եվ չգիտեի՝ այդ դեպքում ես ինչ դերակատարություն եմ ունենալու և արդյոք ընդհանրապես ունենալու եմ:

Մայրս ոչինչ չարտահայտող հայացքով նայեց ինձ: Մի գդալ շաքարավազ լցրեց սուրճի մեջ, խառնեց:

— Ծիծաղելի է, Մարկոս, բայց մարդիկ հիմնականում ամեն բան անում են թարսուշիտակ: Իրենց թվում է, որ ապրում են իրենց

ուզած կյանքով, բայց իրականում նրանց ուղղորդում է վախը: Եվ նրանք ապրում են իրենց չուզած կյանքով:

— Ասածդ չեմ կարող ընկալել:

— Ա՛յ, օրինակի համար դու: Այն, որ հեռացար տնից: Եվ քո կերտած կյանքը: Դու վախենում էիր այս կղզում փակված մնալուց: Վախենում էիր, որ ես քեզ արգելք կհանդիսանամ: Կամ էլ Թալիան: Նա մնաց այստեղ, որովհետև չէր ուզում, որ մարդիկ նայեն իրեն:

Նա փորձեց սուրճը և ավելացրեց ևս մի գդալ շաքարավազ: Իմ ներսում ես միշտ ինձ զգում էի իբրև մորս հեղինակության դեմ պայքարող փոքրիկ տղա: Բայց մայրս խոսում էր այնպես, որ հնարավորություն չէր թողնում իրեն հակառակվելու: Նա ինձ հեղեղում էր ծշմարտությամբ, հենց սկզբից ասում էր դա ամենապարզ, ուղիղ և իրավացի կերպով: Եվ ես նախօրոք պարտված էի՝ մի բառ անգամ ասելու հնարավորություն չունենալով, և դա անդադար էր:

— Իսկ դո՞ւ, մայրիկ,— հարցրի ես,— դու ինչից ես վախենում: Եվ ի՞նչ չես ուզում:

— Ես չեմ ուզում բեռ լինել:

— Դու բեռ չես լինի:

— Ա՛յ, այստեղ դու ճիշտ ես, Մարկո՛ս:

Այդ բառերը խորքային իմաստ ունեին, ես անհանգստացա: Հիշեցի նամակը, որ Նաբին հանձնել էր ինձ Քաբուլում, հիշեցի նրա հետմահու խոստովանությունը, ուր նա պատմում էր իր և Սուլեյման Վահդատիի գաղտնի պայմանավորվածության մասին: Միգուցե մայրս էլ նման մի պայմանավորվածություն ուներ Թալիայի հետ, և Թալիան պետք է գործեր, երբ զգար, որ ժամանակը եկել է: Թալիան կարող է դա անել: Նա ուժեղ է: Նա կարող է փրկել մորս:

Մայրս ուսումնասիրում էր դեմքս:

— Դու քո կյանքն ունես և քո աշխատանքը,— ասաց նա ավելի մեղմ՝ փոխելով խոսակցության թեման, կարծես թափանցել էր մտքերիս մեջ և զգացել էր իմ անհանգստությունը: Ատամնային պրոթեզը, տակդիրներն ու հողաթափերը ապակողմնորոշել էին ինձ: Մայրս միշտ վերահսկում էր իրավիճակը: Հիմա՝ նույնպես:

— Մարկո՛ս, ես չեմ ուզում քեզ համար բեռ դառնալ:

Վերջին նախադասությունը սուտ էր և շատ բարի սուտ: Նա չէր

կարող ինձ համար բեռ դառնալ: Երկուսս էլ հրաշալի գիտեինք այդ մասին: Ես ապրում էի հազարավոր մղոններ հեռու և բացակա էի նրա կյանքից: Ողջ տհաճությունը, լարվածությունն ու ծանր, միալար աշխատանքն ընկնելու էին Թալիայի ուսերին: Բայց մայրս հիշատակում էր ինձ՝ պարզևելով մի բան, որը ես չէի վաստակել:

— Այդպես չի լինի,— ասացի ես ցածր ձայնով:

Մայրս ժպտաց:

— Դե, ինչ վերաբերում է քո աշխատանքին, դու քաջ գիտես, որ ես բնավ չէի ուզում, որ դու գնաս աշխատելու այդ երկրում:

— Այո՛ր, կարծում եմ՝ այո՛ր:

— Ես չէի կարող հասկանալ, թե ինչու դու պիտի գնաս՝ թողնելով քո բժշկական պրակտիկան, եկամուտը և Աթենքի տունը, այն ամենը, ինչ դու վաստակել ես: Ինչո՞ւ պիտի ծվարես այդ վտանգավոր տեղում:

— Ես իմ պատասխաններն ունեի:

— Գիտեմ,— մայրս բաժակը մոտեցրեց շրթունքին, բայց չխմեց սուրճն ու իջեցրեց բաժակը:— Ես այնքան էլ ունակ չեմ նման բաներ ասելու,— ասաց նա դանդաղ, կարծես ամաչելով,— բայց կփորձեմ ասել քեզ, որ լավ մարդ դուրս եկար, և ի վերջո ես հպարտանում եմ քեզնով, Մարկոս:

Ես հայացքս ցած իջեցրած ուսումնասիրում էի ձեռքերս և զգում էի, թե ինչպես են մորս խոսքերը թափանցում հոգուս խորքը: Նա ինձ հանկարծակիի բերեց: Ես անպատրաստ էի լսելու այն, ինչ նա ասաց, տեսնելու նրա աչքերի մեղմ առկայծումը: Ես շփոթված էի և չգիտեի՝ ինչ ասել ի պատասխան:

Ի վերջո մի կերպ մոթմոթացի.

— Շնորհակալ եմ, մայրիկ:

Ավելին անզոր էի արտաբերել, և մենք որոշ ժամանակ լուռ նստած էինք, իսկ օդը մեր շուրջը խտացել էր անհարմարության զգացումից և գիտակցությունից, որ մենք բաց ենք թողել մեր բոլոր հնարավորությունները:

— Ուզում էի քեզ մի բան հարցնել:

— Ինչ:

— Ջեյմս Փարքինսոն, Ջորջ Հանթինգթոն, Ռոբերտ Գրեյվզ,

Ջոն Դաուն, հիմա էլ իմ բարեկամ Լու Գեիրիզը. ինչպե՞ս է տղամարդկանց հաջողվում սեփականաշնորհել նույնիսկ հիվանդությունների անունները:

Ես թարթեցի, մայրս աչքով արեց, և մի վայրկյան անց երկուսս էլ սկսեցինք քրքջալ, թեպետ հոգիս տակնուվրա էր լինում ցավից:



Հաջորդ առավոտ մենք, աթոռների վրա կիսապառկած, սուրճ էինք վայելում և ուտում դարչինով համեմված սերկևիլ, որ Թալիան գնել էր հատուկ այսօրվա համար: Մաման հաստ շարֆով ու մոխրագույն բաձկոնով էր, ոտներին փռված էր ոչխարի բրդից վերմակ՝ ցուրտ քամուց պաշտպանվելու համար: Արևի խավարումը դիտելու համար նախատեսված ակնոցներն աչքներիս՝ նայում էինք երկնքին: Արևի հյուսիսային կողմի շրջագիծը աներևույթ էր դարձել, և արևը նմանվել էր «Apple» ընկերության լոգոյին՝ պատկերված Թալիայի լափթոփին, որը նա ժամանակ առ ժամանակ բացում էր և մեկնաբանություններ էր թողնում օնլայն ֆորումում: Փողոցի երկայնքով մարդիկ տեղավորվում էին մայթերին և կտուրներին՝ տեսարանը դիտելու համար: Ոմանք իրենց ընտանիքի անդամներին տարել էին կղզու մյուս ծայրը, որտեղ հունական աստղագիտական միավորումը հեռադիտակներ էր տեղադրել:

— Երբ է լինելու լրիվ խավարումը:

— 10-ն անց 30-ի մոտ,— ասաց Թալիան, հանեց ակնոցը և նայեց ժամացույցին,— մոտ մեկ ժամից:

Նա ոգևորված շփեց ձեռքերը և սկսեց ինչ-որ բան շարել իր համակարգչի ստեղնաշարին...

Ես նայում էի մորս և Թալիային: Մայրս, մուգ ակնոցը դրած, դուրս պրծած երակներով ձեռքերը խաչել էր կրծքին: Թալիան կայծակնային արագությամբ թմբկահարում էր ստեղնաշարին. նրա ճերմակ մազերը դուրս էին թափվել գլխարկի տակից:

«Դու լավ մարդ դուրս եկար, Մարկոս»:

Նախորդ գիշեր բազմոցին պառկած՝ վերհիշում էի մորս խոսքերը և մտածում Մադելինի մասին: Երբ փոքր էի, բարկանում էի, որ մայրս չի պահում իրեն ուրիշ մայրերի պես: Չի բռնում ձեռքս

գրոսանքի ժամանակ: Չի նստեցնում ինձ ծնկներին, քնելուց առաջ հեքիաթներ չի կարդում և չի համբուրում: Եվ, իհարկե, ես իրավացի էի, բայց միևնույն ժամանակ չէի ուզում նկատել այն մեծ ժճարտությունը, որ այդպես էլ մնաց իմ վշտերի քողի տակ՝ չընդունված ու չգնահատված: Եվ այդ ժճարտությունը կարելի էր ձևակերպել այսպես. մայրս իմ կողքին էր լինելու միշտ: Դա մի մեծ պարգև էր ինձ համար, մի անբեկանելի ժճարտություն՝ այն, որ մայրս երբեք չէր վարվի այնպես, ինչպես Մադելինը: Նա իմ մայրն էր, և նա երբեք ինձ չէր լքելու: Ես դա ընդունում էի իբրև բնատուր պարգև, և մտքովս չէր անցնում շնորհակալություն հայտնել մորս դրա համար, ինչպես մարդու մտքով չի անցնում շնորհակալ լինել արեգակին երկնքում շողալու համար:

— Հապա նայե՛ք, — բացականչեց Թալիան:

Հանկարծակի մեր շուրջն ամենուր՝ գետնին, պատերին և հագուստներին, սկսեցին բյուրեղանալ լույսի ծվեններ, իսկ կիսալուսնաձև արևը լույս էր սփռում ձիթենու տերևների արանքից: Մի կիսալուսին կայծկլտում էր սուրճի բաժակի մեջ, մյուսը թրթռում էր կոշիկներիս քուղերի մոտ:

— Ձեռքերդ ցնց տուր, Օդի՛, — ասաց Թալիան, — արագ:

Մայրս բարձրացրեց ձեռքերը՝ ափերը վեր պարզած: Թալիան հանեց գրպանից քառակուսի կտրված մի ապակի և պահեց մորս ձեռքերի մոտ: Կիսալուսնաձև ծիածաններ սկսեցին պարել մորս ձեռքերի կնճռապատ մաշկի վրա: Նա շփոթմունքից հոգոց հանեց:

— Նայի՛ր, Մարկո՛ս, — ասաց մայրս լայն ժպիտով, ոգևորված դպրոցականի հիացմունքով:

Ես երբևէ նրա դեմքին նման բաց ու թափանցիկ ժպիտ չէի տեսել: Մենք նստած էինք երեքով, նայում էինք թրթռացող ծիածաններին, և ես վերագտնում էի իմ հին ցավն ու տխրությունը, որ ճանկերի պես խրվել էին կոկորդիս մեջ:

«Դու լավ մարդ դարձար: Ես քեզնով հպարտանում եմ, Մարկո՛ս»:

Ես հիսունհինգ տարեկան եմ և ամբողջ կյանքս սպասել եմ այդ խոսքերին: Արդյո՞ք արդեն ուշ էր մեզ համար: Արդյո՞ք ես ու մայրս չէինք վատնել մեր հնարավորությունները: Իմ մի կեսը մտածում էր

շարունակել նույն կերպ, ինչպես եղել է՝ ցույց չտալով, թե ինչքան վատ ենք մենք վարվել միմյանց հանդեպ: Դա այդքան ցավոտ չէր լինի: Ավելի լավ էր, քան այս ուշացած բացահայտումները: Դողդոջուն, փխրուն տեսլականն այն հարաբերությունների, որ կարող էին լինել իմ ու մորս միջև: Դա բերելու էր միայն ափսոսանքի: Իսկ ինչ լավ բան կա ափսոսանքի մեջ: Այն ոչնչի չի բերում, և մեր կորուստը անդառնալի կլինի:

Բայց երբ մայրս ասաց՝ «Մի՞թե սա գեղեցիկ չէ, Մարկոս», ես արձագանքեցի անմիջապես՝ «Այո՛, մամա՛, այո՛, դա հրաշալի է»: Կարծես մի բան փուլ եկավ ներսումս, և ես ձգվեցի ու բռնեցի մորս ձեռքը:

Մայրս հարցրեց՝ «Ինչու՞ ես ասում եմ, որ դու չես հասկացել, որ դու և ես միմյանց հանդեպ վատ ենք վարվել»:

«Ինչու՞ ես ասում եմ, որ դու չես հասկացել, որ դու և ես միմյանց հանդեպ վատ ենք վարվել»:

«Ինչու՞ ես ասում եմ, որ դու չես հասկացել, որ դու և ես միմյանց հանդեպ վատ ենք վարվել»:

«Ինչու՞ ես ասում եմ, որ դու չես հասկացել, որ դու և ես միմյանց հանդեպ վատ ենք վարվել»:

«Ինչու՞ ես ասում եմ, որ դու չես հասկացել, որ դու և ես միմյանց հանդեպ վատ ենք վարվել»:

«Ինչու՞ ես ասում եմ, որ դու չես հասկացել, որ դու և ես միմյանց հանդեպ վատ ենք վարվել»:

«Ինչու՞ ես ասում եմ, որ դու չես հասկացել, որ դու և ես միմյանց հանդեպ վատ ենք վարվել»:

«Ինչու՞ ես ասում եմ, որ դու չես հասկացել, որ դու և ես միմյանց հանդեպ վատ ենք վարվել»:

«Ինչու՞ ես ասում եմ, որ դու չես հասկացել, որ դու և ես միմյանց հանդեպ վատ ենք վարվել»:

«Ինչու՞ ես ասում եմ, որ դու չես հասկացել, որ դու և ես միմյանց հանդեպ վատ ենք վարվել»:

«Ինչու՞ ես ասում եմ, որ դու չես հասկացել, որ դու և ես միմյանց հանդեպ վատ ենք վարվել»:

Ի ն ն ե ռ ո ռ դ

Ձ Մ Ե Ռ , 2010

Երբ փոքր աղջիկ էի, ես ու հայրս գիշերային մի ավանդույթ ունեինք: Ես քսանմեկ անգամ ասում էի՝ *Բիսմիլլահ*⁴², հայրս պառկեցնում էր ինձ և, բթամատն ու ցուցամատը պտղունց արած, գլխիցս հանում էր վատ երազները: Նրա մատները թռչում էին ձակատիցս դեպի քունքեր, խնամքով փնտրում էին ականջներիս հետևում և ծոծրակիս մոտ, և գլխիցս հանվող ամեն մղձավանջի հետ նա մի ձայն էր հանում, որ սովորաբար լինում է խցանը շից հանելիս՝ փոփ: Հետո բոլոր մղձավանջները հայրս հատիկ-հատիկ դասավորում էր ծնկներին դրված անտեսանելի պարկի մեջ և ամուր կապում պարկի բերանը: Իսկ հետո օդում բռնում էր լավ երազները, որ նրանք գան մղձավանջների փոխարեն: Նա գլուխը թափահարում էր, հոնքերը կիտում, աչքերը դեռ ու դեռ պտտեցնում, կարծես լարված ուզում էր որսալ մի հեռավոր երաժշտություն: Ես շունչս պահում էի և սպասում, թե երբ հորս դեմքին կփայլի ժպիտը, և նա երգեցիկ կասի՝ ահա, բռնեցի, և ավերը պարզած կսպասի, մինչև երազը կընկնի ձեռքերի մեջ ծառից պոկված թերթիկի պես: Քնքշորեն, շատ քնքշորեն հայրս ասում էր, որ կյանքի երջանիկ պահերը փխրուն են ու անցողիկ, և նա ավերը մոտեցնում էր ձակատիս ու գլխիս մեջ տեղադրում երջանիկ երազները:

— *Ինչ եմ այսօր տեսնելու երազում, Բարս:*

⁴² Բիսմիլլահ — Փառք Ալլահին:

— *Օ՛հ, այս գիշեր դու առանձնահատուկ լավ երազ ես տեսնելու,*— ասում էր Նա և սկսում պատմել: Հենց այդ պահին էլ հնարում էր պատմությունները: Իմ երազներից մեկում ես դառնում էի աշխարհահռչակ նկարիչ, իսկ մյուս երազում՝ թռչող գահին նստած կախարդական կղզու թագուհի: Մի երազ էլ հնարել էր իմ սիրած *Jell-O* քաղցրավենիքի մասին: Այդ երազում ձեռքի թեթև շարժումով ես կարող էի ամեն ինչ վերածել *Jell-O*-ի՝ դպրոցական ավտոբուսը, Էմփայր սթեյթ կենտրոնը և Նույնիսկ Խաղաղ օվկիանոսը: Բազմիցս իմ երազներում մոլորակը փրկում էի ընկնող երկնաքարից: Հայրս քիչ էր խոսում իր հոր մասին, միայն ասել էր, որ պատմություններ հնարելու տաղանդը ժառանգել է նրանից: Պատմում էր, որ երեխա ժամանակ հայրը երբեմն նստեցնում էր իրեն, երբ լավ տրամադրություն էր ունենում (իսկ դա հաճախ չէր պատահում), և պատմություններ էր հորինում ջինների և փերիների մասին:

Երբեմն ես էի սկսում հայրիկի համար երազներ որսալ: Նա փակում էր աչքերը, և ես ափերս սահեցնում էի նրա դեմքով, ճակատով, այտերով և ծակող բեղերի վրայով:

— *Եվ ի՞նչ եմ ես երազում տեսնելու,*— շնջում էր հայրս՝ ձեռքերս բռնած: Եվ լայն ժպտում էր: Որովհետև վաղօրոք գիտեր երազս: Ինքն ու իր քույրը պառկած էին ծաղկած խնձորենու տակ և վայելում էին միջօրեի նիսժը: Արևը ջերմացնում էր նրանց այտերը, շողեր գցում խոտի վրա, և տերևները շրշում էին գլխավերևում:

Ես միակ երեխան էի և այդ պատճառով ինձ միայնակ էի զգում: Իմ ծնողները հանդիպել էին Պակիստանում, երբ քառասուն տարեկան էին և ցանկացել էին մեկ անգամ էլ փորձել իրենց բախտը: Հիշում եմ՝ ինչպես էի նախանձով նայում մեր հարևանների երեխաներին և իմ դպրոցական ընկերներին, որոնք քույր կամ եղբայր ունեին: Եվ նաև զարմանում էի, որ այդ երջանիկ քույրերն ու եղբայրները, իրենց բախտից անտեղյակ, վատ են վարվում միմյանց հետ: Կռվում էին չարածճի շնիկների պես: Կճմթում, խփում էին իրար և բողբոջում ծնողներին: Չէին խոսում իրար հետ: Ես չէի հասկանում դա, քանի որ տարիներ շարունակ երազում էի քույր կամ եղբայր ունենալ: Իսկ *ամենաշատը* ուզում էի ունենալ իմ երկվորյակը, որը կլացեր իմ կողքին օրորոցում, կքներ իմ կողքին, ինձ հետ կուրծք

կուտեր: Ուզում էի նվիրականորեն ու անձնուրաց սիրել նրան, ում մեջ կգտնեի իմ սեփական արտացոլումը:

Բաբայի փոքր քույրը՝ Փարին, դարձավ իմ գաղտնի ընկերուհին, ում կարող էի տեսնել միայն ես: Նա իմ քույրն էր, այն քույրը, որ ծնողներս այդպես էլ չպարզեցին ինձ: Մենք լուգասենյակի հայելու առաջ երկուսով մաքրում էինք մեր ատամները, երկուսով հագնվում էինք: Նա գալիս էր ինձ հետ դպրոց և նստում նույն նստարանին և ուղիղ նայում գրատախտակին: Աչքի պոչով ես տեսնում էի նրա սև մազերն ու սպիտակ կիսադեմը: Դասամիջոցներին մենք միասին իջնում էինք խաղահրապարակ, միասին սկավառակներ էինք նետում և ցատկոտում ձողերի վրա: Դասերից հետո ես, խոհանոցի սեղանի մոտ նստած, նկարում էի, իսկ նա համբերատար սպասում էր կամ նայում պատուհանից դուրս, մինչև ես վերջացնեմ, իսկ հետո մենք երկուսով վազում էինք ներքև՝ պարան խաղալու, և բակում ցատկոտում՝ տեսնելով, թե ինչպես են այդ պահին բակի բետոնի վրա խաչաձևվում մեր ստվերները:

Ոչ ոք չգիտեր, որ ես խաղում եմ Փարիի հետ, նույնիսկ հայրս: Դա միայն իմ գաղտնիքն էր:

Երբ կողքս մարդ չկար, մենք միասին խաղող էինք ուտում և երկար խոսում խաղալիքների, համով ապուրների, մուլտֆիլմերի, մեր չսիրած դասընկերների և վատ ուսուցիչների մասին: Երկուսս էլ սիրում էինք դեղին գույնը, բալի պաղպաղակը, «Ալֆ» հեռուստաշոուն, և երկուսս էլ ուզում էինք նկարիչ դառնալ: Ես գիտեի, որ մենք նույն արտաքինն ունենք, որովհետև մենք երկվորյակներ էինք: Երբեմն նույնիսկ ֆիզիկապես կարող էի տեսնել նրան, իրապես տեսնել *պերիֆերիկ տեսողությամբ*⁴³: Ես փորձում էի նկարել նրա դեմքը, և ամեն անգամ ստացվում էր, որ նա ունի տարբեր չափի կանաչ աչքեր՝ ծիշտ իմ աչքերի պես, իմ մազերի նման մուգ գանգուր մազեր և իրար միացած սև հոնքեր: Եթե մեկը հարցնում էր, ասում էի, որ դա ինքնանկար է:

Հորս քրոջ կորստի պատմությունը նույնքան լավ գիտեի, որ-

⁴³ Պերիֆերիկ տեսողություն — կենտրոնական տեսողությունից տարբերվող կողմնային տեսողություն:

քան մայրիկիս պատմությունները մարգարեի մասին. պատմություններ, որոնք ես հետո լսելու էի նաև Հեյվարդի մզկիթին կից կիրակնօրյա դպրոցում: Բայց Փարիի մասին ես պատրաստ էի լսելու նորից ու նորից և ամեն գիշեր խնդրում էի, որ հայրս պատմի այդ տխուր և ուշագրավ պատմությունը: Միգուցե պատժառն այն էր, որ մենք միևնույն անունն էինք կրում, և ես զգում էի մեր միջև ստեղծված աղոտ, անորոշ և անտեսանելի կապը: Բայց կար մի այլ բան. ես զգում էի Փարիի ազդեցությունն ինձ վրա, կարծես նրա հետ կատարվածը հետք էր թողել նաև իմ կենսագրության վրա: Մեզ միացրել ու շաղկապել էր մի անտեսանելի ձեռք, որը առաջացել էր մեր անուններից, ընտանեկան կապերից, կարծես երկուսով մենք կազմում էինք մի խճանկար:

Ես վստահ էի, որ Փարիի մասին պատմության մեջ ես կարող եմ գտնել ինձ բացահայտող հուշումներ:

— *Իսկ քո հայրը տառապում էր, որ վաճառել էր քրոջդ:*

— Մարդիկ կան, որ լավ թաքցնում են իրենց տխրությունը, Փարի: Նա այդպիսի մարդ էր: Նրա տեսքից անհնար էր ինչ-որ բան կռահել: Նա կոշտ մարդ էր: Բայց, այո՛, կարծում եմ ներքուստ նա շատ տխուր էր:

— *Իսկ դու տխուր ես:*

Հայրս ժպտաց ու ասաց:

— *Ինչո՞ւ պիտի տխուր լինեմ, երբ դու կաս:*

Բայց նույնիսկ այդ տարիքում հորս դեմքին ես զգում էի տխրության դրոշմը: Մենք զրուցում էինք, իսկ իմ երևակայությունը գործում էր: Ես պատկերացնում էի, որ փող եմ խնայում, ոչինչ չեմ գնում՝ ո՛չ կոնֆետ, ո՛չ պիտակներ, և ահա իմ դրամարկղիկը լցվում է, և դա արդեն խոզուկի տեսքով դրամարկղիկ չէ, այլ ժայռին նստած ջրահարս: Ես կոտրում եմ այն, վերցնում փողը և ճանապարհ ընկնում՝ հորս փոքր քրոջը գտնելու: Ես գիտեմ, որ դա կերջանկացնի հորս, և կյանքիս ամենամեծ ցանկությունը հորս տխրությունը փարատելն է:

— *Դե, ի՞նչ եմ տեսնելու երագունս,— հարցրեց հայրս:*

— *Դու արդեն գիտես:*

Նա ժպտաց:

— Այո՛, գիտեմ:

— Բարձա՛:

— Հը՛:

— Նա լան՛ք քույր էր:

— Նա հիանալի քույր էր:

Հայրս համբուրեց ինձ ու վերնակով ծածկեց: Լույսը հանգցնելուց առաջ նա կանգնեց մուտքում:

— Նա կատարյալ էր: Ճիշտ քեզ պես:

Ես արեցի այն, ինչ միշտ անում էի: Հենց հայրս փակեց դուռը, իջա մահճակալից, մի բարձ վերցրի ու դրեցի իմ բարձի կողքին, որ գիշերը քնելիս լսեմ երկվորյակ քրոջս սրտի բաբախյունը:



Նայեցի ժամացույցին և թեքվեցի Հին Օբլետիի ճանապարհով: Արդեն տասներկուսն անց կես էր: Քառասուն րոպեից պիտի հասնեի Սան Ֆրանցիսկոյի միջազգային օդանավակայան, եթե տրանսպորտային պատահար կամ ճանապարհային աշխատանքներ չլինեին: Դրական կողմն այն էր, որ դա միջազգային թռիչք էր, և մաքսակետն անցնելը կարող էր մի քիչ ժամանակ ձգել: Ես անցա ձախ գծով, և «Լեքսուսի» արագությունը հասցրի ութսունի:

Հիշեցի իմ ու Բաբայի մեկ ամիս առաջ հրաշքով տեղի ունեցած զրույցը, որը խելամտության մի քջքչան աղբյուր էր, թթվածնի մի ունյ մոռացության խոր, մութ, սառը օվկիանոսի խորքում: Ես նրա նախաճաշը ուշացրի, և նա, գլուխը թեքելով, իր հենաթիկնակից մեղմ քննադատությամբ արձանագրեց, որ ես գենետիկ ուշացող եմ.

— *Ճիշտ մորդ պես, Աստված հոգին լուսավորի:*— Հետո ժպտալով ինձ քաջալերելու համար ավելացրեց.— *Դե մարդ մի թերություն պիտի ունենա:*

— *Այսպիսով՝ սա պլանավորած թերությունն է, որ Աստված պարզևել է ինձ,*— ես հորս ծնկներին դրեցի ոչխարի մսով փլավը,— *թե՞ սովորական դանդաղկոտություն:*

— *Աստված դժկամությամբ պարզևեց քեզ այդ թերությունը,*— ասաց հայրս՝ բռնելով ձեռքս:— *Նա քեզ նախատեսել էր*

Իբրև կատարելություն:

— Դե, եթե ուզես ուրախությանը մի երկու թերություն էլ կասեմ քեզ:

— Շատ խորն ես թաքցրել դրանք:

— Խրձերով թերություններ ունեմ: Սպասում եմ, որ ջրի երես հասնեմ, երբ դու ծեր ու անօգնական լինես:

— Ես արդեն ծեր եմ ու անզոր:

— Հինա, հնչ է, ուզում ես, որ խղճսն քեզ:

Ես ռադիոյի ալիքներն էի փոխում՝ անցնելով հարցազրույցից քանթրի երաժշտության, հետո միացնում էի ջագի ալիքը և էլի վերադառնում հարցազրույցին: Ի վերջո անջատեցի ռադիոն: Ջղագրգիռ ու նյարդային էի: Վերցրի կողքիս նստարանին դրված բջջային հեռախոսը, տուն զանգեցի և սկսեցի խոսել:

— Բարև:

— Սալամ, Բաբա, ես եմ:

— Դո՛ւ ես, Փարի:

— Այո, Բաբա: Տանն ամեն ինչ նորմալ է, դու և Հեկտորը լավ եք: — Այո, նա հրաշալի երիտասարդ է: Ձու է խաշել երկուսիս համար: Կերել ենք բոված հացի հետ:

— Ես գնում եմ, մեքենայի մեջ եմ:

— Ռեստորանն ես գնում: Բայց այսօր հերթափոխի չես:

— Ո՛չ, Բաբա: Օդանավակայան եմ գնում: Պիտի մեկին դիմավորեմ:

— Լավ, այդ դեպքում մորդ պիտի խնդրեմ, որ նախաճաշ պատրաստի: Կարող է նաև պատվիրել ռեստորանից:

Ի թեթևություն ինձ՝ հայրս այլևս չհիշատակեց մորս անունը: Թեպետ շատ վատ օրեր էին լինում, երբ նա անընդհատ խոսում էր մորս մասին:

— Ինչի՞ չես ասում՝ որտեղ է մայրդ, Փարի: Վիրահատության է պատկել: Մի՛ ստիր: Ինչո՞ւ են բոլորն ինձ խաբում: Մայրդ գնացել է: Գնացել է Աֆղանստան: Ուրեմն ես էլ եմ գնում: Ես գնում եմ Քաբուլ, և ոչ ոք չի կարող կանգնեցնել ինձ:

Եվ այլևս ջուր ծեծելով, նույն բանը կրկնելով՝ Բաբան մտացրիվ քայլում էր սենյակում, իսկ ես փորձում էի շեղել նրա ուշադ-

րությունը տան հարդարանքի ամսագրերով կամ հեռուստաալիքներով: Երբեմն դա գործում էր, իսկ երբեմն հայրս չէր խաբվում իմ հնարքներով: Եվ շարունակում էր անհանգստանալ, մինչև ընկներ հիստերիայի մեջ ու սկսեր արտասվել: Գլխին էր խփում և, հենաթռռի վրա ճոճվելով, թափահարում էր ոտքերը: Ես ստիպված նրան հանգստացնող դեղահաբ էի տալիս: Սպասում էի, մինչև աչքերը մշուշվում էին, ինքս ուժասպառ և շնչակտուր ընկնում էի բազմոցին: Կարոտախտով նայում էի բաց դռանը և ուզում էի դռնից դուրս գալ և այդպես քայլել ու քայլել մինչև անվերջություն: Իսկ հետո Բաբան քնի մեջ հառաչ էր արձակում, և ես ունկնդրում էի՝ տառապելով մեղքի զգացումից:

— Կարո՞ղ եմ խոսել Հեկտորի հետ, Բաբա:

Լսեցի, թե ինչպես հայրս փոխանցեց լսափողը: Լսվում էին խաղային շոուի բարձր աղմուկն ու ծափահարությունները:

— Ողջո՞յն, Փարի:

Հեկտոր ժուարեզը ապրում էր մեր տան դիմաց: Մենք սկզբում հարևաններ էինք, իսկ վերջին տարիներին դարձանք ընկերներ: Նա շաբաթը մի քանի անգամ այցելում էր մեզ, մենք երկուսով վսասակար յուղոտ սնունդ էինք ուտում և դիտում տափակ հեռուստահաղորդումներ, մասնավորապես ռեալիթի շոուներ: Մենք ծամում էինք սառած պիցցան և գլուխներս թափահարում էինք՝ դիտելով էկրանին ծավալվող տխմարություններն ու սարսափները: Հեկտորը նավատորմի զորքերում էր ծառայում, Աֆղանստանի հարավում: Մի երկու տարի առաջ նա վիրավորվել էր հրթիռակոծության ժամանակ: Բոլոր հարևանները հավաքվեցին, երբ նա վերջապես եկավ ծառայությունից: Նրա ծնողները մի պաստառ կախեցին՝ «Բարի գալուստ, Հեկտոր»՝ փուչիկներով և ծաղիկներով զարդարված: Երբ մեքենան կանգ առավ տան մոտ, բոլորը սկսեցին ծափահարել: Հարևաններից ոմանք հատուկ այդ առիթով կարկանդակներ էին թխել:

Մարդիկ շնորհակալություն էին հայտնում Հեկտորին ծառայության համար: Ասում էին.

— *Պի՛նդ մնա, Աստված քեզ պահապան:*

Հեկտորի հայր Ցեզարը մի քանի օր եկավ մեր տուն և հաշման-

դամային սայլակի ռելսեր տեղադրեց, ինչպես իր տանը: Հաշման-դամային սայլակի ռելսերի վրա ծածանվում էր ամերիկյան դրոշը: Երկուսով աշխատում էինք շրջանակն ամրացնելով, և հիշում եմ, որ ես ուզում էի ներողություն խնդրել Ցեզարից, որովհետև Հեկտորի հետ այդ դժբախտությունը պատահել էր իմ պապերի հայրենիքում:

— Բարև,— ասացի,— ուզում էի ստուգել՝ ինչ կա չկա:

— Ամեն ինչ հրաշալի է,— ասաց Հեկտորը:— Մենք հաց կերանք: Սկզբում նայեցինք «Իրական գինը», հիմա զվարճանում ենք «Անիվ» խաղով, հաջորդը «Ամրոցն» է:

— Օ՛հ, կներես:

— Ինչո՞ւ, *mija*⁴⁴: Մենք լավ ժամանակ ենք անցկացնում: Այդպես չէ՞, էյբ:

— Շնորհակալություն, որ կերակրել ես ձվածեղով:

Հեկտորը ձայնն իջեցրեց մի տոն.

— Իրականում բլիթներ եմ սարքել: Եվ նրան դուր եկան այդ բլիթները, չորս հատ կերավ:

— Պարտական եմ քեզ, իրոք:

— Ինձ դուր եկավ նոր նկարը: Այն ծիծաղելի գլխարկով երեխայի նկարը: Էյբն ինձ ցույց տվեց այն, շատ հպարտ էր դրանով, ես էլ ասացի, որ, իհարկե, նա պիտի հպարտանա:

Ես անցա առաջին գիծ, որ հետևիս վարորդը վազանց կատարի:

— Հիմա ես գիտեմ, թե Ծննդյան տոներին քեզ ինչ նվեր եմ տալու:

— Դե, ինձ հիշեցրու՝ ինչու մենք *չենք* կարող ամուսնանալ:

Խորքից լսեցի բաբայի բողոքները և Հեկտորի հռչառցը:

— Ես կատակում եմ, էյբ: Հանգիստ տար ասածս: Ես ընդամենը հաշմանդամ եմ:

Հետո նա դարձավ ինձ:

— Կարծում եմ՝ հայրդ հենց նոր ինձ մտովի գնդակահարեց:

Ես հիշեցրի, որ նա պիտի հորս տար դեղահաբերը, և անջատեցի հեռախոսը:

⁴⁴ Սիրելիս (խապ. խոսակցական):



Դա շատ նման էր ռադիոհաղորդավարների լուսանկարները նայելուն, երբ մեքենայի ռադիոընդունիչից հնչող ձայնը և արտաքինը երբեք չեն համապատասխանում իրար: Նախ և առաջ նա ծեր էր կամ, ասենք, տարեց: Իհարկե, ես դա գիտեի: Ես հաշվարկներ էի կատարել և գիտեի, որ նա վաթսունին մոտ է: Շատ դժվար էր համատեղել նիհարվուն սպիտակած ծեր կնոջ տեսքը իմ ստեղծած երեք տարեկան գանգրահեր աղջնակի կերպարի հետ, ում հոնքերը գրեթե միացած էին, ինչպես իմը: Բացի այդ՝ կինն իմ պատկերացրածից ավելի բարձրահասակ էր: Դա երևում էր, թեպետ կինը նստած էր նստարանին՝ սենդվիչների խանութի մոտ, և երկչոտ նայում էր շուրջը՝ կարծես փնտրելով ինչ-որ մեկին: Նա ուներ նեղ ուսեր, փխրուն կազմվածք, հաճելի դիմագծեր, նրա մազերը հավաքած էին ծոծրակի վրա՝ գլխակապի տակ: Նեֆրիտե ականջօղեր, գունաթափ ջինս, երկար վարդագույն բլուզ և եվրոպական անփույթ նրբագեղությամբ վզին փաթաթած դեղին շարֆ: Նա իր վերջին նամակում ինձ գրել էր շարֆի մասին, և ես նրան հեշտությամբ գտա: Նա դեռ ինձ չէր տեսել, և ես մի փոքր էլ մլուլ տվեցի՝ խառնվելով սայլակները դեպի տերմինալ հրող զբոսաշրջիկների ամբոխին և տաքսու վարորդների խմբին, որոնք կանգնած էին ժամանողների անուններով ցուցանակները վեր պահած: Սիրտս ներսից խփվում էր կողերիս: Ինքս ինձ մտածում էի. «Նա է, նա է, իսկապես նա է»: Հետո մեր հայացքները հանդիպեցին, և նրա դեմքից երևաց, որ ինձ ճանաչեց: Նա ձեռքով արեց:

Մենք հանդիպեցինք նստարանի մոտ: Նա ժպտաց, և ծնկներս սկսեցին դողալ, որովհետև նրա ժպիտը ճիշտ և ճիշտ հորս ժպիտն էր. դիմացի ատամների արանքում բրնձի հատիկի չափ ձեղք կար, ձախ կողմի վրա՝ կորույթուն: Նա հորս նման ծամածռում էր դեմքը, աչքերը փակում և ճոճում գլուխը: Վեր կացավ, և հայացքս ընկավ նրա ձեռքերի ուռած հողերի վրա, մատները ծռմռվել էին, բութ ծավվել էր, իսկ դաստակի վրա սիսեռաչափ այտուցներ կային: Ստամոքսս կծկվեց. դա շատ ցավալի տեսարան էր:

Մենք գրկվեցինք, և նա համբուրեց այտերս: Նա շատ նուրբ մաշկ ուներ: Երբ գրկախառնությունն ավարտվեց, նա, ուսերիցս գր-

կած, հետ գնաց և ուշադիր նայեց ինձ հեռավորության վրա, կարծես նկար էր գնահատում: Աչքերը թաց էին հուզմունքից, բայց շողում էին երջանկությամբ:

— Ներողություն եմ խնդրում ուշանալու համար:

— Ոչինչ: Չէ՞ որ ես վերջապես Ձեզ հետ եմ: Ես այնքան ուրախ եմ — *Վոոցինց, ցե որ ես վերցապետեա Ձեզ հետ եմ...* — *հիմա նրա ֆրանսիական առոգանությունն ավելի զգալի էր, քան հեռախոսով:*

— Ես էլ եմ շատ ուրախ, — ասացի ես: — Գոհ եք թոչիքից:

— Դեղեր խմեցի, թե չէ չէի կարող քնել, որովհետև շատ երջանիկ եմ և շատ հուզված:

Նա նայում էր ինձ երկար ճառագող հայացքով, կարծես վախենում էր, որ կախարդանքը կչքանա: Հաղորդեցին ուղևորներին առանց հսկողության բեռների մասին անմիջապես տեղեկացնել օդանավակայանի անձնակազմին: Կնոջ դեմքով մի սովեր սահեց:

— Աբդուլլան գիտի, որ ես գալիս եմ:

— Ես ասել եմ, որ հյուր եմ բերում:

Մենք նստեցինք մեքենա: Ես մերթնդմերթ գողունի նայում էի նրան: Չափազանց անսովոր զգացողություն էր: Մի անհավանական խաբկանք կար այն բանի մեջ, որ Փարի Վահդատին նստած է իմ կողքին՝ մի քանի սանտիմետր այն կողմ: Որոշ պահերի ես տեսնում էի նրան ամենայն մանրամասնությամբ՝ վզի շուրջը փաթաթած շարֆը, կարծ խուզած կոշտ մազերը, ձախ ականջի հետևի սրճագույն խալը, իսկ երբեմն էլ նրա դիմագծերը մշուշվում էին, կարծես ես նայում էի նրան գոլորշապատ ակնոցով: Ընթացքում ես գլխապտույտ զգացի:

— Քեզ հետ ամեն բան կարգին է, — ասաց նա՝ կոճկելով ամրագոտին:

— Անվերջ մտածում եմ, որ Դուք կանհետանաք:

— Կներե՞ք:

— Դե, դա... մի քիչ անհավատալի է, — ասացի ջղային ծիծաղով: — Այն, որ Դուք գոյություն ունեք, և այն, որ Դուք հիմա այստեղ եք:

Նա ժպտալով գլխով արեց.

— Ինձ համար էլ: Ինձ համար էլ դա տարօրինակ է: Ես կյանքումս չեմ հանդիպել մեկին, որ իմ անունն է կրում:

— Ես էլ:

Ես պատեցի բանալին և միացրի շարժիչը:

— Հիմա կպատմե՞ք ինձ Ձեր երեխաների մասին:

Մենք դուրս եկանք կայանատեղից, և Փարին ինձ ամեն ինչ պատմեց իր երեխաների մասին: Խոսում էր, ասես ամբողջ կյանքում ճանաչել էինք միմյանց, կարծես մենք երեխաներով միասին ենք մեծացել, միասին գնացել ճամբարներ և ընտանեկան հավաքների, միասին ենք գնացել ամառային հանգստի ծովափնյա հանգստավայրեր, ուր խեցիներից վզնոցներ էինք պատրաստում և թաղվում ավազի մեջ:

Երանի թե այդպես լիներ:

Ասաց, որ իր որդին՝ Ալենը՝ իմ զարմիկը, նա դա հատուկ նշեց, և նրա կինը՝ Աննան, ունեցել են հինգերորդ երեխան՝ աղջիկ, և տեղափոխվել են Վալենսիա (վերջապես. նրանք շատ անդուր բնակարան ունեին Մադրիդում): Իսկ նրա առաջնեկը՝ Իզաբելը, երաժշտական սցենարներ էր գրում հեռուստատեսության համար: Վերջերս Իզաբելը ավարտել է իր առաջին երաժշտական ֆիլմի սցենարը: Իզաբելի ամուսինը՝ Ալբերտը, շեֆ-խոհարար էր Փարիզի հանրաճանաչ ռեստորաններից մեկում:

— Դու ռեստորան ունես, չէ՞, Փարի՛: Քո նամակներից մեկում ինձ պատմել էիր այդ մասին:

— Իմ ծնողներն ունեին: Դա հորս երազանքն էր: Ես օգնում էի ծնողներիս՝ աշխատեցնելու այն: Բայց մի քանի տարի առաջ ստիպված էի վաճառել, երբ մայրս մահացավ, և հայրս էլ դարձավ անաշխատունակ:

— Օ՛հ, ցավալի է:

— Կարիք չկա, ես ռեստորանային աշխատանք չեմ սիրում:

— Կարծում եմ՝ այո: Դու արվեստագետ ես:

Ես նրան մեր առաջին խոսակցության ժամանակ պատմել էի, որ ուզում եմ գնալ արվեստի դպրոց:

— Ես, Ձեր ասած, տրանսկրիպցիոնիստ եմ՝ պատճենահանող:

Նա ուշադիր լսում էր, իսկ ես բացատրում էի, որ տվյալներ եմ մշակում հինգ հարյուր ընկերությունն ունեցող «Ֆորտունա» ցանցի համար:

— Հատուկ նմուշներ են մշակում՝ բրոշյուրների, անդորրագրերի, հաճախորդների անվանացուցակների, նամակների ձևաթղթերի համար և այլն: Պիտի իմանաս վարժ տպել ու վերջ: Աշխատավարձն էլ բավարար է:

— Հասկանում եմ,— ասաց նա, հետո մտածեց ու հարցրեց,— իսկ քեզ հետաքրքիր է այդ աշխատանքը:

Մենք շարժվում էինք դեպի հարավ և անցանք Ռեդվուդ քաղաքի մոտով: Ես ձգվեցի դեպի նրա պատուհանը և հարցրի.

— Տեսնո՞ւմ եք այս կապույտ նշանով բարձր շենքը:

— Այո՛:

— Ես այնտեղ եմ ծնվել:

— *Ah bon?*— նա գլուխը շրջեց և ամբողջ ընթացքում նայում էր շենքին,— ուրեմն դու երջանիկ ես:

— Այսինքն:

— Դու գիտես՝ որտեղ ես ծնվել:

— Ճիշտն ասած՝ դրան երբեք կարևորություն չեմ տվել:

— *Bah*, իհարկե ոչ: Բայց դա իմանալն անհրաժեշտ է: Մարդ պիտի իմանա իր արմատների մասին: Դու պիտի իմանաս՝ ինչպես է սկսվել քո պատմությունը, այլապես ամբողջ կյանքը քեզ անհրական է թվում: *Vous comprenez*⁴⁵. Խճանկարի պես... Երբ չգիտես պատմության սկիզբը, անվերջ փորձում ես ենթադրություններ անել:

Ես պատկերացրի հորս զգացողությունները: Մութ սոռացության փոսերով լի նրա կյանքը, որ ամեն օր դառնում է մի առեղծվածային պատմություն, մի դժվարլուծելի խաչբառ:

Որոշ ժամանակ ես վարում էի լուռ:

Ի վերջո ասացի.

— Աշխատանքս հետաքրքիր եմ համարում թե ոչ: Մի օր տուն եկա, տեսա, որ ջուրը վշշում է բաց ծորակից, հատակին կտորված ապակու կտորներ կան, և գազօջախն էլ միացած է: Ես հասկացա, որ նրան մենակ թողնել չի կարելի, իսկ ինձ հետ ապրող խնամող չէի կարող ինձ թույլ տալ: Ու ես սկսեցի փնտրել մի աշխատանք, որ կարող էի կատարել տանը: Իսկ հետաքրքիր էր դա,

⁴⁵ Հասկանում ես (ֆրանս.):

թե ոչ, արդեն էական չէր:

— Եվ նաև արվեստի դպրոցի ժամանակը չէր, դա կսպասեր:

— Ուրիշ տարբերակ չկար:

Ես վախենում էի, որ հիմա նա կսկսի գովել ինձ՝ ասելով, որ հայրս երջանիկ է, քանի որ ինձ պես աղջիկ ունի: Բայց թեթևության և երախտագիտության զգացումով նկատեցի, որ նա լուռ մնաց, միայն լուռ գլխով արեց և շարունակեց նայել փողոցային նշաններին: Մարդիկ, մանավանդ աֆղանները, միշտ ասում էին, որ հայրս բախտավոր է նման աղջիկ ունենալով, որ ես իրական պարզ և ծնողի համար: Նրանք իմ մասին հիացմունքով էին խոսում՝ ինձ համարելով սուրբ, դուստր, որ հերոսաբար զոհաբերել է իր փայլուն, հեշտ ու արտոնյալ կյանքը տանը մնալու և հիվանդ հորը խնամելու համար:

— Բայց սկզբում այս աղջիկը խնամում էր մորը, — ասում էին նրանք զրնգուն ծայնով և շողշողուն կարեկցանքով: — Քանի տարի դայակ էր մոր համար: Շատ ծանր վիճակ էր: Հիմա էլ՝ հայրը: Նա ման եկող աղջիկ չէր, բայց երկրպագու ուներ, ամերիկացի պայծառ մի տղա: Կարող էր ամուսնանալ, բայց ծնողների համար մնաց տանը: Ամեն ինչ զոհաբերեց, երանի ամեն զավակ այդպիսին լիներ: Նրանք ինձ հաճոյախոսում էին իմ լավ բնավորության համար, հիանում իմ քաջությամբ և վեհությամբ: Այդպես հիանում են մարդկանցով, որ հաղթահարել են հաշմանդամությունը կամ, ասենք, լուրջ խոսքային արատը:

Բայց նրանց ընկալումը չէր արտացոլում իմ էությունը: Օրինակ՝ երբեմն՝ առավոտյան, Բաբան, մահճակալի ծայրին նստած, ինձ նայում էր վառվող հայացքով, սպասում էր, թե երբ իր չորացած, կնճռոտված ոտքերին կհագցնեն գուլպաները: Նա իմ անունն էր տալիս ապուշի տեսքով: Քիթը կնճռոտում էր՝ նմանվելով թաց, սարսափազդու առնետի, և այդ պահին ես զգվում էի հորիցս: Զգվում էի, որ հայրս այդպիսին է դարձել, որ նա նեղացրել է իմ գոյության շրջանակները, որ ես վատնում եմ կյանքիս լավագույն տարիները: Եվ այդ օրերին ես ուզում էի հեռու լինել նրա նեղացկոտությունից, նրա կարիքներից: Եվ բնավ սրբի նման չէի:

Ես անցա 13-րդ փողոցով: Մի քանի մղոն հետո արգելակեցի մեր տան ճանապարհին՝ Բիվր Բրիգի մոտ, և անջատեցի շարժիչը:

Փարին նայում էր մեքենայի պատուհանից միհարկանի տանը, ավտոտնակի պրկած ներկով դռներին, ձիթենու շրջանակով պատուհանին, մուտքի դռան մոտ դրված առյուծների քանդակներին, որոնք ես դեն չէի նետել, որովհետև Բաբան ժամանակին շատ էր սիրում դրանք, թեպետ կասկածում էի, որ նա կնկատեր դրանց բացակայությունը: Մենք այդ տանն էինք ապրում 1989 թվականից: Այդ ժամանակ ես յոթ տարեկան էի, և մենք սկզբում վարձակալում էինք տունը, իսկ 1993-ին Բաբան գնեց այն տանտիրոջից: Մայրս մահացավ այս տանը մի արևոտ առավոտ՝ Ծննդյան տոների նախօրեին, հիվանդանոցային մահճակալին, որը ես դրել էի հյուրերի սենյակում: Այդ մահճակալի վրա անցան մորս կյանքի վերջին ամիսները: Նա խնդրել էր տեղափոխել իրեն այս սենյակը, որովհետև շատ էր սիրում պատուհանից բացվող տեսարանը: Ասում էր, որ նայելիս տրամադրությունը բարձրանում է: Նա պառկած էր մահճակալին ուռած անգույն ոտքերով և օրերով նայում էր պատուհանից դուրս՝ փակուղուն, տարիներ առաջ իր ձեռքով տնկած ճապոնական թխկենիներին, աստղաձև ծաղկաթմբերին, զլաքարերով բաժանված մարգագետնին, հեռվում երևացող բլուրներին, որոնք կեսօրին ոսկեզօծվում էին արևային փայլով:

— Շատ նյարդային եմ,— ասաց Փարին դանդաղ:

— Հասկանալի է,— ասացի,— հիսունութ տարի է անցել:

Նա նայեց ծնկներին դրված իր ձեռքերին.

— Նրա մասին գրեթե ոչինչ չեմ հիշում: Դեմքը և ձայնն էլ չեմ հիշում: Միայն հիշում եմ, որ իմ կյանքում մի լավ բան կար, որը ես միշտ կարոտում էի: Մի ինչ-որ լավ բան: Ա՛հ, չգիտեմ ինչ ասել: Այսքանը:

Ես գլխով արեցի: Ուզում էի ասել, որ շատ լավ եմ իրեն հասկանում: Արդեն ուզում էի հարցնել, թե նա երբևէ ներքուստ զգացել է, որ ես կամ, թե՛ ոչ:

Փարին խաղում էր իր արձակած շարֆի հետ:

— Հարավոր է, որ նա հիշի ինձ:

— Ճշմարտությունն եք ուզում:

Նա նայեց իմ դեմքին.

— Իհարկե:

— Հավանաբար ավելի լավ կլինի, որ չհիշի:

Հիշեցի՝ ինչ էր ասում բժիշկ Բաշիրին՝ մեր ընտանեկան բժիշկը: Նա ասում էր, որ Բաբային անհրաժեշտ են ռեժիմ և հանգիստ: Ոչ մի անակնկալ, և անհրաժեշտ էր *կանխատեսելիության զգացում*: Ես դուռը բացեցի.

— Մի րոպե մնացե՞ք մեքենայում: Ընկերոջս տունն ուղարկեմ, ու Դուք կհանդիպեք Բաբային:

Նա ձեռքը դրեց աչքերին, և ես հեռացա, որ չտեսնեմ, թե նա ինչպես է լալիս:



Երբ ես տասնմեկ տարեկան էի, մեր՝ վեցերորդ դասարանը գնում էր մեկօրյա էքսկուրսիայի Մոնթերեյի նավահանգստի ակվարիում: Ամբողջ շաբաթ պատրաստվում էին այդ օրվան, իմ դասընկերները խոսում էին այդ օրվա մասին, ասում էին, թե ինչպես կզվարճանան, ակվարիումի փակվելուց հետո նրանց թույլ կտան գիշերազգեստներով վազել ցուցադրվող նմուշների շուրջը, կտեսնեն թրածկներ, ծովաստղեր, ծովաձկներ և տափակաձկներ: Մեր ուսուցիչը՝ պարոն Զիլեսփայն ասել էր, որ հատուկ ուտելիքի կրպակներ են տեղադրվելու ակվարիումի մոտ, և աշակերտները կարող են ընտրել ինչ ուտել՝ ջեմով և պիստակի յուղով թխվածք, թե՛ Բիգ Մակ և պանիր: Իբրև աղանդեր էլ կարող են վայելել բրաունի կամ վանիլային պաղպաղակ: Գիշերը աշակերտները մտնելու էին քնապարկերը, իսկ ուսուցիչները կարդալու էին նրանց հետաքրքիր պատմություններ: Իսկ հետո նրանք քնելու էին ծովային վիշապների, սարդինա ձկների և վագրային շնաձկների մեջ, որոնք տարուբերվում էին հատուկ ձողերից կախված: Հինգշաբթի օրը դպրոցում ոգևորությունը հասել էր գագաթնակետին: Նույնիսկ ամենաչարածձի աշակերտները այդ օրը փորձում էին իրենց լավ պահել, որ չզրկվեն ակվարիում գնալու հաճույքից:

Իսկ ես կարծես դիտում էի մի հետաքրքիր ֆիլմ՝ ձայնն իջեցրած հեռուստացույցով: Ես շատ հեռու էի այդ ուրախությունից, կտրված տոնական տրամադրությունից, ինչպես դա լինում էր ամեն դեկտեմբերին, երբ դասընկերներս տուն էին գնում, որ մասնակցեն

հրավառությանը, տեսնեն բուխարու վրա կախված գուլպաները և ստանան բազում նվերներ: Ես տիկին Ջիլեսփային ասացի, որ չեմ գալու էքսկուրսիայի: Նա հարցրեց պատճառը: Ես ասացի, որ օրը համընկնում է մուսուլմանական տոնի հետ, և վստահ չեմ, որ նա ինձ հավատաց:

Մեր դասարանի էքսկուրսիայի գիշերը ես տանն էի ծնողների հետ, միասին դիտում էինք «Ապանություն, որի մասին նա գրել էր» դետեկտիվ ֆիլմը: Ես փորձում էի կենտրոնանալ ֆիլմի վրա և չմտածել էքսկուրսիայի մասին, բայց միտքս ինձ չէր ենթարկվում: Պատկերացնում էի իմ դասընկերներին գիշերազգեստներով, ձեռքերին՝ լապտերներ, հսկա օձաձկանը ակվարիումի մեջ նայելիս: Սիրտս ծմվեց, բազմոցի վրա սկսեցի շուռումուռ գալ: Բաբան նստեց մյուս բազմոցին, բոված արախիսը գցեց բերանն ու ծիծաղեց ինչ-որ բանի վրա, որ ասում էր Անժելա Լանսբերին: Կողքին նստած մայրս մտախոհ ինձ էր նայում, դեմքը մթնած էր, բայց երբ մեր հայացքները հանդիպեցին, նրա դեմքը բացվեց, և նա ժպտաց ինձ ծածուկ ժպիտով, և ես ինձ ստիպեցի ժպտալ մայրիկիս: Այդ գիշեր երագունս ես ծովափին, մինչև գոտկատեղս օվկիանոսի մեջ կանգնած, նայում էի ջրի կանաչ, փիրուզագույն, ապակյա գնրուխտե ալիքների ստվերախաղին: Ձկների վտառները սահում էին ոտքերիս շուրջը, կարծես ամբողջ օվկիանոսը լիներ իմ անձնական ակվարիումը: Ձկները պլստում էին ոտնաթաթերիս մոտ, ազդրերս խուտուտ տալով՝ սլանում էին առկայծող լուսային ելևէջումների պես:

Այդ կիրակի Բաբան ինձ անակնկալ մատուցեց: Նա փակեց ռեստորանը, մի բան, որ երբեք չէր անում, և ինձ ու մորս տարավ Մոնթերեյ՝ ակվարիումը տեսնելու: Բաբան ոգևորված խոսում էր ծանապարհիին: Ինչպես ենք զվարճանալու: Ինչպես է նա ուզում տեսնել շնաձկներին: Ինչ ենք ուտելու ճաշին: Նա խոսում էր, իսկ ես հիշում էի այն ժամանակը, երբ նա ինձ տանում էր Քելլի զբոսայգի՝ տեսնելու կենդանիների ծագերի, և հարևանությամբ գտնվող ճապոնական այգիներ՝ ծածաններին նայելու: Եվ մենք բոլոր ձկներին անուններ էինք տալիս, ես պինդ բռնում էի հորս ձեռքը և ասում էի ինքս ինձ, որ աշխարհում էլ ոչ մեկի կարիքը չունեմ:

Ակվարիում մտանք, և ես մտացրիվ թափառում էի նմուշների

կողքով ու փորձում էի պատասխանել Բաբայի հարցերին ձկների տեսակների մասին: Բայց տեղը շատ լուսավոր էր և աղմկոտ, իսկ լավագույն նմուշներն անհնար էր տեսնել մարդկանց խմբվածության պատճառով: Այն բնավ չէր համապատասխանում գիշերային էքսկուրսիայի մասին իմ պատկերացումներին: Դա մի թոհուրոհ էր, որն ինձ հոգնեցրեց: Ես անվերջ փորձում էի ձևացնել, որ ուրախ ժամանակ եմ անցկացնում: Ես փորացավ զգացի, և մի ժամի չափ ակվարիումում շրջելուց հետո մենք գնացինք: Հայրս կոտրված ինձ էր նայում, կարծես պատրաստվում էր ինչ-որ բան ասելու: Այդ անքթիթ հայացքից խուսափելու համար ես ձևացրի, թե քնած եմ:

Հաջորդ տարի արդեն միջին դպրոցում իմ տարիքի աղջիկները սկսել էին սովերաներկ ու շրթներկ օգտագործել: Գնում էին «Բոյզ Թու Մեն» խմբի համերգներին, դպրոցական համերգների և խմբակային ժամադրությունների, որտեղ նրանք խմում ու զվարճանում էին: Դպրոցական ընկերներս խաղում էին բասկետբոլ և համալրում էին երկրպագուների թիմերը: Հետևում նստած աղջիկը՝ իսպանուհի, պեպենոտ, գունատ մաշկով, լողի էր գնում: Մի անգամ, երբ դասերի ավարտից հետո գրքերն էինք հավաքում, նա ինձ առաջարկեց իր հետ գնալ լողի: Նա չէր կարող ինձ հասկանալ: Ծնողներս կմեռնեին, եթե ես լողազգեստով երևայի մարդկանց մեջ: Ես էլ նման ցանկություն չունեի, որովհետև լավ տեղյակ էի մարմնիս կառուցվածքին: Մինչև գոտկատեղս ես բավականին նիհարիկ էի, բայց գոտկատեղից ներքև մարմինս անհամաչափ, տգեղ և հաստ էր, կարծես երկրի ձգողականությունը ամբողջ քաշս կենտրոնացրել էր մարմնիս ներքևի մասում: Կարծես ինձ մի երեխա էր հավաքել, որ սովարաթղթի վրա պատկերներ է հավաքում, երբ փորձում է համապատասխանեցնել մարդու տարբեր մարմնամասերը, ավելի շուտ փորձում է սխալ միացնել, որ մարդիկ ծիծաղելու առիթ ունենան: Մայրս ասում էր, որ ես «հաստ ոսկոր եմ», և որ իր մայրը նույն կազմվածքն ուներ: Ի վերջո մայրս դադարեց դրա մասին խոսելուց, երևի հասկացավ, որ աղջկա համար հաճելի չէ լսել, որ ինքը «հաստ ոսկոր է»:

Ես փորձեցի Բաբային համոզել, որ նա թողնի ինձ խաղալ վոլեյբոլի թիմում, բայց նա ինձ առավ ձեռքերի մեջ և գրկեց գլուխս:

— Ո՞վ է տանելու քեզ պարապմունքների,— հարցրեց նա:— Ո՞վ է տանելու քեզ խաղերի: Ես կուզենայի, որ մենք շատ հարուստ լինեինք քո դասընկերների ծնողների պես, Փարի՛, բայց մենք հազիվ ենք վաստակում մեր օրվա հացը, ես ու մայրդ: Ես չեմ ուզում նպաստառու դառնալ: Դու հասկանում ես, սիրելիս, գիտեմ, որ հասկանում ես:

Բայց օրվա հացը վաստակելը արգելք չէր հորս համար, երբ հերթը հասնում էր ֆարսիի դասերին: Նա ամեն երեքշաբթի՝ դասերի ավարտից հետո, մեքենայով ինձ տանում էր Քեմփբել: Ես նստում էի այդ դասերին ձկան պես, որը փորձում է լողալ հոսանքին հակառակ, և իմ բնույթին հակառակվելով՝ գրիչը շարժում էի աջից ձախ: Խնդրում էի հորս, որ էլ չգնամ այդ դասերին, բայց նա մերժեց իմ խնդրանքը՝ ասելով, որ հետո կգնահատեմ իր արածը: Ասաց, որ եթե մշակույթը ընկալենք իբրև տուն, ապա լեզուն այդ տան մուտքի դռան բանալին է: Առանց լեզվի մարդը կորցնում է ճանապարհը, տունը և ինքնությունը:

Իսկ կիրակի օրերին ես հազնում էի սպիտակ գլխաշորս, և հայրս տանում էր ինձ Հեյվարդի մզկիթ՝ Լուրանի դասերի: Դասերն անցնում էին մի չօդափոխվող նեղլիկ սենյակում, որից կեդտոտ լվացքի հոտ էր գալիս: Պատուհանները նույնպես նեղլիկ էին և առաստաղին մոտ, ինչպես բանտախցերի պատուհանները՝ ֆիլմերում: Մեզ դաս տվող կինը Ֆրենսուտի մանրավաճառներից մեկի կինն էր: Ամենից շատ ես հավանում էի նրա պատմությունները մարգարեի կյանքի մասին, դրանք իսկապես հետաքրքիր էին: Նա ասում էր, որ մարգարեի մանկությունն անցել է անապատում, ինչպես քարանձավում, նրան հանդիպել է Գաբրիել հրեշտակը և պատվիրել աղոթքներ ասել, նաև պատմում էր, որ մարգարեին հանդիպող մարդիկ զարմանում էին՝ տեսնելով նրա դեմքի լուսավոր բարությունը: Բայց, ցավոք, հիմնականում նա մեզ թելադրում էր արգելված բաների ցուցակը, թվարկում, թե ինչից էինք մենք պարտավոր զերծ մնալ իբրև հավատացյալ առաքինի մուսուլման կանայք՝ արևմտյան մշակույթի վտանգավոր ազդեցության տակ չընկնելու համար, իհարկե, նախ և առաջ արական սեռի ներկայացուցիչներից, բայց նաև ռեփ երաժշտությունից, Մադոննայից,

Մեկրոուզ Փլեյսից, կիսատաբատներից, պարելուց, հանրային տեղերում լողալուց, մարզային թիմի երկրպագու լինելուց, պեպերոնիից, ալկոհոլից, «ոչ հալալ» բուրգերներից ու էլ, Աստված գիտի, թե ինչից: Ես՝ քրտնաթոր, թմրած ոտքերով, երագում էի գոնե հանել գլխաշորս, բայց դա մզկիթում արգելված էր: Բարձր պատուհաններից երևում էր երկնքի պատառիկը: Ես երագում էի դուրս գալ մզկիթից, որ թարմ օդի հոսանքը բախվի երեսիս, զգալ, որ կրծքավանդակիս սեղմվածությունն անցնում է, և ջղերիս կծիկը բացվում է:

Իսկ մզկիթում միակ ելքը մտքին ազատություն տալն էր, և ես մտածում էի մեր մաթեմատիկայի դասընթացներից Ջերեմի Վարվիկի մասին: Ջերեմին ուներ կապույտ աչքեր և աֆրիկյան գանգուրներ: Նա ներամփոփ էր, մտածկոտ, բակային խմբում կիթառ էր նվագում: Երբեմն մասնակցում էր դպրոցի շնորհալիների տարեկան մրցույթին, ուր նրանք խոչադոս ծայնով կատարում էին «Ծագող արևի տուն» երգը՝ իմպրովիզ անելով: Դասարանում ես նստում էի Ջերեմիից ձախ շարքում՝ չորս նստարան այն կողմ: Երբեմն ես պատկերացնում էի, թե ինչպես ենք մենք համբուրվում. Ջերեմին ձեռքով բռնել է ծոծրակս, և դեմքն այնքան մոտիկ է, որ ստվերում է ամբողջ աշխարհը: Մի զգայական ալիք էր տարածվում իմ որովայնով և ոտքերով թեթևակի դողով: Իհարկե, նման բան երբեք չէր կարող պատահել: Մեր միասնությունն անհնար էր: Եթե անգամ նա ինչ-որ աղոտ պատկերացում ուներ իմ գոյության մասին, ապա երբեք զգացնել չէր տալիս: Իրականում դա այդքան էլ վատ չէր: Եվ ինձ թույլ էր տալիս մտածել, որ ես իրեն դուր չեմ գալիս, և դա է միակ պատճառը, որ մենք չենք կարող միասին լինել:

Ամռանը ես աշխատում էի ծնողներիս ռեստորանում: Ավելի երիտասարդ տարիքում ինձ ամեն ինչ դուր էր գալիս, ես սրբում էի սեղանները, դասավորում էի սպասքը, ծալում էի անձեռոցիկները և յուրաքանչյուր սեղանի կենտրոնում դրած ծաղկամանի մեջ դնում էի մեկական գերբերա: Ես ձևացնում էի, որ մեր ընտանեկան բիզնեսի համար անփոխարինելի օգնական եմ, որ ռեստորանն առանց ինձ կփլուզվի, եթե ես չլցնեմ աղի ու պղպեղի ամանները:

Երբ մեծացա, օրերը էյբ Քաբոբ պանդոկում երկարեցին և դարձան ձանձրալի: Այն ամենը, ինչ որ ինձ ձգում էր ռեստորանում,

դադարեց գրավիչ լինելուց: Գազավորված ընպելիքի սառնարանը, վինիլե սփռոցները, լաքապատ պլաստմասե բաժակները, ճաշացանկի ճաշատեսակների անվանումները (Քարավան Քաբոբ, Խիբեր Փաս Փիլաֆ, Մետաքսե ճանապարհի ճուտը), վատ շրջանակված պաստառը՝ աֆղանուհու նկարով՝ աչքերը մեծ ու ընդգծված, կարծես ամեն աֆղանական ռեստորանի անբաժանելի մասը լինեին: «Նեյշնլ Ջեոգրաֆիկ» ամսագրից մեզ նայող այդ աչքերը... Պաստառի կողքին հայրս կախել էր մի նկար, որ ես յուղաներկով նկարել էի յոթերորդ դասարանում: Այդտեղ պատկերված էին Հերթթի մզկիթները: Ես հիշում եմ հպարտության ու գոհության ալիքը, որ ողողեց ինձ առաջին անգամ, երբ հայրս պատին կախեց այդ նկարը, հաճախորդները, նկարի տակ նստած, գառան խորոված էին ուտում:

Ճաշին ես ու մայրս խոհանոցից հոտավետ ծխի միջով հետ ու առաջ էինք վազում դեպի հյուրասրահ և ճաշ էինք մատուցում գրասենյակային աշխատողներին, գործարարներին և ոստիկաններին, իսկ Բաբան, իր յուղի բծերով պատված սպիտակ վերնաշապիկը հագին, որի բաց օձիքից երևում էր նրա կրծքի սև ու խիտ մազածածկոյթը և բազուկների սև աղվամազը, կանգնում էր վաճառասեղանի մոտ: Նա ժպիտով ընդունում էր յուրաքանչյուր այցելուի:

— *Բարև, պարոն, բարև, տիկին: Բարի գալուստ էյբ Քաբոբ պանդոկ: Ես էյբն եմ: Ի՞նչ եք ուզում պատվիրել:*

Ես ամաչում էի, որովհետև Բաբան շատ նման էր այդ պահին արևելյան սիթքոմների հիմարավուն հերոսին: Ամեն մատուցվող ճաշատեսակից հետո հայրս հնչեցնում էր իր սեղանի մոտ կախված հին պղնձյա զանգը: Դա սկզբում կատակախաղի պես մի բան էր: Հայրս մի պղնձյա զանգ էր ամրացրել սեղանիկի գլխին, իսկ հիմա այդ զանգի զնգոցով նա ողջունում էր ամեն նոր այցելուի: Մեր հին հաճախորդները սովորել էին այդ զնգոցին և այլևս դրան ուշադրություն չէին դարձնում: Իսկ նորեկները համարում էին դա վայրի, տարօրինակ հմայքներից մեկը, թեպետ երբեմն լինում էին նաև բողոքներ:

— Էլ չե՞ն ուզում, որ զանգը տամ,— ասաց Բաբան մի երեկո:

Այդ ժամանակ ես արդեն սովորում էի ավագ դպրոցում, երկրորդ կիսամյակն էր: Մենք նստած էինք մեքենայում՝ ռեստորանի մուտքի առաջ: Ռեստորանը փակել էինք և մեքենայում սպասում էինք մայրիկին, որ ներսում մոռացել էր իր դեղահաբերը և գնացել էր դրանք բերելու: Հորս դեմքի արտահայտությունն անթափանց էր: Ողջ օրը նա վատ տրամադրություն ուներ: Ուշ էր, և կայանատեղին գրեթե դատարկ էր, մի քանի մեքենա կար կանգնած *KFC*-ի մուտքի մոտ և մի բեռնատար՝ քիմնաքրման կետի մոտ: Բեռնատար մեքենայի մեջ երկու տղա էին նստած, և պատուհաններից ծուխ էր ելնում:

— *Դա ավելի զվարճալի էր, երբ անսպասելի էր,*— ասացի ես:

— *Ամեն ինչ այդպես է,*— հոգոց հանեց Բաբան:

Ես հիշեցի, որ փոքր հասակում ուրախանում էի, երբ Բաբան ինձ ձեռքերի վրա բարձրացնում էր, որ զանգը տամ, և երբ իջեցնում էր, դեմքը փայլում էր երջանկությունից և հպարտությունից:

Նա միացրեց մեքենայի վառարանը և ձեռքերը խաչեց կրծքին:

— *Բայթինորը շատ հեռու է:*

Ես զվարթ ասացի:

— *Միշտ էլ կարող ես ինքնաթիռ նստել ու գալ:*

— *Ինքնաթիռ նստել ու գալ,*— ասաց նա տխուր վիատությամբ:— *Ես ապրուստ վաստակելու համար պիտի քաքաք պատրաստեմ, Փարի՛:*

— *Ուրեմն ես կգամ ձեզ այցելության:*

Հայրս աչքերը դարձրեց ինձ և նայեց մոլորված հայացքով: Նրա տխրությունը նման էր մեքենայի պատուհանից դուրս խտացող մթությանը:

Մի ամբողջ ամիս ես ստուգում էի մեր փոստը, և սիրտս ամեն անգամ թպրտում էր հույսով, երբ նամակներ բաժանող փոստային մեքենան մոտենում էր մեր տանը: Ես նամակները ներս էի բերում, փակում էի աչքերս ու մտածում. «*Կարո՞ղ է այս անգամ իմ ուզածը լինել*»: Հետո աչքերս բացում և թերթում էի հաշիվները, անդորրագրերը և գովազդային թերթիկները: Եվ վերջապես անցյալ երեքշաբթի ես պատռելով բացեցի ծրարը և տեսա երկար սպասված բառերը. «*Ուրախ եմք տեղեկացնելու ձեզ...*»:

ես ցատկեցի և ճչացի, ու այդ բարձր, կոկորդային բղավոցից աչքերս արցունքակալվեցին: Աչքերիս առջև մի պատկեր ուրվագծվեց. պատկերասրահում բացման երեկո է, ու ես, պարզ, էլեգանտ սև շոր հագիս, հովանավորներով և խոժոռ քննադատներով շրջապատված, ժպտալով պատասխանում եմ հարցերին, իսկ երկրպագուների խմբերը հիացած կանգնած են նկարներիս առաջ: Մատուցողները, սպիտակ ձեռնոցները դրած, պտտվում են պատկերասրահով և մատուցում են գինի և իշխանի միս՝ քառակուսի կտրտած ծնեբեկի խմորագնդիկներով: Ես զգացի մի անասելի ոգևորություն, երբ ուզում ես գրկել անձանոթներին և պարել նրանց հետ՝ մեծ պտույտներ գործելով:

— *Ես քո մոր համար եմ անհանգստանում,* — ասաց հայրս:

— *Ես ամեն երեկո կզանգեմ, խոստանում եմ: Գիտես, որ կզանգեմ:*

Բաբան գլխով արեց: Հանկարծակի քամու հոսանքից կայանատեղի հատակին ընկավ մի քանի թխկու տերև:

— *Դու մտածել ես իմ ասածի մասին: Դու մի քիչ մտածել ես մեր նախորդ խոսակցության մասին:*

— *Դու կրոսեր քոլեջը նկատի ունես:*

— *Դե, մեկ կամ երկու տարով: Որ մայրդ կարողանա վարժվել այդ մտքին: Հետո նորից կդիմես:*

Հանկարծակի զայրույթից ես ցնցվեցի:

— *Բաբա՛, այդ մարդիկ նայել են իմ քննության արդյունքներն ու իմ գրավորները, նրանք ուսումնասիրել են իմ պորտֆոլիոն, և իմ տվյալները նրանց այնքան են դուր եկել, որ նրանք ընդունել են գործերս և նույնիսկ թոշակ առաջարկել: Սա երկրի ամենալավ արվեստի դպրոցներից է, և նրանց մերժելն անհնար է: Երկրորդ հնարավորություն կարող է և չլինել:*

— *Դու ճիշտ ես,* — ասաց հայրս՝ տեղում ուղղվելով:

Ձեռքերը առաջ բերեց և տաք շնչով տաքացրեց դրանք:

— *Իհարկե, ես հասկանում եմ քեզ և շատ ուրախ եմ քեզ համար:*

Դեմքին ներքին պայքարի նշաններ կային և վախ: Նա ոչ միայն վախենում էր, թե ինչ կպատահի ինձ հետ տնից երեք հա-

զար մղոն հեռվում: Ցավը, որ կառաջանար իմ բացակայությունից, կղճբախտացներ նրան, կկտորեր նրա անպաշտպան ու փխրուն սիրտը և իմ ընտրած ճանապարհից ծնված վիշտը կհոշոտեր նրան, ինչպես կատվի ձագի վրա հարձակված դոբերմանը:

Ես մտածեցի նրա քրոջ մասին: Բայց այժմ խոր և սրտառույզ կապը, որ ես զգում էի Փարիի հանդեպ, անհետացել էր: Ես հազվադեպ էի մտածում Փարիի մասին: Տարիներն անցնում էին: Հորաքրոջս գաղափարը հնացել էր, ինչպես հնանում են սիրած գիշերազգեստը և փափուկ խաղալիքները: Բայց հիմա ես նորից հիշեցի նրան և մեզ կապող թելը: Մեր կապը նման էր ափին խփվող ալիքի, որը հարվածում է ոտքերին, հասնում կոճերին և նահանջում:

Բարան մաքրեց կոկորդը, նայեց սև երկնքին և ամպած լուսնի սկավառակին: Նրա աչքերը լցված էին տխրությամբ:

— *Ամեն բան հիշեցնելու է ինձ քո մասին:*

Նա խոսում էր քնքշորեն, ծայնի մեջ թեթև խուճապ կար, և երբ խոսեց, ես հասկացա, որ հորս սիրտը վիրավոր է, և նրա սերն իմ հանդեպ գլխավերևում բացվող երկնքի պես է՝ հսկայական, ճշմարիտ ու հավերժական: Դա սիրո մի տեսակ էր, որ վաղ թե ուշ քեզ ծուղակն էր գցում և կանգնեցնում ընտրության առջև՝ կամ դու կտրում էիր թելը և հեռանում, կամ դիմանում այդ սիրուն, որը քեզ հեռացնում էր քո սեփական էությունից՝ ծնշելով քո ետը:

Հետևի նստարանից ես ձգվեցի և կպա հորս դեմքին: Նա այտը հպեց իմ ափին:

— *Ինչո՞ւ է մայրդ ուշանում,— մոթմոթաց նա:*

— *Փակում է դուռը...*

Ես շատ հոգնած էի: Տեսա, թե ինչպես մայրս վազում է դեպի մեքենան: Անձրևը վերածվել էր տեղատարափի:

Մի ամիս հետո՝ իմ թռիչքից երկու շաբաթ առաջ, մայրս գնաց բժիշկ Բաշիրի մոտ և տեղեկացրեց, որ անտացիդները չեն օգնում նրա ստամոքսի ցավին: Բժիշկն ուղարկեց նրան ուլտրաձայնային քննության, և քննությունը ընկույզի չափ մի ուռուցք հայտնաբերեց մորս ձախ ձվարանի մեջ:



Բարձր:

Նա նստած էր սայլակին՝ անշարժ, մի փոքր առաջ եկած: Հագին գիշերային անդրավարտիքն էր, ոտքերը ծածկած էին բրոյա շալով: Հագին շագանակագույն կոճկվող ժակետ էր, որ ես գնել էի մի տարի առաջ: Նա հագել էր դա ֆլանելե վերնաշապկի վրա, պինդ կոճկած: Վերջերս հայրս վերնաշապիկը միայն այդպես էր կրում՝ մինչև օձիքը կոճկած, և դա նրան տալիս էր տղայական ու փխրուն տեսք՝ հակառակ նրա տարիքի: Նրա դեմքը թեթևակի ուռած էր, իսկ սպիտակ մազերը խռիվ թափվել էին ճակատին: Նա նայում էր «Ով է ուզում դառնալ միլիոնատեր» հաղորդումը հանդիսավոր ու շփոթված տեսքով: Ես նրա անունը տվեցի: Նրա հայացքը մի պահ սառեց Էկրանին, կարծես ինձ չէր լսել, հետո հայացքը կտրեց հեռուստացույցից և նայեց ինձ դժգոհությամբ: Աչքի ներքևի կոպին չիբան էր ածել: Նրան սափրելն էլ չէր խանգարի:

— Հայրիկ, կարո՞ղ եմ մի պահ հեռուստացույցի ձայնն իջեցնել:

— Ես նայում եմ:

— Գիտեմ, բայց դու հյուր ունես:

Ես օրը նախօրոք ասել էի Փարի Վահդատիի այցելության մասին, կրկնել էի նաև այս առավոտ: Բայց չէի հարցնում՝ հիշում է թե ոչ: Արդեն վաղուց էի սովորել, հիշողության մասին հարցեր չտալ, որովհետև դա շփոթեցնում էր նրան, և նա դառնում էր ագրեսիվ, երբեմն նույնիսկ մարդկանց վիրավորելու աստիճանի:

Ես վերցրի հեռակառավարման վահանակն ու իջեցրի հեռուստացույցի ձայնը՝ ներքուստ պատրաստվելով հարվածի: Երբ նա առաջին անգամ շարտեց այդ վահանակը, ես մտածեցի, որ դա ներկայացում է, որ նա դերասանություն է անում: Բայց այս անգամ, հուրախություն ինձ, հայրս չաղմկեց, միայն փնջացրեց քթի տակ:

Փարին մնացել էր միջանցքում՝ մուտքի մոտ, և ես նրան ներս ուղեկցեցի: Նա դանդաղ մոտեցավ ինձ, և ես մի աթոռ մոտեցրի հորս սայլակին: Փարին նյարդային մի կծիկ էր դարձել: Նա ուղիղ նստած էր աթոռի ծայրին գունատ դեմքով, առաջ եկած, ծնկները պինդ սեղմած, ձեռքերը իրար միացրած: Նրա ժպիտն այնքան լարված էր, որ շրթունքները սպիտակել էին: Նա անքթիթ նայում

էր Բաբային, կարծես ընդամենը մի քանի րոպե նրան տեսնելու հնարավորություն ուներ և ուզում էր հիշել նրա դեմքը:

— Բաբա՛, սա այն բարեկամն է, ում մասին պատմել եմ...

Հայրս նայեց դիմացի ծերմակած կնոջը: Նրա հայացքը վերջին ժամանակներս շատ նյարդայնացնող էր: Նա նայում էր ուղիղ մարդկանց աչքերին դեմքի ոչինչ չասող արտահայտությամբ: Նա կարծես բացակա լիներ՝ ներփակված իր աշխարհի մեջ, կարծես ուզում էր ուրիշ տեղ նայել, բայց հայացքն ընկել էր դիմացինի երեսին:

Փարին հազաց: Անգամ դրանից հետո խոսելիս ծայնը դողում էր:

— Բարև, Աբդուլլա: Անունս Փարի է: Ինչ լավ է, որ քեզ տեսնում եմ:

Հայրս դանդաղ գլխով արեց: Նրա դեմքով անցան շփոթմունքի և չհասկացվածության ջղաձիգ ալիքներ, որոնք տեսանելի էին անզեն աչքով: Հայացքը սահում էր ինձնից Փարիին, և ծուռ ժպտաց, ինչպես միշտ անում էր, երբ մտածում էր, որ գլխին խաղ ես խաղում:

— Դու առողջանություն ունե՞ս,— ի վերջո ասաց նա:

— Նա Ֆրանսիայում է ապրում: Եվ, Բաբա՛, դու պետք է անզլերեն խոսես: Նա ֆարսի չի հասկանում:

Հայրս կրկին գլխով արեց:

— Ուրեմն դուք Լոնդոնում եք ապրում,— ասաց նա Փարիին:

— Բաբա՛:

— Ի՞նչ:

Եվ կտրուկ թեքվեց իմ կողմը: Հետո հասկանալով ժպտաց և շփոթված քնծիծաղով նույն նախադասությունը ֆարսիից թարգմանեց անզլերեն:

— Ես Փարիզում եմ ապրում,— ասաց Փարին:— Փարիզի մի փոքր բնակարանում:

Փարին աչքը չէր կտրում հորս դեմքից:

— Ես միշտ ուզել եմ կնոջս տանել Փարիզ: Անունը Սուլթանա էր, նա միշտ ասում էր՝ «Աբդուլլա՛, ինձ Փարիզ տար, ե՞րբ ենք գնալու Փարիզ»:

Իրականում մայրս ճանապարհորդել չէր սիրում: Նա չէր հասկանում՝ ինչպես կարելի է փոխարինել սեփական տան հարմարա-

վետ, ծանոթ միջավայրը օդում մնալու և ճամպրուկներ տեղափոխելու փորձությամբ: Նա նույնիսկ խոհանոցում էքսպերիմենտներ չէր անում, և էկզոտիկ սնունդը, նրա պատկերացմամբ, Թեյլորի փողոցի չինական ռեստորանում մատուցվող նարնջի սոուսով ճուտն էր: Զարմանալի էր, թե ինչ առեղծվածային ենթադրություններ էր անում հայրս. երբեմն նա ասում էր, որ մայրս ուտելիքին աղ էր անում՝ ափի մեջ աղը խաղացնելով, իսկ երբեմն պնդում էր, որ մայրս հեռախոսով խոսելիս մարդկանց ընդհատում էր, որ բնավ հատուկ չէր մորս: Հայրս անհավանական անճշտություններ էր թույլ տալիս: Ես վստահ եմ, որ հորս հիշողության մեջ մորս պատկերը խամրում էր, դեմքը՝ մշուշվում, և նա մոռացության էր մատնվում ամեն անցնող օրվա հետ: Այդպես ավազն է սողում փակ բռունցքից հատիկ առ հատիկ: Մորս հիշողությունը դառնում էր մի հեռու ուրվապատկեր, մի դատարկ խեցի, որ նա լցնում էր ինքնահնար մանրամասներով և բնավորության սարքովի գծերով, կարծես կեղծ հիշողությունն առավել նախընտրելի էր, քան հիշողության բացակայությունը:

— Դե, Փարիզը շատ գեղեցիկ քաղաք է,— ասաց Փարին:

— Երևի տանեմ կնոջս Փարիզ: Բայց հիմա նա հիվանդ է: Դականացի հիվանդություն է...

— Ձվարանի,— հուշեցի ես:

Փարին գլխով արեց, հայացքն անցնում էր ինձնից հորս:

— Սուլթանան բոլորից շատ ուզում էր բարձրանալ Էյֆելյան աշտարակը:

— Էյֆելյան աշտարակը:

Փարի Վահդատին ծիծաղեց:

— Այո՛: Դրանից հնարավոր չէ խուսափել:

— Իսկ Դուք մինչև գագաթ բարձրացե՞լ եք:

— Այո՛, բարձրացել եմ: Շատ գեղեցիկ տեսարան է բացվում այնտեղից: Բայց ես վախենում եմ բարձրությունից և ինձ այնքան էլ լավ չեմ զգում: Աշտարակի վերևում լավ արևոտ օրերին դուք կարող եք տեսնել ամեն ինչ վաթսուն կիլոմետր շառավղով: Բայց, իհարկե, Փարիզում օրերը մեծ մասամբ արևոտ չեն:

Բաբան փնչացրեց: Փարին խրախուսված շարունակեց պատ-

մել աշտարակի մասին՝ քանի տարում է այն կառուցվել, և որ աշտարակը չէին ուզում պահել Փարիզում 1889-ի միջազգային տոնավաճառից հետո, բայց նա չէր կարողանում ինձ պես վերծանել հորս աչքերի արտահայտությունը: Բաբան անհաղորդ էր դարձել: Փարին չէր հասկանում, որ կորցրել էր հաղորդակցության թելը, որ հորս մտքերն արդեն ցրիվ են եկել քամուց քշված տերևների պես: Փարին ավելի մոտ եկավ:

— Դու գիտե՞ս, Աբդուլլա, որ նրանք յոթ տարին մեկ ներկում են աշտարակը:

— Անունդ ղնց էր, ասացիր, — հարցրեց հայրս:

— Փարի:

— Դա իմ աղջկա անունն է:

— Այո՛, գիտեմ:

— Դուք նույն անունն ունեք: Ինչպե՞ս է, որ երկուսդ էլ նույն անունն ունեք:

Նա հազաց և սկսեց քփոռել սայլակի կաշվե բազկակալը:

— Աբդուլլա, կարո՞ղ եմ մի հարց տալ:

Բաբան ուները վեր քաշեց:

Փարին նայեց ինձ՝ կարծես թույլտվություն խնդրելով. ես գլխով նրան հավանություն տվեցի: Նա առաջ եկավ աթոռի վրա:

— Ինչո՞ւ որոշեցիր քո աղջկան կոչել այդ անունով:

Բաբան նայում էր պատուհանին և եղունգով դարձյալ քփոռում էր անցքը:

— Դու հիշո՞ւմ ես, Աբդուլլա, ինչո՞ւ հենց այդ անունը:

Հայրս գլուխը թափ տվեց, բռնեց ժակետի օձիքից և սեղմեց այն կզակի տակ: Շրթունքները գրեթե չէին շարժվում: Նա բարձր շնչում էր և թեթև դնդնում մի երգ, ավելի շուտ՝ ռիթմիկ մի մռթմռթոց: Նա միշտ այդպես էր վարվում, երբ անհանգստությունը պատում էր նրան, երբ մոլորված պատասխան էր փնտրում, երբ ամեն ինչ թաղվում էր մշուշի մեջ, և նրա ցաքուցրիվ մտքերի հոսքը փորձում էր ճեղքել խավարը:

— Աբդուլլա, ինչ է պատահել, — հարցրեց Փարին:

— Ոչինչ, — քրթմնջաց հայրս:

Ոչ մի երգ չէր երգում հիմա: Հայրս անօգնական հայացքով

Նայեց ինձ: Նա չգիտեր՝ ինչ էր կատարվում:

— Օրորոցային է,— ասացի ես,— հիշում ես, հայրիկ, դու ասում էիր, որ տղա ժամանակ երգում էիր այդ երգը, որ մորիցդ էիր սովորել:

— Բարի:

— Կարո՞ղ ես երգել այդ երգն ինձ համար,— անհամբեր հարցրեց Փարին, և ձայնը բեկբեկվում էր:— Աբդուլլա՛, կերգես ինձ համար:

Հայրս գլուխը կախեց և տարուբերեց:

— Դե, երգիր, հայրիկ,— մեղմորեն ասացի ես՝ ձեռքս դնելով նրա ոսկրոտ ուսին:— Ամեն ինչ լավ է:

Վարանող, դողացող ձայնով հայացքը խոնարհած, հայրս մի քանի անգամ երգեց նույն տողերը:

Ես գտա փոքրիկ, տխուր փերիի

Ստվերի տակ թթի ծառի:

Հայրս միշտ ասում էր, որ կա նաև բանաստեղծության երկրորդ տունը, բայց մոռացել էր այն:

Փարի Վահդատին կարճ մի բացականչություն արձակեց, որ ավելի շատ փորից դուրս եկող ճիչ էր հիշեցնում, և բերանը ծածկեց ձեռքի ափով:

— *Ah, mon Dieu*⁴⁶,— շշնջաց նա, ձեռքը հետ տարավ և ֆարսիով երգեց:

Ես գիտեմ մի փոքրիկ, տխուր փերիի,

Ում մի գիշեր տարավ քամին:

Հորս ճակատին կնճիռներ հայտնվեցին: Մի կարճ անցողիկ վայրկյան նրա աչքերի մեջ իմաստալից շող հայտնվեց, բայց հետո այդ կայծն էլ անհայտացավ, և դեմքը դարձյալ անթափանց դարձավ: Նա թափ տվեց գլուխը.

⁴⁶ Օ՛հ, Տեր իմ Աստված (ֆրանս.):

— Ո՛հ, ո՛հ, չեմ կարծում՝ շարունակությունն այդպես էր:

— Օ՛հ, Աբդուլլահ,— ասաց Փարին:

Արցունքն աչքերին՝ նա ժպտալով ձգվեց ու բռնեց հորս ձեռքերը: Համբուրեց ափերն ու սեղմեց իր այտերին: Բաբան քմծիծաղ տվեց, նրա աչքերից էլ արցունքներ էին թափվում: Փարին նայեց ինձ արցունքների միջից երջանիկ հայացքով: Ես հասկացա, որ նա կարծում է՝ ճեղքել է պատնեշը և միացել է իր եղբորը այդ կախարհական երգի միջոցով հեքիաթի մի ոգեղեն էակի պես: Նրան թվում էր, որ հայրս լրիվ ճանաչել էր իրեն, բայց նա շուտով հասկանալու էր, որ հայրս ուղղակի արձագանքում էր իր ջերմ հպմանը և սիրո դրսևորմանը: Դա միայն կենդանական բնագոյ էր, ուրիշ ոչինչ, և ես տեսնում էի այն ցավալի պարզությամբ:



Մի անգամ բժիշկ Բաշիրին հանձնեց ինձ հոսպիսի հեռախոսահամարը: Մորս հետ մենք գնացինք Սանթա Բրուզ և հանգստյան օրերին մնացինք հյուրանոցում: Մայրս չէր սիրում երկար ճամփորդություններ, բայց մենք գնում էինք կարճ արշավների, մինչև նա իսկապես սկսեց շատ վատ զգալ: Բաբան աշխատում էր ռեստորանում, իսկ ես մորս մեքենայով տանում էի Բողեգայի նավահանգիստ Սաուսալիտո կամ Սան Ֆրանցիսկո, ուր մենք միշտ մնում էինք Միասնության հրապարակի մոտի հյուրանոցում: Մենք տեղավորվում էինք մեր սենյակում, ուտելիք էինք պատվիրում, նաև ֆիլմեր: Հետո երեկոյան ոտքով գնում էինք Վարֆ, որովհետև մայրս հեշտությամբ ընկնում էր զբոսաշրջիկների համար նախատեսված բոլոր թակարդների մեջ: Այնտեղ մենք մրգի պաղպաղակ էինք գնում և նայում, թե ինչպես կամրջի հիմքի մոտ ծովառյուծները մերթընդմերթ գլուխները հանում են ջրից: Մենք դրամներ էինք նետում փողոցի կիթառահարների տուփերի և մնջախաղի դերասանների քսակների մեջ: Միշտ գնում էինք նաև ժամանակակից արվեստի թանգարան, ուր փաթաթված քայլում էինք, և ես մորս ցույց էի տալիս Ռիվիերայի, Կալոյի, Մատիսի և Փոլլոքի գործերը: Նաև գնում էինք կինո՝ ցերեկային սեանսի, որ մայրս շատ էր սիրում, և իրար հետևից երկու-երեք ֆիլմ էինք դիտում ու դուրս էինք գալիս մշուշ-

ված աչքերով, զնգացող ականջներով, և մեր մատներից պոպկոր-
նի հոտ էր գալիս:

Միրս հետ ավելի հեշտ էր, միշտ այդպես էր եղել, ավելի պարզ,
նվազ վտանգավոր: Ես ստիպված չէի ինձ անվերջ վերահսկել և վե-
րանայել ասածներս՝ մտավախությամբ, որ կարող եմ ցավ պատ-
ճառել: Միրս հետ այդ զբոսանքները նման էին փափուկ ամպիկի
քնքուշ հպման, և մի քանի օրով իմ բոլոր մտահոգությունները նա-
հանջում էին ու հեռանում հազարավոր մղոններ հեռու:

Տարվա վերջում նա դարձյալ քիմիաթերապիա անցավ, որը,
պարզվեց, վերջինն էր: Մեր հյուրանոցը գեղեցիկ, մեկուսի մի վայ-
րում էր: Այն ուներ սպա, խաղասենյակ՝ մեծ էկրանով հեռուստա-
ցույցով, և բիլիարդի մի սեղան: Մեր սենյակը մի տնակ էր՝ փայտյա
նախամուտքով, որտեղից երևում էին լողավազանը, ռեստորանը
և վերև խոյացող ու ամպերին հասնող ծառերը: Ծառերն այնքան
մոտ էին, որ երբեմն կարելի էր նկատել բունն ի վար սլացող սկյու-
ռի մորթու գույների նրբերանգները: Մեր առաջին առավուտը մայրս
արթնացրեց ինձ ու ասաց.

— *Արագացրո՛ւ, Փարի՛, դու պետք է տեսնես սա:*

Պատուհանի տակ՝ թփուտների մոտ, մի եղնիկ էր արածում: Ես
հիվանդասայլակը քշում էի այգիների միջով:

— *Այս ի՛նչ տեսք ունեն,*— ասում էր մայրս:

Ես սայլակը կանգնեցնում էի շատրվանի մոտ, ինքս նստում էի
կողքի նստարանին. արևը ջերմացնում էր մեզ, և ճպուռները թռչում
էին ծաղիկների մեջ, մայրս քնում էր, և ես սայլակը քշում էի տուն:

Կիրակի առավոտ մենք թեյ ու կրուասան էինք վայելում ռես-
տորանի պատշգամբում: Ռեստորանը գմբեթարդ առաստաղով մի
շինություն էր՝ գրապահարաններով, մի պատի վրա ամրացված էր
«երազահալաճը», իսկ մյուս պատի վրա՝ իսկական քարից պատ-
րաստված բուխարին: Ներքևի մասում դերվիշի դեմքով մի տղա-
մարդ և մի շիկահեր աղջիկ միապաղաղ ու դանդաղ պինգ-պոնգ
էին խաղում:

— *Մի քան պիտի անենք հոնքերի հետ,*— ասաց մայրս: Նա
սվիտերի վրայից վերարկու էր հագել և դահուկորդի բրոյա գլխարկ,
որ ինքն էր գործել մեկուկես տարի առաջ, մինչև, մորս ձևակերպ-

մամբ, «տոնակատարությունների» սկիզբը:

— Ես կնկարեմ քեզ համար հոնքեր:

— Դե, ողբերգական հոնքեր նկարիր ինձ համար:

— Էլիզաբեթ Թեյլորի հոնքերի պէս՝ «Կլեոպատրա»-ից:

Մայրս թույլ ժպտաց.

— Իսկ ինչո՞ւ ոչ:

Նա մի փոքր ունայ թեյ խմեց: Ծիծաղը ընդգծեց նրա դիմագծերի փոփոխությունը:

— Երբ հանդիպեցի Աբդուլլային, հագուստ էի վաճառում Փեշավարի նրբանցքներից մեկում, և նա ասաց, որ գեղեցիկ հոնքեր ունեմ:

Պինգ-պոնգ խաղացող զույգը մի կողմ դրեց թիակները: Նրանք հենվեցին փայտյա բազրիքին և սկսեցին երկնքին նայելով ծխել՝ սիգարետն իրար փոխանցելով: Երկինքը պարզ էր, լուսավոր, ամպի մի քանի ծվեն կար միայն: Աղջկա թևերը երկար էին, ոսկրոտ:

— Ես թերթում կարդացել եմ, որ այսօր Կապիտոլայում արվեստի գործերի և կիրառական արվեստների ցուցահանդես-վաճառք կա,— ասացի ես:— Եթե կուզենաս, կարող եմք գնալ և նայել կամ նույնիսկ ճաշել այնտեղ:

— Փարի՞:

— Այո:

— Ուզում եմ քեզ բան ասել:

— Ասա՛:

— Աբդուլլան եղբայր ունի Պակիստանում: Խորթ եղբայր:

Ես շրջվեցի մորս կողմը:

— Անունն Իքբալ է: Երկու որդի ունի և ապրում է Փեշավարի մոտ՝ փախստականների ճամբարում:

Ես բաժակս դրեցի, ուզեցի խոսել, բայց նա ընդհատեց ինձ:

— Հիմա քեզ ասում եմ այդ մասին, այնպես չէ՛: Դա է միայն կարևորը: Հայրդ էլ իր պատճառներն ունեւ: Վատահ եմ, որ կհասկանաս ու կտեսնես նրանց որոշ ժամանակ անց: Կարևորն այն է, որ նա խորթ եղբայր ունի և եղբորը դրամական օգնություն է ուղարկում:

Նա պատմեց ինձ, որ տարիներ շարունակ հայրս իմ հորեղբո-

րը երեք ամիսը մեկ հազար դոլար է ուղարկել՝ Վեսթերն Յունիոնի միջոցով փոխանցելով այն Փեշավարի բանկ:

Ես այդ մտքից ներքին խլրտում զգացի:

— *Իսկ հիմա ինչո՞ւ որոշեցիր ինձ պատմել դա:*

— *Որովհետև դու պիտի իմանաս, շուտով դու ես զբաղվելու ընտանիքի ֆինանսական գործերով և այսպես թե այնպես կիմանաս այդ մասին:*

Ես շրջվեցի և տեսա, թե ինչպես պոչը վեր տնկած մի կատու շարժվեց դեպի պինգ-պոնգ խաղացող զույգը: Աղջիկը ձգվեց, սկսեց շոյել նրան: Կատվի մարմինը սկզբում պրկվեց, բայց հետո մռռանը պառկեց բազրիքին ու թողեց, որ աղջիկը շոյի իր մեջքը, խուտուտ տա ականջները: Ուղեղս եռում էր: Պարզվեց, որ Ամերիկայից դուրս ես հարազատներ ունեմ:

— *Մայրի՛կ, մեր տան հաշվապահությունը միշտ դու ես արել ու դեռ երկար ժամանակ դու ես անելու,* — ասացի՝ փորձելով թաքցնել ձայնիս դողը:

Լարված լուրթուն տիրեց: Հետո մայրս դարձյալ խոսեց, ավելի ցածր, համոզող ձայնով, կարծես ես փոքր լինեի: Այդպես էր լինում, երբ մենք պիտի գնայինք մզկիթ՝ թաղման, և նա կողքս էր նստում ու համբերատար բացատրում, որ պետք է մզկիթի մոտ կոշիկները հանել, որ պետք է լուռ մնալ աղոթքների ժամանակ, չբզբզել, չբողոքել: Իսկ հիմա պետք է գնամ զուգարան, որ հետո չուզեմ:

— *Ես էլ չեմ զբաղվի հաշվապահությամբ: Չկարծես, որ այդպես է լինելու: Ժամանակը եկել է, և դու պիտի պատրաստ լինես դրան:*

Ես օդը դուրս փչեցի: Ինչ-որ մի օղակ սեղմեց կոկորդս: Հեռվում անվավոր սղոցի բզբոցն էր, որ տարօրինակ ծղրտոցի էր հասնում՝ բարձրանալով և արձագանքելով անտառների փառավոր լռության մեջ:

— *Քո հայրը կարծես երեխա լինի: Վախենում է լքված լինելուց. առանց քեզ նա իր ճամփան կկորցնի, Փարի՛, էլ երբեք չի վերադառնա:*

Ես նայեցի ծառերին, արևի լույսն ընկնում էր խիտ սաղարթների և փշոտ ծառաբների վրա: Լեզուս սահեցրի կտրիչներիս արանքը

և ուժեղ կծեցի, ու աչքերս լցվեցին արցունքով, իսկ բերանս՝ արյան պղնձահամով:

— Հորեղբայրս, — ասացի ես:

— Այո՛:

— Ես շատ հարցեր ունեմ:

— Հենց այսօր էլ կտաս բոլոր հարցերդ: Մի քիչ հանգստանա՛մ ու ամեն ինչ կպատմեմ:

Ես գլխով արեցի և խմեցի արդեն սառած թեյը: Կողքի սեղանի մոտ միջին տարիքի մի գույգ թերթ էր կարդում: Կարմրամազ, բաց դեմքով կինը հանգիստ նայում էր մեզ, հայացքն անընդհատ դառնում էր մորս մոխրագույն դեմքին, գործած գլխարկին, կապտուկներով պատված ձեռքերին, մարած աչքերին և մեռելային ժպիտին: Երբ մեր հայացքները հանդիպում էին, կինը ժպտում էր, կարծես մեր միջև մի ընդհանուր գաղտնիք կար, և ես զգում էի, որ նա նույնն էր մտածում:

— Հը՛, ինչ ես կարծում, մայրիկ: Գնանք տոնավաճառ, թե՛ չէ՛:

Մորս հայացքը սառեց դեմքիս: Աչքերը չափից դուրս մեծ էին գլխի համար, գլուխը՝ չափից դուրս խոշոր՝ ուսերի համար:

— Կարող եմ նոր գլխարկ դնել, — ասաց մայրս:

Ես անձեռոցիկը դրեցի սեղանին, աթոռս հետ հրեցի և անցա սեղանի մյուս կողմը: Հետո իջեցրի հիվանդասայլակի արգելակը և հրեցի սայլակը սեղանից հեռու:

— Փարի՛:

— Այո՛:

Նա գլուխը շրջեց ու նայեց ինձ: Արևի լույսը թափանցում էր փշատերև սաղարթներով և կետիկներով արտացոլվում նրա դեմքին:

— Դու գիտե՛ս, թե Աստված քեզ ինչքան ուժեղ է ստեղծել: Ինչ ուժեղ և ինչ լավ մարդ է նա քեզ ստեղծել:

Ուղեղի աշխատանքն անհնար է պատկերացնել: Օրինակ՝ այդ պահը: Մենք տարիներով ապրել ենք մորս հետ, բայց հենց այդ պահն են ես հիշում, առավելագույն պայծառությանը, այն ցայսօր զրնգում է մտքումս. մայրս գլուխը թեքած, ուսի վրայով ինձ է նայում, և լույսի կլոր կետերն առկայծում են նրա դեմքին, ու նա հարց-

նում է՝ արդյոք գիտեմ, թե Աստված ինձ ինչքան ուժեղ և բարի է ստեղծել:



Հայրս քնեց իր սայլակին, Փարին կոճկեց նրա ժակետը և ծածկեց շալով: Հետո մազերի փունջը դրեց ականջի հետևը և մի փոքր կանգնած մնաց՝ հսկելով նրա քունը: Ես էլ էի սիրում նայել հորս, երբ նա քնած էր լինում, որովհետև այդ ժամանակ նա նման չէր հիվանդի: Փակ աչքերում դատարկությունը չէր երևում, անհետանում էր բացակա ու անիմաստ հայացքը, և հորս դեմքը վերագտնում էր հարազատ մտերմությունը: Քնած ժամանակ նա ավելի իմաստուն, ավելի արթուն տեսք ուներ, կարծես միանում էր քնի մեջ իր իրական եսին: Հետաքրքիր է, արդյո՞ք Փարին, նրան նայելով, կարող էր պատկերացնել, թե ինչպիսին է եղել, ինչպիսի պահվածք ու ծիծաղ է ունեցել նա:

Մենք հյուրասենյակից անցանք խոհանոց: Ես թեյնիկը բերեցի և ջուր լցրի:

— Ես ուզում էի քեզ որոշ բաներ ցույց տալ,— ասաց Փարին ոգևորությունից դողացող ձայնով: Նա, սեղանի մոտ նստած, կենտրոնացած թերթում էր նկարների ալբոմը, որ հանել էր ժամպրուկից:

— Վախենում եմ՝ սուրճը փարիզյան ձևով չստացվի,— ասացի ես՝ ջուրը լցնելով սրճեփի մեջ:

— Ասեմ, որ ես սուրճի սիրահար չեմ:

Նա հանել էր շարժը և ակնոց էր դրել ու նայում էր նկարներին: Սրճեփը սկսեց բլթբլթալ, և ես նստեցի խոհանոցի սեղանի մոտ՝ Փարիի կողքին:

— Ահա, խնդրեմ,— նա բացեց ալբոմն ու հրեց իմ կողմը: Մատով ցույց տվեց մի նկար:

— Սա հենց այն տեղն է: Իմ ու հորդ ծննդավայրը: Եվ մեր եղբայր Իքբալի:

Երբ նա առաջին անգամ զանգեց ինձ, Փարիզից նույնպես հիշատակեց Իքբալի անունը, երևի իբրև ապացույց, որ չի ստում, և բոլոր ասածները ճիշտ են: Բայց ես առանց այդ էլ գիտեի, որ նա ճշմարտությունն է ասում: Ես դա գիտեի այն պահից, երբ վերցրի

լսափողը, և նա տվեց հորս անունը ու հարցրեց՝ արդյո՞ք հայրս այստեղ է ապրում: Եվ իմ հարցին, թե նա ով է, պատասխանեց.

— Ես նրա քույրն եմ...

Եվ այդ պահին սիրտս սկսեց կատաղի բաբախել: Ես ձեռքով սկսեցի աթոռ փնտրել, որ նստեմ: Շուրջս ամեն ինչ կարծես սառել էր: Դա իրական ցնցում էր, երրորդ բեմական թատերական գործողության նման մի բան, որ գրեթե երբեք չի պատահում իրական կյանքում: Բայց ոչ գիտակցական մակարդակում, առավել փխրուն և անորոշ վերգիտակցական պլանում, որ հնարավոր չէր բացատրել, քանզի այն հենց այդ պահին կարող էր չքանալ, այդ առեղծվածային տիրույթում Փարիի զանգն ինձ համար անսպասելի չէր: Կարծես ես սպասում էի այդ զանգին, ամբողջ կյանքումս, որ մի գլխապտույտ նախախնամությամբ կամ պատահական հանգամանքների կամ ճակատագրի բերումով, ինչպես ուզում եք անվանեք, մենք կգտնենք իրար:

Ես լսափողը հետո տարա և նստեցի աթոռին՝ բանջարեղենի մարգի մոտ: Այդտեղ ես աճեցնում էի կանաչ պղպեղ և մորս տնկած հսկայական դդումը: Արևը ջերմացնում էր մեջքս: Ես դողացող ձեռքերով մի սիգարետ վառեցի:

— Ես գիտեմ՝ Դուք ով եք,— ասացի ես:— Ողջ կյանքս գիտեի:

Զրուցակիցս լռեց, բայց տպավորությունն այնպիսին էր, որ նա անձայն ողբում է՝ լսափողը հեռու պահած:

Մենք մոտ մի ժամ խոսեցինք: Ես պատմեցի, որ գիտեմ, թե ինչ է կատարվել իր հետ, քանի որ հայրս բազմիցս վերապատմել էր իր պատմությունը: Փարին ասաց, որ ինքը չգիտեր իր սեփական կյանքի պատմությունը և գուցե այդպես չիմանալով էլ մահանար, եթե նամակ չստանար իր խորթ քեռի Նաբիից, որը մահացել էր Քաբուլում: Նամակում այլ բաների հետ մանրամասն նկարագրված էր Փարիի մանկությունը, նրա հետ պատահած իրադարձությունները: Նաբին նամակը հանձնել էր ոմն Մարկոս Վարվարիսի, որը Քաբուլում վիրաբույժ էր աշխատում: Վարվարիսը գտել էր Փարիին Ֆրանսիայում: Ամռանը ինքը թռել էր Քաբուլ, հանդիպել Մարկոս Վարվարիսին, որը և կազմակերպել էր նրա ուղևորությունը Շադբադ:

Խոսակցության վերջում Փարին հավաքեց ինքնատիրապետուն ու ասաց.

— *Դե, կարծում եմ, ես հիմա պատրաստ եմ: Կարող եմ խոսել եղբորս հետ:*

Եվ ես ստիպված էի ամեն ինչ պատմել նրան:

Ալբոմը մոտ բերեցի և ուշադիր զննեցի Փարիի ցույց տված լուսանկարը: Մի առանձնատուն էր կուրացուցիչ սպիտակ պարսպի հետևում, որ պատված էր փշալարով: Կամ, ավելի ճիշտ, դա առանձնատան ողբերգական մի ծաղրանկար էր՝ եռահարկ, վարդագույն, կանաչ, սպիտակ, դեղին բազրիքներով, փոքր աշտարակներով, զարդաքանդակ քիվերով, մանրանկարներով և երկնաքերներին հատուկ հայելանման ապակիներով:

— Աստված իմ,— շունչս կտրվեց:

— *C'est affreux, non?*— ասաց Փարին:— Ահավոր է: Աֆղանները դրանք անվանում են Նարկոպալատներ: Պատերազմի հանցագործներից մեկի տունն է:

— Սա՛ է մնացել Շադբադից:

— Հին գյուղից՝ այո: Այս տունն ունի հեկտարներով պտղատու այգիներ, և ինչպե՛ս են անվանում՝ *des vergers*.

— Պարտեզներ:

— Այո՛:

Նա մատը սահեցրեց լուսանկարի վրայով:

— Շատ կուզենայի իմանալ մեր հին տան ճշգրիտ տեղը: Այս անորակ պալատի դ՛ր մասում է: Կոնկրետ դ՛ր կետում:

Նա նաև պատմեց ինձ նոր Շադբադի մասին, որ սովորական մի քաղաք էր՝ դպրոցներով, հիվանդանոցով, առևտրական թաղամասով և նույնիսկ փոքր հյուրանոցով, որը կառուցվել էր երկու տարի առաջ հին գյուղի մոտ: Այդ քաղաքում ինքն ու թարգմանիչը փնտրում էին խորթ եղբորը: Մեր առաջին, շատ երկար տևած հեռախոսային խոսակցության ընթացքում ես իմացա, որ քաղաքում ոչ ոք ոչինչ չգիտեր Իքբալի մասին: Բայց հետո Փարին հանդիպել էր մի ծեր մարդու, որը Իքբալի մանկության ընկերն էր, և տեսել էր, որ նա իր ընտանիքի հետ ապրում էր ջրաղացի մոտակայքում՝ ամայի դաշտի մեջ: Իքբալն ընկերոջը պատմել էր, որ եկել է Պակիս-

տանից, որ փող է ստանում հյուսիսային Կալիֆոռնիայում բնակվող իր մեծ եղբորից:

— Ու ես հարցրի,— ասաց Փարին հեռախոսով:— Ես հարցրի այդ մարդուն՝ արդյոք Իքբալը տվել է իր մեծ եղբոր անունը, և ծեր մարդն ասաց՝ այո, Աբդուլլա: Եվ այդ ամենից հետո, *alors*, մնացածը այնքան էլ դժվար չէր: Նկատի ունեմ քո և հորդ գտնվելու տեղը:

— Ես Իքբալի ընկերոջը նաև հարցրի, թե որտեղ է խորթ եղբայրս,— ասաց Փարին:— Հարցրի՝ ինչ է պատահել եղբորս հետ, նա ասաց, որ ոչինչ չգիտի: Բայց այդ պահին շատ նյարդային էր և հայացքը չէր բարձրացնում: Կարծում եմ, մտավախություն ունեմ, որ Իքբալի հետ մի վատ բան է պատահել:

Նա նորից թերթեց ալբոմի էջերը և ցույց տվեց իր երեք զավակների՝ Ալենի, Իզաբելի և Թիերիի նկարները, իր թոռների լուսանկարները ծնունդների, հավաքույթների ժամանակ: Նաև լողազգեստով ջրավազանի կողքին նստած: Ցույց տվեց փարիզյան իր բնակարանի նկարը, որի պատերը բաց կապույտ էին, կրկնակի պատուհաններն էլ՝ սպիտակ: Պատերին բազմաթիվ դարակներ կային: Ցույց տվեց նաև իրերով ծանրաբեռնված աշխատասենյակը համալսարանում, որտեղ նա աշխատում էր իբրև մաթեմատիկայի դասախոս մինչև ռևանտիզմի պատճառով թոշակի գնալը:

Ես թերթում էի էջերը, իսկ Փարին մեկնաբանում էր լուսանկարները. սա իր ընկերուհի Կոլլետն է, սա Իզաբելի ամուսին Ալբերտն է: Փարիի ամուսին էրիկը դրամատուրգ էր: Նա մահացել էր սրտի կաթվածից 1997 թվականին: Ես կանգ առա մի նկարի վրա, ուր նրանք պատկերված էին երկուսով՝ աներևակայելիորեն երիտասարդ, ինչ-որ մի ռեստորանում, նարնջագույն բարձերին կողք կողքի նստած: Փարին սպիտակ բլուզով էր, ամուսինը՝ մարգական վերնաշապիկով, երկար մազերը կապած:

— Հենց այդ երեկո մենք հանդիպեցինք,— ասաց Փարին:— Դա մեր սիրավեպի սկիզբն էր:

— Շատ բարի դեմք ունի:

Փարին գլխով արեց:

— Երբ մենք ամուսնացանք, ես մտածեցի, որ մեր առջև մի ամբողջ կյանք կա, առնվազն երեսուն կամ քառասուն տարի, իսկ

գուցե հիսուն, եթե բախտներս բերի:

Նա նայեց նկարին շփոթված, հետո մեղմ ժպտաց:

— Բայց ժամանակը հմայքի պես բան է: Միշտ ուզում եմ ավելի շատ ունենալ:

Նա այբոմը մի կողմ հրեց և մի կում սուրճ խմեց:

— Իսկ դու երբեք չե՞ս ամուսնացել:

Ես ուսերս թոթվեցի և շրջեցի էջը:

— Դե, մի շատ «մոտիկ զանգ» եղավ:

— Կներես, «մոտիկ զանգ» ասելով ինչ նկատի ունես:

— Դե, համարյա ամուսնանում էի: Բայց պաշտոնական փուլին չհասանք:

Դա ճիշտ չէր: Ամեն բան ավելի ցավալի էր ու խառը: Մինչև հիմա էլ՝ այդ պատմությունը հիշելիս, սրտումս ցավ էի զգում:

Փարին գլուխը թեքեց:

— Կներես: Ցավում եմ, շատ կոպիտ էի:

— Չէ, նորմալ է: Նա ավելի գեղեցիկ և ավելի շփվող մի կին գտավ: Հա, ասացինք՝ գեղեցիկ, ասա, ո՞վ է այս գեղեցիկ կինը:

Ես մատնացույց արեցի մի սևամազ, մեծ աչքերով կնոջ նկար: Այդ նկարում նա անփույթ, կարծես աշխարհից ձանձրացած, բռնել էր սիգարետը: Արմունկը պինդ սեղմել էր կողքին, գլուխն անհոգ հետ էր գցել, բայց հայացքը խորն էր ու տառապագին:

— Դա մայրս է՝ Նիլա Վահդատին: Նա, որ ես կարծում էի՝ իմ մայրն է: Հասկանո՞ւմ ես:

— Շքեղ կին է,— ասացի ես:

— Շքեղ կին էր: Նա ինքնասպանություն գործեց 1974 թվականին:

— Ցավում եմ:

— Ոչ: Ամեն ինչ նորմալ է:

Նա մատը մտացրիվ սահեցրեց նկարի վրայով:

— Մայրս նրբագեղ էր և տաղանդավոր: Նա շատ էր կարդում և իր կարծիքը ազատ արտահայտում էր: Բայց իր մեջ ամրացած շատ խոր վիշտ կար: Նա բահը տալիս էր ինձ և ասում. «*Լցրու հոգուս փոսերը, Փարի՛*»:

Ես գլխով արեցի: Ես դա լավ էի հասկանում:

— Ես չէի կարող և նաև չէի ուզում: Ես շատ անզգույշ բաներ

էի անում: Նաև անգութ: Նա նստեց աթոռին, կորացած ուտերով և նուրբ սպիտակ ձեռքերը դրեց ծնկներին և մտազբաղ արտաբերեց *J'aurais dû être plus gentille* — ես պետք է ավելի բարի լինեի մորս հանդեպ: Դա մի պահվածք է, որի համար մարդ երբեք չի ավստում ծերանալուց: Ինքդ քեզ երբեք չես ասում՝ *երանի ես բարի չլինեի այդ մարդու հանդեպ*: Այդպես երբեք չես մտածի: Մի պահ նա նստած էր հուզված, անօգնական դպրոցականի պես: Դա այդքան էլ բարդ չէ: Ես պիտի ավելի բարի գտնվեի: Ես պիտի քեզ նման լինեի:

Նա խոր հոգոց հանեց և փակեց ալբոմը, իսկ կարճ դադարից հետո ուրախ ասաց.

— *Ah, bon*, հիմա ուզում եմ քեզ հարց տալ:

— Իհարկե:

— Ցույց կտամ նկարներդ:

Մենք ժպտացինք միմյանց:



Փարին մեկ ամիս մնաց մեզ հետ: Առավոտները մենք միասին նախաճաշում էինք խոհանոցում: Փարին սև սուրճ ու տապակած հաց էր ուտում, ես՝ յոգուրտ, իսկ հայրս՝ ձվածեղ ու հաց: Անցյալ տարվանից հայրս սկսել էր ձվածեղ սիրել: Ես անհանգստացա, որ այդքան շատ ճուռուտելը կարող է բարձրացնել հորս խոլեստերինը, և տեսակցություններից մեկի ժամանակ ես այդ մասին հարցրի մեր բժիշկ Բաշիրին: Բաշիրին շրթունքները սեղմած ժպտաց և ասաց.

— Չարժի դրա համար անհանգստանալ:

Դա ինձ ուրախացրեց մի պահ, բայց երբ Բաբային օգնում էի ամրագրոտին հագնելու, մտքովս անցավ, թե բժիշկ Բաշիրին նկատի ուներ, որ վիճակն այնքան վատ է, ոչինչ չի կարող վատթարացնել այն:

Նախաճաշից հետո ես անցնում էի իմ աշխատասենյակը կամ իմ ննջասենյակը, և Փարին մնում էր Բաբայի հետ: Նրա խնդրանքով ես կազմել էի հորս սիրած հեռուստաշոունների, դեղերի ընդունման գրաֆիկը, սիրած ուտելիքների ցուցակը: Փարին խնդրեց գրանցել այդ ամենը:

— *Կարող ես ներս գալ ու հարցնել,*— ասացի ես:

— *Չեմ ուզում խանգարել քեզ: Ես ուզում եմ իմանալ: Ուզում եմ ճանաչել եղբորս:*

Ես չասացի նրան, որ նա երբեք չի կարողանա հորս ճանաչել այնպես, ինչպես կուզենար: Համենայն դեպս ես պատմեցի Փարիին այն ամենը, ինչ գիտեի հորս մասին: Օրինակ, երբ Բաբան սկսում էր նյարդայնանալ, ես ոչ միշտ, բայց բավականին հաճախ կարողանում էի հանգստացնել նրան՝ տալով նրան տան ապրանքների կատալոգ կամ կահույքի վաճառքի գովազդաթերթիկ: Ինչու էր հայրս դրանից հանգստանում՝ ինձ համար գաղտնիք էր, բայց ես բազում նման ամսագրեր ու գովազդաթերթիկներ էի գնում:

— *Եթե ուզում ես, որ հայրիկը քնի, միացրու եղանակի տեսությունը կամ գուֆի մրցաշարը: Բայց երբեք խոհարարական հաղորդումներ չմիացնես:*

— *Իսկ ինչո՞ւ:*

— *Չգիտես ինչու, այդ հաղորդումներից նա նյարդայնանում է:*

Ճաշից հետո մենք երեքով գնում էինք զբոսանքի: Զբոսանքները կարճ էին լինում, որովհետև հայրս շուտ էր հոգնում, իսկ Փարին հողաբորբ ուներ: Հայրս հոգնատանջ հայացքով, մի հին մարգական գլխարկ դրած, ժակետը և բրդյա մոկասիները հագին, երեքուն քայլում էր մայթով իմ ու Փարիի արանքում: Թաղամասում մի միջնակարգ դպրոց կար՝ ֆուտբոլի անխնամ դաշտով և խաղահրապարակով, ուր ես հաճախ տանում էի հորս: Խաղահրապարակում միշտ կարելի էր տեսնել երիտասարդ մայրիկների սայլակներով, ավագե բլրակն ի վեր մագլցող մանուկների: Երբեմն դասերից փախած դեռահասները թափառում էին այնտեղ ու ծխում: Դեռահասները Բաբային հազվադեպ էին հայացքի արժանացնում, իսկ եթե նայում էին, ապա՝ սառն անտարբերությամբ և նույնիսկ քամահրանքով, կարծես ներքին մեղադրանք էին ներկայացնում նրան ծերության և թշվառության համար:

Մի անգամ աշխատանքս ընդհատեցի և գնացի խոհանոց՝ թարմ սուրճ բերելու, և տեսա նրանց երկուսին ինչ-որ ֆիլմ դիտելիս: Հայրս նստած էր հիվանդասայլակին, գլուխը կրծքին կախած, բերանը կիսաբաց, մոկասիները դուրս էին ցցվել շալի տակից: Նա

խոժոռ էր, ինչը կենտրոնացվածության նշան էր: Փարին նստած էր հորս կողքին՝ ձեռքերը ծնկներին, ոտքերը խաչած:

— Սա ո՞ր մեկն է,— հարցնում էր հայրս:

— Սա Լատիկան է:

— Ո՞վ:

— Լատիկան: Ետնախորշերի փոքր աղջիկը: Նա, ով չկարողացավ գնացք նստել:

— Այդքան էլ փոքր չի երևում:

— Այո՛, բայց տարիներ են անցել,— բացատրեց Փարին:— Արդեն մեծացել է:

Մի շաբաթ առաջ խաղաիրապարակում, երբ մենք նստած էինք նստարանին, Փարին հանկարծակի հարցրեց. «Աբդուլլա՛, հիշո՞ւմ ես, որ երեխա ժամանակ դու մի փոքր քույր ունեիր»:

Հազիվ էր ավարտել նախադասությունը, երբ հայրս սկսեց ողբալ: Փարին գլուխը քաշեց ուսերի մեջ՝ խուճապահար ձայնով ասելով.

— Ես մեղավոր եմ, ես շատ ցավում եմ,— և մաքրում էր հորս արցունքները: Բայց հայրս շարունակում էր հեկեկալ այնքան աղիողորմ, որ սկսեց խեղդվել:

— Իսկ դու գիտե՞ս, թե ով է սա, Աբդուլլա՛:

Հայրս փնջացրեց:

— Դա Ջամալն է: Խաղային շոուից:

— Ո՛չ, դա ինքը չէ,— կոպիտ ասաց հայրս:

— Համաձայն չե՞ս:

— Նա թեյ է մատուցում:

— Բայց դա, ո՞նց էիր ասում, դա անցյալում էր, նախկինում, դա...

— Պայծառացում էր,— ասացի ես քթիս տակ՝ սուրճս խմելով:

— Խաղային շոուն հիմա է գնում, Աբդուլլա՛, իսկ նախկինում նա թեյ էր մատուցում:

Բաբան աննկատ թարթեց աչքերը: Էկրանի վրա Ջամալն ու Սալիմը նստած էին Միւմբայի բարձրահարկ շենքի վրա՝ ոտքերը թափահարելով:

Փարին ուշադիր նայում էր հորս՝ կարծես սպասելով, որ նրա աչքերում ինչ-որ բան կհայտնվի:

— Արի մի բան հարցնեմ, Աբդուլլա,— ասաց նա:— Եթե մի օր միլիոն դոլար շահես, ինչ կանես:

Հայրս դեմքը ծամածռեց, դիրքը փոխեց և ձգվեց հիվանդասայլակում ու դատարկ հայացքով նայեց Փարիին:

— Եթե ես միլիոն դոլար ունենամ, տուն կգնեմ այս փողոցում: Մենք կդառնանք հարևաններ, և ես ամեն օր կգամ, և մենք միասին հեռուստացույց կդիտենք:

Հայրս քնծիծաղ տվեց:

Բայց մի քանի րոպե անց, երբ ես իմ սենյակում, ականջակալներս հագած, տպում էի, հանկարծակի բարձր կերկերուն ծայն լսեցի, մեկը խոսում էր ֆարսիով: Ես հանեցի ականջակալներս ու վազեցի խոհանոց: Փարին սեղմվել էր պատին՝ միկրոալիքային վառարանի մոտ, ձեռքերը կզակի տակ սեղմած, իսկ հայրս չռված աչքերով նրա ուսին էր խփում մահակով: Ուռքերի մոտ ընկած էին կոտրված ապակու կտորներ:

— Դուրս այստեղից,— գոռում էր հայրս:— Թող այս կինը դուրս գա իմ տնից:

— Բաբա:

Փարին գունատվել էր, աչքերից արցունքներ էին հոսում:

— Փայտո՞ մի կո՞ղմ դիր, Բաբա, Աստծու սիրուն, և քայլ մի՛ գցիր, ուռքերդ կկտրես:

Ես փորձեցի խլել փայտը, հայրս ուժեղ դիմադրում էր:

— Թող այս կինը հեռանա: Նա գող է:

— Ինչ է ասում,— խեղճ-խեղճ ասաց Փարին:

— Նա գողացել է իմ դեղերը:

— Սրանք իր դեղերն են:

Ձեռքս դրեցի հորս ուսին և դուրս տարա խոհանոցից: Նրա ուսը դողում էր ձեռքիս տակ: Փարիի կողքով անցնելիս նա դարձյալ հարձակվելու փորձ արեց, և ես ստիպված էի հետ քաշել նրան:

— Հերի՞ք է, հերի՞ք է, Բաբա: Եվ դրանք նրա դեղերն են, քոնը չեն: Նա ձեռքերի համար է խմում այդ դեղերը:

Ես խանութի կատալոգը վերցրի և տարա սայլակի մոտ:

— Ես այդ կնոջը չեմ վստահում,— ասաց հայրս՝ թրմփալով սայլակի մեջ:— Դու չգիտես, բայց ես հո գիտեմ: Ես գողին առաջին

հայացքից եմ ճանաչում:

Դեռ շնչակտուր՝ նա ձեռքիցս խլեց կատալոգը և սկսեց նյարդայնորեն թերթել էջերը: Հետո կատալոգը աղմուկով դրեց ծնկներին և նայեց ինձ՝ հոնքերը վեր:

— Եվ նա նաև անիծյալ ստախոս է: Գիտե՞ս՝ ինչ ասաց: Ասաց, որ իմ քույրն է: *Իմ քույրը*: Տեսնենք՝ մայրդ ինչ կասի այդ մասին, երբ իմանա:

— Լավ, Բաբա՛, մենք միասին կասենք նրան:

— Խելագար կին:

— Լավ, մենք կպատմենք մամային, և մենք երեքով այդ կնոջը ծաղրելով դուրս կքշենք տնից: Դե՛, հիմա գնա և հանգստացիր, Բաբա՛: Ամեն ինչ լավ է:

Ես միացրի եղանակի տեսությունը, կողքին նստեցի ու սկսեցի շոյել ուտերը, մինչև նա դադարեց ցնցվելուց ու սկսեց հանգիստ շնչել: Հինգ րոպե անց նա արդեն քնած էր:

Ես գնացի խոհանոց, Փարին փռված նստել էր հատակին՝ մեջքը աման լվացող մեքենային հենած: Նա աչքերը սրբում էր թղթե անձեռոցիկով:

— Ցավում եմ,— ասաց նա,— ես անզգույշ գտնվեցի:

— Նորմալ է,— ասացի ես և լվացարանի տակից հանեցի աղբաթին ու խոզանակը: Հատակին թափված ապակու կտորների մեջ ցրված էին նարնջագույն հաբերը: Ես հավաքեցի դրանք և ավլեցի ապակիները լինոլեումի վրայից:

— *Je suis une imbécile*. Այնքան բան էի ուզում պատմել: Մտածեցի, որ եթե ժշմարտությունը պատմեմ... Չգիտեմ՝ խելքս որտեղ էր:

Ես դատարկեցի ապակիները աղբամանի մեջ, ծնկի իջա և բացեցի Փարիի վերնաշապիկի օձիքը՝ նայելու, թե ուրիշ որտեղ է հայրս հարվածել:

— Կապտուկ կառաջանա: Գործից հասկանալով եմ ասում:

Ես նստեցի նրա կողքին՝ հատակին:

Նա ափը պարզեց, և ես դեղերը լցրի ափի մեջ:

— Նա հաճախ է այդպիսին լինում:

— Դե, օրեր կան, երբ թույն է շնչում:

— Իսկ գուցե մասնագիտական օգնությամն դիմես:

Ես հառաչելով գլխով արեցի: Վերջերս շատ էի մտածել այն անխուսափելի օրվա մասին, երբ կարթնանամ դատարկ տան մեջ, իսկ Բաբան պառկած կլինի մի անծանոթ տեղում և ապշահար կնայի իր նախաճաշի սկուտեղին, որ ներս է բերել մի անծանոթ մարդ: Բաբան, սեղանի մոտ նստած, ինչ-որ անհայտ սենյակում գլուխը տմբտմբացնում է:

— Գիտեմ,— ասացի,— բայց ոչ հիմա: Ուզում եմ խնամել նրան, որքան հնարավոր է:

Փարին ժպտաց և աղմուկով քիթը մաքրեց:

— Ես հասկանում եմ:

Ես վստահ չէի, որ նա ինձ հասկանում էր: Ես նրան չհայտնեցի երկրորդ պատճառը, որովհետև նույնիսկ ինձ դա դժվարանում էի խոստովանել: Իսկ պատճառն այն էր, որ ես վախենում էի ազատությունից, թեպետ և տենչում էի դրան: Վախենում էի, թե ինչ կպատահի ինձ հետ, երբ հայրս հեռանա. ամբողջ կյանքս ես ապրել եմ ակվարիումի ձկան պես, ապահով ապակե պատերի ներսում, և այդ պատնեշը թափանցիկ էր ու անթափանցելի միաժամանակ: Ես կարող էի տեսնել ապակուց այն կողմ շողացող աշխարհը, ինքս ինձ պատկերացնել այդ աշխարհում, բայց պարփակվել, ներփակվել էի գոյության այն դժվար ու անտանելի շրջանակների մեջ, որ հայրս պարտադրել էր ինձ: Երիտասարդ տարիքում ես դա անում էի գիտակցաբար, իսկ հիմա՝ սրտի թելադրանքով, որովհետև հայրս աչքիս առաջ հանգչում էր: Ես կարծում էի, որ վարժվել եմ ապակուն և վախենում էի, որ այն կկոտրվի, և ես կմնամ մենակ, ու ինձ կքշի անհայտության ալիքը, և ես շնչահեղձ լինելով կմնամ կորսված ու անօգնական:

Ճշմարտությունն այն էր, որ ես հրաժարվում էի ինքս ինձ խոստովանելուց, որ ես ուզում էի զգալ հորս բեռն իմ մեջքին:

Եթե դա այդպես չէր, ապա ինչո՞ւ այդքան հեշտությամբ դավաճանեցի արվեստի դպրոցում սովորելու իմ երազանքին: Ես դիմադրություն ցույց չտվեցի, երբ Բաբան խնդրեց ինձ չզնալ Բալթիմոր: Ինչո՞ւ ես բաժանվեցի Նիլից, ում հետ նշանվել էի մի քանի տարի առաջ: Նիլն ուներ արևային էներգիայի տաքացուցիչների տեղադրման մի փոքր ձեռնարկություն: Նա քառակուսի կնճռա-

պատ դեմք ուներ: Նա ինձ դուր եկավ հենց առաջին վայրկյանից, երբ ես տեսա նրան էյբ Քաբոբ պանդոկում: Ես հարցրի նրան, թե ինչ է պատվիրելու, նա հայացքը կտրեց ճաշացանկից և ժպտաց: Նա համբերատար էր, բարյացակամ և լավ բնավորություն ուներ: Ինչ որ ես պատմեցի Փարիին, սուտ էր: Նիլը ինձ չէր լքել մեկ ուրիշ կնոջ համար: Ես նրա հանդեպ անմիտ խստապահանջություն էի դրսևորում: Եվ նույնիսկ երբ նա խոստացավ ընդունել իսլամ և գնալ ֆարսիի դասերի, ես, միևնույնն է, հազար թերություն էի գտնում, հազար պատճառաբանություն: Ի վերջո, ընկա խուճապի մեջ և վերադարձա իմ հին տաշտակներին, տան ծանոթ մթնոլորտին:

Փարին սկսեց բարձրանալ և ուղղել շորի ծալքերը, և ես նորովի վերապրեցի նրա հայտնվելու և կողքիս գտնվելու հրաշքը:

— Ուզում եմ քեզ մի բան ցույց տալ,— ասացի ես:

Վեր կացա տեղիցս ու գնացի իմ սենյակ: Տնից չհեռանալու առանձնահատկությունն այն է, որ ոչ ոք չի մաքրում սենյակդ անպետք իրերից, ոչ ոք չի վաճառում խաղալիքներդ և բաժանում շորերդ, որոնք արդեն փոքր են վրադ: Ես գիտեմ, որ երեսնամյա կնոջ համար ես մանկությունից մնացած չափազանց շատ իրեր եմ պահում: Դրանց մեծամասնությունն իմ մահճակալի տակի սնդուկում է: Ես դուրս քաշեցի այն ու բացեցի: Ներսում հին տիկնիկներ էին, մի վարդագույն պոնի, որի բաշը միշտ սանրում էի, նկարազարդ գրքեր, բոլոր ծննդյան շնորհավորանքները և Սուրբ Վալենտինի բացիկները, որ ես ծնողներիս համար իմ ձեռքով սարքել էի դպրոցում լոբու հատիկների, ուլունքների և փոքր փայլուն աստղիկների օգնությամբ: Մեր վերջին խոսակցության ժամանակ Նիլն ասաց.

— *Չեմ կարող սպասել, Փարի: Չեմ ուզում սպասել, մինչև մեծանաս:*

Ես փակեցի սնդուկը և գնացի հյուրասենյակ: Փարին նստած էր բազմոցին՝ հորս դիմաց: Ես նստեցի նրա կողքին:

— Ահա,— ասացի ես՝ փոխանցելով նրան բացիկների կապոցը:

Փարին ձգվեց, վերցրեց ակնոցը ու հանեց բացիկները միացնող ռետինե կապը: Առաջին բացիկը տեսնելով՝ նա հոնքերը կի-

տեց: Լաս Վեգասում գտնվող Կեսարի պալատի նկարն էր պատկերված բացիկին՝ շողարձակող լույսերի մեջ: Նա շրջեց բացիկն ու կարդաց.

Հուլիսի 21, 1992

— Միրելի՛ Փարի

Ձեռ պատկերացնի՛ ինչ շոգ է այստեղ: Այսօր հայրս ձեռքը դրեց մեքենայի ծածկին և այրվածքի բշտիկ տոացավ: Մայրս ստիպված էր ատամի մածուկ քսել այդ տեղի վրա: «Կեսարի պալատում» զինվորներ կան՝ թրերով, սաղավարտներով և կարմիր գլխարկներով: Բարան փորձում էր համոզել մայրիկին, որ նկարվի նրանց հետ, բայց չտոացվեց: Իսկ ես կարողացա: Հենց տուն հասնենք, ցույց կտամ քեզ: Այդքանը: Կարոտում եմ քեզ: Երանի այստեղ լինելի:

Փարի:

Հ. Գ. Ես գրում եմ և ուտում եմ պաղպաղակով հիանալի աղանդեր:

Փարին անցավ մյուս բացիկին: Սրտերի ամրոց: Նա կամացուկ կարդում էր. «Ամրոցն ունի սեփական կենդանաբանական այգի, կենդուրուներ, զեբրեր, այծյամներ, բակտրիական երկուսասպատանի ուղտեր»: Մի ուրիշ բացիկ Դիսնեյլենդից էր: Բացիկի վրա պատկերված էր Միկի Մաուսը՝ կախարդի գլխարկով, որ թափահարում էր փայտիկը: «Մայրս ճչաց, երբ կախաղանից տղան պոկվեց ու ընկավ, դու պիտի լսելի դա»:

Լա Ջոլլա Քոլ, Բիգ Սյուր, 17 Մայլ Դրայվ, Սյուիթ անտառներ: Թահոե լիձ:

Շատ եմ կարոտել քեզ: Քեզ սա դուր կգար:

Երանի դու ինձ հետ լինելի:

Երանի դու ինձ հետ լինելի:

Փարին հանեց ակնոցը.

— Դու ինքդ քեզ էիր բացիկները գրում:

Ես գլուխս տարուբերեցի:

— Քեզ էի գրում,— ու ժպտացի,— տարօրինակ է, չէ՛:

Փարին բացիկները դրեց սեղանին և մոտեցավ ինձ:

— Պատմիր ինձ:

Ես գլուխս կախ նայում էի ձեռքերիս և պտտեցնում ժամացույցը դաստակիս վրա:

— Ես երևակայում էի, որ մենք երկվորյակներ էինք՝ ես ու դու: Ինձնից բացի՝ քեզ ոչ ոք չէր տեսնում: Ես քեզ ամեն ինչ պատմում էի: Բոլոր գաղտնիքներս: Դու միշտ այնքան իրական էիր ինձ համար, այնքան մոտիկ: Քո շնորհիվ ես ինձ միայնակ չէի զգում: Մենք *Doppelgänger* զույգ էինք: Գիտե՞ս այդ բառը:

Փարիի աչքերը ժպտացին ինձ ի պատասխան:

— Ես պատկերացնում էի, որ մենք տերևներ ենք՝ նույն ծառից ընկած, և թեպետ քամին մեզ տարել է աշխարհի տարբեր ծայրեր, մեզ միացնում են ծառի արմատները:

— Իսկ ինձ մոտ հակառակն էր,— ասաց Փարին:— Դու ասացիր, որ դու ներկայություն էիր զգում, իսկ ես, ընդհակառակը, զգում էի, որ իմ կյանքից մի բան բացակա է: Դա անորոշ ցավ էր՝ անհայտ ակունքով: Ես նման էի մի հիվանդի, որը բժշկին չէր կարող բացատրել, թե ինչն է ցավում: Միայն գիտի, որ ցավում է: Նա ձեռքը դրեց ձեռքիս, և մի րոպե երկուսս էլ լուռ էինք:

Բաբան տնքաց ու շարժվեց իր տեղում:

— Շատ եմ ցավում,— ասացի ես:

— Ինչի՞ համար ես ցավում:

— Որ դուք երկուսդ իրար չափազանց ուշ գտաք:

— Բայց մենք *գոտանք* իրար,— ասաց նա՝ հուզմունքից բեկվող ձայնով:

— Սա իմ եղբայրն է: Ամեն բան կարգին է: Ես երջանիկ եմ: Ես գտել եմ իմ էության կորած մասը:— Նա սեղմեց ձեռքս:— Եվ ես գտել եմ քեզ, Փարի:

Ես փոքրուց էի երագում լսել այդ բառերը: Երբ միայնակ էի զգում, շշնջում էի նրա անունը, *մեր* ընդհանուր անունը և շունչս պահած սպասում էի, որ նա մի օր կարձագանքի: Եվ երբ Փարին տվեց իմ անունը, մեր անունը, մեզ բաժանող տարիները կարծես ծալվեցին, կծկվեցին՝ դառնալով լուսանկար, բացիկի չափ մի բան: Ես իմ մանկության մասունքի կողքին էի նստած, և նա բռնել էր ձեռքս ու տալիս էր անունս: Կարծես մի բան շխկոցով ընկավ տեղը: Մի

պատռված բան նորից միացավ: Կրծքիս մեջ մի բան էր սեղմվում, և մի խեղդված բարբախյուն վերագտնում էր իր ռիթմը իմ կողքին:

Բաբան սայլակի մեջ հենվեց արմունկներին, տրորեց աչքերը և, մեզ նայելով, ասաց.

— Աղջիկներ, էս ինչ դավեր եք նյութում:

Եվ քնծիծաղ տվեց:



Եվս մի օրորոցային երգ, այս անգամ Ավինյոնի կամրջի մասին:

Փարին մրմնջաց մեղեդին, հետո արտասանեց բաները.

— *Sur le pont d'Avignon*

L'on y danse, l'on y danse

Sur le pont d'Avignon

*L'on y danse tous en rond*⁴⁷.

— Մայրս սովորեցրեց, երբ փոքր էի, — ասաց նա՝ ավելի պինդ կապելով շարՖը՝ պաշտպանվելով ցուրտ քամուց: Օրը սառն էր, բայց երկինքն անամպ էր, ու արևը շողում էր: Այն խփվում էր Ռոն գետի մետաղյա մոխրագույն պատնեշին և ցոլում առկայծող ճառագայթներով: — Ֆրանսիացի ամեն երեխա գիտի այս երգը:

Մենք նստած էինք ջրափի փայտյա նստարանին: Փարին երգի բառերն էր թարգմանում, իսկ ես հիանում էի քաղաքով, որ տարածվում էր գետի մյուս կողմում: Իմ պատմությունը հայտնաբերելուց հետո, որը եղավ միայն վերջերս, ես ցնցված էի՝ գտնվելով մի քաղաքում, որ պռնկեպրունկ լեցուն էր պատմությամբ, և այդ պատմությունը խնամքով պահպանված ու արձանագրված էր: Ինձ ապշեցնում էին օդի մաքրությունը, գետի վրայով սահող քամին, որ ալիքները խփում էր քարե ափերին, լույսի առատությունը, որ

⁴⁷ «Ավինյոնի կամրջին
Պարում են ու պարում են:
Ավինյոնի կամրջին
Պտտվում են շուրջպարով»:

կարծես թափանցում էր բոլոր կողմերից: Զբոսայգու նստարանից երևում էին հին պարիսպները, որոնք երիզում էին քաղաքի կենտրոնը, Ավինյոնի տաճարի արևմտյան աշտարակը, որի գագաթին փայլում էր Սուրբ Մարիամի ոսկեգոծ արձանը:

Փարիս պատմեց ինձ այդ կամրջի պատմությունը: Մի երիտասարդ հովիվ (12-րդ դարում) ասել է, որ հրեշտակներն իրեն հրամայել են կամուրջ գցել այս գետի վրայով: Ի հաստատումն իր խոսքերի՝ նա մի հսկայական ժայռ է պոկել և գցել ջրի մեջ: Փարիս պատմեց նաև նավավարների մասին, որոնք բարձրանում են կամրջի վրա Սուրբ Նիկոլասին հարգանքի տուրք մատուցելու: Եվ նաև, որ դարեր շարունակ ջրհեղեղները քայքայում էին կամրջի կամարները՝ վերածելով դրանք փլատակների: Փարիս ամբողջ օրը խոսում էր նույն նյարդային, արագ շեշտադրությամբ, երբ առաջնորդում էր ինձ Պապի գոթական տաճարի մոտով: Հանում էր ականջակալները, որոնք աուդիո-ուղեկցողի դեր էին կատարում, և մատնացույց էր անում որմնանկարները, քաշում էր արմունկա՝ ուշադրությունս հրավիրելով փորագրությունների, մշուշոտ ապակու վերևում հատվող կողավանդակների վրա:

Պապի պալատի բակում նա խոսում էր անդադար, տալիս էր սրբերի, կարդինալների անուններ, մինչ մենք անցնում էինք հրապարակով: Մեր շուրջը աղավսիների երամներ էին, զբոսաշրջիկներ, վառ զգեստներով աֆրիկացի վաճառականներ, որ վաճառում էին ապարանջաններ և կեղծ ժամացույցներ, հաստ ապակիներով ակնոցով մի երաժիշտ, նստած խնձորի արկղի վրա, իր ակուստիկ կիթառով նվագում էր «Բոհեմական ռապսոդիան»: Ես չէի հիշում, որ Միացյալ Նահանգներ այցի ժամանակ նա այդքան շատ խոսեր, և ինձ թվում էր, որ դա մի բան հետաձգելու մարտավարություն է: Կարծես մենք պտտվում էինք մի բանի շուրջը, որը նա պատրաստվում է ասելու, որը մենք պիտի անենք, և բոլոր այս բառերը անցումի պես մի բան են:

— Բայց դու շուտով իրական կամուրջը կտեսնես,— ասաց նա:— Երբ բոլորը գան, մենք միասին կգնանք Պոնտ դյու Գար: Չգի-

տե՛ս՝ դա ինչ է: *Oh là là. C'est vraiment merveilleux*⁴⁸. Հռոմեացիներն են կառուցել այն առաջին դարում Յուրից մինչև Նիմ ջուր տեղափոխելու համար: Հիսուն կիլոմետր, պատկերացնում ես: Ինժեներական գլուխգործոց է:

Արդեն չորս օր է՝ ես Ֆրանսիայում էի, որից երկու օրը՝ Ավիյոնում: Փարիս ու ես նստեցինք արագընթաց գնացք և ամպամած սառը Փարիզից մտանք վճիտ երկնքի, տաք քամու մի քաղաք, ուր ամեն ծառից լսելի էր ծղրիղների ձայնը: Իսկ կայարանում խենթի պես ցատկոտում էի, որ դուրս հանեմ ուղեբեռս, և դա ինձ հագիվ հաջողվեց, որովհետև գնացքի դռները սուլոցով փակվեցին իմ հետևում: Մտովի արձանագրեցի, որ կպատմեմ Բաբային, թե ինչպես երեք վայրկյան էլ հապաղելու դեպքում կմնայի Մարսելում:

— *Ինչպե՛ս է հայրդ,* — հարցրեց Փարիս, երբ մենք Շառլ դը Գոլ օդանավակայանից տաքսիով գնում էինք նրա տուն:

— *Անցնում է իր ճանապարհը:*

Հայրս այժմ ծերանոցում էր ապրում: Երբ ես առաջին անգամ տեսա այդ հիմնարկությունը և տնօրենին, որի անունը Փեննի էր (մի բարձրահասակ, փխրուն կին էր՝ ելակի գույնի գանգուր մազերով), մտածեցի. «*Այնքան էլ վատ չէ*»:

Եվ հետո էլի առիթ ունեցա մտածելու, որ այնքան էլ վատ չէ:

Տեղը շատ մաքուր էր, պատուհանները նայում էին այգուն: Փեննին ասաց, որ ամեն չորեքշաբթի՝ չորսն անց կես, այգում թեյախմություն է կազմակերպվում: Հյուրասրահում տարածվել էր դարչինի և սոճու հոտը: Անձնակազմը (բոլորին արդեն անունով էի ճանաչում) քաղաքավարի, համբերատար և արհեստավարժ էր: Ես պատկերացնում էի ծերացած կանանց՝ թորշումած դեմքով, կզակին աճած մազերով, կանանց, որոնց բերանից թուք է հոսում, և որոնք խոսում էին իրենք իրենց հետ՝ հեռուստաէկրաններին կպած: Բայց ծերանոցի բնակիչներից շատերը նույնիսկ այնքան էլ ծեր չէին: Ոմանք նույնիսկ սայլակներին չէին:

— *Ես ավելի վատ բան էի ապաստում:*

— *Իսկապե՛ս,* — Փեննին ժպտաց հաճելի, հասկացող ժպիտով:

⁴⁸ Oh, լա, լա: Իրական հրաշք (ֆրանս.):

— Դա վիրավորական է: Կներեք:

— Բնավ: Մենք բաջատեղյակ ենք, թե մարդկանցից շատերն ինչ պատկերացում ունեն այդպիսի տեղերի մասին: Իհարկե,— զգուշավոր մի շեշտով ավելացրեց նա:— Սա մեր ամենօրյա խնամքի կարիք ունեցող մարդկանց մասնաշենքն է: Դատելով Ձեր հոր մասին Ձեր պատմածից՝ կարծում եմ, որ նա այստեղ լավ չի զգա իրեն: Ինձ թվում է՝ հիշողության հիվանդություններով մարդկանց բաժանմունքը շատ հարմար կլինի նրա համար: Ահա և տեղ հասանք:

Նա դուռը բացելու համար օգտագործեց քարտային բանալին: Փակ բաժանմունքից դարչինի և սոճու հոտ չէր գալիս: Ներսս տակնուվրա եղավ, և առաջին մղումս շրջվելն ու հեռանալն էր: Փեննին թևանցուկ արեց ինձ և սեղմեց ձեռքս: Նա նայում էր ինձ անսահման քնքշությամբ: Եվ մեր շրջայցի ամբողջ ընթացքում ես պայքար էի մղում մեղքի ներքին զգացման դեմ:

Եվրոպա մեկնելուց առաջ՝ առավոտյան, գնացի Բաբային տեսակցության: Անցա ամենօրյա խնամքի կարիք ունեցող մարդկանց բաժանմունքով և ձեռքով արեցի Կարմենին: Նա Գվատեմալայից էր: Նրա աշխատանքը զանգերին պատասխանելն էր: Ես անցա դահլիճ, որտեղ մի խումբ հնաբնակներ ունկնդրում էին ֆրակներ հագած ուսանողների երաժշտական քառյակի կատարումը: Անցա ժամանցի սենյակով, որտեղ կային համակարգիչներ, գրապահարաններ և նույնիսկ դոմինո: Անցա ցուցատախտակի մոտով, որի վրա փակցված էին հայտարարություններ և հիշեցումներ՝ «Մի՛ մոռացեք, որ սոյան իջեցնում է խոլեստերինը», «Խաչքառերի լուծման ժամը երեքշաբթի՝ 11:00-ին է»:

Ես մտա փակ բաժանմունք: Այնտեղ թեյախմություններ և բինգո խաղեր չկային: Վարժություններ էլ չկային: Գնացի Բաբայի մոտ, բայց նա սենյակում չէր: Անկողինը հավաքած էր, հեռուստացույցն՝ անջատած, սեղանիկին կիսատ ջրի բաժակ կար: Ես ուրախացա, որովհետև չէի սիրում, երբ տեսնում էի Բաբային անկողնում պառկած, ձեռքը բարձի տակ դրած, դատարկ աչքերով ինձ նայելիս:

Ես գտա հորս վերականգնողական սենյակում, սայլակին նստած՝ նա նայում էր պատուհանից բացվող այգուն: Հագին ֆլանելե

զգեստ էր և լրագրավաճառի գլխարկ: Նրա ծնկները ծածկված էին մարգական գոգնոցով, ինչպես Փեննին էր դա անվանում: Գոգնոցն ուներ բազմաթիվ թելեր, ծոպեր և կոճակներ, որոնց հետ հայրս խաղում էր մատներով: Փեննին ասում էր, որ գոգնոցը պահպանում է մատների շարժունակությունը:

Ես համբուրեցի հորս այտը և նպտեցի: Հայրս սափրված էր, ինչ-որ մեկը խոնավացրել և սանրել էր նրա մազերը: Դեմքից օժանի հոտ էր գալիս:

— *Վաղը կարևոր օր է,*— ասացի ես:— *Գնում եմ Ֆրանսիա՝ Փարիզին այցելելու: Հիշում ես, ես քեզ ասել եմ այդ մասին:*

Բաբան թարթեց աչքերը: Դեռ կաթվածից առաջ նա հեռանում էր, ընկնում երկարատև լուռ մոռացության գիրկը անհաղորդ տեսքով: Իսկ կաթվածից հետո հորս դեմքը նմանվել էր դիմակի, բերանը քարացել էր թեք, քաղաքավարի ժպիտով, որը էլ չէր երևում հորս աչքերի մեջ: Կաթվածից հետո նա այլևս ոչ մի բառ չարտասանեց: Երբեմն շրթունքները բացում էր և մի ձայն արտաշնչում: Վերջում տոնը բարձրացնում էր: Այդ ձայնը հնչում էր իբրև զարմացական բացականչություն կամ ինչ-որ բանի բացահայտում:

— *Մենք հանդիպելու ենք Փարիզում, հետո գնացքով գնալու ենք Ալիսյուն: Դա Ֆրանսիայի հարավում մի քաղաք է: Այնտեղ էին ապրում պապերը տասնչորսերորդ դարում: Մենք այնտեղ տեսարժան վայրերն ենք դիտելու: Բայց մի բան էլ կա. Փարիզ երեխաներին ասել է իմ մասին, և նրանք գալու են ինձ տեսնելու:*

Հայրս ժպտաց նույն կերպ, ինչպես ժպտում էր անցյալ շաբաթ այցելության եկած Հեկտորին, և նույն կերպ, երբ ցույց տվեցի նրան արվեստների քոլեջ (Սան Ֆրանցիսկո) ներկայացրած իմ հայտը:

— *Քո զարմուռին՝ Իզաբելը, և նրա ամուսինը՝ Ալբերտը, արձակուրդ են գնացել Պրովանսի Լե Բո քաղաքը: Ես համակարգչով նայել եմ: Դա մի սքանչելի քաղաք է: Այն կառուցված է կրաքարե սարերի վրա՝ Ալպերում: Այնտեղ կան միջնադարյան ամրոցների ավերակներ, դաշտեր և պարտեզներ: Շատ նկարներ կանեմ, որ ցույց տամ:*

Մեր կողքին խալաթով մի կին կենտրոնացած խճանկարի կտորներն էր հավաքում: Մյուս սեղանի մոտ փարթամ սպիտակ մազերով մի ուրիշ կին փորձում էր դասավորել պատառաքաղները,

գդալներն ու դանակները սպասքի տուփի մեջ: Անկյունում դրված հեռուստացույցի էկրանին վիճում էին Ռիկին և Լյուսին, նրանց ձեռքերը միացած էին ձեռնաշղթայով:

Բարան ասաց.

— Ահա:

— Ալենը՝ զարմիկդ, և նրա կինը՝ Աննան, գալու են Իսպանիայից իրենց հինգ երեխաներով: Ես դեռ նրանց անունները չգիտեմ, բայց, իհարկե, կհմանամ: Եվ մի բան էլ, որ Փարիին իրապես երջանկացրեց, նրա փոքր որդին՝ Թիերին, նույնպես գալիս է: Քանի տարի Փարին Թիերինն չի տեսել: Նրանք իրար հետ չեն խոսել: Բայց նա արձակուրդ է վերցրել և Աֆրիկայից գալիս է: Մեծ քնտանեկան հանդիպում է սպասվում:

Ես վեր կացա ու մեկ անգամ էլ համբուրեցի հորս: Այտս հպած պահեցի հորս այտին և հիշեցի, թե ինչպես էր նա ինձ տանում «Դեննիս»: Երկուսս նստում էինք տաղավարում, սպասում էինք, որ մայրս դուրս գա աշխատանքից: Ես ուտում էի մենեջերի տված պաղպաղակը և ցույց էի տալիս Բաբային այդ օրը արած նկարներս: Եվ նա համբերատար նայում էր դրանք, ուսումնասիրում, գլխով անում:

Բարան ժպտաց իրեն հատուկ ժպիտով:

— Ա՛հ, լրիվ մոռացել էի:

Ես կռացա և, ըստ մեր հրաժեշտի ավանդույթի, մատներս սահեցրի հորս այտերով, կնճռոտ ձակատով, քունքերով, սպիտակ նոսրացող մազերով, ապա՝ ականջների հետևի կոշտացած մաշկով՝ նրա գլխից վանելով բոլոր վատ երազները, բացեցի անտեսանելի պարկը, բոլոր մոծավանջները լցրեցի պարկի մեջ և քաշեցի պարկի թելերը:

— Ահա:

Հայրս ստամոքսի խորքից մի ձայն արձակեց:

— Բարի երազներ, հայրիկ: Երկու շաբաթ անց կտեսնվենք:

Մտածեցի, որ երբևէ այդքան երկար ժամանակով չենք բաժանվել:

Հեռանալիս պարզորոշ զգում էի, որ հայրս նայում է իմ հետևից, բայց երբ շրջվեցի, գլուխը խոնարհած խաղում էր գոգնոցի կոճակի հետ:

Փարին պատմում էր իզաբելի և Ալբերտի տան մասին, որի նկարներն ինձ արդեն ցույց էր տվել: Դա մի հին վերակառուցված պրովանսական ֆերմա էր, որ տեղակայված էր Լուբերոնի սարերում: Այն քարից էր պատրաստված, շրջապատված պտղատու ծառերով, դրսում կար մի տաղավար՝ դարչնագույն կղմինդրներով և բաց կամարներով:

— Դա իմ նկարում չի երևում, բայց Վոկլուզ լեռներից հրաշալի տեսարան է բացվում:

— Մենք կտեղավորվենք արդյոք: Ֆերմայում շատ մարդ կա:

— *Plus on est de fous plus on rit.* անզերեն ինչպես են ասում՝ ինչքան շատ, այնքան զվարճալի:

— Ուրախ:

— *Ah voilà. C'est sa:*

— Իսկ երեխաները որտեղ են:

— Փարի:

Ես նայեցի հորաքրոջս:

— Այո:

Նա մի խոր հոգոց արձակեց.

— Հիմա կարող ես ինձ տալ:

Գլխով արեցի և վերցրի պայուսակը, որ դրված էր ոտքերիս արանքում:

Ես պետք է դա շուտ գտած լինեի՝ Բաբային ծերանոց տեղափոխելուց հետո: Բայց երբ դասավորում էի Բաբայի հագուստը, ես վերցրի միջանցքի պահարանի երեք ճամպրուկներից ամենավերևինը և բոլոր շորերը տեղավորեցի դրա մեջ: Եվ միայն հետո ուժ հավաքեցի, որ մաքրեմ ծնողներիս սենյակը: Ես պոկեցի հին պաստառները, ներկեցի պատերը, հանեցի նրանց երկտեղանոց մահճակալը, մորս զարդասեղանը՝ կլոր հայելիով, հանեցի պահարաններից հորս կոստյումները, մորս բլուզները և պարկերի մեջ փաթեթավորված շորեղենը: Ավտոտնակում մի կույտ հավաքեցի «Գուդբիլ» բարեգործական կազմակերպություն տանելու համար: Ծնողներիս սենյակը դարձրի աշխատանքային սենյակ, որը կծառայեր նաև որպես դասասենյակ, երբ աշնանը դասերը սկսվեին: Նաև դատարկեցի մահճակալիս տակի սնդուկը: Աղբարկղ

լցրի բոլոր հին խաղալիքներս, մանկության զգեստներս, սանդալներս, թենիսի կոշիկներս, որոնք փոքրացել էին ուղքերիս: Էլ չէի կարող նայել Ծննդյան տոների, Հայրիկների և Մայրիկների օրերի առթիվ իմ սարքած բացիկներին: Գիշերը քունս չէր տանում, երբ մտածում էի, որ դրանք իմ մահճակալի տակ են: Դա ինձ ցավ էր պատճառում:

Ետո մի օր մուտքի պահարանը դատարկեցի, հանեցի երկու ճամպրուկ, որ տանեմ ավտոտնակ, բայց ճամպրուկներից մեկում թրմփոցով մի բան շարժվեց: Ես բացեցի ճամպրուկը և գտա հաստ շագանակագույն թղթի մեջ փաթաթած մի տուփ: Կապոցին մի ծրար էր ամրացված: Ծրարի վրա անգլերենով գրված էր՝ «*Իմ քույր Փարիին*»: Անմիջապես ճանաչեցի հորս ձեռագիրը, որին լավ ծանոթ էի էյբ Քաբոբ պանդոկում անցկացրած մեր օրերից, երբ նա ձեռքով լրացնում էր ուսելիքի պատվերները:

Ես փակ կապոցը տվեցի Փարիին:

Նա կապոցը դրեց ծնկներին՝ ձեռքերը սահեցնելով ծրարի վրա գրված բառերի վրայով: Գետի մոտակայքում հնչեցին եկեղեցու զանգերը: Զրափի ժայռի մոտ թռչունը ծվատում էր ձկան փորոտիքը:

Փարին քրքրում էր պայուսակը:

— *J'ai oublié mes lunettes. Unnugել եմ ակնոցս*,— ասաց նա:

— Ուզո՞ւմ ես՝ կարդան քեզ համար:

Նա փորձեց կապոցից պոկել ծրարը, բայց այսօր ձեռքերը լավ չէին աշխատում, և ապարդյուն ջանքերից հետո նա ինձ հանձնեց կապոցը: Ես պոկեցի ծրարն ու բացեցի: Ծրարի մեջ նամակ կար: Գրված էր ֆարսի լեզվով:

— Կարող ես կարդալ, չէ՞,— ասաց Փարին՝ հուզմունքից հոնքերը կիտելով:— Կարո՞ղ ես թարգմանել:

— Այո՞,— ասացի ես՝ ներքուստ ժպտալով և ուշացումով երախտագիտության զգացում ապրելով այն երեքշաբթի օրերի համար, երբ Բաբան ինձ տանում էր Քեմփբել՝ ֆարսիի դասերի: Ես մտածում էի իմ խեղճ, կորուսյալ հոր մասին, որ այժմ դեգերում էր անապատում, և նրա հետևում թողած ճանապարհին փայլփլում էին փոքր փայլուն բեկորները, որ կյանքը պոկել էր նրանից:

Ես նամակը բռնել էի, որ քամին չտանի: Երեք նախադասություն թարգմանեցի Փարիի համար:

«Նրանք ասացին, որ ես սուզվում եմ ջրի հատակը և շուտով կխեղդվեմ: Եվ նախքան սուզվելը ակին թողնում եմ սա քեզ համար: Ուզում եմ՝ գտնես այն, քոյր իմ, և հասկանաս, որ մինչև կյանքիս վերջ դու իմ սրտում էիր»:

Կար նաև ամսաթիվ՝ օգոստոս, 2007: Ես ասացի, որ նրա հիվանդությունը հենց այդ ժամանակ ախտորոշվեց: Դրանից երեք տարի հետո միայն մենք լուր առանք Փարիի գոյության մասին:

Փարին գլխով արեց՝ ձեռքի երեսով մաքրելով աչքերը: Մի երիտասարդ զույգ կրկնահեծանիվ էր քշում, աղջիկն առաջամասում էր: Նա շիկահեր էր, վարդագույն դեմքով և նիհարիկ: Տղան սրձագույն մաշկ ուներ և երկար մազերով սանրվածք: Մի քանի քայլ այն կողմ սև կաշվե կիսաշրջագգեստով մի դեռահաս աղջիկ նստած խոսում էր հեռախոսով՝ ածխագույն տերիերի թուր ձեռքին:

Փարին կապոցն ինձ հանձնեց: Ես բացեցի այն նրա համար: Կապոցում մի հին թիթեղյա տուփ կար, որի խունացած կափարիչին կարմիր վերնաշապիկով մորուքավոր հնդիկի մի նկար էր. բաժակից ելնող գուրջին գրեթե չէր երևում, խամրել էր, իսկ բլուզի կարմիր գույնը գունաթափվել, դարձել էր վարդագույն: Ես փակաւնը քաշեցի և բարձրացրի կափարիչը: Ներսը լցված էր բազմաթիվ փետուրներով: Տարբեր գույնի և ձևի: Կարճ, խիտ, կանաչ, երկար փետուրներ, կոճապղպեղի գույնի, դեղձագույն, երկի վայրի բադի՝ բոսորագույն շերտով, շագանակագույն փետուրներ՝ մուգ պուտիկներով և, ի վերջո, սիրամարգի փետուր՝ վերևում բացվող աչքանման նախշով:

Ես շրջվեցի Փարիի կողմը:

— Դու գիտե՞ս, թե սա ինչ է նշանակում:

Դողացող ծնոտով Փարին գլուխը թափ տվեց: Վերցրեց տուփը և ներս նայեց:

— Ո՛չ,— ասաց նա,— երբ մենք իրար կորցրինք, Աբդուլլան ավելի մեծ ցավ ապրեց: Ես ավելի բախտավոր էի, որովհետև ավելի փոքր էի և կարող էի մոռանալ: *Je pouvais oublier.* Ես մոռանալու երջանկությունն ունեցա, իսկ նա՝ ոչ:

Նա վերցրեց փետուրը, քսեց դաստակին՝ կարծես հույս ունենալով, որ այն կկենդանանա ու կթռչի:

— Ես չգիտեմ, թե ինչ է այս փետուրը նշանակում, որն է նրա պատմությունը, բայց մի բան հաստատ գիտեմ, որ եղբայրս տարիներ շարունակ մտածել է իմ մասին: Հիշել է ինձ:

Ես գրկեցի Փարիի ուսը: Նա արտասովում էր: Նայում էի արևափայլ ծառերին, մեր կողքով հոսող գետակին, որ թափվում էր Պոնտ Սեն Բենեդեո կամրջի տակ: Այդ կամրջի մասին մանկական երգեր կային: Կամուրջը կիսվել էր, մնացել էին նրա կամարներից չորսը միայն: Այն, ջրի կեսին հասնելով, ընդհատվում էր: Կարծես ձգվելով՝ ուզում էր միանալ իր երկրորդ կեսին, բայց չէր հասնում դրան:

Հյուրանոցում ես արթուն պառկած նայում էի մեծ, ուռած լիալունին, որը ծածկված էր ամպերով: Ներքևում՝ սալաքարերի վրա, լսվում էին կրունկների տկտկոց, ծիծաղ և աշխույժ գրույց: Իսկ դիմացի ռեստորանից լսվում էին սկուտեղներին դրված բաժակների զնգոցներ, դաշնամուրի նվագը դուրս էր ծորում պատուհանից ու հասնում ինձ:

Ես շրջվեցի, որ նայեմ կողքս անձայն քնած Փարիին: Լուսնի լույսի տակ նրա դեմքը շատ գունատ էր թվում: Նրա դեմքին նայելիս ես տեսնում էի Բաբային՝ երիտասարդ, հույսերով լի, այնպիսին, ինչպիսին նա կար, և ինչպիսին ես միշտ կտեսնեմ նրան, բավական է միայն նայեմ Փարիին, որն իմ միսն ու արյունն է: Եվ շուտով ես կհանդիպեմ նրա երեխաներին ու թոռներին, որոնց երակներով նույնպես հոսում է իմ արյունը: Ես միայնակ չեմ: Անասելի երջանկությունը ողողեց ինձ, և աչքերս լցվեցին երախտագիտության ու հույսի արցունքներով:

Նայելով քնած Փարիին՝ հիշեցի այն գիշերային խաղը, որ ես ու հայրս սիրում էինք խաղալ՝ վատ երազների որսը և լավ երազների որոնումը: Ես հիշեցի այն երազը, որ միշտ նվիրում էի հորս և զգուշորեն, որ չարթնացնեմ Փարիին, ձգվեցի և ափս դրեցի նրա ճակատին ու փակեցի աչքերս...

Արևոտ կեսօր է: Նրանք մանուկ են՝ քույր և եղբայր՝ փոքր, վճիտ աչքերով և աշխույժ: Պառկած են բարձր խոտերի մեջ ծածկված խնձորենու ստվերում: Խոտը ջերմացնում է նրանց մեջքը, արևը

խաղում է դեմքներին, անցնում թափանցիկ խնձորենու ծաղիկների միջով. նրանք հանգիստ ու ապահով քնած են, Արդուլլան գլուխը դրել է ծառի արմատին, իսկ Փարիի գլխի տակ եղբոր խնամքով ծալած վերարկուն է: Կիսափակ աչքերով նա նայում է ծառի ճյուղին նստած կաչաղակին: Զով քամին շնկշնկալով անցնում է տերևների միջով:

Նա, դեմքը շրջելով, նայում է մեծ եղբորը՝ իր հավատարիմ դաշնակցին և ընկերոջը, բայց նրա դեմքը շատ մոտ է, և նա չի կարող տեսնել այն ամբողջությամբ: Միայն ճակատի կորությունը, քթի ուրվագիծը և կլորացող թարթիչները: Բայց նա չի դժգոհում: Այդքանն էլ բավական է եղբոր կողքին երջանիկ զգալու համար: Քունը դարձյալ իջնում է նրա աչքերին, նա ընկղմվում է բացարձակ խաղաղության մեջ և փակում է աչքերն ու լողում: Շուրջը՝ խաղաղություն, պարզություն և լույս ամենեցուն...



ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<i>Առաջին</i> ԱՇՈՒՆ, 1952	11
<i>Երկրորդ</i> ԱՇՈՒՆ, 1952	25
<i>Երրորդ</i> ԳԱՐՈՒՆ, 1949.	57
<i>Չորրորդ</i>	78
<i>Հինգերորդ</i> ԳԱՐՈՒՆ, 2003.	135
<i>Վեցերորդ</i> ՓԵՏՐՎԱՐ, 1974	177
<i>Յոթերորդ</i> ԱՄԱՌ, 2009.	237
<i>Ութերորդ</i> ԱՇՈՒՆ, 2010	274
<i>Իններորդ</i> ՁՄԵՌ, 2010.	341

ԽԱԼԵԴ ՀՈՍԵՅՆԻ
ԵՎ ԱՐՁԱԳԱՆՔԵՅԻՆ ԼԵՌՆԵՐԸ

Թարգմանությունն անգլերենից՝
Անուշ Սեդրակյանի

KHALED HOSSEINI

AND THE MOUNTAINS ECHOED

Translated from English
by Anush Sedrakyan

Zangak Publishing House, Yerevan, Armenia

թվահայտել 5 1915. info book

Հրատարակչության տնօրեն՝
Գեղարվեստական խմբագիր՝
Հրատարակչության խմբագիր՝
Թարգմանական խմբագիր՝
Լեզվական խմբագիր՝
Էջաղրող՝

Էմին Մկրտչյան
Արա Բաղդասարյան
Հայկ Համբարձումյան
Արթուր Մեսրոպյան
Ազնիվ Նասլյան
Գրիգորի Հարությունյան

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 70x100/16:
Թուղթը՝ օֆսեթ: Ծավալը՝ 25 տպ. մամուլ:

«ԶԱՆԳԱԿ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+37410) 23-25-28
Հեռապատճեն՝ (+37410) 23-25-95, էլ. փոստ՝ info@zangak.am
Էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am